

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԴԻՄԻՏՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՇՈՂԱԳԱ

Յ. IV



ԵՐԵՎԱՆ 2002

9(47,925)

21-25 ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԴԻՄԻՏՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՇՈՂԱԳԱ

Հ. 4

4078

ԵՐԵՎԱՆ – 2002



ԳՏՀ 941 (472.25)
ԳՄԻ- 63.3(2 Հ) 2
Մ 258

Խմբագիրներ՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի առաջատար
գիտնականներ՝ պ. գ. դ., պրոֆ. ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պ. գ. դ., պրոֆ. ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մ 258 Սարգսյան Գ.Ն., Շողազա-Եր., Ջանգալ-97, 2002, 384 էջ:

Ժայռապատկերների, սեպագիր արձանագրությունների, հայկական մատենագրության, արխիվային փաստաթղթերի և հնագիտական նյութերի տվյալների հիման վրա գրքում ներկայացված է Սևանի ավազանի հարավարևմտյան մասում՝ Գեղամա լեռների արևելյան ստորոտում գտնվող պատմական Շողազա (այժմ՝ Չորագյուղ) բնակավայրի IX–XX դդ. էքնիկական, քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակույթի պատմությունը:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, ընթերցող լայն շրջանների, այդ թվում Շողազա կամ Չորագյուղ բնակավայրի բնակիչների համար:

0503020913

U ----- 2002

711(01) – 2002

ԳՄԻ- 63.3(2 Հ) 2

ISBN 5.8080-0431-4

© Սարգսյան Գ. Ն., 2002

Աշխատությունը նվիրված է անհիշելի ժամանակներից Սևանի ավազանի հարավարևմտյան մասում՝ վեհորեն դեպի վեր խոյացած Գեղամա լեռների ստորոտում, մի հսկա ձորի մեջ ծվարած բնակավայրի IX–XX դդ. էքնիկական, քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակույթի պատմությանը: Այն գրվել է բազմաթիվ ու բազմաբնույթ սկզբնաղբյուրների և գիտական ուսումնասիրությունների տվյալների հիման վրա: Որպես սկզբնաղբյուր են ծառայել սեպագիր արձանագրությունները, հայկական մատենագրությունը, արխիվային փաստաթղթերը, ազգագրական ու հնագիտական նյութերը: Օգտագործված գիտական ուսումնասիրությունների թվին են պատկանում թե մենագրությունները և թե ժողովածուներում ու պարբերական մամուլում լույս տեսած հրատարակումները:

Աշխատությունը բաղկացած է 4 գլուխներից՝ Շողազա, Ալաշկերտ, Վալի-աղալու, Չորագյուղ: Դրանցից 1-ինը, 3-րդը և 4-րդը կոչվել են բնակավայրային տարբեր ժամանակներում տրված անուններով և արտահայտում են այդ անունները կրելու ժամանակաշրջանում նրա ունեցած պատմությունը: Ինչ վերաբերում է Ալաշկերտ կոչվող գլխին, ապա այն արտահայտում է Ալաշկերտից այստեղ մարդկանց գաղթի պատմությունը:

Շողազա գլխում բացահայտված է, որ գրավոր աղբյուրներում գյուղը Շողազա անունով է կոչվել շուրջ 1000 տարի (9-րդ դարի վերջին քառորդից մինչև 19-րդ դարի առաջին քառորդը): Ընդգծված է, որ դրանից առաջ հայտնի չէ, թե որքան ժամանակ է գյուղը կրել Շողազա անունը: Միայն հայտնի է, որ Շողազայի արևելյան տարածքում գտնվող Գրեր բլուրից հայտնաբերվել է մ.թ.ա. 8-րդ դարին պատկանող սեպագիր արձանագրություն, իսկ արևմտյան տարածքում գտնվող Աժդահակ սարի ստորոտից հայտնաբերվել են մ.թ.ա. 8-րդ հազարամյակին պատկանող ժայռապատկերներ կամ պատկերագրեր: Նաև ընդգրկված է, որ ինչպես Գրեր բլուրի, այնպես էլ Սևանի ավազանի հետ կապված ուրիշ սեպագիր արձանագրություններում հիշատակված տեղանունների ու անձնանունների ստուգաբանությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Ուրարտական կամ Արարատյան հարստության (դինաստիայի) նվաճումներից առաջ ինչպես ամբողջ Սևանի ավազանը, այնպես էլ Շողազայի տարածքը բնակեցված է եղել հայալեզու ցեղերով, հայերով: Ժայռապատկերների հետ կապված փաստերն էլ ցույց են տալիս, որ ինչպես ամբողջ Սևանի ավազանում, այնպես էլ Շողազայի տարածքում հայալեզու ցեղերը, հայերը ապրել են մ.թ.ա. 8-րդ հազարամյակից, երբ ժամանակակից մարդը նոր է երևան եկել իր քաղաքակրթությամբ՝ ժայռերին կերտելով պատկերագրեր: Իրենց հերթին մեսրոպատառ աղբյուրները պատմում են, որ Շողազայի այդ հայ բնակիչները 9-րդ դարից մինչև 19-րդ դարը մարտեր են մղել օտար թշնամիների դեմ, վանքեր ու

դպրոցներ կառուցել, ձևազարդ մատյաններ հյուսել, օտար բջճամու կողմից ստեղծված սոցիալական ծանր կյանքը եղծող պոետներ ծնել:

Ալաշկերտ գլխում բացահայտված են 19-րդ դարի առաջին քառորդում Շողագայից իր բնիկ հայ բնակչության արտաքսվելու, այն կարծ ժամանակով մահմեդական ցեղերով բնակեցվելու, գյուղը բուն հայկական ծագում ունեցող Շողագա անվան փոխարեն Վալի-աղալու օտար անունով կոչվելու, 1830 թվականին Ալաշկերտից այնտեղ հայ նոր բնակիչներով բնակեցվելու պատճառները:

Վալի-աղալու գլխում բացահայտված է գյուղի 19-րդ դարի 30-ական թվականից մինչև 20-րդ դարի 21 թվականը ընկած ժամանակաշրջանի պատմությունը, երբ այդ բնակավայրը գրավոր աղբյուրներում կոչվել է Վալի-աղալու անունով, ցույց է տրված, թե որքան ընտանիքներ են Ալաշկերտից եկել այնտեղ, որքան էր այդ ընտանիքների անդամների թիվը, որքան կազմեց նրանց աճը մինչև 1921 թվականը, տնտեսության ինչ ճյուղերով էին զբաղվում, կրթություն ձեռք բերելու ինչ հնարավորություններ ունեին, սոցիալական ու քաղաքական ինչպիսի կյանքով էին ապրում:

Չորագյուղ գլխում բացահայտված է բնակավայրի 1921 թվականից մինչև մեր օրերը, այսինքն՝ մինչև 2000 թվականը ընկած ժամանակաշրջանի պատմությունը, երբ այդ բնակավայրը գրավոր աղբյուրներում կոչվել է Չորագյուղ անունով, ցույց է տրված նրա տնտեսական, քաղաքական, սոցիալական ու մշակութային կյանքի առանձնահատկությունները, բացահայտված են 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում գյուղի բնակչության կրած ծանր կորուստները, լուսաբանված են 1991 թվականից անկախ Հայաստանի հերոսամարտին անդամագրվելու և հաղթանակի հասնելու նվիրվածությունը, բացահայտված է արցախյան հերոսամարտին նրա մասնակցությունը:

Փաստորեն այն կարծիքը, թե հնադարից եկած մի բնակավայրի պատմությունը խտացված ձևով կարող է արտահայտել մի ամբողջ ժողովրդի պատմությունը, արդարացվում է նաև ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող սույն բնակավայրի պատմության օրինակով:

Գիրքը Շողագա անունով է կոչվել այն պատճառով, որ այն եղել է գյուղի ոչ միայն ամենատաջին, այլև ամենաերկարակյաց անվանումը: Այդ անունով գյուղը սկզբնաղբյուրներին հայտնի է 9-րդ դարից մինչև 19-րդ դարը, այսինքն՝ շուրջ 1000 տարի: Թե մինչև 9-րդ դարը որքան ժամանակ է այդ անունով կոչվել գյուղը, անհայտ է, բայց գյուղի հնագիտական պեղումների նյութերի թվագրումը, ինչպես ընդգծվեց վերևում, ձգվում է մինչև մ.թ.ա. 8-րդ հազարամյակը, երբ ժամանակակից մարդը նոր է երևան եկել իր քաղաքակրթությամբ:

Շողագան Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Այն Շողագա է կոչվել անհիշելի ժամանակներից: Գրավոր աղբյուրներում բնակավայրի Շողագա անունը հիշատակվել է շուրջ հազար հարյուր երեսուն տարի առաջ: Այդ անունը պատմության մեջ մնացել է շուրջ հազար տարի: Միայն շատ ուշ, գրեթե վերջին հարյուր յոթանասուն տարում, բնակավայրը Շողագայի փոխարեն կոչվել է նաև Վալի-աղալու, (Վալաղալու) և ապա Չորագյուղ անուններով:

Շողագա բնակավայրը գտնվում է Սևանա լճի հարավարևմտյան կողմում, Գեղամա լեռների ամենաբարձր զագաթներից մեկի՝ Աժդահակի արևելյան ստորոտում, մի հսկա ձորի մեջ, որը չորս կողմից պարփակված է երկայնահիստ բլուրներով: Բլուրների այդ շղթան Շողագայի ձորին պարզում է բնական մեղմ, բարեխառն կլիմա: Շողագան աշխարհի հետ կապվում է իր արևելյան և հյուսիսային բլուրների արանքում բացված անձեռակերտ դարպասով, որը, առջևի կողմից ազատված լինելով բլուրներից ու լեռներից, ինչպես մի կլիկոպյան աչք, իր անթաքթ հայացքն է հառել դեպի Սևանա լճի կապույտ հայելին: Հենց այդ բնական դարպասով կամ բաց դռնով էլ անցնում է Շողագայից սկիզբ առնող միակ ճանապարհը, հասնում մինչև լճի արևմտյան ափերը ու այնտեղից էլ, մայրուղուն միանալով, ձգվում աշխարհեաշխարհ: Շողագայի բոլոր ծեղերից ամենաշուտ հենց այդ բնական դարպասից կամ բաց դռնից է երևում Շողագայի նոր ծագող արևը: Երբ այն աստիճանաբար բարձրանում է արևելյան բլուրն ի վեր, բնական մեղմ, բարեխառն կլիմա ունեցող Շողագայի ձորը միանգամից պոկեպտունկ լցվում է արևի շողերով ու փայլվում ինչպես աղամանը: Լուսնկա գիշերներին լուսնի շողերով ողողված Շողագան նմանվում է մերթ սպիտակ սաթի, մերթ ճերմակածածկ նորահարսի: Անշուշտ արևի ու լուսնի շողերից մերթ աղամանդի, մերթ սպիտակ սաթի, մերթ էլ ճերմակ հագուստներ հագած նորահարսի նման փայլվացող այս բնությունն է նկատի ունեցել այդ բնակավայրի առաջին բնակիչը, որ այն կոչել է Շողագա անունով, որը կազմված է հայերենի «շող» և «ագա» (յագանիլ, հագնել) արմատներից և նշանակում է «Շողեր հագած», «Շողերով ծածկված»:

Արևի շողերով ողողված Շողագայի ձորի բնական մեղմ, բարեխառն կլիման իրեն զգացնել է տալիս նույնիսկ ծմուսն ամիսներին, երբ բնակիչները ձորի ամենաներքին գոգավորություններում կարողանում են առանց վերարկուի նստել, զրույց անել, խաղեր խաղալ:

Շողագայի ձորը նման է մի ահռելի քատրոնի դահլիճի: Նման տեսք է նրան հաղորդել հատկապես ձորի մեջտեղից քատրոնի բեմահարթակի նման դեպի վեր խոյացող ու մինչև Շողագայի արևմտյան բլուրը ձգվող հարթագագաթ բարձունքը՝ Սիերի դուռը: Այդ բեմահարթակ-բարձունքի աչ

ու ձախ կողմերից, արևմտյան բլուրի հարավային ու հյուսիսային հիմքերը ողողելով, դեպի ձորն են վազում Շողագայի երկու գետերը: Չախ կողմից իջնում է Քաղցր (Շիրին) գետը, որը սկիզբ է առնում Աժդահակի ստորոտում գտնվող Շողան աղբյուրից, իսկ աչ կողմից իջնում է Աղի (Շոռ) գետը, որը թեև սկիզբ է առնում Աժդահակից հարավ տարածված Կոռ սարի ստորոտի քաղցրահամ աղբյուրներից, բայց հասնելով գյուղամերձ հանքային աղբյուրների թթու ջրերին, կորցնում է իր քաղցր համը, դառնում թթու, դառնում աղի: Այդ երկու գետերը իրար են միանում Շողագայի ձորի ներքևի մասում, Սարգսի կալի ներքին պոռնկի մոտ, և, մի գետ կազմած, արևելյան կողմում գտնվող բաց դռնով, հոսում են դեպի Սևանա լիճը՝ այդ ուղղությամբ ձգվող Շողագայի միակ ճանապարհին գուգահեռ:

Հնում Քաղցր գետը առատ է եղել անուշահամ կարմրախայտ ու իշխան ձկներով: Եթե կարմրախայտը այդ գետի հիմնական բնակիչն է եղել, ապա իշխանը Սևանա լճից այնտեղ է բարձրացել հատկապես բազմամալիս: Քաղցր գետի ջրերը Շողագայի բնակիչները օգտագործել են ոչ միայն ոռոգման, այլև խմելու համար: Աղի գետը թեև գուրկ է եղել ձկներից, իր ջրի աղի, թթու լինելու պատճառով, բայց նրա ջուրն էլ բուժել է մաշկային հիվանդություները, դարձել պաշտելի, դարձել սրբազան: Այդպես է նաև հիմա: Շողագային շրջապատող բլուրները, ինչպես նաև նրանցից վեր կանգնած սարերը գուրկ են անտառներից: Դրա փոխարեն այդ բլուրներն ու սարերը գուգվում են շատ առատ անուշաբույր ծաղիկներով ու խոտերով: Հատկապես գարնանը ու ամռանը նրանք ծածկվում են երփներանգ ծաղիկների ու խոտերի անթափանց գորգով: Ինչպես այդ բլուրների ու սարերի, այնպես էլ նրանց արանքում փռված փարթամ մարգագետինների ծաղիկներն ու խոտերը տարին բոլոր դառնում են կեր ընտանի կենդանիների համար, դառնում միս ու արյուն, դառնում քաղցրահամ կաթ ու կաթնամթեք: Շողագան հարուստ է նաև հացահատիկի ցանքատարածություններով, որոնք ոռոգվում են Գեղամա լեռների արևելյան լանջերից բխող Բոբբոռ կոչվող հորդառատ աղբյուրի սառնորակ ու քաղցրահամ ջրերով՝ մարդկանց պարզելով կարմրահատիկ ցորեն, անուշաբույր ցորեն հաց: Շողագային սառնորակ ու քաղցրահամ առատ ջուր է պարզում նաև նրա հարավարևելյան տարածքից բխող Ալկներ կոչվող առատաջուր աղբյուրը: Թեև այդ աղբյուրը իր գոգավոր դիրքի պատճառով քիչ է նպաստում Շողագայի ցանքատարածությունների ոռոգմանը, բայց նրա ջրերից կազմված գետն էլ հնում հարուստ է եղել անուշահամ իշխան ու բախտակ ձկներով:

Եթե Շողագայի սարերը գուրկ են անտառներից, ապա ինքը՝ Շողագայի ձորը, ծփում է թե՛ դարավոր նախյան բալդինների և ուռենիների պուրակներով և թե՛ մրգատու ծառերի՝ խնձորենիների, տանձենիների, սալորենիների ու բալենիների փարթամ այգիներով: Շողագայի մրգերից Գեղամա աշխարհում հայտնի է հատկապես խնձորը, որի որսը տեսակները հասունանում են ամռան կեսերին, լցվում քաղցր ու անուշաբույր հյութով:

Չափազանց գեղեցիկ է Շողագայի այգաբայրը: Թռչունները, դռնք գիշերը քառում են բարդիների և ուռենիների ծերպերին, երբ նկատում են արշալույսի առաջին ցուրերը, սկսում են իրենց յուրօրինակ համերգը: Սկզբից ձայնարկում է մեկը, հետո երկուսը, երեքը, որից հետո նրանց է միանում ամբողջ երանը: Այդպես այդ համերգը կրկնվում է այնքան ժամանակ, մինչև որ Սևանա լճի անձայրածիր կապույտ հայելու վրա երևում է վաղորդյան արփին իր ճառագայթների անթիվ խուրճերով և ծիրանագույն մեղմ շողերով: Համերգը դադարում է, թռչունները խումբ-խումբ թռչում են դեպի հեռավոր հանդերձ՝ իրենց հետևից թողնելով թռչչի մասնակցող իրենց փետուրների թփթփոցը: Թռչունների նման համերգը միայն Շողագայի ձորում կարելի է լսել:

Անցել են անթիվ տարիներ, բայց Շողագայի բնությունը մնացել է գրեթե նույնը՝ նույն բլուրներն են ու նույն սարերը, նույն մարգագետիններն են ու նույն դաշտերը, նույն աղբյուրներն են ու նույն գետերը: Միայն փոխվել են Շողագայի բնակիչները:

Շողագայի ընդհանուր տարածքը, ինչպես մատնացույց են անում Չորագյուղի հետ կապված փաստերը, կազմում է 5513 հա: Դրանից 2311 հա տարածքը շատ քիչ նշանակություն ունի գյուղատնտեսության համար (լեռներ, ավազուտներ ու քարեր են): Մնացած 3202 հա տարածքը, որն ունի լիարժեք գյուղատնտեսական նշանակություն, կազմված է 1641 հա արոտավայրերից, 513 հա բնական խոտհարքերից, 840 հա վարելահողերից, 208 հա տնամերձի ենթակա հողամասերից:

Շողագան ծովի մակերևույթից բարձր է 2000–2600 մետր, ունի տիպիկ լեռնային ռելիեֆ՝ կտրտված ձորերով ու ձորակներով: Հողերը ձևավորվել են բազալտների, անդեզիտաբազալտների և նրանց հողմնահարված փխրակների վրա: Կլիման բարեխառն է, որը բնորոշվում է չափավոր երկարատև ամառով և ցուրտ ձմեռով: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 5–6°, իսկ բացարձակ նվազագույնը՝ մինչև –30°, առավելագույնը՝ 29°, մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 446 մմ:

Շողագայի նախնական բնակիչների մասին ամենից առաջ տեղեկություններ են հաղորդում այդ բնակավայրի հնագիտական հուշարձանները: Այդ տեսակետից մեծ արժեք են ներկայացնում բոլորովին վերջերս Շողագայի արևմտյան մարգագետինների մեջ վեհորեն խոյացած Աժդահակ սարի ստորոտում փռված ամենի ձորի հարավային կողմից բխող սառնորակ աղբյուրի վերին շուրթի վրա տարածված ժայռերին փորագրված ժայռապատկերները կամ պատկերագրերը: Հայաստանում նման ժայռապատկերներ են հանդիպում Արագածի փեշերին, Գեղամա, Վարդենիսի, Վայոց ձորի և Սյունիքի լեռներին: Մինչև այժմ Գեղամա լեռներից իր ժայռապատկերներով հայտնի էր Գեղամադանը կամ Աղմադանը:¹ Աժդահակի կամ Շողագա-

¹ Թ. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 113–120:

յի ժայռապատկերները, որ մինչև այժմ վրիպել էին հետազոտողների աչքից, դարձան նորություն և հաստատեցին, որ այդ տեսակետից Գեղամազանը մենակ չէ, այլ, ի դեմս Աժդահակի, ունի իր գույզը:

Հայաստանի ժայռապատկերները, որոնց նմանները կան նաև ուրիշ երկրներում (Ատրիք, Պաղեստին, Իրաք և այլն), ունեն շատ խոր անցյալ: Միջին քարի դարում կամ մեզոլիթում (մ.թ.ա. 12000–8000 թթ.), երբ արդեն վերջանում է երկրի սառցակալումը, երբ փոխվում է երկրի կլիման, և մարդը հիացած ծաղկող բնության հրաշալիքներով, մասնավորապես առատ կենդանական աշխարհով, դուրս է գալիս քարայրներից, դեն է նետում սառցային ժամանակաշրջանի աշխատանքային գործիքներն ու զենքերը, որոնք մոնոլիտ ու պարզ կառուցվածք ունեին, նոր կյանքի պահանջներին համապատասխան ստեղծում է իր նոր գործիքներն ու զենքերը, որոնք ունեին քարը կառուցվածք: Դրանց պակն է կազմում նետ ու աղեղը, որը կազմված է նետից, նետի սլաքից ու աղեղից: Այդ ընթացքում փոխվում են մարդու կառուցվածքն ու մտածողությունը: Արդեն միջին քարի դարի կամ մեզոլիթի վերջում, այսինքն՝ մ.թ.ա. 8–րդ հազարամյակում, նախկին քարանձավային մարդը իր կառուցվածքով ու մտածողությամբ ամբողջովին նմանվում է ժամանակակից մարդուն: Նա ձեռք է բերում լրիվ ուղիղ կեցվածք և ճկուն կառուցվածք: Եթե երբեմնի մոնոլիտ ու պարզունակ զենքերով մարդը որս անելիս ստիպված իր կյանքը վտանգի ենթարկելով մոտեցել է իր որսին՝ վայրի կենդանիներին ու գազաններին, ապա այժմ նետ ու աղեղով հեռու տարածությունից և այն էլ դիպուկ հարվածով կարող է որս անել, որով պահպանում է իր ու իր տոհմակիցների գոյությունը: Իր այդ նվաճումով նոր մարդը կամ ժամանակակից մարդը խիստ հիացած ու ոգևորված ժայռերին կերտում է իր կատարած որսի տեսարանները, պատկերում իր որսի կենդանիներին:² Ժայռապատկերների կերտումը կատարվել է նաև նոր քարի դարում կամ նեոլիթում (7.000–6.000 թթ.):³ Մ.թ.ա. 8–րդ հազարամյակում Հայաստանի նոր մարդը կամ ժամանակակից մարդը իր ժայռապատկերներում որսի տեսարաններն ու որսի կենդանիները (քարայծ, այծյամ, իշայծյամ, եղջերու, վայրի ոչխար, եգ, վայրի ցուլ կամ գոմեշ և այլ գազաններ, թռչուններ) պատկերելիս չի օգտագործել ո՛չ գույնգույն ներկեր, ո՛չ տարբեր չափսի վրձիններ, ո՛չ ներկապնակ, ո՛չ քարաժայռերը հղկող տարբեր չափսի ու սրության ամուր մետաղե գործիքներ: Նա այդ տեսարանները, պատկերները կերտել է ժայռերի վրա՝ սոսկ բարակ ու ոչ շատ խորը գծերի օգնությամբ: Միջին քարի դարի կամ մեզոլիթի ժայռապատկերները տարբերվել են նոր քարի դարի կամ նեոլիթի ժայռապատկերներից: Միջին քարի դարի կամ մեզոլիթի ժայռապատկերներին բնորոշ է եղել նրբագեղությունը, այն է՝ մարդու և կենդանիների պատկերումը ոչ թե իրենց բնական մեծությամբ, այլ փոքրացված չափսերով: Օրինակ՝ մարդը պատկերվել է 15–20 սմ–ի չափսով:

² Մ.Ն. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 113–119:

³ Նույն տեղում, էջ 119–122:

Բնորոշ գծերից է ցայտուն դինամիզմը (շարժունությունը): Որսորդ մարդը, որը այդ պատկերների գլխավոր հերոսն է, իսկ նրա գործողությունները՝ այդ պատկերների բովանդակությունը, ամբողջովին ներկայացված է շարժման մեջ՝ համակված որսի տարերքով: Որսին հետապնդելիս նա սկսում է առաջ՝ ձգված աղեղով, նետը լարած: Շարժման այս լարվածությունը և արագությունը որսորդ մարդու պատկերին տվել է կենդանի տեսք: Բնորոշ գծերից է խմբերով որս կատարելը: Խմբային որսի ժամանակ որսորդներից ամեն մեկը ներկայացված է շարժման մեջ՝ ըստ աշխատանքի բաժանման: Ոմանք վազելով հետապնդում են իրենցից փախչող որսի կենդանիներին, իսկ ոմանք էլ իրենց տեղում քարացած, բայց աղեղները լարած, հենված մի ծնկան վրա, մյուս ոտքը ետ ձգած, նետերն են ուղղում դեպի իրենց կողմը վազող այդ կենդանիները: Բնորոշ գծերից է նաև այն, որ որսի ժամանակ մարդու հավատարիմ կենդանին ներկայացված է որսի շունը, որը օգնում է մարդուն որսի ընթացքում: Բնորոշ է նաև այն, որ այդ ժայռապատկերներում կերտված են նաև կանանց պատկերները: Եթե տղամարդիկ մերկ են, ապա կանայք կրում են հագուստ: Երեխաները միշտ պատկերված են կանանց կողքին՝ որպես մայրիշխանության բնորոշ գիծ:

Շողագայի տարածքի հետ կապված ժայռապատկերները ամբողջովին նման են Հայաստանի միջին քարի դարի կամ մեզոլիթի ժամանակաշրջանի ժայռապատկերներին և, հետևաբար, իրենք էլ պատկանում են այդ ժամանակաշրջանին: Այս փաստը ցույց է տալիս, որ միջին քարի դարում կամ մեզոլիթում, այսինքն՝ մ.թ.ա. 8.000 տարի առաջ, Հայաստանում հանդես եկած ժամանակակից մարդը բնակվել է նաև Շողագայի տարածքում, համարվել նրա նախնական բնակիչը,⁴ որս է կատարել նրա լեռների ստորոտներում տարածված ձորերում ու կիրճերում, իր կատարած որսի տեսարաններն ու որսի կենդանիները պատկերել այնտեղ գտնվող ժայռերի վրա: Քարաժայռերին բարակ, ոչ շատ խոր գծերի միջոցով հիշյալ որսի տեսարանների, մասնավորապես որսորդ մարդու, որսի կենդանիների նրբագեղ, դինամիկ (շարժուն) պատկերների կերտումը և այն էլ միջին քարի դարի կամ մեզոլիթի ժամանակաշրջանում, այսինքն՝ մ.թ.ա. 8.000 տարի առաջ, Հայաստանի, մասնավորապես նրա անբաժան մասը կազմող Շողագայի նախնական բնակիչների քանդակագործական, նկարչական հանճարի դրսևորումն է:

Շողագայի բնակիչների մասին տեղեկություններ են պահպանել նաև Հայաստանի Ուրարտական կամ Արարատյան հարստության (դինաստիայի) սեպագիր արձանագրությունները: Այդպիսի արձանագրություն է հայտնաբերվել Շողագայի հողատարածություններից, մասնավորապես նրա արևելյան ձախ անկյունում գտնվող Գրեր բլուրից (Սևանա լճի հարավարևմտյան կողմում): Արձանագրությունը պատկանում է Ուրարտուի քաղաքներից Սարգուրի 2–րդին (764–735): Արձանագրությունում Սար-

⁴ Դ.Ն. Սարգսյան, Ազգային կորած արժեքների վերականգնում (Հայաստանի Հանրապետություն, օրաթերթ, 1996, հոկտեմբերի 11, 3–րդ էջ):

դուրի 2-րդը պատմում է. «Խաղի աստծու հրամանով Սարդուրի Արգիշթոր-դին ասում է՝ Թուլիխունի քաղաքը՝ արքայական քաղաքը Ծինալիբի Լուե-խորրու, մարտում գրավեցի: Ծինալիբիին՝ քագավորին (և) (իր) ժողովրդին ստրկացրի: Հասա ես մինչև Ուդուրի-Էթինի երկիրը»:⁵ Ակնհայտ է, որ երկրի այն մարզը, որտեղ գտնվել է Թուլիխունի արքայական քաղաքը, նույնպես կոչվել է Թուլիխունի անունով: Երկրի արքան է եղել Ծինալիբինը: Նա եղել է Լուեխունի որդին:⁶ Սեպագիր այլ տեքստերից հայտնի է, որ երկիրը կրել է Լուեխունի (հմմտ. Լուիփրունի) անունը (տես՝ YKH, NN155 D₅₂; 2664; 155F₂₃): Այդ երկիրը հանդես է եկել Ու(ե)դուրի-Էթիունի ընդհանուր հասկացության տակ: Թուլիխունի արքայական քաղաքը անշուշտ գտնվել է Գրեր բլուրի վրա: Դա է հաստատում ոչ միայն այդ բլուրից գտնված վերոհիշյալ արձանագրությունը, որի մեջ հիշատակվում է Թուլիխունի արքայական քաղաքի անունը, այլև այդ բլուրի վրա տարածված ուրարտական ժամանակաշրջանի ամրոցի ավերակների առկայությունը: Արձանագրության Ուդուրի-Էթինի երկրանունը Սարդուրի 2-րդի տարեգրության մեջ հիշատակվել է Ուեդուրի-Էթիունի ձևով: Ինչպես Արգիշթի 1-ի (786-764), այնպես էլ Սարդուրի 2-րդի տեքստերից հասկանալի է, որ Ու(ե)դուրի-Էթի(ու)նի անունով է կոչվել ամբողջ Սևանի ավազանը, որտեղ տարածված են եղել Ադախունի, Ուեիքունի կամ Վեիքունի,⁷ Լուեխունի (հմմտ. Լուիփրունի), Արկուկինի երկրները: Մինչև ուրարտական նվաճումները գոյություն ունեցող այս տեղանունների և անձնանունների ստուգաբանությունը անշուշտ լույս է սփռելու Սևանի ավազանի, ինչպես նաև նրա անբաժան մասը կազմող Շողագայի տարածքի նախնական բնակչության էթնիկական կազմի բացահայտման վրա: Ի դեպ, այդ կապակցությամբ եղած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ծինալիբի անձնանվան «ծին» և «ալիբ» բառամասերը հիշեցնում են հայերենի «ծին» (ծնել) և «աղիվ» արմատները. Ուեիքունի կամ Վեիքունի երկրանունը համապատասխանում է վաղ հայկական տոպոնիմիկայում (տեղանուններում) հիշատակվող Գեդաքունի (հմմտ. Գեդարքունի)⁸ տեղանվանը, որի հիմքում ընկած է հայերենի «գեդ» կամ «գյուդ» արմատը և

⁵ М.В.Никольский, Клинообразные надписи закавказья (Материалы по археологии Кавказа, V, 1896), стр. 115; Г.А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М. 1960, N 160 (далее УКН).

⁶ Գրեր բլուրի սեպագիր արձանագրության քարը Նոր Բայազետ քաղաքի աղա Արծրունի Բարսեղը փոխարքա, մեծ իշխան Միխայիլ Նիկողաճիզի հրամանով 1865 թ. բերում է Նոր Բայազետ և 1866 թ. տեղափոխում Թիֆլիսի հնագիտական թանգարան:

⁷ Պետք է նկատի ունենալ, որ ուրարտական սեպագրերում «վ» տառը բացակայել է, այն հանդես է եկել «ու» տառի տակ:

⁸ Այստեղ առկա է ուրարտերենի «վ» հնչյունը հայերենի «գ» հնչյունին փոխարինվելու երևույթը:

հոգնակի թվի «ք» ցուցիչը. Ուեդուրի կամ Վեդուրի⁹ բառի հիմքում ընկած է հայերենի «գետ» արմատը¹⁰ (վերջին ստուգաբանությունը հաստատվում է այն փաստով, որ ուրարտական սեպագիր արձանագրություններում Էթիունի տերմինը ունեցել է ընդհանուր բնույթ, որի տակ հանդես են եկել Կարսը, Տուարածատափը, Ալաշկերտը, Շիրակը, Գուգարքը, Արագածոտնը, Կոտայքը, Տաուշը, Գեդարքունիքը, Նախիջևանը, Սյունիքը, Արցախը: Սևանի ավազանը, որի լեռներից դեպի լիճն են հոսել 28 գետեր, ի տարբերություն Էթիունի ընդհանուր հասկացության տակ հանդես եկող մյուս մարզերի, որոնք այդքան առատ գետեր չեն ունեցել, կոչվել է Գետալին-Էթիունի): Նշված փաստերը ցույց են տալիս, որ դեռևս ուրարտական նվաճումներից առաջ, հավանաբար ժայռապատկերների ասպարեզ գալու ժամանակից սկսած, այն է՝ մ.թ.ա. 8-րդ հազարամյակից, երբ նոր էր ժամանակակից մարդը հանդես եկել քաղաքական ասպարեզ, Սևանի ավազանի, ինչպես նաև նրա անբաժան մասը կազմող Շողագայի տարածքի բնակիչները եղել են հայալեզու ցեղերը:¹¹

Սարդուրի 2-րդի նվաճումից հետո Ուեդուրի-Էթիունին կամ ամբողջ Սևանի ավազանը, այդ թվում նաև Շողագայի գրաված տարածքը, հանդես է եկել Հայաստանի Ուրարտական կամ Արարատյան հարստության (դինաստիայի) արքայական կամ պետական կալվածքների կազմում:

Շողագա բնակավայրի մասին տեղեկություններ է պահպանել Հայկական մատենագրությունը (ձեռագրերը, գրավոր պատմությունները): Այդ տեսակետից առաջնության դափնին պատկանում է Հովհաննես 6-րդ կաթողիկոս Դրասխանակերտցուն, որի պատմության մեջ առաջին անգամ է հիշատակվել Շողագա բնակավայրի անունը. «Սահակը և Վասակը... տալան նրա (իրենց մայր Մարիամի - Գ.Ս.) մարմինը դրին նրա գերեզմանոցում, Շողագայում կառուցած իր եկեղեցու մոտ»:¹² Հովհաննես Դրասխանակերտցին (845-925), որին տվել են պատմագիր մականունը, հայոց կաթողիկոս է ընտրվել 897-925 թվականներին: Հովհաննես Դրասխանակերտցու հետ կապված թվական փաստերը ցույց են տալիս հայերեն գրավոր աղբյուրներում Շողագայի առաջին անգամ հիշատակվելու ժամանակաշրջանը: Սեջրեոված տեքստից հասկացվում է, որ Շողագան և նրա եկեղեցին գոյություն են ունեցել Հովհաննես Դրասխանակերտցու կողմից իր պատմության շարադրումից առաջ:

⁹ Այստեղ նույնպես առկա է սեպագրերի «վ» տառը «ու» տառի տակ հանդես գալու երևույթը:

¹⁰ Այստեղ նույնպես առկա է սեպագրության «վ» հնչյունը հայերենի «գ» հնչյունին փոխարինվելու երևույթը:

¹¹ Դ.Ն. Սարգսյան, Ազգային կորած արժեքների վերականգնում (Հայաստանի Հանրապետություն, օրաթերթ, 1996 թ. հոկտեմբերի 11, 3-րդ էջ):

¹² Հովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմություն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 222-230:

Շողագան 2-րդ անգամ հայերեն գրավոր աղբյուրների մեջ հիշատակվել է Ստեփանոս Ասողիկ Տարոնացու կողմից. «Իսկ Գագիկը իր մանկության օրերին, երբ շրջում է Գեղանա գավառում, տալիս է նրան (Սևանա Սարգիս վարդապետին – Գ.Ս.) տեղ և բնակության համար վանք, որ աստծո երեք լույսերի ծագման պատճառով Շողագա է կոչվում»:¹³ Ստեփանոս Ասողիկ Տարոնացին, որը ուներ վարդապետի կոչում, համարվում է հայ միջնադարյան ամենանշանավոր պատմիչներից մեկը: Նա ապրել է 10-րդ դարի 2-րդ կեսից մինչև 11-րդ դարի 1-ին կեսը: Մեջբերված տեքստում հիշատակված Գագիկը՝ Բագրատունի Գագիկ 1-ին քազավորն է, որը կառավարել է 990–1020 թվականներին: Տեքստում հիշատակված Սարգիս վարդապետը ուսանել է Սևանա վանքում, ապա աշխատել է նախ Շողագայի վանքում ու այնուհետև Սևանա վանքում, 922–1011 թթ. ընտրվել է հայոց կաթողիկոս Սարգիս Սևանցի անունով, ծերության պատճառով 1019 թ. հրաժարվել է կաթողիկոսության պաշտոնից և մահացել է 1022 թվականին: Մատնանշված թվական տվյալները ցույց են տալիս, որ Շողագան կանգուն է եղել 10-րդ դարի վերջին և 11-րդ դարի սկզբին: Ապրելու համար Շողագայի գեղեցիկ բնությունը, բարեխառն կլիման հիմք են հանդիսացել, որ Սարգիս Վարդապետը համաձայնվել է բնակվել այնտեղ: Ինչ վերաբերում է Շողագայի վանքին, ապա այնքան բարձր մակարդակի վրա է գտնվել այն, որ արժանացել է Սարգիս Վարդապետի հավանությանը՝ այնտեղ աշխատելու առումով: Եվ իրոք, Շողագայի վանքի միջավայրում է Սարգիս վարդապետը աճել ու հետագայում, Սևանի վանքում որոշ ժամանակ աշխատելուց հետո, արժանացել հայոց կաթողիկոսական արժանին: Տեքստում ուշագրավ է նաև պատմիչ Ստեփանոս Ասողիկի կողմից Շողագա տեղանվան ստուգաբանությունը: Նա այդ տեղանվան հիմքում տեսնում է հայերենի «շող» արմատը: Անշուշտ բառի ստուգաբանական իմաստը մեծամուն պատմիչը համակցում է Շողագայի բարեխառն կլիմայի և գեղեցիկ բնության հետ, որ այդ տեղանվան իմաստը լրիվ մեկնաբանելու համար այն համեմատում է «Աստծո երեք լույսերի ծագման» հետ:

Շողագայի մասին համեմատաբար ընդարձակ և փաստերով հարուստ տեղեկություններ է պահպանել հայերեն գրավոր աղբյուրներից մեկ ուրիշը՝ Ստեփանոս Օրբելյանի պատմությունը: Ստեփանոս Օրբելյանը ապրել է 13-րդ դարի վերջից մինչև 14-րդ դարի սկիզբը, բայց տեղեկություններ է հաղորդել Շողագայի 9-րդ դարի կյանքի մասին: Ժամանակի այս տարբերությունը, անշուշտ, լրացվել է Ստեփանոս Օրբելյանի կողմից հայոց ձեռագրերի մեջ պահպանված տեղեկություններով, որ քաղել է նա իր պատմությունը հյուսելիս: Թեև այդ ձեռագրերը զանազան պատճառներով մեզ չեն հասել, բայց ընդհանրապես միջնադարյան Հայաստանի մասին Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ տեղ գտած ճշգրիտ փաստերը հաստատում են,

¹³ Ստեփանոսի Տարոնեցույ Ասողկան պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, գլուխ ԼԲ, էջ 259:

տում են, որ Շողագայի մասին մեծամուն պատմիչի հաղորդած տեղեկությունները հավաստի են: Իր պատմության հատվածներից մեկի մեջ նա Շողագայի մասին գրում է. «(Սյունյաց նահապետ Գրիգոր Սուփանի¹⁴ – Գ.Ս.)... իշխանությունը ժառանգեց իր որդի Վասակը, որը փաղաքշարար Գաբրուտն էր կոչվում: Սա փեսայացավ (Հայաստանի սպարապետ Սմբատ Բագրատունու՝ Գ.Ս. որդի) Հայաստանում հետո քազավոր դարձած Աշոտ Բագրատունու՝ նրա դուստր Մարիամին իրեն կին առնելով... Սյունի Վասակ Գաբրուտ Մեծ սեպուհ-իշխանը մատաղ հասակով երիտասարդ ժամանակ վախճանվեց՝ թողնելով երեք որդի, որոնցից ավագը Գրիգորն էր, որը ևս Սուփան կոչվեց, մյուսներն էին Սահակը և Վասակը:

Այնուհետև Երանելի Մարիամ տիկինը, նրա դին զարդարելով քազավորական զարդերով, շատ մեծ քափորով... Չաքարիա կաթողիկոսի հետ տարավ, քաղեց գերեզմանոցում՝ իր նախնիների մոտ: Նրա իշխանությունը ժառանգեց իր Գրիգոր Սուփան որդին...

Այս ժամանակ Սևանա կղզում հռչակված առաքինությանը փայլում էր երանելի Մաշտոցը... Մեծ տիկին Մարիամը՝ Վասակ Սյունու կինը, գալիս է սուրբ Մաշտոցի մոտ, բազում քախանձանքներով նրան համաձայնեցնում է, և ձեռնարկելով կառուցում են գեղեցկազարդ եկեղեցիներ՝ մեկը սուրբ առաքյալների, մյուսը՝ սուրբ Աստվածածնի անունով... հայոց երեք հարյուր քսաներեք թվականին... Դրա համբավից իշխանաց իշխան Աշոտը... սուրբ եկեղեցուն ժառանգություն է տալիս գյուղեր՝ Վարսերը, Յամաքաբերդը, Գոմաձորը, Բերդը, Ուռյաց տափը... և այգիներ Գառնիում, Երևանում ու այլ տեղերում... Այնուհետև այս Մարիամը շինում է Շողվագա մեծապայծառ եկեղեցին՝ Պետրոս սուրբ Առաքյալի անունով: Այնտեղ միաբանություն է հիմնում՝ քահանաների բազմամարդ դասերով, իր տիրոջ՝ Սյունյաց իշխան Վասակի հոգու համար: Եվ հազարացի¹⁵ մարդկանցից վարսուն հազար դրամով գնելով Շողվագ գյուղը, աշխարհական բոլոր հարկերից ազատ նվիրում է սուրբ եկեղեցուն որպես սեփական կալվածք: Այսպես էլ մի գյուղ Մազագ գավառում երեք հազար դահեկանով գնում ու տալիս է սուրբ եկեղեցուն: Այդ գյուղի անունն էր Գներ: Հաստատում է անջնջելի հիշատակագրությանը Գևորգ Կաթողիկոսի, Սյունյաց Հովհաննես եպիսկոպոսի, Սյունյաց տեր Գագիկի ու Վասակի երբայր Հրահատի, Արտավազ Շաղատնեցու և բազմաթիվ այլ ազնվականների ու իշխանների ներկայությամբ»:¹⁶

Տեքստի տվյալներից հասկանալի է, որ Շողագա (բառացի՝ Շողվագ) բնակավայրը կառուցված է եղել Մարիամից առաջ, անհիշելի ժամանակներից, իսկ Շողագայի վանքը կառուցել է ինքը՝ Մարիամը: Մարիամի քաղաքական ասպարեզ գալու և նրա կողմից Շողագայի վանքն կառուցելու

¹⁴ Սա Գրիգոր Սուփան 1-ինն է:

¹⁵ Հազարացի են անվանել արաբներին:

¹⁶ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986 թ., էջ 172–176:

կունկրետ ժամանակաշրջանի հարցը դեռ կարոտ է ուսումնասիրման: Վերոհիշյալ տեքստի տվյալները ինչ-որ չափով պատասխան են տալիս այդ հարցերին: Այսպես՝ Սևանա վանքերը, մասնավորապես Առաքելոց վանքը Մարիամի խնդրանքով և Սևանա վանահայր Մաշտոցի համաձայնությամբ կառուցվել է հայոց երեք հարյուր քսաներեք թվականին, այսինքն՝ Քրիստոսի 871 թվականին: Մարիամի հայր Աշոտը, որը հիմնադրել է Բագրատունյաց հարստությունը ու գահակալել է 885-890 թվականներին, այցելել է Սևանա Առաքելոց եկեղեցուն, երբ իշխանաց իշխան էր, այլ ոչ թե քազավոր, այսինքն՝ 885 թվականից առաջ: Եվ վերջապես, հայոց կաթողիկոս Գեորգ 2-րդը, որը ներկա է եղել Շողագայի եկեղեցու բացման աւարտողություններին, կաթողիկոս է ընտրվել 877-897 թվականներին: Թվական այս տվյալները ցույց են տալիս, որ Մարիամը իր ամուսին Վասակի մահից հետո ակտիվ քաղաքական ասպարեզում երևացել է սկսած 871 թվականից, երբ կառուցել է Սևանա Առաքելոց եկեղեցին, որը արժանացել է հայոց իշխանաց իշխանի ուշադրությանը: Ինչ վերաբերում է Շողագայի եկեղեցուն, ապա այն կառուցվել է Առաքելոց եկեղեցուց հետո, այսինքն՝ 871 թվականից հետո, բայց ոչ ուշ, քան 897 թվականը, երբ մահացել է այդ եկեղեցու բացման արարողություններին մասնակցող Գեորգ 2-րդ կաթողիկոսը: Իհարկե, 871 թվականից մինչև 897 թվականը, որը կազմում է շուրջ 26 տարի, բավական մեծ ժամանակաշրջան է մի եկեղեցի, տվյալ դեպքում Շողագայի եկեղեցին կառուցելու համար: Բնական է, որ Շողագայի եկեղեցին կառուցվել է այդ երկար ժամանակաշրջանի հատվածներից մեկումնեկում, որը, ըստ վերոհիշյալ տեքստի տվյալների, անորոշ է ու կարոտ ուսումնասիրման:

Մարիամի քաղաքական ասպարեզում հարատևելու և Շողագայի եկեղեցու կառուցման որոշակի թվականների մասին պատկերացում է տալիս Ստեփանոս Օրբելյանի պատմության հետևյալ հատվածը.

«Իսկ այնուհետև այն ժամանակ Գրիգոր Սուփանը և իշխանիկ կոչված Վասակը՝ Սյունյաց տերերը, աստվածային տնօրինությամբ խորհրդակցելով Արծրունյաց տան իշխան Գերենիկ կոչված Գրիգորի ու Հայաստանի ուրիշ իշխանների հետ, խնդրում են Ամիր Ահմադ ամիրապետին և Աշոտ Բագրատունուն դարձնում են Հայաստանի թագավոր... Իսկ Աշոտ թագավորը հինգ տարի թագավորելուց հետո վախճանվում է, և նրա թագավորությունը ժառանգում է իր որդի Սմբատը, որին Ափշինի հրամանով Հայոց թագավոր են օժտում կաթողիկոս Գեորգը և Սյունյաց եպիսկոպոս Հովհաննեսը, վրաց Բղեշխ Ատրենեսեղը, Սյունյաց իշխան Աշոտը, Արծրունյաց իշխան Գագիկը՝ ուրիշ իշխաններով հանդերձ:¹⁷ Սմբատ թագավորին ու բոլոր իշխաններին... Եվ դա բավական ժամանակ խաղաղություն բերեց ամբողջ Հայաստանին: Դրա համար էլ եկեղեցիների շինարարությամբ զբաղվեցին ամենքը, առավել ևս՝ Սյունյաց տեր Վասակի որդիներ՝ Գրիգոր

¹⁷ Դա 899 թվականն էր:

Սուփանը, Սահակը և Վասակը, իրենց մայր Մարիամը՝ Գեղարքունիք գավառում, քանի որ ծովակի շուրջ գտնվող այդ նույն գավառը նրանց էր ժառանգության բաժին հասել: Իսկ Սյունյաց իշխանների գահակալական բուն տիրույթներն էին Բաղքը, Վայոց ձորը և շրջակա մյուս տեղերը:

Ուրեմն այսպես. ինչպես վերև ասացինք, Մարիամը կառուցում է Սևանի եկեղեցիները, հետո էլ Շողագայինը: Իսկ Սուփանը շինում է հոգևոր հոտի զարմանակերտ փարախը Կոթ գյուղաքաղաքում՝ սուրբ Աստվածածնի անունով...

Յուսուփը, որը կամենում էր կլանել ամբողջ Հայաստանը... ուզեց ջնջել Սյունիք նահանգը ու իշխաններին բռնել: Իսկ Սյունյաց գահերեց իշխան Սմբատը, հավաքելով եղբայրներին... իր մայր Շուշանին, իր կին Սոփիին, որը... Վասպուրականում թագավորող Գագիկի քույրն էր, մի փոքրիկ, ծծկեր տղայով, և իր եղբայր Սահակի կնոջը, որ Գուգարաց Բղեշխի դուստրն էր, տարավ, ամբացրեց Երմշակի անառիկ ամրոցում. իսկ իրենք փախուստի դիմեցին... Գրիգոր Սուփանն ու իր երբայրները մնացին իրենց տներում՝ ամբացրած լեռների կատարներին ու ժայռերի ծեղպերում... Իսկ անհիշյալ Յուսուփն այդ իմանալով ասպատակ սփռեց ամբողջ նահանգում... Երբ փրկության ամեն մի հնար վերջացել էր... Սյունյաց իշխան Գրիգոր Սուփանը եկավ Յուսուփի մոտ՝ անձնատուր լինելու, որպեսզի դրանով հնարավոր լինի զերծ մնալ վերահաս չարիքից... Իսկ անհիշյալ Յուսուփը... գալիս է Դվին՝ իր հետ ունենալով Գրիգոր Սուփանին... գաղտնապես նրան մահու թույն է մատուցում... ու նա տագնապով շունչը փչում է... Այնուհետև Սյունյաց հայկազուն իշխանները՝ Սուփան անվանված Գրիգորի եղբայրներ Սահակն ու Վասակը, իրենց մոր՝ երանելի տիկին Մարիամի հետ իրենց կյանքի փրկության համար հնար որոնելով ու սրտապնդվելով, ուզեցին պոկվել անօրենի ձեռքից և փախչել, ընկնել իրենց աշխարհի ամուր տեղերը, բայց տարագիր չդառնալ՝ մինչև անցնի աստծու բարկությունը... Եվ արագաշարժ նավակներով գնացին, ամբացան Սևանա կղզում: Յուսուփն այս լսելով՝ նրանց հետևից գործ ուղարկեց, որ եկավ և նստեց կղզու դիմաց, լճափին: Իսկ նրանք վախենալով, որ թերևս այդ չար մարդկանց ստեղծած հնարավորությամբ իրենց հարազատ փոթորկահույզ լճի զնդանում բռնվեն, այնտեղից դուրս գալով՝ զիջեցին շատ նավակներով անցան այն կողմը և գնացին Մրափոր ամուր գավառը: Այդ իմանալով՝ գործը նրանց հետապնդեց, բայց նախ մտնելով կղզի՝ ամեն ինչ կողոպտեց: Ապա իշխանները, տեսնելով եկած-հասած հրոսակներին, ետ դարձան, հույժ քաջությամբ շատերին կոտորեցին, ուրիշներին էլ փախուստի մատնեցին, իսկ իրենք անցան գնացին Գարդմանի ու Արցախի ամուր աշխարհը և մնացին այնտեղ՝ վերին օգնությունն ակնկալելով: Եվ հենց այնտեղ էլ թափառականության ու պանդխտության մեջ վրա հասավ երանելի տիկին Մարիամի՝ իրենց մոր փախճանը: Նրան խնկելով ու զնոսելով՝ դրեցին փայտե տապանի մեջ, մինչ նախախնամության գթության և իրենց հայրենի տերությունը վերադառնա-

յու օրը՝ նման Հովսեփի ոսկրերին, որ խորայելացիների հետ Եգիպտոսում էին և նրանց կողմից բերվեցին Ավետյաց երկիր: Իսկ երբ իշխանները վերադարձան, իրենց մոլոր շատ շքեղ պատվով բերեցին ու խիստ բազմամարդ հանդեսով գերեզման դրեցին իր կառուցած Շողվագա եկեղեցու մոտ:

Իսկ անիծյալ Յուսուփը, քիչ օրեր անց դուրս գալով Դվինից, կրկին անգամ մտածեց ձեռք գցել Սմբատ արքային, որն ամրացել էր Աշորնյաց ձորում, Կապույտ կոչված բերդում: Նա երդմամբ հնարամտում ու այնտեղից արքային դուրս է հանում, վերցնում... գալիս է կովելու Երմջակի անառիկ ամրոցի դեմ... և այնտեղ Սմբատ սուրբ թագավորին գերմարդկային սարսափելի տանջանքներով սպանեցին և հրամայեցին տանել Դվին ու մեռած մարմինը կախել փայտից... Սա տեղի ունեցավ հայոց երեք հարյուր վաթսուներկու թվականին... Այսքան անցքերից հետո Սմբատի... որդի Աշոտը փախուստի մեջ էր Բյուզանդական կայսեր մոտ: Ռոմանոս կայսրը սրան թագադրելով ուղարկեց Հայաստան»:¹⁸

Թե առաջին տեքստում և թե երկրորդում ընդգծվում է, որ Շողագայի եկեղեցին կառուցվել է Սևանա Առաքելոց եկեղեցուց հետո: Երկրորդ տեքստից իմացանք նաև, որ Շողագայի եկեղեցուց հետո է կառուցվել Կոթ գյուղաքաղաքի սուրբ Աստվածածին եկեղեցին: Նրա կառուցողն է եղել Մարիամի ավագ որդին՝ Գրիգոր Սուփան 2-րդը, որը, ըստ Ստեփանոս Օրբելյանի, սպանվել է Յուսուփի կողմից 911 թվականին, երբ դեռ կենդանի էր իր մայր Մարիամը: Երկրորդ տեքստի տվյալներից հասկանալի է նաև, որ Մարիամը մահացել է և նրա դիակը Շողագա եկեղեցու մոտ թաղվել է այն ժամանակ, երբ Հայաստանում սկիզբ է առել խաղաղությունը՝ հավանաբար կապված Սմբատ 1-ի (891-914) որդի Աշոտ 2-րդի կամ Աշոտ Երկաթի (915-929/930) թագավորության հետ: Այս փաստերից ելնելով կարելի է ասել, որ Մարիամը ակտիվ քաղաքական ասպարեզում մնացել է 871 թվականից մինչև իր մահը՝ 915 թվականը, այսինքն՝ շուրջ 44 տարի: Հենց այդ երկար ու ձիգ ժամանակաշրջանի հատվածներից մեկն ու մեկում էլ Մարիամը կառուցել է Շողագայի եկեղեցին: Շողագայի եկեղեցու կառուցման ժամանակաշրջանի վերաբերյալ ուշագրավ տեղեկություն է պահպանել եկեղեցու տաճարի ներսի կողմի քարերի վրա՝ մի ամբողջ շրջագծով փորագրված հետևյալ արձանագրությունը. «..... ի թագաւորութան..... կանգնեցի գեկեղեցիս հաստատ է սա յանու գլխատր առաքելոյն Պետրոսի..... վասն յիշատակի ծնողացն իմոց գնեցի գգիւղս»:¹⁹ Այնտեղ է, որ արձանագրությունը պակասավոր է: Եղած նյութը պատմում է, որ եկեղեցի է կառուցվել, այն նվիրվել է Պետրոս առաքյալին և կառուցողի ծնողների հիշատակի համար գյուղ է գնվել: Այս փաստերից ելնելով կարելի է ասել, որ հիշյալ քարակերտ արձանագրությունը Շողագայի մայր եկեղեցու ծննդականն է: Սակայն անհրաժեշտ է պարզաբանել, թե ով և երբ է

¹⁸ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 176-188:

¹⁹ Գ. Ալիշան, Միսական, էջ 51:

կառուցել այս եկեղեցին: Այդ մասին տեղեկություններ են պահպանվել Ստեփանոս Օրբելյանի պատմության հետևյալ հատվածում (այդ հատվածը ամբողջովին մեջ է բերվել նախորդ շարադրանքում. այստեղ այն մեջ է բերվելու կրճատումներով). «Այս Մարիամը շինում է Շողագա մեծապայծառ եկեղեցին՝ Պետրոս սուրբ առաքյալի անունով..... իր տիրոջ՝ Սյունյաց իշխան Վասակի հոգու համար.... գնելով Շողվագա գյուղը..... նվիրում է սուրբ եկեղեցուն որպես սեփական կալվածք: Այստեղ էլ մի գյուղ Մագագ գավառում.... գնում ու տալիս է սուրբ եկեղեցուն: Այդ գյուղի անունն է Գներ..... Հաստատում է անջնջելի հիշատակագրությամբ Գեորգ կաթողիկոսի.....»:²⁰ Այնտեղ է, որ Ստեփանոս Օրբելյանի պատմության սույն հատվածում ևս տեղեկություն է հաղորդվում Շողագայի մայր եկեղեցու կառուցման, այն Պետրոս առաքյալի անունով կոչելու և գյուղ գնելու մասին: Սակայն Ստեփանոս Օրբելյանի պատմությունում, որպես լրացում, ասվում է, թե եկեղեցին կառուցել է Մարիամը, որը, ինչպես իմացանք նախորդ շարադրանքից, եղել է հայոց արքա Աշոտ 1-ի (885-890) դուստրը: Ըստ Ստեփանոս Օրբելյանի պատմության հիշյալ հատվածի տվյալների, Շողագայի մայր եկեղեցին կառուցելու ժամանակ հայոց կաթողիկոսն է եղել Գեորգ 2-րդ Գառնեցին, որը կառավարել է 877-897 թվականներին: Անշուշտ Ստեփանոս Օրբելյանը օգտվել է հայոց ձեռագրերից և գրավոր պատմություններից, երբ մեծ վստահությամբ Մարիամին է համարել եկեղեցին կառուցողը: Սակայն այդ մասին եղած ձեռագրերը զանազան պատճառներով, ինչպես ընդգծվել է վերևում, ոչնչացել են: Շողագայի մայր եկեղեցին Մարիամի կողմից կառուցվելու մասին Ստեփանոս Օրբելյանի պատմությունից բացի տեղեկություն է պահպանել մի այլ աղբյուր: Դա Հովհաննես 6-րդ կաթողիկոս Դրասխանակերտցու պատմությունն է: Հովհաննես Դրասխանակերտցին (845-925) ապրել է Ստեփանոս Օրբելյանից (13-րդ դարի վերջ - 14-րդ դարի սկիզբ) շուրջ 400 տարի առաջ: Որպես կաթողիկոս նա կառավարել է 897-925 թվականներին և հաջորդել է Գեորգ 2-րդ Գառնեցուն (877-897), որը, ըստ Ստեփանոս Օրբելյանի, ինչպես ընդգծվեց վերևում, եղել է Շողագայի մայր եկեղեցու կառուցման վկա: Փաստորեն Հովհաննես Դրասխանակերտցին եղել է Մարիամի ժամանակակիցը: Իր պատմությունում, ինչպես հիշատակվել է նախորդ շարադրանքում, Հովհաննես Դրասխանակերտցին ասում է, թե Սահակը և Վասակը տարան իրենց մայր Մարիամի մարմինը դրին նրա գերեզմանոցում, Շողագայում իր կառուցած եկեղեցու մոտ: Մարիամի ժամանակակից Հովհաննես Դրասխանակերտցու պատմության այս հատվածը հաստատում է Ստեփանոս Օրբելյանի կարծիքը, թե Շողագայի մայր եկեղեցու կառուցողը եղել է Մարիամը:

Ստեփանոս Օրբելյանը ոչ միայն Շողագայի մայր եկեղեցու հիշյալ քարակերտ արձանագրության համեմատությամբ լրացուցիչ փաստեր է

²⁰ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 176:

քերել եկեղեցին կառուցողի անվան հետ կապված, այլ նույնիսկ շեղումներ է կատարել քարակերտ արձանագրությունից: Քարակերտ արձանագրությունում ասվում է, որ եկեղեցին կառուցողը գյուղ է գնել և նվիրել եկեղեցուն՝ իր ծնողների հիշատակի համար, իսկ Ստեփանոս Օրբելյանը ասում է, թե Մարիամը եկեղեցին կառուցել է իր անուսին Վասակի հիշատակի համար. նա գնել է ինչպես Շողագա, այսպես էլ Գներ գյուղերը ու նվիրել իր կառուցած եկեղեցուն: Եթե հիմք ընդունենք քարակերտ արձանագրության տվյալները (իսկ մենք, իհարկե, պետք է հենվենք քարակերտ արձանագրության տվյալների վրա), ապա կարող ենք ասել, որ եկեղեցի կառուցելու ժամանակ կառուցողի (Մարիամի) ծնողները մահացած են եղել, այսինքն՝ եկեղեցին կառուցվել է Աշոտ 1-ինի (885-890) մահից հետո, այն է՝ 891 թվականին կամ նրան հաջորդող ժամանակաշրջանի որևէ հատվածում: Սակայն, ինչպես ընդգծվել է վերևում, այն չպետք է անցնի 897 թվականից, երբ մահացել էր Գեորգ 2-րդ կաթողիկոսը, որը այդ եկեղեցու կառուցման վկան է եղել: Փաստորեն Շողագայի Պետրոս առաքյալի եկեղեցին Մարիամը կառուցել է 891-897 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում, Մմբատ 1-ի (891-914) թագավորության օրերին: Ղ. Ալիշանի կարծիքը, թե այդ եկեղեցին կառուցվել է 877-886 թվականներին,²¹ անհիմն է:

Այս բոլորից հետո կարելի է վերականգնել քարակերտ արձանագրության չպահպանված բառերը (բացի թվականը ցույց տվող բառից). «[Ես Մարիամ] ի թագավորութեան [Մմբատին] կանգնեցի զեկեղեցիս [Շողագայ] հաստատ է սա յանուն զլիսաւոր առաքելոյն Պետրոսի [ի թվին]..... վասն յիշատակի ծնողացն իմոյ գնեցի զգյուղս»:

Շողագա բնակավայրի անունը հետագայում հիշատակվել է 1312 թվականին գրված հայերեն ձեռագիր մի հիշատակարանում, որի հեղինակը անհայտ է:

Ձեռագրում ընդգծվում է հիշյալ ժամանակաշրջանում Շողագայի վիճակի, նրա քաղաքական կյանքի մասին. «(Խաչենցի) Գրիգոր, մեծ իշխան հայոց, տէր և պարոն Փոքր Սիւնեաց, Հանդաբերդոյ և Ականց և Բարձր լերանց ծովակին Գեղամայ, Սոթից մինչև Շաղուազայ»:²² Տեքստի տվյալներից հասկանալի է, որ 1312 թվականին, այսինքն՝ 14-րդ դարի սկզբին Շողագան կանգուն էր, այն մտնում էր Փոքր Սյունիքի կազմում և ենթարկվում էր հայոց Մեծ իշխան Գրիգոր Խաչենցուն:

Շողագայի մասին տեղեկություն է պահպանվել Սևանա մի ձեռագիր ավետարանում: Այն գրել է Սկրտիչ եպիսկոպոսը, որը եղել է Շողագայի վանքի առաջնորդը: Ավետարանի հիշատակարանում այդ մասին կարդում ենք. «Ես առաջնորդ Շողագու Սկրտիչ պարոն տերս գրեցի»:²³ Ավետարանը

²¹ Ղ. Ալիշան, Միսական, էջ 151:

²² Ղ. Ալիշան, Միսական, Վենետիկ, 1893, էջ 532:

²³ Մ. Սմբատեանց, Տեղեկագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազետ գավառ, Վաղարշապատ, 1895, էջ 511:

գրվել է 1670 թվականին: Այս փաստը ցույց է տալիս, որ 1670 թվականին ինչպես Շողագա բնակավայրը, այնպես էլ նրա վանքը կանգուն են եղել: Ուշագրավ է նաև այն փաստը, որ վերոհիշյալ ավետարան գրող Սկրտիչ եպիսկոպոսը աշխատել է Շողագայի եկեղեցուն և համարվել է նրա առաջնորդը: Իսկ սա նշանակում է, որ Շողագայի եկեղեցին շարունակել է մնալ իր բարձր մակարդակի վրա, որի վանահայրը վանքի արգասաբեր միջավայրում աճելով հասել է ձեռագրեր, հատկապես ձեռագիր ավետարաններ գրելու աստիճանի:

Վերջին անգամ Շողագան հիշատակվել է հայերեն ձեռագիր մի մատյանում: Այն պատկանում է Սիմեոն կաթողիկոս Երևանցուն: Այդ մատյանը հայտնի է «Ջամբո» անունով: Մատյանում Շողագայի մասին պահպանված է հետևյալ տեղեկությունը. «Շողագայի վանքի որպիսությունը.— Այս վանքը (որ կոչվում է սուրբ Գրիգոր և գտնվում է Գեղարքունիքում) նախասպես հիմնվել է թվին:

Նրան են պատկանում Գեղարքունի կողմի հետևյալ գյուղերը՝ Կորգաբակը, Մեծ Չագը, Փոքր Չագը, Եզնիստն, Շղուտը, Ծակքարը, Էրբեճին, Քրափորը, Գիլանչին, Կարմիրաբարը, Մյուս Կարմիրաբարը, Եաստիեղուներ, Մասրիսը, Բալախատափը, Վրացաշենը, Ամբրբարը, Ալթունթախտը, Կարմիր աղբյուրը, Գառնակերը, Գիլիշենը և Հաբուրը: Մասրուց անապատն ևս սրա ձեռքում է»:²⁴

Սիմեոն կաթողիկոսը ծնվել է 1710 թվականին և մահացել է 1780 թ.:

Նա՝ որպես կաթողիկոս, կառավարել է 1763-1780 թթ.: Թվական այս տվյալները ցույց են տալիս, որ Շողագա բնակավայրը և նրա եկեղեցին կանգուն են եղել 18-րդ դարի վերջին քառորդում: 9-րդ դարի վերջին քառորդում, երբ նոր է կառուցվել Շողագայի եկեղեցին, նրան պատկանելիս են եղել ընդամենը երկու գյուղեր, իսկ 18-րդ դարի վերջին քառորդում դրանց թիվը, ինչպես վկայում է մեջբերված տեքստը, հասել է 21-ի: Այս փաստը արդեն խոսում է 900 տարիների ընթացքում Շողագա վանքի հզորանալու, նրա հեղինակության չափազանց աճի մասին:

Սիմեոն կաթողիկոս Երևանցին իր «Ջամբո» կոչվող մատյանում, ինչպես երևում է մեջբերված տեքստից, թույլ է տվել սխալ: Ըստ նրա՝ Շողագա վանքը կոչվել է իբր սուրբ Գրիգորի անունով: Սակայն ինչպես Շողագայի եկեղեցու մայր տաճարի վերոհիշյալ քարակերտ արձանագրությունը, այնպես էլ Ստեփանոս Օրբելյանի պատմության տվյալները վկայում են, որ Մարիամը իր կառուցած այդ վանքը կոչել է Պետրոս առաքյալի անունով:

Շողագան ունեցել է բազմաթիվ եկեղեցիներ, որոնք իրենց հնագիտական բարձր արժեքով ավելի են հարստացնում այդ բնակավայրի պատմությունը: Մայր եկեղեցին, որը հայտնի է այդ բնակավայրի անունով, կառուցվել է գյուղի կենտրոնական մասից բեմահարթակի նման վեր խոյացող ու դեպի արևմուտք ձգվող հարթազուխ բարձունքի վրա, որ կոչվում է Մեերի

²⁴ Սիմեոն Երևանցի, Ջամբո, Վաղարշապատ, 1873, էջ 284:

փուլ: Սրբատաշ տուֆ քարից կառուցված անսյուն այդ եկեղեցին ունեցել է 20 կանգուն երկարություն և 14 կանգուն լայնություն:²⁵ Այն բաղկացած է եղել տաճարից և խորանից: 19-րդ դարի վերջում դեռ պահպանված են եղել խորանը, ինչպես նաև տաճարի հյուսիսային ամբողջ պատը իր երեք սյունազարդ կամարներով ու փոքր լուսամուտներով:²⁶ Այժմ, այսինքն՝ 20-րդ դարի վերջում, քանդվել ու անհետացել են խորանը և հիշյալ հյուսիսային պատի մեծ մասը:²⁷ Թեև վերջերս փորձ է արվել վերանորոգել եկեղեցին, բայց վերանորոգողները միայն գործ ծեփոնով փակել են քանդվող պատերի փլվող շուրթերը և ամեն մի լավ սպասելիքի փոխարեն դրել տխուր վերջակետ:

Շողագայի մայր եկեղեցուց դեպի արևմուտք տարածված են քանդված, ավերված վիճակում գտնվող երկու փոքրիկ եկեղեցիներ, որոնք կառուցված են եղել նույնպիսի սրբատաշ տուֆ քարերից, ինչպիսին եղել է Շողագայի մայր եկեղեցին: Նրանցից առաջինը, որն ունի օրորացի ձև, գտնվում է անմիջապես մայր եկեղեցու արևմտյան կողմում, իսկ երկրորդը՝ նրանից դեպի արևմուտք տարածված գերեզմանոցում: Հաշվի առնելով քարերի գույնը, նրանց միակերտ հղկվածությունը և շաղախի միևնույն որակը՝ կարելի է ասել, որ Շողագայի մայր եկեղեցին և այդ երկու փոքրիկ եկեղեցիները կառուցվել են միևնույն ժամանակ, Սյունյաց մեծ տիկին Մարիամի կողմից: Այս կապակցությամբ որպես փաստ պետք է նկատի ունենալ այն, որ ինչպես Հովհաննես Դրասխանակերտցին, այնպես էլ Ստեփանոս Օրբելյանը հիշատակում են, որ Մարիամի մահից առաջ վերոհիշյալ փոքրիկ օրորացած եկեղեցին կառուցված էր, և Մարիամին էլ թաղել են նրա մեջ:²⁸ Անշուշտ մայր եկեղեցին այդ երկու փոքրիկ եկեղեցիների հետ ժամանակին կազմել է մի համալիր՝ քահանաների բազմամարդ դասերից կազմված միաբանությամբ:

²⁵ Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, Տփլիս, 1857, էջ 123:

²⁶ Ղ. Ալիշան, Սիսական, էջ 51 (տես՝ լուսանկարը): Մ. Սմբատյանց, Տեղագիր

Գեղարքունի ծովազարդ գառառի..., էջ 510:

²⁷ Ե. Լալալյանը տեղեկացնում է, որ Շողագա եկեղեցու փլված արևելյան պատի քարերը, որոնց վրա կային եկեղեցու շինարարական արձանագրության որոշ բառեր, 1910 թ. օգտագործվել է գյուղի ս. Աստվածածին եկեղեցու վերանորոգման համար, որի հետևանքով անհետացել են ներքին եկեղեցու շուրջը պատող արձանագրության շատ բառերը: (Ե. Լալալյան, Նոր Բայազետի գավառի վանքերը), (Ազգագրական հանդես, գ. 24, հ. 1, Թիֆլիս, 1913, էջ 57):

²⁸ Ե. Լալալյանը, հենվելով Հովհաննես Դրասխանակերտցու և Ստեփանոս Օրբելյանի հաղորդած տեղեկությունների վրա, 1918 թվականին փորձել է պեղումներ կատարել այդ մատուռի մեջ՝ Մարիամ արքայադստեր դամբարանը հայտնաբերելու, բայց այնտեղ այդ ժամանակ գյուղացիների կողմից իրենց հանգուցյալներին թաղելու համզամանքը ստիպել է որան հրաժարվել պեղումներ կատարելու մտքից (Ե. Լալալյան, Նոր Բայազետի գառառի վանքերը (Ազգագրական հանդես, գիրք 24, 1913, հա. 1), էջ 57-58):

Այժմ համալիրը իրենից ներկայացնում է անկենդան ավերակների մի դաշտ:²⁹

Շողագա բնակավայրի արևելյան մասում կա շատ հին ժամանակներից կառուցված մի վանք, որը Սիմեոն Երևանցու կողմից կոչվել է Մասրուց անասպատ անունով՝ իր շուրջը առատ մասքենիներ ունենալու պատճառով: Այն ժողովրդի կողմից այժմ կոչվում է սուրբ Կարապետի վանք: Վանքը կառուցված է խաչաձև հատակագծով, ինչպես հայկական շատ վանքերը: Վանքը շարված է չկոփված քարերով ու կրով: Ունի բոլորակ ամփոփ կաթողիկե ամբողջությամբ: Այդ վանքը ժամանակի ընթացքում խարխլվել էր: Սակայն վերջերս վերանորոգվել է այն:

Ղ. Ալիշանը³⁰ հիշատակում է, որ այդ վանքի շրջակայքում տարածված է եղել ավերակ գյուղ, որը կոչվել է Սպիտակ եկեղեցի: Անշուշտ այդպես պետք է կոչված լիներ նախ եկեղեցին և ապա նոր գյուղը: Վանքը նման անուն կարող էր ստանալ այն պատճառով, որ այն, շարված լինելով չկոփված քարերով, դրսի կողմից սվաղված է եղել սպիտակ շաղախով (մինչև հիմա քարերի վրա, նրանց արանքում դեռ պահպանված են սպիտակ սվաղի հետքերը): Թերևս ճիշտ կլինի, որ այդ եկեղեցին կոչել իր արևմտյան անունով՝ Սպիտակ եկեղեցի:

Սկսած 9-րդ դարի վերջին քառորդից մինչև 18-րդ դարի վերջին քառորդը, կյանքը անընդհատ հարատևել է Շողագա բնակավայրում: Այդ են հաստատում ոչ միայն վերոհիշյալ հայերեն լեզվով ձեռագրերն ու գրավոր պատմությունները, այլև մեքսոպատառ քարակերտ արձանագրությունները, որոնք տարբեր ժամանակներում փորագրվել են ինչպես Շողագա բնակավայրի եկեղեցիների պատերին, այնպես էլ նրանց շրջակայքում գտնվող խաչքարերին ու գերեզմանաքարերին:

²⁹ Ենթադրություն կա, թե մայր եկեղեցուց արևմուտք գտնվող եկեղեցիները նախապես կառուցվել են 5-րդ դարում, բայց վերակառուցվել են 9-րդ դարում (Հայկական սովետական հանրագիտարան (այնուհետև՝ ՀՍՀ), 8, Երևան, 1982, էջ 540): Այս փաստը մատնանշում է 5-րդ դարում ոչ միայն հիշյալ եկեղեցիների, այլև նրանց շրջակայքում բնակավայրի՝ Շողագայի գոյության մասին:

³⁰ Ղ. Ալիշան, Սիսական, էջ 52: (Ըստ Ղ. Ալիշանի տեղեկության, այդ գյուղը մեծ չի եղել, այնտեղ ապրել են ընդամենը 30 ընտանիքներ: Նրանք ազգությամբ եղել են քարաբներ): Հավանաբար այդ մահմեդականները այնտեղ ապրել են շատ կարճ ժամանակով, 4-5 տարի՝ 1826-1830 թվականներին: Սպիտակ եկեղեցի կոչվող գյուղը Շողագայի աճած ընտանիքներից է գոյացել և եղել է Շողագայի անբաժան մասը, ինչպես հիմա էլ այդ տարածքում բնակարաններ կան, բայց նրանք ներկայացնում են իրենցից որպես Շողագա-Չորագյուղի մի թաղամասը, իհարկե, Վանքի թաղամաս անունով: Սակայն օտարները՝ խոսքը 1826-1830 թվականներին այնտեղ ժամանակավորապես բնակվող մահմեդականների մասին է, բնակվելով այդ թաղամասում, այն ներկայացրել են որպես առանձին գյուղ՝ Սպիտակ եկեղեցի անունով:

Շողագայի մայր եկեղեցու տաճարը բաղկացած է եղել երկու քա-
ժիններից՝ մեծ և փոքր: Տաճարի փոքր բաժնում այժմ էլ կան մի շարք
խաչքարեր: Դրանց վրա տարեվերը գրված են հայոց թվանշաններով,
որոնք արտահայտված են հայոց տառերով: Ժամանակակից թվականը
ոլորշելու համար պետք է տառերով արտահայտված հայոց թվականի վրա
ավելացնել 551, որովհետև հայկական թվագրությունը սկսվում է այդ
թվականից, այլ ոչ թե 1 թվականից, այսինքն՝ Քրիստոսի ծննդից: Այդ
խաչքարերից փոքրի վրա գրված է. «Սուրբ խաչս բարեխաւս տէր
Վարդանին, ՋՁ» (1457):

Մյուս խաչքարի վրա գրված է. «Սբ. խաչս բարեխաւս է Նանայ փաշին»:

Մի տապանաքարին, որի վրա պատկեր է նկարված, գրված է հետևյա-
լը. «Աստուած որորմի Բաղդասարի հոգոյն»:

Շողագայի մայր եկեղեցու արևմտյան կողմում գտնվող քայքայված
օրորոցաձև փոքրիկ եկեղեցու պատերին, որոնք դեռ կանգուն են,
արձանագրություններ չկան: Սակայն նրա շուրջ կան խաչքարեր, որոնց
վրա կան արձանագրություններ: Դրանցից մեկի վրա գրված է. «Սբ. խաչս
բարեխաւս Փանոս աղին. թվ. ՌԻԷ» (1578):

Մյուս խաչքարի վրա գրված է. «Սբ. Խաչս բարեխաւս Բէրամին,
Գուշանին թվ. ՌԾԱ» (1602):

Խաչքարերից մեկ ուրիշի վրա գրված է. «Սբ. խաչս բարեխաւս Տէր
Վրդանիսին. թվ. ՋԴ» (1541):

Հաջորդ խաչքարի վրա գրված է. «Սբ. խաչս բարեխաւս է Հալսասուր
աղին. թվ. ՋԿԵ» (1516):

Եվ վերջապես մի այլ խաչքարի վրա գրված է. «Սբ. խաչս բարեխաւս
Աղաբին, Ջանհաին թվ. ՋԿԷ» (1518):

Հնարավոր չէ արձանագրություն ակնկալել նաև մայր եկեղեցուց դեպի
արևմուտք տարածված գերեզմանոցում գտնվող փոքրիկ եկեղեցուց, քանի
որ նրա պատերը մինչև հիմքերը քանդված են, քարերը, ցիրուցան եղած ու
անհետացած: Սակայն, հակառակ դրան, նրա շուրջը տարածված գե-
րեզմանոցում պահպանված են խաչքարեր, որոնց վրա կան արձանագրու-
թյուններ: Դրանցից մեկի պատվանդանին գրված է «Ի թվին ՌՁԳ (1234),
յիշխանութեան Ահատին՝ ես սուտ անուն Յովասափս որդի արժանաւոր քա-
հանային Խորդինոյ կանգնեցի գխաչս, յաղաթս յիշեցէք»:

Իրենց վրա արձանագրություններ են կրում ինչպես Շողագա բնակա-
վայրի արևելյան մասում տարածված Սպիտակ եկեղեցին կամ Մասրուց
անապատը (հմմտ. Սուրբ Կարապետի վանք), այնպես էլ նրա շուրջը
տարածված խաչքարերը: Սպիտակ եկեղեցու կամ Մասրուց անապատի
(հմմտ. Սուրբ Կարապետի վանք) տաճարի սեղանի պատի վրա գրված է
հետևյալ արձանագրությունը.

«Ի քազաւորութեան ԱԻՇՆԻ..... (Օշին)

Ի խանութեան ԹԱԹԱՐԻՆ.....

Ի հայրապետութեան ԱԻԱՆԵՄԻՆ (Է) (Յովհաննէս)

Ի թվին ՌԿԸ (1219).....

Եւ միաբան (ուրեան) Լուսաւորչի վանաց»:

Դժվար է ասել, թե քարակերտ այս արձանագրությունը Սպիտակ եկե-
ղեցու կամ Մասրուց անապատի (հմմտ. սուրբ Կարապետի վանք) ծննդա-
կանն է, քանի որ արձանագրությունում կոնկրետ կերպով ոչինչ չի ասվում
այդ մասին: Բայց այդ արձանագրությունը, որ գրվել է 1219 թվականին ու
պատկանում է ավելի վաղ ժամանակաշրջանի, քան այդ վանքի հետ կապ-
ված քարակերտ արձանագրություններից որևէ մեկը ու գրելաձևով էլ
ծննդականի տեսք ունի, կարող է հեռու չլինել նման հավակնություն ունենա-
լուց: Սակայն վանքի շինարարական, նրա ճարտարապետական արվեստը
պատկանում է 9-րդ դարի Բագրատունյաց հարստության եկեղեցաշինա-
կան կլասիկ արվեստին: Այս փաստը արդեն ցույց է տալիս, որ այդ եկեղե-
ցին հավանաբար կառուցվել է ավելի վաղ, այն է՝ 9-րդ դարում, քան վերո-
հիշյալ արձանագրության թվականը (1219 թ.): Այդ եկեղեցին ծառայել է որ-
պես մենաստան, ճգնարան:

Վանքի պարսպի մեջ գտնվող մի խաչքարի վրա գրված է. «Կենաց
խաչս Դուկաս եպիսկոպոսին Է. թվ. ՋԾ» (1501):

Մի ուրիշ խաչքարի վրա գրված է. «Սբ. խաչս բարեխաւս Բարաթ աղին
թվ. ՋՁԹ» (1540):

Վանքի բլուրակ ամփոփ կաթողիկեն ծածկող տանիքի հյուսիսային
կողմի վրա գրված է հետևյալ արձանագրությունը. «Կաման Աստուծոյ նո-
րոզեցաւ եկեղեցիս ի թվ. ՌԿ (161). ի կաթողիկոսութեան Տէր Մելիքսէթին, ի
քազաւորութեան Շահապասին, ի դանութեան Ամիրզիւնայ խանին և Մելի-
քութեան Տէր Վարդանին ես Դաւիթ առաջնորդ վանիցս նորոզել ետու»:

Ակներև է, որ արձանագրությունում հիշատակվում է ոմն Դավիթ ա-
ռաջնորդը, որը 1611 թվականին աշխատել է Սպիտակ եկեղեցու կամ Մաս-
րուց անապատում (հմմտ. սուրբ Կարապետի վանք) և վերանորոգել է տվել
այն: Այս Դավիթ առաջնորդը, ինչպես տեղեկացնում է վանքի արևելյան
պատի մեջ գտնվող խաչքարի արձանագրությունը, հասել է եպիսկոպոսի
աստիճանի և մահացել է 1611 թվականին. «Աւծեալ արեամբ Յիսուսի սուրբ
խաչս բարեխաւս Դաւիթ եպիսկոպոսին հոգոյն. թվ. ՌԿ (1611). յիշեցէք ի
Քրիստոս գԴաւիթ եպիսկոպոս, որ նորոզեաց զեկեղեցիս»:

Հայերեն ձեռագրերում պահպանվել է մի բանաստեղծություն, որի հե-
ղինակը կրել է Դավիթ Գեղամեցի անունը.

«Հազար յիսուն և հինգ թուխ, (1606)

Մաստկացաւ սով վերայ երկրիս.

Երկու ան բոլոր սով տեսաք,
Օտար երկիր վրտարեցաք:
Վայ քեզ Դավիթ Գեղամեցի, վասն մեղացդ այս պատահի»:³¹

Բանաստեղծությունում հիշատակված «Գեղամեցի» բանաստեղծական անունը նշանակում է, որ Դավիթը Գեղամա աշխարհից կամ Գեղարքունիք գավառից է, որի մեջ է մտել նաև Շողագան: Այս Դավիթ Գեղամեցին, ինչպես հասկացվում է բանաստեղծության տվյալներից, ապրել ու գործել է Հայաստանի վրա Շահ-Աբասի կատարած արշավանքի ժամանակաշրջանում, այն է՝ 1603–1605 թթ., ինչպես նաև նրան նախորդող ու հաջորդող ժամանակաշրջանում: Ինչպես վերևում իմացանք, գրեթե այդ նույն ժամանակաշրջանում, այն է՝ 1611 թվականի նախօրյակին Գեղամա աշխարհում, մասնավորապես Գեղարքունի գավառի Շողագա բնակավայրում ապրել ու գործել է Դավիթ անունով եպիսկոպոսը: Ժամանակի, տարածության և միևնույն անվան ընդհանրությունը թույլ է տալիս ենթադրելու, որ հավանաբար բանաստեղծության հեղինակ Դավիթ Գեղամեցին, ինչպես ենթադրել են նաև Ղ. Ալիշանը³² և Մ. Սմբատեանցը,³³ հիշյալ Դավիթ եպիսկոպոսն է:

Դավիթ Գեղամեցին տիրապետել է բանաստեղծական արվեստին: Դա է հաստատում այն փաստը, որ նա վերոհիշյալ բանաստեղծական 4–5 տողերի միջոցով կարողացել է արտահայտել 1603–1605 թվականներին Շահ-Աբասի կողմից Հայաստանի վրա կատարված արշավանքն ու նրա ծանր հետևանքները՝ սովն ու գերեվարությունը, որ վրա են հասել մեկ տարի հետո՝ 1606 թվականին:

Շողագա բնակավայրում կան բազմաթիվ բնական ու արհեստական քարայրեր: Բնական քարայրերը, որոնք արհեստականների համեմատությամբ փոքր են, հիմնականում տարածված են գյուղից հյուսիս–արևմուտք ձգվող սուրբ Հակոբի ձորում: Դրանց թիվը հասնում է հինգի: Արհեստական քարայրերից 15–ը տարածված են Լուսաղբյուրի ձորում՝ Մանգառ կոչվող բարձրավանդակի լանջերին, մեկը՝ գյուղից հարավ տարածված Չոանի ձորում, մեկն էլ՝ գյուղից հարավ–արևմուտք, մոտ 6 կմ հեռավորության վրա գտնվող Մնեյ ձորում: Արհեստական այս քարայրերը ժամանակին ծառայել են որպես բնակարաններ, ինչպես նաև թաքստոցներ:

19–րդ դարի սկզբին գյուղը գրկվում է իր հարազատ Շողագա անունից և կոչվում Վալի–աղալու օտար անունով: Բնակավայրը գրեթե հիմնականում գրկվում է նաև իր բնիկ բնակիչներից և բնակեցվում Ալաշկերտից գաղթած բնակիչներով: Այս հարցերի մանրակրկիտ պատասխանները

³¹ Ղ. Ալիշան, Միսական, էջ 53:

³² Ղ. Ալիշան, Միսական, էջ 52:

³³ Մ. Սմբատեանց, Տեղեկագիր Գեղարքունի ծովազարդ գավառի, որ այժմ Նոր Բայազետ գաւառ, էջ 511, ծանոթ. 1:

շարադրված են սույն աշխատության Ալաշկերտ և Վալի–աղալու գլուխներում:

* * *

Անցել է շուրջ 11 դար, բայց Շողագայի բնակիչները չեն մոռացել հայոց Բագրատունյաց դինաստիայի հիմնադիր Աշոտ I–ի ջրնաղագեղ ու շինարար դուստր Մարիամին, որ արաբ նվաճողից փրկել է Շողագան: Նրա մասին երախտիքի երգեր են հյուսում, երգում հարսանյաց հանդեսներին ու տոնախմբություններին և գովերգում նրան: Ահա այդ ներբողներից մեկը.

Հավքեր այդպես ծափ տալով
Կերթաք դեպի Շողագա,
Եկեք թարմ վարդեր տարեք
Արքայադուստր Մարիամին:

Նա է փրկել Շողագան
Ու կառուցել վանքը վեհ,
Եկեք թարմ վարդեր տարեք
Արքայադուստր Մարիամին:

Արդ հանգչում է մատուռում՝
Իր կառուցած վանքի մոտ,
Եկեք թարմ վարդեր տարեք
Արքայադուստր Մարիամին:

Ալաշկերտ գավառը վաղ հայկական սկզբնաղբյուրներում կոչվել է Բագրևանդ կամ Բագրավան անունով: Ըստ հայկական ժողովրդական միավանդության, որ հասել է Մովսես Խորենացուն,¹ Բագրևանդ գավառում շինարարական և այլ բնույթի կրոնական աշխատանքներ են կատարել հայոց Արշակունիների հարստության արքաներից Տիգրան Վերջինը և իր որդի Վաղարշը: Եթե անորոշ է, թե ով է ավանդական այդ Տիգրան Վերջինը և երբ է նա թագավորել, ապա որոշակի է, որ Վաղարշը համապատասխանում է Վաղարշ 2-րդին (186–198): Ըստ այդ ավանդության, Տիգրան Վերջինը, երբ մեռնում է իր եղբայր Մաժան քրմապետը, նրա մարմինը թաղել է տալիս Բագրևանդ գավառի Բագնաց ավանում (Բագավանում) կամ Դիցավանում ու նրա գերեզմանի վրա կառուցել տալիս բազին կամ դիցարան, իսկ Վաղարշն էլ այնտեղ ժողովրդական տուն է սահմանում նոր տարվա սկզբին, Նավասարդի սահմանագլխին, որպեսզի այդ տեղի գոհերից վայելեն բոլոր անցորդները և հյուրեր ընդունվեն գիշերելու համար:

Ըստ «Աշխարհացոյց»-ի տվյալների, Բագրևանդը եղել է հայոց Այրարատ նահանգի 22 գավառներից մեկը: Այդ գավառի գրաված տարածքի ու սահմանների, նրա ռելիեֆի ու բնական պայմանների մասին «Աշխարհացոյց»-ից քաղում ենք հետևյալ հակիրճ, բայց շատ դիպուկ տեղեկությունը. «Այնուհետև Երասխը հոսում է Արշարունիք գավառով, որից հարավ են գտնվում Բագրևանդ և Ծաղկոտն գավառները, իսկ դեպի հյուսիս՝ Վանանդ և Շիրակ (գավառները)... Եվ Մասիս սարը, որի ստորոտին տարածվում է Կոզովիտ գավառը, դեպի հարավ է թողնում Երասխ գետը: Իսկ Արածանի գետը սկիզբ է առնում ծաղկոտն (գավառից), Ոսկիք կոչվող տեղից և, գնալով դեպի հյուսիս, պատելով Նպատական լեռնագագաթը Բագրևանդ գյուղի մոտ, խառնվում է Բագրևանդ գետին»:² Այնտեղ է, որ Բագրևանդ գավառը տարածված է եղել Արշարունիք, Վանանդ, Շիրակ, Կոզովիտ, Ծաղկոտն գավառների միջև: Նրա արևելքում է գտնվել Ծաղկոտն գավառը, հարավում՝ Կոզովիտ գավառը, հյուսիսում՝ Արշարունիք գավառը, հյուսիս-արևելքում՝ Վանանդ և Շիրակ գավառները: Բագրևանդ գավառով հոսել են Արածանի գետը և նրա Բագրևանդ վտակը: Նրա տարածքում է գտնվել Նպատական կամ Նպատ լեռը: Այդ գավառի արևելյան սահմաններում են գտնվել Ծաղկանց լեռները իրենց Ոսկիք կոչվող գագաթով: Բագրևանդ բնակավայրը, որը այդ գավառի կրոնական կենտրոնն էր, գտնվել է Արածանի գետի և նրա Բագրևանդ վտակի միախառնվելու տարածքին մոտիկ վայրում:

Բագրևանդ գավառի այն տարածքները, որոնց միջով հոսում են մայր Արածանին և իր Բագրևանդ վտակը, փռված են հովիտներ, հարթավայրեր:

¹ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990, էջ 121, 130:

² Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 110–111:

Այդ հովիտների կամ հարթավայրերի այն մասը, որտեղով հոսում է Արածանին՝ մինչև Բագրևանդ վտակին միանալը, կոչվել է Արածանիի հովիտ կամ Չիրավի դաշտավայր:³ Այդ մասում է գտնվել Չարեհավան կամ Չարեհավան քաղաքը, ինչպես նաև Բագրևանդ գյուղը՝ Նպատ կամ Նպատական լեռան լանջին: Դա Բագրևանդի արևելյան մասն է: Իսկ այն մասը, որտեղով հոսում են Արածանին և իր Բագրևանդ վտակը միախառնվելուց հետո, կոչվել է Բագրևանդի հովիտ կամ Վաղարշակերտի դաշտ: Այդ մասում է գտնվել Վաղարշակերտ քաղաքը:⁴ Դա էլ Բագրևանդի արևմտյան մասն է: Հետագայում այդ երկու հովիտները կամ դաշտավայրերը միասին կոչվել են Ալաշկերտի դաշտ կամ Ալաշկերտի հովիտ:

Հարթավայրերը Բագրևանդում շատ չեն: Նրանք կազմում են ամբողջ գավառի գրաված տարածքի 20 տոկոսը: Մնացած ամբողջ Բագրևանդը լեռնային է: Այդ գավառը, բացի հիշյալ երկու խոշոր գետերից, ունի նաև բազմաթիվ փոքր գետեր ու գետակներ, որոնք սկիզբ են առնում լեռներից՝ նրանց ձևալից ու բնական աղբյուրներից: Գավառը հարուստ է նաև լճերով: Ամենախոշորն է Գայլատուն լիճը: Գետերում ու լճերում աճում են ձկներ, հատկապես կարմրախայտ: Չկան ձկնաբուծության պատճառով անվանում է նաև Չկան լիճ:⁵

Բագրևանդ գավառի գրաված տարածքը կազմում է 527 քառ. կմ⁶: Այն ծովի մակերևույթից բարձր է 1630 մետրից մինչև 1900 մետր: Չմեղը խստաշունչ է, հունվարի միջին ջերմաստիճանը -10° -ից մինչև -12° , մվագազույնը՝ -25° -ից մինչև -30° , ամառը զով է, օգոստոսի միջին ջերմաստիճանը կազմում է 16° -ից մինչև 18° : Չմռանը գետերի մեծ մասը սառցակալում է: Հարուստ է աղբյուրներով ու հանքային ջրերով: Դաշտային մասում բերրի սևահողեր են: Լանդշաֆտը մարգագետնատափաստանային է, գետախովիտներում ու նախալեռնային ձորակներում կան թփուտներ:⁷ Դաշտերը հիմնականում ոռոգելի են: Արգավանդ դաշտերը կամ հովիտները շատ նպաստավոր են դաշտավայրության, մասնավորապես հացահատիկի մշակության, իսկ անուշաբույր ծաղիկներով ու խոտերով ծածկված լեռները՝ անասնապահության համար:

Բագրևանդը դիտվում է Հայաստանի միջնաշխարհը: Աշխարհագրական այդ դիրքը և նպաստավոր ռելիեֆը (հարթավայրերի, լեռների, գետերի միախառնումը) նրան դարձրել են կռիվների թատերաբեմ. այդ գավառում են

³ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 267, 273, 383:

⁴ Այդ քաղաքի անունը առաջին անգամ հիշատակվել է 9-րդ դարի պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու կողմից (Հովհաննես Կարողիկոսի Դրասխանա կերտցույ Պատմություն հայոց, էջ 231):

⁵ Ս. Հայկունի, Բագրևանդ ջրաբաշխ գավառ, Էջմիածին, 1894, էջ 4–31:

⁶ Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 42:

⁷ Ա. Ալախյան, Ալաշկերտի դաշտ (ՀՍՀ, հատոր I-ին, Երևան, 1974, էջ 137):

տեղի ունեցել հայոց գործերի և Հայաստան ներխուժած օտար հրոսակների գրեթե բոլոր նշանավոր առճակատումները, ահեղ ճակատամարտերը:

Բագրևանդը Գրիգոր Լուսավորչի տան կալվածքն էր. 439 թ. այն անցավ Մամիկոնյաններին:⁸

Բագրևանդի նախնական կյանքի մասին տեղեկություններ են հաղորդում սեպագիր արձանագրությունները: Հայաստանի Ուրարտական կամ Արարատյան հարստության (դինաստիայի) արքաներից Իշպուիմին (822-810), երբ նրա հետ քաղաքական ասպարեզ է գալիս իր որդի Մենուան, ձեռնամուխ է լինում նվաճողական արշավանքների: Նրանք՝ հայր ու որդի, միասին արշավանքներ են կատարում ինչպես իրենց երկրից դեպի հարավ-արևելք, այնպես էլ դեպի հյուսիս-արևելք ձգվող կողմերը: Հյուսիսարևելյան կողմում, մասնավորապես Արածանիի վերին ավազանում կատարած արշավանքներից մեկի մասին նրանք տեղեկություններ են պահպանել իրենց համատեղ գրած սեպագիր արձանագրություններից մեկում, որը հայտնաբերվել է հիշյալ տարածքում գտնվող հետագայի Հողե-բերդ (Թոփրախ-կալե) գյուղաքաղաքի հայկական դպրոցի սյատի շարվածքի միջից: Այդ գյուղաքաղաքը տարածված է մի բլուրի ստորոտում, որի կատարին փռված են Վաղարշակերտ կամ Ալաշկերտ քաղաք-ամրոցի ավերակները:⁹ Արձանագրությունը լրիվ չէ: Նրա շարունակությունը, որը ժամանակին փորագրվել է կողքի քարի վրա, այժմ անհետացել է: Այս փաստը ցույց է տալիս, որ արձանագրության քարը նախապես գտնվել է ուրարտական կառույցի սյատի մեջ, իսկ հետագայում, երբ քանդվել է կառույցը, արձանաքարը իր տեղից բերվել ու օգտագործվել է դպրոցի շենքը շարելու գործում: Թեև արձանագրությունը լրիվ չէ, բայց կան նրա բովանդակությամբ Իշպուիմինի ու իր որդի Մենուայի համատեղ գրած երեք այլ արձանագրություններ,¹⁰ որոնց հիման վրա վերականգնվել է ամբողջ արձանագրությունը: Ահա այդ արձանագրության վերականգնված տեքստը. «Խաղի աստվածը արշավեց իր զենքով (°), նա հաղթեց Լուշա ցեղին, հաղթեց Քաթարգա ցեղին, հաղթեց Ուխտերուխի ցեղին: Խաղին հզոր է, Խաղի աստծո զենքը (°) հզոր է:

Խաղի աստծո գործությամբ արշավեցին Իշպուիմինի Սարդուրդին (և) Մենուա Իշպուիմուրդին. նրանք դեն քշեցին Լուշա, Քաթարգա, (Ուխտերուխի) ցեղերին, (հասան) (°) (նրանք) մինչև Անաշե քաղաքը...»:¹¹

Այնքան է, որ արձանագրությունը նախ և առաջ տեղեկություն է հաղորդում Լուշա, Քաթարգա և Ուխտերուխի ցեղերի վրա Ուրարտուի թագավոր Իշպուիմինի ու նրա որդի Մենուայի հարձակվելու, նրանց դեն քշելու մասին: Այս փաստը ցույց է տալիս, որ հիշյալ ցեղերի երկրները գտնվել են Արածանիի վերին ավազանում, մասնավորապես արձանագրության գտնվելու

⁸ Ս. Ս. Երեմյան, Ալաշկերտ (ՀՍՀ, հատոր 1-ին, էջ 137):

⁹ Ս. Հայկունի, Բագրևանդ Ջրաբաշխ գավառ, էջ 3, 18, 47-49:

¹⁰ ՄԿԽ, ՆՆ 20, 21, 22.

¹¹ ՄԿԽ, Ն 23.

վայրի՝ Հողե-բերդ կամ Թոփրախ-կալե գյուղաքաղաքի տարածքում և նրա հարակից շրջաններում: Արձանագրության մեջ տեղեկություն է հայտնվում նաև այն մասին, որ Իշպուիմին ու իր որդի Մենուան Լուշա, Քաթարգա և Ուխտերուխի ցեղերին դեն քշելիս հասել են մինչև Անաշե քաղաքը: Հաշվի առնելով այն փաստը, որ արձանագրությունը հայտնաբերվել է Հողե-բերդ (Թոփրախ-կալե) գյուղաքաղաքից, կարելի է ենթադրել, որ հենց այդ գյուղաքաղաքի գրաված տարածքում կամ գուցե նրա շրջակայքում է գտնվել արձանագրությունում հիշատակված Անաշե քաղաքը: Այն, անշուշտ, պատկանելիս է եղել հիշյալ ցեղերից մեկն ու մեկին:

Մեկնաբանությունները պարզում են, որ Բագրևանդ գավառի Վաղարշակերտ կոչվող քաղաքի անվան հիմքում, ինչպես ավելի հստակ կերպով ցույց է տալիս հետագայում նրան փոխարինող Ալաշկերտ անունը, ընկած է սեպագիր արձանագրությունների Անաշե քաղաքանունը, իհարկե, որոշակի հնչյունափոխված ձևով: Այս փաստը ցույց է տալիս, որ ի դեմս Վաղարշակերտ կամ Ալաշկերտ քաղաքի, հետագա դարերում ոչ միայն իր անունը, այլ իր գոյությունն է պահպանել սեպագիր արձանագրությունների Անաշե քաղաքը:

Սեպագիր արձանագրությունների հիշյալ փաստերը միաժամանակ ցույց են տալիս, որ Բագրևանդ գավառում կյանքը գոյություն է ունեցել Իշպուիմինի (822-810) ժամանակից էլ առաջ, այսինքն՝ ուրարտական դարաշրջանից էլ առաջ և ձգվել է դեպի խոր հնադարը:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ վերևում մեջբերված արձանագրությանը համապատասխանող հիշյալ երեք արձանագրություններից առաջինում¹² ընդգծվում է, թե Լուշա, Քաթարգա և Ուխտերուխի ցեղերին, Իշպուիմինի ու Մենուայի դեմ մղած ճակատա մարտում, օգնության են եկել Էթիունի ցեղամիության «հզոր թագավորները»: Սույն աշխատության նախորդ գլխից իմացանք, որ Վեդուրի-Էթիունիի բնակիչները ի սկզբանե եղել են հայալեզու ցեղերը: Փաստերը հաստատում են, որ ոչ միայն Վեդուրի-Էթիունիի կամ Գետային Էթիունիի, այլև ամբողջ Էթիունի ցեղամիության բնակիչներն են եղել հայալեզու ցեղերը:¹³ Հավանաբար վերոհիշյալ Լուշա, Քաթարգա և Ուխտերուխի, ցեղերին, Ուրարտուի դեմ մղած կռիվում, Էթիունի ցեղամիության «հզոր թագավորները» ցուցաբերած օգնության հիմքում ընկած է եղել ոչ այնքան քաղաքական, որքան էթնիկական կապը: Իսկ դա նշանակում է, որ Անաշե-Վաղարշակերտ-Ալաշկերտ քաղաքի ու նրա շրջակա տարածքի բնակիչները ուրարտական նվաճումներից առաջ եղել են հայալեզու ցեղերը: Հայալեզու ցեղերը, փաստորեն, եղել են Անաշե-Վաղարշա-

¹² ՄԿԽ, Ն 20.

¹³ Վ. Ն. Սարգսյան, Էրեբունի անվան մեկնաբանման հարցի շուրջ (Լճաբեր հասարակական գիտությունների, այնուհետև՝ ԼՀԳ, 1990, հ. 8), էջ 64, նրա՝ Ուրարտացիներ, ալարդներ, արմեններ հարցի մասին (Պատմաբանասիրական հանդես, այսուհետև՝ ՊԲՀ, 1991, հ. 1), էջ 202:

կերտ—Այլաշկերտ քաղաքի ու նրա շրջակա տարածքի տեղաբնիկ բնակիչները և այն էլ անհիշելի ժամանակներից:

Բագրևանդ կամ Բագրավան գավառի հետագա կյանքի մասին տեղեկություններ է հաղորդում հայկական մատենագրությունը (ձեռագրերը, գրավոր պատմությունները):

Այդ տեսակետից առաջնության դափնին պատկանում է հայ ժողովրդի առաջին պատմիչ Ագաթանգեղոսին, որը ասպարեզ է եկել 5-րդ դարում: Մեծանուն պատմիչը տեղեկացնում է, որ Բագրևանդ գավառը եղել է Հայաստանում քրիստոնեական կրոնը տարածելու առաջին օրրանը: Այդ գավառի Բագավան բնակավայրում Գրիգոր Լուսավորիչը սկսում է իր առաջին քրիստոնեական վարդապետությունը, որին ակնհաստես է եղել նաև հայոց թագավոր Տրդատը՝ իր Աշխեն թագուհու, իր Խոսրովադուխտ բրոջ, իր բազում զորքի և աշխարհակույտ ամբոխի հետ:¹⁴

Փավստոս Բուզանդը, որը ասպարեզ է եկել 5-րդ դարում և անմիջապես հաջորդել է Ագաթանգեղոսին, պատմում է¹⁵, որ Բագրևանդ գավառը լինելով «Հայաստանի միջնաշխարհը», այնտեղ են տեղի ունեցել Հայաստանի վրա հարձակվող օտար հրոսակների և նրանց դեմ ազատագրական պայքարի ելած հայ ժողովրդի գլխավոր առնակատումներն ու ճակատամարտերը: Այսպես, օրինակ՝ այդ գավառի Չարեհավան կամ Չարեհավանը քաղաքի մոտ են տեղի ունեցել պարսից Շապուհ թագավորի Չիկ ու Կարեն զորավարների «հինգ հարյուր բյուր» քանակ ունեցող զորքի ու ազատատենչ հայերի առնակատումներն ու ճակատամարտերը, որոնց ընթացքում հիմնովին կործանվում է Չարեհավան քաղաքը:¹⁶ Այդ գավառում, մասնավորապես նրա Չարեհավան քաղաքի ավերակներում են տեղի ունեցել պարսից թագավոր Շապուհի և նրան միացած հայ դավաճան նախարարներ Վահան Մամիկոնյանի և Մերուժան Արծրունու զորքերի և հայրենիքին նվիրված, ազատաբաղձ հայերի առնակատումներն ու ճակատամարտերը:¹⁷ Այդ գավառի Բագավան բնակավայրի շուրջ, Նպատ լեռան ստորոտում, Արածանի գետից ոչ հեռու է տեղի ունեցել հայոց Մուշեղ սպարապետի զորքերի ճակատամարտը (խոսքը հայտնի Չիրավի ճակատամարտի մասին է) պարսիկների դեմ:¹⁸ Այդ գավառի Բագավան բնակավայրից և Չարեհավան քաղաքի ավերակներից ոչ շատ հեռու տարածված Ավան կոչվող գյուղի մոտ է տեղի ունեցել հայոց սպարապետ Մանուելի զորքերի և դավաճան Մերուժան Արծրունու զորքերի միջև մղվող ճակատամարտը, որի ընթացքում սպանվում է Մերուժանը:¹⁹

¹⁴ Ագաթանգեղոս, Պատմություն հայոց, Երևան, 1977, էջ 132–133:

¹⁵ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, էջ 295:

¹⁶ Անդ., էջ 263–267:

¹⁷ Անդ., էջ 273:

¹⁸ Անդ., էջ 295–307:

¹⁹ Անդ., էջ 383–389:

Փավստոս Բուզանդը տեղեկացնում է նաև, որ Բագրևանդ գավառում, որը եղել է Հայաստանում քրիստոնեական կրոնի տարածման օրրանը, աճել են նշանավոր հոգևորականներ: Նրանցից Խաղ եպիսկոպոսը, թեկուզ ժամանակավորապես, արժանի է եղել փոխարինելու հայոց Ներսես կաթողիկոսին, երբ վերջինս ժամանակավորապես մեկնել է Հունաստան:²⁰

Ուշագրավ է նաև այն փաստը, որ Փավստոս Բուզանդը տեղեկություն է պահպանել Բագրևանդ գավառի Չարեհավան քաղաքի բնակչության քանակի մասին: Ըստ այդ տեղեկության, Չարեհավանում ապրել են հինգ հազար տուն հայեր և ութ հազար տուն հրեաներ:²¹ Գավառական մի քաղաքում այդքան շատ բնակչություն ապրելու փաստը ցույց է տալիս, որ Բագրևանդ գավառը այդ ժամանակ (խոսքը 5-րդ դարի մասին է) ունեցել է ահագին բնակչություն:

Պատմահայր Մովսես Խորենացին, որը նույնպես հանդես է եկել 5-րդ դարում, ինչպես նկատեցինք սույն գլխի սկզբում, նյութեր քաղելով ժողովրդական ավանդույթներից, տեղեկություն է պահպանել հայոց թագավորներ Տիգրան Վերջինի և Վաղարշ 2-րդի կողմից 2-րդ դարում Բագրևանդ գավառի Բագավան բնակավայրում շինարարական և այլ բնույթի կրոնական աշխատանքներ կատարելու մասին՝ կապված Մաժան քրմապետի մահվան ու թաղման հետ:

Հանճարեղ պատմիչը, հենվելով ժողովրդական այլ ավանդույթների վրա, պատմում է, որ հռոմեական կայսր Տրայանոսի ժամանակ հայոց թագավորն էր Արտաշեսը: Վերջինիս որդի Մաժանը Տրայանոսի մոտ չարախոսում է իր եղբայրներ Արտավազդին ու Տիգրանին: Այդ մասին իմանալով եղբայրները, որսի ժամանակ դարան են սարքում, սպանում Մաժանին և տանում թաղում Բագնաց ավանում (Բագավանում) իբրև քրմապետի:²² Արտաշեսից հետո թագավորում է նրա որդի Արտավազդը, սրան էլ հաջորդում է իր եղբայր Տիրանը, սրան էլ՝ իր եղբայր Տիգրան Վերջինը, սրան էլ՝ իր որդի Վաղարշը, սրան էլ՝ իր որդի Խոսրովը, սրան էլ՝ (որոշ ընդհատումից հետո) իր որդի Տրդատը, որի օրոք Գրիգոր Լուսավորիչը Հայաստանում տարածում է քրիստոնեական կրոնի վարդապետությունը:²³

Մի այլ ավանդության հիման վրա քերթողահայր Մովսեսը պատմում է, որ Արտաշիքը, երբ իշխանության գլուխ է անցնում Պարսկաստանում, վերականգնում է հայոց Արշակունիների հարստությունը, որը ընդհատվել էր Խոսրովից հետո: Նա Հայաստանում ավելի է զարգացնում մեհյանների

²⁰ Անդ., էջ 167:

²¹ Անդ., էջ 267:

²² Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 120–124:

²³ Անդ., էջ 124–131:

պաշտամունքը և հրամայում անշեջ որսողական հուր վառել Բագավանի քաղիկի վրա:²⁴

Ավանդական պատմությունից անցնելով իր ապրած ժամանակաշրջանի ղեկավարի ու ղեմքերի նկարագրությանը, մեծն Մովսեսը ընդգծում է, որ Բագրևանդ գավառը լինելով Հայաստանի միջնաշխարհը, այնտեղ են տեղի ունեցել Հայաստան ներխուժած օտար հրոսակների և ազատատենչ հայ ժողովրդի առճակատումներն ու ճակատամարտերը, ինչպես այդ մասին ասվեց Փավստոս Բուզանդի կապակցությամբ: Նա պատմում է, որ երբ պարսից Վրամ քագավորին հաջորդում է իր որդի Հազկերտը, նա անտեսում է իր հոր ժամանակ պարսիկների, հայերի ու հույների միմյանց վրա չհարձակվելու պայմանագրերը և իր քագավորության հենց սկզբում ինքը անձամբ իր գորքով հարձակվում է Մծբինի մոտ եղած հունաց գորքերի վրա, իսկ Ատրպատականի գնդին էլ հրամայում է մտնել հայոց աշխարհ: Վերջինս գալիս և անկարգ կերպով բանակ դնում Բագնաց ավանի (Բագավանի) մոտ:²⁵

5-րդ դարի հայ պատմիչների համաստեղության վառ աստղերից մեկը՝ Եղիշեն, տեղեկացնում է²⁶ Բագրևանդ գավառի բնակիչների, այդ թվում նաև հոգևորականների անձնավեր հայրենասիրության, ինչպես նաև նրանց գիտական բարձր մակարդակի մասին: Եղիշեն պատմում է, որ 451 թվականի Ավարայրի ճակատամարտից առաջ մագղեգական կրոնը չընդունելու պատճառով պարսից Դենշապուհ զորավարի կողմից գոհված 6 հոգի կրոնավորների մեջ է եղել նաև Բագրևանդ գավառի Աբշեն երեցը, որը այդ գավառի Եղեգիկ գյուղից էր: Ըստ Եղիշեի տեղեկությունների, 5-րդ դարի հայ նշանավոր գիտնական և պատմիչ Եզնիկ Կողբացին եղել է Բագրևանդի եպիսկոպոսը:²⁷

5-րդ դարի հայ պատմիչների համաստեղությունից անբաժան է Ղազար Փարպեցին: Նա ոսկե կամուրջ է 5-րդ և 6-րդ դարերի միջև (նա ապրել է 5-րդ դարի 2-րդ կեսից մինչև 6-րդ դարի սկիզբ): Իր «Հայոց Պատմություն»²⁸ աշխատության մեջ, որը սկսել է գրել 490 թվականից անմիջապես հետո մինչև իր կյանքի վերջը, Ղազար Փարպեցին նույնպես ընդգծում է, որ օտար հրոսակների դեմ հայոց առճակատումների, բռնությունների քատերաբեմը եղել է Բագրևանդ գավառը: Նա տեղեկացնում է, որ Բագրևանդ գավառի Արամանա գյուղում են Վարդան Մամիկոնյանն ու իր կողմնակիցները 451 թ. որոշում կայացրել ոչ միայն չընդունել պարսկական մագղեգական կրոնը, այլև պայքարի դուրս գալ Պարսկաստանի դեմ: Ըստ

Ղազար Փարպեցու տեղեկության,²⁹ հայոց մարգպան Վահան Մամիկոնյանի (սա 481-484 թթ. Պարսկաստանի դեմ կազմակերպված ապստամբության ղեկավարն է) ժամանակ Բագրևանդ գավառում են կուտակվել պարսկական զորքերը՝ զորահրամանատար Միհրանի գլխավորությամբ ու սկսել իրենց չարագործությունները: Այնտեղ են հայ նախարարները առճակատել պարսից զորահրամանատարին, որի պատճառով նրանցից Սյունյաց սեպուհ, անձնագրի հայրենասեր Յագդեն պարսից զորահրամանատարի հրամանով գլխատվել այդ գավառի Բագավան գյուղում, այնտեղ գտնվող սուրբ Գրիգորի մատուռում:

Ղազար Փարպեցու տեղեկությունների համաձայն, Բագրևանդի հայրենասեր ոգին համակել էր թե՛ աշխարհիկ մարդկանց, թե՛ հոգևորականներին, թե՛ գիտնականներին ու պատմիչներին: Հայրենասիրական այդ ոգով էր համակված հատկապես Բագրևանդի եպիսկոպոս, մեծ գիտնական ու պատմիչ Եզնիկ Կողբացին: Նա այն անձնավորությունից մեկն է եղել, ովքեր անվախորեն հավաքվել ու պաշտպան են կանգնել հայ ազգի ինքնուրույնության գաղափարին և պարսից արքա Հազկերտի հայոց ոգին մեռցնող հրովարտակին ասել՝ ո՛չ:³⁰ Հայրենասիրական այդ ոգով էր համակված նաև հայոց մեծաշնորհ կաթողիկոս Սահակ Պարթևը, որը թեև ծնվել էր Կեսասրիայում, բայց գերադասել է իր կյանքի վերջին օրերը անցկացնել ոչ թե իր ծննդավայրում, այլ հայրենասիրական մեծ ոգի ունեցող Բագրևանդ գավառում, որտեղ էլ մահացել ու թաղվել է այդ գավառի Բլուր կոչվող գյուղում:³¹

Բագրևանդի մասին տեղեկություններ են հաղորդում նաև հետագա դարերի հայ պատմիչները:

7-րդ դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացին (նրա ծննդյան և մահվան կոնկրետ թվականները հայտնի չեն) հիշատակում է³² Բագրևանդ գավառի Ստեփանոս եպիսկոպոսի մասին, որը հայոց կաթողիկոս Աբրահամի և հայոց եպիսկոպոսների հետ 451 թվականի Քաղկեդոնի ժողովի որոշման առիթով բողոք է ուղարկում Ամարասի Մխիթար եպիսկոպոսին՝ իմանալու նրա կարծիքը հայոց լուսավորչական կրոնը բյուզանդական ոչ ուղղափառ կրոնով փոխարինելու մասին (պատասխանը, իհարկե, լուսավորչական կրոնի օգտին է եղել, որին կողմնակից էին նաև ամբողջ հայ հոգևորականներն ու հայ ժողովուրդը):

9-10-րդ դարերի պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին (845-925) տեղեկացնում է,³³ թե ինչպես արաբ ոստիկան Յուսուփի և նրան միացած

²⁴ Անդ., էջ 141:

²⁵ Անդ., էջ 233-234:

²⁶ Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1989, էջ 55:

²⁷ Անդ., էջ 361:

²⁸ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 131, 133, 143:

²⁹ Անդ., էջ 337-343:

³⁰ Անդ., էջ 97-101:

³¹ Անդ., էջ 83:

³² Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 214:

³³ Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմություն հայոց, էջ 230-231:

հայագրի դավաճան իշխան և ինքն իրեն թագավոր հռչակած Գագիկ Արծրունու գործերը հայոց արքա Սմբատ 1-ինին (891–914) և նրան հավատարիմ իշխաններին հետապնդելիս ու հալածելիս ասպատակում են հայոց աշխարհը, այդ թվում նաև Բագրևանա գավառը, բայց անառիկ է մնում այդ գավառի Վաղարշակեբոս ամրոցը՝ իր անձնվեր ու հերոս պաշտպանների շնորհիվ: Ականավոր պատմիչը այն տեղեկությունն է հաղորդում նաև, որ Սմբատ 1-ինի որդի Աշոտ 2-րդի կամ Աշոտ Երկաթի (915–929) ժամանակ արաբական զորքերը բանակել էին Բագրևանո գավառում: Խիզախ արքա Աշոտ Երկաթը նախ ծունկի է բերում իր ասպտամբ եղբայր Աբասին, ապա հարձակվում է արաբական զորքերի վրա, Բագրևանո գավառի բնակչության աջակցությամբ հաղթում նրանց, բռնում նրանց գլխավորին, հրամայում նրանից տիկ հանել և արաբների վրա սարսափ տարածելու ու իր հոր վրեժը լուծելու նպատակով կախել տալիս ամրոցի պատից:³⁴

Հովհաննես Դրասխանակերտցին տեղեկություն է հայտնում նաև այն մասին, որ հայոց արքաները երկարատև կռիվներից ու ահարկու ճակատամարտերից հետո, երբ ցանկացել են իրենց խոնջությունը անցկացնել, հանգստանալու վայր են ընտրել Բագրևանո գավառը: Այդպես է վարվել Սմբատ 1-ինը:³⁵

Պատմական անցյալին քաջատեղյակ պատմիչը տեղեկություններ է հաղորդում նաև 5-րդ դարի հայ նշանավոր այնպիսի դեմքերի մասին, որոնք ծագել են Բագրևանո գավառից: Այդպիսիք են եղել 5-րդ դարի հայ կաթողիկոսներ Քրիստափորն ու Ներսեսը: Նույնիսկ տեղեկություն է հայտնում նրանցից վերջինի կոնկրետ ծննդավայրի մասին (ըստ այդ տեղեկության՝ Ներսես կաթողիկոսը ծնվել է Բագրևանո գավառի Աշտարակաց գյուղում):³⁶

10–11-րդ դարի պատմիչ Ստեփանոս Ասողիկը (նա ապրել է 10-րդ դարի վերջին և 11-րդ դարի սկզբին) հիշատակում է,³⁷ որ Բյուզանդիայի արքա Հերակլեսը Հայաստանի վրա արշավելիս, երբ հանդիպել է պարսից Շահիր-Վարազ և Շահեն զորականների դիմադրությանը, Ծղուկից ու Նախիջևանից նահանջել է դեպի Բագրևանո և Ապահունիք գավառները ու ամրացել վերջինիս Խրճառնք գյուղում: Մեծանուն պատմիչը տեղեկացնում է նաև, որ հայոց կյուրոպաղատ Դավիթը, երբ գրավում է Մանազկերտը, Ատրպատականի ամիրա Մամլանի զորքը հարձակվում է Հայաստանի վրա, որ Մանազկերտը ետ խլի: Ջորքը գալիս հասնում է Ծաղկոյտուն (Ծաղկոտն) գավառը և բանակ դնում այդ գավառի Կոստեանք կոչվող գյուղում: Մակայն թշնամու դեմ դուրս են գալիս հայոց կյուրոպաղատ Դավիթը, հայոց արքա Գագիկ 1-ինը (990–1020) և վրաց արքա Բագրատը իրենց

³⁴ Անդ. էջ 175–176:

³⁵ Անդ. էջ 176:

³⁶ Անդ. էջ 63–64:

³⁷ Ստեփանոս Ասողիկ, Պատմություն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 115–116:

միացյալ զորքերով, գալիս հասնում են Բագրևանո գավառը ու բանակ դնում այդ գավառի Վաղարշակեբոս քաղաքի շուրջը: Պարսիկները տեսնելով հայ-վրացական բանակի բազմությունը, սարսափում են և միայն նենգաբար, ինչպես ընդգծվել է նախորդ շարադրանքում, հրկիզելով Բագրևանո գավառի գրեթե բոլոր կողմերը, ավերում արևմտյան մասի շեն բնակավայրերը ու փախչում իրենց երկիրը:³⁸ Մեծանուն պատմիչը տեղեկացնում է նաև, որ հայոց զորավար Վահրամը, հայոց արքա Գագիկ 1-ինը, վրաց արքա Գուրգենը հայ-վրացական միացյալ զորքերի գլուխ անցած գալիս հասնում են Բագրևանո գավառը, այնտեղից էլ շարժվում են Ապահունյաց գավառը, մասնավորապես նրա Ծմբո ամրոցի սահմանները, որտեղ կուտակվել էին Ատրպատականի արաբ ամիրապետ Մամլանի զորքերը: Տեղի է ունենում ճակատամարտը: Հայ-վրացական միացյալ զորքերը հաղթում են: Թշնամին տալիս է մեծ քանակությամբ կորուստներ: Կենդանի մնացածները ճողոպրում են Հայաստանից:³⁹ Անվանի պատմիչը տեղեկացնում է նաև, որ Բյուզանդիայի կայսր Վասիլը, երբ զորքով շրջագայում է իրեն ներարկվող հայոց աշխարհում, լինում է Հարթ գավառի Մանազկերտ քաղաքում, ապա շարժվում է դեպի Բագրևանո գավառը, բանակ դնում այդ գավառի Վաղարշակեբոս քաղաքի մոտ տարածված դաշտում ու սպասում իրեն ընդառաջ եկող հայոց արքա Գագիկին (990–1020)⁴⁰ (նա փոքրություն է համարում, որ ինքը անմիջապես զնա Գագիկի մոտ):

Ստեփանոս Ասողիկը տեղեկություն է հաղորդում նաև Բագրևանո գավառի նշանավոր մարդկանց մասին:⁴¹ Ըստ այդ տեղեկության, 451 թ. Բագրևանո գավառում հայտնի էր Դավիթ փյոխտփան (հավանաբար Դավիթ Անհաղթի մասին է խոսքը), իսկ 10-րդ դարի վերջին քառորդում այնտեղ հայտնի էր Մովսես Եպիսկոպոսը (սա նշանավոր պատմիչ Մովսես Տարոնացին է):

13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին (նա ծնվել է 1203 թ., իսկ մահվան թիվը հայտնի չէ) տեղեկացնում է,⁴² որ 703 թվականին հայոց Մարգարե Սմբատ Բագրատունի Բյուրատյանը (691–711) Բագրևանո գավառում ճակատամարտ է տալիս Հայաստանի վրա հարձակվող արաբների դեմ ու հաղթանակ տանում:

Կիրակոս Գանձակեցին տեղեկություն է հաղորդում նաև Բագրևանո գավառի նշանավոր մարդկանց մասին. դրանք են՝ 1) Մովսես Եպիսկոպոսը, որը գործել է Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի (548–557) ժամանակ և Բագրևանոյում ստեղծել է հզոր ճարտասանական դպրոց, որի աշակերտնե-

³⁸ Անդ. էջ 266–267:

³⁹ Անդ. էջ 270–271:

⁴⁰ Անդ. էջ 277–278:

⁴¹ Անդ. էջ 277–278:

⁴² Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 58:

րից Եզրաս Անգեղացին բազմացնում է ճարտասանական դասը: 2) Միոն Կարողիկոսը (770–778), որը Բագրևանդ գավառի Բագավան գյուղից էր:⁴³

Կիրակոս Գանձակեցին տեղեկություն է հայտնում, որ Բագրևանդ գավառի Բագավան գյուղում Ներսես կաթողիկոսի գլխավորությամբ քննվում են հայոց եկեղեցիների շարականների երգերի հարցը և ընդունվում է որոշում, որ հայոց բոլոր եկեղեցիներում պետք է երգվեն շարականների միևնույն երգերը:⁴⁴

13–14-րդ դարերի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը (նա ծնվել է 13-րդ դարի վերջին և մահացել 14-րդ դարի սկզբին) տեղեկություններ է հայտնում⁴⁵ այն մասին, որ իր օրոք Բագրևանդ անունով էր կոչվում ամբողջ նահանգը: Ըստ այդ տեղեկության, Նպատ լեռան լանջին տարածված Բագավան գյուղը, որտեղ գտնվում էր Գրիգոր Լուսավորչի մատուռը, մտնում էր Բագրևանդ նահանգի Վաղարշակերտ գավառի կազմում:

14–15-րդ դարերի պատմիչ Թովմա Մեծոփեցին (1378–1446) տեղեկություն է հաղորդում⁴⁶ 1421 թ. օգոստոսի 1-ին Բագրևանդ գավառի Վաղարշակերտ քաղաքի մոտ տարածված դաշտում թուրք կարակոյունյունների զորավարներ Սքանդարի և նրա եղբայր Ասպահանի զորքերի պարտությունը քանուրյաններից (Լանկ–Թամուրի կողմնակիցներից, որոնց ղեկավարում էր Լանկ Թամուրի որդի Շահ–Ռուհն):

16–17-րդ դարերի պատմիչ Առաքել Դավրիժեցին (1588–1670) տեղեկություն է պահպանել,⁴⁷ որ պարսից տիրակալ Շահ–Աբասը Երևանի բերդը օսմանցիներից խլելուց հետո 1603–1604 թթ. մեծ քանակությամբ զերիներ է տարել հայոց աշխարհից: Ընդ որում, նրա խաներից Ամիրգուման զերեվարություն է կատարել Գանձակի երկրամասից, Ալահվերդի խանը՝ Արծկե, Արճեշ, Բերկրի, Վան գավառներից, մյուս խաները՝ Մանազկերտ գավառից, Մակուից, Կարսից, Կաղզվանից, ինչպես նաև Բասեն, Կարին, Խնուս գավառներից, Նախիջևանից, Եղեգնաձորից, Գեղամա աշխարհից, Լոռիից, Համզաչինան գավառից, Ապարանից, Շարաբխանից, Շիրակավանից, Չարիշատից, Կարսի գյուղերի մի մասից, Աղբակ, Սալմաստ, Խոյ, Ուրմիա գավառներից, բովանդակ Արարատյան դաշտից, Երևան քաղաքից, Կոտայքի շրջանից, Ծաղկունքի ձորից, Գառնու ձորից, Ուրծաձորից, բովանդակ Ալաշկերտից:

Այնքան է, որ Առաքել Դավրիժեցու ժամանակ գավառին տրվող Բագրևանդ անունը անկում է ապրել: Նրա փոխարեն գավառը կոչվել է Ալաշկերտ անունով: Գավառին տրվող այդ Ալաշկերտ անունը, ինչպես ընդ-

⁴³ Անդ. էջ 42–43, 62:

⁴⁴ Անդ. էջ 56:

⁴⁵ Ստեփանոս Օրբելյան, Մյունիքի պատմություն, էջ 105–106:

⁴⁶ Թովմա Մեծոփեցի, Պատմություն համառոտաբար վասն Լանկ–Թամուրայ և այլոցն..., Փարիզ, 1860, էջ 78–81:

⁴⁷ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988, էջ 40–41, 52–53:

գծվել է նախորդ շարադրանքում, ծագել է այդ գավառի գլխավոր քաղաք–ամրոցի՝ Վաղարշակերտի անունից: Տեղանունների այս փոփոխությունը տեղի է ունեցել, անշուշտ, Շահ–Աբասի գերեվարությունից առաջ, երբ Բագրևանդ գավառը իր Վաղարշակերտ քաղաքի հետ հայոց վերտիշյալ գավառների ու երկրամասերի նման նվաճվել էին օսմանյան պետության կողմից: Վաղարշակերտ անունը, որը ինչպես ընդգծվել է նախորդ շարադրանքում, սեպագիր արձանագրությունների Անաշե անունից է ծագել:

Գավառը այդպես շարունակել է Ալաշկերտ կոչվել նաև Մ. Չամչյանի (1738–1823)⁴⁸ և Ղ. Ալիշանի (1820–1901)⁴⁹ աշխատություններում, այսինքն՝ ամբողջ 18-րդ և 19-րդ դարերում:

Գավառին տրվող Ալաշկերտ անունը այժմ աղավաղման է ենթարկվել թուրքերի կողմից և դարձել է Էլեշկերտ:

Անաշե–Վաղարշակերտ–Ալաշկերտ (Էլեշկերտ) անունը, փաստորեն, երկարակյաց և կենսունակ է դուրս եկել Բագրևանդ անվան համեմատությամբ:

Ինչ վերաբերում է Անաշե–Վաղարշակերտ քաղաք–ամրոցին, ապա այն ավերվելով կորցրել է իր անունը և թուրքերի կողմից կոչվել է Թոփրախ–կալե (Հողե–բերդ) նոր անունով: Մակայն այդ քաղաք–ամրոցի ավերման կոնկրետ ժամանակը պարզ չէ: Երևի այն ավերվել է 19-րդ դարի սկզբին կամ գուցե նրանից առաջ: Ավելի հավանական է, որ դա տեղի է ունեցել այն ժամանակ, երբ Բագրևանդ գավառը սկսել է կոչվել Ալաշկերտ անունով, այսինքն՝ Առաքել Դավրիժեցու (1583–1670) ժամանակաշրջանում և ակամայից կարելի է ասել, որ առնչվում է Շահ–Աբասի 1603–1605 թվականներին կատարած ավերածությունների ու գերեվարությունների հետ: Թոփրախ–կալե (Հողե–բերդ) գյուղաքաղաքը, որպես Անաշե–Վաղարշակերտ քաղաք–ամրոցի շարունակություն, տարածված է նրա շուրջը: Հենց նրան տրվող Հողե–բերդ անունը առնչվում է ավերված, հողակույտի վերածված Անաշե–Վաղարշակերտ քաղաք–ամրոցի տեսարանի հետ:

Առաքել Դավրիժեցու աշխատությունում Ալաշկերտ գավառի բնակավայրերից հիշատակվում է միայն Բագվանը: Ըստ այդ տեղեկության, հայոց կաթողիկոս Չարաբխան անցնում է Բագվան գյուղով, գնում է Բայազետի քերդը, ապա իջնում Արգելան սուրբ ուխտը՝ հայոց կաթողիկոսության գանձարանը Շահ–Աբասին հաջորդող պարսից Չհանշահ տիրակալի որդի Հասան–ալիի հափշտակությունից փրկելու:⁵⁰ Դրանից հետո Բագվան կամ Թագավան բնակավայրը ևս արժանանում է նույն բախտին, ինչ–որ Վաղարշակերտը. այն նույնպես կորցնում է իր անվանումը: Թուրքերի կողմից այդ բնակավայրը կոչվում է Ուլքիլիսա («Երեք եկեղեցի») անունով:

Մեֆյան Իբրանի և Օսմանյան կայսրության միջև Հայաստանի երկրորդ

⁴⁸ Մ. Չամչյան, Պատմություն հայոց, Երևան, 1985, էջ 358:

⁴⁹ Ղ. Ալիշան, Արարատ, Վեներտիկ, 1890, էջ 522, 535–536:

⁵⁰ Առաքել Դավրիժեցի, պատմություն, էջ 331:

քաժանումով, որը տեղի է ունեցել 1639 թվականին (I քաժանումը այդ պետությունների միջև տեղի է ունեցել 1555 թվականին), Արևելյան Հայաստանը մտնում է Պարսկաստանի տիրապետության տակ, իսկ Արևմտյան Հայաստանը՝ Թուրքիայի (այս քաժանումները չպետք է շփոթել Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև Հայաստանի I և II քաժանումների հետ, որոնցից I-ը տեղի է ունեցել 387 թ., իսկ II-ը՝ 591 թ.): Թե պարսկական և թե թուրքական լուծը շատ էր ծանր հայ ժողովրդի համար: Թուրքիան Արևմտյան Հայաստանում գտնվող Ալաշկերտ գավառում շուրջ 300 տարի հայերի վրա հաստատել էր քրդական ժառանգական կառավարիչներ, որոնք պատկանում էին Սիլվի-ալիվանի ցեղին: Ալաշկերտը, փաստորեն, ընկել էր կրկնակի ճնշման տակ՝ մի կողմից թուրքերի, իսկ մյուս կողմից՝ քրդերի: Նման վերաբերմունք մկատվում է նաև մյուս գավառներում:

Պարսիկները, չբավարարվելով Արևելյան Հայաստանից ծանր հարկ ու տուրք գանձելուց, հայերին իրենց կռիվներ տեղափոխեցին մշտական զինվոր դարձնելուց բացի, հաճախ արշավել են Հայաստանի վրա՝ դեպի Պարսկաստանի խորքերը գերության քշել բնակչության մեծ մասը՝ ընտանիքներով հանդերձ, ամբնակ դարձրել նրանց բնակավայրերը:

Վերջապես վրա է հասնում պարսկական ու թուրքական դաժան ճնշումից հայ ժողովրդի ազատագրման ժամանակը: Դա 19-րդ դարի սկիզբն էր, երբ ռուսական արքայական գահի վրա են անցնում Ալեքսանդր I-ինը (1801–1852) և նրա եղբայր Նիկոլայ I-ինը (1825–1850): Ալեքսանդր I-ինի⁵¹ ժամանակ ռուսները և նրանց միացած հայերը պարսկական լծից 1805 թ. ազատագրում են Գանձակը, իսկ 1906 թ.՝ Ղարաբաղը, որոնք Գյուլիստանի պայմանագրով մտցվում են Ռուսաստանի իշխանության տակ:

Նիկոլայ I-ի ժամանակ նորից առաջ է գալիս Հայաստանի ազատագրման հարցը: Նիկոլայ I-ինը մշակում է մի պլան, ըստ որի Պարսկաստանից զավթել Երևանի, Նախիջևանի և Մակուի իշխանությունները, որոնցից առաջին երկուսը մտցնել Ռուսաստանի իշխանության տակ, իսկ երրորդը վաճառել Պարսկաստանին 40 միլիոն ռուբլով:⁵² Ռազմական գործողությունները պետք է սկսվեին 1827 թվականին: Այս մասին խմանում է Պարսկաստանի Ֆաթ-Ալի շահը (1797–1834), որը հանձնարարություն է տալիս արքայազն Աբբաս-Միրզային՝ մինչև ռուսների հարձակվելը հայաթափ անել Երևանի և Նախիջևանի խանությունները, որպեսզի ռուսները արշավանքի ժամանակ չհանդիպեն իրենց համակրող հայերի բարոյական ու նյութական աջակցությանը: Աբբաս-Միրզան 1826 թվականին, խախտելով Ռուսաստանի ու Պարսկաստանի միջև կնքված Գյուլիստանի պայման-

ագիրը, հարձակվում է Գանձակի ու Ղարաբաղի վրա:⁵³ Բառացիորեն մոթթում է Ղարաբաղում և Գանձակում գտնվող ռուսական բանակի փոքրաքանակ զինվորներին, գերության քշում Ղարաբաղի հայության զգալի մասը, ապա մտնում է դեռ Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Երևանի խանության գավառները, որոնց թվում նաև Սևանի ավազանը, որտեղ գտնվում էր Շոդազա գյուղը, գերեվարում հայ բնակչությունը, հետո մտնում է Նախիջևանի խանությունը և նույն բախտին արժանացնում նրա հայ բնակչությանը և դրանց բոլորին քշում Պարսկաստանի խորքերը, որ վերադարձի մասին ընդհանրապես մոռանան:⁵⁴ Այդ գերեվարությունից հետո Երևանի ու Նախիջևանի խանությունների բնակչության մեծամասնությունը կազմում են մահմեդականները:

Իմանալով Աբբաս-Միրզայի այս չարագործությունների մասին, Նիկոլայ I-ինը հրամայում է Կովկասի կառավարչապետ, ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Երմոլովին (սա ուներ քաթարական ծագում) անհապաղ հարձակվել Պարսկաստանի վրա:⁵⁵ Ռազմական գործողությունները սկսվում են, բայց Երմոլովը շատ էր դանդաղաշարժ: Ցարը այնտեղ է ուղարկում ռազմական գործողությունների մեջ իր արագաշարժությամբ ու վճռականությամբ աչքի ընկնող զեներալ Ի. Ֆ. Պասկևիչին (սա ազգությամբ մալոռուս էր): 1826 թվականին նա մեծ արագությամբ վերանվաճում է Գանձակն ու Ղարաբաղը՝ տեղացի հայերի օգնությամբ: Տեսնելով դա, ցարը 1827 թ. մարտի 29-ին Երմոլովի փոխարեն Կովկասի կառավարչապետ, ռուսական զորքերի գլխավոր հրամանատար է նշանակում Ի. Ֆ. Պասկևիչին: 1827 թ. ապրիլի 9-ին Ի.Ֆ. Պասկևիչի հրամանով զեներալ Բենկենդորֆի զորքերը մտնում են Երևանի խանություն: Մայիսի 12-ին Թիֆլիսից ռուսական զլխավոր զորքերի անմիջական հրամանատարությունը իր ձեռքը վերցրած՝ դեպի Երևանի խանություն է շարժվում Ի.Ֆ. Պասկևիչը: Այդ ժամանակ Թիֆլիսում կազմվում է հայոց հեծելազորն, որը մայիսի 17-ին Թիֆլիսից նույնպես շարժվում է դեպի Երևան՝ ճանապարհին համարվելով կամավոր զինվորագրված հայերով: Մինչև Երևան հասնելը նրա մեջ ընդգրկված հայ հեծյալների թիվը անցնում է հազարից: Մեծ քանակությամբ հայեր են ներգրավվում նաև ռուսական հետևակ զորքերում: Հունիսի 8-ին Ի. Ֆ. Պասկևիչը հասնում է Էջմիածին: Նա իր զեներալներ Բենկենդորֆի ու Կրասովսկու (սա ազգությամբ ուկրաինացի էր) և հրամանատարներ Էրիստովի ու Մուրավիովի հետ 1827 թվականի ապրիլից մինչև 1828 թվականի փետրվարը գրավում է Երևանի, Նախիջևանի ու Մակուի խանությունները:⁵⁶

1828 թվականի փետրվարի 9-ին Թեհրանի ճանապարհի վրա գտնվող

⁵¹ Ա. Երիցեանց, Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք 19-րդ դարում, մասն Ա (1800–1882 թթ.), Թիֆլիս, 1894, էջ 31–34:

⁵² Անդ, էջ 282:

⁵³ Անդ, էջ 234–236:

⁵⁴ Անդ, էջ 282, 309, 319:

⁵⁵ Անդ, էջ 265–338:

⁵⁶ Անդ, էջ 282–308:

Թուրքմենչայ կոչվող փոքրիկ գյուղում կնքվում է հաշտության պայմանագիրը: Պայմանագրի համաձայն Երևանի ու Նախիջևանի խանությունները մտցվում են Ռուսաստանի իշխանության տակ, իսկ Մակուի խանությունը իր հայաբնակ Մարանդա, Խոյ, Սալմաստ, Մարաղա, Ուրմիա, Արդեբիլ գավառներով վաճառվում է Պարսկաստանի վրա ընդամենը 20 միլիոն ռուբլով: Հայոց արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցին բողոքում է Մակուի խանության վաճառքի դեմ, բայց նրա բողոքը ոչ որ չի լսում: Ցարի կրամանով Երևանի ու Նախիջևանի խանությունների հիմքի վրա կազմվում է Հայկական մարզ, իհարկե, ռուսական իշխանության ներքո: Ըստ Թուրքմենչայի պայմանագրի, թույլատրվում է մեկ տարվա ընթացքում Երևանի ու Նախիջևանի խանությունների մահմեդականներին և Մակուի խանության հայերին իրենց բնակավայրերից տեղափոխվել, այնպես որ առաջինները գաղթեն Պարսկաստան, իսկ երկրորդները՝ Հայկական մարզ: Հայերի գաղթը կազմակերպելու համար ցարը, Ի. Ֆ. Պասկևիչի խնդրանքով, տրամադրում է 200.000 ռուբլի: Պարսիկները Մակուի խանության հայերին համոզում էին, որ մնան իրենց շեն բնակավայրերը և չզննա ավերված Երևանի ու Նախիջևանի խանությունները: Հակառակ պարսիկներին, հայերի մեջ բացատրական աշխատանք են կազմակերպում արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցին և երիտասարդ գնդապետ Ղազար Ղազարյանը (հետագայում հայտնի Լազար Լազարյանը): Մակուի հայերի մեծ մասը որոշում է թողնել պարսկական լուծը և գաղթել Հայկական մարզ, ապավինել Արարատ սուրբ սարին և սուրբ Էջմիածնի մայր աթոռին: Գաղթը սկսվում է 1828 թվականի փետրվարի վերջից: Գաղթողների թիվը կազմում էր 8249 ընտանիք կամ մոտավորապես 45.000 մարդ: Դրանցից 700–800 գերդաստաններ բնակվում են Երևան, Նախիջևան և Օրդուբատ քաղաքներում: Մի քանի հարյուր գերդաստաններ բնակվում են Ղարաբաղում: Մյուսները բնակվում են Երևանի ու Նախիջևանի խանությունների գյուղերում: Ամենից շատ բնակվում են Գառնիի, Ծաղկաձորի, Նախիջևանի, Եղեգնաձորի, Ապարանի, Շարուրի, Սուրմալուի գավառների, ինչպես նաև Արարատյան դաշտավայրում գտնվող Կարբի–Բասար, Չանգի–Բասար գավառների գյուղերում: Նրանք բոլորովին չկամեցան բնակվել մյուս նախալեռնային ու լեռնային շրջաններում, մասնավորապես Սևանի ավազանում: Շողագան, որը մտնում էր վերջինիս կազմում, շարունակեց գրկված մնալ հայ բնակչությունից:

1828 թ. Ռուսաստանը պատերազմ է հայտարարում Թուրքիային, որի նպատակն էր Արևմտյան Հայաստանը ազատագրել թուրքական լծից: Պատերազմը սկսվում է հունիսի 14–ին, երբ ֆելդմարշալ Ի. Ֆ. Պասկևիչը 12.000 զորքով և 70 թնդանոթներով Գյումրու մոտ անցնում է Արփաշայր և արշավում դեպի Կարս:⁵⁷ Ռուսական զորքում կային մեծ թվով հայ հետևակայիններ և հեծելազորայիններ:

⁵⁷ Անդ., էջ 399–401:

Թուրքերն էլ պարսիկների նման ձգտում էին մինչև ռուսական զորքերի մուտք գործելը հայկական բնակավայրերը տեղացի հայերին տեղահանել և գերության քշել Թուրքիայի խորքերը, որպեսզի իրենց արշավանքի ընթացքում ռուսական զինվորները չհանդիպեն իրենց համակրող հայերի բարոյական ու նյութական աջակցությանը:

Ի. Ֆ. Պասկևիչի համար դա անսպասելի չէր: Նա հենց սկզբից աշխատում է թուրքերի ձեռքից խլել տեղահանված և գերության քշվող հայերին, նրանց վերաբնակեցնել իրենց բնակավայրերում, նոր ապա ձեռնարկել լուրջ նվաճումները: Հենց այդպես էլ Ի.Ֆ. Պասկևիչը հունիսի 19–ին Կարսի պատերի տակ ջարդում է թուրքական հեծելազորին, նրանից ազատագրում գերության քշվող 720 հայ ընտանիքներին,⁵⁸ հետո նոր հունիսի 23–ին գրավում Կարսի ամրոցը: Այդ տեսակետից սույն աշխատության հիմնական թեմայի հետ կապված ուշագրավ օրինակ է ծառայում նաև այն փաստը, որ երբ լուր է հասնում, թե կարափափախ թուրքերը հրկիզել են Ալաշկերտ գավառի Քառասուն–աղբյուր (Չլկանի) հայաբնակ խոշոր գյուղը և բնակիչներին իրենց ունեցվածքի հետ քշում են դեպի Թուրքիայի խորքերը, հայ–ռուսական միացյալ հեծելազորը թողնում է իր մարտական գործողությունները կիսատ և շտապ օգնության է հասնում փրկելու գերության քշվող հայերին:⁵⁹ Այսպիսի վերաբերմունքի պատճառով ռուսական բանակը արժանանում է ամբողջ հայության համակրանքին: Նույնիսկ մինչև այդ բոլորովին զենք չօգտագործող հայը զենք է վերցնում, միանում կամավորականների խմբերին և օգնության հասնում ռուսական զորքին: Ոչ միայն հայ տղամարդիկ, այլև հայ կանայք իրենց ամրոցներում ու րկրդերում զենք են վերցնում ու ստիպում թուրք բերդապաններին դարպասները բացել ռուսական զորքերի առջև: Չենքի է դիմում նաև հայ գյուղացին, հստկապես գյուղացի հայ կինը արյունարբու թուրքերի բռնագաղթից պաշտպանվելու համար:

Ի. Ֆ. Պասկևիչը 1828 թ. հունիսից մինչև 1829 թ. սեպտեմբերը⁶⁰ իր գեներալներ Պոպովի, Բուրցովի, Պանկրատովի, Շավճավաձեի և խիզախ սպա, հմուտ հրամանատար Ղորղանյանի համագործակցությամբ գրավում է Կարսի, Բայազետի ու Արզրումի փաշայությունները, մասնավորապես նրանց մեջ մտնող Արդահան, Բայազետ, Ալաշկերտ, Դիադին, Խամուր, Հասանդալա, Բասեն, Խնուս, Սվազ ու այլ հայաբնակ գավառները:

Հիշյալ փաշայությունների հայ բնակչությունը տեսնելով, որ ազատագրվելու է թուրքական լծից, 1828 թ. ամռանը որոշում է ստեղծել ազգային զորք, որը ռուսների հեռանալուց հետո պիտի պաշտպաներ Հայոց երկիրը: Հայոց ազգային զորք ստեղծելու նախաձեռնությունը իր վրա է վերցնում ռուսական փառաբանված գեներալ Պանկրատովը: Նա հայոց ազգային

⁵⁸ Անդ., էջ 403:

⁵⁹ Անդ., էջ 408:

⁶⁰ Անդ., էջ 399–442:

գորքը ստեղծում է ֆրանսիացիների «La Garde nationale»-ի օրինակով:⁶¹ Հայրենամարտի ընտանիքների լավ զավակները շտապում են մտնել այդ գորքի մեջ: Հայ ազգասեր հարուստներից մեկը՝ ոմն Սկրտիչ աղան, իր հաշվին կազմում է հայոց հեծելազունը: Թեև ռուսական զորքերը այնուհետև մտնում են հայոց Քելի, Դերջան և Մուշ քաղաքները, բայց Արզրումի հայոց գորքը հնարավորություն չի ունենում իրեն ցույց տալ պատերազմի դաշտում, քանի որ կարճ ժամանակ հետո՝ 1828 թ. սեպտեմբերի 2-ին Ռուսաստանի ու Թուրքիայի միջև հաստատվում է Անդրիանապոլսի հաշտությանը և պատերազմը վերջանում է:

Այն ժամանակ, երբ ֆեդմարշալ Ի. Ֆ. Պասկևիչը ազատագրական գործողություններ էր կատարում արևելքում, մասնավորապես Արևմտյան Հայաստանում, ռուսական մի այլ բանակ կոմս Գերիչի գլխավորությամբ հաղթական մարտեր էր մղում Թուրքիայի դեմ Բալկանյան թերակղզում՝ ազատագրում շատ երկրներ: Արքիանապոլիսը գրավելուց հետո նրան ընդամենը 10 վերստ էր մնում, որ հաղթարար մտներ Կ. Պոլիս՝ թուրքական սուլթանի մայրաքաղաքը: Ռուսաստանի այդ հաղթական գործողությունները նախանձ են առաջացնում Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի մեջ, քանի որ այդ նվաճումներով Ռուսաստանի գործությունը և հեղինակությունը իրենց համեմատությամբ խիստ կմեծանար միջազգային ասպարեզում: Գործի դրվեցին այդ գործությունն ու հեղինակությունը ետ քաշելու դիվանագիտական խարդախությունները: Նրանց դեսպանները համոզում էին Ռուսաստանին, որ ձեռք քաշի Կ. Պոլսի գրավումից և սուլթանի կտավարության տապալումից, քանի որ դրա հետևանքները շատ ծանր կնստեն Ռուսաստանի վրա: «Ամբողջ Եվրոպան, — պնդում էին նրանք, — զենքով կդիմադրի Օսմանյան կայսրության կործանմանը, որի գոյությունը կարևոր է պետությունների հավասարակշռության և ընդհանուր խաղաղության համար»:⁶² Ռուսաստանի կայսր Նիկոլայ I-ինը լսեց նրանց և չտապալեց արյունաքրու սուլթանի գահը: Նրա հաճությամբ 1829 թ. սեպտեմբերի 2-ին Անդրիանապոլսում ստորագրվեց հաշտության դաշնագիր: Այդ դաշնագրի 2-րդ կետի համաձայն, Ռուսաստանը պարտավորվում էր Թուրքիային վերադարձնել նրանից նվաճած եվրոպական երկրները: Ըստ 4-րդ հոդվածի,⁶³ Պասկևիչի նվաճած բոլոր տարածքներից Ռուսաստանի սեփականությունն էին դառնում միայն Անապան, Փոքին, Ախալցխան և Ախալքալաքը, իսկ Արդահանը, Կարսը, Բայազետը, Արզրումը և Արևմտյան Հայաստանի մյուս տարածքները վերադարձվում են Թուրքիային: Ըստ 13-րդ հոդվածի,⁶⁴ Ռուսաստանը և Թուրքիան ներում են շնորհում իրենց այն հպատակներին, որոնք պատերազմի ժամանակ ինչ-որ չափով ան-

⁶¹ Անդ., էջ 427-428:

⁶² Անդ., էջ 428:

⁶³ Անդ., էջ 428-429:

⁶⁴ Անդ., էջ 429:

հավատարմություն էին դրսևորել: Այդ հպատակներին իրավունք էր տրվում մեկ ու կես տարվա ընթացքում, ըստ հոժար կամքի, կամ մնալ նախկին բնակավայրերը, կամ թե ծախսելով իրենց անշարժ գույքը գաղթել մյուս պետության մեջ:

Գաշնագրի պայմանները բոլորովին դուր չեկան Պասկևիչին: Նա բոլորովին չէր կամենա վերադարձնել իր սրով ձեռք բերած երկրները: Նա խնդրում էր Ռուսաստանի նախարար Նեսելրոդին, որ Ռուսաստանի ձեռքում պետք է մնան Բաթումը, Քոբուլեթը, Ախալցխան, Կարսի ամբողջ փաշայությունը մինչև Սողանլուղի լեռները (այսինքն՝ Արդահանը ներառյալ), իսկ Բայազետի փաշայությունից՝ Բայազետը, Դիադինը, Բագավանի (Ուչքիլիսայի) վանքը և Եփրատի (խոսքը նրա Արածանի վտակի մասին է) վրա եղած նշանավոր բնական կամուրջը:⁶⁵ Նախարարը մերժում է Պասկևիչի խնդրանքը և պատասխանում. «Թուրքիայի հետ ունեցած մեր գործերը մի օղակ են եվրոպական քաղաքակրթության ընդհանուր ընթացքի մեջ... և ավելի լավ է... օգուտ քաղել ներկա դրությունից... և աշխատել խաղաղ միջոցներով հայտնել նվաճած երկրների բնակիչներին, որ հոժար կամքով գաղթեն և բնակություն հաստատեն Իմերեթում և Սինգրեվիայում»:⁶⁶ Սրա դեմ Պասկևիչը շտապում է գրել, որ Իմերեթի և Սինգրեվիայի մեջ ազատ հողեր չկան, իսկ եթե կան, ապա դրանք անտառներ են և ճահիճներ՝ մահաբեր կլիմայով ու միանգամայն անհարմար թե ռուս և թե հայ գաղթականների համար:

Ինչևիցե, Ի. Ֆ. Պասկևիչի ցանկությունները այլևս չէին կարող ուժ ունենալ, քանի որ արդեն մեկ ամիս առաջ կնքվել էր Ադրիանապոլսի դաշնագիրը: 1829 զթ. նոյեմբերի 18-ին Կոմս Չերնիշովը⁶⁷ Ի. Ֆ. Պասկևիչին պատասխանում է, որ Նիկոլայ I-ին կայսրը կամենում է Արզրումի, Կարսի, Արդահանի, Բայազետի, ինչպես նաև վերջինիս կազմի մեջ մտնող Ալաշկերտ գավառի բնակավայրերից հայերի մի մասին, եթե, իհարկե, նրանք ցանկանում են, վերաբնակեցնել Վրաստանում (հատկապես Ախալցխայում և Ախալքալաքում, որպեսզի ռուսական կայսրության սահմանները պաշտպանեն աջարների ու թուրքերի հարձակումներից), ինչպես նաև Հյուսիսային Կովկասում (որպեսզի նրանց օգնությամբ ամուր մնան կայսրության սահմանները այդ կողմերի մահմեդականների հարձակումներից), իսկ մի մասն էլ Հայկական մարզում (Արևելյան Հայաստանում), եթե այնտեղ կան ազատ տեղեր: Ռուսաստանի կայսրը, իբրև իրեն հավատարմության վարձատրություն, գաղթող հայերի համար տրամադրում է մեկ միլիոն թրթաղրամ և վեց տարի ժամանակով նրանց ազատում տեղություն հարկերից: Արևմտյան Հայաստանի այն հայ բնակիչները, ովքեր պատերազմի ժամանակ հավատարմություն էին ցույց տվել Ռուսաստանին,

⁶⁵ Անդ., էջ 430:

⁶⁶ Անդ., էջ 429-430:

⁶⁷ Անդ., էջ 435-436:

քաջ գիտակցում էին, որ վերջիններիս հեռանալուց հետո իրենց սպասում էր քուրքական պետության կողմից բանտ, արքայի ու մահապատիժ: Ստիպված նրանք համաձայնվում են թողնել իրենց վերելի բնօրրանները: Այդպիսի հայ բնտանիքների թիվը անցնում էր 10.000-ից: Կարճ ժամանակից հետո՝ 1830 թվականի սկզբին սկսվում է Արևմտյան Հայաստանի այդ հայ բնակիչների անմեղ գաղթը:

1830 թվականի վաղ զարմանը Ալաշկերտ գավառի ինչպես Քառասուն աղբյուր (Չլկանի),⁶⁸ այնպես էլ Համզկան (այլ ընթերցում՝ Համոկան), Քոլի-գեղ (այլ ընթերցում՝ Քոչի գեղ), Դուքաղ (այլ ընթերցում՝ Դուղաղ), Բավնան (այլ ընթերցում՝ Բավն, Բավնո) և Տոմայ հայաբնակ գյուղերի⁶⁹ 56 բնտանիքներ, որոնք ռուս-թուրքական պատերազմի ժամանակ անցել էին ռուսական զորքի կողմը, իրենց 322 բնակիչներով (162 արական, 160 իգական), սպասվելիք թուրքական հալածանքներից խուսափելու պատճառով, որոշում են դիմել արտագաղթի(ինչպես կիսամոզվենք հետագա շարադրանքում, նրանք գաղթում են Շողագա բնակավայր): Հնգենաչ պարադոքս, ընդամենը մի քանի ամիս առաջ պատերազմի թոհուրոհում քաջությամբ ու հերոսությամբ պսակված մայրիկ պատերազմից հետո, հսկարտ ու երջանիկ ապրելու փոխարեն, դատապարտյալի նման կամավոր համաձայնվում են իրենց բնտանիքներով բռնել պանդխտության ճանապարհ՝ թողնելով իրենց դարավոր բնօրրանները, նրանցում ննջող իրենց հայրերի ու պապերի գերեզմանները, նրանցում ծնունդ առած իրենց մանկության, պատանեկության ու ջահելության քաղցր հուշերը և վերջապես նրանց չքնաղ բնության անգուգական հմայքը:

Քառասուն-աղբյուր (Չլկանի) գյուղը⁷⁰ գտնվում է Վաղարշակերտից հարավ, Արածանի գետի Բագրևանդ վտակի ձախ ափին: Նրա միջով է հոսում Դոփուզ գետակը, որը մի քիչ առաջանալով միանում է Բագրևանդին: Դեռ վաղուց նրա միջով են անցել քարավանային երկու կարևոր ճանապարհները, որոնցից մեկը գալով Չետկանից տարածվել է արևելք՝ անցնելով Սև եկեղեցիով (Կարա-քիլիսայով) ու Բայազետով, ձգվել է մինչև Պարսկաստան, իսկ մյուսը գալով Մուշից, Բուլանլիսից, Մանազկերտից, ձգվել է մինչև Ռուսաստան: Բացի այդ երկու գլխավոր ճանապարհներից, նրանցից է սկիզբ առել ձմեռային մի ճանապարհ, որը անցել է Անդափով, Բաղնոցով, Արճեշով ու հասել մինչև Վան: Քառասուն-աղբյուր (Չլկանի) գյուղը գտնվելով քարավանային ճանապարհների վրա, նրա բնակիչները

պատրաստել են պանդոկներ, ինչպես նաև հյուրանոցներ, ուր օրվան են գտել անցորդները, ուղտերի քարավանները:

Գյուղը ունի բերրի հողեր, ընդարձակ ցանքատարածություններ: Դրանք տարածվում են Բագրևանդ գետի ձախ ափին: Այդ դաշտերը ձգվում են դեպի արևելք՝ մինչև Կազի գյուղը, դեպի հյուսիս՝ մինչև Միրանկի գյուղը, դեպի հյուսիս-արևմուտք՝ մինչև Շամեան գյուղը, դեպի արևմուտք՝ մինչև Չուրուկ գյուղը: Քառասուն-աղբյուր գյուղը ունի խոտավետ ու ծաղկավետ մարգագետիններ, որոնց ափերից բխում են սառնորակ ու անուշահամ աղբյուրներ: Մարգագետինները տարածվում են ինչպես դեպի Բագրևանդ գետի ափերին, այնպես էլ դեպի Թրի-կիրճ (Գլիճ-գետուկ) բարձրացող ընդարձակ գառիվայրերը:

Մինչև գաղթը գյուղի բնակիչներից շատերը ունեցել են բավականին լավ ապրուստ: Նրանք շատ քանակությամբ բարիք են ստացել ինչպես դաշտավարությունից՝ մշակելով ցորեն, գարի, այնպես էլ անասնապահությունից՝ պահելով գոմեշ, կով, ոչխար, եգ: Գյուղը գտնվելով առևտրական ճանապարհի վրա, նրա բնակիչները եկամուտներ են ձեռք բերել նաև առևտրի միջոցով:

Ճանապարհների վրա լինելու հանգամանքը գյուղին բերել է նաև դժբախտություններ, այն միշտ ավերման է ենթարկվել օտար հարձակվողների կողմից՝ զրկվելով իր ծառ ու ծառաստաններից, իր գեղեցիկ շինություններից, իր հնություններից:

Գյուղի բնակիչները ի բնե եղել են հայերը: 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, ինչպես իմացանք վերևում, կարափափախ թուրքերի կողմից հրկիզվել է գյուղը: Նրա բնակիչների մի մասը հրո ճարակ է դարձել, մի մասը սրի է քաշվել, իսկ մի մասն էլ, որին սպասում էր կարափափախ թուրքերի կողմից ձեռնարկված⁷¹ գերության ծանր լուծը, ազատագրվում է հայ-ռուսական հեծելազորի կողմից 1829 թ. սեպտեմբերի 12-ին: 1830 թ. զարմանը հենց այս մասն էլ բռնում է գաղթի ճանապարհը:

Պատերազմից որոշ ժամանակ անց նորից շենանում է գյուղը: Թեև այն զրկվել էր իր հիմնական բնակիչներից, բայց այնտեղ ուրիշ տեղերից կամաց-կամաց գալիս ու բնակվում են նոր մայրիկ: Սկզբից նրանց թիվը կազմում է 20-25 բնտանիք, իսկ 1884 թվականին այդ թիվը հասնում է 60-ի: Դրանք բոլորն էլ հայեր էին: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ թուրքերի կողմից սանձազերծվում է հայկական ցեղասպանությունը, այդ բնակիչներն էլ զոհ են դառնում թուրքական յաթաղանուն: Այժմ այնտեղ բնակվում են թուրքեր ու քրդեր:

գյուղում բնակիչների պահանջով՝ թոշակների, պսակների, նվերների միջոցների հաշվին տարեմտին բացել դպրոց, հաստատելով ի պաշտոնե հոգաբարձու Գևորգ Հակոբյանին, ի պաշտոնե անձնափոխանորդ Սարդար Աղեկյանին դպրոցի տնտեսությունը վարող հանձնախումբ:

Սա նշանակում է, որ մինչև 1895 թ. հունվարի 9-ը դեռ չէր բացվել Վալի-աղալու գյուղի դպրոցը, քանի որ կաթողիկոսը մինչև այդ իր կոնդակը չէր տվել: Եվ եթե բացվել է այդ դպրոցը, ապա դա տեղի է ունեցել 1895 թվականի հունվարի 9-ից հետո:

Վավերագրերից մեկ ուրիշը¹⁷ հաղորդում է, որ 1909-10 ուսումնական տարում Վալի-աղալու գյուղում գործում էր միամյա եկեղեցական ծխական երկսեռ դպրոց, որը հիմնադրվել էր 1909 թվականին: Ըստ այդ վավերագրի, դպրոցը ուներ 44 աշակերտ, որոնցից 43-ը տղաներ էին, 1-ը՝ աղջիկ: Դպրոցում պարապում էր մի ուսուցիչ՝ Արշալույս Տեր-Անանյանը, որը ավարտել էր Ներսիսյան դպրոցը և ուներ 2 տարվա մանկավարժական աշխատանքի փորձ: Դպրոցի շաբաթվա դասերի քանակը կազմել է 30 ժամ: Ուսուցչի տարեկան աշխատավարձը կազմել է 400 ռ: Դպրոցը ունեցել է 5 հոգաբարձուներ: Դրանք են՝ 1. Ավետիս Ամիրխանյանը (գյուղի քահանան, որը ավարտել էր ծխական դպրոց), 2. Գևորգ Գորոյանը, 3. Հակոբ Սահակյանը, 4. Սարգիս Ղազարյանը (ավարտել էր ծխական դպրոց), 5. Սիրական Սահակյանը (ավարտել էր ծխական դպրոց): Այս հոգաբարձուները հաստատվել է 1909 թվականին: Դպրոցի համար մշտական դրամական մուտք է կատարվել 203 ռ., պատահական մուտք է կատարվել 203 ռ. (ընդամենը՝ 525 ռ.): Այդ գումարից ելք է կատարվել՝ ա) որպես ռոճիկ՝ 400 ռ., բ) այլ ծախսեր՝ 39 ռ. (ընդամենը՝ 439 ռ.):

Ըստ մի այլ վավերագրի¹⁸ 1912-13 ուսումնական տարում Վալի-աղալու գյուղում գործել է արական, եռամյա, այսինքն՝ 3 դասարաններ (I, II, III) ունեցող դպրոց: Դպրոցում պարապել է 1 ուսուցիչ՝ Արամ Տեր-Հարությունյանը, որը ավարտել էր Երևանի քեմական դպրոցը 1910 թվականին և ուներ 2 տարվա ուսուցչական աշխատանքի փորձ (Վալի-աղալուի դպրոցում աշխատել էր 1 տարի): Նա եղել է ամուրի, շաբաթական պարապել է 30 ժամ, ունեցել է ավագ ուսուցչի պաշտոն, դասերի համար ստացել է ռոճիկ 300 ռ., ուրիշ հարմարություններից չի օգտվել: Ըստ այդ վավերագրի՝ դպրոցի 3 դասարաններում սովորել են 50 աշակերտներ (աշակերտուհիներ չեն եղել), բոլոր աշակերտները սովորել են թոշակով (ծրիավարժներ չեն եղել): Դպրոցը ունեցել է հոգաբարձուներ 9 հոգուց բաղկացած՝ 1. Օհան Տեր-Գրիգորյան (ունեցել է տնային կրթություն), 2. Ղազար Ֆահրադյան (ունեցել է տնային կրթություն), 3. Գրիգոր Տեր-Ստեփանյան, 4. Բեգլար Գասպարյան, 5. Առաքել Մախանյան, 6. Սարգիս Ղազարյան, 7. Գևորգ Հակոբյան, 8. Սահակ Աղայան, 9. Աբրահամ Սկրտչյան: Սրանց

¹⁷ ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 7, ցուցակ 1, գործ 155, էջ 26-27:

¹⁸ ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 56, ցուցակ 15, գործ 192, էջ 22-23:

¹⁶ ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 56, ցուցակ 15, գործ 328, էջ 1:

հաստատումը եղել է 1912 թ. նոյեմբերի 13-ին: Գայրոցին հաստատվել է գումար՝ 1) 160 ռ. ծխակալան տուրքերից, 2) 120 ռ. աշակերտների թռչակներից, 3) 40 ռ. եկեղեցական կալվածքներից (ընդամենը՝ 320 ռ.): Դրանից ծախսվել է՝ 1) որպես ռոճիկ՝ 300 ռ., 2) այլ ծախսերը՝ 20 ռ.:

Այդ վավերագրում ընդգծվում է, որ դպրոցը գրադարան չի ունեցել, տարվա ընթացքում դպրոցում պարապմունք է եղել 120 օր, ուսումնական տարին սկսվել է նոյեմբերի 20-ին և վերջացել է մայիսի 20-ին, ծրագրից դուրս դպրոցում ոչ մի պարապմունք չի եղել, դասը տևել է 50 րոպե, դասերը սկսվել են առավոտյան ժամը 8³⁰-ին և վերջացել 13³⁰-ին: Արական այս դպրոցը հիմնադրվել է 1912 թվականին: Գայրոցի դասերը անցկացվել են 1 սենյակում: Բոլոր 3 դասարանների պարապմունքները անցկացվել են միացած (եռաստիճան): Գայրոցի շենքը վարձվել է, որի համար վճարվել է 326 ռ.: Ըստ առարկաների՝ դպրոցում գործածվել են հետևյալ դասագրքերը՝

1. «Կրոն»-հեղինակ՝ Սահակ Սահակյան,
2. Հայոց լեզու- «Գևարդնկեր»,
3. Ռուսաց լեզու- «Живое слово», автор: Корчаппо,
4. «Թվաբանություն»- հեղինակ՝ Սպարապետյան,
5. Վայելչագրություն- հեղինակ՝ Տեր-Սարգսյան,
6. Երգեցողություն- «Հոպ ու մի խած», հեղինակ՝ Կոմիտաս վարդապետ:

Երևանի թեմական տեսուչ Տ. Ռաշմաճյանը 1913 թվականի ապրիլի 26-ի իր մի գրությունով¹⁹ Երևանի փոխթեմակալ և թեմական հարցերի նախագահ եպիսկոպոս Մուրադբեկյանին այն տեղեկությունն է հայտնում, որ Վալի-աղալու գյուղի դպրոցը եռամյա է, շենքը վարձու, մի սենյակ, վերին աստիճանի հակասանիտարական՝ մութ, խոնավ, փոքր: Գայրոցի երեք բաժիններում, որոնց դասերը անցկացվում են միասին մի սենյակում, պարապում է մի ուսուցիչ՝ Արամ Տեր-Հարությունյանը, որը ավարտել է Երևանի թեմական դպրոցը 1909-10 ուսումնական տարում և ունի 2 տարվա մանկավարժական փորձ: Գայրոցի 3 դասարաններում սովորում են 50 աշակերտներ, բոլորն էլ տղա (արական դպրոց է): Գայրոցի առաջադիմությունը, իր հակասանիտարական վիճակի հետ համեմատած, կարելի է համարել բավարար: Գայրոցի հոգաբարձուները լուրջ կերպով մտածում ու պատրաստվում են դպրոցական շենք կառուցել այս տարվանից: Այնուհետև Տ. Ռաշմաճյանը գրությունում ընդգծում է, որ նախկին գործակալ արժանապատիվ Արտակ վարդապետը մտահոգված է եղել Նոր-Բայազետի գավառի դպրոցները 1913-14 ուսումնական տարում պահելու մասին, որի պատճառով էլ որոշել է նրանց նպաստ տրամադրել 300 ռուբլի (100 ռ. հասարակությունից, 200 ռ. հոգևոր իշխանությունից): Եթե հոգևոր իշխանությունը իր խոստացած այդ նպաստը կտրամադրի նախապես, ապա Նոր-Բայազետի գավառի դպրոցները կշարունակեն գործել, իսկ եթե

¹⁹ ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 48, ցուցակ 1, գործ 368, էջ 35-36:

ոչ, ապա այդ դպրոցների պահպանությունը խիստ վտանգի տակ կլինի 1913-14 ուսումնական տարում:

Հավանաբար հոգևոր իշխանությունը հնարավորություն չի ունեցել Նոր-Բայազետի գավառի դպրոցներին խոստացած իր վերոհիշյալ նպաստը տրամադրել, որի պատճառով էլ, ըստ մի վավերագրի²⁰ հարողորած տեղեկությունների, 1913-14 ուսումնական տարում փակվում են այդ գավառի մի շարք գյուղերի դպրոցները, որոնց թվում նաև Վալի-աղալու գյուղի դպրոցը:

1914 թվականին լույս տեսած Երևանի նահանգի հուշագրքում²¹ տեղեկություն է պահպանվել, որ Նոր-Բայազետի գավառի մեջ մտնող Ղարանլուղի (հետագայում՝ Մարտունի) գավառակի կամ շրջանի 20 գյուղերը ունեին ընդամենը երկու դպրոց, որոնցից մեկը Գյուլի դպրոցն էր, որի դասերը անցկացվել են Երանոսում, իսկ մյուսը Ն. Ղարանլուղի դպրոցն էր: Գյուլ-Երանոսի դպրոցը մեկդասյա էր, այսինքն՝ ուներ 1 դասարան, իսկ Ն. Ղարանլուղի դպրոցը երկդասյա էր, այսինքն՝ ուներ 2 դասարան: Դրանցից ամեն մեկը 1914 թվականին սպասարկել է իր ենթաշրջանի գյուղերին: Ընդ որում, Գյուլ-Երանոսի դպրոցը սպասարկել է Երանոս, Գյուլ, Ծակ-քար, Վ. Աղյաման, Թագաքյանդ, Ն. Աղյաման, Վալի-աղալու, Աթամ-խան գյուղերին, իսկ Ն. Ղարանլուղի դպրոցը՝ Ն. Ղարանլուղ, Ջոլախաչ, Ալիոռիս, Ավդալ-աղալու, Վ. Ղարանլուղ, Մաղինա, Զարվանսարա, Յանդ, Խարտլուղ, Խզլ-խարաբա, Սիջանլու (հմմտ. Ահմատալի), Քյասիկ-քաշ գյուղերին:

Գյուլ-Երանոսի և Ն. Ղարանլուղի դպրոցները ֆինանսավորվել են ինքնավարության միջոցներով: Ընդ որում, Գյուլ-Երանոսի դպրոցի տարեկան ծախսերը կազմել են 420 ռուբլի: Այդ գումարը Վալի-աղալու գյուղին րաժին է հասել 67 ռ. 60 կոպ, որ տարեկան պետք է վճարեր: Ինչ վերաբերում է Ն. Ղարանլուղի դպրոցին, ապա նրա վրա տարեկան ծախսվել է 140 ռուբլի:

Հեռու լինելու պատճառով Գյուլ-Երանոսի դպրոցից չեն օգտվել Ծակ-Քար, Վ. Աղյաման, Թագաքյանդ գյուղերը, իսկ Ն. Ղարանլուղի դպրոցից՝ Մաղինա, Զարվանսարա, Յանդ, Խարտլուղ, Խզլ-խարաբա, Սիջանլու (Ահմատալի), Քյասիկքաշ գյուղերը: Այս փաստը ցույց է տալիս, որ Վալի-աղալու գյուղից աշակերտներ են գնացել Գյուլ-Երանոսի մեկդասյա դպրոցում սովորելու: Աշակերտները դպրոցում հազիվ դառնում էին տառաճանաչ: Բայց արդյո՞ք սովորել ցանկացող բոլոր դպրոցահասակ երեխաներին հաջողվում էր ներգրավվել այդ դպրոցում: Դա արդեն կապված էր մեծ դժվարությունների հետ:

Ցարական կառավարության օրոք Հայաստանի գյուղերի բնակիչների

²⁰ ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 48, ցուցակ 1, գործ 368, էջ 21:

²¹ Памятная книжка Ереванской губернии на 1914 г., Ереван, 1914, стр. 162-163.

մի մասը ուներ մեծ քանակությամբ վարելահող, իսկ մյուս մասը հողագուրկ էր:

Այդպիսի վիճակ է տիրել նաև Վալի-աղալու գյուղում՝ սկսած դեռևս 1842 թվականից: Ինչպես նախորդ շարադրանքից իմացանք, դեռ այն ժամանակ գյուղի 53 ընտանիքներից 9-ը ունեին 15 հեկտար վարելահող, 2-ը՝ 14 հեկտար, 5-ը՝ 10 հեկտար, իսկ 14 ընտանիքներ հողագուրկ էին: Անշուշտ այսպիսի վիճակը շարունակել է պահպանվել նաև 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին:

20-րդ դարի սկզբին խիստ լարված վիճակ է սկսվում հայ ժողովրդի կյանքում: Դա հատկապես մեծ սրության է հասնում Արևմտյան Հայաստանում, որը դարձրել է հեծում էր բուրքական բռնապետության ճիրաններում: Թուրքիայի նվաճողական բանակը մեկը մյուսի հետևից պարտություններ էր կրում Բալկաններում: Երկրի ներսում գլուխ էին բարձրացրել խռովություններն ու ապստամբությունները: Դրանք ճնշելու համար գործի էր դրվել բուրքական արյունոտ յաթաղանին: Հայ ժողովուրդը պահանջում էր ազատություն և հավասարություն: Սուլթան Համիդ 2-րդի կառավարությունը ապրում էր խոր ճգնաժամ: Առիթից օգտվելով 1908 թվականի հուլիսին Ռեսնա և Սալոնիկ քաղաքներում բուրքական Միություն և առաջադիմություն կուսակցությունը սպանել Նիսի, Թալեաթի և Էնվերի գլխավորությամբ կազմակերպում է զինվորական աբստամբություն: Ապստամբ զինվորը արագորեն շարժվում են դեպի Կ. Պոլիս, տասպալում Համիդ 2-րդին, նրա փոխարեն սուլթան նշանակում նրա եղբայր Մեհմեդ 5-րդ Բեշարիին, իհարկե, նրան գրկելով փաստական իշխանությունից և ամբողջ կառավարությունը վերցնելով իրենց ձեռքը: Թեև երիտթուրքական այդ կառավարությունը ապստամբության ժամանակ հանդես էր գալիս ազատություն, հավասարություն և եղբայրություն կարգախոսներով, բայց իշխանության գլուխ անցնելով բացահայտեց իր քաղաքական նպատակները՝ Թուրքիայում գտնվող բոլոր ազգերին և ազգություններին ձուլել բուրք ժողովրդին, դրան հասնելու համար կանգ չառնել ոչ մի միջոցի առաջ, այդ թվում մասսայական ջարդերի: Դրանում համոզվեցին 1909 թվականի ապրիլին Կիլիկիայում կազմակերպված 30.000 հայերի ջարդով: Երիտթուրքական կառավարության և սահմանադրության հանդեպ արևմտահայության պատրանքը վերջացավ: Արևմտահայությունը ձգտեց որքան հնարավոր է շուտ Անտանտի կամ Եռյակ դաշինքի երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի օգնությամբ ապահովել իր կյանքի անվտանգությունը և բարենորոգումների ճանապարհով հասնել ինքնուրույնության 7 վիլայեթներում՝ Վանում, Էրիթրիայում, Էրզրումում, Դիարբեքիլում, Մեքաստիայում, Խարբեռում, Տրապիզոնում: Այդ գաղափարին կողմ էին Անտանտի երկրները: Այդ ուղղությամբ նրանք դիմեցին նույնիսկ կոնկրետ քայլերի: Սակայն նոր սկսված այդ քայլերը ձախողվեցին 1914 թվականին ծագած առաջին աշխարհամարտով, որը մղվում էր հիմնականում Անտանտի կամ Եռյակ դաշինքի երկրների՝ Անգլիայի, Ֆրան-

սիայի, Ռուսաստանի և Քառյակ դաշինքի երկրների՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի, Բուլղարիայի միջև:

Առաջին աշխարհամարտը ամենամեծը ևստեց արևմտահայության վրա: Օգտվելով սկսված աշխարհամարտից՝ Թուրքիան ծրագրում է Արևմտյան Հայաստանը իր ձեռքը պահել առանց հայերի: Այդ ծրագիրը իրականացնելու նպատակով 1915 թվականին բուրքական պետությունը կազմակերպում է հայերի ցեղասպանություն, որի ընթացքում զոհվում են ավելի քան 1,5 միլիոն անգեղն ու անմեղ հայեր:²²

Առաջին աշխարհամարտի հետևանքով լարված վիճակ է սկսվում նաև արևելահայության կյանքում: 1917 թվականի փետրվարին տասպալվում է Ռոմանովների հարստության վերջին գահակալ Նիկոլայ 2-րդ ցարի իշխանությունը: 1917 թվականի հոկտեմբերի 24-ին (հին տոմարով նոյեմբերի 7-ին) իշխանության գլուխ են անցնում կոմունիստները և Ռուսաստանում հաստատում սոցիալիստական կարգեր: Այն իր արտացոլումն է գտնում նաև Արևելյան Հայաստանում, որը գտնվում էր Ռուսաստանի կազմում: Բայց դա կարճ է տևում Արևելյան Հայաստանում ու անցնում անհետևանք: Պատճառը հետևյալն էր: 1918 թվականի փետրվարի 18-ին (մարտի 3-ին) սոցիալիստական Ռուսաստանը Բրեստ-Լիտովսկում հաշտության պայմանագիր է կնքում Քառյակ միության երկրների՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի և Բուլղարիայի հետ, որպեսզի կարողանար դուրս գալ պատերազմից: Պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանը իր գործերը պետք է հաներ Թուրքիայի տարածքից այն հաշվով, որ վերականգնվել 1877-1878 թվականների պատերազմից առաջ եղած ռուս-բուրքական սահմանագիծը, այսինքն՝ Կարսը և Արդահանը, որ 1877-1878 թվականների պատերազմի ընթացքում ազատագրվել ու միացել էին մայր Հայաստանին, նորից պետք է անցնեին Թուրքիային: Ռուսաստանը պարտավորվում է նաև բուրքական ռազմաճակատից հանել ու ցրել իր զորքերը, որոնք կազմված

²² Այդ ժամանակ Թուրքիան ուներ 28 միլիոն բնակիչ, որից 8 միլիոնը բուրքեր էին: Թուրքահայաստանում և Կիլիկիայում ապրում էին շուրջ 5 միլիոն հայեր: Նրանցից 1,5 միլիոնը զոհվում է եղեռնի տարիներին: Կենդանի մնացածների մեծ մասը տեղահանվում է քվում է աշխարհի տարբեր երկրներ: Դրանց մի մասը ասիմիլացվում է: Մնացած մասը համառոտն ձգտում է պահպանել իր հայ լինելը: Թուրքիայում մնացած հայերը (Համշենում և այլուր) բռնի կերպով մահմեդականացվում են: Այժմ դրանց թիվը Թուրքիայում անցնում է մի քանի միլիոնից: 1914 թ. աշխարհամարտից առաջ Ռուսահայաստանում և Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող այլ վայրերում ապրում էին 3 միլիոնից ավելի հայեր: Պատերազմի ընթացքում դրանց մի մասը կոչվեց կոչվեցին, մի մասը քվեց այլ երկրներ, իսկ մի մասը կենաց ու մահու պայքարի գնով շարունակեց ապրել իր հայրենիքում: Այժմ աշխարհում հայերի թիվը անցնում է 12 միլիոնից, բայց Հայաստանում ապրում են շուրջ դրա 1/3 մասը: Այժմ գրեթե նույն քանակությամբ հայեր են ապրում Ռուսաստանում: Այժմ դրա կեսից էլ ավելի հայեր են ապրում ԱՄՆ-ում:

էին ռուսներինց ու հայերինց, իսկ թուրքական զինված բանակը պետք է պահպանվեր:

Պայմանագիրը կնքելուց հետո, երբ ռուսական զորքերը հեռանում են, Թուրքիայի դեմ մնում են միայն հայկական զորամասերը: Օգտվելով դրանից՝ 1918 թ. մարտ-ապրիլ ամիսներին Թուրքիան նվաճում է Կարսը, Արդահանը, Սարիղամիշը: 1918 թվականի ապրիլի 9-ին (22-ին) Անդրկովկասը, որի կազմում էր, բնականաբար, մաս Հայաստանը, անկախանում է Ռուսաստանից: Այդ իմաստով՝ Թուրքիան հարձակում է գործում Արևելյան Հայաստանի վրա: Մայիսի 15-ին գրավում է Ալեքսանդրապոլը, մայիսի 21-ին՝ Սարդարապատը և շարժվում դեպի Երևան, որ գրավի մաս արևելահայության վարչական կենտրոնը: Հայ ժողովուրդը ոտքի է կանգնում, պարտության մատնում թուրքական զորքերին Սարդարապատի ճակատամարտում: Պարտված թուրքական զորքերը ետ են շարժվում: 1918 թվականի մայիսի 28-ին Հայաստանը իրեն հռչակում է որպես անկախ հանրապետություն: Ստեղծվում է Հայոց պետական ապարատ (ազգային խորհրդի նախագահ՝ Ա. Ախարոնյան, վարչապետ՝ Հ. Քաջազնունի, արտաքին գործերի նախարար՝ Ա. Խատիսյան):

Իր շահերից ելնելով առաջինը 1918 թվականի հունիսի 4-ին Բաթումում կնքված պայմանագրով Թուրքիան է ճանաչում Հայաստանի անկախությունը: Նա հասկանում էր, որ Հայաստանի անկախանալը Ռուսաստանից իրեն բացարձակ հնարավորություն կտար հայկական հարցը վերջնականապես հոգուտ Թուրքիայի լուծել մաս Արևելյան Հայաստանում:

Սակայն դրանից հետո պատերազմի վերսկսումը և Թուրքիայի պարտությունը Անտանտից կամ դաշնակից երկրներից ու 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուղրոսի զինադադարը նոր թափ հաղորդեցին Հայաստանին: Զինադադարի համաձայն՝ Թուրքիան իր զորքերը պիտի ետ քաշեր մինչև 1914 թվականի սահմանագիծը, այսինքն՝ պիտի վերականգնվեր 1877-1878 թվականներից հետո ստեղծված սահմանագիծը: Կրկին Հայաստանը իր իշխանությունը տարածում է Կարսի մարզի մեծ մասի վրա: Ընդարձակվում են Հայաստանի սահմանները դեպի Բայազետ ու Ալաշկերտ:²³ Դա ոգևորություն է առաջ բերում հայ գաղթականների մեջ, որոնք նախապատրաստվում են վերադառնալ իրենց բնակավայրերը: Հենց այդ ժամանակ էլ առաջ եկավ միացյալ և անկախ Հայաստանի հանրապետության ստեղծման գաղափարը: «Միացյալի» գաղափարը մտցվեց այն պատճառով, որ արևմտահայերը բուն Հայաստանը համարում էին Արևմտյան Հայաստանը, իսկ Հայաստանի Հանրապետությունը նրանք համարում էին Արարատյան

²³ Օգտվելով թուրքական զորքերի ետքաշումից՝ Վրաստանը ձգտեց տեր դառնալ ոչ միայն Ախալքալաքին, այլև Արդահանին, որոնք հիմնականում բնակեցված էին հայերով և ի սկզբանե հայկական հողեր էին: Վրաստանը 1918 թվականի վերջին նույնիսկ մտավ բուն Հայաստան և գրավեց Լոռին: Հայաստանը բողոքեց դրա դեմ: Լոռին Անտանտի երկրների միջնորդությամբ դարձավ չեզոք գոտի:

Հանրապետություն: «Միացյալ» նշանակում էր Ռուսահայաստանի և Թուրքահայաստանի միացում: 1919 թ. փետրվարին Երևանում կայացած Կովկասում ապաստանած 400000 արևմտահայ գաղթականների համագումարը ընդունեց Միացյալ և Ազատ Հայաստանի անկախության մասին որոշումը: 1919 թ. մայիսի 28-ին՝ Հայաստանի անկախության տարեդարձի օրը, Հայաստանի Հանրապետության կառավարության անդամների ստորագրումով հռչակվեց Միացյալ և Ազատ Հայաստանի անկախության մասին փաստաթուղթը, որի մեջ ասվում էր, թե «Համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն»: Ստեղծվում է մաս հայոց զորքը: 1920 թ. Հայաստանը արդեն ուներ 10 զնդից բաղկացած շուրջ 40 հազարանոց բանակ:

Սակայն Անկախ Հայաստանի գաղափարին կողմ չէր Ռուսաստանը, որովհետև նրա պատկերացմամբ Անդրկովկասի երկրները, այդ թվում մաս Հայաստանը Ռուսաստանի անբաժան մասերն են: Դրան էլ ապաստում էր Թուրքիան: Նա սկսեց աստիճանաբար հետևել այդ հակասությանը և օգտվել դրանից:

Հայաստանի նորաստեղծ հանրապետությունը ձեռնամուխ եղավ վերականգնել երկրի ավերված տնտեսությունը: Հանրապետությունը ընդունելի համարեց տնտեսության մեջ սեփականության տարբեր ձևերը՝ պետական, մասնավոր, կոոպերատիվ, կոնցեսիա և այլն: Միջոցներ էին ձեռնարկվում արդյունաբերության վերականգնման համար: Ավելի որոշակի էր կառավարության հողային (ագրարային) քաղաքականությունը: Այն անցավ երկու փուլով: Առաջին փուլում պետք է հողային կոմիտեները բռնագրավեին մասնատիրական²⁴ և վանքապատկան կալվածքները և դրանք բաժանեին կարիքավորների միջև (մեկ տարի ժամանակով, վարձակալության հիմունքներով): Մինչև 1919 թվականի վերջը հողային կոմիտեները բռնագրավել էին 21 մասնատիրական և 7 վանքապատկան կալվածքներ, 8775 դեսյատին ընդհանուր տարածքով (1 դեսյատինը հավասար է 0.9 հեկտարի): Ինչպես դանդաղկոտությունը, այնպես էլ հողաբաժանության այդ անհուսալի եղանը գյուղացիների մեջ դժգոհություն առաջացրին: Դրանից օգտվեցին Հայաստանի կոմունիստները, որոնք 1920 թվականի սկզբին ստեղծել էին Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, 1920 թ. մայիսին պետության դեմ կազմակերպեցին ապստամբություն: Այն սկսվեց Ալեքսանդրապոլից ու տարածվեց ամենուրեք: Այս ապստամբությունը սուր ձևով արտահայտվեց մաս Նոր-Բայազետի գավառի Գարաբլուղի (Մարտունու) շրջանի գյուղերում, այդ թվում մաս Վալի-աղալու գյուղում: Գյուղերի դժգոհ բնակիչները շարժվում են դեպի շրջկենտրոն՝ Գարաբլուղ (Մարտունի), որտեղ սկսվում են կռիվները ապստամբների և պետական զորքի միջև: Մայիսի 13-ին ապստամբները գրավում են այնտեղ գտնվող զորքի շտաբը, ձեր-

²⁴ Հայաստանում խոշոր կալվածատիրություն չի առաջացել:

քակարյուն բանակի գեներալ Մովսես Սիլիկյանին և գնդապետ Գրիգորյանին, որոնք պաշտպանում էին ազատ, անկախ հանրապետությունը: Շուտով ապստամբում են նաև Բասարգեչարի (Վարդենիսի) գյուղացիները: Մարտեր են մղվում նրանց և Բասարգեչարում (Վարդենիսում) գտնվող պետական զինվորների միջև: Սակայն զինվորների մի մասը անցնում է ապստամբների կողմը: Նրանք շարժվում են դեպի Ղարանլուղ (Մարտունի), միանում այնտեղի ապստամբներին և մայիսի 18-ին ուղղություն վերցնում դեպի Գավառի կենտրոն Նոր-Բայազետ քաղաք: Ապստամբությունը դեկալարում էր կոմունիստ Հովհաննես Սարուխանյանը: Սակայն 1920 թվականի մայիսի 19-ին Հայաստանում ամենուրեք, այդ թվում նաև նոր-Բայազետի գավառում, ճնշվում է մայիսյան ապստամբությունը: Գաղափարացիները է հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեությունը: Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը և նրա կենտրոնական կոմիտեն կորցնում են իրենց ակտիվությունը մասսաների աչքում: Մայիսյան ապստամբության ժամանակ Ղարանլուղում, Բասարգեչարում, Նոր Բայազետում տեղի ունեցող կռիվներին թե՛ ապստամբների և թե՛ ազատ, անկախ Հայաստանի կողմից մասնակցել են նաև Վալի-աղալու գյուղի բնակիչները: Գյուղի բնակիչ Գրիգոր Ավետիսյանը մասնակցել է Ղարանլուղի կռիվին և, ակամատեսների վկայությամբ, իր ձեռքերով պոկել է գեներալ Մովսես Սիլիկյանի ուսադիրները:

Մայիսյան ապստամբությունից հետո հանրապետության կառավարությունը փոխում է իր հողային (ագրարային) քաղաքականությունը: Նա ընտրում է նոր քաղաքականություն, որը հենվում էր հողի սոցիալիզացիայի (ազգայնացման) ծրագրի վրա: Դրա էությունն այն էր, որ կալվածատիրական հողատիրությունը վերացվում է առանց հատուցման, վերացվում էր նաև հողի մասնավոր սեփականությունը և առ ու վաճառքը, բոլոր հողերը ազգայնացվում են, դրվում գյուղական համայնքների տնօրինության տակ և պարբերաբար վերաբաժանվում գյուղացիների միջև հավասար, աշխատավորական սկզբունքով (ըստ շնչերի կամ աշխատող ձեռքերի): Հողօգտագործման այսպիսի ձևը ելնում էր գյուղացիության ցանկությունից և համապատասխանում էր նրա շահերին: Հողային այս օրինագիծը հաստատվեց 1920 թվականի հունիսի 4-ին և այն պետք է կենսագործվեր նոր ստեղծված հողային հատուկ մարմինների միջոցով մինչև 1920 թվականի հոկտեմբերի 1-ը: Սակայն այն ընդհատվեց 1920 թվականի սեպտեմբերի 28-ին, երբ Թուրքիան հարձակվեց Հայաստանի վրա:

Հողային անհավասարություն է գոյություն ունեցել նաև Վալի-աղալու գյուղում՝ սկսած դեռևս 1842 թվականից: Այնտեղ որոշ ընտանիքներ, ինչպես բազմիցս ընդգծվել է նախորդ շարադրանքում, ունեցել են 15, 14, 10 հեկտար վարելահող, իսկ շատ ընտանիքներ էլ եղել են հողագործներ: Հավանաբար հողային այդպիսի անհավասար վիճակը Վալի-աղալում պահպանվել է մինչև 1920 թվականը: Թե հողի ազգայնացման (սոցիալիզացման) ուղղու-

թյամբ ինչպիսի աշխատանքներ են կատարվել այդ գյուղում 1920 թվականին, պարզ չէ՝ անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության պատճառով, բայց հաստատ է այն, որ Վալի-աղալու գյուղում էլ կազմակերպվել են հողի ազգայնացման (սոցիալիզացման) ուղղությամբ աշխատանքներ, ինչպես հանրապետության մյուս գյուղերում, նամանավանդ որ Վալի-աղալուից էլ հողային ռեֆորմի առաջին փուլից դժգոհ գյուղացիներ են մասնակցել մայիսյան ապստամբությանը:

Հայաստանի նորաստեղծ ազատ, անկախ հանրապետությունը միջոցներ չի խնայում երկրի մշակութային կյանքը բարելավելու ուղղությամբ: Այդ ասպարեզում կատարված աշխատանքներից էր հայոց գյուղերում գրեթե համատարած դպրոցների բացումը: 1919-20 ուսումնական տարում Հայաստանում գործում էին 20 միջնակարգ և 456 տարրական դպրոցներ, աշխատում էին 1300-ից ավելի ուսուցիչներ, սովորում էին 45200-ից ավելի աշակերտներ:

1920 թ. բացվում է նաև համալսարան:

Նախորդ շարադրանքից իմացանք, որ 1913-14 ուսումնական տարում Մարտունու շրջանի 20 գյուղերի համար ցարական կառավարության օրոք բացվել են ընդամենը 2 դպրոցներ, որոնցից մեկը 8 գյուղերի, իսկ մյուսը՝ 12 գյուղերի համար: Դրան հակառակ 1919 և 1920 թվականներին Մարտունու շրջանի բոլոր գյուղերում բացվում են դպրոցներ:²⁵ Վալի-աղալու գյուղում դպրոց է բացվում 1919 թվականին:²⁶

1920 թ. ապրիլին Բաղայի Ման-Ռեմո քաղաքում տեղի ունեցող կոնֆերանսում, որը նախապատրաստական աշխատանքներ էր կատարում պարտված Թուրքիայի հետ դաշնակից երկրների հաշտության պայմանագիր կնքելու համար, Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ղեկավարները (Լոյդ Ջորջ, Միլերան, Նիտոլի) ուսումնասիրելով Հայկական հարցը, այն հետևության են հանգել, որ պետք է ստեղծել հայկական պետություն՝ ընդգրկելով Ռուսահայաստանը և Թուրքահայաստանը:

1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի արվարձան Սերում ստորագրվում է հաշտության պայմանագիր դաշնակից տերությունների և թուրքիայի միջև, որի համաձայն՝ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանն անցնելու էր Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներով, ինչպես, ելք ունենալով նաև դեպի Սև ծով դուրս գալու համար: Սահմանի մանրամասն որոշումը հանձնարարվում է ԱՄՆ-ին, մասնավորապես նրա պրեզիդենտ Վիլսոնին: Նա սահմանները գծելիս դեպի Սև ծով Հայաստանին ազատ ելք է տալիս Տրապիզոնի նավահանգստի վրայով, որտեղ առիավետ նրան վարձակալության էր հանձնվելու մի տեղամաս: Վիլսոնի գծած սահմանները Հայաստանին տրամադրում էր բավարար տարածք՝ հայ ժողովրդի

²⁵ Հայաստանի Հանրապետության նոր պետական պատմության կենտրոնական արխիվ, այսուհետև՝ ՀՀ ՆՊՊԿԱ, ֆոնդ 586, ցուցակ 1, գործ 236, էջ 49-212:
²⁶ ՀՀ ՆՊՊԿԱ, ֆոնդ 58, ցուցակ 1, գործ 236, էջ 174:

աշխարհափոշու բեկորները միատեղելու և նրա գոյության պայմանները ապահովելու համար:

Սակայն Թուրքիայի նոր ղեկավար Մուստաֆա Քեմալ փաշան կարողացավ դիվանագիտական այնպիսի հարաբերությունների մեջ մտնել Անգլիայի, Ֆրանսիայի և նրանց հակառակորդ Խորհրդային Ռուսաստանի հետ, որ Սևրի պայմանագիրը մնաց որպես պատմական փաստաթուղթ: Հայաստանը, որ մեծ հույսեր էր կապում դաշնակից երկրների հետ, գտնվեց խաբված վիճակում ու մնաց մենակ: Վտանգ էր սպառնում Հայաստանին անկախությունը:

Արևմուտքում սոցիալիստական հեղափոխությունների պարտությունից հետո ռուս բոլշևիկները համաշխարհային սոցիալիստական հեղափոխության հասնելու համար իրենց հույսերը կապում էին արևելքի ժողովուրդների հետ: Քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանին համոզում էր, որ այդ հարցում միակ խանգարող դաշնակցական Հայաստանն է: Նա Ռուսաստանից պահանջում էր նյութական ու զենքի օգնություն հայկական վտանգը բնում խեղդելու համար: Ռուսաստանը, հավատարով այդ հեքիաբներին, 1920 թվականին Թուրքիա ուղարկեց 200 կգ ոսկի (ծուլածո) և տարբեր տեսակի զենք ու զինամթերք: Հայաստանը, ինչպես ասում են, ընկել էր փաստորեն ռուսական սալի ու բուրբակի մուրճի արանքը:

1920 թ. սեպտեմբերի 28-ին Թուրքիան, առանց պատերազմ հայտարարելու, հարձակվում է Հայաստանի Հանրապետության վրա: Հայ զինվորների մեջ այն քյուր կարծիքն էր ստեղծվել, թե բուրբեքի հետ իրենց դեմ կռվում են նաև ռուսները: Այս միտքը թուլացրել էր նրանց, և նրանք մեկը մյուսի ետևից կրում էին պարտություններ: Վտանգի տակ էր հայ ժողովրդի գոյությունը: Այս ծանր պահից Հայաստանի վրա է հարձակվում նաև Ադրբեջանը, որը 1920 թ. ապրիլի 28-ին իրեն հռչակել էր Խորհրդային Հանրապետություն: Նա ձգտում էր տեղ դառնալ Ղարաբաղին, Չանգևզուրին ու Նախիջևանին, որոնք հայկական հողեր էին և ի սկզբանե բնակեցված էին հայերով: Խորհրդային Ադրբեջանի մուսավաթական զինվորների հետ հայերի դեմ կռվում էին 11-րդ կարմիր բանակի զինվորները: Այսպիսի պայմաններում 1920 թվականի հակտեմբերի 28-ին հայկական պատվիրակությունը Լ. Շանթի գլխավորությամբ ստիպված Թիֆլիսում հանդիպում է ռուսական պատվիրակությանը, որին գլխավորում էր Բ. Լեգրանը: Ռուսաստանի համար հասել էր ամենահարմար պահը Հայաստանում իր ծրագիրն ու քաղաքականությունը առաջ մղելու համար: Հանդիպման արձանագրությունում կամ պայմանագրի նախագծում նշվում է, որ Թուրքիան ու Հայաստանը պետք է հրաժարվեն Բրեստ-Լիտովսկի, Բաթումի, Սևրի պայմանագրերից, Թուրքիան իր գործերը հետ է քաշելու մինչև 1914 թվականի սահմանագիծը, Նախիջևանն ու Չանգևզուրը տրվում են Հայաստանին, Ռուսաստանը վարկ է տրամադրելու Հայաստանին, այսուհետև Հայաստանի ու Թուրքիայի միջև չիլի և Ռուսաստանը:

1920 թ. նոյեմբերի 19-ին Երևանում կայանում է Հայաստանի կառավարության ներկայացուցիչների (նախարարապետ՝ Հ. Օհանջանյան, զինվորական նախարար՝ Ռ. Տեր-Մինասյան) հանդիպումը ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի և Թուրքիայի պատվիրակության հետ: Ռուսաստանի ներկայացուցիչները ուղղակի ասում են իրենց ցանկությունը, որ պայմանագրերը հայ ժողովրդին չեն փրկի թուրքական վտանգից, այլ անհրաժեշտ է ռուսական բանակի առկայությունը Հայաստանում: Փոխարենը նրանք խոստանում են Հայաստանի ու Թուրքիայի միջև եղած 1914 թ. սահմանների վերականգնումը:

Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն, որ ստեղծվել էր Ադրբեջանում, 1920 թ. նոյեմբերի 29-ին 11-րդ Կարմիր բանակի զորամասերի ուղեկցությամբ մտնում է Հայաստան և երկիրը հռչակում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն:

1920թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվում են սոցիալիստական կարգերը: Դրանցից հետո միջոցառումներ են կիրառվում՝ ամրապնդելու այդ կարգերը: Այդպիսի միջոցառումներից են նախկին կառավարության ղեկավարներին և սպաներին արտաքսելը, ռազմական կոմունիզմի և նեպ-ի (նոր տնտեսական քաղաքականության) կիրառումը:

1920 թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը Հայաստանի անկախ հանրապետության պատվիրակությունը (Ալ. Խատիսյան, Աբր. Գյուլիսան-դանյան, Ստ. Դորդանյան), երբ արդեն կառավարությունը իշխանությունը հանձնել էր բոլշևիկներին և վայր էր դրել իր լիազորությունները, հույսը դնելով Թուրքիայի վրա, թե նրա օգնությամբ Հայաստանի անկախությունը կարելի է փրկել, Ալեքսանդրապոլում (Գյումրի) Թուրքիայի հետ ստորագրում է հայ-թուրքական հաշտության պայմանագիր: Թուրքիան, օգտվելով դրանից, առաջարկում է երկու պետությունների համար ճանաչել այնպիսի սահմանագիծ, որը գոյություն ունի մինչև այսօր: Փաստորեն դրանով արգելակվում է Ռուսաստանի այնպիսի խոստումի կատարումը, թե վերականգնվելու են Հայաստանի ու Թուրքիայի 1914 թ. սահմանները:

1920 թվականից ինչպես Հայաստանի Հանրապետության շատ գյուղերում, որոնց թվում նաև Վալի-աղալում ծնունդ են առնում քաղաքական նոր կազմակերպություններ՝ հեղկոմ ու կոմբջիչ, որոնք կոչված էին ամրապնդելու սոցիալիստական կարգերը հայոց բնակավայրերում:

Հայաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո Վալի-աղալում գյուղում սոցիալիստական կարգերը ամրապնդելու նպատակով գործողության մեջ են դրվում ռազմական կոմունիզմը և նեպ-ը:

Այդ ժամանակվանից սկսած՝ Վալի-աղալում գյուղը սկսում է կոչվել Զորագյուղ անունով:

Ինչպես բնակավայրը Զորագյուղ անունով կոչելու, այնպես էլ այնտեղ սոցիալիստական կարգերը ամրապնդելու նպատակով, ռազմական կոմուն-

Պիպի ու մնալի քաղաքականությունը կիրառելու մասին հանգամանալից կրթավի սույն աշխատության հայտը գլխում:

* * *

Չմայած ուս հանճարեղ գեներալ Պասկևիչի գորքերը հայ կամա-
վորականների հետ պարսկական խաների լծից ազատագրում են Շողա-
գան, բայց այդ բնակավայրը շարունակվել է ավանդաբար կոչվել պարսիկ
Վալի խանի անունով: Սակայն դա չի խանգարել այդ բնակավայրի սե-
րունդներին, որ իրենց երգելում գովերգեն նրա կենարար բնությունը,
հատկապես քաղցրահամ ու սառնորակ աղբյուրների պարզևած գովու-
թյունը, ինչպես նաև հպարտանալ այդ բնակավայրի պատմական անցյա-
լով, քե ինչպես այնտեղ ապրող հնագույն հայերը մ.թ.ա. 8-րդ հազարամ-
յակում, երբ ժամանակակից մարդը նոր է երևան եկել իր քաղաքակրթու-
թյամբ, ժայռերի վրա կերտել են ժայռապատկերներ կամ պատկերագրեր,
իսկ Հայաստանի Ուրարտական կամ Արարատյան քաղաքաշինության
դարաշրջանում ժայռերի վրա հյուսել սեպագիր արձանագրություններ: Ահա
և դրան է նվիրված հետևյալ ներբողը, որ դպրոցական հանդեսներին
արտասանում են երեխաները:

Հովեր, այդպես դուք բերև
Վալադալու կթռչեք,
Լուսաղբյուրից մեղմանուշ
Ինձ գովություն դուք բերեք:

Աժդահակի ժայռերի
Պատկերագրերը շոյեք,
Լուսաղբյուրից մեղմանուշ
Ինձ գովություն դուք բերեք:

Գրեր, սարի ժայռերի
Սեպագրերին փարվեք,
Լուսաղբյուրից մեղմանուշ
Ինձ գովություն դուք բերեք:

ԳԼՈՒԽ ՉՈՐԲՈՐԴ
ՉՈՐԱԳՅՈՒՂ (1920-2000 թթ.)

§1. ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ
ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ (1920-1930 թթ.)

Պաշտոնական գրավոր փաստաթղթերում Վալի-ադալու գյուղն առա-
ջին անգամ Չորագյուղ անունով է կոչվել 1921 թվականից: Նոր-Բայազետի
գավիենդկոմի լուսբաժնի կողմից 1921թ. ապրիլի 28-ին կազմված գործող
դպրոցների և նրանցում աշխատող ուսուցիչների ցուցակում¹ հիշատակվում
է Չորագյուղի դպրոցի անունը: Դպրոցը եղել է առաջին աստիճանի, ունեցել
է 2 դասարաններ (1-ին և 2-րդ), որոնցից առաջինում սովորել են 18, իսկ
երկրորդում՝ 22 աշակերտներ: Դպրոցում աշխատել են երկու ուսուցիչներ՝
Միրայել Տեր-Խաչատրյանը և Բագրատ Մանուկյանը, որոնցից առաջինը,
որը հավանաբար նաև դավարն էր, պարապել է առաջին դասարանում, իսկ
երկրորդը՝ 2-րդում և ամեն մեկն ունեցել է 24 դասաժամ: Հետագա ժամանա-
կաշրջանում դպրոցի հետ առնչվող փաստաթղթերում² գյուղը շարունակել է
կոչվել Չորագյուղ անունով: Այս հարցին դրականորեն է արձագանքել նաև
«Մշակ» թերթը: Նրանում գետեղված հոդվածներից մեկը,³ որը ողջունում է
Նոր-Բայազետի գավառի այն գյուղերին, որոնք իրենց նախկին օտար ա-
նունների փոխարեն կոչվել են հայերեն նոր անուններով, հիշատակվում է
նաև Չորագյուղը, որը թողել է իր նախկին Վալի-ադալու օտար անունը և
կոչվում է հայերեն Չորագյուղ անունով:

Խորհրդային Հայաստանի կազմում գտնվող Չորագյուղի պատմությու-
նը ակներևաբար կապվում է Հայաստանում սոցիալիստական կարգերի
հաստատման ու ամրապնդման պատմության հետ և համարվում է նրա ան-
բաժան մասը, նրա բջիջներից մեկը: Հասարակական, քաղաքական, ա-

¹ Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կուսակցություն-
ների փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվ, այսուհետև՝ ՀՀ ՀԲԿՓ
ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 386, թերթ 33 (հմմտ. ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261,
ցուցակ 10, գործ 388, թերթ 35):

² ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 388, թերթ 35, ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ
261, ցուցակ 10, գործ 238, թերթ 4, կետ «դ», ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ց.
10, գործ 79, թերթ 9, ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 81, թերթ 1, ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ,
ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 91, թերթ 21, 26, 44, 47, ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261,
ցուցակ 10, գործ 92, թերթ 24, ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 128, թերթ 1-32 և
այլն:

³ Խորհրդային Հայաստանի գյուղերի նոր անունները (Մշակ, օրաթերթ, 1928,
ապրիլի 12, թիվ 30 (620), 4-րդ էջ):

ցիալ-տնտեսական և այլ ասպարեզներում Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում (ՀԽՍՀ) տեղի ունեցող ամեն մի փոփոխություն փուլ առ փուլ իր արտացոլումն է գտնում նաև լեռների ու ձորերի արանքում ծվարած Ձորագյուղում:

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը քաղաքական ասպարեզ գալուց անմիջապես հետո իր առաջնահերթ խնդիրը համարեց իշխանության ձևավորումը, բարձրագույն ու տեղական մարմինների ստեղծումը: Բարձրագույն իշխանությունը Ռազմահեղափոխական կոմիտեն էր (ՌՀԿ), որը կազմավորվել էր Բաքվում և 1920 թ. նոյեմբերի 29-ին Ղազախից մտել Իջևան: Ռազմհեղկոմի անդամները Իջևանից Երևան ժամանեցին դեկտեմբերի 6-ին: Մինչ այդ, սկսած դեկտեմբերի 2-ից, Հայաստանում կառավարում էր Դրոյի և Միլինի իշխանությունը, որը այդ օրը բոլշևիկների հետ համաձայնվել էր խաղաղ ձևով իր տեղը զիջել Ռազմհեղկոմին, միայն թե ձախ դաշնակցականներին տեղ տրվեր իշխանության մեջ: 4 օր կառավարելուց հետո այդ իշխանությունը տեղը զիջեց Ռազմհեղկոմին: Նրա կազմում էին Սարգիս Կասյանը (նախագահ), Ալեքսանդր Բեկզադյանը, Իսահակ Դովլաթյանը, Ասքանազ Մռավյանը, Սահակ Տեր-Գաբրիելյանը և Ավիս Նորիջանյանը՝ բոլորն էլ կոմունիստներ: Խախտվեց դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը, և ձախ դաշնակցականներից ոչ մեկը տեղ չգրավեց իշխանությունում: Փաստորեն Հայաստանում հաստատվեց Կոմունիստական կուսակցության մենիշխանությունը:

Ռազմհեղկոմին զուգահեռ գործում էր Հայաստանի Կոմունիստական բոլշևիկյան կուսակցության (ՀԿ(բ)Կ) Կենտրոնական կոմիտեն (Կենտկոմը): Այդ կուսակցությունը Հայաստանում ձևավորվել էր 1920 թ. սկզբին:

Կոմունիստական կուսակցությունն էր ղեկավարում 1920 թ. մայիսյան ապստամբությունը: Սակայն ապստամբության պարտությունից հետո Հայաստանի այն ժամանակվա կառավարության հրամանով դադարեցվեց այդ կուսակցության գործունեությունը: Այն միայն գործում էր ընդհատակյա պայմաններում: 1920 թ. նոյեմբերի 29-ի հեղափոխությունից հետո Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը վերելք ապրեց: Նրա գլխավոր օրգանն էր Կենտկոմը:

Հեղկոմներն իշխանության ժամանակավոր և նշանակովի մարմիններն էին, որոնք գործելու էին մինչև ՀԽՍՀ Սահմանադրության ընդունումը: Նրանց նպատակն էր ամրապնդել խորհրդային իշխանությունը, կառավարել երկիրը և նախապատրաստել խորհուրդների ընտրությունները:

Նոր ստեղծված սոցիալիստական հանրապետությունը ստիպված իր ներսում գործողության մեջ դրեց Սոցիալիստական Ռուսաստանի օրենքները: Ուժը կորցրեց Հայաստանի անկախ հանրապետության ընդունած ցարական Ռուսաստանի օրենքների ժողովածուն (Ռուսական կայսրության «Հավաք օրինացը»): Ստեղծվեցին գործադիր իշխանության մարմիններ: Հանրապետական գործադիր իշխանության մարմինները ժողովրդական կո-

միասնիստներն էին: Դրանք փոխարինում էին նախկին մինիստրություններին: Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը դիտվում էր բարձրագույն վարչական մարմին: Նրա միջոցով Ռազմհեղկոմը իրականացնում էր երկրի կառավարումը: Վերացվեցին նախկին նահանգներն ու շրջանները: Հայաստանը վարչական տեսակետից բաժանվեց գավառների, իսկ գավառները՝ գավառակների կամ գավառամասերի (շրջանների): Գավառները սկզբում 8-ն էին՝ Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի, Լոռու, Իջևանի, Նոր-Բայազետի և Գարալագյազի: 1923 թ. Ղարաքիլիսայի և Լոռու գավառները միավորվեցին և կազմեցին Լոռի-Փամբակի գավառ: Չամբեգուրը, որ Գարեգին Նժդեհը հերոսաբար պաշտպանում էր բուրքական ցեղերից, 1921 թ. վերջնականապես Հայաստանին միավորվելուց հետո, վերածվեց 2 գավառների՝ Չամբեգուրի գավառի և Մեղրու գավառի:

Կառավարման մարմինների մեջ հատուկ նշանակություն ունեւ Արտակարգ հանձնաժողովը (Չեկա), որը կոչված էր «Մաքառելու հակահեղափոխական, շահադիտության (սպեկուլյացիայի) և պաշտոնի չարաշահման հետ կապված հանցագործության դեմ»:

Հայաստանի Ռազմհեղկոմը, ՀԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեն, գործադիր իշխանության մարմինները կամ ժողովրդական կոմիսարիատները, ինչպես նաև Արտակարգ հանձնաժողովը (չեկա) իրենց համապատասխան օրգաններն ունեին գավառներում, գավառակներում կամ գավառամասերում (շրջաններում), ինչպես նաև գյուղերում, որոնք համապատասխանաբար գավառներում կոչվում էին գավիեղկոմ, ՀԿ(բ)Կ գավկոմ, գավգործկոմ, Գավքաղբյուր (Չեկա), շրջաններում՝ շրջիեղկոմ, ՀԿ(բ)Կ շրջկոմ, շրջգործկոմ, Շրջքաղբյուր (Չեկա), իսկ գյուղերում՝ գյուղիեղկոմ, գյուղական կոմբջիջ, գյուղմիլիցիա, որը կատարում էր ներքին գործերի ժողկոմատի և Արտակարգ հանձնաժողովի (Չեկա) գյուղական միջավայրի հետ կապված ֆունկցիաները, որին հետագայում փոխարինեց շրջանի դատախազին օգնող հանձնաժողովը:

Ձորագյուղը մտնում էր Նոր-Բայազետի գավառի Մարտունու գավառակի կամ շրջանի կազմում: Նոյեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո Ձորագյուղում կազմվում են գյուղական իշխանության տեղական մարմիններ: Իշխանության տեղական այդ մարմիններն են Ձորագյուղի հեղափոխական կոմիտեն (հեղկոմը), Կոմունիստական կուսակցության կազմակերպությունը կամ կոմբջիջը, միլիցիայի ապարատը:

1922 թ. խորհուրդների ընտրություններից հետո Ձորագյուղում կազմավորվում է նաև գյուղական խորհուրդը: Հետագայում առաջանում են իշխանության տեղական նոր մարմիններ՝ շրջանի դատախազին օգնող հանձնաժողովը, գյուղական դատարանը կամ դատական սեկցիան (այդ 2-ը փոխարինում են գյուղմիլիցիային), հեղկոմը, բատրակկոմը, փոխօգկոմը, տեղկոմը և այլն:

Չորագյուղի Կոմունիստական կուսակցության կազմակերպության կամ կոմբջիջի մասին մեծ քանակությամբ վավերագրեր են պահպանվել, որոնք պարունակում են հարուստ փաստական նյութ: Այդ վավերագրերից մեկը վերաբերում է կուսակցության 1921 թ. ղեկտեմբերին կայացած գումանր: Վավերագրում տեղեկություն է հայտնվում, որ Չորագյուղի Կոմունիստական կուսակցության կազմակերպությունը կամ կոմբջիջը ստեղծվել է 1920 թ. ղեկտեմբերին, որի կազմում կային 26 հոգի:⁴ 1921 թ. փետրվարյան ապստամբության ժամանակ կոմբջիջը անկում է ապրում և շատերը հեռանում են նրանից, որոնց անունները չեն պահպանվել: Պահպանվել են բջիջի կազմում մնացած հետևյալ 7 հոգու⁵ անունները՝

1) Ավետիսյան Գրիգոր, 2) Կիրակոսյան Խաչատուր, 3) Գրիգորյան Արզուման, 4) Մողմունյան Մանուկ, 5) Գրիգորյան Արշակ, 6) Մուրադյան Պետրոս, 7) Մելոյան Եգոր:

Հակառակ կոմբջիջին, Չորագյուղի հեղկոմի մասին ընդամենը երկու վավերագրերում են պահպանվել տեղեկություններ և այն էլ շատ սեղմ: Դրանցից մեկը⁶ վերաբերում է կուսակցության 1921 թ. ղեկտեմբերյան գումանր: Այդ վավերագրում ընդհանուր բնութագրեր են տրվում հեղկոմի կազմում գտնվող մարդկանց մասին: Վավերագրում ընդգծվում է, որ Չորագյուղի հեղկոմի քարտուղարն է եղել Ռուշան Մանուկյանը, իսկ հեղկոմի անդամներից է եղել Վասակ Մովսիսյանը: Նրանք երկուսն էլ եղել են կոմունիստներ: Թեև սեղմ, բայց, այնուամենայնիվ, այդ փաստերից կարելի է ենթադրել, որ Չորագյուղի հեղկոմը նույնպես կազմված է եղել կոմունիստներից, ինչպես Խորհրդային Հայաստանի հանրապետական հեղկոմը: Չորագյուղի հեղկոմի աշխատանքները գլխավորել է քարտուղարը: Այդ հեղկոմը ունեցել է իր անդամները:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Չորագյուղի կոմբջիջը ստեղծվել է 1920 թ. ղեկտեմբերից, կարելի է ենթադրել, որ այնտեղ հեղկոմն էլ ստեղծվել է նույն ժամանակում, նամանավանդ որ այդ ժամանակ հեղկոմն է եղել հիմնական կառավարող օրգանը, հատկապես խորհրդային իշխանության ամրապնդող տեղերում մինչև խորհուրդների ընտրությունները և սահմանադրության ընդունումը:

Չորագյուղում ստեղծված միլիցիայի ապարատի մասին տեղեկություն է պահպանել 1921 թ. հոկտեմբերի 7-ին գրված վավերագիրը:⁷ Ըստ նրա հարողոված տեղեկության, Չորագյուղի միլիցիայի անդամներից են եղել Կնյակ Ավետիսյանը և Բեգո Դավթյանը:

Վավերագրերի տվյալներից հասկանալի է, որ Չորագյուղի իշխանության բոլոր տեղական մարմինները ինչպես 1921 թ., այնպես էլ հետագա ժա-

մանակաշրջանում հաշվետու են եղել կոմբջիջին: Այս փաստը ցույց է տալիս, որ Կոմունիստական կուսակցությունը սկսած դեռ 1921 թվականից, գուցե նաև 1920 թվականի ղեկտեմբերից, երբ կազմավորվել է այն, իշխող դիրք է ձեռք բերել Չորագյուղի իշխանության բոլոր տեղական մարմինների նկատմամբ:

Իր պետական ապարատը ստեղծելուց հետո, Հայաստանի նոր հանրապետությունը ձեռնամուխ եղավ կիրառել այն միջոցառումները, որոնցով պիտի ամրապնդվեին սոցիալիստական կարգերը երկրում, ինչպես դրանք կիրառվել են Սոցիալիստական Ռուսաստանում: Այդ միջոցառումներից են՝ ռազմական կոմունիզմը և նեպ-ը: Որպեսզի այդ միջոցառումները խաչքնդոտների չհանդիպեն, Հայաստանի նոր կառավարությունը որոշում է արտաքսել նախկին կառավարության ղեկավարներին և սպաներին:

Բոլշևիկները անտեսելով 1920 թ. ղեկտեմբերի 2-ի համաձայնագրի մյուս կետերը և գործի դնելով Արտակարգ հանձնաժողովը (Չեկա), 1920 թ. ղեկտեմբերից զանգվածային ու դաժան բռնությունների դիմեցին Հայաստանի ազատ, անկախ հանրապետության ղեկավարների, այդ հանրապետության պառլամենտի անդամների, Հ. Յ. Գաշակցության և այլ սոցիալիստական կուսակցությունների ղեկավար գործիչների, ինչպես նաև բանակի սպաների նկատմամբ: Իհարկե, այդ ժամանակ հիշյալ հարցի նկատմամբ տարակարծություն գոյություն ուներ Հեղկոմի և ՀԿ(Բ)Կ Կենտկոմի մեծամասնությունների ու փոքրամասնությունների միջև: Ավագ հայ գործիչները կողմնակից էին մեղմ վերաբերմունքի: Դրանք էին՝ Ս. Կասյանը, Ա. Մռավյանը և ուրիշներ: Խիստ վերաբերմունք էին պաշտպանում երիտասարդները՝ Գևորգ Ալիխանյանը (ՀԿ(Բ)Կ Կենտկոմի քարտուղար), Ավիս Նուրիջանյանը (զինվորական գործերի ժողովրդական կոմիսար), Գևորգ Աբարբեկյանը, որն աշխատելով Ռուսաստանի Արտակարգ հանձնաժողովի (Չեկա) մարմիններում, ուներ բռնություններ գործադրելու «մեծ» փորձ և ուրիշները: Այս տարածայնությունները, այնուամենայնիվ, չխանգարեցին լայնորեն դիմելու բռնությունների:

Ձերբակալվեցին ու բանտ նետվեցին Հայաստանի ազատ, անկախ հանրապետության ղեկավարները՝ Համազասպ Օհանջանյանը (նախարարապետ), Հովհաննես Քաջազունին (մինիստր-նախագահ), Բախչի Իշխանյանը, Ռուբեն Չիլինգարյանը, Նիկոլ Աղբալյանը, Լևոն Շանթը: Պաշտոնից ազատվեց Հայաստանի կարմիր բանակի հրամանատար Դրոն (Դրաստամատ Կանայանը), որը փոխադրվեց Մոսկվա, սպա հեռացավ արտասահման: Դրոնի հեռացումը հեշտացրեց բանակի սպաների նկատմամբ անվտանգության խորացումը և բռնությունների գործադրումը: Արտակարգ հանձնաժողովը (Չեկա), որը բանակում կոչվում էր հատուկ բաժին, 1920 թ. ղեկտեմբերին և 1922 թ. հունվարին ձերբակալեց Հայաստանի ազատ, անկախ հանրապետության գրեթե բոլոր ծառայող ու չծառայող սպաներին, որոնք անձնվիրաբար ծառայել ու ծառայում էին հայ ժողովրդին: Կո-

⁴ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 8, թերթ 30:

⁵ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 3, թերթ 51-52:

⁶ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 3, թերթ 51-52:

⁷ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 35, թերթ 1-7:

մունիստները կողմ էին միայն բանվորագյուղացիական դասակարգի բանակին: 1920 թ. դեկտեմբերին և 1921 թ. հունվարին հայկական նախկին բանակի շուրջ 1400 սպաներ արտաքսվեցին Հայաստանից և փակվեցին Բաքվի բանտերում և Ռուսաստանի Ռյազան քաղաքի ու այլ վայրերի համակենտրոնացման ճամբարներում: Երևանից մինչև Ադստաֆա 170 կիլոմետր ճամայարի սպաներն անցան ոտքով՝ ձմեռային սառնամանիքի պայմաններում: Նրանց թվում էին գեներալներ Թովմաս Նազարբեկովը, Մովսես Սյրիկյանը, Ա. Հովսեփյանը: Իսկ գեներալ Պողոս Բեկ-Փիրումյանը, զգալով վրա հասնող այդ ծանր նվաստացումը, հունվարի 19-ին Երևանում ինքնասպանությամբ վերջ տվեց կյանքին: Հայ սպաների այդ աքսորին գործում մասնակցություն է ցույց տալիս Գևորգ Աթաբեկյանը, որը 1921 թ. հունվարի 14-ին Մոսկվայից Հայաստան էր ժամանել որպես Համառուսաստանյան Արտակարգ հանձնաժողովի (Չեկա) ներկայացուցիչ: Հայաստանի բանակում գործի անցան ռուս սպաները: Բանակի հրամանատար դարձավ Վ. Մ. Մոլոչանովը: Ռ.Կ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն, չբավարարվելով այդ բռնություններով, 1921 թ. փետրվարի 1-ին Հայաստանի Հեղկոմի նախագահ Ս. Կասյանից պահանջում էր պայքար կազմակերպել Հ.Յ. Դաշնակցությունը որպես կուսակցություն վերացնելու ուղղությամբ, մեկուսացնել, այսինքն՝ ձերբակալել նրա կազմակերպությունների ղեկավարներին, ինչպես նաև նախկին արտակարգ դատարանի անդամներին: Այս փաստերը ցույց տվեցին, որ Հայաստանում հաստատվել էր բռնապետությունը:

1918-1920 թթ. քաղաքացիական կռիվների ժամանակ Ռուսաստանում գործադրվել էր ռազմական կոմունիզմի քաղաքականությունը: Սակայն Ռուսաստանում նրա վերացման պահին հայ կոմունիստները այն ներմուծեցին Հայաստան: Ռազմական Կոմունիզմը տնտեսական միջոցառում էր, որը ձգտում էր քաղաքի և գյուղի միջև ապրանքափոխանակության միջոցով ստեղծել կոմունիստական սկզբունքներ արտադրության և բաշխման բնագավառում: Բայց այն վերածվեց գյուղացիության ունեցվածքի բախանի: Ռազմական կոմունիզմի միջոցառումների մեջ կենտրոնականը պարեն մասնատրումն էր, հացի ու այլ մթերքների բռնագրավումը: Ռազմական կոմունիզմը Հայաստանում սկսվեց 1920 թվականի դեկտեմբերի 10-ից: Հ.Կ(բ)Կ Կենտկոմը այդ օրը հանդես եկավ հայ ժողովրդին ուղղված դիմումով, որի մեջ ասվում էր, որ Հայաստանին օգնության եկած կարմիր բանակի զորամասերը և հայկական զորքը կերակրելու համար կուլակներին ու հարուստներից պահանջվում է հացահատիկի կամավոր հանձնում պետությանը: Այդ պահանջը իրականից ընդգրկում էր Հայաստանի բոլոր գյուղերն ու բոլոր գյուղացիներին: Սակայն հացից բացի բռնագրավում էին նաև գրեթե ամեն ինչ՝ մատուռ անասուններ, տներ ու բնակարաններ, բանկարժեք իրեր, դրամ, կոշիկ, հագուստ, գրականություն, թուղթ, այն ամենը, ինչ կցանկանային բռնագրավողները: Բանտարկվում էին դիմադրություն ցույց տվողները:

Մատնանշված բռնությունները և ահաբեկչական մեթոդները խիստ ուժեղացրին դժգոհությունը բնակչության լայն խավերի մեջ, որոնք 1921 թ. փետրվարին տարերայնորեն զինված պայքարի ելան բուշխկյան իշխանության դեմ:

Այն սկսվեց 1921 թ. փետրվարի 16-ին և տևեց մինչև ապրիլի 2-ը: Նրա օջախներն էին Կոտայքը, Բաշ-Գյառնին (Գառնի), Դարալագյազը (Եղեգնաձոր), Բաշ-Ապարանը (Ապարան) և այլ շրջաններ: Իշխանությունից հեռացնելով հեղկոմներին, ապստամբները երկու օրվա ընթացքում՝ փետրվարի 16-18-ը իրենց ազդեցությունը տարածեցին Հայաստանի կենտրոնական մասի վրա և շրջապատեցին Երևանը: Փետրվարի 18-ին ապստամբները գրավեցին Երևանը: Ստեղծվեց հայրենիքի փրկության կոմիտե Սիմոն Կրացյանի նախագահությամբ: Հրաման տրվեց ձերբակալել բոլոր կոմունիստներին: Հայաստանի Ռազմազորները, Հ.Կ(բ)Կ Կենտկոմը երկու գրահագնացքներով հեռացան մայրաքաղաքից և կենտրոնացան Գամաղու (Արտաշատ)-Վեդի Բասար (Արարատ) շրջանում՝ քիկուկում ունենալով Խորհրդային Նախիջևանը: Խորհրդային իշխանությունը կանգուն մնաց հիմնականում Հայաստանի հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջաններում՝ Համամլու (Սպիտակ) - Դարաքիլիսա - Դիլիջան - Շամշադին (Տավուշ): Դարաքիլիսա-Դիլիջանը դարձավ կառավարման կենտրոն, որի Ռազմազորությունները մղվում էին 3 ճակատով՝ 1) Գամաղու-Վեդի Բասար, 2) Ելենովկա (Մևան), 3) Համամլու (Սպիտակ): Սկզբում կռիվները ընթանում էին փոփոխակի հաջողություններով: Սակայն մարտի կեսերին, խորհրդային ուժերը դրսից ստանալով համալրումներ, առաջ անցան: Համամլու-Դարաքիլիսա-Դիլիջան գտնվող զորքերի մի մասի գլուխն անցած Գևորգ Աթաբեկյանը, Բաքվից ժամանած կոմունիստական ջոկատի հետ, շարժվեց դեպի Նոր-Բայազետի գավառը և համառ մարտերից հետո մարտի 16-ին գրավեց այն՝ ծունկի բերելով այդ գավառի Դուլալի (Կարմիր) և Երանոս գյուղերում կուտակված ապստամբներին: Այնուհետև Գևորգ Աթաբեկյանի ուժերը Ելենովկա (Մևան) - Ներքին Ախտա և Համամլու (Սպիտակ) - Բաշ Ապարան ուղղություններով շարժվում են դեպի Երևան: Ապրիլի 2-ին կարմիրների մտնում են Երևան: Ապստամբները, զոհերից խուսափելու պատճառով, դիմադրություն ցույց չեն տալիս և Բաշ-Գյառնիով նահանջում են դեպի Դարալագյազ (Եղեգնաձոր) - Չանգեզուր, որոնք գտնվում էին Գարեգին Նժդեհի ազդեցության տակ: Ապստամբները նահանջելիս իրենց հետ տանում են ձերբակալված կոմունիստներին ու կարմիր բանակայիններին, որոնցից շատերին զնդակահարում են Գնդեվագում ու Տաթևում՝ իբրև բուշխկյան գործած տեղորի պատասխան: Այդ ժամանակ Խորհրդային Հայաստանի սահմանների մեջ չէին Դարալագյազն ու Չանգեզուրը, Լեռնային Դարաբաղն ու Նախիջևանը (նրանցից ամեն մեկը անկախ էր հռչակել իրեն), իսկ թուրքերն էլ դեռ չէին հեռացել Ալեքսանդրապոլից:

1921 թ. փետրվարին սկսված ապստամբության շուրջ ծավալված կռիվներից հետո չմնաց Չորագյուղը:

Վավերագրերը տեղեկացնում են, որ 1921 թ. մարտի 16-ին Նոր-Բայազետի գավառի Մարտունու շրջանի Երանոս գյուղում, ինչպես նաև Ելենովկայում (Սևան) ծավալված թե՛ մարտերին թե՛ ապստամբների և թե՛ կարմիր բանակայինների կողմից մասնակցել են ձորագյուղիցները: Ըստ այդ վավերագրերի՝ ապստամբների կողմից Երանոսի կովին մասնակցել են Կնյազ Խղաթյանը, Պողոս Խղաթյանը⁸, Չոհրաբ Մինասյանը⁹, Կարապետ Մանուկյանը¹⁰, որոնցից Կնյազ Խղաթյանը սպանվել է այդ կռիվներում կոմունիստների կողմից: Վավերագրերը տեղեկացնում են, որ մարտի կեսերին Ելենովկայում (Սևան) տեղի ունեցող մարտերին կարմիր բանակայինների շարքերում ապստամբների դեմ կռիվներ են մղել Վասակ Մովսիսյանը¹¹, կոմունիստ Մանուկ Սողոմոնյանը¹²: Վավերագրերը հաղորդում են նաև այնպիսի տեղեկություններ, որ ապրիլի 2-ին, երբ ապստամբները Երևանը թողնելուց հետո նահանջում են Դարալագյազ-Չանգեզուր, նրանց կողմից ձերբակալված կոմունիստների ու կարմիր բանակայինների մեջ են եղել ձորագյուղիցներ Ռուշան Մանուկյանն¹³ և կոմունիստ Գրիգոր Ավետիսյանը¹⁴, որոնց տարել են Չանգեզուր, բանտարկել ու տանջանքների ենթարկել Ղափանի բանտում:

Օգտվելով այն հանգամանքից, որ 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին Հայաստանի իշխանությունը ճգնաժամի մեջ էր, Թուրքիան ու Ռուսաստանը մարտի 16-ին, առանց Հայաստանի մասնակցության, Մոսկվայում պայմանագիր են կնքում, ըստ որի, Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանն անցնելու է Արփաչայ (Ախուրյան) և Արաքս գետի հունով սահմանի նրա կողմում թողնելով Կարսի մարզը, որը 1877-1878 թթ. պատերազմի ժամանակ ազատագրվել էր և այդ պատերազմից հետո միացել Հայաստանին, ինչպես նաև Սուրմալուի գավառը, որը ընդհանրապես Թուրքիայի կազմում չէր եղել: Վերջինս Թուրքիային անցնում է Բաթումը՝ Վրաստանին հանձնելու փոխարեն: Նախիջևանի մարզը, որ 1827-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո ազատագրվել էր Պարսկաստանից և Երևանի խանությանը միանալով կազմել էր Հայկական մարզ կամ Հայոց աշխարհ, խլվում է Հայաստանից, դառնում ինքնավար տարածք Ադրբեջանի խնամակալության տակ, պայմանով, որ այդ խնամակա-

լությունը չզիջվի մի երրորդ պետության, այսինքն՝ Հայաստանին: Այս նույն պայմանագիրը 1921 թ. հոկտեմբերի 13-ին վերահաստատվում է Կարսում, որի տակ մեծ ճնշման առկայության պայմաններում ստորագրում է Հայաստանի կառավարական պատվիրակությունը՝ Ասքանազ Մոավյանի նախագահությամբ և Պողոս Մակինցյանի անդամակցությամբ: Թուրքիան, հասնելով իր երազած նպատակին, իր գորքերը հանում է Ալեքսանդրապոլից:

1921 թ. հունիսի 6-ին Գարեգին Նժդեհը իր պաշտպանած Չանգեզուրը հանձնում է Խորհրդային Հայաստանին: 1921 թվականի հուլիսի 5-ին Ռ-Կ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն Ի. Ստալինի միահեծանությամբ՝ առանց բյուրոյի անդամների քվեարկության, Լեռնային Ղարաբաղը հանձնում է Ադրբեջանին, հաշվի չառնելով նրա բնակիչների կարծիքը, որոնք գրեթե ամբողջովին հայեր էին: 1921 թ. նոյեմբերի 6-ին Լոռին, որը դեռևս 1919 թ. սկզբից Հայաստանի և Վրաստանի արանքում չեզոք գտառ էր վերածվել, միացվում է Խորհրդային Հայաստանին: Բերված փաստերը ցույց են տալիս, որ ոչ միայն իրականություն չդարձան առաջին աշխարհամարտից առաջ Անտանտի երկրների կողմից արևմտահայությանը յոթ վիլայեթներ հատկացնելու կամ Մկրի պայմանագրի երկրների կողմից չորս վիլայեթներ հատկացնելու որոշումները, այլև արևելահայությունից էլ հսկայական տարածքներ բռնակցվեցին Թուրքիային ու Ադրբեջանին: Դեռ ավելին, որ արևմտահայությունը ենթարկվեց ցեղասպանության՝ կորցնելով մեկ ու կես միլիոն մարդ, իսկ կենդանի մնացածներն էլ դուրս քշվեցին իրենց հայրենի բնօրրաններից ու ցրվեցին աշխարհով մեկ: Հայ ժողովրդին իր 300.000 քառակուսի կմ տարածքից բաժին մնաց 30.000 քառակուսի կմ-ից էլ պակաս տարածք, այսինքն՝ իր ամբողջ տարածքի շուրջ 10 %-ը: Այդ փոքրիկ տարածքի վրա էլ հայ ժողովուրդը փորձում է կառուցել սոցիալիզմ՝ հաղթահարելով ռազմական կոմունիզմի ու նեւ-ի թելադրած դժվարությունները:

1921 թ. փետրվար-մարտ ամիսներին տեղի ունեցած ապստամբությունը ճնշելուց հետո, Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը ձեռնամուխ եղավ տնտեսական շինարարության գործին: Հայաստանում ռազմական կոմունիզմը, որպես տնտեսական քաղաքականություն, ինչպես ցույց տվեց վերոհիշյալ ապստամբության ատաջացումը, չարդարացրեց իրեն և ավարտվեց պարտությամբ: 1921 թվականի ապրիլից Սոցիալիստական Հայաստանը անցավ • նոր տնտեսական քաղաքականության (նեւ), որին հենց այդ ժամանակ անցել էր Ռուսաստանը: Ի տարբերություն ռազմական կոմունիզմի, որի հիմքում ընկած էր պարենմասնատրումը, նոր տնտեսական քաղաքականության (նեւ) հիմքում ընկած էր պարենհարկը, որը գյուղացուն հնարավորություն էր տալիս շուկայական հարաբերությունների և զգների ազատության միջոցով զարգացնել տնտեսությունը: 1921թ. Հայաստանում ընդունվեց

⁸ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 15, թերթ 56-61:

⁹ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 3, թերթ 19, ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 224, թերթ 4:

¹⁰ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 11, թերթ 21:

¹¹ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 224, թերթ 12:

¹² ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 224, թերթ 4:

¹³ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 224, թերթ 12:

¹⁴ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 224, թերթ 23:

պարենհարկի մասին ղեկընտ: Սկզբում գյուղում հարկը բնամթերային էր, իսկ 1924 թվին՝ դրամական, որը կոչվում էր գյուղատնտեսական միասնական հարկ: Չքաղոր գյուղացիները ազատվում էին հարկից: Նւէյ-ը առաջ մղելու համար հարկավոր էր գյուղացու խողային հարցի լուծումը: Հայաստանում կալվածատիրական հողատիրության ճեղք շատ փոքր ծավալ է ունեցել, որի գգալի մասն էլ պետականացվել էր ազատ, անկախ Հայաստանի կողմից: 1920 թ. ղեկտեմբերի 28-ին Սոցիալիստական Հայաստանի կողմից ընդունված ղեկընտը, որով բռնագրավվեցին կալվածատիրական ու վանքապատական հողերը, քիչ բան ավելացրեց գյուղացու ունեցածին: Հողային հարցը լուծելու համար Հայաստանը ձեռնամուխ եղավ հողի ազգայնացմանը և հողաշինարարության անցկացմանը: Ազգայնացվեց 1,5 միլիոն հեկտար գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողատարածք (վարելահող, արոտավայր և խտհարք), մնացածը թույլ հողեր էին (հիմնականում արոտավայրեր), որոնք դարձյալ պատկանում էին պետությանը և վարձակալությամբ տրվում էին գյուղացիներին (նաև Աղբբեջանի քոչվորներին) օգտագործելու: Հողաշինարարության միջոցով լուծվեց երկու հարց՝ 1) վերացվեց հողի անհավասար բաշխումը գյուղերի միջև, 2) անցկացվեց հողի վերաբաժանություն գյուղական համայնքների ներսում, որով հողաբաժիններ հատկացվեցին ծխերին (ըստ շնչերի) և վերացավ հողագրությունը: Հողը գյուղացիներին տրվեց անհատույց, պարբերական վերաբաժանման իրավունքով՝ համաձայն 1924 թ. ընդունված ՀԽՍՀ հողային օրենսգրքի: Նւէյ-ի հողային օրենսդրության հիմքում ընկած էր «սոցիալիզացիայի» ծրագիրը: Այն ժամանակավոր միջոցառում էր մինչև գյուղացին կհանդգնեց անհատական տնտեսավարության անշահավետության մեջ և կգիտակցեր, որ անհրաժեշտ է անցնել խոշոր, սոցիալիստական տնտեսություններին:

Սոցիալիզմ կառուցելու նպատակով ՆԷՊ-ի տարիներին ստեղծվում են գյուղատնտեսական, վարկային, արհեստագործական կոոպերացիաներ: 1924 թ. կազմակերպվեց Հայաստանի գյուղատնտեսական կոոպերատիվների միությունը (Հայգյուղկոոպ):

Նւէյ-ի շնորհիվ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ավարտվեց գյուղատնտեսության վերականգնումը: 1928 թ. այն հասավ նախապատերազմյան (1913 թ.) մակարդակին, իսկ խոշոր ու մանր եղջերավոր անասունների գլխաքանակով նույնիսկ գգալիորեն առաջ անցավ: Վերացվեց սովը, նվազեց ջրավորության թիվը, աճեցին ժողովրդի միջին և ունևոր շերտերը, բարելավվում էր նրանց ապրուստը: Նւէյ-ը տևեց մինչև 1927 թ.: 1928 թ. սկսվեց անցում կոլեկտիվ տնտեսությանը, այն համարելով գյուղում սոցիալիզմի գարգացման միակ ճանապարհը:

1921 թ. նոյեմբերին հեղկոմները վերանվանվում են ժողովրդական կոմիսարների խորհուրդ: Հենց այս որոշմամբ էլ 1921 թ. նոյեմբերին կազմվեց ընտրությունները կազմակերպող և անցկացնող կենտրոնական

հանձնաժողով: 1921 թ. ղեկտեմբերին կայացան ընտրությունները: Ընտրվեցին գյուղական, շրջանային և գավառային խորհուրդներ: Նրանցում ընտրվեցին հիմնականում կոմունիստները: Այլ կուսակցությունների անդամներին վարկաբեկում էին, գրկում ձայնի իրավունքից, համարում մարդկանց շահագործողներ:

1922 թ. հունվար-փետրվար ամիսներին հրավիրվեց Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորների 1-ին համագումարը, որի խնդիրն էր ՀԽՍՀ Սահմանադրության, այսինքն՝ հիմնական օրենքի ընդունումը: Համագումարին մասնակցող 252 պատգամավորների մոտ կեսը կոմունիստական կուսակցության անդամ-քեկնածուներ էին: Այլ կուսակցությունները իշխանության մարմիններում տեղ չունեին: Անտեսվում է սահմանադրությամբ ընդունված ժողովրդավարությունը: Սահմանադրությունը արձանագրում է, թե Հայաստանը 1920 թ. նոյեմբերի 29-ին ապստամբ բանվորների ու աշխատավոր գյուղացիների կամքով հռչակվել է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն: Հայաստանի բանվորների և աշխատավորների իշխանության կամ դիկտատուրայի կոչումն է՝ վերջ տալ կապիտալիստական կարգերին և իրականացնել սոցիալիզմը, վերացնել մարդու աշխատանքի ամեն մի շահագործումը: Հայաստանի բարձրագույն իշխանությունը պատգամավորական խորհուրդների համագումարն էր, որի պատգամավորներն ընտրվում էին գավառային համագումարների կողմից: Գյուղում դրան համապատասխանում էր պատգամավորների խորհուրդը: Բարձրագույն գործադիր իշխանությունը իրականացնում էր ժողովրդական կոմիսարների խորհուրդը, տեղերում՝ խորհուրդների գործադիր կոմիտեն: Ընտրությունները բազմաստիճան էին, անողրակի և անհավասար: Դրա իրավունքից գրկվում էին մարդու շահագործողները, անաշխատ եկամտտով ապրողները, մասնավոր առևտրականները, կրոնավորներն ու նրանց սպասավորները: Ազատություն էր տրվում խոսքին ու մամուլին, ժողովներին, միտինգներին ու ցույցերին: Իրականում, սակայն, այդ ազատությունը չէր գործում: 1922 թ. սահմանադրությունը առաջինն էր հայ ժողովրդի պետականության պատմության մեջ: Թեև այդ սահմանադրությունն ուժի մեջ մնաց մինչև 1938 թ., բայց 1922 թ., երբ Հայաստանը մտավ ԽՍՀՄ-ի կազմում, նրա դրույթներն էլ չէին գործում, քանի որ Հայաստանը կորցրեց իր ինքնուրույնությունը: Սահմանադրությամբ հռչակված ժողովրդավարությանը փոխարինեց Կոմունիստական կուսակցության, ավելի ճիշտ՝ նրա վերնախավի դիկտատուրան:

1922 թ. մարտի 12-ին ստեղծվեց Անդրֆեդերացիան: Բայց այն կարճ կյանք ունեցավ, քանի որ նրա կազմի մեջ մտնող հանրապետությունները մտան 1922 թ. ղեկտեմբերի 30-ին կազմված ԽՍՀՄ-ի կազմում: ԽՍՀՄ-ի կազմավորումով էլ ազգային հարցը չլուծվեց, և ՀԽՍՀ-ն մնաց իր բուն տարածքներից բռնությամբ գրկված երկիր:

Ինչպես ռազմական կոմունիզմը, այնպես էլ նեպ-ը իրենց խոր արմատներն են ձգել նաև Չորագյուղում: Վերևում հիշատակված այն փաստը, որ 1921 թ. փետրվարին սկսված ապստամբությանը մասնակցել են նաև ձորագյուղացիները, վկայում է, որ ռազմական կոմունիզմի քաղաքականությունը, այսինքն՝ պարենմասնատրումը տարածված է եղել նաև Չորագյուղում, որից դժգոհ գյուղացիները մասնակցել են բողոքական ապստամբությանը: Եթե Չորագյուղում ռազմական կոմունիզմի քաղաքականության տարածման վերաբերյալ կոնկրետ վավերագրեր մեզ չեն հասել, և այդ քաղաքականության մասին կցկտուր տեղեկություններ ենք քաղում այլևայլ աղբյուրներից, ապա նեպ-ի տարածման վերաբերյալ վավերագրերը հսկայական քանակությամբ են կազմում: Դրանք հիմնականում Չորագյուղի կոմբջիջի նիստերի արձանագրություններն են:

Ամենից առաջ պետք է նշել, որ հիրավի 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին բռնկված ապստամբության ժամանակ անկում է ապրել Չորագյուղի կոմբջիջը, և շատ կոմունիստներ հեռացել են նրանից, բայց այդ ապստամբությունից հետո, երբ ռազմական կոմունիզմին փոխարինելու է գալիս ՆեՊ-ը, կոմբջիջը նորից ոտքի է կանգնում, և նոր մարդիկ են ընդունվում Կոմունիստական կուսակցության շարքերը:¹⁵

Դրանք են՝

1) Մանուկյան Ռուշանը, 2) Մովսիսյան Վասակը, 3) Մինասյան Ջոհրաբը, 4) Մխիթարյան Մաթենիկը, 5) Բաղդասարյան(Կիրակոսյան) Ասպատուրը (Ասատուր), 6) Մանուկյան Իսրայելը, 7) Աբրահամյան Հայկը, 8) Հովսեփյան Սարգիսը, 9) Գալստյան Հովհաննեսը:

1921 թ. դեկտեմբերին կոմբջիջի մեջ ներգրավված էին 16 հոգի (դրանցից 7-ը, ինչպես ընդգծվել է նախորդ շարադրանքում, 1920 թ. ընդունվածներից էին, իսկ 9-ը ընդունվել էին 1921 թ. ապստամբությունից հետո): Դրանք բոլորն էլ կուսակցականներ էին, անգրագետ ու կիսագրագետ գյուղացիներ: 1921 թ. Չորագյուղի կոմբջիջի քարտուղարն էր Ջոհրաբ Մինասյանը:¹⁶

Չորագյուղի¹⁷ կոմբջիջի 1921 թ. հոկտեմբերի 7-ի նիստի արձանագրությունում տեղեկություն է հայտնվում կուլակներից վերցված հողի և այն

¹⁵ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 3, թերթ 51-52:

¹⁶ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 35, թերթ 3:

¹⁷ Եթե գյուղը դպրոցի հետ կապված փաստաթղթերում սկսած 1921 թ. ապրիլի 28-ից կոչվել է Չորագյուղ հայերեն անունով, ապա կոմբջիջի արձանագրություններում այն Չորագյուղ անունով է կոչվել 1924 թ. մարտի 14-ին, երբ կարճ ժամանակով կոմբջիջի քարտուղար է ընտրվում դպրոցի վարիչ Արմենակ Խաչատրյանը, իսկ որոշ ընդհատումներից հետո վերջնականապես Չորագյուղ է կոչվել 1925 թ. հոկտեմբերի 26-ից, երբ կոմբջիջի քարտուղար էր ընտրվել դպրոցի վարիչ Գեղամ Բալասանյանը: Այս երևույթը բացատրվում է ոչ այնքան կոմբջիջի պահպանողականությամբ և ազգայնական պիտակավորումից խուսափելու ձգտմամբ, որքան գրագիտության պակասով: Այս ենթադրությունը հաստատվում է

չքավորներին բաժանելու, այդ հողի մշակման, նրա սերմացուի որակի, ստացված արդյունքների, ինչպես նաև կոմբջիջի անդամների կարգապահության, հեղկոմի ու միլիցիայի կատարած ֆունկցիաների, նրանց աշխատանքի որակի, գյուղում կազմակերպվող սոցիալիստական միջոցառումներից շաբաթօրյակների ու կարմիր անկյունի մասին: Ըստ որում, տեղեկացվում է, որ չքավորներին տրված հողը 1921 թ. լավ բերք չի տվել կուլակներից վերցված սերմացուի անորակության, աշխատող չքավորներին կարմիր բանակ գորակոչելու և հողը մշակողներ չունենալու պատճառով: Կոմբջիջում կարգապահությունը թույլ է եղել, քանի որ նրա շարքերում իրենց «կաշին» փրկելու համար խցկվել են այնպիսի մարդիկ, որոնք 1921 թ. ապստամբության ժամանակ, մասնավորապես Երանոսի կոմիտեում պայքարել են խորհրդային իշխանության դեմ և դրանից հետո էլ շարունակում են նույն վարքագիծը կուլակների ազդեցության տակ, նրանց միացած: Անհրաժեշտ է կուսակցությունը զտել այդպիսիներից: Հեղկոմը, որը կոչված է եղել գյուղում տարածելու և ամրապնդելու պետական պաշտոնական հրահանգները, թերանում է այդ հարցում: Միլիցիան նույնպես թույլ է աշխատում: Նույնիսկ հակահեղափոխական ուժերին հաջողվել է զինաթափել միլիցիոներ Կնյազ Ավետիսյանին, իսկ միլիցիոներ Բեգո Գավթյանին չի հաջողվել Խորհրդային իշխանության մասին բացատրական աշխատանք տանել ժողովրդի մեջ և նրանց դուրս բերել շաբաթօրյակի: Շաբաթօրյակները, որոնք կոչված են եղել տարածելու և ամրապնդելու սոցիալիստական հարաբերությունները գյուղում՝ օգնություն կազմակերպելու աղքատների ու չքավորների նկատմամբ, հասարակական կարգով վերանորոգելու ճանապարհները, կամուրջները, առուները և ջրատարները, ինչպես միլիցիայի աշխատողների, այնպես էլ կոմբջիջի անդամների թույլ աշխատանքի պատճառով կամ չեն գումարվել, կամ եթե գումարվել են, ապա մասնակիցների թվաքանակի պակասության պատճառով անարդյունավետ են անցել: Կարմիր անկյունը, որը կոչված է եղել քարոզելու սոցիալիստական հասարակարգի առավելությունները, թույլ է աշխատել: Այստեղ չկային սոցիալիստական կյանքի մասին պատմող գրքեր, նկարներ, որոնց հետ կարողանաին շփվել գյուղացիները, երբ ձմռան ամիսներին այցելեին կարմիր անկյուն: Գյուղում թեև ստեղծվել էր կոմունիստական երիտասարդական միություն: Գյուղում թեև այն դեռ շատ թույլ էր: Այս հարցի մասին կոմբջիջի նիստում ելույթ են ունենում Ռուշան Մանուկյանը, Վասակ Մովսիսյանը, Ջոհրաբ Մինասյանը, Սարգիս Հովսիկյանը, Հովսեփ Խղաթյանը: Եթե դրանցից առաջին երեքը կոմունիստներ էին, ապա վերջին երկուսի կուսակցական պատկանելության մասին ոչ մի տեղեկություն չի պահպանվել: Հավանաբար դրանք կամ գյուղի

նրանով, որ երբ գյուղի դպրոցի վարիչներ Արմենակ Խաչատրյանն ու Գեղամ Բալասանյանն են ընտրվում կոմբջիջի քարտուղար, կոմբջիջի արձանագրություններում գյուղը հիշատակվում է Չորագյուղ անունով:

համայնքի անդամներից էին կամ թե հեղկոմի, միլիցիայի, կոմերիսմի-
ուրյան:

Չորագյուղի կոմբջիջի 1921 թ. նոյեմբերի 29-ի նիստում քննվում է գյուղի հասարակության սոցիալական վիճակի հարցը: Նիստի արձանագրությունում ընդգծվում է, որ գյուղում կան չքավոր, աղքատ մարդիկ, որոնք տառապում են սովից, տկտրությունից: Նիստը որոշում է կոմունիստների և նրանց համախոհների միջոցներով օգնել այդ մարդկանց: Նիստում այդ հարցի մասին հատկապես խոսում է Ջոհրաք Մինասյանը:

Վավերագրերից մեկում, որը կազմվել է 1921 թ. դեկտեմբերի 1-ին, տեղեկություն է պահպանվել Չորագյուղի կոմբջիջի գտնված մասին: Չտման գործընթացին ներկա են եղել Չորագյուղի հասարակության այնպիսի անդամներ, որոնք կոմունիստներ չէին: Հանձնաժողովը հաշվի է առել նրանց կարծիքը գտնված անցկացնելիս: Չտվել են հատկապես այն կոմունիստները, ովքեր չարաշահել են իրենց պաշտոնական դիրքը, զբաղվել են կաշառակերությամբ, հարբեցողությամբ, հափշտակել են ժողովրդական ունեցվածքը, կապված են եղել հակահեղափոխական տարրերի, հատկապես կուլակների հետ: Այդ ժամանակ կուսակցությունից հեռացվում են 9 հոգի:¹⁸

Չտումից հետո կոմբջիջի կազմում մնում են հետևյալ 7 կոմունիստները:¹⁹

1) Ավետիսյան Գրիգորը,, 2) Կիրակոսյան Խաչատուրը, 3) Գրիգորյան Արզումանը, 4) Մինասյան Ջոհրաքը, 5) Մխիթարյան Սաթենիկը, 6) Սողոմոնյան Մանուկը, 7) Բաղդասարյան (Կիրակոսյան) Ասպատուրը (Ասատուրը):

Այս 7 հոգուց 4-ը անգրագետներ են եղել, իսկ 3-ը՝ կլիսագրագետներ:²⁰

Չտումից հետո Չորագյուղի կոմբջիջը նոր անցնում է խորհուրդների ընտրությանը: Նախապես նա կազմում է ընտրական հանձնաժողովի կազմ, որը բաղկացած է եղել երեք հոգուց, որոնցից մեկը եղել է նախագահ, իսկ մյուս երկուսը՝ անդամներ: Նախագահ է ընտրվում Վասակ Մովսիսյանը, իսկ անդամներ՝ Արզուման Գրիգորյանը և Ռուշան Մանուկյանը: Երև սրանցից Արզուման Գրիգորյանը գտումից հետո մնացել է որպես կոմունիստ, իսկ Վասակ Մովսիսյանը և Ռուշան Մանուկյանը գտնան ժամանակ հեռացվել են կուսակցությունից: Այս կապակցությամբ ուշագրավ է Չորագյուղի կոմբջիջի 1921 թ. նոյեմբերի 29-ին տեղի ունեցած նիստը,²¹ որը գտումից հետո քննում է Վասակ Մովսիսյանի հարցը և նրան նորից ընդունում կուսակցության շարքեր: (Չորագյուղում գտնան գործողությունները տեղի են ունեցել նոյեմբերի 29-ից առաջ): Երևի Չորագյուղի կոմբջիջը նման վերաբերմունք է հանդես բերել նաև Ռուշան Մանուկյանի նկատմամբ, թեև

¹⁸ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 3, թերթ 51-52:

¹⁹ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 83, թերթ 51-52:

²⁰ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 8, թերթ 30:

²¹ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 35, թերթ 3:

այդ կապակցությամբ չի պահպանվել որևէ փաստաթուղթ: Այս փաստը ցույց է տալիս, որ կոմբջիջը երբեմն կարող էր ինքնուրույնություն հանդես բերել և զավկոմի հանձնաժողովի գտնումից կարճ ժամանակ հետո գտված անձնավորությանը վերընդունել կուսակցության շարքեր, նրան ճանաչել կոմունիստ մինչև զավկոմի կողմից հաստատվելը: Հավանաբար այս հանգամանքն է հաշվի առել Չորագյուղի կոմբջիջը, որ Վասակ Մովսիսյանին և Ռուշան Մանուկյանին առաջադրել է խորհուրդների ընտրական հանձնաժողովի կազմում:

Մինչ ընտրությունների անցկացումը, Չորագյուղի կոմբջիջը քննարկում է գյուղում եղած ընտանիքների թվի, նրանց շնչերի քանակի, ինչպես նաև գյուղի ձայնագուրկ ընտանիքների թվի հարցերը: Կոմբջիջի 1921 թ. դեկտեմբերի 24-ի նիստի արձանագրությունում²² հիշատակվում է, որ այդ ժամանակ գյուղը ունեցել է 344 ընտանիք, որոնք ունեցել են 2224 շունչ: Գյուղի հիշյալ ընտանիքներից 100-ը մինչ այդ ճանաչվել են որպես ձայնագուրկներ, այսինքն՝ ընտրություններին չմասնակցողներ: Դրանք եղել են գյուղի կուլակները, հարուստները, հակահեղափոխական տարրերը, չքավորներին, աղքատներին, բատրակներին շահագործողները՝ իրենց տնտեսության մեջ աշխատեցնողները: Կոմբջիջը գյուղի կոմունիստներից, չքավորներից, աղքատներից, բատրակներից, միջակներից ընտրում է 25 հոգուց բաղկացած մի հանձնաժողով, որը պետք է վերջնականապես որոշի ձայնագուրկ ընտանիքների քանակը: Ահա այդ հանձնաժողովի կազմը՝

1) Խաչատրյան Միսնո, 2) Սողոմյան Մանուկ, 3) Բաղդասարյան Ասատուր, 4) Մինասյան Ջոհրաք, 5) Գրիգորյան Արզուման, 6) Ավետիսյան Գրիգոր, 7) Գրիգորյան Աղաբեկ, 8) Կիրակոսյան Խաչատուր, 9) Գեղոյան Արուս, 10) Մխիթարյան Սաթենիկ, 11) Ավետիսյան Կնյազ, 12) Ավետիսյան Արևշատ, 13) Մուրադյան Պետրոս, 14) Ասատրյան Պարսամ, 15) Հակոբյան Արշակ, 16) Մլղեյան Հովհաննես, 17) Մանուկյան Ռուշան, 18) Հակոբյան Պողոս, 19) Գրիգորյան Վարդան, 20) Ֆահրադյան Ղազար, 21) Գալստյան Բյարիմ, 22) Մինասյան Արմեն, 23) Սարդարյան Ազիզ, 24) Քալոյան Արամ, 25) Մալիանյան Սարգիս:

1921 թ. դեկտեմբերի վերջերին տեղի են ունենում Չորագյուղի տեղական խորհրդի ընտրությունները: Գյուղխորհրդի անդամ են ընտրվում կոմբջիջի բոլոր անդամները:²³ Գյուղխորհրդի նախագահ է ընտրվում կոմբջիջի նոր քարտուղար Ասատուր Բաղդասարյանը: Միևնույն անձնավորության ձեռքում այդ երկու պաշտոնները կենտրոնացնելու նպատակն էր գյուղում կուսակցական ու խորհրդային աշխատանքների զուգակցումը: Այս գործընթացը շարունակվում է հետագա ժամանակաշրջանում ու հասնում մինչև գյուղում կոլեկտիվ տնտեսության ստեղծումը, երբ կոմբջիջի քարտուղարի պաշտոնին զուգակցվում է կոլվարչության նախագահի պաշտոնը ու այդ

²² ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 35, թերթ 7:

²³ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 8, թերթ 30:

երկու պաշտոնները կենտրոնացվում են մի անձնավորության ձեռքում: Այլ ժամանակից գյուղատիրոջի նախագահի պաշտոնը առանձնանում է ու դառնում ինքնուրույն: Բիարկե, կարճ է տևում կոմբիջի քարտուղարի և կոլվարչության նախագահի պաշտոնների զուգակցումը, դրանց կենտրոնացումը միևնույն անձնավորության ձեռքում. շուտով կոլվարչության նախագահի պաշտոնն էլ առանձնանում է ու դառնում ինքնուրույն:

1922 թվականից սկսած գյուղում նոր ստեղծված գյուղական խորհուրդը հաշվետու է դառնում կոմբիջին: Կոմբիջին հաշվետու են եղել, ինչպես ընդգծվել է վերևում, գյուղի մնացած բոլոր հասարակական – քաղաքական կազմակերպությունները (կոմերիտմիությունը, գյուղական համայնքը, հողկոմը, բատրակոմը, փոխօգկոմը, տեղկոմը և այլն): Մինչև ինքնուրույն տարածքային կոմբիջ (տարածքային կուսակցական կազմակերպություն) ստեղծելը գյուղի արտադրական կոմբիջին (արտադրական կուսակցական կազմակերպությանը) հաշվետու է եղել նաև դպրոցը: Բնականաբար Չորագյուղի թե՛ գյուղական խորհրդի, թե՛ հասարակական – քաղաքական կազմակերպությունների և թե՛ դպրոցի մասին տեղեկություններ են պահպանվել կոմբիջի նիստերի արձանագրություններում:

Պահպանված վավերագրերը տեղեկացնում են, որ սկսած հատկապես 1923 թ. հունվարից Չորագյուղի կոմբիջը աշխատել է բարձրացնել իր անդամների քաղաքական գրագիտությունը:²⁴ Այդ նպատակով կոմբիջին կից ստեղծվում են խմբակներ, որոնց խմբավարներ են նշանակվում գյուղի լիկկայանի ուսուցիչներ Միխայիլ Բլեյանը և Սերոբ Բալասանյանը: Նույնիսկ նրանք համաձայնվում են ամեն օր երկուական ժամ քաղաքապետունք անցկացնել կոմունիստների հետ: Այս հարցում մեծ հետևողականություն է հանդես բերում կոմբիջը՝ հսկողության տակ վերցնելով պարապմունքներին կոմունիստների հաճախման գործը, որչափ է կայացնում կուսակցությունից հեռացնել այն կոմունիստներին, ովքեր կբացակայեն պարապմունքներից: Կոմբիջի նիստերում զեկուցումներ են կարդացվում դասակարգային պայքարի, նրանում կուսակցության ունեցած դերի²⁵, առաջին ինտերնացիոնալի և Փարիզի կոմունայի²⁶ մասին և այլն: 1923 թ. հունիսից²⁷ կոմբիջը սկսում է իր նիստերում ուսումնասիրել կոմունիստների համար ստեղծված «Քաղաքական ուսմունք» դասագիրքը, ձեռնարկը՝ Նիստերի ժամանակ այն գլուխ առ գլուխ կարդում ու բացատրում է կոմբիջի քարտուղար Ասատուր Բաղդասարյանը,²⁸ որը գրագետ անձնավորություն էր: Ուշագրավ է, որ 1923 թվականից կոմբիջի նիստերին կոմունիստներից և կոմերիտականներից բացի մասնակցում են անկուսակ-

ցական գյուղացիները, որոնք դիտվում են որպես համակրողներ: Դրանք գյուղի ոչ կոմունիստ երիտասարդներն էին, որոնք հետագայում կարող էին համարվել կուսակցության շարքերը:

Կոմբիջի նիստերի քննարկման հիմնական հարցերից է եղել կուսակցական կարգապահության հարցը՝ կապված անդամավճարներ մուծելու և ժողովներից չբացակայելու հետ: Արձանագրությունների տվյալներից հասկացվում է, որ այդ տեսակետից կոմբիջում այնքան էլ բարձր չի եղել կարգապահությունը, որի պատճառով հաճախ քննարկվել է ժամանակին անդամավճարներ չմուծողների և նիստերից բացակայողների հարցը:

1921 թ. կուսգտումից հետո մինչև 1923 թ. փետրվարը կոմբիջում ոչ միայն աճ չի եղել, այլ եղածն էլ պակասել է: Այսպես, 1921 թ. կուսգտումից հետո կոմբիջում մնացած 7 կոմունիստներից 1923 թ. Արգունան Գրիգորյանը հեռացել է, և կոմբիջում մնացել են վեց հոգի: Դրանք բոլորն էլ կուսբեկնաժուներ էին: Միայն 1923 թ. փետրվարի 5-ի նիստով դրանցից 3-ին՝ Գրիգոր Ավետիսյանին, Ասատուր Բաղդասարյանին և Մանուկ Մողմունյանին երաշխավորում են ընդունել կուսանդամ:

Վավերագրերը տեղեկացնում են, որ 1923 թ. հունվար-փետրվար ամիսներին կոմբիջի նիստերին կոմունիստներից բացի մասնակցել են շուրջ 10 կոմերիտականներ և 2-5 համակրողներ:

1923 թ. կոմբիջի նիստերում քննարկվել են նաև Չորագյուղի հողկոմի, փոխօգկոմի, 1921 թ. գտման հետևանքով կուսակցությունից հեռացվածներին նորից կուսակցության շարքեր վերընտրելու, կոմունիստների անգրագիտության վերացման, կարմիր-խրճիթ կամ խրճիթ-ընթերցարան բացելու, թերթերի բաժանորդագրության, կուսալսողներում մարդկանց սովորելու ուղարկելու և այլ հարցեր: Վավերագրերում²⁹ այս հարցի քննարկման կապակցությամբ արձանագրվել է, որ հողկոմը պետք է նախապատրաստի նոր հողաբաժանում, քանի որ գյուղում հողաբաժանություն կատարվել է տարիներ առաջ, որի շուրջ բողոքներ կան: Հողաբաժանումը ճիշտ կատարելու համար պետք է չափել գյուղի ամբողջ հողերը, այլ ոչ թե սպալվինել հողատիրոջ խրճին: Գյուղում կան չբավորներ և աղքատներ: Նրանց օգնելու համար պետք է ստեղծել փոխօգկոմ (ՓՕԿ): Փոխօգկոմի նախագահն էր կոմունիստ Գրիգոր Ավետիսյանը: Կոմբիջի մեջ մտնող կոմունիստներից 3-ը անգրագետներ են, իսկ երեքը՝ կիսագրագետներ: Պետք է գյուղի լիկկայանի ուսուցիչների ուժերով օրական 2 ժամ պարապմունք կազմակերպել նրանց համար (ժամը 4-6-ը), որպեսզի կոմբիջը դառնա գրագետ: Այդ նպատակով պետք է գործի դնել կարմիր-խրճիթ կամ խրճիթ-ընթերցարանը: Կուսակցության շարքերը վերընտրվել 1921 թ. գտման ժամանակ կուսակցությունից հեռացված Վասակ Մովսիսյանին և Ռուշան Մանուկյանին, քանի որ նրանք 1921 թ. ապստամբության

²⁴ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 224, թերթ 2:

²⁵ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 224, թերթ 1-17:

²⁶ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 224, թերթ 2:

²⁷ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 224, թերթ 6:

²⁸ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 224, թերթ 8:

²⁹ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 224, թերթ 2, 5, 8, 12, 13, 14, 15, 17:

ժամանակ հավատարիմ են եղել կոմունիստական կուսակցությանը, կռվել են ապստամբների դեմ (Վասակ Մովսիսյանը կռվել է Ելենովկայում (Մեան), իսկ Ռուշան Մանուկյանը ապստամբների կողմից բռնվել է Ջանգեզուր ու տառապել Ղափանի բանտում): Կոմբջիջը երաշխավորում է Պարսամ Ասատրյանին, որպեսզի նա սովորելու գնա Դիլիջանի նոր բացված կոմ-կուսի դպրոցում:

Վավերագրերը տեղեկացնում են, որ 1924 թվականի հունվարի 1-ին Չորագյուղում կոմերիտմիության քարտուղար է ընտրվել Սիրական Մանուկյանը:³⁰ Կուսակցական փաստաթղթերը վկայում են, որ հունվարի 18-ին Նոր-Բայազետի գավկոմի կողմից Չորագյուղի կոմբջիջի մասին կազմվում է ընտրագիր³¹, որտեղ ընդգծվում է, թե այդ կոմբջիջը կազմակերպվել է 1920 թ. դեկտեմբերին, որի կազմում կային 20 կոմունիստներ: 1921 թ. ապստամբության ժամանակ բջիջը անկում է ապրել: Այն վերջնականապես վերակազմավորվել է 1921 թ. մարտից: Բջջի անդամներից 2-ը մասնակցել են քաղաքացիական կռիվներին, իսկ 1-ը բանտարկվել է և ուղարկվել Ջանգեզուր: 1921 թ. կուսակցական գտնումից հետո բջիջի կազմում մնում են 7 հոգի, բոլորն էլ կուսթեկնածուներ, որոնցից 4-ը անգրագետ են եղել, իսկ 3-ը՝ կիսագրագետ: Չտման ժամանակ բջիջից հեռացվել են նրանք, ովքեր չարաշահել են հարբեցողությունը և կապված են եղել կուլակների հետ: Բջիջում չկան անձնավորություններ, որ կազմակերպեն ու դեկավարեն բատրակոմը:

Բջիջի բոլոր անդամները գյուղխորհրդի անդամներ են: Սերտ է բջիջի և կոմերիտմիության կապը: Բջիջը չի հանդուրժում օտար տեղացի գյուղխորհրդի նախագահի աշխատանքը Չորագյուղում: Երբ նման առաջարկություն է լինում, բջիջում առաջանում է ուժեղ խմբակցություն: Բջիջի անդամների մեջ կան դեռ իրենց դիրքը չարաշահողներ: Բջիջում դեռ շարունակում են մնալ 1921 թ. գտնան ժամանակ հեռացված կոմունիստներ և, մատնացույց անելով իրենց հեղափոխական անցյալը, իրենց ազդեցության տակ են պահում բջիջի աշխատանքները: Բջիջը առողջացնելու համար պետ է այն մաքրել հեռացված կոմունիստներից: Պետք է գյուղխորհրդի նախագահը լինի օտար տեղից: Կուսակցական կարգապահության խախտողներին հեռացնել բջիջից:

1924 թ. Նոր-Բայազետի գավկոմը լույս է ընծայում մի գրքույկ, որի մեջ վերլուծության են ենթարկվում գավառի գյուղերի կոմբջիջների աշխատանքները: Նխտերում ուշադրություն է հրավիրվում նաև Չորագյուղի կոմբջիջի վրա և ընդգծվում, թե կոմբջիջը թույլ է աշխատում, քանի որ կոմբջիջի քարտուղար Ասատուր Բաղդասարյանը, որը նաև գյուղխորհրդի նախագահի պաշտոնն է վարում, ծանրաբեռնված է աշխատանքով:³²

³⁰ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 1:

³¹ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 5:

³² Հրահանգչական նամակ բոլոր գյուղացիներին, Նոր-Բայազետ, 1924, էջ 6-7:

1924 թ. հունվարի 30-ին Չորագյուղում գյուղխորհրդի նախագահի պաշտոնն է ստանձնում օտար գյուղացի Արշակ Բաղդասարը:³³ Նա նույնպես կոմունիստ է եղել (կուսթեկնածու): Նրանով Չորագյուղի կոմբջիջի կազմը հասնում է 7-ի՝ բոլորն էլ կուսթեկնածուներ: Ըստ վավերագրի հաղորդած տեղեկությունների՝ մարտի 14-ին Ասատուր Բաղդասարյանին ազատում են նաև կոմբջիջի քարտուղարի պարտականություններից և նրա փոխարեն կոմբջիջի քարտուղար են ընտրում Չորագյուղի դպրոցի վարիչ Արմենակ Խաչատրյանին,³⁴ որը Չորագյուղի չէր (նա Նոր Բայազետից էր): Արմենակ Խաչատրյանի կոմբջիջի քարտուղար եղած ժամանակ կոմբջիջի արձանագրություններում գյուղը Վալի-աղալու օտար անվան փոխարեն - հանդես է գալիս հայերեն Չորագյուղ անունով: Փաստաթղթերը վկայում են, որ ապրիլի 6-ին Արմենակ Խաչատրյանի փոխարեն Չորագյուղի կոմբջիջի քարտուղար է ընտրվում Չոհրաբ Մինասյանը:³⁵

Ըստ վավերագրերի հաղորդած տեղեկությունների՝ 1924 թ. ապրիլի 6-ին Պարսամ Ասատրյանը, երբ ավարտել էր Դիլիջանի կուսպրոցը և գյուղ էր վերադարձել, ընտրվում է Չորագյուղի կոմերիտմիության քարտուղար³⁶ Սիրական Մանուկյանի փոխարեն: Մասնակցելով կոմբջիջի ապրիլի 6-ի նիստին, նա կարողում ու բացատրում է մի գլուխ կուսակցական կանոնադրությունից: Փաստաթղթերից իմանում ենք, որ ապրիլի 14-ին Նոր Բայազետի գավկոմը 105 փուտ սերմացու հացահատիկ և գյուղատնտեսական նոր գործիքներ է տրամադրում Չորագյուղին³⁷, որ գարնանացանը հաջող կատարվի: Մակայն Չորագյուղի կոմբջիջը որոշում է՝ խնդրել գավկոմին իրենց տրամադրվելիք սերմացու հացահատիկի չափը հասցնել 300 փուտի, քանի որ անցած տարի երաշտ է եղել իրենց մոտ, և լավ սերմացու չեն կարողացել վերցնել: Սերմացուն գյուղացիներին բաժանելու համար ստեղծում են հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ավետիսյան Գրիգոր, Հակոբյան Տիգրան, Մինասյան Չոհրաբ, Մարտոյան Սկրտիչ, Մերոբյան Արմենակ: Ինչ վերաբերում է նոր տրվելիք գյուղատնտեսական գործիքներին, ապա կոմբջիջը որոշում է իրենց գյուղից մարդիկ ուղարկել այդ գործիքների օգտագործման տեխնիկային տիրապետելու, նոր ձեռք բերել գործիքները: Այդ ժամանակ գյուղում կազմակերպվում է ծառատունկ, որի կազմակերպիչն է եղել Տիգրան Հակոբյանը: Ապրիլի 30-ին ստեղծվում է Չորագյուղի Բատրակոմը,³⁸ որի նախագահն է դառնում կոմբջիջի քարտուղար Չոհրաբ Մինասյանը: Նա ասում է, որ գյուղում կան տերեր ու ծառաներ: Ծառաները բատրակներն

³³ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 5-6:

³⁴ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 346, թերթ 4 (հմմտ. ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 13):

³⁵ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 16:

³⁶ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 16:

³⁷ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 15:

³⁸ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 19:

են՝ գյուղի ընչազորկ և անգրագետ մասսան: Բատրակկոմը կոչված է նրանց միավորելու, նրանց վիճակը բարելավելու:

Գյուղի դպրոցը ունեցել է հողատարածություն, որից ստացված բերքը տնօրինել է դպրոցի խորհուրդը՝ դպրոցի վարիչի գլխավորությամբ: Մայիսի 4-ի նիստում³⁹ կոմբջիջը դպրոցի վարիչ Արմենակ Խաչատրյանից պահանջում է հողատար վերաբերմունք ցուցաբերել դպրոցի հողատարածության մշակման նկատմամբ, հակառակ դեպքում նրա ցանքը կարող է կրծողների կեր դառնալ:

Վավերագրերը տեղեկացնում են, որ 1924 թ. մայիսի 30-ին տեղի է ունենում Չորագյուղի գյուղական համայնքի նիստ:⁴⁰ Դա 15-րդ նիստն էր սկսած 1920 թ. դեկտեմբերից: Գյուղական համայնքը բաղկացած էր 76 անդամներից: Նրանք բոլորն էլ մասնակցում են նիստին: Քննարկում են երկու հարց՝ 1) կոոպերացիայի նշանակությունը և նրան անդամագրվելը, 2) պետական աշտարակայրերը և նրանց ձեռք բերումը վարձակալական հիմունքներով: Արձանագրվում է, որ չարչիներից ազատվելու միակ միջոցը կոոպերացիան է: Նիստը որոշում է վճարել մուտքի անդամավճար, դառնալ կոոպերացիայի անդամ և օգտվել նրանից: Նիստը որոշում է նաև պետուկոոպերացիայի արական հիմունքով վերցնել դեռ չբաժանված արտաթյունից վարձակալական համեմատաբար որակով չեն եղել և հողաբաժանման վայրերը (դրանք համեմատվել գյուղացիներին): Փաստաթղթերը տեղեկացնում են, որ Չորագյուղի կոմբջիջի հունիսի 7-ի նիստում⁴¹ բջիջի քարտուղար և գյուղխորհրդի նախագահ Ջոհրաբ Մինասյանը զեկուցում է միասնական գյուղատնտեսական տուրքի մասին, որը պետք է գյուղացիները հողի դիմաց վճարեն պետությանը: Հունիսի 7-ի և 9-ի նիստերում դպրոցի խորհրդի անդամ Պարսամ Մաստրյանը զեկուցում է գյուղում դպրոցական նոր շենք կառուցելու մասին: Նա առաջարկում է գյուղացիների ուժերով կտրել 1500 հատ քար և դրանցով կառուցել դպրոցի համար նոր շենք:

1924 թ. Չորագյուղում տարածված է եղել պետական սպահովագրությունը (պետապ): Կոմբջիջի հունիսի 9-ի նիստում⁴² Ջոհրաբ Մինասյանը տեղեկացնում է, որ գյուղում կան սովյալ մարդիկ, որոնցից 6-ը մահացել են սովից: Նա առաջարկում է պետապից գոյացած 90 ռ. գումարը տրամադրել մյուս սովյալներին՝ նրանց կյանքը փրկելու համար:

1924 թ. Չորագյուղում տարածվում է պետական փոխառության բաժնեգրում: Հունիսի 15-ի և հուլիսի 8-ի նիստերի արձանագրություններին⁴³ իմանում ենք, որ կոմբջիջը առաջարկել է բացատրական աշխատանք տանել գյուղի բնակչության մեջ, որ փոխառության բաժնետոմսեր

³⁹ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 21:

⁴⁰ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 25:

⁴¹ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 26:

⁴² ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 26:

⁴³ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 31, 33:

զնեղով գյուղացին նախ խնայում է իր միջոցները, ապա նպաստում երկրի տնտեսության զարգացմանը: 1924 թ. Չորագյուղում աշխատանքներ են տարվում մանր վարկային ընկերություններ կազմակերպելու ուղղությամբ: Այդ հարցը քննության է առնվում կոմբջիջի հուլիսի 8-ի նիստում:⁴⁴ Մամուլում գյուղի բերությունները քննադատելու և նոր, առաջադիմական երևույթները խրախուսելու համար 1924 թ. Չորագյուղից ընտրվում է գյուղաթղթակից: Գյուղական կյանքը լուսաբանող «Մաճկալ» թերթի թղթակից է ընտրվում կոմերիտմիության քարտուղար Պարսամ Մաստրյանը:⁴⁵ Վավերագրերից իմանում ենք, որ նոյեմբերի 10-ին Չորագյուղի կոմբջիջի քարտուղար է ընտրվում հարևան Ծակ-քար գյուղի բնակիչ Արամ Պողոսյանը,⁴⁶ որը 1923 թ. հոկտեմբերի 14-ից այդ կոմբջիջի կազմում էր:⁴⁷ Քսան օր հետո՝ 1924 թ. նոյեմբերի 30-ին Արամ Պողոսյանը ընտրվում է նաև Չորագյուղի գյուղխորհրդի նախագահ:⁴⁸ Չորագյուղում արմատավորվում է պետությանը օգնելու գաղափարը: Նոյեմբերի 10-ի և 16-ի նիստերում կոմբջիջը առաջարկում է գյուղացիներին մեկական ռուբլով օգնել հարազատ երկրին՝ նրա օդային ու ջրային ռազմական մավատորմը զարգացնելու նպատակով:⁴⁹

Վավերագրերը տեղեկություն են պահպանել դպրոցի հողամասից ստացվող բերքի մասին: Ըստ այդ տեղեկությունների՝ 1924 թ. դպրոցի հողամասից ձեռք է բերվել 45,5 փուք գարի, 86,5 փուք ցորեն, 130 փուք դարման, 117 փուք կարտոֆիլ:⁵⁰ Դպրոցի հողատարածության մշակումը կատարվել է գյուղացիների ուժերով:⁵¹ Վավերագրերը տեղեկացնում են, որ դեկտեմբերի 7-ին Չորագյուղի ԼԿԵՄ բջիջի քարտուղար է ընտրվում Հովհաննես Գալստյանը,⁵² իսկ 29-ին փոխօգկոմի նախագահ է ընտրվում Ռուշան Մանուկյանը:⁵³ 1924 թ. Չորագյուղում նախապատրաստվել ու սկսվել է հողաբաժանությունը:⁵⁴ Բայց այն մինչև դեկտեմբերի 30-ը չի ավարտվել: Այն պետք է շարունակվեր նաև 1925 թվականին:⁵⁵ 1924 թ. դեկտեմբերի 30-ին կոմբջիջը կուսակցական շարքեր է ընդունում⁵⁶ մի շարք մարդկանց: Դրանք են՝ 1) Բաղդասարյան Ասատուրը, 2) Ղազարյան

⁴⁴ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 33:

⁴⁵ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 36:

⁴⁶ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 36:

⁴⁷ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 224, թերթ 13:

⁴⁸ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 43:

⁴⁹ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 43-44:

⁵⁰ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 44:

⁵¹ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 39:

⁵² ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 46:

⁵³ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 49:

⁵⁴ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 29:

⁵⁵ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 50:

⁵⁶ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 319, թերթ 50:

Ռուբենը, 3) Հովհաննիսյան Մարգիսը, 4) Մանուկյան Սիրականը, 5) Հարությունյան Թամարազը, 6) Ավետիսյան Կնյազը, 7) Մանուկյան Մուկուչը: Այս ցուցակում ուշադրություն է գրավում Բաղդասարյան Ասատուրը, որը 1922–1923 թթ. եղել է կոմբջիջի քարտուղար, հետևաբար նաև կոմունիստ, իսկ այժմ խոսվում է կուսակցության շարքեր նրա ընդունվելու մասին: Այս փաստը ցույց է տալիս, որ 1923 թ. կոմբջիջի քարտուղարի պաշտոնից ազատվելուց հետո նա վտարվել է նաև կուսակցությունից և այժմ նորից դիմել է ընդունվելու այդ կուսակցության շարքերը: Ծաղիկ Ջաքարյանը և Արզուման Սարոյանը, որոնք նույնպես դիմում էին տվել կուսակցության շարքեր ընդունվելու համար, այդ նիստով չեն անցնում՝ առաջինը անգրագիտության, իսկ երկրորդը՝ կրոնին հետևելու պատճառով:

Ըստ վավերագրերի՝ Չորագյուղի կոմբջիջը 1925 թ. հունվարի 12–ի նիստով⁵⁷ կուսբեկնաժու Խաչատուր Կիրակոսյանին փոխադրում է կուսանդամ: Այդ նույն նիստով կոմբջիջը որոշում է՝ 1) օգնել կարմիրբանակային Խաչատուր Հարությունյանի աղքատության մեջ խարխափող ընտանիքին, 2) խրճիթ–ընթերցարանը գործի դնելու նպատակով նրան նոր վարիչ հաստատել Սիրական Մանուկյանին, 3) կոմերիտականների մեջ աշխատություն առաջացնելու նպատակով ակտիվացնել բնագիտական խմբակի աշխատանքները, 4) Խորհրդային Միությունում և բուրժուական աշխարհում տեղի ունեցող ամենօրյա նորությունների հետ Չորագյուղին հարողակից դարձնելու նպատակով գյուղացիներին կոչ անել բաժանորդագրվել թերթեր, մասնավորապես «Մաճկալ» թերթը: Մի այլ վավերագրի համաձայն՝ կոմբջիջը հունվարի 21–ի նիստում⁵⁸ որոշում է Չորագյուղում ստեղծել Պրոլետարական հեղափոխության միջազգային կազմակերպության (ՄՕՊԲ) բջիջ: Կոմբջիջը առաջարկում է լայն մասսայական աշխատանք տանել գյուղում, որպեսզի մարդիկ անդամագրվեն ՄՕՊԲ–ին, վճարեն անդամավճար՝ միջազգային պրոլետարիատին օգնելու նպատակով: ՄՕՊԲ–ի քարտուղար է ընտրվում փոխօգկոմի նախագահ Ռուշան Մանուկյանը: Այդ նույն նիստում ընդունվում է «կորչի անգրագիտություն» կարգախոսը, որն ուղղված էր ինչպես կոմբջիջում, այնպես էլ ամբողջ գյուղում տիրող անգրագիտության դեմ: Այլ վավերագրերի համաձայն, կոմբջիջի փետրվարի 17–ի նիստով⁵⁹ Եղիշե Պողոսյանն ընդունվում է կուսակցության շարքեր որպես կուսբեկնաժու: Փաստաթղթերը վկայում են, որ կոմբջիջը մարտի 1–ին⁶⁰ որոշում է կայացնում ունևոր գյուղացիների միջոցներով կառուցել դպրոցի նոր շենք: Մարտի 30–ին Չորագյուղի կոմբջիջի նիստին⁶¹ մասնակցող կոմունիստներից մեկը հանդես է գալիս

որպես կուսանդամ (հավանաբար դա Խաչատուր Կիրակոսյանն էր, քանի որ մինչ այդ բոլորը եղել են կուսբեկնաժուներ, բացի Խաչատուր Կիրակոսյանից): Վավերագրերից հասկացվում է, որ մինչև 1925 թ. ապրիլ ամիսը Չորագյուղը դեռ հողաբաժանում չէր կատարել: Կոմբջիջի ապրիլի 12–ի նիստում⁶² հողկոմի նախագահ Մուկուչ Մանուկյանը զեկուցում է, որ նախապատրաստական աշխատանքներն ավարտված են, և շուտով հողկոմը կարող է անցնել հողաբաժանման, բայց գյուղը այս չորս տարիների ընթացքում զավկոմից դեռ չի ստացել հողաբաժանման մատյան, որի պատճառով էլ կեղծիքներ են առաջանում հողաբաժանման մեջ: Նա առաջարկում է կոմբջիջին, որ անհրաժեշտ է շտապ դիմել զավկոմին, որպեսզի մինչև հողաբաժանման անցնելը իրենց տրամադրվի հողաբաժանման մատյան:

Վավերագրերը տեղեկություն են պահպանել 1925 թ. մարտի 24–ից Չորագյուղում պետության կողմից ստեղծված կաթնատնտեսական արտելի մասին, որը կարող էր օգնել գյուղացիներին նպատակին օգտագործելու իրենց կաթնամթերքը:⁶³ Այդ նույն վավերագրում պահպանվել է տեղեկություն Չորագյուղում կոոպերացիայի զարգացման համար կոոպերատիվի շենք՝ խանութ կառուցելու մասին: Ըստ արխիվային փաստաթղթերի՝ կոմբջիջի հունիսի 29–ի նիստին⁶⁴ Չորագյուղի կուսակցական կազմակերպությունը հանդես է գալիս արդեն երկու կուսանդամներով (երկրորդը Արամ Պողոսյանն էր): Վավերագրերը հաստատում են, որ սեպտեմբերի 7–ին⁶⁵ կոմբջիջի քարտուղար է ընտրվում Չորագյուղի դպրոցի վարիչ Գեղամ Բալասանյանը: Արամ Պողոսյանը մնում է որպես գյուղխորհրդի նախագահ: Հոկտեմբերի 26–ի նիստում⁶⁶ նա առաջարկում է կոմբջիջին ուշադրություն դարձնել հողաբաժանման վրա, հողկոմի աշխատանքները լավ է կազմակերպում Ասատուր Միմոնյանը, այնտեղ վերջ տալ ծեծի դեպքերին, պայքարել գյուղում գաղտնի հող բաժանելու դեմ: Նոյեմբերի 25–ի նիստով⁶⁷ կոմբջիջը Չոհրաբ Միմասյանին միաձայն կուսբեկնաժուից փոխադրում է կուսանդամ: 1925 թ. Չորագյուղում գոյություն ունեւ նաև տեղկոմ: Ըստ վավերագրերի՝ կոմբջիջի դեկտեմբերի 8–ի նիստը⁶⁸ տեղկոմի նախագահ Ռուբեն Դազարյանից պահանջում է ժամանակին զանձել անդամավճարներ, կազմակերպել հեթոսական ժողովներ, գրավոր կապ պահպանել շրջանի հետ, ուշադրություն դարձնել բատրակների անգրագիտության վերացման

⁵⁷ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 428, թերթ 2:
⁵⁸ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 428, թերթ 3:
⁵⁹ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 428, թերթ 6:
⁶⁰ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 428, թերթ 8:
⁶¹ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 428, թերթ 14:

⁶² ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 428, թերթ 16:
⁶³ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 428, թերթ 30:
⁶⁴ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 428, թերթ 23:
⁶⁵ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 428, թերթ 29:
⁶⁶ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 428, թերթ 34:
⁶⁷ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 428, թերթ 34:
⁶⁸ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 428, թերթ 38:

վրա: Կոմբոջիջի ղեկտեմբերի 20-ի նիստը⁶⁹ արձանագրում է, որ Չորագյուղի դպրոցն արդեն քառամյա է, այսինքն՝ ունի լիարժեք գործող չորս դասարաններ (1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ), դպրոցը երկսեռ է, որտեղ սովորում են թե՛ տղաներ և թե՛ աղջիկներ: Կոմբոջիջը ուշադրություն է դարձնում գյուղի երիտասարդներին կուղայրոցներում սովորելու ուղարկելու հարցի վրա: Նրա երաշխավորությամբ ղեկտեմբերի 20-ից կուղայրոցում սովորելու են գնում կոմբոջիջից Սիրական Մանուկյանը, ԼԿԵՄ բոջիջից՝ Վաղարշակ Մանուկյանը:⁷⁰

Ըստ վավերագրերի՝ 1926 թ. շարունակվում է Չորագյուղի կոմբոջիջի աճը: Այսպես՝ հունվարի 19-ին Գրիգոր Ավետիսյանը փոխադրվում է կուսանդամ, իսկ կուսթեկնաձու են ընտրվում Խաչատուր Հարությունյանը և Ապրե Կիրակոսյանը:⁷¹ Փաստաթղթերը հաստատում են, որ հունվարի 19-ին Մուկոչ Մանուկյանի փոխարեն հողկոմի նախագահ է ընտրվում Ա. Սահակյանը:⁷² Այդ օրը նա կոմբոջիջին զեկուցում է, թե առանց կալատեղերի Չորագյուղի ընդհանուր հողատարածությունը կազմում է 10.554 չվան, որից 2558 չվանը 1-ին կարգի հողեր են, 4580 չվանը՝ 2-րդ կարգի, 3415 չվանը՝ 3-րդ կարգի: Փաստաթղթերը տեղեկացնում են, որ փետրվարի 19-ից Չորագյուղում ՄՕՊԸ և Կորչի անգրագիտությունը հասարակական կազմակերպությունների հետ միասին գործում են նորերը՝ Հողագործական ընկերությունների միացյալ բանակը (ՀԸՄԲ) և Ավտոքիմիան:⁷³ Կոմբոջիջը առաջարկում է գյուղում բացատրական աշխատանք տանել, շատ մարդկանց անդամագրել այդ կազմակերպություններում և պահանջել նրանցից ժամանակին մուծել անդամավճարները: Վավերագրերից իմանում ենք, որ փետրվարի 22-ին Եղիշե Պողոսյանը հեռացվում է կուսակցությունից⁷⁴ իր նորածին երեխային մկրտելու պատճառով: Կուսակցական արխիվից իմանում ենք, որ Չորագյուղում փետրվարի 19-ին կուսանդամների թիվը 2-ից հասել է 3-ի:⁷⁵ Կոմբոջիջի փետրվարի 21-ի նիստի արձանագրության տվյալներից հասկանալի է, որ 1925 թ. հոկտեմբերի 26-ից, երբ Արամ Պողոսյանը ազատվել է նաև գյուղխորհրդի նախագահի պաշտոնից ու հեռացել կոմբոջիջից, նրա փոխարեն գյուղխորհրդի նախագահի պաշտոնն է ստանձնել Չոհրապ Մինասյանը:⁷⁶ Փետրվարի 21-ի նիստում⁷⁷ կոմբոջիջը առաջարկում է գյուղխորհրդի նախագահ Չոհրապ

Մինասյանին՝ ա) լուրջ ուշադրություն դարձնել հողաբաժանության վրա, որպեսզի ճշշում չգործադրվի աղքատների նկատմամբ, բ) հողկոմի կողմից թույլ տրված գեղծարարությունների մասին անմիջապես հայտնել կուսչրջկոմ և շրջգործկոմ, որպեսզի թերություններն անմիջապես վերացվեն: Ըստ կուսակցական փաստաթղթերի՝ 1926 թվականի ապրիլի 24-ին անդամավճար չմուծելու համար կուսակցությունից հեռացվում է Գրիգոր Ավետիսյանը:⁷⁸ Վավերագրերից իմանում ենք, որ մայիսի 15-ին կոմբոջիջի քարտուղար է ընտրվում Խաչատուր Կիրակոսյանը: 1926 թ. Չորագյուղում արմատավորվում է կին-կազմակերպությունը, որի նպատակն էր սոցիալիստական շինարարության մեջ ներգրավել գյուղի կանանց, որոնք կարող էին մեծ դեր ունենալ այդ գործում: Մայիսի 15-ի նիստում⁷⁹ կոմբոջիջը քննարկում է կին-կազմակերպչուհի Ա. Նալբանդյանի դիմումը, որ ինքը ուսուցչուհի է, արդեն սկսվել են արձակուրդները, ինքը գյուղից պետք է բացակայի, ուստի խնդրում է իրեն ազատել կին-կազմակերպչուհու պաշտոնից և իր փոխարեն տալ մեկ ուրիշի: Կոմբոջիջը հարգում է նրա դիմումը և որոշում է դիմել կուսչրջկոմին, որպեսզի նա իր ներկայացուցիչը ուղարկի կամ թույլ տա մի կազմակերպված կնոջ նշանակել այդ պաշտոնին: Կոմբոջիջի հետագա նիստերից մեկի արձանագրության⁸⁰ տվյալներից հասկացվում է, որ կին-կազմակերպչուհի է ընտրվել Չորագյուղի բնակչուհի Արուսյակ Դեղոյանը: Վավերագրերը տեղեկացնում են, որ Խաչատուր Կիրակոսյանն իր աշխատած հինգ ամիսների ընթացքում ընդամենը մի նիստ է գումարել և չի կարողացել հավաքել կուսանդամավճարները, որի պատճառով հոկտեմբերի 9-ին նրան կոմբոջիջը ազատում է կոմբոջիջի քարտուղարի աշխատանքից և նրա փոխարեն կրկին կոմբոջիջի քարտուղար է ընտրում Գեղամ Բալասանյանին:⁸¹ Սոյեմբերի 21-ի նիստում⁸² կոմբոջիջը նորից է անդրադառնում կին-կազմակերպության հարցին և որոշում՝ ա) կոմունիստներն իրենց ընտանիքի կին անդամներին պետք է ներկա դարձնեն կին-կազմակերպության ժողովներին և դարձնեն այդ կազմակերպության անդամներ, բ) գյուղական համայնքի և գյուղական խորհրդի ժողովներում զեկուցումներ պետք է կարդալ կին-կազմակերպության էության մասին, որ սոցիալիստական շինարարության մեջ մեծ գործ ունեն կանայք, գ) գյուղն ունի 416 ընտանիք, որոնց անդամներից շատ ու շատերը, այդ թվում և կանայք անգրագետ են, պետք է գյուղում շատ լիկկայաններ բացել, գրագետ դարձնել նրանց, ազատել ամեն տեսակի նախապաշարումներից, հատկապես կրոնական նախապաշարումներից, և այդ գրագետ մասսաների ուժերով գյուղում կառուցել սոցիալիզմ:

⁶⁹ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 428, թերթ 40:

⁷⁰ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 428, թերթ 40:

⁷¹ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 429, թերթ 6:

⁷² ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 429, թերթ 6:

⁷³ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 429, թերթ 8:

⁷⁴ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 429, թերթ 9:

⁷⁵ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 13, թերթ 3:

⁷⁶ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 13, թերթ 4:

⁷⁷ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 13, թերթ 10:

⁷⁸ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 13, թերթ 10:

⁷⁹ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 13, թերթ 11:

⁸⁰ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 680, թերթ 3:

⁸¹ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 13, թերթ 13:

⁸² ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 13, թերթ 17:

Վավերագրերը տեղեկացնում են, որ 1927 թ. հունվարի 6-ին կոմբջիջի միատուն կոմերիտոմիության ծննդյան մասին զեկուցումներ⁸³ են կայրում քջիջի քարտուղար և դպվար Գեղամ Բալասանյանը, գյուղխորհրդի նախագահ Պարսամ Ասատրյանը և դպրոցի ուսուցիչ Գվիդոն Ղազարյանը: Այնքերև է, որ Գեղամ Բալասանյանն, իր դպվարի պաշտոնին զուգընթաց Չոհրաբ Մինասյանից վերցրել է միայն կոմբջիջի քարտուղարի պաշտոնը: Գյուղխորհրդի նախագահի պաշտոնը Չոհրաբ Մինասյանից ստանձնել է Պարսամ Ասատրյանը: Կոմբջիջի հունվարի 17-ի նիստի արձանագրությունից⁸⁴ իմանում ենք, որ բատրակները, որի նախագահն էր Ռուբեն Ղազարյանը, կազմված էր 20 հոգուց, որոնցից 8-ը աշխատում էին գյուղում, 9-ը գնացել էին օտար վայրեր աշխատանք որոնելու, 3-ը անգործ էին գյուղում: Կոմբջիջը առաջարկում է շաղկապել բատրակներին ու չքավորներին (առաջիկաները ունեզուրկ են, իսկ երկրորդները՝ քիչ ունեցողներ, բ) բատրակների ժողովները դարձնել մշտական, մշակել աշխատանքի ծրագիր, կապ պահպանել շրջանի փոխօգկոմի հետ և միասնաբար օգնել բատրակներին ու չքավորներին: Նույն նիստում կոմբջիջը առաջարկում է կուլտ-ֆոնդի նախագահ Ռուբեն Ղազարյանին պայմանագիր կնքել գյուղացիների հետ և ստեղծել կուլտ-ֆոնդ, հրաժարվողներին դատի տալ: Ակտիվացնել հասարակական խմբակների գործունեությունը, շաբաթը երեք անգամ գումարել բնագիտության և քաղաքականության պարապմունքներ կոմերիտականների շրջանում: Կոմբջիջի հունվարի 30-ի նիստի արձանագրությունը⁸⁵ տեղեկացնում է, որ կոոպերատիվի անդամների թիվը հասել է 190: Դրանից ելնելով նիստը անհրաժեշտ է համարում ճյուղային խանութ բացել Չոռագյուղում:

Նույն արձանագրությունը տեղեկացնում է, որ 1926 թ. ժանտախտի հետևանքով սատկել են գյուղի 700-ից ավել անասուններ, որոնք հիմնականում պատկանում էին չքավորներին և միջակներին, բայց նրանց շրջանային համապատասխան կազմակերպությունները չեն փոխհատուցում ոչ ակտով և ոչ էլ երկարատև վարկով: Վավերագրերը տեղեկացնում են, որ կոմբջիջի փետրվարի 13-ի նիստում⁸⁶ Պարսամ Ասատրյանը զեկուցել է Չոռագյուղի գյուղական խորհրդի առաջիկա ընտրությունների մասին: Նա առաջարկել է պարզել, թե գյուղում որքան ձայնագրուկներ կան, պետք է հայտնաբերել նաև նորերը, իհարկե, եթե կան, քանի որ նրանք կարող են թաքուն մնալ և ձախողել ընտրությունները: Ընտրությունները հաջող անցկացնելու համար պետք է հենվել կոմֆրակցիայի վրա և ակտիվ գործողության մեջ դնել կոմբջիջի գործունեությունը: Ըստ փաստաթղթերի՝ կուշրջկոմի հրահանգիչ Բոբիկյանը⁸⁷

⁸³ ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 1, թերթ 1:
⁸⁴ ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 1, թերթ 3:
⁸⁵ ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 1, թերթ 5:
⁸⁶ ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 1 թերթ 8:
⁸⁷ ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 1, թերթ 9:

Չոռագյուղի կոմբջիջի փետրվարի 15-ի նիստում հայտարարել է, որ Չոռագյուղում կան ձայնագրուկ կոմունիստներ, որոնք շահագործում են բատրակներին՝ աշխատեցնելով իրենց տնտեսության մեջ: Այդպիսի կոմունիստներից է Չոհրաբ Մինասյանը, որը 1905 թ. Թիֆլիսում կապված է եղել սոցիալ-դեմոկրատական (մենշեկյան) կուսակցության հետ: Մակայն կոմբջիջի անդամներ Վաղարշակ Մանուկյանը հերքում է Չոհրաբ Մինասյանի նկատմամբ արված այդ մեղադրանքները, որ նա բատրակ չի աշխատացնում իր կարիքների համար, այլ նա իր տանը պահում է իր խորթ որդուն, որը, բնականաբար, պիտի աշխատի այդ տան համար: 1905 թ. նա Թիֆլիս է գնացել իր ընտանիքի համար ապրուստի միջոց աշխատելու, իսկ եթե նրա հետ ֆիզիկական աշխատանք է կատարել սոցիալ-դեմոկրատական կուսակցության որևէ անդամ, ապա դա չի նշանակում, թե Չոհրաբ Մինասյանը մտել է սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ: Ընդհակառակը, նա 1921 թվականից մեր կոմբջիջի ակտիվ կուսակցականներից է և աշխատել է թե՛ գյուղխորհրդի նախագահ և թե՛ կոմբջիջի քարտուղար և շատ ակտիվ է եղել իր գործին:

Ըստ փաստաթղթերի հաղորդած տեղեկությունների, կոմբջիջի փետրվարի 26-ի նիստը հաստատում է ընտրություններին ներկայացվելիք Չոռագյուղի գյուղական խորհրդի անդամության թեկնածուների հետևյալ ցուցակը,⁸⁸ որն ընդգրկում է գյուղի հասարակության ընտրական ձայն ունեցող տարբեր խավերի ներկայացուցիչներին:

I. Կոմբջիջից՝

1. Պարսամ Ասատրյան, 2. Խաչատուր Կիրակոսյան, 3. Գեղամ Բալասանյան, 4. Չոհրաբ Մինասյան, 5. Նիկո Հակոբյան:

II. ԼԿԵՄ Բջիջից՝

1. Վաղարշակ Մանուկյան, 2. Սիրական Մանուկյան, 3. Հովհաննես Գալստյան, 4. Աբրահամ Կիրակոսյան, 5. Թամրազ Հարությունյան, 6. Հովհաննես Բաղդասարյան:

III. Բատրակների միությունից՝

1. Ռուբեն Ղազարյան, 2. Մանուկ Մանուկյան, 3. Վաղարշակ Մխիթարյան, 4. Արմենակ Մինասյան, 5. Մարտիրոս Հովհաննիսյան, 6. Արշակ Մինասյան, 7. Խաչատուր Հակոբյան, 8. Սկրտիչ Տոնեյան, 9. Դեղկանու Ավդայան:

IV. Չքավորների միությունից՝

1. Ալյոն Թարթիկյան, 2. Սարգիս Սարգսյան, 3. Չալիբեկ Քալոյան, 4. Սարգիս Մանուկյան, 5. Կնյազ Ավետիսյան, 6. Մկրտիչ Հակոբյան,

⁸⁸ ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 1, թերթ 13:

7. Արտաշ Մանուկյան, 8. Մարգար Մարգարյան, 9. Մաթենիկ Մխիթարյան, 10. Արուս Դեղոյան, 11. Ջիվան Փոթեյան, 12. Սրայիլոն Ավետիսյան:

V. Միջակներից՝

1. Ուրշան Մանուկյան, 2. Վասակ Մովսիսյան, 3. Մանուկ Բարսեղյան, 4. Օրդուխան Հակոբյան, 5. Աղաբեկ Հակոբյան, 6. Պողոս Հակոբյան, 7. Սրայիլոն Մելքոնյան, 8. Սարգիս Հովսիկյան, 9. Արտաշ Ամիրխանյան, 10. Ազո Մարգարյան, 11. Միքայել Ալավերդյան, 12. Բալե Վարդանյան, 13. Աբրահամ Սաֆարյան, 14. Սարգիս Շահնազարյան, 15. Խաչատուր Աղեկյան, 16. Գրիգոր Շահնազարյան, 17. Սարգիս Մուրադյան, 18. Խաչատուր Մարոյան, 19. Հակոբ Ավդալյան, 20. Ստեփան Մելքոնյան, 21. Հարություն Բարսեղյան, Տիգրան Էլոյան, 23. Հովհաննես Մուրադյան, 24. Սանասար Դազարյան, 25. Արշակ Խաչեյան, 26. Ավետիս Պողոսյան, 27. Մարիամ Մուրադյան, 28. Եղնար Մանուկյան, 29. Նոյեմ Դանդիլյան:

VI. Բատրակներից և չքավորներից խառը՝

1. Մանուկ Հովհաննիսյան, 2. Սկրտիչ Բդեյան, 3. Սիրական Ոսկանյան, 4. Գևորգ Գորգեյան, 5. Ավետիս Մալոդյան, 6. Սկրտիչ Թումեյան, 7. Հայրո Մախամուրյան, 8. Փիրուզ Հակոբյան:

Ըստ վավերագրերի տվյալների՝ ապրիլի 13-ի նիստին տված իր գեկուցման⁸⁹ մեջ կոմբջիջի քարտուղար Գեղամ Բալասանյանն ընդգծել է, որ գյուղը աստիճանաբար վերելք է ապրում: Ընտանիքների թիվը հասել է 413-ի, բնակիչների թիվը՝ 2408-ի, որոնցից 1205-ը արական են, 1203-ը՝ իգական: Տնտեսությունը հասել է նախապատերազմյան (1913 թ.) մակարդակին. մինչև 1926 թ. ժանտախտը գյուղում կար 1512 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 2410 գլուխ ոչխար, 322 գլուխ հորթեր և երինջներ: Ժանտախտի հետևանքով սատկել են 519 գլուխ խոշորներ և 306 գլուխ հորթեր և երինջներ (միասին 825 գլուխ): Սակայն պետապր բավարարել է միայն 195 ընտանիքների, իսկ 324 ընտանիքներ դեռ բավարարված չեն, որոնց մեծ մասը չքավորներ են: Պետապի տեսուչը հաշվի չի առնում, որ նախ չքավորներին պետք է բավարարել, ապա նոր միջակներին և ունևորներին: Ցանքսը այս տարի գյուղում լավ է կատարվել: Կոոպերատիվը աճել է: Նրա անդամների թիվը հասել է 250-ի: Կոմերիտականները չեն ճանաչում կոմբջիջի ղեկավարությանը: Կրոնամոլությունը կոմբջիջում նկատվել է Միսական Մանուկյանի, Եղիշե Պողոսյանի, Գրիգոր Ավետիսյանի և Ջոնիար Մյունասյանի մոտ, որոնք մկրտել են իրենց նորածին երեխաներին:

⁸⁹ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 1, թերթ 23:

Գեղամ Բալասանյանի գեկուցումից հետո տեղի է ունենում կոմբջիջի քարտուղարի ընտրություն: Կոմբջիջի քարտուղար է ընտրվում գյուղխորհրդի նախագահ Պարսամ Ասատրյանը:

Ըստ կուսակցական փաստաթղթերի, ապրիլի 13-ի նիստով կոմբջիջը Ռուբեն Դազարյանին կուսեկնածուից փոխադրում է կուսանույան:⁹⁰ Կոմբջիջի մայիսի 22-ի նիստի արձանագրությունից⁹¹ հասկացվում է, որ մարտից Չորագյուղի ԼԿԵՄ բջիջի քարտուղար է աշխատել Վաղարշակ Մանուկյանը: Նա մայիսի 22-ին կոմբջիջին տված գեկուցման մեջ պահանջել է, որ գյուղի թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական աշխատանքներին պետք է մասնակից դարձնել կոմերիտականներին: Կոմբջիջի հուլիսի 30-ի արձանագրությունը⁹² տեղեկացնում է, որ գյուղը այդ ժամանակ ունեցել է 4-27 ընտանիք, 2472 բնակիչ, որոնցից աշխատավորներ են եղել 878-ը: Գյուղում կար 1475 դեսյատին վարելահող, որից ցանվել է 747 դեսյատինը, բանջարանոցի համար տրամադրվել է 34 դեսյատին: Խոտհարքը կազմել է 249 դեսյատին: Գյուղում պահել են 454 գլուխ կով և մատակ (անցյալ տարվա համեմատությամբ պակասել է 216 գլուխ կով, եզ և գոմեշ՝ ժանտախտի հետևանքով), 525 գլուխ երինջ և հորթ, 2173 գլուխ ոչխար (անցյալ տարվա համեմատությամբ ավելացել է 383 գլուխ): Անցած տարվա համեմատությամբ ավելացել է 10 ձի, 3 խոզ, 10 մեղվափեթակ: Ամբողջ երկրագործությունից ստացված վաստակը կազմել է 3779 ռ: Հենց այս հողային ու անասնապահական հիմքի վրա էլ պետությունը նշանակել է գյուղատնտեսական հարկը:

Վավերագրերը⁹³ տեղեկացնում են, որ 1927/28 ուս. տարում Գեղամ Բալասանյանը թողել է Չորագյուղը, և նրա փոխարեն դարձրել վարիչ է նշանակվել Արամայիս Դռնոյանը: Ըստ փաստաթղթերի հաղորդած տեղեկության, երբ Պարսամ Ասատրյանը կոմբջիջին կից ստեղծում է պատի թերթ,⁹⁴ ինքը ընտրվում է խմբկույի նախագահ, իսկ դավար Արամայիս Դռնոյանը, ուսուցիչ Գվիդոն Դազարյանը, ԼԿԵՄ քարտուղար Վաղարշակ Մանուկյանը, կոմունիստներ Սիրական Մանուկյանը, Ասատուր Կիրակոսյանը ընտրվում են խմբկույի անդամներ: Վավերագրերից իմանում ենք, որ կոմբջիջի ղեկավարների 18-ի նիստին տված իր գեկուցման⁹⁵ մեջ դավար Արամայիս Դռնոյանը տեղեկացնում է, թե դպրոցը քառամյա է, բայց 4-րդ դասարանը այս տարի չի բացվել, մյուս երեք դասարաններում սովորում են 102 աշակերտներ (40 աշակերտ 1-ին դասարանում, 40 աշակերտ 2-րդ դասարանում, 32 աշակերտ 3-րդ դասարանում): Առաջին դասարանում

⁹⁰ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 1, թերթ 23:

⁹¹ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 1, թերթ 30:

⁹² ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 1, թերթ 40:

⁹³ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 1, թերթ 65:

⁹⁴ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 1, թերթ 48:

⁹⁵ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 1, թերթ 65:

ընդունվել են հատկապես չքավորների երեխաները: Շրջգործկոմը չքավորների երեխաներից յուրաքանչյուրին որպես օգնություն տրամադրել է 25-ական ռուբլի: Դպրոցն ունի 28 նստարան, որոնցից 13-ը նոր ձևի են, մյուսները՝ հին, ինչպես նաև երեք գրաստիստակ, մեկ սեղան, երեք վառարան, երկու աթոռ և մի դույլ: Դպրոցում գործում է աշկուսպը, որին անդամագրվել են 75 հոգի: Դրամագլուխը կազմում է 26 ռուբլի: Աշակերտները ապահովված են դասագրքերով և գրենական պիտույքներով: Աշակերտները բաժանորդագրվել են «Մանկալ» թերթը: Դպրոցում ստեղծվել է ինքնավարություն: Ուսուցիչները կազմակերպել են բնագիտական խմբակ և թատերական ներկայացումներ: Դպրոցում չի գործում պիաներական կազմակերպությունը: Շուտով ԼԿԵՄ շրջկոմի ներկայացուցիչը կգա, և դպրոցում կկազմակերպվի պիաներական կազմակերպությունը:

Վավերագրերը տեղեկացնում են, որ Ձորագյուղի Փոխադարձ օգնության կոմիտեի (ՓՕԿ) աշխատանքները աշխուժացնելու նպատակով դեկտեմբերի 25-ին⁹⁶ ընտրում են նոր հանձնաժողովի կազմ, որի մեջ են մտնում Խաչատուր Կիրակոսյանը, Վաղարշակ Մանուկյանը, Բալաբեկ Դավեյանը, Հովհաննես Գալստյանը, Ռուբեն Ղազարյանը, Ասատուր Կիրակոսյանը, Արուս Դեղոյանը: Այդ հանձնաժողովի թեկնածուներ են ընտրվում Մուկուչ Մանուկյանը, Ջալիբեկ Բալոյանը: Վերստուգիչ հանձնաժողովի կազմում ընտրվում են Պարսամ Ասատրյանը, Սիրական Մանուկյանը, Արտաշ Ամիրխանյանը: Վերստուգիչ հանձնաժողովի թեկնածու է ընտրվում Սարգիս Մահլանյանը: Կոմբջիջը առաջարկում է ՓՕԿ-ի գումարներով գնել մի քամհար մեքենա, մի ազնվացեղ ցուլ, իսկ մնացած գումարը դնել կամ շրջանառության մեջ, կամ թե մոծել ընկերության հաշվին: Վերստուգիչ հանձնաժողովին պարտավորեցնում են 3 ամիսը մեկ ստուգել ՓՕԿ-ի գործերը և տեղյակ պահել ընկերությանը: Հսկել ֆոնդից կատարված բաշխումների և նոր գոյացումների վրա:

Վավերագրերը տեղեկացնում են, որ 1928 թ. հունվարի 30-ին կոմբջիջը կուսակցության շարքեր է ընդունում⁹⁷ որպես կուսթեկնածուներ Առաքել Հակոբյանին, Սարգիս Հովսեփյանին, Արշակ Մանուկյանին, Վասակ Մովսիսյանին, Ջիվան Կարոյանին, Ասատուր Կիրակոսյանին, Մուկուչ Մանուկյանին: Դիմում տվողներից երեքը մերժվում են: Դրանք են՝ Սարիբեկ Միսիրյանը, Տիգրան Էլոյանը, Ենոք Մալիանյանը: Կուսակցական փաստաթղթերը վկայում են, որ մարտի 24-ին կոմբջիջը քննարկում է 1927 թ. վերջին տեղի ունեցած 15-րդ կուսհամագումարի որոշումները,⁹⁸ որոնք նախատեսում են գյուղերում ստեղծել կուլեկտիվ տնտեսություններ (կոլխոզներ): Կոմբջիջը հավանություն է տալիս կուսակցության գծին և որոշում է նրա նյութերը մասսայականացնել ԼԿԵՄ բջիջում և անկուսակցական

գյուղացիների շրջանում: Ձորագյուղում գործել է դատական սեկցիա, որի նախագահն է եղել Պարսամ Ասատրյանը: Մայիսի 30-ին գյուղի դատական սեկցիայի նախագահ է ընտրվում Ջոհրաբ Մինասյանը:⁹⁹ 1928 թ. Ձորագյուղում արդեն գործում է կուսկերատիվը: Սակայն նրա վարիչ Բազո Գրիգորյանը զբաղվում է չարաշահումներով: Սեպտեմբերի 2-ին կոմբջիջը որոշում է կայացնում նրան տեղափոխել Ձորագյուղից:¹⁰⁰ Գյուղատնտեսության վերելքն իր հետ առաջ է բերել հացահատիկի ավելցուկ: Պետությունը կազմակերպում է հացահատիկի մթերում, որ այն չմնա կուլակների ու հարուստների մոտ և փոխ նրանց ամբարներում: Վավերագրերը վկայում են, որ հոկտեմբերի 10-ին Ձորագյուղի կոմբջիջը քննարկում է հացամթերման խնդիրը¹⁰¹ և որոշում է գյուղացիների մոտ ավելացած հացահատիկը մթերել՝ փոխարենը գյուղացիներին վճարելով դրամ: Շրջանից հացամթերման կազմակերպիչ է նշանակվում սպառնուկի գործակատար Արմենակ Պետրոսյանը (ներքին Գետաշեն գյուղից): Նույն նիստում կոմբջիջը որոշում է կազմակերպել ինդուստրացման փոխառության գնում գյուղացիների կողմից, որով կունտեսվեն գյուղացիների խնայած եկամուտները և դրա շնորհիվ կգարգանա երկրի ինդուստրացիան: Փաստաթղթերը տեղեկացնում են, որ հոկտեմբերի 27-ին Պարսամ Ասատրյանի փոխարեն կոմբջիջի քարտուղար է ընտրվում Ռուբեն Ղազարյանը:¹⁰² Պարսամ Ասատրյանը կոմբջիջի նիստում ելույթ է ունենում և քննադատում Ջոհրաբ Մինասյանին որպես խմբակայության (թայֆագության) պարագլուխի:

Նոյեմբերի 6-ի նիստի արձանագրությունը տեղեկացնում է, որ կոմբջիջը կուսթեկնածուներ է ընտրում Հայկազ Մեդրյանին, Խաչատուր Հարությունյանին և Հովհաննես Բաղդասարյանին:¹⁰³ Այդ նույն նիստում Պարսամ Ասատրյանը զեկուցում է կուլտուր-արշավանքի կազմակերպման և մամուլի լիազորի ընտրության մասին: Նա ընդգծում է, որ պետք է գյուղում առաջ մղել կուլտուրական հեղափոխությունը: Հենց նա էլ ընտրվում է մամուլի լիազոր: Վավերագրերը հաստատում են, որ կոմբջիջը դեկտեմբերի 30-ին լսում է գյուղխորհրդի վերընտրական հանձնաժողովի նախագահ Պարսամ Ասատրյանի զեկուցումը վերընտրական հանձնաժողովի մասին:¹⁰⁴ Նա ընդգծում է, որ այդ հանձնաժողովը կազմվել է նոյեմբերի 1-ից, որի մեջ մտնում են 9 հոգի: Հանձնաժողովը ստուգել և եկել է այն եզրակացության, որ Ձորագյուղում խորհուրդ ընտրելու համար ծայրի իրավունք ունեն 1030 հոգի (526 արական, 511 իգական): Գյուղում կան ծայրագուրկներ: Ձայնագուրկ ծխերի թիվը հասնում է 13-ի: Նրանք ունեն 48

⁹⁶ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 1, թերթ 66:

⁹⁷ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 2, թերթ 1:

⁹⁸ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 2, թերթ 3:

⁹⁹ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 2, թերթ 5:

¹⁰⁰ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 2, թերթ 17:

¹⁰¹ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 2, թերթ 19:

¹⁰² ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 2, թերթ 20:

¹⁰³ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 2, թերթ 22:

¹⁰⁴ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 2, թերթ 23:

չունչ: Չայնագրկությունը որոշվել է ըստ հրահանգների: Բայց գյուղում կան մի քանի ծխեր, որոնք ևս կարող են ընկնել ձայնագրկների ցուցակում: Չայնագրկությունը որոշելիս պետք է հանդես բերել անաչառությամբ: Ըստ էության արտահայտվողներից Վաղարշակ Մանուկյանը հայտնում է, որ ձայնագրիկ կարող են լինել Գյուլար Հակոբյանը և Սահրադ Ֆահրադյանը: Այդ կարծիքը պաշտպանում է Արմենակ Պետրոսյանը: Ռուբեն Ղազարյանն առաջարկում է կուլակներ Արամ Խղաթյանին և Գյուլար Հակոբյանին դիտել ձայնագրիկներ: Ռուբեն Ղազարյանը և Արմենակ Պետրոսյանը ասում են, որ կոմբջիջում գաղտնապահություն չկա, փակ ժողովների որոշումները արագ տարածվում են կուլակների մեջ: Բջիջում առաջացել է խմբակցություն: Քանի որ մոտեցել են խորհրդի ընտրությունները, նրանք ձգտում են այդ ճանապարհով «պաշտոն խլել»:

Վավերագրերը¹⁰⁵ հաստատում են, որ գյուղխորհրդի ընտրություններից հետո Պարսամ Ասատրյանի փոխարեն գյուղխորհրդի նախագահի պաշտոնը ստանձնում է Խաչատուր Կիրակոսյանը:

Վավերագրերը հաստատում են նաև, որ 1929 թ. Չորագյուղում Արամայի Դոնոյանի փոխարեն դպրոցի վարիչ է աշխատում Գվիդոն Ղազարյանը: Փետրվարի 13-ին նա կոմբջիջին¹⁰⁶ գեկուցում է, որ դպրոցը քառամյա է և բոլոր 4 դասարաններն էլ գործում են: Նրանցում ընդգրկված են 150 աշակերտներ, որոնցից 11-ը աղջիկներ են: Առաջին դասարանում ընդունվել են նախ և առաջ չքավորների երեխաները: Աշկուն ունի 144 անդամ: Դրամագույնը կազմում է 44 ռ 90 կոպ.: Ըստ վավերագրերի տվյալների, փետրվարի 23-ի նիստում կոմբջիջը¹⁰⁷ պահանջում է կոոպերատիվի ապրանքները տրամադրել միայն կոոպերատիվի անդամներին: Կուլակները նրանցից բաժին չունեն: Չքավորները չպետք է կուլակների համար իրենց անունով նրանց ապրանքներ գնեն: Նիստի արձանագրությունը տեղեկացնում է, որ փայտերերի անդամավճարը չքավորների համար եղել է 10 ռ. (այն վճարել է ՓՕԿ-ը), քանի որ չքավորները փող չեն ունեցել, միջակների համար՝ 20 ռ, ունևորների համար՝ 30 ռ: Կոմբջիջը այդ նիստում կազմում է կոոպերատիվի աշխատանքները կազմակերպող հանձնաժողով հետևյալ կազմով.

Ա. Չքավորներ՝

1. Մեդյան Հայկազ, 2. Հակոբյան Համբարձում, 3. Ղազարյան Համբարձում, 4. Ղազարյան Ռուբեն, 5. Գորգեյան Գևորգ, 6. Սահակյան Հարութ, 7. Մուրադյան Խաչատուր, 8. Մխիթարյան Սարիբեկ, 9. Աբուխանյան

¹⁰⁵ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 3, թերթ 19, ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 3, թերթ 9:

¹⁰⁶ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 3, թերթ 1:

¹⁰⁷ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 3, թերթ 2:

Գվիդոն, Գորգեյան Գվիդոն, 11. Մուրադյան Իրան, 12. Թունեյան Հովհաննես (Ծոծե), 13. Ամրգատյան Գևորգ:

Բ. Կոմբջիջից, ԼԿԵՄ Բջիջից՝

1. Ղազարյան Ռուբեն, 2. Գալստյան Հովհաննես, 3. Մինասյան Արմենակ, 4. Խարզյան Վանուշ:

Թեկնածու՝

1. Ասատրյան Պարսամ, 2. Պետրոսյան Ասատուր Բաղդասարի:

Գ. Շրջանային լիազորներ՝

1. Պետրոսյան Արմենակ, 2. Հարությունյան Աբել, 3. Մանուկյան Սիրական, 4. Մանուկյան Վաղարշակ, 5. Ասատրյան Պարսամ, 6. Վարդանյան Բալե, 7. Մեյրանյան Խաչո, 8. Ղազարյան Հակոբ:

Խորհրդակցական ձայնով՝

Մինասյան Չոխրաբ:

Փաստաթղթերը¹⁰⁸ վկայում են, որ կոմբջիջը մարտի 12-ին կուսակցության մեջ որպես կուսբեկնածու ընդունում է Աբուխանյան Գվիդոնին և Հակոբյան Առաքելին: Կուսակցական փաստաթղթերը տեղեկացնում են, որ ապրիլի 17-ին կոմբջիջը քննարկում է կուսակցության գտնված և անկուսակցական մասսայի ուժեղացման հարցը: Կոմբջիջը արձանագրում է, որ կուսակցության շարքերի ամրապնդման համար պետք է գտել այն, ազատվել կուսակցությանը ոչ պիտանի մարդկանցից: Նրանց փոխարեն բաղադրակներից, չքավորներից, ազնիվ միջակներից արժանի, բանիմաց, գրագետ մարդկանց ընդունել կուսակցության շարքերը: Ամուր դաշինքի մեջ մտնել անկուսակցական մասսայի հետ, իհարկե, խոսքը կուլակների մասին չէ: Ապրիլի 27-ին կոմբջիջը քննարկում է կենտրոնի փակ նամակը,¹⁰⁹ որի մեջ ասվում է, թե ամուր կապ պետք է ստեղծել չքավորի և միջակի միջև: Գալիք միասնաբերի ժամանակ միջակին չպետք է շփոթել կուլակի հետ: Նույն նիստում քննարկվում է Պարսամ Ասատրյանի վրա եղած բողոքը, որի մեջ ասվում է, թե նրա տնտեսությունը պետք է համարել կուլակային, իսկ նրան էլ՝ կուլակ և գրկել ձայնի իրավունքից: Կոմբջիջը այդ բողոքը դիտում է քամբասանք, որի նպատակն է վարքաբեկել Պ. Ասատրյանին և գցել նրա հեղինակությունը:

Ըստ կուսակցական փաստաթղթերի, կոմբջիջը¹¹⁰ ապրիլի 1-ին կուսակցության մեջ որպես կուսբեկնածու ընդունում է հետևյալ կանանց.

¹⁰⁸ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 79, թերթ 2:

¹⁰⁹ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 79, թերթ 3:

¹¹⁰ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 79, թերթ 5:

1. Գազարյան Մագթաղին, 2. Մանուկյան Սրբուհուն, 3. Փոքեյան Նոյեմին, 4. Կիրակոսյան Գյոզաղին, 5. Մուրադյան Մարիամին, 6. Վարդանյան Կատարին:

Կոմբջիջի նույն նիստում ԼԿԵՄ անդամ են ընդունվում հետևյալ կանայք.

1. Գալստյան Մարգարիտը, 2. Մեերյան Համասփյուռը, 3. Կարոյան Մարնգյուլը, 4. Ասատրյան Փիրուզատը, 5. Հակոբյան Սիրանը, 6. Այվազյան Բավականը, 7. Հովհաննիսյան Օսանը:

Կոմբջիջի նույն նիստում քննարկվում է Խաչատուր Հարությունյանի բողոքը, թե Պարսամ Ասատրյանը իրեն հալածում է: Կոմբջիջը պաշտպանում է Պ. Ասատրյանին, որ նա վաղուց աշխատում է կոմբջիջում, բայց չի նկատվել, որ նա մարդ հալածող է:

Մայիսի 15-ի նիստի արձանագրությունը տեղեկացնում է, որ կոմբջիջը այդ օրը քննարկել է գավկոմի փակ նամակը,¹¹¹ որի մեջ ասված է, թե անհրաժեշտ է պայքար ծավալել ամեն տեսակի թեքումների, բամբասանքների, հարբեցողության, թղթախաղության, կրոնամոլության, զրպարտության, խուլիգանության դեմ: Պետք է ամուր կապ ստեղծել չքավորի ու միջակի միջև: Այդ նույն նիստում կոմբջիջը քննարկում է «Մանկար» թերթում Պարսամ Ասատրյանի մասին լույս տեսած քննադատական հոդվածը, և արձանագրում է, որ այն ճիշտ չէ, որ Պարսամը ազնիվ կոմունիստ է:

Կուսակցական փաստաթղթերը վկայում են, որ 1929 թ. հուլիսի 21-ին Չորագյուղում անցկացվում է կոմբջիջի գտում:¹¹² Չտման պահին կոմբջիջում կային վեց կոմունիստներ, որոնցից չորսը կուսանդամներ էին, իսկ 2-ը՝ կուսթեկնածուներ: Չտման ժամանակ երկու կուսթեկնածուներն էլ հեռացվում են կուսակցությունից: Դրանք են՝

1. Մինասյան Ջոհրաբ Սարգսի (կուսթեկնածու 1921 թ.),
2. Մանուկյան Սիրական Հարությունի (կուսթեկնածու 1925 թ.):

Ինչ վերաբերվում է կուսանդամներին, ապա նրանք բոլորն էլ մնում են կուսակցության մեջ: Դրանք են՝

1. Կիրակոսյան Խաչատուր Սարգսի (կուսանդամ 1925 թ.),
2. Գազարյան Ռուբեն Հարությունի (կուսանդամ 1927 թ.),
3. Ասատրյան Պարսամ Գևորգի (կուսանդամ 1925 թ.),
4. Պետրոսյան Արմենակ Հարությունի (կուսանդամ 1927 թ.):

Փաստորեն Չորագյուղի կոմբջիջի 1920 և 1921 թվականների հիմնադիրներից միայն մեկն է 1929 թ. գտումից հետո մնում կուսակցության շարքում:

¹¹¹ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 79, թերթ 7:

¹¹² ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 3, թերթ 19:

քերում (խոսքը Խաչատուր Կիրակոսյանի մասին է): Չորագյուղի կոմբջիջում գտումից հետո մնում են երեք կոմունիստներ (Արմենակ Պետրոսյանին չենք հաշվում, քանի որ նա օտար է): Այդ երեք կոմունիստների շուրջն էլ հետագայում համախմբվում է Չորագյուղի կուսակցական կազմակերպությունը, որը գյուղում ստեղծում է կալեկտիվ տնտեսություն: Սա կարելի է դիտել Չորագյուղի կուսակցական կազմակերպության ձևավորման ու զարգացման նոր փուլը՝ երկրորդ փուլը:

Չորագյուղի կոմբջիջի 1929 թ. հուլիսի 21-ի կուսակցական գտման եզրակացությունը,¹¹³ որը կազմվել է գտող հանձնաժողովի կողմից:

Բջիջը բաղկացած է 4 կուսանդամներից և երկու թեկնածուներից, որոնցից 1-ը ծառայող է, 3-ը՝ ունևոր, 2-ը՝ չքավոր:

Բջիջը բոլորովին բույլ է և չի ազդում գյուղացիների վրա, որից օգտվելով կուլակները ստեղծում են թեքում կուսակցականների, կոմունիստականների և գյուղացիական տարբեր շերտերի միջև:

Չքավորները և միջակները անկազմակերպ են, նրանք չունեն պարզ պատկերացում մեր քաղաքականության մասին, որ տանում է կուսակցությունը գյուղում: Այնտեղ չկա ոչ մի կոլեկտիվ կազմակերպություն, և այդ ուղղությամբ աշխատանք չի գնում: Մի քանի կուսակցականներ ընթացիկ 2-4 տարում կառուցել են տուն, գնել են տասնյակ անասուններ: Դա տեսնելով գյուղացիները գաղտնի ձևով թեքվում են առանձին կոմունիստների կողմ: Վերոյիշյալ կուսակցականները աշխատել են կոուպերատիվում: Նրանք բաժանել են ցորենը գյուղացիներին բարձր տոկոսով: Նրանցից մեկը կորցրել է իր տեղը և ձգտում է վարկաբեկել պատասխանատու առանձին աշխատողներին, նրանց վրա գրում է բողոքագիր, մեղադրում աջ թեքման մեջ: Բջիջում չկա խմբակցություն, բայց Պարսամ Ասատրյանը փորձում է վերցնել իր ազդեցության տակ կուսակցականներին, գյուղացիներին և վերջին հաշվով տալ խմբակցության տեսք: Դա հայտնի դարձավ բջիջը զտելու ժամանակ, երբ ամբողջ գյուղացիները, հակառակ կոմերիտական ակտիվի, ցուցադրաբար պաշտպանում էին մի կուսակցությանը: Կուսակցության հիմնադիր կոմիտեն անորոշության մեջ է, լինում են դեպքեր, երբ նա ստուգում է կոմունիստի ունեցվածքը, որպեսզի պարզի, թե որքանով ճիշտ է այս կամ այն բողոքագիրը, և ստուգման արդյունքները փոխանցում է ստուգող հանձնաժողովին, բայց այն չի համապատասխանում իրականությանը:

Հանձնաժողովի եզրակացությունը հետևյալն է՝

1. Մոբիլիացիայի կարգով ուղարկել գյուղ, թեկուզ ժամանակավոր աշխատանքի, մի կազմակերպված ընկերոջ, 2. աշնանը բացել շրջիկ դպրոց, 3. Աքամխանի հիմնադիր կոմիտեից ամրացնել մի ընկերոջ Չորագյուղի բջիջին, 4. կուսակցության մեջ ընդունել ակտիվ կոմսոմոլների, բարակների և չքավորների:

¹¹³ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 3, թերթ 3:

Հոկտեմբերի 25-ի նիստի արձանագրությունը տեղեկացնում է, որ կոմբջիջում գոյություն ունի խմբակցություն,¹¹⁴ որի դեմ չի կարող պայքարել կոմբջիջի քարտուղար Ռուբեն Ղազարյանը: Նխտը Ռուբեն Ղազարյանի փոխարեն կոմբջիջի քարտուղար է ընտրում Պարսամ Ասատրյանին: Կոմբջիջի նոյեմբերի 17-ի նիստի արձանագրությունը վկայում է, որ գյուղխորհրդի նախագահ¹¹⁵ Խաչատուր Կիրակոսյանը ձգտել է լավ աշխատել, իսկ գյուղխորհուրդը չի աջակցել նրան: Թեև այդպես է եղել վիճակը, բայց գյուղում զարմանազանը լավ է կազմակերպվել:

Ըստ վավերագրերի,¹¹⁶ 1929–30 ուս. տարում Չորագյուղի դպրոցի 4 դասարաններում սովորում էին 160 աշակերտներ, որոնց զգալի մասը չքավորների երեխաներ էին: Որպեսզի նրանց ուսումնառությունը հաջող ընթանար, գյուղի ՓԼԿ-ը պարտավորվել է նրանց օգնել դրամով: Ըստ նույն վավերագրերի, նոյեմբերի 29-ին Չորագյուղի ՓՕԿ-ի նախագահն էր Վաղարշակ Մանուկյանը: Նա աշխատում էր նաև օգնություն ցույց տալ չքավորներին, ապա ավելացած գումարը դնել շրջանառության մեջ: Նույն փաստաթղթերը հաստատում են, որ նոյեմբերի 29-ին կոմբջիջը Սարիբեկ Ոսկանյանին, որը բատրակ էր, կուսակցությունից փոխադրում է կուսանդամ, իսկ Սարիբեկ Աբրահամյանին ընդունում է կուսբեկնաձու: Այդ նույն նիստով կոմբջիջը որոշում է կազմակերպել ռադիոտեխնիկ խմբակ, որի կազմում ընտրվում են Ասատուր Կիրակոսյանը, Խաչատուր Հակոբյանը և Սարիբեկ Ոսկանյանը:

Ամրապնդելով սոցիալիստական կարգերը երկրում, ԽՍՀՄ-ը ձեռնամուխ է լինում սոցիալիզմի կառուցմանը: Այդ նպատակով անհատական, մասնավոր տնտեսությունների փոխարեն անցնում է կոլեկտիվ տնտեսությունների (կոլխոզների) կառուցմանը:

§2. ԿՈԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

ՀամԿ(բ)Կ 15-րդ համագումարը, ինչպես ընդգծվել է նախորդ շարադրանքում, 1927 թ. վերջին որոշում է կայացնում գյուղատնտեսության կոլեկտիվացումը նախապատրաստելու մասին: Նրա որոշումների հիման վրա մշակված 1-ին հնգամյա պլանում (1929–1933 թթ.) նախատեսվում է Հայաստանում կոլտնտեսությունների մեջ ընդգրկել գյուղի տնտեսությունների 17%-ը (ԽՍՀՄ-ում 20 %): Չբավարարվելով դրանով երկրի ղեկավար Ի.Վ. Ստալինը, կոլեկտիվացման տեմպերը բարձրացնելու նպատակով, 1929 թ. նոյեմբերին իր «Մեծ բեկնան տարին» հռչակածում հայտարարում է,

թե միջակ գյուղացին, որը գյուղացիության մեծամասնությունն է, շրջվել է դեպի կոլտնտեսությունները և կոլեկտիվացումը կարելի է ավարտել 1-ին հնգամյակի ընթացքում, մինչև 1933 թ.: Հետևելով կենտրոնին, կոլեկտիվացման ժամկետները սկսում են կրճատել Հայաստանի գավառային ու շրջանային կուսկազմակերպությունները: 1929 թ. դեկտեմբերից մինչև 1930 թ. փետրվար ամիսը համատարած կոլեկտիվացում է անցկացվում Երևանի ամբողջ գավառում, Լեռնիկանի և Լոռու գավառների մեծ մասում և մյուս գավառների առանձին շրջաններում: Եթե նեպ-ի ժամանակաշրջանում խնդիր էր դրվել՝ հեմվել չքավոր գյուղացիության վրա, ամուր դաշինք կնքել միջակի հետ և պայքարել կուլակության դեմ, ապա կոլեկտիվացման ժամանակաշրջանում կիրառվում է կուլակությունը որպես դասակարգ վերացնելու քաղաքականությունը: Այդ քաղաքականությունն իրականացնելու համար գործադրվում են բազմաթիվ մեթոդներ: Դրանցից է սոցիալիզմին բնորոշ մարդու կողմից մարդու շահագործումը վերացնելու նպատակով կուլակային տնտեսություններն իրենց հիմնական աշխատողներից՝ բատրակներից ու չքավորներից զրկելը: Իրենց այդ հիմնական աշխատողներից զրկվելով, կուլակային տնտեսությունները հայտնվում են կաթվածահար վիճակում: Կուլակությունը որպես դասակարգ վերացնելու մեթոդներից էր նրա վրա պետական բարձր հարկեր և մեծ չափերի հասնող մթերումների պլան դնելը: Կուլակների առջև կանգնում է հետևյալ երկրորդանքը՝ կան պայքարի դուրս գալ պետության դեմ, կան թե մտնել կոլտնտեսություն: Պայքարի ճանապարհը լի էր մահապատիժներով, տաժանակիր բանտերով ու քարտրնեթով: Այդ փորձն արվել է ու անցել ապարդյուն: Ստիպված նրանք բռնում են կոլտնտեսություն մտնելու ճանապարհը՝ իրենց սերմացուն, անասունները, գյուղգործիքները և հողատարածությունները միացնելով կոլտնտեսությանը: Ահա և այս ճանապարհով կուլակությունը որպես դասակարգ վերացվում է կարճ ժամանակից հետո:

Հայաստանի 28 շրջաններից ամենից առաջ կոլեկտիվացումը ավարտվում է Արմավիրի շրջանում (1931 թ.): 1932 թ. կոլեկտիվացումը ավարտվում է Մեղրիում, 1934 թ.՝ Գորիսում, Ղափանում (Կապան) և Արտաշատում, 1935 թ.՝ ևս 18 շրջաններում, 1936–1937 թթ.՝ մնացած 5 շրջաններում: 1930–ական թվականների վերջին հանրապետության ավելի քան 1000 կոլտնտեսություններում ընդգրկվում են շուրջ 180.000 գյուղացիական տնտեսություններ:

Չորագյուղում կոլեկտիվ տնտեսության կազմավորումը սկսվել է 1931 թ. սկզբից: Կուսակցական կազմակերպության 1931 թ. փետրվարի 12-ի նիստում¹ գյուղխորհրդի նախագահ Վաղարշակ Մանուկյանը, որն այդ պաշտոնը զբաղեցնում էր դեռևս 1930 թ. օգոստոս ամսից, իր հաշվետու զեկուցման մեջ ասում է, թե մեր գյուղում հիմնադրվել է կոլեկտիվ տնտեսություն, բայց գյուղխորհրդի և կոմբջիջի անդամները չեն մտնում նրա մեջ: Հարկավոր է նրանց շրջանում բացատրական աշխատանք ծավալել, որպեսզի նրանք ա-

¹¹⁴ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 3, թերթ 3:

¹¹⁵ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 3, թերթ 9:

¹¹⁶ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 3, թերթ 11:

¹ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 4, թերթ 2:

ռաջինը ներգրավվեն կոլեկտիվ տնտեսության մեջ: Նա իր զեկուցման մեջ ասում է նաև, որ գյուղին տրված 3000 ռ. փոխառությունը իրացվել է 100 %-ով, իսկ մթերումների (հաց, բուրդ, յուղ, պանիր, միս, կաթ, կարտոֆիլ) սլյանը դեռ չի կատարվել: Ջեկուցման շուրջ արտահայտվում են Գվիդոն Ղազարյանը (դավար) և Սիմոն Գրիգորյանը (կոմբիջի քարտուղար) ու պաշտպանում զեկուցման թեզիսները: Այդ նիստում որպես թեկնածու կուսակցության շարքեր են ընդունվում Գրիգոր Պետրոսյանը (բատրակ), Յուլի Գալստյանը (կոմերիտական), Գրիգոր Բազեյանը (բատրակ), Արուս Դեղոյանը (չքավոր կին) և Աստղիկ Ասատրյանը (միջակ, կոմերիտական): Կուսակցական կազմակերպության փետրվարի 25-ի նիստում² կուսարջկոմի ներկայացուցիչ Մուրադ Մանուկյանն իր զեկուցման մեջ ասում է, որ Չորագյուղում կոլտնտեսային շարժումը տվել է իր պտուղները, քանի որ մի շարք ընտանիքներ արդեն ներգրավվել են կոլտնտեսության մեջ: Նա նաև ընդգծում է, որ գարնանացանի նախապատրաստման հետ կապված կան թերություններ՝ բացակայում է հարվածայինների սոցմբցումը, ըստ թաղամասերի ստեղծված բրիգադները բավարար չեն մասսայականացնում կոլտնտեսային շարժումը, դեռ չի գտնվել սերմացուն, չեն վերանբերվել գյուղգործիքները: Կուսակցական կազմակերպության մարտի 5-ի նիստում՝ կոմբիջի քարտուղար Սիմոն Գրիգորյանն իր հաշվետու զեկուցման մեջ պահանջում է հոգատար վերաբերմունք ցույց տալ կոլտնտեսության մեջ մտած մարդկանց՝ կոլտնտեսականների նկատմամբ և պայքար ծավալել կոլտնտեսության վերելքի, այսինքն՝ նոր ընտանիքներ կոլտնտեսության մեջ ներգրավելու համար: Այդ նույն տեսակետը պաշտպանում են ելույթ ունեցող կոմունիստներ Հովհաննես Գալստյանը, Համբարձում Ղազարյանը, Սիրական Ռսկանյանը, Հովհաննես Բաղդասարյանը, Կարապետ Մանուկյանը, Խաչատուր Հակոբյանը, Պարսամ Ասատրյանը, Գվիդոն Նավասարդյանը և կուսարջկոմի ներկայացուցիչ Գեղամ Կարապետյանը: Կուսակցական կազմակերպության մարտի 13-ի նիստի արձանագրությունը³ տևելիկացնում է, որ կոլտնտեսության նախագահն է Պարսամ Ասատրյանը, որը մինչ այդ զբաղեցնում էր կոմբիջի աշխատանքներ ստուգող հանձնաժողովի նախագահի պաշտոնը: Կուսակցական կազմակերպության այդ նույն նիստին տված իր զեկուցման մեջ նա ասում է, որ կոլտնտեսության մեջ մտած անձինք կոլտնտեսության անդամ չեն համարվի, եթե 3 օրվա ընթացքում իրենց սերմացուն լրիվ չեն միացնի կոլտնտեսության սերմացուին: Կան կոմունիստներ և կոմերիտականներ, որոնք դեռ կոլտնտեսություն չեն մտել: Սինչևեռ կոլտնտեսության վերելքը ապահովելու համար նրանք բոլորը պետք է կոլտնտեսություն մտնեն: Անհրաժեշտ է անհապաղ անցկացնել հողատարածությունների չափում, որպեսզի պարզ լինի, թե որքան տարածու-

² ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 4, թերթ 3:

³ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 4, թերթ 9:

⁴ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 4, թերթ 4:

յան վրա է գարնանացան կատարվում: Պետք է վերանորոգել գոյի մեքենան և սերմացուն գտել 100 %-ով: Բրիգադների մեջ ուժեղացնել հարվածային սոցմբցումը: Ամրապնդել գյուղի կոոպերատիվ ընկերության և շրջանի սպառնողայի կապը, ավելացնել փայլավճարների գոյացումը: Ամուր դաշինք ստեղծել չքավորների և միջակների միջև, անհաշտ պայքար ծավալել կուլակների դեմ, որոնք աշխատում են իրենց կողմը գրավել թույլ կոմունիստներին, պառակտել կուսակցությունը ու վերականգնել իրենց սիրելի կարգերը: Պարսամ Ասատրյանը այդ ժամանակ նաև կոմբիջի քարտուղարն էր: 1931 թ. գարնանացանի ժամանակ կոլտնտեսության մեջ ընդգրկված էին ընդամենը 19 ընտանիքներ: Գարնանացանն անցնում է շատ հաջող: Գերակատարվում է ցորենի ցանքսի պլանը 23 հեկտարով (40 հեկտարի փոխարեն ցանվում է 63 հեկտար): Կատարվում է զարու ցանքսի պլանը (6 հեկտար): Գարնանացանի հաջողությունը նպաստում է կոլտնտեսության վերելքին: Մինչև մայիսի 21-ը կոլտնտեսություն մտած ընտանիքների թիվը հասնում է 65-ի: Կուսակցական կազմակերպության մայիսի 21-ի նիստում որոշում է կայացվում մինչև տարեվերջ գյուղի 450 ընտանիքների 25 %-ը, այսինքն՝ շուրջ 113 ընտանիքներ ներգրավել կոլտնտեսության մեջ: Սակայն այդ ժամանակ եղել են կոմունիստներ, որոնք խանգարել են կոլտնտեսության վերելքին: Օրինակ՝ Սաթենիկ Մխիթարյանը սկզբից մտնում է կոլտնտեսություն, իսկ հետո հրաժարվում է: Կոմունիստներից ոմանք կոլտնտեսություն մտած միջակներից 7-ին համարում են կուլակներ և արհեստական ձևով ստիպում են միջակ գյուղացիներին երես թեքել կոլտնտեսությունից:⁵ Կարմիր պարտիզան Վասակ Մովսիսյանը և կոմունիստ Ռուբեն Ղազարյանը սերտ կապի մեջ են կուլակների հետ: Վահրամ Կարագոյոյանը (Պողոսյան) կուսակցական ժողովում ասում է, որ եթե Ռուբեն Ղազարյանն իր սխալներից չհրաժարվի, ապա նրան պետք է հեռացնել կուսակցությունից: Կոլտնտեսություն մտած չքավորները չունեն ուտելու հաց և ստիպված իրենց հագուստն են վաճառում: Հարկավոր է նրանց վիճակը լավացնել, որպեսզի նրանք անվտանգությամբ չտրամադրվեն կոլտնտեսության ու սոցիալիզմի նկատմամբ:

Կոլտնտեսություն մտնելու կապակցությամբ տատանումներ են հանդես բերում նաև շարքային գյուղացիները:⁶ Օրինակ՝ նրանցից Մնաց Ռմբչատյանը, Ալեքսան Հակոբյանը, Գյուլաբ Հակոբյանը սկզբից դիմում են տալիս, որ կոլտնտեսություն կմտնեն, իսկ հետո հրաժարվում են: Կուսակցական կազմակերպության հունիսի 9-ի նիստում որոշում է կայացվում բացատրական աշխատանք տանել տատանվող տարրերի մեջ կոլտնտեսության ու սոցիալիզմի նշանակության մասին: Կուսակցական կազմակերպության այդ նույն նիստում պահանջվում է շրջգործկոմից սկսել դպրոցի նոր

⁵ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 4, թերթ 9:

⁶ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 5, թերթ 1:

չենքի կառուցումը, որի քարերը կտրված են և կանխավճար 400 ռ. արդեն տրվել է Նոր-Բայազետից եկած շարող վարպետներին:

Կուսակցական կազմակերպության սեպտեմբերի 4-ի նիստը⁷ գյուղ-խորհրդի նախագահ Վաղարշակ Մանուկյանին հեռացնում է աշխատանքից կոլտնտեսականների և մյուս գյուղացիների հետ կոպիտ վարվելու պատճառով, որոնք դրանից դրդված կարող էին երես թեքել կոլտնտեսությունից: Երջգործկոմը նրա փոխարեն գյուղխորհրդի նախագահ է նշանակում Հ. Էլոյանին:

Կուսակցական կազմակերպության նոյեմբերի 15-ի նիստը⁸ որոշում է կայացնում բաշխել կոլտնտեսության առաջին բերքը: Ստացվել էր բարձր բերք: Եթե աշխատանքի ընթացքում կիրառվել էր հարվածային սոցիալիստական մրցության մեթոդը, ապա բերքի բաշխման ժամանակ գործողության մեջ է դրվում գործավարձային սխեմներ՝ ով աշխատի, նա կստանա:

Պետությունը գյուղացիների վրա դնում է հարկերի և գյուղմթերքի պլան:⁹ Դա հիմնականում բաժին է հասնում անհատ տնտեսատերերին (կուլակներին, ունևորներին և այլն): Օրինակ՝ բրդի 99 %-ը վճարել են կուլակները և ունևորները, իսկ 1 %-ը՝ չքավորները, յուղի 95 %-ը վճարել են կուլակները և ունևորները, իսկ 5 %-ը չքավորները: Եթե կոլտնտեսականներին բաժին հասնող առանց այդ էլ քիչ քանակություն կազմող հարկի ու մթերումների շատ տեսակները կոլտնտեսությունն է վճարում, ապա անհատ տնտեսատերերը իրենք անձամբ են վճարում:

Հարկերի ու մթերումների չափը և դրանց վճարումների քանակը 1931 թ. նոյեմբերի 28-ի որոշմամբ:

ՀԱՐԿԵՐ

1. գյուղհարկը եղել է 8478 ռ., գանձվել է 8200 ռ.,
2. ինքնահարկը եղել է 3470 ռ., գանձվել է (անորոշ է),
3. փոխառությունը եղել է 2500 ռ., իրացվել է լրիվ, գանձվել է 2100 ռ.,
4. կոուպերատիվի անդամավճարները եղել են 550 ռ., գանձվել է 444 ռ.:

ՄԹԵՐՈՒՄՆԵՐ

1. բրդի պլանը եղել է 684 կգ, մթերվել է 354 կգ,
2. յուղի պլանը եղել է 528 կգ, մթերվել է 438 կգ,
3. հացամթերման պլանը եղել է 1700 փութ, մթերվել է 1700 փութ,
4. կտավատի պլանը եղել է 65 փութ, մթերվել է 35 փութ,
5. զանազան ճյուղերից գանձվել է 400 ռ.,
6. կարտոֆիլի պլանը եղել է 1660 փութ, բայց գյուղը կարտոֆիլ չի ցանել այդ ժամանակ և մթերումը չի կատարել:

⁷ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 5, թերթ 3:

⁸ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 4, թերթ 15:

⁹ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 4, թերթ 13:

Հարկերի ու գյուղմթերքների այս մեծ չափերից խուսափելու նպատակով ունևորները և կուլակները ամեն կերպ ուզում էին մտնել կոլտնտեսություն:

1932 թ. հունվարի սկզբից կոլտնտեսության նախագահ Պարսամ Ասատրյանը մեկնում է Երևանի մեկամյա կուսհամալսարան սովորելու: Նրա փոխարեն կուսակցական կազմակերպության հունվարի 14-ի նիստում գյուղական խորհրդի նախագահ Խաչատուր Հակոբյանը կոլտնտեսության նոր նախագահի թեկնածու է առաջադրում Վաղարշակ Մանուկյանին, որը վեց ամիս առաջ հեռացվել էր գյուղխորհրդի նախագահի պաշտոնից՝ կոլտնտեսականների և մյուս գյուղացիների հետ կոպիտ վարվելու պատճառով: Կոմբջիջը նրա թեկնածությունը հաստատում է միաձայն, և նա դառնում է կոլտնտեսության նախագահ:¹⁰ Նա Պարսամ Ասատրյանի փոխարեն ընտրվում է նաև Կոմբջիջի քարտուղար:¹¹ Իր ելույթում Վ. Մանուկյանը կուսակցական կազմակերպության հունվարի 14-ի նիստում ասում է, որ պետք է նոր թափ հաղորդել կոլտնտեսության վերելքի ու անրապնդման գործին: Դրա համար պետք է ակտիվ գործողության մեջ դնել գյուղում ստեղծված թաղամասային 4 բրիգադների ուժերը, նրանց միջոցով ծանոթացնել գյուղի բնակչությանը կոլտնտեսություն ստեղծելու ձևերին, մեթոդներին, խնդիրներին ու նպատակներին, կոչ անել գյուղացիներին նպաստելու կոլտնտեսության վերելքին ու անրապնդմանը: Գյուղում կոուպերացիան զարգացնելու նպատակով պետք է ազատվել Նոր-Բայազետի հացառի ճյուղի գործակատար Հայրապետ Մշեցյանից, որը չարչիությամբ է զբաղվում՝ իր ուզած գներով է ապրանքները վաճառում գյուղացիների վրա:

Կուսակցական կազմակերպության հունվարի 18-ի և փետրվարի 21-ի արձանագրությունների սովյակները վկայում են, որ եթե 1931 թ. կոլտնտեսություն են մտել ընդամենը 60 ընտանիքներ, ապա 1932 թ. հունվարի 18-ին¹² դրանց թիվը հասել է 203-ի, իսկ փետրվարի 21-ին՝ 221-ի:¹³ Դրանցից 70-ը չքավորներ են: Եթե չքավորները սերմացու չեն ունեցել, որ միացնեն կոլտնտեսության սերմացուին, ապա մյուսներից 114 միջակ ընտանիքներ կամավոր կերպով իրենց սերմացուն միացրել են կոլտնտեսության սերմացուին, որը կազմել է 600 փութ ցորեն և 500 փութ գարի: Կոլտնտեսության նախագահ Վաղարշակ Մանուկյանը պահանջում է, որ մնացած գյուղացիները պետք է իրենց սերմացուն միացնեն: Նա նաև կուսակցական կազմակերպության հունվարի 18-ի նիստին հայտնում է, որ կոլտնտեսություն մտածների մեջ հայտնաբերվել են նոր կուլակներ: Դրանք են՝ Բալո Բարսեղյանը և Ալեքսան Հակոբյանը, որոնցից 1-ինը ունի 5680 ռուբլու ունեցվածք, իսկ 2-րդը՝ 6800 ռուբլու (1-ինի ընտանիքը բաղկացած է

¹⁰ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 6, թերթ 1:

¹¹ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 6, թերթ 20:

¹² ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 6, թերթ 2:

¹³ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 6, թերթ 9:

ելի 3 անձից, իսկ 2-րդինը՝ 8): Պետք է նոր կուլակներ հայտնաբերել և դրանց դուրս բջիլ կոլտնտեսությունից, քանի որ նրանք կոլտնտեսություն են մտել, որպեսզի բողոքեն իրենց կուլակ լինելը և ազատվեն բարձր հարկերից ու տուրքերից:

Գվիդոն Ղազարյանի ազատվելուց հետո 1931 թ. սեպտեմբերից դպվար է աշխատում Գալուստ Գրիգորյանը (Ն. Գետաշեն գյուղից): Հունվարի 24-ին նա կուսակցական կազմակերպության նիստին¹⁴ գեկուցում է, որ դպրոցում նվաճումներ կան՝ կենսագործվում է պարտուսը, որի հետևանքով դպրոցում բացվել են 13 խմբեր: Ուսման վիճակը լավ է: Մակայն դպրոցը չունի հարմարավետ շենք, գույք, մասնավորապես վառելիք ու վառարաններ, և ցրտի պատճառով հաճախումները լավ չեն: Ուսուցիչները կտրված են հասարակությունից: Ուսուցիչների միջև կա խռովություն: Գյուղում գործում են նաև 12 լիկլայաններ, որոնց պարապմունքները նույնպես հաջող են ընթանում: Այդ նույն նիստը որպես անդամ կուսակցության շարքեր է ընդունում Հովհաննես Բաղդասարյանին, Ասատուր Կիրակոսյանին, Կարապետ Մանուկյանին, Գարեգին Մուրադյանին, Գվիդոն Մինասյանին, Մագբաղ Ղազարյանին և Ռուշան Մանուկյանին:

Փետրվարի 2-ին կուսընկերների ներկայացուցիչ Հակոբ Դավեյանը¹⁵ կուսակցական ժողովում առաջարկում է ոչ միայն կոլտնտեսությանը միացնել կոլտնտեսականների սերմացուները, այլև նրանց անասունները: Այդ նպատակով նա առաջարկում է քաղամասային բրիգադներին զուգահեռ ստեղծել անասնապահության հետ կապված երկու բրիգադներ: Ժողովը հավանություն է տալիս շրջկոմի ներկայացուցչի գեկուցմանը և ստեղծում այդ երկու բրիգադները: Դրանցից առաջինի կազմում ժողովը ընտրում է Սիրական Ոսկանյանին, Կարապետ Հակոբյանին և Հովհաննես Բաղդասարյանին, իսկ երկրորդի կազմում՝ Կարապետ Մանուկյանին, Գարեգին Մուրադյանին և Մագբաղ Ղազարյանին: Փետրվարի 21-ին կուսակցական կազմակերպության նիստը անցկացնում է կոլտնտեսության վարչության, վերստուգիչ հանձնաժողովի կուլտ-կենցաղային հանձնաժողովի, շրջանային համագումարի պատգամավորների և կոլտնտեսության նախագահի ընտրություններ:¹⁶ Ընդ որում, կուլվարչության անդամներ են ընտրվում Վաղարշակ Մանուկյանը, Ասատուր Կիրակոսյանը, Համբարձում Ղազարյանը, Արշակ Ամիրխանյանը, Սիրական Ոսկանյանը, Ռուշան Մանուկյանը, Խաչատուր Կիրակոսյանը, Մագբաղ Ղազարյանը, Խաչատուր Հակոբյանը, իսկ անդամության թեկնածուներ են ընտրվում Կարապետ Հակոբյանը և Կարապետ Մանուկյանը: Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ են ընտրվում Գրիգոր Ասատրյանը, Հովհաննես Բաղդասարյանը և Յուրակ Փոթեյանը: Կուլտ-կենցաղային հանձնաժողովի կազմում են ընտրվում Գա-

լուստ Գրիգորյանը, Միխայել Բեյանը և Հայկարամ Գրիգորյանը: Շրջանային համագումարի պատգամավորներ են ընտրվում Վաղարշակ Մանուկյանը, Հակոբ Դավեյանը, Խաչատուր Կիրակոսյանը, Գեղամ Խազեյանը, Ասատուր Կիրակոսյանը, Գրիգոր Ասատրյանը, Կարապետ Հակոբյանը, Հակոբ Կիրակոսյանը, Հայկ Սիմոնյանը, Ջոհրաբ Մինասյանը և Բարսեղ Մովսիսյանը: Կոլտնտեսության նախագահ է ընտրվում Վաղարշակ Մանուկյանը, հաշվապահ՝ Ռուշան Մանուկյանը, գործավար՝ Համբարձում Ղազարյանը:

Մայիսի 20-ին գյուղխորհրդի նախագահ Խաչատուր Հակոբյանը¹⁷ 5 ամիս աշխատելուց հետո իր դիմումի համաձայն ազատվում է աշխատանքից: Նրա փոխարեն կուսակցական ժողովը գյուղխորհրդի նախագահ է ընտրում Արմենակ Պետրոսյանին (Ն. Գետաշեն գյուղից): Ժողովում ելույթ են ունենում Վաղարշակ Մանուկյանը, Սիրական Ոսկանյանը և Կարապետ Մանուկյանը: Նրանք պաշտպանում են Ա. Պետրոսյանի թեկնածությունը:

Մայիսի 28-ին կուսակցական կազմակերպությունը¹⁸ որոշում է պաշտոնից զրկել կուսակցականներին և նրանց ուղարկել դաշտ աշխատանքի, իսկ նրանց պաշտոնները հանձնել անկուսակցականներին: Այսպես՝ 1) պանրագործարանի վարիչ Մարիթեկ Ոսկանյանի փոխարեն նշանակվում է Արսեն Դավթյանը, 2) կոտայերատիլի գործակատար Համբարձում Ղազարյանի փոխարեն նշանակվում է Գեղամ Գրիգորյանը, 3) կաթ մթերող Կարապետ Մանուկյանի փոխարեն նշանակվում է Գրիգոր Բազեյանը, 4) պահեստապետ Ասատուր Կիրակոսյանի փոխարեն նշանակվում է Ջոհրաբ Մինասյանը, 5) Ջրաղացպան Գվիդոն Մինասյանի փոխարեն նշանակվում է Հայրիկ Մինասյանը, 6) հանդապան Գարեգին Մուրադյանի փոխարեն նշանակվում է Վաղարշակ Կիրակոսյանը: Իսկ դա շատ քանկ է նստում Վաղարշակ Մանուկյանի վրա: Այսպես՝ հունիսի 5-ին կոլտնտեսության նախագահ և կոմբեջի քարտուղար Վաղարշակ Մանուկյանը¹⁹ բանտից դիմում է գրում Մարտունու կուսընկերների քարտուղար Հ. Գասպարյանին, որ արդեն 32 օր է, ինչ ինքը բանտարկված է անմեղորեն: Նա խնդրում է իրեն երաշխավորությամբ բանտից բաց թողնել:

Չորագյուղի կուսակցական կազմակերպության հունիսի 12-ի նիստում²⁰ Հ. Ղազարյանը, Ս. Ոսկանյանը, Խ. Հակոբյանը և Խ. Կիրակոսյանը քննադատում են Վ. Մանուկյանին, որ նա կոլտնտեսությունից հեռացրել է մի շարք չքավորների, աշխատանքի է նշանակել նեպանների ու հակակոմունիստների, ոչ պրոլետարական հոգու տեր մարդկանց, հաշվապահ Ռուշան Մանուկյանի հետ Երևանում վաճառել են կոլտնտեսության

¹⁴ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 6, թերթ 4:

¹⁵ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 6, թերթ 6:

¹⁶ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 6, թերթ 9:

¹⁷ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 6, թերթ 18:

¹⁸ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 7, թերթ 12:

¹⁹ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 255, թերթ 7:

²⁰ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 6, թերթ 20:

անասունները և յուրացրել փողերը, գյուղգործիքներ գնելու անվան տակ փող են վերցրել կոլտնտեսությունից ու յուրացրել այն: Նիստը Վ. Մանուկյանին ազատում է կոմբիզիի քարտուղարի և կոլտնտեսության նախագահի պաշտոններից: Կուսակցական կազմակերպության օգոստոսի 23-ի նիստը կոմբիզիի քարտուղար և կոլտնտեսության նախագահ է ընտրում Համբարձում Ղազարյանին:²¹ Փաստորեն կոմունիստները Վաղարշակ Մանուկյանի որոշման դեմ ըմբոստում են և տապալում նրան:

Կուսակցական կազմակերպությունը²² սեպտեմբերի 12-ին որպես կուսանդամ իր շարքերն է ընդունում Ասատուր Կիրակոսյանին, իսկ որպես կուսբեկնաձու՝ Նիկոլա Սարգսյանին: Այդ նիստում կուսակցական կազմակերպությունը արձանագրում է, որ գյուղը գերակատարել է հացի մթերման պետական պլանը 8 ցենտներով՝ 30 ցենտների փոխարեն պետությանը հանձնելով 38 ցենտներ: Նիստում քննարկվում է Կենտկոմի փակ նամակը, որի շուրջ ելույթ ունեցող Սարիբեկ Ոսկանյանը առաջարկում է ուղղել կոլտնտեսության կազմակերպման ժամանակ թույլ տված սխալը և կոլտնտեսություն մտած նախկին ծայնագործներ Արսեն Դավթյանին, Սիրակյան Մովսիսյանին, Սարիբեկ Հարությունյանին, Պողոս Խղաթյանին, Սկո Մարտոսյանին, որոնցից Սարիբեկ Հարությունյանը եղել է քաղվարչության կալանավոր, դուրս քշել կոլտնտեսությունից, եթե նրանք չիրաժարվեն իրենց մասնավոր ունեցվածքից և այն չնիսցնեն կոլտնտեսությանը:

Հոկտեմբերի 10-ին Չորագյուղում վերջնականապես կազմակերպվում է անասնապահական ֆերմա, որին հանձնվում է 18 կթի կով, 4 երինջ, 10 հորթ, 2 եզ, 1 արաբական ցուլ և 1 ձի:²³

Հասարակական կազմակերպությունների դերը բարձրացնելու համար²⁴ կոմբիզիջը հոկտեմբերի 21-ին Հայկազ Մեդրյանին նշանակում է Պաջ-ավիաբիմ կազմակերպության նախագահ, իսկ Արամ Հակոբյանին՝ անասնապահների բջջի նախագահ: Այդ օրը Վահրամ Պողոսյանն ընտրվում է կուսբեկնաձու, Գվիդոն Մինասյանը և Հովհաննես Գալստյանը քննադատվում են կուսակցական ժողովներից բացակայելու, իսկ դավարի տեղակալ Միխայել Բլեյանը՝ ինքնագլուխ կարգով դպրոցից 10 օր բացակայելու համար: Հոկտեմբերի 19-ին կոմբիզիջը դիմում է կուսբջջկոմին, որ դպրոցի ուսուցիչ Գրիգոր Ասատրյանի փոխարեն գյուղից տեղափոխել Միխայել Բլեյանին:²⁵

Չորագյուղի կամֆրակցիայի դեկտեմբերի նիստը²⁶ քննարկում է Հակոբ Ֆահրադյանի, Միրակյան Մովսիսյանի, Հարութ Մովսիսյանի, Ալեքսան Ար-

րահամյանի դիմումները, որ իրենց տնտեսությունները ընկած են, իսկ իրենց ընտանիքները՝ բազմաշունչ, ուստի իրենց ազատել ունևորի կարգավիճակից: Նիստը բավարարում է նրանց պահանջը, թեև երկար ժամանակ շրջգործկոմը հաշվի չէր առնում այդ որոշումը:

1933 թ. սկզբին խիստ բուլանում է ոչ միայն կոլտնտեսության վերելքը, այլև նրա ամրապնդումը: 1932 թ. կոլտնտեսություն մտած 260 ընտանիքներից 98-ը բողոմում են կոլտնտեսությունը, որոնցից 40-ը չբավորներ էին, 30 ընտանիքներ գաղթում են գյուղից՝ բանջարանոց չունենալու պատճառով:²⁷ Բնական է, որ այս հարցում մեղավոր է եղել կոմբիզիջը, որ չի մտածել նրանց բանջարանոցով ապահովելու մասին:

Կուսակցական կազմակերպության հունվարի 9-ի նիստի արձանագրությունը²⁸ տեղեկացնում է, որ հացամթերման պլանը կատարվել է 100 %-ով, զանձվել է 70 ց խոտ, 51 ց դարման, 30 ց միս, բայց մենատնտեսներից դեռ չի զանձվել սերմացուն: Գյուղում կարգ ու կանոն հաստատելու նպատակով հունվարի 24-ին ստեղծվում է 7 հոգուց բաղկացած շրջանի դատախազին օժանդակող խմբակ,²⁹ որի մեջ կոմբիզիջը ներգրավում է հետևյալ մարդկանց՝ 1) Ասատուր Կիրակոսյանին, 2) Սիրակյան Ոսկանյանին, 3) Վահրամ Մկրտչյանին, 4) Մազբաղ Ղազարյանին, 5) Ավետիս Ծարոյանին, 6) Միսակ Դուկասյանին, 7) Արմենակ Խաչատրյանին:

Կոմբիզիջը մերժում է Հայրիկ Խղաթյանի դիմումը կոլտնտեսություն մտնելու վերաբերյալ, քանի որ նա եղել էր գլավու որդի:³⁰ Կոմբիզիջը քննում է Գրիգոր Աբրահամյանի բողոքը գյուղխորհրդի նախագահ Արմենակ Պետրոսյանի նկատմամբ և մերժում այն:³¹ Կոմբիզիջը փետրվարի 20-ի նիստում Գուլաբ Հակոբյանին, Մակար, Հարութ և Սիրակյան Մովսիսյաններին, Համազար Մանուկյանին և Սկո Մարտոսյանին որակավորում է որպես նախկին կուլակներ և պահանջում նրանց հեռացնել կոլտնտեսությունից, քանի որ քայքայում են նրա հիմքերը:³²

Կուսակցությունը 1933 թ. նախապատրաստական աշխատանքներ է տանում իր գտման, իր շարքերից տատանվող և անսկզբունքային կոմունիստներին դուրս քշելու համար: Այն, իհարկե, իրականացվում է հետագայում՝ 1935 թ.: Չորագյուղի կոմբիզիջը, որի քարտուղարն էր Հայկազ Մեդրյանը, անդրադառնում է այդ հարցին մարտի 29-ին: Այդ հարցին հավանություն են տալիս ինչպես կոմունիստներ Վ. Ղազարյանը,

²¹ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 6, թերթ 22:

²² ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 6, թերթ 24:

²³ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 6, թերթ 39:

²⁴ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 6, թերթ 40:

²⁵ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 255, թերթ 8:

²⁶ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 255, թերթ 10:

²⁷ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 9, թերթ 6:

²⁸ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 9, թերթ 3:

²⁹ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 9, թերթ 6:

³⁰ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 9, թերթ 3:

³¹ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 9, թերթ 6:

³² ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 9, թերթ 16:

Խ. Հակոբյանը, Ա. Պետրոսյանը, այնպես էլ անկուսակցականներ Արշակ Հակոբյանն ու Աղևկ Աղեկյանը:³³

Մարտի 18-ին կոմբջիջի քարտուղար է ընտրվում Կարապետ Մանուկյանը: Նա հաջորդում է Հայկազ Մեռյանին, որն այդ պաշտոնը գրադեցնում էր հունվար ամսից:³⁴ Թեև գյուղն ուներ որակյալ հողեր, բայց այդ ժամանակ չունեին անհրաժեշտ քանակությամբ սերմացու: Մարտի 30-ին նիստում³⁵ կոմբջիջը որոշում է կայացնում դիմել շրջանի ղեկավար կազմակերպություններին՝ գյուղին 60 հեկտար ցանքսի համար սերմացուով օգնելու: Նիստը որոշում է կայացնում դիմել շրջանի համապատասխան կազմակերպություններին՝ բունաքիմիկատներ տրամադրել գյուղին՝ դաշտերի կրծողներին ոչնչացնելու նպատակով:

Մայիսի 30-ին կուսընկերներ, կաշառակերության պատճառով, աշխատանքից ազատում և կուսակցությունից հեռացնում է գյուղխորհրդի նախագահ Արմենակ Պետրոսյանին: Նրա փոխարեն գյուղխորհրդի նախագահ է նշանակում Խաչիկ Ալեքսանյանին: Կուսընկերների մույն նիստը աշխատանքից ազատում է կոմբջիջի քարտուղար Կարապետ Մանուկյանին: Նրա փոխարեն կոմբջիջի քարտուղար է նշանակում կոլտնտեսության նախագահ Համբարձում Ղազարյանին:³⁶

Սեպտեմբերի 13-ին կոմբջիջը³⁷ Համբարձում Ղազարյանի փոխարեն կոլտնտեսության նախագահ է ընտրում Պարսամ Ասատրյանին, որն ավարտել էր մեկամյա կուսհամալսարանը և հուլիսի 30-ից վերադարձել գյուղ: Կոմբջիջը որոշում է կայացնում Հ. Ղազարյանին գործուղել Նոր Բայազետի կուսդպրոց՝ սովորելու: Այդ պատճառով նրան ազատում է մահ կոմբջիջի քարտուղարի պարտականությունից: Պ. Ասատրյանը կոմբջիջի քարտուղարի պարտականությունները դնում է Կարապետ Մանուկյանի վրա: Կոմբջիջը աշխատանքից ազատում է մահ գյուղխորհրդի նախագահ Խաչիկ Ալեքսանյանին: Նրա փոխարեն գյուղխորհրդի նախագահ է ընտրվում հեղափոխական Ջոհրաբ Մյունասյանը: Բայց շուտով զգացվում է, որ նրա գրագիտությունը անբավարար է, նույնիսկ 10-ին կոմբջիջը աշխատանքից ազատում է նրան: Նրան փոխարինում է գրագետ Արամ Հակոբյանը:³⁸

Փաստորեն, եթե ռազմական կոմունիզմի և նեպ-ի ժամանակ մարդկանց պայքարը կրում էր զուտ դասակարգային բնույթ և այն մղվում էր հեղափոխականների ու հակահեղափոխականների միջև, ապա կոլեկտիվացման ժամանակ, երբ վերջինս ընդունում է համատարած բնույթ, այդ պայ-

քարը մղվում է գրագետների և անգրագետների միջև: Հաղթանակը, բնակահարար, ուղեկցել է գրագետներին:

Ղեկտնների 18-ին կոմբջիջը,³⁹ որը ուներ 15 և ավելի կոմունիստներ, ստեղծում է բյուրո, որի կազմում ընտրվում են Պ. Ասատրյանը, Կ. Մանուկյանը, Ս. Ոսկանյանը: Թեկնածուներ են ընտրվում Հ. Բաղդասարյանը և Հ. Մեռյանը: Կոմբջիջի այդ մույն նիստում շրջանի 9-րդ համագումարի պատգամավորներ են ընտրվում Արմենակ Բոքիկյանը (շրջանից), Պարսամ Ասատրյանը և Հովհաննես Բաղդասարյանը: Խորհրդակցական ծայնի իրավունքով ընտրվում է Կարապետ Մանուկյանը: Նիստում քննվում է կոմբջիջի քարտուղարի ընտրության հարցը: Կոմբջիջի քարտուղար է վերընտրվում Կարապետ Մանուկյանը: Կոմբջիջի ղեկտնների 18-ի երկրորդ նիստի արձանագրությունը⁴⁰ տեղեկացնում է, որ 1933 թ. ընթացքում նկատվել է նորից առաջխաղացում կոլտնտեսության վերելքի գործում, քանի որ 14 նոր ընտանիքներ են ընդունվել կոլտնտեսության մեջ: Դրան զուգընթաց սուր պայքար է մղվել կուլակային տարրերի դեմ, և նրանք դուրս են քշվել կոլտնտեսությունից: Կոմբջիջի այդ մույն նիստում քննվում է Վաղարշակ Մանուկյանի դիմումը՝ իրեն կուսակցության շարքեր վերընտրելու կապակցությամբ: Ելույթ ունեցողներ Հ. Ղազարյանը, Գ. Ասատրյանը, Պ. Ասատրյանը, Ս. Ոսկանյանը, Հ. Բաղդասարյանը և Ա. Հակոբյանը նշում են, որ Վ. Մանուկյանը կոլտնտեսության նախագահ եղած ժամանակ լավ է աշխատել: Նրա բերությունը այն է եղել, որ 4 ֆուտ ձեթ է վաճառել, փողը մոծել է հաշվապահություն և դրա համար նրան հեռացրել են կուսակցությունից: Կոմբջիջը որոշում է Վ. Մանուկյանին վերականգնել կուսակցության շարքեր:

Ակներև է, եթե ոչ ուրիշ, գոնե Վաղարշակ Մանուկյանի հարցում՝ կապված նրան գյուղխորհրդի նախագահի պաշտոնից ազատելու, կոլտնտեսության նախագահ ընտրելու, այդ պաշտոնից ազատելու, կուսակցությունից հեռացնելու և կուսակցության շարքերում վերականգնելու հետ, դրսևորվում է Չորագյուղի կուսակցական կազմակերպության այդ փուլի անսկզբունքայնությունը: Անշուշտ նման անսկզբունքայնություն այդ կազմակերպությունը հանդես է բերել իր քննարկած ուրիշ շատ հարցերի, այդ թվում ունևոր և կուլակային տարերին գնահատելու, կոլտնտեսությունից դուրս քշելու, նրանց նկատմամբ հալածանք կազմակերպելու կապակցությամբ (մի նիստում նրանց համարում են ունևոր ու կուլակ, որ քայքայում են կոլտնտեսության հիմքերը, իսկ մի այլ նիստում նրանց համարում են տնտեսապես ընկած և ազատում ունևորի կարգավիճակից):

1934 թ. թեև թույլ բայց, այնուամենայնիվ, շարունակվում է կոլտնտեսության վերելքը: Մինչև փետրվարի 3-ը կոլտնտեսություն են մտել 24 նոր ընտանիքներ, իսկ 7 ընտանիքներ էլ դիմում են տվել ընդունվելու համար:

³³ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 9, թերթ 20:

³⁴ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 9, թերթ 21:

³⁵ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 9, թերթ 22:

³⁶ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 9, թերթ 35:

³⁷ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 9, թերթ 45:

³⁸ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 9, թերթ 49:

³⁹ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 9, թերթ 61:

⁴⁰ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 9, թերթ 63-64:

Կոլտնտեսությունից հեռացված Սիրական Մովսիսյանը, Հակոբ Հակոբյանը, Արսեն Հակոբյանը, Հայրիկ Խղաթյանը դիմում են տվել նորից կոլտնտեսություն ընդունվելու համար: Նրանք մերժվում են բացի Հայրիկ Խղաթյանից, որին ընդունում են լավ աշխատանքի համար:⁴¹ Կոլտնտեսություն նոր մտած վերոհիշյալ 24 ընտանիքները միասին ունեցել են 75 հեկտար հողատարածություն (միջին մի ընտանիքին 3 հեկտար): Ոչ այդ ընտանիքներն են ունեցել սերմացու և ոչ էլ կոլտնտեսությունը: Կոմբոյիջը փետրվարի 22-ին որոշում է՝ դիմել շրջանի համապատասխան կազմակերպություններին՝ օգնել սերմացուով հիշյալ 75 հեկտարը ցանելու համար: Կոմբոյիջը մաս արձանագրում է, որ անասնապահությունը բարվոք վիճակում է՝ կեր կա, գոմեր կան (թեև մասնավորից են վերցվել), խնամքը լավ է: Լծի անասունների խնամքը, որը դրված էր դաշտավարական բրիգադների վրա, ավելի լավացնելու նպատակով պահանջվում է գոմապահներից քննել գոմերում, մաքրել գոմերը, ամիսը 2 անգամ վաճառել դրանք: Անասնապահական ֆերման, որի վարիչն էր Գարեգին Մուրադյանը, կաթը մշակում էր տեղում՝ գյուղի կաթգործարանում: Թեև կոլտնտեսությունը 1933 թ. 400 ռ. մոծել էր հողբաժնին, բայց դեռ սերգատ և կաթնամթերք մշակելու այլ գործիքներ չէր ստացել: ԼԿԵՄ բջիջը, որի քարտուղարն էր Գրիգոր Հարությունյանը, միշտ օգնում էր ֆերմայի աշխատողներին:⁴²

Կոմբոյիջի ներսում վաղուց գոյություն ունեցող հակասությունը դեռ շարունակվում էր, թեև այն հաճախ մղվում էր թաքուն, քողարկված ձևով: Կոմունիստներ Հ. Ղազարյանը և Վ. Մանուկյանը կոմբոյիջի քարտուղար Կ. Մանուկյանի մասին հողված են ուղարկում «ժողովրդային Հայաստան» օրաթերթին,⁴³ որ նա 1921 թ. փետրվարին դաշնակցականների կողմից կռվել է կոմունիստների դեմ Մարտունու շրջանի Երանոս գյուղում, վիրավորվել ոտքից, իսկ այժմ դեկավարում է կոմբոյիջը: Կուսակցական ժողովում այլ հողվածի նյութը քննելիս Հ. Ղազարյանը և Վ. Մանուկյանը վախենալով, թե անհարմար զգալով, հայտարարում են, որ իրենք տեղեկություն չունեն հողվածից: Կոմբոյիջը պաշտպանության տակ է վերցնում իր քարտուղարին, որ նա այն ժամանակ անչափահաս է եղել, գոռով բանակ է տարվել իր հիվանդ եղբոր փոխարեն և չի հասկացել այդ կռվի իմաստը: Կ. Մանուկյանը շարունակում է մնալ կոմբոյիջի քարտուղար:

Հեղափոխությունից հետո, ինչպես ասվել է նախորդ շարադրանքում, կուսակցությունը գյուղերում ստեղծել է կոմունիստական համակրողական խմբակներ, ուր իրենց դիմումով ընդունվում են գյուղի ակտիվ երիտասարդները, որոնցից առավել ակտիվիստները կարող են ընդունվել կուսակցության շարքեր: 1934 թ. մարտի 8-ին⁴⁴ և դեկտեմբերի 10-ին⁴⁵

Չորագյուղի կոմբոյիջը կոմունիստական համակրողական խմբակում ընդգրկում է Գեղամ Կիրակոսյանին, Մուշեղ Մախամյանին, Հակոբ Գալստյանին, Ավետիք Հակոբյանին, Աբգար Մանուկյանին, Մուրիկ Հակոբյանին, Գևորգ Սեդրյանին, Սարգիս Սողոմյանին, Աստղիկ Ասատրյանին, Հայրիկ Սարդարյանին:

Կուսակցությունը 2-րդ հնգամյակի (1934–1939 թթ.) պլանները կատարելու համար դիմում է փոխառությունների վաճառքի: 1934 թ. Չորագյուղին առաջարկվում է 3600 ռ. փոխառություն (1800 ռ. կոլտնտեսությանը, 1800 ռ. մասնավոր սեկտորին): Կոմբոյիջը կոչ է անում կարճ ժամանակում իրացնել դրանք, քանի որ դրանով գյուղացին խնայում է իր տնտեսած միջոցները, իսկ պետությունն էլ զարգացնում է երկրի տնտեսությունը:⁴⁶

1934 թ. հունիսի 25-ին Արամ Հակոբյանի փոխարեն գյուղխորհրդի նախագահ է նշանակվում Համբարձում Ղազարյանը:⁴⁷

Կոմբոյիջը, որպես սովորություն, միշտ պաշտպանել է իր անդամներին ոչ կոմունիստների քննադատությունից, թեև ուղիղ կոմունիստները լինեն հանցավոր: Այդպես կոմբոյիջը հունիսի 25-ին պաշտպանում է Սիրական Ոսկանյանին, որը ավերել էր գյուղի կարևոր հնագիտական հուշարձաններից մեկը՝ Շողագայի եկեղեցին և մեղադրում է Մամիկոն Խղաթյանին, որ այդ կապակցությամբ բողոքել էր Սիրական Ոսկանյանի դեմ:⁴⁸

Կոմբոյիջի երաշխավորմամբ Նիկեյա Սարգսյանը և Խաչիկ Հակոբյանը 1934 թ. սեպտեմբերին մեկնում են Նոր-Բայազետի երկամյա կուսակցական սովորելու:

Սեպտեմբերի 24-ից նախապատրաստվում է կոլտնտեսության 1934 թ. բերքի բաշխումը (բաշխվելու են թե՛ մթերքներ՝ հացահատիկ, պանիր, յուղ և այլն և թե՛ կանխիկ դրամ): Բերքի բաշխման հիմքում ընկած են եղել կոլտնտեսականների վաստակած աշխօրերը և ստեղծած մթերքներն ու կանխիկ դրամը: 1934 թ. սեպտեմբերի 24-ից գյուղում ստեղծվում են դաշտավարական 6 բրիգադներ, որոնցից 1-ինի բրիգադի էր նշանակվում Ս. Ոսկանյանը, 2-րդինը՝ Ա. Կիրակոսյանը, 3-րդինը՝ Հ. Բաղդասարյանը, 4-րդինը՝ Ս. Մելքոնյանը, 5-րդինը՝ Ա. Հակոբյանը, 6-րդինը՝ Վաղարշակ Կիրակոսյանը: Այդ ժամանակից ստեղծվում է նաև շինարարական բրիգադ, որը հիմք է դնում գյուղի գոմաշինությանը:⁴⁹

Կոմբոյիջի նոյեմբերի 12-ի արձանագրությունը⁵⁰ տեղեկացնում է, որ նոյեմբերի 14-ին տեղի են ունենալու գյուղխորհրդի ընտրությունները: Գյու-

⁴¹ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 11, թերթ 6:
⁴² ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 11, թերթ 8:
⁴³ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 11, թերթ 21:
⁴⁴ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 11, թերթ 25:

⁴⁵ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 11, թերթ 50–51:
⁴⁶ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 11, թերթ 30:
⁴⁷ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 11, թերթ 30:
⁴⁸ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 11, թերթ 30:
⁴⁹ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 11, թերթ 38:
⁵⁰ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 11, թերթ 48:

ղխորհրդի կազմի 80 %-ը պետք է ընտրվեն կոլտնտեսականները, 20 %-ը կոմունիստները և կոմերիտականները: Կոմբջիջը ընտրական հանձնաժողովի կազմում նախատեսվում է Գրիգոր Ասատրյանին, Գևորգ Սևերյանին և Զախրեկ Գրիգորյանին:⁵¹ Այդ ժամանակ Հ. Ղազարյանը թողել էր գյուղխորհրդի նախագահի պաշտոնը և սովորում էր Նոր Բայազետի կուղապրոցում: Նրա փոխարեն գյուղխորհրդի նախագահ է ընտրվում Ալեք Եղոյանը (Երանոս գյուղից):

Նոյեմբերի 18-ին կարմիր բանակից նոր գորացրված Գևորգ Սևերյանը նշանակվում է ֆերմայի վարիչ Գարեգին Մուրադյանի փոխարեն:⁵¹

1934 թ. սեպտեմբերից սկսած՝ Չորագյուղն ուներ 7-ամյա դպրոց: Դպրոցի դիրեկտոր Գալուստ Գրիգորյանը ղեկտնեմբերի 10-ին կոմբջիջի նիստում բողոքում է, որ դպրոցը չունի բավարար շենք և նյութատեխնիկական բազա: Կոլտնտեսության վերելքը և ամրապնդումը ապահովելու համար կոմբջիջը ղեկտնեմբերի 10-ին որոշում է կոլտնտեսություն նոր մտած ընտանիքներին ապահովել բանջարանոցով: Այդ նպատակով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում մտնում են Ալեք Եղոյանը, Սիրակյան Ոսկանյանը, Արշակ Հակոբյանը, Մանուկ Սողոյանը, Պարսամ Ասատրյանը, Ասատուր Կիրակոսյանը, Հովհաննես Բաղդասարյանը և Գեղամ Գրիգորյանը:⁵²

1935 թ. Չորագյուղի ընտանիքների թիվը հասել էր 421-ի, իսկ բնակիչների թիվը՝ 4048-ի: Բնակիչներից 1535-ը աշխատունակներ էին: Ընտանիքներից 326-ը ընդգրկվել էին կոլտնտեսության մեջ:⁵³ Մեծ աշխատանք էր տարվում կոլտնտեսության ամրապնդման և հետագա վերելքի ուղղությամբ: Հունվար և փետրվար ամիսներին կոլտնտեսություն են ընդունում⁵⁴ նախորդ տարիներին հեռացված հետևյալ անձնավորություններին՝ Աղիբեկ Հակոբյանին, Արսեն Հակոբյանին, Բալո Բարսեղյանին, Սիրակյան Մովսիսյանին, Գեղամ Աղեկյանին, Վարդան Հովսիկյանին, Խաչատուր Դավենյանին, Հակոբ Հակոբյանին: Դիմում տվողներից մերժվում է միայն Սևո Հակոբյանը (Մարդոյանը): Ուշադրություն է դարձվում գյուղի ակտիվ երիտասարդների վրա, որոնցից Արտաշ Մանուկյանին, Աղաբեկ Կարապետյանին և Մուշեղ Հակոբյանին ընդունում են կուսակցական համակրողական խմբակում: Դեռ հունվար ամսին կոմբջիջը պահանջում է գտել և ախտահանել սերմացուն, վերանորոգել գյուղգործիքները, շարունակել լծվող անասունների լավ խնամքը:

Կուսընկերները ուշադրություն է դարձնում կոմունիստների ու կոմերիտականների քաղաքացիական աշխատանքների կազմակերպման վրա:⁵⁵

⁵¹ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 11, թերթ 48:

⁵² ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 11, թերթ 50-51:

⁵³ ՀՀ ՆՊՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 4488, թերթ 114:

⁵⁴ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 12, թերթ 6, 15-16:

⁵⁵ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 12, թերթ 16:

Փետրվարի 7-ին կուսընկերների ներկայացուցիչ Ժիրայր Սիրոյանը կոմբջիջի նիստում զեկուցում է կարդում կուսակցության քաղաքացիական աշխատանքների մասին: Հարակից զեկուցումներով հանդես են գալիս Չորագյուղի ԼԿԵՄ ընթացիկ մոմենտի ուսուցման խմբավար Գալուստ Գրիգորյանը (դպրոցի դիրեկտոր), կոմերիտներից Կատարյանը (դպրոցի ուսուցիչ), կուսակցական քաղաքացիական կոլտնտեսության նախագահ: Ըստ Լուրյան, արտահայտվողները ասում են, որ պարապմունքներն անցնում են բովանդակալից, գրաֆիկով սահմանված օրերին, մասնակիցները կազմում են կոմսպեկտներ: Կոմբջիջի այդ նիստում մասնակցություն է կուսընկերների խորհրդակցության արդյունքները՝ կապված կոլտնտեսության վերելքի և զարնանացանի նախապատրաստման աշխատանքների հետ, որի մեջ ասվում է, թե այն մեծատնտեսները, ովքեր հարազատաբար կծառայեն կոլտնտեսությանը, ընդունել կոլտնտեսության մեջ: Կոմբջիջի նիստում քննվում է լուսբաժնի գրությունը դպրոցի ուսուցիչ Խրիմիկ Խղաթյանին ուրիշ գյուղ տեղափոխելու և նրա փոխարեն Արամյան Բզնունու Երանոսից Չորագյուղ փոխադրելու մասին: Կոմբջիջը որոշում է, որ Խ. Խղաթյանը լավ ուսուցիչ է ու որակյալ խմբավար, իսկ Ա. Բզնունին Երանոսում զբաղվել է ոչ լավ գործերով: Ուստի խնդրել լուսբաժնին փոխել իր որոշումը և Խ. Խղաթյանին թողնել Չորագյուղում աշխատելու:

Կոլտնտեսության վերելքը և ամրապնդումը ապահովելու, ինչպես նաև գյուղից բնակիչների արտագաղթը կանխելու համար կոմբջիջը⁵⁶ ապրիլի 10-ին որոշում է 30 որակյալ բանջարանոց տրամադրել յուրաքանչյուր ընտանիքին: Թույլատրել գյուղացիներին պահել 4-5 կով, 40 ոչխար, 2 մայր խոզ, անասնահամափակ քանակությամբ թռչուն, 20 փեթակ, 1 ձի և այլն: Բանջարանոցի հողը բաժանելու համար կազմվում է հանձնաժողով հետևյալ կազմով՝ Արամ Հակոբյան, Ասատուր Սիմոնյան, Սարգիս Սողոյան:

1935 թ. տրակտորը, շարքացանը և կալսիչը ՄՏԿ-ի միջոցով քափանցում են Չորագյուղ և հողագործության տեսակետից գյուղը դուրս է գալիս նահապետական վիճակից (կոլտնտեսությունը ՄՏԿ-ին, պայմանագրի համաձայն, վարձ է տալիս, իսկ ՄՏԿ-ի մեխանիզացիան ժամանակին կատարում է վարի, ցանքսի ու կալսման աշխատանքները):⁵⁷

Մարտի 20-ին աշխատանքից ազատվում է գյուղխորհրդի նախագահ Ալեք Եղոյանը՝ ուրիշ գյուղ աշխատանքի անցնելու պատճառով: Ապրիլի 27-ին նրա փոխարեն գյուղխորհրդի նախագահ է նշանակվում Ազիզ Չաքարյանը (օտար գյուղից):⁵⁸

⁵⁶ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 12, թերթ 25:

⁵⁷ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 12, թերթ 21, ՀՀ ՀՊՊՅԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 4488, թերթ 114:

⁵⁸ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 12, թերթ 23:

Ապրիլի 10-ին⁵⁹ ընտրվում է կոլվարչության նոր կազմ, որի մեջ են մտնում Պարսամ Ասատրյանը, Հովհաննես Բաղդասարյանը, Վաղարշակ Կիրակոսյանը, Կարապետ Մանուկյանը, Սիրական Ոսկանյանը, Մարիամ Մուրադյանը և Անուշ Գրիգորյանը: Ապրիլի 27-ին կոմբեջիյի նիստում քննվում է Մարտունու շրջանի դատախազությունից եկած գրությունը,⁶⁰ որի մեջ նշվում է, թե «Խորհրդային Հայաստան» օրաթերթի մի հոդվածում Սիրական Ոսկանյանը դիտվում է հնագիտական հուշարձան ոչնչացնող, որի համար նրա հարցը քննել և համապատասխան տուժի ենթարկել: Կոմբեջիյը նախկինի նման հովանավորության տակ է վերցնում իր կուսակցականին և արձանագրում, թե հոդվածը ճիշտ չէ:

1935 թ. կուսակցական փաստաթղթերը վերանայելու անվան տակ կուսգտում է անցկացվում միությունով մեկ: Դրանից հետո չի մնում նաև Չորագյուղի կոմբեջիյը, որը կուսակցությունից հեռացնում է Ռուբեն Ղազարյան և Դեդկանոս Ավդայանին՝ նրանցից առաջինին մեղադրելով անսկզբունքայնության, դաշնակցական Շուշեյան Հովհաննեսին 1929 թ. պաշտպանելու մեջ, իսկ երկրորդին՝ անգրագիտության ու թուլության, կուսակցական հանձնարարությունները չկատարելու մեջ:⁶¹

1935 թ. եղել է բարձր բերքի տարի:⁶² Կոլտնտեսականի մեկ աշխօրին հասել է 6,5 կգ հացահատիկ: Կոլտնտեսությունը ազատ գնման նպատակով պետությանը հանձնել է 100 գ հացահատիկ, իսկ կոլտնտեսականները՝ 200 գ: Կոլտնտեսականները իրենց աշխօրերի դիմաց որպես բերք ստացել են նաև յուղ, պանիր և այլ մթերքներ, ինչպես նաև կանխիկ դրամ:

1935 թ. սեպտեմբերից Գալուստ Գրիգորյանի փոխարեն դպրոցի դիրեկտոր է նշանակվում Երեմ Մուրադյանը⁶³ (Վերին Գետաշեն գյուղից): Կոմբեջիյի նոյեմբերի 22-ի նիստում նա զեկուցում է, որ գյուղխորհուրդը հոգ չի տարել դպրոցը վառելիքով ապահովելու ուղղությամբ, որի պատճառով հիմա դասարաններում ցուրտ է, աշակերտները բացակայում են, մաղումներ կան 1-ին և 2-րդ դասարաններում: Ուսուցիչները ապահովված չեն բնակարաններով: Այս հարցում ևս գյուղխորհուրդը մեղավոր է:

1936 թ. Չորագյուղը մեծ նվաճումների է հասնում կոլտնտեսության վերելքի ու ամրապնդման գործում: Գյուղի ղեկավարությունն այս անգամ աշխատում է կոլտնտեսությունում արմատավորել հարվածային սոցիալիստական մրցությունը կամ հարվածային ստախանովական շարժումը, որի նշանաբանն էր՝ պետական պլանների գերակատարումը: Չորագյուղում հարվածային ստախանովական շարժումը արմատավորելու համար ստեղծվում է ստախանովական շարժման տասնօրյակի միջոցառումը, որի

⁵⁹ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 12, թերթ 25:

⁶⁰ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 12, թերթ 27:

⁶¹ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 13, թերթ 29:

⁶² ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 13, թերթ 29:

⁶³ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 11, թերթ 39:

նպատակն էր տասնօրյակը մեկ բրիգադիները և բրիգադներին ամրացած կուսկազմակերպիչները զեկուցելին իրենց պլանների կատարման մասին:⁶⁴

Կոլտնտեսության սոցխատանքները բարձր տեմպերով առաջ մղելու նպատակով նոր թափ են հաղորդվում ազիտ-մասսայական աշխատանքների կազմակերպման լծակներին՝ ազիտխմբակներին, ինչպես նաև ընթերցողների ու զրույց անցկացնողների խմբակներին (խմբավորներ՝ Ազիզ Չաքարյան, Գրիգոր Հարությունյան, Պարսամ Ասատրյան, Համբարձում Ղազարյան, Գրիգոր Ասատրյան, Կարապետ Մանուկյան, Նիկոլա Սարգսյան, Խաչիկ Հակոբյան, որոնցից վերջին երկուսը նոր էին ավարտել երկամյա կուրսպոցը):⁶⁵

Չորագյուղում 1936 թ. կային շուրջ 380 անգրագետներ: Գյուղի ղեկավարությունը հասկանալով, որ գրագետ մարդկանց հետ ավելի նպատակահարմար է աշխատանք կազմակերպել կոլտնտեսությունում, մեծ ուշադրություն է դարձնում անգրագիտության վերացման վրա և ավելի է ակտիվացնում լիկկայանների գործունեությունը, որոնց թիվը այդ ժամանակ անցնում էր 10-ից: Թեև նրանց դասընթացները կազմակերպվում էին գյուղի օդաներում (Միմոն Գորոյանի օդայում, Փոթեյ այվանում, Մոսոյ օդայում, Կիրակոսի Արզումանի օդայում և այլն), բայց նրանցում պարապում էին որակյալ ուսուցիչներ: Գյուղխորհրդի նախագահ Ազիզ Չաքարյանից պահանջվում է առավել ուշադրություն դարձնել լիկկայանների կամ հանրակրթական դպրոցի աշխատանքների վրա:⁶⁶

1936 թ. լի էր քաղաքական իրադարձություններով: Կոմունիստական կուսակցությունը, Ի.Վ.Ստալինի ղեկավարությամբ ոգևորվելով գյուղատնտեսության կոլեկտիվացման հաղթանակներով, սկսում է պայքար ծավալել Տրոցկու, Բուխարինի, Ջինովկի, Կամենևի դեմ՝ պրոլետարական դիկտատուրայի, մի երկրում սոցիալիզմի կառուցման, դեմոկրատիայի ու խաղաղության հարցերի կապակցությամբ: Ի. Վ. Ստալինը, ոչ թե դիկտատիայով, այլ բռնությամբ հաղթելով նրանց, ստեղծում է իր անձի պաշտամունքը: Նա կոչ է անում միության բոլոր կուսակցական կազմակերպություններին՝ հայտնաբերել իրենց մոտ եղած օպորտունիստական այդ պարագլուխների հետևորդներին և հաշվեհարդար տեսնել նրանց նկատմամբ: Չորագյուղի կոմբեջիյը ուշիուշով հետևում է քաղաքական այդ պայքարին, իր նիստերում քննարկում այդ պայքարի մասին Մարտունու կուսբեջիյումի ուղարկած հանձնարարականները և ամբողջովին կողմ կանգնում Ի.Վ. Ստալինի պլատֆորմին: Անգամ Լ. Պ. Բերիայի կողմից Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի 1-ին քարտուղար Ա. Խանջյանի սպանությունը առանց այլևայության դիտվում է ինքնասպանություն, որն իրր առաջացել էր լիբերալիզմի, նացիոնալիզմի և դաշնակցական մտայնու-

⁶⁴ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 14, թերթ 1, 12:

⁶⁵ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 14, թերթ 12:

⁶⁶ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 14, թերթ 1, 3:

քյան պատճառով: Չորագյուղի կոմբջիջը կոչ է անում իր անդամներին բարձրացնել իրենց քաղաքական մակարդակը, որպեսզի զգոն լինեն իրենց շուրջ զանվոդ օպորտունիստական թափփուկների նկատմամբ:⁶⁷

Կոմունիստական կուսակցությունը գաղափարական-քաղաքական պայքարում իր հետագա հաղթանակներն ապահովելու, համար դպրոցն է դարձնում իր հենակետը: Հանուն դրա նա բարձրացնում է ուսուցիչների աշխատավարձը: Չորագյուղի կոմբջիջը անմիջապես արձագանքում է դրան և որոշում կայացնում այսուհետև առավել հոգատար վերաբերմունք ցույց տալ ուսուցիչների նկատմամբ:⁶⁸

Սեպտեմբերի 1-ին Կարապետ Մանուկյանի փոխարեն կոմբջիջի քարտուղար է ընտրվում Խաչատուր Հակոբյանը: Սեպտեմբերի սկզբից Երեն Մուրադյանի փոխարեն դպրոցի դիրեկտոր է դառնում Ազիզ Հակոբյանը (օտար գյուղից):⁶⁹

Գյուղխորհրդի աշխատանքները բարելավելու համար սեպտեմբերի 13-ին փոփոխություններ են կատարվում գյուղխորհրդի, շրջանային համագումարի պատգամավորների և գյուղխորհրդի ապարատի աշխատողների կազմում: Ընդ որում, խորհրդի կազմում ընտրվում են Ազիզ Չաքարյանը, Պարսամ Ասատրյանը, Խաչատուր Հակոբյանը, Համաս Մեդրյանը, Գրիգոր Կիրակոսյանը, Ասատուր Սիմոնյանը, Հակոբ Փոթեյանը, Գրիգոր Շահնազարյանը, Հարութ Մովսիսյանը: Թեկնածուներ են ընտրվում՝ Վահրամ Սկրտչյանը, Գարսևան Մեղքոնյանը, Ազիզ Հակոբյանը, Համբարձում Ղազարյանը, Ջեյրան Պողոսյանը, Ալմաստ Գալստյանը, Կիրակոս Վարդանյանը: Շրջանային համագումարի պատգամավորներ են ընտրվում՝ Ազիզ Չաքարյանը, Պարսամ Ասատրյանը, Խաչիկ Հակոբյանը, Ասատուր Կիրակոսյանը, Գրիգոր Կիրակոսյանը, Համաս Մեդրյանը, Ասատուր Սիմոնյանը, Բաղդասար Մանուկյանը: Գյուղխորհրդի ֆինանսական սեկցիայի նախագահ է ընտրվում Համբարձում Ղազարյանը, անասնապահական սեկցիայի նախագահ՝ Մարգիս Սողոյանը, կուլտ-սեկցիայի նախագահ՝ Ազիզ Հակոբյանը, անգրագիտության վերացման սեկցիայի նախագահ՝ Վահրամ Սկրտչյանը:⁷⁰

Կոմբջիջը իր կազմը թարմացնելու նպատակով ձգտում է ԼԿԵՄ կազմակերպությունից և կուսակցական համակրողների խմբակից առավել գրագետ երիտասարդների ընդունել իր շարքերը: Այդ նպատակով կոմբջիջը նոյեմբերի 11-ի նիստում լսում է ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար, Նոր-Բայազետի երկամյա կուսակցության նոր ավարտած Նիկոլա Մարգարյանի և կուսակցական համակրողների խմբակի ամրացած ընկեր Համբարձում Ղազարյանի զեկուցումը: Նրանք ասում են, որ կոմերիտականների և

համակրողների մեջ կան գրագետ երիտասարդներ, որոնք միաժամանակ աշխատանքի հարվածայիններ են: Դրանք արժանի են, որ ընդունվեն կուսակցության շարքեր: Կոմբջիջը որոշում է, թե այդպիսի երիտասարդները կուսակցության շարքերում տեղ կգրավեն այն ժամանակ, երբ կդառնան նաև քաղուսուցման խմբակի գերագանցիկներ:⁷¹

Հոկտեմբերի 26-ին ստեղծվում է գյուղփոկ, որի նախագահն է ընտրվում Ասատուր Կիրակոսյանը, իսկ անդամները՝ Արամ Հակոբյանը, Խաչատուր Հակոբյանը: Թեկնածուներ են ընտրվում Անուշ Գրիգորյանը և Իսրայել Ժամհարյանը:⁷²

Դեկտեմբերի 2-ին կոմբջիջը Արամ Հակոբյանին գործուղում է Նոր Բայազետի եռամսյա կուսակրթություն սովորելու:⁷³

Նույն նիստում քննվում է Նիկոլա Մարգարյանին կուսեկնածուից կուսանդամ փոխադրելու հարցը: Մագթաղ Ղազարյանը առարկում է, թե նրա պսպ Մարգիս Ղազարյանը ցարական կառավարության ժամանակ եղել է գլխավոր դատավոր: Նրան հակառակ ելույթ ունեցող Սիրական Ոսկանյանը ասում է, որ Մարգիսը իշխան, ազնվական մարդ էր, որը մեծ աշխատանք է կատարել գյուղի առաջին դպրոցը բացելու գործում և ազնիվ ընտրությամբ դարձել է դատավոր և աշխատել է շատ ազնիվ ձևով, անշահախնդիր, որի ազնվության մասին առասպելներ են հյուսվել, բայց նույնքան ազնիվ ու գրագետ թող ինչու պետք է մեղադրվի պսպի վարած պաշտոնի համար: Տեղին է հիշատակել ժողովրդական ասացվածքը. «Պսպը դարչին է կերել, թռռի ատամներն են առվել»: Սակայն կոմբջիջը անցնում է Մագթաղի կողմը և իր այդ նիստում Նիկոլային չի երաշխավորում կուսեկնածվից փոխադրվել կուսանդամ:

1937թ. թեև Չորագյուղում հաղթանակել էր համատարած կոլեկտիվացումը, բայց դեռ հսկայական աշխատանք կար կուսակցականների, կոմերիտականների և համակրողների քաղաքական մակարդակը բարձրացնելու և գյուղում տիրող անգրագիտությունը վերացնելու ուղղությամբ: Հունվարի 7-ին կոմբջիջը քննում է այդ հարցերը: Կոմբջիջը պահանջում է կոմունիստներից, կոմերիտականներից և համակրողներից ոչ միայն չբացակայել քաղխմբակների պարապմունքներից, այլև ունենալ սեփական գրաքարան և պարապմունքներին ներկայանալ կոնսպեկտներով, նյութը յուրացրած: Քաղուսուցումը բարձր մակարդակով անցկացնելու համար կոմբջիջը մոբիլիզացնում է դպրոցի ուսուցիչներ Կարդան Աղամյանի, Ազիզ Հակոբյանի, Մերոք Բալասանյանի, Ասատուր Ավետիսյանի, Հայկ Իսրայելյանի ուժերը: 1936 թ. ընթացքում գյուղի 380 անգրագետներից գրագետ էին դարձել միայն 30-ը, մնացած 350-ին գրագետ դարձնելու համար պահանջվում է գյուղխորհրդից առավել ուշադրություն դարձնել լիկ-

⁶⁷ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 14, թերթ 5, 25, 35, 41, 45:

⁶⁸ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 14, թերթ 12:

⁶⁹ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 14, թերթ 21, 35:

⁷⁰ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 14, թերթ 35:

⁷¹ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 14, թերթ 43:

⁷² ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 14, թերթ 41:

⁷³ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 14, թերթ 45:

կայանների վրա: Կոմբջիջը Արամ Հակոբյանին, Վահրամ Սկրտչյանին կուսակցության շարքեր է ընդունում որպես կուսանդամ, իսկ Գրիգոր Ասատրյանին՝ որպես կուսբեկնաձու: Ս. Մելքոնյանի փոխարեն 4-րդ բրիգադի բրիգադի է նշանակվում Կարապետ Մանուկյանը:⁷⁴ Կոմբջիջը մարտի 17-ին 1-ին բրիգադում կուսկազմակերպիչ է նշանակում Խ. Հակոբյանին, 2-րդ բրիգադում՝ Վ. Սկրտչյանին, 3-րդ բրիգադում՝ Ն. Սարգսյանին, 4-րդ բրիգադում՝ Հ. Մեերյանին, 5-րդ բրիգադում՝ Գ. Ասատրյանին, 6-րդ բրիգադում՝ Հ. Ղազարյանին, որպեսզի զարմանացանի նախապատրաստական աշխատանքները հաջող կազմակերպվեն:

Կոմբջիջի ապրիլի 16-ի արձանագրությունը կոլեկտիվացման տարիներին Չորագյուղի բնակչության, ինչպես նաև դաշտավարության և անասնապահության աճի մասին պահպանել է հետևյալ տեղեկությունները:⁷⁶

1) Բնակչության աճը

1934 թ. 365 ընտանիք, 1935 թ. 427 ընտանիք, 1936 թ. 449 ընտանիք, 1937թ. 452 ընտանիք:

2) Դաշտավարության աճը

Ցանքատարածություններ – 1933 թ., 1934 թ., 1935 թ., 1936 թ.
 համապատասխանաբար՝ – 219 հա, 293 հա, 487 հա, 664 հա
 բերքը – 1284 g, 2677 g, 6465 g, 9810 g,
 միջին բերքատվությունը – 5,8 g, 9g, 13 g, 15g,

3) Անասնապահության աճը

	1934 թ.,	1935թ.,	1936թ.,	1937թ.
կովեր	– 46,	52,	67,	82
հորթեր	– 43,	155,	167,	189
մաքիներ	– 152,	300,	420,	592
զառներ	– 148,	295,	475,	642
շիշակներ	– 86,	125,	272,	481
խոյեր	– 7,	12,	27,	41
խոզեր	– –	28,	86,	201
լծի եզներ	– –	–	–	202

Հաշվի առնելով տնտեսության աննախընթաց վերելքը, Մարտունու շրջգործկոմը 1937 թ. հուլիսի 10-ին Չորագյուղի կոլտնտեսությունը ճանաչում է որպես համամյութենական ցուցահանդեսի թեկնաձու:⁷⁷ Չորագյուղի կոմբջիջը հուլիսի 12-ին քննում է Ռուբեն Ղազարյանի դիմումը և նրան վերականգնում կուսակցության շարքեր:⁷⁸

⁷⁴ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 15, թերթ 2:
⁷⁵ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 15, թերթ 19ա:
⁷⁶ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 15, թերթ 25–30:
⁷⁷ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 15, թերթ 55:
⁷⁸ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 15, թերթ 45:

1937 թ. փետրվարի 27-ին Ժդանովի հայտնի ճառից հետո կոմունիստական կուսակցությունը հայտարարում է, թե մեր շարքերում կան անձնավորություններ, որոնք ձգտում են վերականգնել կապիտալիզմը: Այդպիսի անձնավորություններ կան ինչպես կուսակցականների, այնպես էլ անկուսակցականների շարքերում, հատկապես կուսակցական վերադաս օրգաններում: Հարկավոր է հայտնաբերել դրանց: Հենց փետրվարի 27-ին կուսակցությունից հեռացվում են կենտկոմի աշխատակիցներ Բուխարինը և Ռիկովը: Մյուսյունով մեկ գործի է դրվում զարևորելի «եռյակը» (тройка): Այն Հայաստանում սկսեց գործել 1937 թ. օգոստոսից մինչև 1938 թ. մարտը: Նրա գործունեությամբ Հայաստանում գնդակահարվեց 4603 և արտոռոլարկվեց 2915 մարդ: Նրա զոհը դարձավ Սահակ Տեր-Գաբրիելյանը (Հայաստանի կառավարության նախկին նախագահը): Այդ հորձանուտից գերծ չմնաց Մարտունու շրջանը: Բռնաճնշումների ենթարկվեցին Մարտունու կուսըջկոմի աշխատակից Արտո Կոստանյանը, Վարդենիկ գյուղի բնակիչ Գարեգին Մանուկյանը (դպրոցի ուսուցիչ): Բռնաճնշումների ենթարկվեցին Չորագյուղի բնակիչներ Պողոս Խղաբյանը, Մնաց Շահնազարյանը, Արամ Սարգսյանը, որոնք անգրագետ գյուղացիներ էին, կոլտնտեսության անդամներ և չէին լսել ո՛չ Տրոցկու, ո՛չ Բուխարինի, ո՛չ Ռիկովի անունները և չէին էլ իմանում, թե ինչ էին ուզում նրանք: Ուղղակի պլան կատարելու համար է նրանց անունը տրվել բռնադատողներին: Կոմբջիջը դեկտեմբերի 25-ին որոշում է կայացնում այդ քաղաքատարկյալների ընտանիքներին հեռացնել կոլտնտեսությունից:⁷⁹

Ստալինյան այդ դաժան և անիմաստ քաղաքականության հետևանքով Չորագյուղի աշխատասեր ու խաղաղ կոլեկտիվ տնտեսությունում արհեստականորեն առաջ է գալիս խիստ լարվածություն:

1937 թ. հոկտեմբերին տեղի են ունենում Համամյութենական Գերագույն Խորհրդի ընտրությունները: Չորագյուղում ընտրությունները հաջող անցկացնելու համար հոկտեմբերի 10-ին կազմվում է ընտրական հանձնաժողով, որի կազմում մտնում են Զանո Գալստյանը, Մանուկ Մանուկյանը, Եղիազար Մելքոնյանը, Գրիգոր Պետրոսյանը, Նիկոլա Սարգսյանը, Պարսամ Ասատրյանը, Համբարձում Ղազարյանը, Սիրական Ոսկանյանը, Հովհաննես Բաղդասարյանը, Արամ Հակոբյանը:⁸⁰

1937 թ. վերջին Պարսամ Ասատրյանը ազատվում է Չորագյուղի կոլտնտեսության նախագահի պաշտոնից և տեղափոխվում շրջկենտրոնում աշխատանքի: Նրա փոխարեն կոլտնտեսության նախագահ է նշանակվում Խաչատուր Գրիգորի Հակոբյանը,⁸¹ որը մինչ այդ աշխատում էր կուսակցական կազմակերպության քարտուղար:

⁷⁹ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 15, թերթ 78:
⁸⁰ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 15, թերթ 68:
⁸¹ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 17, թերթ 26:

1938 թ. Չորագյուղը այլևս չէր մտահոգվում կոլտնտեսության վերելքի և ամրապնդման հարցերով: Դրանք լուծվել էին հիմնովին: Գյուղում հաղթանակել էր սոցիալիզմը: Վերացել էր մարդու կողմից մարդու շահագործումը: Կենսագործվում էր «ով աշխատի, նա կտանա» օրենքը, որը իր հետ առաջ էր բերել հարվածային սոցիալիստական մրցություն աշխատանքի բոլոր բնագավառներում: Մարդը ապահովված էր աշխատանքով ու աշխատավարձով, որով ապրում էր նրա ընտանիքը: Գյուղացին ուներ նաև 30 ար անձնական հողամաս՝ բանջարանոցի համար: Նա իրավունք ուներ ստեղծել իր անձնական տնտեսությունը՝ 4 կով, 40 ոչխար, 2 մայր խոզ, անասահմանափակ քանակությամբ թռչուն, 20 փեթակ, 1 ձի և այլն: Դաշտավարության և անասնապահության արդյունքների հետ կապված հարվածային սոցիալիստական մրցությունը ներգյուղային սահմաններից անցել էր և հասել միջգյուղային, շրջանային, հանրապետական և միութենական սահմանները:

1938 թ. հունվարի 13-ին կուսակցական կազմակերպության քարտուղար է ընտրվում Սիբական Ոսկանյանը:⁸² Փետրվարի 16-ին նա ընտրվում է կոլտնտեսության նախագահի ազատ տեղակալ:⁸³ Նրա փոխարեն 1-ին բրիգադի բրիգադի է նշանակվում Գրիգոր Պետրոսյանը: Ապրիլի 14-ին Սիբական Ոսկանյանի փոխարեն կուսակցական կազմակերպության քարտուղար է ընտրվում Կարապետ Մանուկյանը:⁸⁴ Ապրիլի 28-ին Վաղարշակ Կիրակոսյանի փոխարեն 6-րդ բրիգադի բրիգադի է նշանակվում Նիկոլա Մարգարյանը:⁸⁵

1938 թ. գյուղում շատ հաջող է ընթանում գալմամազանը: Անկորուստ է ընթանում անասունների ծինը: 771 մայր ոչխարից ստացվում է 866 գառ: Կոլտնտեսության լավագույն հովիվ Մանուկ Մանուկյանը ընտրվում է Հայաստանի Գերագույն Խորհրդի պատգամավոր:⁸⁶ Հարվածային սոցիալիստական մրցությունը վառ պահելու համար կոլտնտեսությունում գործի են դրվում կարմիր և սև տախտակները, ինչպես նաև իլիչովկաները: 1938 թ. առաջին անգամ կոլտնտեսությունը ցանում է նաև կարտոֆիլ: Մեծ ուշադրություն է դարձնում ժամանակին նրա փխրեցման և ջրի աշխատանքներին:⁸⁷

Սարիբեկ Ոսկանյանը, որ իր գյուղտնտեսի նախագահ եղած ժամանակ 1933 թ. հեռացվել էր կուսակցությունից, մայիսի 29-ին դիմում է տալիս վերականգնելու կուսակցական իր իրավունքը: Կուսակցական ժողովը հարգում է նրա դիմումը:⁸⁸

⁸² ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 17, թերթ 2:

⁸³ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 16, թերթ 1:

⁸⁴ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 17, թերթ 25:

⁸⁵ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 17, թերթ 26:

⁸⁶ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 17, թերթ 31-34:

⁸⁷ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 17, թերթ 31-32:

⁸⁸ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 17, թերթ 36:

Կուսակցական կազմակերպությունն իր նիստերում քննում է կուսընկերներից ստացած գրությունները, ինչպես կոլտնտեսային աշխատանքների, այնպես էլ քաղաքական կյանքի վերաբերյալ: Դրանց պահանջները մասսաներին հասցնելու համար կուսակցական կազմակերպությունն ընտրում է ազիտատորների, գրույց անցկացնողների, ընթերցողների հետևյալ կազմը. 1) ազիտատորներ՝ Համբարձում Ղազարյան, Խաչատուր Հակոբյան, Սիբական Ոսկանյան, Հովհաննես Բաղդասարյան, Ասատուր Կիրակոսյան, Արամ Հակոբյան, Նիկոլա Մարգարյան, Գրիգոր Ասատրյան, Աղվան Մանուկյան, Մարգիս Խաչատրյան: 2) գրուցողներ, ընթերցողներ՝ Մարգիս Մողոյան, Գևորգ Սիերյան, Գարեգին Մուրադյան, Հայկ Գալստյան, Կարգանով Սաֆարյան:⁸⁹

Մեծ խանդավառությամբ են անցնում բերքահավաքի աշխատանքները: Ստացած բարձր և որակով բերքը թույլ է տալիս ձորագյուղիցներին մասնակցել շրջանային ցուցահանդեսին: Գյուղում կազմակերպվում է բերքի տոն:⁹⁰

Կուսակցական կազմակերպությունը մեծ ուշադրություն է դարձնում նաև դպրոցի աշխատանքների վրա:⁹¹ Կուսակազմակերպությունը թույլ աշխատանքի համար առաջարկում է լուսբաժնին օգոստոսի 17-ին աշխատանքից ազատել դպրոցի դիրեկտոր Ազիզ Հակոբյանին: Այդ ժամանակ դպրոցում ուսուցիչներ են աշխատել Հ. Իսրայելյանը, Ե. Իսրայելյանը, Ա. Բեգոյանը, Խ. Բարբառյանը, Խ. Թովմասյանը, Ս. Բալասանյանը, Վ. Աղամյանը: Դպրոցի ուսնաավարն էր Գրիգոր Ասատրյանը: Դպրոցի նոր դիրեկտոր է նշանակվում Վահրամ (Վարշամ) Մկրտչյանը:⁹² Հոկտեմբերի 16-ից դպրոցի դիրեկտոր է նշանակվում Գրիգոր Ասատրյանը:⁹³ Նրանից պահանջվում է հատուկ ուշադրություն դարձնել հանրակրթական դպրոցի կամ լիկլայանի վրա և 18-50 տարեկան բոլոր անգրագետ ու կիսագրագետ գյուղացիներին ներգրավել դպրոց: Պայքար մղել պարտուսի հասակ ունեցող երեխաների բացակայությունների ու մադումների դեմ:

Կուսակցական կազմակերպությունը մեծ աշխատանք է տանում հարվածային աշխատողների քաղաքական մակարդակը բարձրացնելու վրա: Հովհաննես Մարգարյանը ընդգրկվում է կոմունիստական համակրողների խմբակում:⁹⁴ Որպես թեկնածու կուսակցության շարքեր են ընդունվում Մանուկ Մանուկյանը, Գևորգ Սիերյանը, Բաղդասար Մանուկյանը, Վաղարշակ Կիրակոսյանը:⁹⁵

⁸⁹ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 17, թերթ 69:

⁹⁰ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 17, թերթ 70-72:

⁹¹ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 17, թերթ 15-18:

⁹² ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 17, թերթ 59:

⁹³ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 17, թերթ 73-74:

⁹⁴ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 17, թերթ 76:

⁹⁵ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 17, թերթ 82-83:

1938 թ. Չորագյուղի դաշտավարության, անասնապահության նվաճումների, պետության կողմից ազատ գնման, պետական պարտավորությունների վճարման պլանները եղել են այսպես:⁹⁶

Ա. Դաշտավարության նվաճումները

1. ցանվել է հացահատիկ – 780 հա,
2. ստացվել է բերք – 10950 գ,
3. միջին մեկ հեկտարից ստացվել է 14 գ:

Բ. Անասնապահության նվաճումները

1. խոշոր եղջերավոր անասուններ – պլան՝ 773 գլուխ, կատարողականը՝ 806 գլուխ,
2. ոչխարներ և այծեր – պլան՝ 1700 գլուխ, կատարողական՝ 1936 գլուխ,
3. ձիեր – պլան՝ 55, կատարողական՝ 58,
4. խոզեր – պլան՝ 78, կատարողական՝ 61:

Գ. Մեկ աշխօրին հասանելիք բերքը

1. հացահատիկ – 6 կգ 451 գրամ,
2. յուղ – 26 գրամ,
3. պանիր – 130 գրամ,
4. անասնակեր – 6 կգ 700 գրամ,
5. կարտոֆիլ – 860 գրամ,
6. դրամ – 70 կոպեկ:

Դ. Պետական պարտավորությունները

1. յուղ, պլան՝ 808 կգ, կատարողական՝ 808 կգ,
2. բուրդ, պլան՝ 1642 կգ, կատարողական՝ 1642 կգ,
3. միս, պլան՝ 14110 կգ, կատարողական՝ 14110 կգ,
4. հացահատիկ, պլան՝ 316 գ, կատարողական՝ 316 գ:

Ե. Ազատ գնումները

1. յուղ, պլան՝ 500 կգ, կատարողական՝ 500 կգ,
2. բուրդ, պլան՝ 1219 կգ, կատարողական՝ 1219 կգ,
3. միս, պլան՝ 12 գ, կատարողական՝ 12 գ,
4. հացահատիկ, պլան – կատարողական:

Չ. Պետությանը վճարվող հարկերը

1. Պետապ, պլան՝ 6606 ռ., կատարողական՝ 6606 ռ.,
2. գյուղհարկ, պլան՝ 5650 ռ., կատարողական՝ 5650 ռ.,
3. ինքնահարկ, պլան՝ 5260 ռ., կատարողական՝ 5171 ռ.,
4. կուլ-տուրք, պլան՝ 3696 ռ., կատարողական՝ 3696 ռ.,
5. փոխառություն, պլան՝ 15400 ռ., կատարողական՝ 15400 ռ.:

Դպրոցի վիճակը 1938թ.

1938–39 ուս. տարում դպրոցում կոմպլեկտավորվել են 563 աշակերտներ: Դրանցից 88–ը զանազան պատճառներով չեն հաճախել դպրոց: Դպրոցը ունեցել է 18 դասարան (1–ին դասարան՝ 5, 2–րդ դասարան՝ 4, 3–րդ դասարան՝ 3, 4–րդ դասարան՝ 2, 5–րդ դասարան՝ 2, 6–րդ դասարան՝ 1, 7–րդ դասարան՝ 1): Սովորող աշակերտներից հաջորդ դասարան են փոխադրվել 344–ը (72–ը մնացել են դասի): 7–րդ դասարան ավարտած 25 աշակերտները իրենց ուսումը շարունակել են Նոր Բայազետի մանկավարժական տեխնիկումում և միջնակարգ դպրոցներում: Դպրոցը ընդամենը ունեցել է 9 դասասենյակ: Դպրոցում աշխատել են 13 ուսուցիչներ, որոնցից 1–ը ունեցել է բերի բարձրագույն, 8–ը՝ միջնակարգ, 4–ը՝ բերի միջնակարգ կրթություն:⁹⁷

Հարվածային սոցիալիստական մրցությունում հաղթող կոլտնտեսականներ՝

1. Մանուկ Մանուկյան, 2. Եգոր Թարթիկյան, 3. Կոմիտաս Սահրադյան, 4. Գրիգոր Շամասուրյան, 5. Վոլյակ Մելքոնյան, 6. Յուլյակ Կարապետյան, 7. Հովհաննես Սարգսյան, 8. Սյրուտի Մանուկյան, 9. Հովհաննես Սաֆարյան, 10. Երո Սաֆարյան, 11. Աղաբեկ Մուրադյան, 12. Եղիշե Սաֆարյան, 13. Արամ Ղազարյան, 14. Նարո Պետրոսյան:⁹⁸

1939 թ. Չորագյուղի տնտեսության համար դարձյալ հաջողությունների տարի էր: Իր նվաճումների համար գյուղը ներկայացվում է ցուցահանդեսի: Նման հաջողություններ էին սպասվում մահ 1940 թ.: Առատ բերքը առաջ է բերում աշխօրերի ինքնարժեքի բարձրացում, իսկ դա էլ՝ աշխօրերի հավելազրման վտանգ: Կոլտնտեսության նախագահ Խաչիկ Հակոբյանը պայքար է մղում դրա դեմ: Այդ պատճառով առաջ է գալիս լարվածություն:

Նախտրդ տարվա բարձր նվաճումների համար գյուղի հարվածային աշխատողներից մի խումբ մեկնում է Մոսկվա՝ մասնակցելու համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի հավաքին:

1940 թ. վերջին Խաչատուր Գրիգորի Հակոբյանը ազատվում է աշխատանքից: Նրա փոխարեն կոլվարչության նախագահ է նշանակվում Արամ Սահակի Հակոբյանը:

§ 3. 1941–1945 ԹԹ. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՍԻ ՏԱՐԻՆԵՐԸ

Յեղասպանություն տեսած հայ ժողովրդի գլխին 1941 թ. հունիս ամսի 22–ին կախվեց ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ պատերազմը: Այն նույնքան վտանգավոր էր հայ ժողովրդի համար, որքան 1915 թ. ցեղա-

⁹⁶ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 17, թերթ 91–95

⁹⁷ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 17, թերթ 96:

⁹⁸ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 17, թերթ 95:

սպանությունը, որ իրագործեց այդ ժողովրդի նկատմամբ օսմանյան թուրքիան: Այս անգամ ֆաշիստական Գերմանիայի դաշնակից թուրքիան նորից կարող էր իր արյունարբու հորդաները տարածել Խորհրդային Հայաստանով մեկ և շարունակել 1915 թ. կիսատ մնացած ցեղասպանությունը, որին փափագում էր ինքը՝ թուրքիան, պանթուրքիզմը դեպի արևելք տարածելու նպատակով: Սակայն այս անգամ հայ ժողովուրդը մենակ չէր: Նրա հետ էին ամբողջ Խորհրդային Միության ժողովուրդները: Այնուամենայնիվ, դեպի Խորհրդային Միություն տանող ֆաշիզմի ճանապարհը փակելու գործում հայ ժողովուրդը կրկնակի անգամ շահագրգռված էր, քան խորհրդային մյուս ժողովուրդները: Այդ էր պատճառը, որ պատերազմի բոթը լսելուն պես հայ ժողովրդի զավակներից շատերը կամավոր մեկնեցին ռազմաճակատ և հայկական ոգով ու արիությամբ մարտի նետվեցին պատերազմի ամենաքեժ կետերում (Կերչ, Սևաստոպոլ, Կովկաս, Լենինգրադ, Մոսկվա և այլուր): Ընդհանուր առմամբ պատերազմին մասնակցեց շուրջ 600000 հայ: Նրանցից ավելի քան 200000 զոհվեցին գերմանաֆաշիստական զավթիչների դեմ մղված մարտերում: Զգալի թվով հայորդիներ մարտնչեցին Հայկական 76-րդ, 89-րդ, 390-րդ, 408-րդ և 409-րդ հրաձգային դիվիզիաների շարքերում: Հայկական 261-րդ հրաձգային դիվիզիան պատերազմի տարիներին մնաց Հայաստանում և պաշտպանում էր խորհրդա-թուրքական սահմանը: Հայկական 89-րդ թամանյան եռակի շքանշանակիր հրաձգային դիվիզիան պատերազմի կրակի ու բոցերի միջով Կովկասի նախալեռներից հասավ մինչև Բեռլին ու մասնակցեց ֆաշիզմի որջի կործանման հաղթական կռիվներին, իսկ 409-րդ դիվիզիայի մարտական ուղին ձգվեց Կուրբան – Ուկրաինա – Սոլոբովա – Ռուսինիա – Հունգարիա – Ավստրիա – Չեխոսլովակիա երթուղով: Հայ ժողովրդի հավատարիմ ու խիզախ զավակների սխրագործները բարձր են գնահատվել խորհրդային կառավարության կողմից: Նրանցից 117-ը արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման: Իսկ զորավար Հովհաննես Բաղրամյանը և օդաչու Նելսոն Ստեփանյանը այդ բարձր կոչմանը արժանացան կրկնակի անգամ: Պատերազմի մարտերում մեծ թիվ էին կազմում հայագզի հրամանատարները, որոնցից Հովհաննես Բաղրամյանը, Արմենակ Խանփեդյանը (Խուդյակով), Համագասպ Բաբաջանյանը և Սերգեյ Ազանովը արժանացան առաջինը՝ Խորհրդային Միության, երկրորդը՝ Ավիացիայի, երրորդը՝ Զրահատանկային զորքերի գլխավոր, չորրորդը՝ Ինժեներական զորքերի մարշալի կոչման: Հայրենական մեծ պատերազմի տարիներին 62 հայորդիներ դարձան գեներալ: Հետպատերազմյան տարիներին պատերազմի մասնակիցներից գեներալներ դարձան ևս 79 հայորդիներ, իսկ 8-ին շնորհվեց ծովակալի, փոխծովակալի և դեր-ծովակալի կոչում, Հովհաննես Ստեփանի Իսակովին՝ Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում, Վալերիան Իոսիֆի Սուրաբեկովին, Իվան Խաչատուրի Գալուստովին, Աշոտ Առաքելի Սարկիսովին՝ փոխծովակալի (վյցե-ադմիրալի) կոչում, իսկ արտավազդ Արամի Սագոյանին, Միհրան Կարա-

պետի Պետրոսյանին, Զարմայր Մամիկոնի Արվանովին, Վլադիմիր Սեմյոնի Փիրումովին՝ դեր-ծովակալի (կոնտր-ադմիրալի) կոչում:

Հայ ժողովրդի զավակների կատարած հերոսական սխրագործություններից ետ չէին մնում նաև Գեղամա աշխարհի հզոր լեռների գրկում տարածված Զորագյուղի զավակները: Նրանցից շատերը հենց պատերազմի առաջին օրերին կամավոր դիմումներ են ներկայացնում ու մեկնում կարմիր բանակ: Այդպիսի երիտասարդներից էին՝

1) Մինասյան Մանուկ Զոհրաբի, 2) Սաֆարյան Կարապետ Հովոյի, 3) Մոդոյան Արտեմ Մանուկի, 4) Առաքելյան Մակեդոն Սարիբեկի, 5) Ավետիսյան Հակոբ Գրիգորի, 6) Շահնագարյան Խաչիկ Սիրականի, 7) Ղազարյան Եղշիբեկ Ղազարի, 8) Հովհաննիսյան Հայկազ Հովհաննեսի, 9) Պետրոսյան Վարագդատ Բաղդասարի, 10) Քալոյան Հմայակ Զալոյի, 11) Վարդանյան Թադևոս Բալեի, 12) Ավդալյան Ավագ Բառոյի, 13) Բարսեղյան Բեգե Կնյագի, 14) Գասպարյան Հայկազ Մրոյի, 15) Գրիգորյան Արմենակ Գրիգորի, 16) Գևորգյան Վաչագան Ալեքսանի, 17) Ավետիսյան Ազնիվ Սարգսի, 18) Մահրադյան Բեգե Գյուլաբի, 19) Հակոբյան Մանասար Մահակի, 20) Մարտիրոսյան Մամիկոն Սիրականի, 21) Ֆահրադյան Հակոբ Զոհրաբի, 22) Մանուկյան Կավկազ Արսենի, 23) Էլոյան Հայկազ Արամի, 24) Մելքոնյան Աղվան Պետրոսի, 25) Սաֆարյան Կարգանով Ապրեի, 26) Հարությունյան Գրիգոր Ասոյի:

Հետագայում դրանց թիվը կրկնապատկվում ու տասնապատկվում է: Նախնական տվյալներով Զորագյուղից բանակ են մեկնել շուրջ 371 մարդ, իսկ այդ ժամանակ գյուղը ուներ շուրջ 4300 բնակիչ: Փաստորեն գյուղի բնակչության շուրջ 19%-ը բանակ է մեկնել:

Մի կողմից աշխատող տղամարդկանց ռազմաճակատ մեկնելը, մյուս կողմից գյուղում մնացած աշխատավոր մարդկանց վրա չարաղետ պատերազմի թողած վախն ու սարսափը ծանր հետք են թողնում կոլտնտեսության աշխատանքների կազմակերպման վրա: Գյուղի ղեկավարությունից պահանջվում էր ճիզերի գերագույն լարումով մարդկանց մղել դեպի աշխատանք: Աշխատավոր տղամարդկանց պակասը լրացնելու նպատակով կոլտնտեսության ղեկավարությունը դիմում է կանանց օգնությանը: Դրա համար պահանջվում էր բացատրական աշխատանքի ուժեղացում գյուղի ազիտկոլեկտիվի միջոցով:

Բանակ մեկնած ազիտկոլեկտիվի ղեկավարի փոխարեն ազիտկոլեկտիվի նոր ղեկավար է նշանակվում երիտասարդ կոմունիստ, դպրոցի ուսուցիչ և դպրոցական ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար Աղվան Մանուկյանը: Բանակ մեկնած ազիտատորներ Աղվան Մելքոնյանի, Կարգանով Սաֆարյանի, Ռուբիկ Աբրահամյանի, Ազնիվ Ավետիսյանի, Աղվան Մարգարյանի, Բեգե Մահրադյանի, Գրիգոր Հարությունյանի փոխարեն կուսակցական կազմակերպության հուլիսի 30-ի նիստում նոր ազիտատորներ են նշանակվում Ալեքսան Առաքելյանը, Վահան Հովհաննիսյանը, Հովհաննես Ներ-

սիսյանը, Հայրիկ Ղազարյանը, Կարապետ Մնացականյանը, Հարութ Գալստյանը, Արաքսյա Մելքոնյանը։¹

Ազիտատորներին ամրացնում են ինչպես դաշտավարական բրիգադներին, այնպես էլ կովաբուծական ու ոչխարաբուծական ֆերմաներին, ծխախոտի բրիգադին, շինբրիգադին և ճանբրիգադին։ Նոր ընտրված ազիտատորների հետ կազմակերպվում են նախապատրաստական աշխատանքներ՝ նրանց ներգրավելով ազիտխմբակի պարապմունքների մեջ, որտեղ աշխատանք էր տարվում բարձրացնելու ազիտատորների քաղաքական մակարդակը։

Երիտասարդ ազիտատորներին հետ շարունակում են իրենց ազիտմասսայական աշխատանքները ավագ ազիտատորները։ Դրանք էին՝ 1) Արամ Հակոբյանը (կովվարչության նախագահ), 2) Ռուբեն Ղազարյանը (կուսկազմակերպության քարտուղար), 3) Աստ Կիրակոսյանը (գյուղխորհրդի գործկոմի նախագահ), 4) Գրիգոր Ասատրյանը (դպրոցի դիրեկտոր), 5) Նիկոլա Սարգսյանը (VI բրիգադի բրիգադիր), 6) Խաչատուր Հակոբյանը, 7) Համբարձում Հակոբյանը, 8) Անուշավան Հարությունյանը։

Գյուղի ղեկավարությունը դիմում է աշխատավորներին, որպեսզի նրանք տաք հագուստ ուղարկեն կարմիր բանակի զինվորներին։ Մարտունու կուսըջկոմի ազիտարտագանդաշի բաժնի վարիչ Վահրամ Մկրտչյանը և կուսըջկոմի կողմից Ձորագյուղին ամրացած ընկեր Պարսամ Ասատրյանը 1941 թ. օգոստոսի 18-ի կուսակցական ժողովում² կոչ են անում ժամանակին հավաքել բերքը, կատարել պետական մթերումների պլանները։

Գնալով գյուղում բանակ մեկնող տղամարդկանց թիվը խիստ մեծանում է, որոնց փոխարինում են աշխատավոր կանայք։ 1941 թ. նոյեմբերի 27-ի կոլտնտեսության ընդհանուր ժողովին մասնակցող աշխատավոր կանանց թիվը կազմել է 350, իսկ տղամարդկանցը՝ 170, այսինքն՝ աշխատող կանայք գյուղում գրեթե երկու անգամ շատ էին, քան տղամարդիկ։³

1942 թվականին Ձորագյուղի ցանքատարածությունների քանակը⁴ ուներ հետևյալ տեսքը՝ 1) հացահատիկ՝ 500 հեկտար, 2) ծխախոտ՝ 52 հեկտար, 3) երիցուկ՝ 12 հեկտար, 4) կտավատ՝ 25 հեկտար, 5) կորնզան՝ 15 հեկտար, 6) սիլոսային կուլտուրաներ՝ 10 հեկտար, 7) ճակնդեղ՝ 10 հեկտար, 8) կարտոֆիլ՝ 60 հեկտար, 9) բանջարեղեն՝ 6 հեկտար, 10) կորնզանի ենթացանքս՝ 50 հեկտար, որից մաքուր ցանքսը՝ 22 հեկտար։

Գյուղական նախկին դատավորը մեկնել էր կարմիր բանակ։ Նրա փոխարեն նոր դատավոր է ընտրվում Աղվան Մանուկյանը։⁵

¹ ՀՀ ՀԲԿՊ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 20, թերթ 75:

² ՀՀ ՀԲԿՊ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 20, թերթ 80:

³ ՀՀ ՀԲԿՊ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 20, թերթ 106:

⁴ ՀՀ ՀԲԿՊ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 21, թերթ 1:

⁵ ՀՀ ՀԲԿՊ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 21, թերթ 2:

1942 թվականի փետրվարին գյուղը գրեթե զրկվել էր իր գրագետ մարդկանցից, և ստիպված ազիտկոլեկտիվը ազիտատոր էր դարձրել նույնիսկ անգրագետ կատարածու Դեղկանոս Ավդալյանին՝ միայն թե պահպանվեր ազիտկոլեկտիվի կազմը։ Ահա այդ ժամանակվա ազիտկոլեկտիվի կազմը՝

1) Մաքո Ավդալյան, 2) Դեղկանոս Ավդալյան, 3) Եզեկիմ Սահակյան (սա բանակում վիրավորվել էր, տուն էր եկել հաշմանդամության պատճառով և աշխատում էր որպես ակումբի վարիչ), 4) Արամ Հակոբյան, 5) Հայրիկ Գալստյան (սա նույնպես բանակում վիրավորվել էր ու տուն էր եկել), 6) Խաչո Կիրակոսյան, 7) Աղվան Մանուկյան, 8) Սարգիս Մողոյան (սա նույնպես բանակում վիրավորվել էր ու տուն էր եկել), 9) Մազբաղ Ղազարյան։⁶ Փաստորեն նախորդ տարվա երիտասարդ ու գրագետ ազիտատորները՝ Վահան Հովհաննիսյանը, Կարապետ Մնացականյանը, Հարութ Գալստյանը բանակ էին մեկնել։ Բանակ էին մեկնել նաև նախկին ազիտատորներ Գրիգոր Ասատրյանը, Նիկոլա Սարգսյանը, Ալեքսան Առաքելյանը, Համբարձում Հակոբյանը, Անուշավան Հարությունյանը։

1942 թվականին ազիտատորների ցուցակում տեղ է գրավել նաև տարեց Ասատուր Սիմոնյանը։⁷ Նրա ներկայությունը թե՛ գրագետ մարդու և թե՛ բանիմաց, բարոյապետ բարձր և բարի խորհրդատու մարդու ոգևորում է ազիտկոլեկտիվին, մասնավորապես կովվարչության նախագահ Արամ Հակոբյանին, որը սկսում է կազմակերպել կոլտնտեսության աշխատանքները մեծ եռանդով ու թափով։ Ժամանակին ավարտվում է կոլտնտեսության զարմանացանը։ Կանանց ներգրավելով հնձի աշխատանքների մեջ, ժամանակին ավարտվում է խոտի ու հացի բերքահավաքը։

Իր վստահելի և գործին նվիրված աշխատանքի համար Ասատուր Սիմոնյանը շուտով ընտրվում է ինչպես փոխառության լիազորների և հացահատիկի բերքը կալերում քաշելու ու նոր պահեստ ուղարկելու հանձնաժողովի անդամ, այնպես էլ ամբողջ կոլտնտեսության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ։⁸

2-րդ բրիգադի բրիգադիրի բանակ գնալու պատճառով նրա փոխարեն նոր բրիգադիր է նշանակվում Սարգիս Մողոյանը։

3-րդ հնգամյակի 5-րդ տարվա կապակցությամբ փոխառություն են գրում կոլտնտեսության անդամներին։ Այդ կապակցությամբ ըստ բրիգադների լիազորներ են նշանակվում։ Աղվան Մանուկյանը նշանակվում է 1-ին բրիգադում, Սարգիս Մողոյանը՝ 2-ում, Հովհաննես Ներսիսյանը՝ 3-ում, Կարապետ Մանուկյանը՝ 4-ում, Սիրական Ոսկանյանը՝ 5-ում, Արշակ Հակոբյանը՝ 6-ում, Վորոնցով Ասատրյանը՝ կաֆի և վալֆի ֆերմաներում, Ասատուր Սիմոնյանը՝ շինբրիգադում և Շանբրիգադում։⁹

⁶ ՀՀ ՀԲԿՊ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 21, թերթ 4:

⁷ ՀՀ ՀԲԿՊ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 21, թերթ 9:

⁸ ՀՀ ՀԲԿՊ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 21, թերթ 21, 32:

⁹ ՀՀ ՀԲԿՊ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 21, թերթ 9:

Գյուղացիները շարունակում էին վճարել հետևյալ հարկերը՝ 1) գյուղ-հարկ, 2) պետապ, 3) կուլտհարկ, 4) ռազմական հարկ, 5) փոխառություն, 6) ինքնահարկ: Այդպիսի հարկեր էր վճարում նաև կոլտնտեսությունը:¹⁰

Բանակ մեկնած դպրոցի դիրեկտոր Գրիգոր Ասատրյանի փոխարեն նոր դպրոցի դիրեկտոր է նշանակվում Աղվան Մանուկյանը: Ապրիլի 21–ին նա զեկուցում է կուսակցական ժողովին, որ դպրոց հաճախող աշակերտների թիվը կազմել է 227, որից հարվածաշիններ են 45 հոգի, գերազանցիկներ՝ 36 հոգի, վատ սովորողներ՝ 41 հոգի, իսկ առաջադիմությունը կազմել է 84 %: Մակայն շատ ու շատ աշակերտներ դպրոց չէին հաճախել ընդհանրապես և մաղվել էին: IV քառորդում մաղվել էին վերոհիշյալ 227 աշակերտներից ևս 21–ը:

Կուսակցական ժողովը պարտավորեցնում է դպրոցի դիրեկցիային և ամբողջ ուսուցչական կոլեկտիվին կարճ ժամանակում բոլոր դպրոցահասակ երեխաներին կապել դպրոցի հետ: Այդ հարցում օգտագործել գյուղխորհրդի և կոլվարչության օգնությունը, հատկապես կարմիր բանակում գտնվող մարդկանց երեխաների համար կազմակերպել նյութական օգնություն, հնարավորին չափով նրանց բավարարել հագուստով և նախաճաշով:¹¹

1942 թվականի կեսերից սկսած բանակում վիրավորված որոշ զինվորներ, որոնք այլևս անախտանի էին ծառայության համար, զորացրվել և տուն են վերադարձել: Որոշ ժամանակ գյուղում ապաքինվելուց հետո նրանցից ոմանք տեսնելով, որ գյուղում աշխատող տղամարդու կարիք է զգացվում, աշխատանքի են անցնում հարազատ կոլտնտեսությունում: Այդպիսի մարդկանցից են՝ Կարապետ Մանուկյանը, Սիրական Ոսկանյանը, Ազնիվ Սահակյանը, Ալեքսան Առաքելյանը, Բեգլար Դավթյանը, Բեգե Սահրալյանը, Լյուդվիգ Գևորգյանը: Դրանցից ոմանք դառնում են ազիտատորներ: Ազիտատոր են դառնում նաև կանայք, օրինակ՝ Օսան Ներսիսյանը:¹² Բանակից վերադարձածներից Բեգե Սահրալյանին, Ալեքսան Առաքելյանին, Կարապետ Մանուկյանին, Կնյազ Գասպարյանին և Սիրական Ոսկանյանին նշանակում են Բրիգադիւրներ:

1942 թ. օգոստոսի 22–ին,¹³ ըստ վավերագրերի հաղորդած տեղեկությունների, կոլտնտեսության 1–ին պահեստի պահեստապետ է նշանակվում Վաղարշակ Կիրակոսյանը, իսկ 2–րդ պահեստի պետապետ՝ Յուսկ Գալստյանը, որը վիրավոր վիճակում բանակից տուն էր վերադարձել: Փիրուզատ Չալիբեկի Ասատրյանը կուսակցականության փոխադրվում է կուսանդամ: Վաղարշակ Մանուկյանը և Սիրական Ոսկանյանն իրենց աշխատանքները չզլխավորելու պատճառով ազատվում են աշխատանքից

¹⁰ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 21, թերթ 12:

¹¹ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 21, թերթ 13:

¹² ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 21, թերթ 25:

¹³ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 21, թերթ 22

(1–ը կաֆի վարիչի պարտականությունից, իսկ 2–ը՝ 5–րդ բրիգադի բրիգադիւրի պարտականությունից): Կաֆի վարիչ է նշանակվում Բաղիշ Ավետիսյանը:

1943 թվականին վիրավոր վիճակում բանակից տուն եկող տղամարդկանց թիվը գնալով ավելի է շատանում: Վիրավորներին բանակում պահելը ծանր էր նստում պետության վրա: Չորացրվելիս նրանք ապաքինվում էին իրենց ընտանիքում և ապա՝ աշխատանքի էին անցնում իրենց կոլտնտեսությունում, բարելավում իրենց ընտանիքի նյութական վիճակը, առաջ մղում կոլտնտեսության աշխատանքները: Բանակից նոր վերադարձողներից էին Շառոյան Մնացը, Նազարյան Գրիշան, Սողոյան Մնացը: Նրանք՝ մինչ այդ բանակից տուն վերադարձածներ Սարգիս Սողոյանի, Ազնիվ Սահակյանի, Ալեքսան Առաքելյանի, Կնյազ Գասպարյանի, Ազնիվ Ավետիսյանի, Կարապետ Մանուկյանի, Եգեկին Սահակյանի և մյուսների հետ բավականին մեծ ուժ էին ներկայացնում կոլտնտեսության մեջ: Դրանցից ոմանք անցնում են ղեկավար աշխատանքի (ճյուղի վարիչներ, բրիգադիւրներ), շատերն էլ սկսում են շարունակել բանակ մեկնելուց առաջ իրենց ընտրած ֆիզիկական շարքային աշխատանքը (հնձվոր, սայլվոր, վար անող, ցանքբար և այլն): Սարգիս Սողոյանը նշանակվում է կոլտնտեսության 2–րդ բրիգադի բրիգադիւր, Իվան Հակոբյանը՝ 3–րդ, Ազնիվ Սահակյանը՝ 4–րդ, Ալեքսան Առաքելյանը՝ 5–րդ, Կնյազ Գասպարյանը՝ 6–րդ, Գրիշա Նազարյանը՝ 1–ին, Մնաց Սողոյանը՝ հաշվետար: Շարունակում էր գյուղի կոլվարչության նախագահ մնալ Արամ Հակոբյանը, կուսկազմակերպության քարտուղար՝ Ռուբեն Ղազարյանը, գյուղխորհրդի նախագահ՝ Ասատուր Կիրակոսյանը:

1943 թ. ապրիլի 29–ին կուսկազմակերպության քարտուղար Ռուբեն Ղազարյանը ազատվում է աշխատանքից: Նրա փոխարեն կուսկազմակերպության քարտուղար է նշանակվում դպրոցի դիրեկտոր, գյուղական դատավոր և ազիտկոլեկտիվի ղեկավար Աղվան Մանուկյանը, իհարկե, իր ձեռքում պահելով դպրոցի դիրեկտորի, գյուղական դատավորի և ազիտկոլեկտիվի ղեկավարի պաշտոնները: Ակներև է, որ ազատված բարձր ղեկավար կադրերի փոխարեն ոչ թե աշխատանքի են նշանակվում բանակից զորացրված զրազետ կադրերը, այլ աշխատանքով ծանրաբեռնված և բոլորովին բանակ չգնացած մարդիկ: Երիտասարդ կադրերի նկատմամբ այդպիսի անվստահությունը մեծ հիասթափություն է առաջ բերում գյուղի հասարակության մեջ:

Աշխատանքով խիստ ծանրաբեռնված Աղվան Մանուկյանը ուշադրությունից բաց է բողոմում իր բուն աշխատանքը՝ դպրոցի ղեկավարումը: Այդ ժամանակ, այսինքն՝ 1943 թ. աշակերտների հաճախումը կազմել է 45–52 %, այդքան էլ, բնականաբար, կազմել է դպրոցի առաջադիմությունը:¹⁴

Պատերազմի չմասնակցած հին կադրերը վերին աստիճանի րժախնդիր էին պատերազմի մասնակցած և միջին ղեկավար դիրք զրաված նոր կադրերի նկատմամբ: Նրանց չէին ներում ամենափոքր սխալի համար:

¹⁴ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 22, թերթ 19–20 (հմմտ. թերթ 5–15):

Այդպիսի կադրերին անմիջապես ազատում էին աշխատանքից: Օրինակ՝ բրիգադիրներ Բեգե Սահարայանին, Ալեքսան Առաքելյանին, Սարգիս Սողոյանին և 2-րդ պահեստի պահեստապետ Յուլակ Գալստյանին ազատում են աշխատանքից, քանի որ այդ պահեստում հացահատիկի ավելցուկ էր հայտնաբերվել: Նոր նշանակված բրիգադիրներ Գրիշա Նազարյանին և Արտեմ Սկրտչյանին ազատում են աշխատանքից, քանի որ ընդամենը երկու շաբաթ առաջ նրանց հանձնարարված բրիգադները լավ չեն նախապատրաստվել զարմանացանի աշխատանքներին:

Թեև պատերազմի չմասնակցած հին կադրերը թույլ տված սխալների համար աշխատանքից անխնայաբար ազատել են միջին ղեկավար դիրք գրավող կադրերին, բայց դա չի կրել թշնամական բնույթ: Աշխատանքից ազատված այդպիսի կադրերից ոմանց մասին թեև որոշում են կայացրել, թե կներկայացվեն դատի, բայց դա արվել է նրանց դաստիարակելու նպատակով, քանի որ իրականից գործը դատախազություն ու դատարան չի հասել: Ընդհակառակը, որոշ ժամանակ հետո այդպիսի կադրերից շատերին նոր ղեկավար աշխատանքների են նշանակվել: Օրինակ՝ աշխատանքից ազատված Արտեմ Սկրտչյանին նշանակում են արտադրական ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար:

Գյուղում կազմակերպչական աշխատանք է տարվում, որ Այրիջա գետի վրա կառուցվելու է Մադինա հիդրոէլեկտրակայանը: Աշխատանքի գնացողներին տրվում էր օրվա ուտելու հաց: Աշխատանքի են մեկնում հիմնականում կարմիր բանակում գտնվող զինվորների կանայք, որպեսզի այդ ճանապարհով հաց ավելացնեն և նրանով կերակրեն իրենց սոված երեխաներին: Սիլոսի և խտհեճի աշխատանքներում նույնպես ներգրավվում են կարմիր բանակայինների կանայք, որպեսզի ստացած հացի նորմայով կերակրեն իրենց սովահար երեխաներին:

Ազիտկոլեկտիվի ղեկավար Աղվան Մանուկյանը կազմում է ազիտկոլեկտիվի նոր կազմ, որի մեջ են մտնում՝ Աղվան Մանուկյանը, Վորոնցով Ասատրյանը, Ասատուր Կիրակոսյանը, Արամ Հակոբյանը, Բեգե Դավթյանը, Օսան Ներսիսյանը, Շուշիկ Չիպչյանը, Հրանուշ Արզումանյանը, Արմենուհի (Արմիկ) Արզումանյանը, Հայկ Մովսիսյանը:¹⁵ Պահանջվում է քաղաքապամուճք անցկացնել ազիտատորների հետ՝ նրանց քաղաքական մակարդակը բարձրացնելու նպատակով: Ակներև է, որ պատերազմից վերադարձած գրագետ կադրերից միայն Բեգե Դավթյանն է ընդգրկված ազիտատորների նոր կազմում: Փաստորեն գյուղի ղեկավարությունը արհեստական ձևով անվստահություն է ստեղծում պատերազմից վերադարձած երիտասարդ ու գրագետ կադրերի նկատմամբ նաև այս հարցում:

1944 թ. հունվարի 20-ին տեղի ունեցող արտադրական և դպրոցական միացյալ կուսակցական ժողովում քննարկվում և ամփոփվում է դպրոցի 1-ին

կիսամյակի արդյունքները, որի մասին զեկուցում է դպրոցի ուսմասվար Շուշիկ Չիպչյանը:¹⁶

Ժողովն արձանագրում է, որ 1-ին կիսամյակում բավականին մեծ տոկոս է կազմել աշակերտների բացակայությունը, որի հետևանքով էլ ցածր է աշակերտների առաջադիմությունը: Եթե կարմիր բանակում գտնվող մարդկանց երեխաների բացակայությունը ինչ-որ չափով հիմնավորվում է նրանց վատ հագուստի և նույնքան էլ վատ սնվելու պատճառով, ապա ինչպես կարելի է հիմնավորել գյուղի ղեկավար կադրերի երեխաների բացակայությունը: Բնականաբար դա պայմանավորված է դպրոցի նկատմամբ այդ մարդկանց անհարգալից վերաբերմունքով, իրենց գրագիտության ցածր մակարդակով:

Ժողովը որոշում է կայացնում, որ կարմիր բանակում գտնվող մարդկանց երեխաների համար կոլտոզի հաշվին ճաշ տրամադրել: Ղեկավար կադրերից պահանջվում է այսուհետև հոգատար վերաբերմունք ցուցաբերել իրենց դպրոցահասակ երեխաների նկատմամբ և կազմակերպել նրանց ամենօրյա հաճախումը:

1944 թ. փետրվարի 4-ին, ըստ վավերագրերի հաղորդած տեղեկության, քննվում է անասունների, հատկապես ոչխարների ծնի կոմպանիայի հաջող կազմակերպման հարցը:¹⁷ Ընդգծվում է, որ ոչխարաբուծական ֆերմայի վարիչ Ռուբեն Ղազարյանը ղեռ որոշակի աշխատանք չի կազմակերպել ոչխարների ծինը հաջող անցկացնելու համար, ղեռ չեն առանձնացվել գառնանոցներ, չի սահմանվել գիշերային հեթոսպահություն, ձեռք չեն բերվել դուլեր, ֆարտուկներ, չի մոբիլիզացրել բժիշկներին և անասնապահներին ծնի կոմպանիան հաջող անցկացնելու նպատակով:

1944 թ. փետրվարի 16-ին¹⁸, ըստ վավերագրերի հաղորդած տեղեկության, 2-րդ բրիգադի բրիգադիր Ստեփան Մելքոնյանը ազատվում է աշխատանքից: Նրա փոխարեն 2-րդ բրիգադի բրիգադիր է նշանակվում Ալեքսան Առաքելյանը:

1944 թ. մարտի 3-ին¹⁹ կուսակցական կազմակերպությունը լսում է գյուղխորհրդի գործկոմի նախագահ Ասատուր Կիրակոսյանի զեկուցումը՝ նվիրված կարմիր բանակայինների ընտանիքներին օժանդակություն կազմակերպելու հարցին: Նա ընդգծում է, որ ղեռևս գյուղում չի ստեղծվել այդպիսի օժանդակություն ցույց տալու նպատակով բրիգադ, որը կկարողանար կազմակերպչական բնույթ տալ օգնությանը: Կազմակերպությունը ոչխարաբուծական ֆերմայի վարիչ Ռուբեն Ղազարյանին ազատում է աշխատանքից, նրա փոխարեն նշանակում է պատերազմին մասնակցած Արգար Մանուկյանին:

¹⁵ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 22, թերթ 44:

¹⁶ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 23, թերթ 1-2:
¹⁷ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 23, թերթ 3-4:
¹⁸ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 23, թերթ 5-6:
¹⁹ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 23, թերթ 5-6:

1944 թ. մարտի 28-ի նիստում Աղվան Մանուկյանը հայտնում է, որ 6-րդ բրիգադի բրիգադիոր Կնյազ Գասպարյանը²⁰ հաջողությամբ է նախապատրաստել իր բրիգադը զարմանացանի աշխատանքներին:

1944 թ. ապրիլի 1-ին²¹ կոլտնտեսության 1-ին պահեստի պահեստապետ Վաղարշակ Կիրակոսյանը ազատվում է աշխատանքից, նրա փոխարեն պահեստապետ է նշանակվում Ստեփան Մելքոնյանը: Այդ օրը III բրիգադի բրիգադիոր Խաչո Կիրակոսյանը նույնպես ազատվում է աշխատանքից, իսկ նրա փոխարեն նշանակվում է բանակից նոր վերադարձած Խաչատուր Գրիգորի Հակոբյանը: Ոչխարաբուծական ֆերմայի հաշվառիչ է նշանակվում Անուշավան Պողոսյանը: Նույն օրը Սիմա Մկրաչյանը, որի ամուսինը զոհվել էր բանակում, ազատում են ակումբավարի աշխատանքից, նրա փոխարեն նշանակում Բեգե Դավթյանին:

1944 թ. ապրիլի 18-ին²² ոչխարաբուծական ֆերմայի վարիչ Աբգար Մանուկյանը, որը ընդամենը 35 օր էր աշխատել այդ պաշտոնում, ազատվում է աշխատանքից, նրա փոխարեն նշանակվում է Վաղարշակ Մանուկյանը: 1944 թ. մայիսի 15-ին²³, իր դիմումի համաձայն, աշխատանքից ազատվում է ԳՍԳԿ-ի նախագահ Ասատուր Կիրակոսյանը: Նրա փոխարեն նշանակվում է ոչ թե բանակից նոր վերադարձած երիտասարդ ու գրագետ կադրերից մեկն ու մեկը, այլ բոլորովին բանակ չգնացած հին կադրերից Համբարձում Դազարյանը:

1944 թ. հուլիսի 29-ին²⁴ Բարիշ Ավետիսյանը անասունների անկումի պատճառով ազատվում է աշխատանքից, նրա փոխարեն նշանակվում է Ազնիվ Ավետիսյանը: Նույն նիստում 2-րդ պահեստի պահեստապետ է նշանակվում Մնաց Շառոյանը: Սակայն սեպտեմբերի 6-ին նրան ազատում են աշխատանքից հիվանդության պատճառով և նրա փոխարեն նշանակում Հայկազ Սաֆարյանին:²⁵ Այդ նույն օրը պետկշտոդ է հաստատվում Աղվան Մանուկյանը, կալսիչի բրիգադիոր՝ Անուշավան Պողոսյանը, Մարտունու հացամթերման կայանում հացահատիկ տեղավորվելու պետ՝ Հայկազ Սաֆարյանը, իսկ ըստ բրիգադների կալերի ղեկավարներ (կալվորներ) են նշանակվում հետևյալ ընկերները՝

I. բրիգադին՝ Սարգիս Ասատրյանը, II. բրիգադին՝ Ռուբեն Դազարյանը, III. բրիգադին՝ Մնացական Մանուկյանը, IV. բրիգադին՝ Միրական Հարությունյանը, V. բրիգադին՝ Մելքոն Սարգսյանը, VI. բրիգադին՝ Գրիգոր Կիրակոսյանը:

Հացի բերքահավաքը ավարտվում է անկորուստ և սեղմ ժամկետում:²⁶

²⁰ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 23, թերթ 11:

²¹ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 23, թերթ 14-15:

²² ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 23, թերթ 17-18:

²³ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 23, թերթ 19-21:

²⁴ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 23, թերթ 28:

²⁵ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 23, թերթ 31:

²⁶ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 23, թերթ 32-35:

1944 թ. նոյեմբերի 10-ին²⁷ քննվում է անասունների ձմեռացման հարցը, որի մասին զեկուցում է կոլվարչության նախագահ Արամ Հակոբյանը:

Առաջարկվում է վերանորոգել զոմերը, հսկողություն սահմանել անասնակերի ճիշտ բաշխման վրա: Այդ նպատակով նշանակվում են հսկիչներ՝

- 1) Արամ Հակոբյանին – ոչխարաբուծական ֆերմայում,
- 2) Աղվան Մանուկյանին – կովաբուծական ֆերմայում,
- 3) Համբարձում Դազարյանին և Աստ Կիրակոսյանին – NN 2, 4, 5, 6 բրիգադներում,
- 4) Խաչիկ Հակոբյանին – N I բրիգադում,
- 5) Հովհաննես Ներսիսյանին և Ռուբեն Դազարյանին – վանքի քաղամասի զոմերում:

Անասունների ձմեռացումը հաջող կազմակերպելու նպատակով կուսակցական կազմակերպությունը ազիտատորների կազմը քարմացնում է և նրանց կոչ է անում՝ ամեն օր լինել անասնագոմերում, իլիչովկաներ լույս ընծայել, քննադատել թերությունները և զովերգել լավ աշխատանքը:²⁸ Ազիտատորներ են նշանակվում՝

- 1) Աղվան Մանուկյանը, 2) Արամ Հակոբյանը, 3) Համբարձում Դազարյանը, 4) Խաչատուր Հակոբյանը, 5) Բեգե Դավթյանը, 6) Վարանցով Ասատրյանը, 7) Թամարա Ավետիսյանը, 8) Անահիտ Հարությունյանը, 9) Հրամուշ Արզումանյանը, 10) Արմիկ Արզումանյանը, 11) Շուշիկ Զիպյանը:

Այլևերև է, որ պատերազմին մասնակցած բազմաթիվ երիտասարդ ու գրագետ կադրերից միայն երկուսին՝ Բեգե Դավթյանին ու Խաչատուր Հակոբյանին են ներգրավել ազիտատորների կազմում:

Փաստորեն պատերազմի տարիներին, մասնավորապես վերջին տարիներին գյուղում պայքար է գնացել պատերազմին չմասնակցած հին կադրերի և պատերազմին մասնակցած երիտասարդ, գրագետ նոր կադրերի միջև: Այս պայքարը շարունակվել է նաև պատերազմից անմիջապես հետո ընկած ժամանակաշրջանում:

1944 թ. դեկտեմբերի 9-ին²⁹ կուսակցական կազմակերպությունը լսում է կոլվարչության նախագահ Արամ Հակոբյանի զեկուցումը 1945 թ. զարմանացանի նախապատրաստման աշխատանքների մասին: Նա ընդգծում է, որ անհրաժեշտ է գտել ու ախտահանել սերմացուն, վերանորոգել գյուղգործիքները, լավ կազմակերպել քաշող անասունների խնամքը, կազմակերպել զոմադրով ցանքատարածությունների պարարտացումը, զոմերին տրամադրել նավթի լամպեր, անասուններին կապելու շղթաներ և այլն:

1945 թվականի մայիսի 9-ին ավարտվում է Հայրենական մեծ պատերազմը: Այդ մեծ հաղթանակի մեջ իր լուծման ունեղ նաև հեռավոր

²⁷ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 23, թերթ 36:

²⁸ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 23, թերթ 37-39:

²⁹ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 23, թերթ 40:

Գեղամա լեռների մեջ հայարտորեն տարածված Չորագյուղը: Հաղթանակի բերկրանքը ցնցեց նաև ձորագյուղիներին: Մակայն այդ բերկրանքը կարճ տևեց, քանի որ բանակ մեկնած 371 երիտասարդներից տուն վերադարձան ընդամենը 186 հոգի: Մնացած 185 ընտիր երիտասարդներն իրենց հրաշալի կյանքը տվեցին մեծ հայրենիքի պաշտպանության համար: Այդ 185 զոհվածներից 86-ը նույնիսկ նկար էլ չեն թողել, որ իրենցից հետո ծնողներն ու հարսգատները իրենց ծանր վիշտը ամոքեն նրանցով: Այդ 86 քաջորդիներից մեզ մնացել են նրանց հետևյալ անուն, ազգանուն, հայրանունները.

Ժողովը արձանագրում է, որ դեռ շարունակում են գոյություն ունենալ գյուղում տեղ գտած շատ ու շատ թերությունները: Դրանցից են ազիտմասսայական աշխատանքների ցածր մակարդակը, ԼԿԵՍ կազմակերպության խմբակների թուլությունը և կոմերիտականների ոչ բավարար մասնակցությունը տնտեսության աշխատանքներին, դպրոցի աշակերտների վատ հաճախումը և դպրոցի ցածր առաջադիմությունը, դպրոցական շենքի անբավարար վիճակը և այլն:

1951 թ. Մարտունու կուսշրջկոմը քննարկել է Չորագյուղի կուսկազմակերպության աշխատանքների դրվածքը¹² և արձանագրել, որ թերություններ շատ կան ամենուրեք: Չորագյուղի կուսակցական կազմակերպությունը քննարկելով Մարտունու կուսշրջկոմի որոշումն իր մասին, դիմում է կտրուկ միջոցների: Ամենից առաջ փոխում է խմբկոլի կազմը: Լրացվում է ազիտատորների կազմը, որտեղ ընտրվում են նոր ազիտատորներ՝ Մարուսյա Ղարաբաղյանը, Մելիմբեկ Գևորգյանը, Գրաստան Հակոբյանը, Սարգիս Ղազարյանը, Գյուլաբ Սկրտչյանը, Բեգե Պողոսյանը, Ավետիք Մահակյանը (Աղեկյանը): Այս մարդկանցից Գրաստան Հակոբյանը, Սարգիս Ղազարյանը, Գյուլաբ Սկրտչյանը, Բեգե Պողոսյանը հենց նոր էին ավարտել Նոր Բայազետի (այժմ՝ Գավառ) մանկավարժական ուսումնարանը, որի շրջանավարտները միշտ էլ եղել են բազմակողմանի զարգացած մասնագետներ: Այդ մարդիկ աշխատանքի էին անցել Չորագյուղի դպրոցում: Դրանց ներգրավվումը ազիտատորների շարքում հսկայական ներդրում էր ազիտկոլեկտիվի աշխատանքների վերելքի գործում:

Կուսակցական կազմակերպությունը անփոփոխ է թողնում Կոլտնտեսության կադրերի կազմը, բացառությամբ երկուսի՝ հավաքածական ֆերմայի վարիչ Յուլակ Գալստյանի և III բրիգադի բրիգադի Իվան Հակոբյանի, որոնց ազատում է նրանց դիմումի համաձայն և նրանցից I-ի փոխարեն նշանակում է Վաղո Հովհաննիսյանին, իսկ II-ի փոխարեն՝ Խաչիկ Սարգսյանին: Ժողովը որոշում է դիմել կառավարությանը Չորագյուղում միջնակարգ դպրոցի շենք կառուցելու պահանջով: Ժողովը Աղվան Մանուկյանին ազատում է ազիտկոլեկտիվի ղեկավարի պաշտոնից և նրա փոխարեն նշանակում Մուշեղ Գալստյանին: Ժողովը մատնանշում է, որ Չորագյուղի կուսակցական կազմակերպության շարքերում դեռ կան մարդիկ, որոնք անզրագետ են ու կիսազրագետ: Ժողովը պահանջում է նրանցից

⁹ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 27, թերթ 26-30:

¹⁰ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 27, թերթ 37-38:

¹¹ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 27, թերթ 77:

¹² ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 29, թերթ 1-41:

մինչև 1951 թ. սեպտեմբերը ձգտեն դառնալ գրագետներ, զոնե լրիվ տառա-
ճանաչ: Ժողովը որոշում է կանանց ներգրավել գյուղի ղեկավար աշխա-
տանքներում, հնարավորություն ստեղծել գյուղում աճեցնելու պտղատու
ծառեր: 1951 թվականի ապրիլի 25-ին կուսկազմակերպությունը Արտուշ
Գեղամի Մանուկյանին կուսթեկնածուից փոխադրում է կուսանդամ:
Կոլտնտեսության ընդհանուր ժողովը 1950 թվականին պայմանագիր է
կնքում Մարտունու ՄՏԿ-ի (Էմտեսի) հետ, որ այսուհետև տրակտորներով
պետք է վարել կոլտնտեսության ամբողջ հողատարածությունները, քանի որ
եզնեթի միջոցով կատարվող վարն ու ցանքը քիչ արտադրողական է:
Սակայն կուսկազմակերպությունը ժողովում ընդգծում է, որ այդ տնտեսա-
կան տարվա 5 ամիսներին լիարժեք հնարավորություն չտրվեց տրակտոր-
ներով ամբողջովին կատարել վարն ու ցանքը, հատկապես ժամանակին ձեռք
չբերվեցին պահեստամասերը և պարապուրդը մեծ թիվ կազմեց: Պետք է
այսուհետև հոգատարություն հանդես բերել այդ հարցում, քանի որ մեխանի-
զացիայի ներդրման միջոցով միայն կարելի է բարձրացնել գյուղա-
տնտեսության արդյունավետությունը: Հունիսի 10-ին Մնաց Ավետիսյանը
ընդունվում է կուսթեկնածու:

1951 թ. հունիսի 16-ին կուսկազմակերպության բյուրոյի քարտուղար
Գրիգոր Ասատրյանը ազատվում է աշխատանքից, նրա փոխարեն նշանակ-
վում է Մանուկ Գալստյանը (Ծակ-քարից): Եթե Գրիգոր Ասատրյանը
ուշադրությունը կենտրոնացնում էր ազիտ-պրոպագանդայի և քաղու-
սուցման բարձրացման վրա, ապա Մանուկ Գալստյանը ուշադրությունը
բևեռում է հենց անմիջապես տնտեսության ճյուղերի կատարելագործման,
փորձի փոխանակման, անմիջապես կոլտնտեսության դաշտերում աշխա-
տանք կազմակերպելու վրա (ծխախտագործության, անասնապահության,
հացի, կարտոֆիլի, խոտի բերքի ավելացման, մթերումների կարգավորման,
աշխօրերի ինքնարժեքը բարձրացնելու միջոցով): Նրա համար արտադ-
րողականության բարձրացման ամենաշահագրգիռ միջոցը սոցիալիստա-
կան մրցությունն էր: Նա հատուկ ուշադրություն էր դարձնում գրագետ ու
խելոք երիտասարդներին կուսակցության շարքեր ընդունելու և նրանց
միջին օղակի ղեկավար աշխատանքի նշանակելու վրա:¹³

1952 թ. հունվարի 5-ին տեղի ունեցան Ձորագյուղի կուսակցական
կազմակերպության ընտրությունները:¹⁴ Բյուրոյի կազմում ընտրվեցին
Արամ Հակոբյանը, Արամ Պողոսյանը, Գրիգոր Ասատրյանը, Կնյակ
Գասպարյանը, Հովհաննես Սարգսյանը, Մազար Դազարյանը, Հովհան-
նես Ներսիսյանը: Կազմակերպության բյուրոյի քարտուղար է ընտրվում
Գրիգոր Ասատրյանը (նա ընտրվում է կուսկազմակերպության քարտու-
ղար): Մարտունու կուսակցական կոնֆերանսի պատգամավոր են ընտրվում

¹³ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 30, թերթ 1-51:

¹⁴ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 31, թերթ 1-7:

Արամ Հակոբյանը, Գարեգին Գևորգյանը (շրջանից), Գրիգոր Ասատրյանը,
Ապրես Սարգսյանը, Արևիատ Միքայելյանը (Ծակ-քարից):

Ըստ վավերագրերի հաղորդած տեղեկությունների, 1952 թվաբանի սկ-
զբին Գևորգ Միքայանը նշանակվում է կովաբուծական ֆերմայի վարիչ, իսկ
Արամ Պողոսյանը՝ ոչխարաբուծական ֆերմայի վարիչ: Գառնիկ Սարգ-
սյանը, որը Մանասար Հակոբյանի փոխարեն նշանակվել էր խոզաբուծական
ֆերմայի վարիչ, 1952 թ. մարտի 15-ին ազատվում է աշխատանքից, իսկ
նրա փոխարեն նշանակվում է Վ. Հայրապետյանը: Այդ նույն օրը Ցուլակ -
Գալստյանը նշանակվում է կաթգործարանի վարիչ, Նիկոլա Սարգսյանը -
ազատվում է II բրիգադի բրիգադիքի աշխատանքից, նրա փոխարեն
նշանակվում է Արտեմ Սարգսյանը: Նույն օրը Գեղամ Կիրակոբյանը (Ս-
արգսյանը) նշանակվում է շինարարության բրիգադիք: Հուլիսի 11-ին
Հովհաննես Գևորգի Շառսյանը և կոմերիտական Պատվական Գրիգորի -
Գալստյանը ընդունվում են կուսակցության շարքերը: Երբ Կարապետ
Ավետիսյանը ազատվում է ԼԿԵՄ կազմակերպության քարտուղարի պաշ-
տոնից, նրա փոխարեն ընտրվում է Արտավազ Կարենի Գրիգորյանը:
Որպես լավ աշխատողներ՝ Բեգե Սահակյանը և Կոմիտաս Հակոբյանը
ընտրվում են խմբիկի անդամ:

1952 թ. կոլտնտեսության վարչության նախագահ Արամ Հակոբյանին
Մարտունու կուշրջկոմի բյուրոն ազատում է աշխատանքից և ուղարկում
բանտ՝ մասնավոր կարգով կոլտնտեսության անասունների համար
շրջաններ ու աղ, անասնագույն կառուցելու համար փայտ ու մեխ, անասնա-
գույնների համար նավթի լամպեր և այլն գնելու պատճառով, որը ընդհանուր
երևույթ էր ամբողջ միությունում, և որի պատճառով բանտարկվում են
հազարավոր կովարչնախագահները: Նրա փոխարեն Ձորագյուղի
կուսկազմակերպությունը ժամանակավորապես կովարչության նախագահ
է նշանակում Գրիգոր Ասատրյանին:

1953 թ. հունվարի 17-ին շրջանային խորհրդի ընտրությունների ժամա-
նակ 7-ամյա դպրոցի ուսուցչուհի, տարածքային կուսկազմակերպության
քարտուղար Մարտիյա Գրիգորի Դարաբաղյանը ընտրվում է Մարտունու
շրջանային խորհրդի պատգամավոր:¹⁵ Փետրվարի 4-ին, երբ քննվում է
կոլտնտեսության ղեկավար կադրերի նշանակման հարցը, բոլոր կադրերը
մնում են անփոփոխ: 1953 թ. մարտի 19-ին Կարապետ Եզնակի
Ավետիսյանը ընտրվում է Ձորագյուղի կուսկազմակերպության բյուրոյի
անդամ: 1953 թ. մարտի 5-ին մահանում է Ի.Վ. Ստալինը: Նույն թվականի
հուլիսի 18-ին ՄՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի պլենումը Լ.Պ. Բերիային
համարում է որպես հակակուսակցական և հակապետական անձնավորու-
թյուն: Ձորագյուղի կուսկազմակերպության դռնփակ նիստում ելույթ են
ունենում կուսակցական Աղվան Մանուսյանը, բանտից նոր ազատված և
արդարացված, կովարչության նախագահի պաշտոնին վերադարձած

¹⁵ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 32, թերթ 34:

Արամ Հակոբյանը, կոմունիստ Մուշեղ Գալստյանը և ուրիշներ, որոնք քննադատում են Լ.Վ. Բերիային նրա թույլ տված հակակոստակցական, հակապետական գործունեության համար (Արամ Հակոբյանից բացի բանտից ազատվել են Խորհրդային Միության բանտարկված բոլոր կոլվարչնախագահները): Նույն օրը Գառնիկ Ավետիսյանը վերականգնվում է կուսակցության շարքեր: 1953 թվականի օգոստոսի 21-ին Գրիգոր Ասատրյանի փոխարեն կուսկազմակերպության քարտուղար է ընտրվում Ի պահեստի պահեստապետ Կարապետ Եզնակի Ավետիսյանը: Կարապետ Ավետիսյանից բացի բյուրոյի անդամ են ընտրվում Կնյազ Գասպարյանը, Ապրես Սարոյանը, Արամ Հակոբյանը, Գևորգ Մեդրյանը: Հոկտեմբերի 10-ին ազիտկոլեկտիվը լրացվում է նոր ազիտատորներով: Գրանք են ուսուցիչներ Խաչիկ Մնացականյանը, Վահան Աբրահամյանը, Ռոզա Բադալյանը:¹⁶ Նոյեմբերի 18-ին Հովհաննես Շատոյանը և Պատվական Գալստյանը կուսբեկնածուից փոխադրվում են կուսանդամ:

Չորագյուղի շինարարական աշխատանքներին մեծ լիցք են հաղորդում Քաջարանի շինարարական ուսումնարանը ավարտած վարպետներ Վարազդատ Պետրոսյանը, Սարգիս Խլղաթյանը, Ռաշիդ Թարթիկյանը, Գրիշա Դավթյանը և Հակոբ Ալավերդյանը:

§ 5. ՄՍԱԼԻՆՅԱՆ ՌԵԺԻՄԻՅ ՀԵՏՈ

Ստալինյան ռեժիմի սխալները բացահայտելուց և քննադատելուց հետո զգալի փոփոխություններ են տեղի ունենում Չորագյուղի կյանքում: Մարդիկ, ովքեր Հայրենական մեծ պատերազմի ժամանակ իրենց կամքից անկախ գերի էին ընկել, պատերազմից երկար ժամանակ հետո սարսափի մեջ էին, թե օրերից մի օր իրենց էլ Միբիբի Ալթայան երկրամաս ու ավելի վատ տեղ կաքտրեն: Ստալինյան ռեժիմը քննադատելուց հետո այդ մարդիկ թեթև շունչ քաշեցին: Սակայն գյուղի պահպանողական ղեկավարների ու նրանց համախոհների հայացքը նման մարդկանց մասին չէր փոխվում աշխատանքի անցնելու հետ կապված, կամ կյանքի այլևայլ հարցերը լուծելիս: Ինչևիցե, կամա թե ակամա գյուղի ղեկավար օրգանը՝ կուսակցական կազմակերպությունը աշխատանքի նոր ոճ էր ձեռք բերել: Կադրերի ընտրության հարցում իր հայացքը ուղղում էր երիտասարդների վրա: Օրինակ՝ 1954 թ. կադրերի ընտրության հարցում թեև շատ կադրեր մնացին անփոփոխ, բայց, այնուամենայնիվ, որոշ մարդիկ փոխվեցին: Այսպես, Ի պահեստի պահեստապետ Կարապետ Ավետիսյանի փոխարեն նշանակվեց պատերազմին մասնակցած Խաչո Ավետիսյանը, իսկ մեղվաբուծության բրիգադիր նշանակվեց Կարապետ Ավետիսյանը, Ի պահեստի պահեստապետ

նշանակվեց բանակում հաշմանդամ դարձած Հայկ Գալստյանը, շինարարության բրիգադիր նշանակվեց պատերազմին մասնակցած և հաշմանդամ վիճակով տուն վերադարձած Նիկոլա Սարգսյանը, ծխախոտի բրիգադիր նշանակվեց երիտասարդ, բայց գրագետ Հակոբ Կարոյանը (Մանուկյանը), կոլվարչության կազմում լրացուցիչ ընտրվեցին շարքային լավ աշխատողներ Շահնազ Խաչոյի Ավետիսյանը և Համո Բեզլարի Չաքարյանը:¹ Գյուղում ստալինյան ռեժիմի դեմ և կողմ մարդիկ բաժանվում են խմբերի ու պայքարում իրար դեմ: Գյուղի կուսակցական կազմակերպությունը պահանջեց նրանցից այդ հարցում չշտապել, սպասել ՄՍԿԿ Կենտրոնական կոմիտեի համապատասխան ցուցումին:

Ըստ վավերագրերի² 1955 թ. հունվարի 7-ին Համբարձում Բազարյանին ազատում են ԳՍԳԿ-ի նախագահի պաշտոնից, նրա փոխարեն նշանակում Կնյազ Գասպարյանին: Կոլվարչության նախագահ Արամ Հակոբյանը աշխատանքից ազատվելու դիմում է տալիս, բայց կուսկազմակերպությունը հետաձգում է այն: Փետրվարի 2-ին Չորագյուղի ԳՍԳԿ-ի ղեկավարներ են ընտրվում պատերազմի մասնակիցներ Գևորգ Մեդրյանը, Հովհաննես Սարգսյանը, Ապրես Սարոյանը: Կուսկազմակերպության միացյալ ժողովում քննարկվում է դպրոցի վիճակը: Դպրոցի դիրեկտոր Ա. Մանուկյանը զեկուցում է, որ հաճախումները ցածր են, որի պատճառով էլ ցածր է դպրոցի առաջադիմությունը: Ի-ին կիսամյակում այն կազմել է 73,7%: Կուսկազմակերպությունը և ԳՍԳԿ-ն պետք է օգնեն լավացնելու հաճախումների վիճակը: Չեկուցման շուրջ ելույթ են ունենում դպրոցի ուսուցիչներ Կամսար Դավթյանը, Վորդյա Բազարյանը (նա Թագագյուղի դպրոցից նոր էր տեղափոխվել Չորագյուղի դպրոց), Գառնիկ Սարգսյանը, ԳՍԳԿ-ի նախագահ Կնյազ Գասպարյանը, կոլվարչնախագահ Արամ Հակոբյանը, կուսկազմակերպության քարտուղար Կարապետ Ավետիսյանը: Նրանք առաջարկում են նախ դպրոցի դասդեկ-ուսուցիչները պետք է աշխատեն, ապա նոր ԳՍԳԿ-ն և կուսակցական կազմակերպությունը՝ հաճախումների վիճակը կարգավորելու և դպրոցի առաջադիմությունը բարձրացնելու ուղղությամբ:

1955 թ. սկզբից Ծակ-քարը անջատվում է Չորագյուղից: 1955 թ. Չորագյուղի կոլեկտիվ տնտեսության ղեկավար կադրերը հիմնականում մնում են նույնը, ինչ որ նախորդ տարում էին: Նորությունը այն էր, որ բուժակ Բադիշ Ավետիսյանը նշանակվում է դաշտավարական բրիգադիր, Սելիմբեկ Գևորգյանը՝ վաֆի վարիչ, Մնաց Ավետիսյանը՝ թռչնաբուժական ֆերմայի վարիչ, Պատվական Գալստյանը՝ կարտոֆիլի պահեստապետ, Մնաց Սողոյանը՝ հաշվետար, Ավետիք Մահակյանը՝ գանձապահ, Հայկազ Սաֆարյանը՝ կոլվարչության հանձնաժողովի նախագահ, Արտեմ Պողոսի Սարգսյան

¹⁶ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 34, թերթ 39:

¹ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 34, թերթ 60:

² ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 34, թերթ 67-72:

նր՝ բանջարաբուստանային կուլտուրաների բրիգադիր, Համբարձում Ղազարյանը՝ կաթգործարանի վարիչ:³

1955 թ. մարտի 21-ին Չորագյուղում ստեղծվում է Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեին աջակցող հանձնաժողով, որի կազմում ընտրվում են Կարապետ Ավետիսյանը, Խաչիկ Սարգսյանը, Աղվան Մանուկյանը, Վոլոդյա Ղազարյանը, Մարուսյա Ղարաբաղյանը, Գառնիկ Ավետիսյանը, Սարիբեկ Ումրշատյանը, Աղավնի Կիրակոսյանը (անասնաբույժ), Համո Ջաքարյանը (հարվածային կուլտուրեսական): Սեպտեմբերի 15-ին լավ աշխատող Աղախան Ջաքարյանը ընտրվում է կուսակցության շարքեր որպես կուսբեկնաժու: Հոկտեմբերի 13-ին տեղի են ունենում կուսակցական կազմակերպության բյուրոյի հաշվետու ժողովը, ինչպես նաև կազմակերպության բյուրոյի ու կազմակերպության քարտուղարի ընտրությունները: Բյուրոյի կազմում ընտրվում են Կարապետ Ավետիսյանը, Արամ Հակոբյանը, Սոս Սողոյանը, Մազբաղ Ղազարյանը, Աարես Սարոյանը: Կարապետ Ավետիսյանը ընտրվում է կուսակցակերպության քարտուղար: Մարտունու շրջանի 26-րդ կուսկոնֆերանսի պատգամավորներ են ընտրվում Կարապետ Ավետիսյանը, Արամ Հակոբյանը և Արտեմ Սարոյանը: Գյուղի լավագույն հովիվներ են ճանաչվում՝ 1) Արամ Ղազարյանը, 2) Լևոն Ավոյանը, 3) Մուկուչ Սարգսյանը, 4) Գառնիկ Կարոյանը (Մանուկյանը), 5) Վաղինակ Խղաթյանը, 6) Գրիգոր Մուրադյանը, 7) Աշոտ Սաֆարյանը, 8) Թեոֆիլ Մարտոյանը, 9) Գորգին Ֆահրադյանը, 10) Մելիքսեթ Սաֆարյանը, 11) Աղվան Ղազարյանը: Նրանց ներկայացնում են Արիության մեղալի և դրամական պարզևատրության:⁴

1956 թվականը սկսվում է կուլվարչկազմի և վերստուգիչ հանձնաժողովի կազմի ընտրությամբ: Կուլվարչկազմում ընտրվում են Արամ Հակոբյանը, Կարապետ Ավետիսյանը, Կնյազ Գասպարյանը, Համո Ջաքարյանը, Շահնազ Ավետիսյանը, Արտեմ Սարոյանը, Սոս Սողոյանը: Կուլվարչնախագահ է ընտրվում Արամ Հակոբյանը: Վերստուգիչ հանձնաժողովի կազմում ընտրվում են Հայկազ Սաֆարյանը, Գառնիկ Մարտոյի Հակոբյանը, Բաղդասար Մանուկյանը: Կուլտուրեսության կադրերի հաստատման ժամանակ աշխատանքից ազատում են Ավետիք Սահակյանին (Աղեկյանին), Հովհաննես Ներսիսյանին (նրա փոխարեն նշանակում են Ջանիբեկ Գրիգորյանին), Մնաց Ավետիսյանին (նրան թողնում են աշխատել որպես ավագ հավապահ), ձիաբուծական և խոզաբուծական ֆերմաները միացնում են և ֆերմայի վարիչ նշանակում Մանասար Հակոբյանին, կաթգործարանի վարիչ են նշանակում Յուրակ Գալստյանին:

1956 թ. ապրիլի 6-ի կուսակցական ժողովում մասսայականացվում են ՍՄԿԿ XX համագումարի նյութերը:⁵ Ելույթ ունեցողները նշում են, որ Չո-

³ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 35, թերթ 32-33:

⁴ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 35, թերթ 32-33:

⁵ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 35, թերթ 80-83:

րագյուղի կուլտուրեսությունը և դպրոցը շատ ետ են մնում Կոմունիստական կուսակցության արդի պահանջներից: Դեռ ցածր է մեր կուլտուրեսության արտադրության մակարդակը: Թեև Չորագյուղը Մարտունու շրջանի խոշոր գյուղերից մեկն է, բայց մինչև այժմ այնտեղ չկա միջնակարգ դպրոց: Երեսխաները 7-ամյա դպրոցն ավարտելուց հետո թողնում են ուսումը, որի պատճառով էլ գյուղում հետաքրքրություն չկա ուսման նկատմամբ: Թույլ են ակումբ-գրադարանի, ագիտկուլեկտիվի, կուսակցական ու ԼԿԵՄ կազմակերպությունների քաղաքացման աշխատանքները: Ժողովում ելույթ են ունենում ուսուցիչներ Գառնիկ Սարգսյանը, Վոլոդյա Ղազարյանը և ուրիշներ:

1956 թ. Չորագյուղի կուսակցակերպության ժողովում քննարկվում են ՍՄԿԿ ԿԿ-ի «Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները հաղթահարելու մասին» նամակը:⁶ Ժողովը արձանագրում է, որ Ստալինը միանձնյա է դեկավարել երկիրը, իսկ կոմունիստական կուսակցությունը պահանջում է կոլեգիալ դեկավարություն, որը համեմատաբար քիչ սխալներ բաց կթողնի: Ստալինը խզել է ՍՄԿԿ-ի կապերը դեմոկրատական աշխարհից, իսկ նման մեկուսացումը մեր երկիրը տարել է դեպի հետ: Ստալինի սխալ միանձնյա դեկավարումը առաջ է բերել նրա նկատմամբ անհատի պաշտամունք, որը հսկաստուն է կոմունիստական կուսակցության ծրագրին ու կանոնադրությանը: Ելույթ ունեցողներից մեկն է նշում են, որ այդ նույն ոգով է աշխատել Չորագյուղի կուսակցակերպությունը և կուլվարչությունը: Մեր կուլտուրեսությունը շարունակում է իր աշխատանքները կատարել քաշող ուժի՝ եզների միջոցով, իսկ Մարտունու ՍՄԿ-ի հետ հարաբերությունը թույլ է: Ահա սա է մեր տնտեսության արտադրության մակարդակի ցածր լինելու պատճառը: Անհապաղ պետք է ուղղել այդ սխալը:

Հոկտեմբերի 15-ի հաշվետու ընտրական ժողովում անփոփոխ ձևով դարձյալ նույն անձնավորություններն են ընտրվում բյուրոյի կազմում, ինչ որ նախորդ տարում:

1956 թ. նոյեմբերի 22-ին դպրոցի դիրեկտոր Աղվան Մանուկյանին ազատում են աշխատանքից, նրա փոխարեն նշանակում Վարդաձոր (Աղամխան) գյուղի բնակիչ Գարսևան Ավետիսյանին: Դպրոցի ուսմասվարը, որը շարունակում էր մնալ Վահան Աբրահամյանը, կուսակցական ժողովին զեկուցում է, թե հաճախումները թույլ են դպրոցում, առաջադիմությունը ցածր է, չի կատարվում պարտուսը: Միացյալ ժողովում ելույթ են ունենում և դպրոցի աշխատանքների թերությունները քննադատում ուսուցիչներ Վոլոդյա Ղազարյանը, Ալբերտ Ասատրյանը, Սարգիս Ղազարյանը, Սոս Մնացականյանը, ինչպես նաև դպրոցի նոր դիրեկտոր Գարսևան Ավետիսյանը:

Սկսած 1954 թվականից ՍՄԿԿ ԿԿ-ն փակ նամակներ է ուղարկում կուսակցական կազմակերպություններին, որպեսզի նրանք իմանան երկրի նկրտում գոյություն ունեցող սխալների մասին, քննադատեն դրանք և թույլ չտան նման սխալներ գոյություն ունենան իրենց շարքերում: Նման հերքա-

⁶ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 35, թերթ 87-90:

կան փակ նամակ է քննարկում Չորագյուղի միացյալ կուսակցական կազմակերպությունը 1957 թ. հունվարի 25-ին, որի մեջ քննադատվում են այն կոմունիստները, ովքեր չեն հասկանում, թե որն է կուսակցության գծի ճիշտ և սխալ կողմը և հախտուն հարձակումներ են գործում կուսակցության գծի վրա: Հարկավոր է կուսակցական կազմակերպություններին ժամանակին համապատասխան ցուցումներ տալ, որպեսզի սխալի հետ ճիշտն էլ չքննադատվի: 1957 թ. կադրերի հաստատման ժամանակ աշխատանքից ազատում են պատերազմի I խմբի հաշմանդամ Մնաց Մողոյանին, պատերազմի հաշմանդամ Յուլյա Գալստյանին, պատերազմի մասնակից Ջանիբեկ Գրիգորյանին: Դրանցից վերջինի փոխարեն աշխատանքի են նշանակում ծխախոտի որակյալ մասնագետ Հովհաննես Ներսիսյանին: Ժողովը հաստատում է Վաչիկ Կիրակոսյանին իր կին Աղավնի Կիրակոսյանի հետ ամասնաբույժներ, քանի որ նրանք ունեն համապատասխան մասնագիտական կրթություն և աշխատում են շատ բարեխիղճ: Ամասնաբույժ են հաստատում Խաչիկ Կարապետյանին, որը նույնպես ուներ համապատասխան մասնագիտական կրթություն (նրանք երեքն էլ ավարտել էին Նոր-Բայազետի (այժմ՝ Գավառ) ամասնաբուժական-ամասնաբուժական տեխնիկումը): Փաստորեն գյուղում առաջ է գալիս մասնագետ կադրերին ղեկավար աշխատանքի նշանակելու պահանջը:

Հունիսի 3-ին քննվում է հեթոթական փակ նամակը, որն ուղարկել էր ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը՝ ոչխարաբուծության զարգացման նպատակով: Կուսակցական ժողովում առաջարկվում է ավելացնել ոչխարների գլխաքանակը և բարձրացնել նրանց բրդատվությունը: Ակներև է, որ ստալինյան ռեժիմը, որն ուղղված էր մարդու դեմ, իր տեղը զիջում է ժողովրդավարությանը, որը կոչ է անում աշխատավոր մարդկանց, խրախուսում նրանց բարձրացնելու իրենց աշխատանքի արտադրողականությունը, որով կբարձրանար մասնաբույժների ինքնարժեքը, կավելանային իրենց ապրուստի միջոցները:

Հուլիսի 7-ին քննվում է ՍՄԿԿ ԿԿ փակ նամակը Մոլոտովի, Կազանովիչի, Մալենկովի և Շեպիլովի սխալ գծի մասին:⁷ Փաստորեն հարվածի տակ են վերցվում ոչ միայն Ստալինը, այլև նրա «Գվարդիայի» անդամները, ովքեր համառում են իրենց սխալի մեջ: Ընդհանրապես այս ձևը, փաստորեն, ազատում է մարդկանց իրենց երկար ժամանակ ճնշող չիմնավորված սարսափի կապանքներից: Դրանով, փաստորեն, ընդգծվում է, որ անքննադատելի մարդիկ չկան: Եթե մարդը սխալ է կատարել, ապա նա պետք է քննադատվի, որպեսզի ուրիշները չկրկնեն այդ սխալը:

Նոյեմբերի 9-ին տեղի է ունենում Չորագյուղի կուսակցական կազմակերպության բյուրոյի հաշվետվությունը մեկ տարվա կատարած աշխատանքների մասին: Ընտրությունների ընթացքում բյուրոյի և Մարտունու կուսշրջկոմի կոնֆերանսի պատգամավորների կազմում ընտրվում են նախորդ տարվա նույն

⁷ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 36, թերթ 51-52:

անձնավորությունները: Կուսակցական կազմակերպության քարտուղար է վերընտրվում Կարապետ Ավետիսյանը:

1958 թ. հունվարի 4-ին հաստատվում են կոլտնտեսության միջին օղակի ղեկավար կադրերը: Փոփոխությունը հետևյալներն էին՝ III բրիգադի բրիգադիոր Խաչո Սարգսյանի փոխարեն բրիգադիոր է նշանակվում Արտավազ Գրիգորյանը, IV բրիգադի բրիգադիոր Ազնիվ Սահակյանի փոխարեն՝ երիտասարդ կոմունիստ Աղախան Ջաքարյանը, Բեգե Սահարայանին հաստատում են V բրիգադի բրիգադիոր, Արտեմ Սարգսյանին (Մրապոյանին) ազատում են բանջարաբուստանային կուլտուրաների բրիգադիորի աշխատանքից, նրա փոխարեն նշանակում Ավետիք Սահակյանին, կոլտնտեսության գնորդ նշանակում Համբարձում Գազարյանին, շինարարության բրիգադիոր՝ Գևորգ Մեերյանին, որը մինչ այդ աշխատում էր ֆուրաժեր, տրակտորի բրիգադիոր են նշանակում Ջալիբեկ Գրիգորյանին: Մյուս կադրերը մնում են անփոփոխ: Նոր նշանակված այդ կադրերից ոմանք ունեին միջնակարգ մասնագիտական կրթություն (Արտավազ Գրիգորյան, Ավետիք Սահակյան, Ջալիբեկ Գրիգորյան):

1958 թ. սեպտեմբերի 4-ին ամասնաբույժ Խաչիկ Կարապետյանի բողոքի հիման վրա կովաբուժական ֆերմայի վարիչ Ապրես Սարոյանին ազատում են աշխատանքից և կուսբյուրոյի անդամությունից, իսկ նրա փոխարեն կովաբուժական ֆերմայի վարիչ են նշանակում IV բրիգադի բրիգադիոր Աղախան Ջաքարյանին, որը երկար ժամանակ աշխատել էր շաքարային ամասնապահ: Նրա փոխարեն բրիգադիոր են նշանակում Ավետիք Սահակյանին (Աղեկյանին):⁸

Դեկտեմբերի 16-ին քննարկվում է Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի որոշումը կաշառակերության ու չարաշահումների վերաբերյալ: Ժողովը արձանագրում է, որ կաշառակերությունը արմատավորվել է շրջանի ներքին գործերի բաժնում, դատարանում ու դատախազությունում, թեև նրանք են կոչված պայքարելու կաշառակերության ու չարաշահումների դեմ: Սևանա լճից ստացված բարիքը՝ ձուկը, որը համաժողովրդական ունեցվածք է, ձկնորսների կողմից վաճառվում է ու դրամը նրանց գրպանն է մտնում: Չարաշահումներ են տեղ գտել շրջկոմպի ցանցում: Որևէ լավ հագուստ կամ շինանյութ առանց ավելորդ գումարի չենք կարող գնել: Սակայն երույթ ունեցողներից և ոչ մեկը չի խոսում, թե իրենց կոլտնտեսությունում արդյոք նկատվում են կաշառակերության ու չարաշահումների դեպքեր: Դրա պատճառը անհամարձակությունն էր, որ գալիս էր անցյալում ստեղծված վախից:

1958 թվականն ավարտվում է կուսակցական կազմակերպության բյուրոյի հաշվետվությամբ, որի մասին ղեկտեմբերի 23-ին կուսակցական ժողովում զեկուցում է կուսակցական կազմակերպության բյուրոյի քարտուղար Կարապետ Ավետիսյանը: Ժողովը արձանագրում է, որ կոլտնտեսությունը, բացի հավել-

⁸ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 37, թերթ 50-51:

րի ձվատվությունից, անտեսության բոլոր ճյուղերի գծով կատարել ու գերակատարել է պետական պլանային առաջադրանքները:

1959 թվականը սկսվում է զարմանացանի աշխատանքների նախապատրաստման և անասունների ծնի կամպանիան հաջող կազմակերպելու հետ կապված աշխատանքների քննարկումով: Ապրիլի 16-ի ժողովում կոչ է արվում բարձրացնել կաթի արտադրությունը անտեսությունում, ավելացնել ոչխարների գլխաքանակը և բրդատվությունը: Պահանջվեց ստանձնած պլանները կատարել ժամանակին ու որակով:

1959 թվականի հունիսի 17-ին իր դիմումի համաձայն կոլվարչնախագահ Արամ Հակոբյանին Մարտունու կուսշրջկոմի բյուրոն ազատում է աշխատանքից և նրա փոխարեն կոլվարչության նոր նախագահ է նշանակում Կարապետ Եզնակի Ավետիսյանին, որը մինչ այդ աշխատում էր կուսկազմակերպության քարտուղար: Սա արդեն հին ու նոր, պատերազմին մասնակցած և չմասնակցած կադրերի պայքարի ավարտն էր, քանի որ ԳՍԳԿ-ի և կուսկազմակերպության քարտուղարի աշխատանքները վաղուց էին անցել պատերազմին մասնակցած նոր կադրերի ձեռքը: Բայց դրան հաջորդում է կադրային նոր բախումը: Այն մղվում է մասնագետ և ոչ մասնագետ կադրերի միջև: Ինչ որ է, նոր նախագահը իր աշխատանքները սկսում է բերքի մշակման, խոտհեծի և սիլոսացման աշխատանքների հարցի քննարկումով:⁹ Որոշում է կայացվում աշխատանքները կատարել ժամանակին ու որակով: Նույն օրը աշխատանքից ազատվում է ավագ հավապահ Գառնիկ Մարոյանը, իսկ կուսակցության շարքեր է ընդունվում Հռիփսիկ Սկրտչի Սաֆարյանը, VI բրիգադի բրիգադիոր է նշանակվում Ավետիք Խղաթյանը, որը մինչ այդ աշխատում էր որպես տրակտորիստ (նա ուներ լրիվ միջնակարգ կրթություն): Ժողովում ընդգծվում է, որ Չորագյուղի անտեսությունում վար ու ցանքի աշխատանքները կատարվում են տրակտորներով ու շարքացաններով, հացի հեծի աշխատանքները կատարվում են կոմբայներով:

1959 թվականի նոյեմբերի 16-ին տեղի ունեցավ Չորագյուղի կուսակցական կազմակերպության հաշվետու ընտրական ժողովը: Բյուրոյի աշխատանքների մասին զեկուցում է Համբարձում Ղազարյանը: Նոր բյուրոյի կազմում ընտրվում են՝ Կարապետ Ավետիսյանը, Համբարձում Ղազարյանը, Արամ Հակոբյանը, Սելիմբեկ Գևորգյանը, Արտեմ Սարոյանը, Մագթաղ Ղազարյանը, Չալիբեկ Գրիգորյանը: Կարապետ Ավետիսյանի փոխարեն Համբարձում Ղազարյանն ընտրվում է կուսկազմակերպության բյուրոյի քարտուղար: Մարտունու կուսշրջկոմի 30-րդ կուսկոնֆերանսի պատգամավորներ են ընտրվում՝ Կարապետ Ավետիսյանը, Համբարձում Ղազարյանը, Համբարձում Իսրայելյանը (շրջանից), Արամ Հակոբյանը և Բաղիշ Ավետիսյանը (վերջինս խորհրդակցական ձայնի իրավունքով):

Տարին ավարտվում է կոլտնտեսության կադրերի հաստատումով: Աշխատանքից ազատվում են V բրիգադի բրիգադիոր Բեզե Սահրադյանը, կա-

ֆի վարիչ Աղախան Չաքարյանը, խաֆի և ձաֆի վարիչ Սանասար Հակոբյանը:

Կոլտնտեսության գլխավոր անասնաբույժ են նշանակում Եպրաքայա Մարտիրոսի Հովհաննիսյանին, իսկ տեղամասի վարիչ՝ Աշոտ (Վոլոդյա) Խաչատուր Գրիգորյանին (Հակոբյանին), որոնք ունեին բարձրագույն մասնագիտական կրթություն: Նրանք ամուսիններ էին և ավարտել էին Երևանի անասնաբուծական – անասնաբուժական ինստիտուտի անասնաբուժական ֆակուլտետի արտադրությունից կտրված բաժինը: Կաֆի վարիչ են նշանակում միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող և կոլտնտեսությունում անասնաբույժ-տեխնիկ աշխատող Ավետիք Հակոբի Ղազարյանին, կաթգործարանի վարիչ՝ Աշոտ Մարիբեկի Առաքելյանին, III բրիգադի բրիգադիոր՝ Արտեմ Պողոսի Սարգսյանին (Մրապոյանին), IV բրիգադի բրիգադիոր՝ Ապրես Կարապետի Սարոյանին, V բրիգադի բրիգադիոր՝ Աղախան Աբգարի Չաքարյանին, խոզաբուծական ֆերմայի վարիչ՝ Խաչիկ Մելքոնի Կարապետյանին (նա ուներ միջնակարգ մասնագիտական կրթություն): Նույն ժողովում Վոլոդյա Կարապետի Բդեյանին (Բաղդասարյանին) կուսբեկնածուից փոխադրում են կուսանդամ:

1960 թվականի մարտի 6-ի կուսկազմակերպության ժողովում, որը նախագահում էր երիտասարդ կոմունիստ Եղիազար Մարգսի Մանուկյանը և քարտուղարում էր Ազնիվ Սանասարի Գալստյանը, անասունների ծնի կամպանիայի և կաթի արտադրության հարցը քննելիս ելույթ են ունենում Խաչիկ Սարգսյանը, Աղավնի Կիրակոսյանը, Շալիկ Խղաթյանը, Մոլոտ Հարությունյանը,¹⁰ որոնք մասնագետներ էին և մասնագիտական առաջարկություններ են անում ծնի կամպանիայի և անասունների կաթնատվության բարձրացման կապակցությամբ: Աղավնի Կիրակոսյանը ասում է, որ դեղորայք չունեն հիվանդ անասունների բուժումը կազմակերպելու համար, Շալիկ Խղաթյանը պահանջում է անասունների բուժման հրապարակը պետք է լինի մաքուր, իսկ բուժող բժիշկը պետք է սպիտակ խալաթ ունենա իր հագին և ձեռքերը լվանա օճառով ու մաքրի սպիտակ ու մաքուր սրբիչով: Խաչիկ Կարապետյանը պահանջում է խոզերի համար հյութալի կեր տրամադրել, իսկ մատղաշների համար պետք է առանձին տեղ ստեղծել, որպեսզի մեծերը ոտքի տակ չտան նրանց: Ապրիլի 1-ին Ավետիք Մնացի Խղաթյանը, Ավետիք Եզնակի Ավետիսյանը, Խանաղով Գևորգի Շառոյանը, Գառնիկ Մարտոյի Հակոբյանը, Ավետիք Խաչոյի Սահակյանը, Աշոտ Պարսամի Ասատրյանը, Եղիազար Մարգսի Մանուկյանը, Հռիփսիկ Սկրտչի Սաֆարյանը կուսբեկնածուից փոխադրվում են կուսանդամ: Կուսկազմակերպությունը երաշխավորում է վերականգնել Մնաց Տիգրանի Մալիանյանի կուստաժը, քանի որ նա անկախ իր կամքից գերի է ընկել 1943 թ. և կորցրել իր կուսակցական տոմսը:¹¹

⁹ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 38, թերթ 13–17:

¹⁰ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 39, թերթ 25–26:

¹¹ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 39, թերթ 8–11:

ՀԿԿ Մարտունու կուսըջկոմի 30-րդ կոնֆերանսի որոշումը քննարկելիս Չորագյուղի կովարչությունը այդ որոշման լույսի տակ նախատեսում է 1960 թ. ավելացնել անասունների գլխաքանակը: Այդ նպատակը իրականացնելու համար առաջարկվում է շինարարության բրիգադին՝ կառուցել 1 կովանոց 100 գլխի համար և 2 ոչխարանոց 1000 գլխի համար: Որոշվում է կոմունիստներ Վոլոդյա Բդեյանին (Բաղդասարյանին), Խանադով Շառռյանին, Աշոտ Հարութի Աղաբեկյանին, Արտուշ Սարգսյանին (Մրապոյանին) ուղարկել կովաբուծական ֆերմայում աշխատելու: Որոշվում է նաև հերկել խոպանացած հողատարածությունները, 120 հեկտար դաշտը մաքրել քարերից, հերկել նաև միջնակները, պարարտացնել դաշտերը հանքային և տեղական պարարտանյութերով: 1960 թ. արտադրել 7800 ցենտներ հացահատիկ, 600 ցենտներ ծխախոտ, կոմբայնի համար 60 հեկտար հարմար դաշտ ստեղծել:

1959 թ. համեմատությամբ 1960 թ. պլանը ավելանում է: Այսպես, մսի պլանը դառնում է 128 ց, կաթինը՝ 54 ց, ձվինը՝ 5120 հատ, անասունների գլխաքանակը 830 գլխի փոխարեն պետք է հասցվի 911 գլխի, որից կովերինը՝ 330 գլխի, ոչխարներինը՝ 5234 գլխի (3800-ի դիմաց), խոզերինը 102 գլխի (65 գլխի դիմաց), թռչուններինը՝ 1000 թև (854 թևի դիմաց), միսը պետք է արտադրել 1130 ցենտներ (219 ցենտների դիմաց), որից խոզի միս՝ 180 ցենտներ (65 ցենտների դիմաց), կաթ պետք է արտադրել 619 ցենտների դիմաց 4760 ցենտներ: Եգիպտացորենի մշակությանը հատկացնել լավ տարածություններ և զարկ տալ դրա մշակությանը թե հացահատիկի արտադրության և թե անասնակերի ավելացման նպատակով (կովերի կաթնատվության բարձրացման համար):

Մայիսի 12-ին կուսակցական ժողովում քննարկվում է ՍՄԿԿ ԿԿ փակ նամակը «Երկրի դեկավար Ն. Ս. Խրուշչովի այցը 4 տերությունների փարիզյան բարձր մակարդակի խորհրդակցությանը մասնակցելու» մասին: Կուսկազմակերպությունը հավանություն է տալիս ՍՄԿԿ ԿԿ զծին և միանում նամակում բերված փաստերին:

1960 թվականի մայիսի 20-ին Չորագյուղի դպրոցի դիրեկտոր է նշանակվում Գիմիտրի Նիկոլայի Սարգսյանը (նախկին դիրեկտոր Գարսևան Ավետիսյանին տեղափոխում են իր հայրենի Վարդաձոր (այն ժամանակ Աղամխան) գյուղում որպես կովարչության նախագահ):

Հոկտեմբերի 22-ին տեղի է ունենում Չորագյուղի արտադրական սկզբնական կուսկազմակերպության հաշվետու դռնփակ ժողովը, որին մասնակցում էին 35 կուսանդամ-թեկնածուները: Ժողովը արձանագրում է, որ նախորդ տարվա համեմատությամբ կոլտնտեսության արտադրությունը բավականին բարձրացել է. ավելացել են կոլտնտեսության եկամուտները, մասնավորապես ֆինանսական կողմը: Ժողովում ելույթ են ունենում կոմունիստներ Հրաչիկ Սիմոնյանը, Վոլոդյա Բդեյանը (Բաղդասարյանը), Աշոտ Աղաբեկյանը, Եղիազար Մանուկյանը, Ազնիվ Գալստյանը, Հովիսիկ

Սաֆարյանը: Բյուրոյի կազմում ընտրվում են Կարապետ Ավետիսյանը, Բաղիշ Ավետիսյանը, Համբարձում Ղազարյանը, Ջալիլբեկ Գրիգորյանը, Ազնիվ Գալստյանը, Արամ Հակոբյանը, Եղիազար Մանուկյանը: Մարտունու կուսըջկոմի կոնֆերանսի պատգամավորներ են ընտրվում՝ Կարապետ Ավետիսյանը, Համբարձում Ղազարյանը, Մելիմբեկ Գևորգյանը, Հայկ Ավետիսյանը (չրջանից), Հովհաննես Ներսիսյանը:

1961 թ. սկսվում է Չորագյուղի կովարչության կազմի առաջադրումով: Այդ կազմում առաջին անգամ առաջադրվում են հարվածային աշխատողներ Ռոզա Գրիգորի Սաֆարյանը, Անուշավան Ղազարի Ղազարյանը, Հմայակ Արշակի Հակոբյանը: Դեկավար կադրերի փոփոխություն չի կատարվում բացի 3-ից՝ Սանասար Հակոբյանից, Ավետիք Սահակյանից (Աղեկյանից) և Արտավազ Գրիգորյանից, որոնք ազատվում են աշխատանքից (դրանցից առաջինին աշխատանք չեն տալիս, երկրորդին նշանակում են հաշվապահի օգնական, իսկ երրորդին՝ գյուղատնտես):

Մարտի 17-ին ՍՄԿԿ ԿԿ հունվարյան պլենումի և ՀԿԿ Կենտկոմի 8-րդ պլենումի որոշումները¹² մասսայականացնելիս կոլտնտեսությունը պարտավորվում է 1961 թվականին արտադրել 5600 ցենտներ հացահատիկ, 4320 ցենտներ կարտոֆիլ, 696 ցենտներ ծխախոտ, 5400 ցենտներ եգիպտացորեն, 1200 ցենտներ ճակնդեղ, կուտակել 1529 տոննա խոտ և 1700 տոննա սիլոս: Ի պահեստի պահեստապետ են նշանակում Հովհաննես Սարգսյանին, կաթգործարանի վարիչ՝ Բեգե Սահարյանին, մատղաշների բրիգադիոր՝ Շալիկ Խղարյանին: Մեծ արձագանք է գտնում խաբերաչության, ավելագրության և աչքակապության դեմ ՍՄԿԿ ԿԿ փակ նամակի քննարկումը: Ժողովում բացահայտվում է Չորագյուղի բնակիչներից ոմանց նման վարքագիծը:

1961 թ. օգոստոսի 4-ին Չորագյուղի կոլտնտեսության և դպրոցի միացյալ կուսակցական ժողովում քննարկվում է Չորագյուղին խմելու և ոռոգման ջրով ապահովելու հարցը: Դպրոցի դիրեկտոր Գիմիտրի Սարգսյանը, ուսուցիչներ Հայրիկ Ղազարյանը, Խաչիկ Մնացականյանի, Վոլոդյա Ղազարյանը, Գառնիկ Սարգսյանը, կովարչնախագահ Կարապետ Ավետիսյանը, կուսկազմակերպության քարտուղար Համբարձում Ղազարյանը իրենց ելույթներում առաջարկում են ինչպես «Ակներ», այնպես էլ «Բոբբո» և «Շողան» կոչվող աղբյուրից խողովակներով ջուր բերել գյուղ խմելու և ոռոգելու համար, դաշտում խոր ձորերի մեջ կառուցել ջրամբարտակներ, որտեղ ձնհալից կուտակված ջուրը ամռան ամիսներին օգտագործել մոտակա պապակ արտերը ջրելու համար:¹³

Օգոստոսի 7-ին Չորագյուղի կոլտնտեսականների և կուսակցական կազմակերպության միացյալ ժողովում, որին մասնակցում էին թե կուսակցականները և թե ոչ կուսակցական աշխատավոր գյուղացիները, քննվում է

¹² ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 40, թերթ 17-20:
¹³ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 40, թերթ 39-41:

ՄՄԿԿ ծրագրի նախագիծը: Ելույթ են ունենում կոլտնտեսականներ Բենիա-մին Խաչատրյանը, Մակեդոն Թարթիկյանը, Կարապետ Բղեյանը (Բաղդասարյանը), Մարիբեկ Մարգարյանը, Գարուշ Մանուկյանը, Խաչիկ Մինասյանը, Հարազատ Մինասյանը, Վելիեն Սկրտչյանը, Լեռնոնով (Միշա) Սահրադյանը, Նիկոլա Մարգարյանը, Վոլոդյա Ավետիսյանը, Ֆաթիբեկ (Աղիբեկ) Սկրտչյանը, Արշակ Աբրահամյանը (Շահբազյանը), Նարիբեկ Աբրահամյանը (Շահբազյանը), Խաչիկ Մինասյանը, Օրդուխան Ղուկասյանը, Խորեն Գրիգորյանը, Վաղինակ Խղաթյանը, Սոյբաթ Աբրահամյանը, Գրիգոր Կիրակոսյանը, Ռաշիդ Թարթիկյանը, Վաղարշակ Կիրակոսյանը, Մարգիս Պողոսյանը, Վեսմիր Ասատրյանը, Ջանիբեկ Ասատրյանը, Աղաբեկ Կիրակոսյանը, Գառնիկ Ղազարյանը, Մյասնիկ Ավետիսյանը, Աշոտ Խղաթյանը, Վրեժ Խղաթյանը, Խանաղով Կիրակոսյանը, Մարգիս Տոնեյանը, Մխիթար Ավետիսյանը, Հակոբ Հակոբյանը (Մարտիրոսյանը), Ավետիք Մրասյոսյանը, Ռազմիկ Սիերյանը, Միշա Սիերյանը, Ժորա Սիերյանը, Գագիկ Շահնազարյանը, Մյասնիկ Խղաթյանը, Շմավոն Մովսիսյանը: Նրանք բոլորն էլ հավանություն են տալիս ՄՄԿ նոր ծրագրի նախագծին, որի նպատակն էր բարելավել ժողովրդի տնտեսական վիճակը, բարձրացնել նրանց կուլտուր-վենցադային մակարդակը: Նրանք գտնում են, որ արժանի է կուսակցության այս III ծրագիրը ներկայացվի ՄՄԿ XXII համագումարի հաստատմանը:

Օգոստոսի 26-ին կուսակցականերպության միացյալ ժողովում քննարկվում է Ն.Ս. Խրուշչովի «Գյուղատնտեսական տարվա մի քանի հեռանկարների և գյուղատնտեսական բնագավառի անհետաձգելի խնդիրների մասին» անձակը: Ժողովը հավանություն է տալիս Ն. Ս. Խրուշչովի նամակում առաջադրված խնդիրներին, որոնց շնորհիվ կարճ ժամանակում կարելի է ստեղծել գյուղատնտեսական մթերքների առատություն:

1961 թ. նոյեմբերի 23-ին կուսակցական ժողովը կաֆի վարիչ Ավետիք Ղազարյանին և վաֆի վարիչ Սելիբեկ Գևորգյանին ազատում է աշխատանքից և նրանցից I-ինի փոխարեն նշանակում Ավետիք Սահակյանին (Աղեկյանին), իսկ II-ի փոխարեն՝ Եղիազար Մարգարի Մանուկյանին: Ավագ անասնաբույժ է նշանակվում Աշոտ Մովսիսյանը, իսկ ավագ անասնաբույժ Ռազմիկ Խիմոսյանը: Մյուս կողմերը մնում են անփոփոխ:

1962 թվականը սկսվում է զարմանազանի նախապատրաստման աշխատանքների և անասունների ծնի կամպանիայի հաջող կազմակերպման հարցի քննարկումով:

1962 թ. մայիսի 7-ին կուսակցական ընդհանուր ժողովում քննարկվում է ՄՄԿԿ ԿԿ-ի փակ նամակը կաշառակերության վերացման վերաբերյալ: Ելույթ ունեցողներ Մուշեղ Գալստյանը, Համբարձում Ղազարյանը և Խաչիկ Մարգարյանը քննադատական խոսք են ուղղում ներքին գործերին, դատարանին, դատախազությանը, որոնք կոչված են պայքար մղելու կաշառակերության դեմ, բայց իրենք են նպաստում կաշառակերության զարգացմանը: Նման հիմնարկ են համարում նաև շրջկոմայր: Աղախան Աբգարի Զաբար-

յանին քննադատում են, որ դիպլոմակտ խոտ է ուղարկում բաց վիճակով, իսկ Արտեմ Մարոյանին քննադատում են, որ քաղված ծխախոտը ժամանակին շարել չի տվել, որը և փչացել է:

Չորագյուղի կովարչությունը 1963 թվականի իր աշխատանքները սկսում է ղեկավար կադրերի հաստատումով: Նոր կադրեր է հաստատում՝ 1) Մյասնիկ Կարապետի Ավետիսյանին ու իր կնոջը՝ Ժենիկ Թորոսյանին (երկուսին էլ անասնաբույժ), 2) Գառնիկ Արզումանյանին (ագրոտեխնիկ), 3) Մամիկոն Մարտիրոսյանին (մեխանիկ), 4) Մնաց Սողոմյանին (հաշվապահ), 5) Գևորգ Սիերյանին (ղաշտավարական բրիգադիր), 6) Կնյազ Գասպարյանին (շինարարության բրիգադիր), 7) տեխնիկ – անասնաբույժ Մուրտ Հարությունյանին (խաֆի վարիչ), 8) անասնաբույժ Շալիկ Խղաթյանին (կաթործարանի վարիչ), 9) Մանասար Հակոբյանին (ստղատու ծառերի հարվածային օղակավար), 10) Բեգե Սահրադյանին (տրակտորի բրիգադիրի տեղակալ), 11) Համբարձում Ղազարյանին (կովարչնախագահի տեղակալ):

1963 թ. կովարչության կազմում նոր մարդ են առաջարկում՝ Մարիբեկ Սողոմոնի Ղազարյանին և Ալբերտ Պարսամի Ասատրյանին (վերջինս ընտրվել էր կոլտնտեսության կուսակցականերպության քարտուղար): Փետրվարի 3-ին անասունների խնամքի և ծնի կամպանիայի հարցերը քննելիս ժողովում ելույթ են ունենում Ալբերտ Ասատրյանը, Կալինոս Սարգսյանը, Աշոտ Մովսիսյանը, Աշոտ Աղաբեկյանը, Գառնիկ Հակոբյանը: Նրանք առաջարկում են կուսակցականներից ամբացում կատարել գոմերին, որպեսզի լավ տարվի անասունների խնամքը և հաջող կազմակերպվի ծինը: Այդ օրը Վոլոդյա Համբարձումի Պողոսյանը, Բեգե Սկրտչի Սահակյանը և Ավետիք Խաչատուրի Սահակյանը ընդունվում են կուսակցության շարքեր: Այդ նույն ժողովում վերականգնվում է Խանաղով Գևորգի Շառոյանի կորցրած կուսակցական տոմսը: Քաղուսուցման հարցը քննելիս կոչ է արվում կոմերիտականներին ընդգրկել խմբակներում և բարձրացնել նրանց քաղաքական մակարդակը: Ունկնդիրներից պահանջել կոմսպեկտ: Այդ ժողովում Ավետիք Մնացի Խղաթյանին հաստատում են ԳՄԳԿ-ի նախագահ,¹⁴ իսկ նրա փոխարեն II բրիգադի բրիգադիր են նշանակում Սելիբեկ Գևորգյանին: ԳՄԳԿ-ի նախագահի պաշտոնից ազատված Համբարձում Ղազարյանին նշանակում են կոլտնտեսության գնորդ:

1963 թ. հունիսի 29-ից սկսած Չորագյուղի կուսակցական կազմակերպությունը, ԳՄԳԿ-ն, կովարչությունը և դպրոցի ուսուցչական կոլեկտիվը լայն կազմակերպչական աշխատանքներ են տանում հասարակության անդամների մեջ, որ ժամանակն է փոքրել այն ջրանցքը, որը Բորբոռ կոչվող հորդառատ աղբյուրից խմելու ջուր հասցնի գյուղ:¹⁵ Չորագյուղի ամբողջ հասարակությունը ոտքի է կանգնում և սկսում ջրանցքի հողային աշխատա-

¹⁴ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 45, քերթ 1-17:

¹⁵ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 45, քերթ 21-25:

նքները: Մինչև տարեվերջ ձեռքով փորված ջրանցքով անցկացվում են մետաղյա խողովակներ և ջուրը հասնում է գյուղ՝ շուրջ 14 կմ հեռավորությունից: Ջրանցքը փորելու առաջին աշխատանքը սկսում է Մոլոտ (Միշա) Նիկոլայի Սարգսյանը: Նրան հետևում են գյուղացիներ Սաշիկ Հակոբյանը, Գառնիկ Ղազարյանը, Ռազմիկ, Ժորիկ և Միշա Մեղրյան եղբայրները, Բեգե Գալստյանը, Աշոտ Սարգսի Ղազարյանը, Արտեմ Գրիգորի Շահնագարյանը, Ռաշիտ Հայրիկի Թարթիկյանը, Վարազդատ Նիկոլայի Պետրոսյանը, Ավետիք Նիկոլայի Սրապոյանը, Ազնիվ Պողոսի Սրապոյանը, Յուրդաբեկ և Վրեժ Սահրադյանները, Հայկազ Սարգսի Մալիանյանը, Դիմիտրի Գրիգորի Շահնագարյանը, Գասպար Հովոյի Սաֆարյանը, Խաչիկ Գվիղոնի Մինասյանը, Արտեմ Ալեքսանի Առաքելյանը, Ծամվոն, Մակեդոն, Թորգոմ և Վահան Մովսիսյանները, ուսուցիչներ Հայրիկ Ղազարյանը, Խաչիկ Մնացականյանը, Վուրդյա Ղազարյանը, Մոս Մնացականյանը, Վուրդյա Սարգսյանը, Բեգե Պողոսյանը, Սարգիս Ղազարյանը, Վուրդյա Սահրադյանը, Ավետիք Սահակյանը, Ավետիք Ղազարյանը, Գևորգ Մովսիսյանը, Գրիգոր Մովսիսյանը, Կամսար Դավթյանը, Խրիմիկ Խղաթյանը և շատ ուրիշներ: Այդ աշխատողների շրջանում լայն մասսայական աշխատանքներ են տանում կոլվարչության նախագահ Կարապետ Ավետիսյանը և դպրոցի դիրեկտոր Դիմիտրի Սարգսյանը:

Քաղսուսուցման աշխատանքները կազմակերպելու ուղղությամբ լավ աշխատանքներ են կատարում ազիտատորներ Աշոտ Մովսիսյանը, Մյասնիկ Ավետիսյանը, Կալինոս Սարդարյանը, Բեգե Պողոսյանը, Դերենիկ Գալստյանը:

1963 թ. սեպտեմբերի 24-ին Ալբերտ Ասատրյանը ազատվում է Չորագյուղի արտադրական կուսկազմակերպության քարտուղարի աշխատանքից: Նրա փոխարեն ընտրվում է ԳՄԳԿ-ի նախագահ Ավետիք Խղաթյանը: Վերջինիս փոխարեն ԳՄԳԿ-ի նախագահ է նշանակվում Կալինոս Սարդարյանը: Այդ ժամանակ Չորագյուղի արտադրական կուսկազմակերպությունն ուներ 47 անդամ-թեկնածուներ:

§ 6. ԿՈՒԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐՁԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ (1964–1971 թթ.)

1964 թվականը սկսվում է ՍՍԿԿ ղեկավարների պլենումի որոշումների մասսայականացմամբ, որոնք պահանջում են բարձրացնել հացահատիկի բերքատվությունը, անասունների գլխաքանակը և անասնապահական մթերքների քանակն ու որակը, ինչպես նաև աշխատավորների վարձատրությունը:¹ Կոլտնտեսության 1964 թվականի կադրերը մնում են նույնը, բա-

¹ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 45, թերթ 1–2:

ցի մի քանիսից: Դրանք են՝ Մամիկոն Մարտիրոսյանը, տեխնիկ-անասնաբույժ Ժենիկ Թորոսյանը, Բեգե Սահրադյանը, որոնք ազատվում են աշխատանքից (նրանց զբաղեցրած հաստիքները (մեխանիկ, տեխնիկ-անասնաբույժ, տրակտորի բրիգադի տեղակալ) կրճատվելու պատճառով: Որոշվում է նրանց տեղավորել աշխատանքի, երբ նման տեղեր կբացվեն տնտեսությունում: Ժողովում ելույթ են ունենում Գրիշա Գասպարյանը, Գառնիկ Հակոբյանը, Խաչիկ Կարապետյանը: Զննվում է Ռաֆիկ Մեղրյանի, Վուրդյա Պողոսյանի, Միշա Մալիանյանի, Հռիփսիկ Սաֆարյանի դիմումները իրենց աշխատանքի տեղավորելու կապակցությամբ: Որոշվում է աշխատանք լինելու դեպքում նրանց աշխատանք տալ: Հաշվապահ Ս. Մողոսյանը ազատվում է աշխատանքից, իսկ նրա փոխարեն նշանակվում է Մամվել Գևորգյանը (Մարտունուց): Ժողովը Գառնիկ Հակոբյանին, Մոլոտ Մանուկյանին (տեխնիկ-գյուղատնտես), Աշոտ Աղաբեկյանին, Աշոտ Առաքելյանին, Արտեմ Սարգսյանին, Վաչագան Հովեյանին նշանակում է ծխախոտի օղակավարներ, իսկ տեխնիկ-գյուղատնտես Կամսար Գասպարյանին՝ բանջարաբուստանային կուլտուրաների օղակավար:

Գարնանացանի նախապատրաստական աշխատանքներին նվիրված մարտի 14-ի ընդհանուր ժողովին, որին մասնակցում էին 600–650 կոլտնտեսականներ և 49 կուսակցականներ, ելույթ են ունենում կոլտնտեսականներ Մակեդոն Մովսիսյանը, Գառնիկ Արզումանյանը, Աշոտ Ասատրյանը, Սիրական Մանուկյանը, Մոլոտ Սարգսյանը, Ջանշիկ Մնացականյանը, Գառնիկ Սարդարյանը, Սարիբեկ Սարգսյանը, Մնաց Մանուկյանը, որոնք առաջարկում են հացահատիկի սերմացուն հասցնել կոնդիցիային, կարտոֆիլի սերմացուն ջուկել, վարուցանք կատարել մեխանիզացիայով, բայց փոքր հողակտորները, որտեղ տրակտորը չի կարող աշխատել, պետք է վարել քաշող ուժի միջոցով և ավելացնել վարելահողի քանակը:

Մարտի 15-ի կուսակցական ժողովում Աշոտ Բարսեղի Մովսիսյանին, Հենրիկ Վաղարշակի Կիրակոսյանին, Համբարձում Ավետիսի Ավետիսյանին, Իլյիչ Սարիբեկի Ղազարյանին ընդունում են կուսակցության շարքեր:

Կուսկազմակերպության բյուրոյի հաշվետու ժողովը, որը կայանում է հոկտեմբերի 23-ին, բյուրոյի կազմում ընտրում է Կարապետ Ավետիսյանին, Ավետիք Խղաթյանին, Աշոտ Մովսիսյանին, Մելիմբեկ Գևորգյանին, Աղախան Ջաքարյանին, Կնյազ Գասպարյանին, Բաղիշ Ավետիսյանին, Կալինոս Սարդարյանին և Արմենակ Մելքոնյանին, իսկ Մարտունու կուսշրջկոմի N 33 կոնֆերանսի պատգամավորներ է ընտրում Կարապետ Ավետիսյանին, Սերյոժա Սկրտչյանին (շրջանից), Ավետիք Խղաթյանին, Բաղիշ Ավետիսյանին, Հովհաննես Շառոյանին և Մելիմբեկ Գևորգյանին:

1965 թվականը սկսվում է կոլտնտեսության ղեկավար կադրերի վերահաստատման և հաստատման հարցի քննարկումով, որն իրականացրեց կուսակցական ժողովը հունվարի 30-ի նիստում:² Կադրերը հիմնականում

² ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 44, թերթ 43–48:

մնում են նույնը, բացի Գևորգ Մեդրյանից, Ապրես Սարոյանից և Եղիազար Մանուկյանից, որոնց ազատում են աշխատանքից և չեն տեղավորում: Եղիազար Մանուկյանը, որ դիմում էր տվել իրեն ազատել աշխատանքից և տեղավորել իր մասնագիտությամբ (քեռնատար ավտոմեքենայի վարորդ), հետաձգում են մինչև նոր մեքենա ստանալը: Զննվում է Սարիբեկ Զաքարյանի, Միհրան Շառոյանի (երկուսն էլ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողներ) և Գրիշա Գասպարյանի դիմումները իրենց աշխատանքի տեղավորելու վերաբերյալ: Որոշվում է առաջին երկուսի դիմումները հետաձգել մինչև համապատասխան աշխատանքի տեղ լինելը, իսկ 3-ին առաջարկվում է աշխատանքի անցնել նոր բացվող խանութում որպես պատվաճառող: Ժողովը հաստատում է Կալինոս Սարգսյանին VI բրիգադի բրիգադիր, Գառնիկ Հակոբյանին՝ III բրիգադի բրիգադիր, Բեգե Սահակյանին՝ IV բրիգադի բրիգադիր, Գառնիկ Արզումանյանին՝ V բրիգադի բրիգադիր, Բեգե Սահարայանին՝ կերերի պահեստապետ, Սոս Սողոյանին՝ տնտեսագետ, Մնաց Սողոյանին՝ հաշվետար, Հայկազ Մաֆարյանին՝ քարտուղար-գանձապահ, Համբարձում Դազարյանին՝ գնորդ, Ավետիք Խղաթյանին՝ մեխանիկ, Հովհաննես Սարգսյանին՝ I պահեստի պահեստապետ, Յուլյա Գալստյանին՝ ճանքաժնի բրիգադիր, Ռազմիկ Մեդրյանին՝ էլեկտրագողող, Սեդրակ Մաֆարյանին՝ էլեկտրիկ, Խորեն Մահակյանին՝ մարդատար ավտոմեքենայի վարորդ, Պատվական Գալստյանին՝ կարտոֆիլի պահեստապետ, Կարապետ Մանուկյանին՝ Ֆուրաժեր, Ազնիվ Մահակյանին՝ բուման բրիգադիր, Կնյազ Գասպարյանին՝ շինարարության բրիգադիր, Արտուշ Սարգսյանին՝ տրակտորների բրիգադի հաշվառիչ, Խորեն Գրիգորյանին՝ տրակտորների բրիգադիր, Ավետիք Սահակյանին՝ կաֆի վարիչ, Աղախան Զաքարյանին՝ վաֆի վարիչ:

Արտադրական կուսկազմակերպության փետրվարի 3-ի նիստում ելույթ է ունենում դպրոցի դիրեկտոր Դիմիտրի Սարգսյանը, ինչպես դպրոցի աշխատանքների, այնպես էլ ազիտկոլեկտիվի կազմի, ազիտատորների և պրոպագանդիստների հարցի շուրջ: Դպրոցի աշխատանքների վերաբերյալ նա տեղեկացնում է, որ իր աշխատած տարիներին գրեթե հիմնովին փոխվել է դպրոցի վիճակը: Երբեմնի յոթնամյա դպրոցը դարձել է ութամյա: Սեփական ջանքերով սկսած իր աշխատանքի երկրորդ տարվանից, այսինքն՝ 1961 թվականից, դպրոցին կից բացվել է հերթափոխային միջնակարգ դպրոց, որի դասերը սկսվում են երկրորդ հերթով, այսինքն՝ ճաշից հետո, կատարվել է ձորագյուղիների դարավոր երազանքը՝ իրենց երեխաները սեփական գյուղում ստանում են լրիվ միջնակարգ կրթություն: Մեր սեփական ջանքերի շնորհիվ այս տարի Հայաստանի կառավարությունը մեր գյուղի համար հաստատել է մեկ հերթի 964 տեղանոց ցերեկային միջնակարգ դպրոցի շենքի կառուցման նախագիծը, որի շինարարական աշխատանքները կսկսվեն եկող զարմանը: Այս բոլորի հետևանքով դպրոցականների հետաքրքրությունը խիստ մեծացել է դպրոցի նկատմամբ, ապահովվել է

նրանց ամենօրյա հաճախումը, որի հետևանքով բարձրացել է դպրոցի առաջադիմությունը: Ինչ վերաբերում է գյուղում տարվող ազիտ-մասսայական աշխատանքներին, ապա պետք է ասել, որ այս ուղղությամբ գյուղում հսկայական աշխատանք է տարվել, որի արդյունքն է գյուղին խմելու ջուր բերելը՝ մեր ազիտացիային հետևող աշխատավորների ջանքերով, դպրոցի և կոլտնտեսության ամուր կապը, որը իր դրսևորումն է գտնում հատկապես ծխախոտի բերքահավաքի ժամանակ, երբ աշակերտների ձեռքով քաղվում ու շարվում է գյուղի ծխախոտի բերքի շուրջ 30-40 %-ը՝ հսկայական նյութական օգուտ բերելով հարազատ կոլտնտեսությանը:

Ժողովը ազիտկոլեկտիվի նախագահ է վերահաստատում Դիմիտրի Սարգսյանին, պրոպագանդիստներ՝ Դիմիտրի Սարգսյանին և Գառնիկ Սարգսյանին, ազիտատորներ է նշանակում ուսուցիչներ Աղվան Մանուկյանին, Խրիմիկ Խղաթյանին, Կամսար Դավթյանին, Վոլոդյա Դազարյանին, Հայկ Գալստյանին, Շամվոն Բաղդասարյանին, Բեգե Պողոսյանին, Խաչիկ Մնացականյանին, Վոլոդյա Սարգսյանին, Սոս Մնացականյանին, Ալբերտ Ասատրյանին, Հայրիկ Դազարյանին, Ավետիք Դազարյանին, Վոլոդյա Սահարայանին, Գևորգ Մովսիսյանին, Ռոզա Սարգսյանին, Արմիկ Արզումանյանին, Ռոզա Վարդանյանին, Շուշիկ Չիպչյանին, Սոնիկ Հովսեփյանին, Արուսյակ Հովսեփյանին, Հրանուշ Հովակիմյանին, Սարգիս Դազարյանին, Ավետիք Մահակյանին, Գրիգոր Մովսիսյանին, Գրիշա (Գազիկ) Մանուկյանին, Վահան Բաղդասարյանին, Թառվան Մաֆարյանին (Մահակյանին):

Դիմիտրի Սարգսյանը հաղորդում է նաև, որ այդ ուսուցիչների մեծ մասն ունի բարձրագույն կրթություն, օրինակ՝ Աղվան Մանուկյանը, Խրիմիկ Խղաթյանը, Գառնիկ Սարգսյանը, Խաչիկ Մնացականյանը, Կամսար Դավթյանը, Ռոզա Սարգսյանը: Շուտով բարձրագույն ուսումնական հաստատություններ կավարտեն և բարձրագույն կրթության դիպլոմ կստանան Շամվոն Բաղդասարյանը, Վոլոդյա Դազարյանը, Վոլոդյա Սարգսյանը, Սոս Մնացականյանը, Ալբերտ Ասատրյանը, Հայրիկ Դազարյանը, Ռոզա Վարդանյանը, Հրանուշ Հովակիմյանը: Ուսուցչական այդ հզոր կոլեկտիվի ջանքերը հաջողությամբ պսակվեցին անցյալ տարի, երբ մեր հերթափոխային միջնակարգ դպրոցի առաջին շրջանավարտներից երկուսը՝ Լիդա և Կիմա Ասատրյանները դպրոցն ավարտելուց անմիջապես հետո ընդունվեցին Երևանի բժշկական ինստիտուտ: Դա բացառիկ հաջողություն է, նամանավանդ որ այժմ ոչ միայն Չորագյուղը, այլև մեր շրջկենտրոնը բժշկական բարձրագույն կրթությամբ կադրի չափազանց խիստ պահանջ ունի: Հերթափոխային միջնակարգ դպրոցից լավ սպասելիքներ ունենք նաև այս տարի: Դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Կորյուն Ասատրյանը, որը ոսկե մեդալի թեկնածու է, ավարտելուց հետո անկասկած կընդունվի բարձրագույն ուսումնական հաստատություն: Անցյալ տարվա մեր շրջանավարտներից Վոլոդյա Սահարայանը նույնպես ընդունվեց բարձրագույն ուսումնական

հաստատություն: Շուտով, երբ կավարտվի միջնակարգ դպրոցի նոր շենքի շինարարությունը, հերթափոխայինին զուգահեռ կունենանք ցերեկային միջնակարգ դպրոց: Պատկերացրեք, ինչ հսկայական կուլտուրական հեղափոխություն տեղի կունենա Ձորագյուղի կյանքում, Ձորագյուղից դրքան ու դրքան նոր Լիդաներ, Կիմաներ ու Կոբյուններ կավարտեն ու բարձրագույն կրթություն կստանան: Դա ոչ միայն մեր ուսուցչական կոլեկտիվի, այլև ամբողջ Ձորագյուղի նվաճումն է լինելու, նրա փայլուն ապագան:³

Կալինոս Սարդարյանի փոխարեն 1965 թ. ապրիլի 12-ին ԳՍԳԿ-ի նախագահ է ընտրվում Հովհաննես (Հովե) Գևորգի Շառոյանը, որը մինչ այդ աշխատում էր ԳՍԳԿ-ի քարտուղար: Ինչպես Հ. Շառոյանը, այնպես էլ նրա նախորդը՝ Կալինոս Սարդարյանը, ամուր կապի մեջ են եղել դպրոցի հետ և նպաստել պարտուսի իրականացմանը, ինչպես նաև հաճախումների վիճակի բարելավմանը:

Հունիսի 22-ին Գրիշա (Քաջիկ) Խանչալբեկի Կարապետյանը, Ռագմիկ Իվանի Հակոբյանը, Կամսար Կնյազի Գասպարյանը և Հայկ Վաղարշակի Կիրակոսյանը կուսերկնածուից փոխադրվում են կուսանդամ:

Հուլիսի 14-ին Մարտունու շրջանի արտադրական վարչությունը Թորգոմ Ավետիսյանի գլխավորած հանձնաժողովի միջոցով ստուգում է Ձորագյուղի կուլտետեսության աշխատանքները: Ստուգման արդյունքները ցույց են տվել, որ որոշ սխալներ են կատարվել 1964-1965 թվականներին: Դրանցից են՝ բրիգադիաների կողմից աշխօրերի հավելագրումները, առանց նախագահի համապատասխան կարգադրության «Բողբոռ» կոչվող հորդառատ աղբյուրից գյուղի համար խմելու ջուր բերելու նպատակով ջրագիծ փորող բուլդոզերավարին 4 ոչխար բաց թողնելը և այլն: Ստուգող հանձնաժողովը պահանջում է չլրկնել այլևս նման կարգի սխալներ:

Նույն օրը կուսակցության շարքեր են ընդունվում Հայկ Սևոյանը, Միշա Հակոբի Աղեկյանը, Ռիմա Հակոբյանը, Մերգեյ Սարոյանը, Գրիշա Կարապետյանը, Բեգիջան Սողոյանը, Դերենիկ Սահակյանը, Աղվան Սարգսյանը, Ռաֆիկ Հակոբյանը:

Արտադրական վարչության 1965 թ. հուլիսի 14-ի ստուգումից մի քանի օր հետո՝ հուլիսի 29-ին կուլվարչնախագահ Կարապետ Ավետիսյանը ազատվում է աշխատանքից: Նրա փոխարեն նշանակվում է Հայկ Ազնիվի Սկրտչյանը,⁴ որն ուներ բարձրագույն կրթություն (ավարտել էր Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արտադրությունից կտրված բաժինը): Դա բոլորովին նորություն էր Ձորագյուղի կուլվարչության պատմության մեջ, որի գլուխ բարձրագույն կրթությամբ մարդ էր կանգնել: Նա իր առաջին քայլերը սկսում է կազմակերպչական հարցերի ընմարկումով: Ընդ որում, I պահեստի պահեստապետ, պատերազմի մասնակից, գրագետ, բայց մեծահասակ Հովհաննես Սարգսյանին ազատում է աշխատանք-

քից, նրա փոխարեն նշանակում երիտասարդ կոմունիստ, բանակում ծառայած, գրագետ Պատվական Գալստյանին, II պահեստի պահեստապետ՝ պատերազմին մասնակցած, գրագետ, բայց մեծահասակ Հայկ Գալստյանին ազատում է աշխատանքից, նրա փոխարեն նշանակում երիտասարդ և մասնագիտական կրթություն ունեցող Մուրտ Հարությունյանին, ազատում է պատերազմին մասնակցած, գրագետ, բայց մեծահասակ ֆուրաժեր Կարապետի Մանուկյանին, նրա փոխարեն նշանակում երիտասարդ և մասնագիտական կրթություն ունեցող Խաչիկ Կարապետյանին, ազատում է պատերազմին մասնակցած, գրագետ, բայց մեծահասակ Խաչիկ Սարգսյանին 5-րդ բրիգադի բրիգադիքի պաշտոնից, նրա փոխարեն նշանակում երիտասարդ և մասնագիտական կրթություն ունեցող Գառնիկ Արզումանյանին:

Հ. Սկրտչյանի հաջորդ քայլը լինում է ՀԿԿ Մարտունու շրջկոմի բյուրոյի 1965 թ. հունիսի 1-ի «Ցանքսերի մշակման և ծխախոտի սածիլացման ընթացքը շրջանի կուլտետեսություններում և պետական տնտեսություններում» որոշման ընմարկումը, որին հավանություն է տալիս կուսկազմակերպության ընդհանուր ժողովը: Նա ընմարկում է նաև ՀԿԿ Մարտունու շրջկոմի բյուրոյի 1965 թ. հունիսի 8-ի «Անասնապահության վիճակը և անասնաբուժական մթերքների արտադրության ու վաճառքի ընթացքը շրջանի կուլտետեսություններում ու պետական տնտեսություններում» որոշումը, որին դարձյալ հավանություն է տալիս կուսկազմակերպության ընդհանուր ժողովը:

Հայկ Ազնիվի Սկրտչյանի եռանդուն ջանքերի շնորհիվ Ձորագյուղում կառուցվում են բաղնիքի և բուժարանի շենքեր:

Հոկտեմբերի 22-ին տեղի ունեցած կուսկազմակերպության հաշվետու ժողովում բյուրոյի անդամներ են ընտրվում Ավետիք Խղաթյանը, Հայկ Սկրտչյանը, Ավետիք Սահակյանը, Համբարձում Դազարյանը, Արտավազ Գրիգորյանը, Վոլոդյա Բաղդասարյանը, Կալինոս Սարդարյանը, իսկ Մարտունու կուսշրջկոմի 34-րդ կոնֆերանսի պատգամավորներ են ընտրվում Հենրիկ Հովսեփյանը (շրջանից), Հայկ Սկրտչյանը, Ավետիք Խղաթյանը, Աշոտ Մովսիսյանը, Բաղիշ Ավետիսյանը:

Աջակցող խմբի կազմում ընտրվում են Կալինոս Սարդարյանը, Ցոլակ Գալստյանը, Արմենակ Մեղրոնյանը, Խանաղով Շառոյանը, Համբարձում Ավետիսյանը, Հայկազ Մալխանյանը, Մուրտ Սարգսյանը, Աղախան Զարարյանը:

Հաստատվում է հսկիչ պոստերի կազմը: Այդ կազմում ընտրվում են՝ 1) կաֆում – Ավետիք Սահակյանը, Միհրան Շառոյանը, Համբարձում Գրիգորյանը, 2) վաֆում – Աշոտ Մովսիսյանը, Կամսար Հակոբյանը, Արարատ Հակոբյանը, 3) I բրիգադում – Արմենակ Մեղրոնյանը, Արմենակ Շահնազարյանը, Թորգոմ Սարոյանը, 4) II բրիգադում – Իլիչ Դազարյանը, Սարիբեկ Սարգսյանը, Վահրամ Հովեյանը, 5) III բրիգադում – Արտուշ Սարգսյանը, Բեգե Մուրադյանը, Հմայակ Հակոբյանը, 6) IV բրիգադում – Վեսմիր Ասատրյանը, Աշոտ Սահակյանը, Նահապետ Սաֆարյանը, Մակեդոն Թար-

³ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 44, թերթ 52-54:

⁴ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 47, թերթ 4-7:

քիկյանը, 7) V բրիգադում – Գառնիկ Սաֆարյանը, Գառնիկ Ղազարյանը, Արշավիր Սարգսյանը, 8) VI բրիգադում – Միշա Աղեկյանը, Գառնիկ Բաղդասարյանը, Մարիբեկ Հովեյանը, 9) տրակտորների բրիգադում – Ռազմիկ Հակոբյանը, Գրիշա Գրիգորյանը, Սաշա Հակոբյանը: Գեկտեմբերի 28-ին կաֆի ստուգման արդյունքները ցույց են տալիս, որ ձմռան ամիսներին այնտեղ կուտակված կաթի երեսի սերը առանց կովարչությանը տեղյակ պահելու քաշել են և արհեստականորեն զցել կաթի յուղայնությունը ու նոր հանձնել պետությանը: Ֆերմայի վարիչին և հաշվառիչին խիստ զգուշացնում են թույլ տված այդ սխալի համար, որը կրկնելու դեպքում նրանք կվտարվեն աշխատանքից:

1966 թվականը սկսվում է Մագթաղ Ղազարյանի կուսակցական տոմսը կորցնելու և այն վերականգնելու հարցի քննարկումով: Ժողովը որոշում է վերականգնել նրա կուսակցական տոմսը, քանի որ դա անփութության հետևանքով է տեղի ունեցել, այլ ոչ թե կուսակցության նկատմամբ ունեցած անվստահությանը:

Փետրվարի 9-ի կուսակցական ժողովում հաստատվում են կոլտնտեսության արտադրական կադրերը: Հիմնականում այդ կադրերը մնում են նույնը: Նորն այն էր, որ կաֆ-ի հաշվառիչ են հաստատում Հայկ Գալստյանին, Աղախան Չաքարյանին՝ IV բրիգադի բրիգադի, Բեգե Սահակյանին՝ VI բրիգադի բրիգադի, տեխնիկ-անասնաբույժ՝ Սարիբեկ Չաքարյանին, տրակտորի բրիգադի հաշվառիչ՝ Վրեժ Չաքարյանին, վաֆի վարիչ՝ Մյասնիկ Ավետիսյանին, թռչնաբուծական ֆերմայի վարիչ՝ Կալինոս Սարգսյանին, գնորդ՝ Մամիկոն Մարտիրոսյանին, Ֆուրաժեր՝ Խաչիկ Կարապետյանին, վերատուգիչ հանձնաժողովի նախագահ՝ Համբարձում Ղազարյանին:

Հոկտեմբերի 4-ին տեղի է ունենում հաշվետու ընտրական ժողովը:⁵ Բյուրոյի կազմը մնում է անփոփոխ: Կազմակերպության քարտուղար է ընտրվում Սելիմբեկ Գևորգյանը, իսկ Ավետիք Խլղաթյանը՝ Մյասնիկ Ավետիսյանի փոխարեն՝ նշանակվում է կաֆի վարիչ (վերջինս նշանակվում է իր նախկին աշխատանքին՝ անասնաբույժ): Որոշ ժամանակ հետո Ավետիք Խլղաթյանին նշանակում են վաֆի վարիչ, իսկ Բաղիչ Ավետիսյանին՝ կաֆի վարիչ: Ազնիվ Սահակյանին նշանակում են ավագ թռչնապահ:

Բնական է, որ բարձրագույն կրթություն ունեցող կովարչանախագահ Հայկ Մկրտչյանը իրավացիորեն ձգտել է կոլտնտեսության կադրեր ընտրել նրանց, ովքեր ունեցել են մասնագիտական կրթություն: Փաստորեն ղեկավար աշխատանքից դուրս են մնացել պատերազմին մասնակցած, զրազետ, աշխատանքային հարուստ փորձ ունեցող, բայց տարեց և մասնագիտական կրթություն չունեցող ղեկավար կադրերը: Նրանց փոխարինում են երիտասարդ և մասնագիտական կրթություն ունեցողները: Սակայն տարեց և Հայրենական մեծ պատերազմին մասնակցած և զրազետ մարդիկ, հաշվի առնելով իրենց երկար տարիների աշխատանքային հարուստ փորձը, հեշտու-

⁵ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 48, թերթ 51-56:

բյանք չեն զիջում դիրքերը: Այսպիսով, գյուղում առաջ է գալիս նոր հակասություն: Այն մղվում է պատերազմին մասնակցած, զրազետ, աշխատանքային հարուստ փորձ ունեցող տարեց մարդկանց և երիտասարդ, մասնագիտական կրթություն ունեցող կադրերի միջև: Գյուղում այդ ժամանակ հսկայական թիվ էին կազմում մասնագիտական կրթություն ունեցողները: Դրանց թվին էին պատկանում՝ Արտավազ Գրիգորյանը (գյուղատնտես), Աշոտ Մովսիսյանը (անասնաբույժ), Մյասնիկ Ավետիսյանը (տեխնիկ-անասնաբույժ), Ժենիկ Թորոսյանը (տեխնիկ-անասնաբույժ), Վաչիկ Կիրակոսյանը (տեխնիկ-անասնաբույժ), Աղավնի Խաչատրյանը (տեխնիկ-անասնաբույժ), Խաչիկ Կարապետյանը (տեխնիկ-անասնաբույժ), Գառնիկ Կիրակոսյանը (տեխնիկ-գյուղատնտես), Սարիբեկ Չաքարյանը (տեխնիկ-անասնաբույժ), Վրեժ Չաքարյանը (տեխնիկ-մեխանիկ), Սարիբեկ Աբրահամյան (տեխնիկ-անասնաբույժ), Միհրան Շառոյանը (տեխնիկ-անասնաբույժ), Մուրտ Հարությունյանը (տեխնիկ-անասնաբույժ), Արտեմ Մկրտչյանը (տեխնիկ-տնտեսագետ), Շալիկո Խլղաթյանը (անասնաբույժ), Վուրդյա Պողոսյանը (տեխնիկ-տնտեսագետ), Մուրտ Սիրակյանի Հարությունյանը (տեխնիկ-գյուղատնտես), Միշա Աղեկյանը (տեխնիկ-տնտեսագետ), Ազնիվ Տոնեյանը (տեխնիկ-տնտեսագետ), Հենրիկ Կիրակոսյանը (տեխնիկ-մեխանիկ), Բաղիչ Ավետիսյանը (տեխնիկ-անասնաբույժ), Բեգե Սահակյանը (տեխնիկ-մեխոքատոր), Ավետիք Սահակյանը (տեխնիկ-տնտեսագետ), Աղախան Չաքարյանը (տեխնիկ-գյուղատնտես), Ազնիվ Գալստյանը (տեխնիկ-գյուղատնտես), Սելիմբեկ Գևորգյանը (տեխնիկ-անասնաբույժ) և այլն: Թեև դրանց մեջ բարձրագույն կրթություն ունեցողների թիվը քիչ էր (ընդամենը 3 հոգի), բայց, այնուամենայնիվ, դրանք նոր որակ էին կազմում:

1967 թվականի սկզբին Հովհաննես Շառոյանի փոխարեն ԳՍԳԿ-ի նախագահ է ընտրվում Համբարձում Ղազարյանը:

1966 թ. վերջին հաստատվում են կովարչության 1967 թվականի կադրերը՝ Սոս Սողոյանը (գլխավոր հաշվապահ), Արտավազ Գրիգորյանը (գլխավոր գյուղատնտես), Մյասնիկ Ավետիսյանը (գլխավոր անասնաբույժ), Հայկազ Սաֆարյանը (հաշվետար-գանձապահ), Արտեմ Մկրտչյանը (տնտեսագետ), Մնաց Սողոյանը (հաշվետար), Վուրդյա Պողոսյանը (հաշվետար), Ռազմիկ Գեղամյանը (գլխավոր անասնաբույժ, քանի որ Աշոտ Մովսիսյանը աշխատանքի էր անցել շրջկենտրոնում), Սելիմբեկ Գևորգյանը (ընդհանուր անասնաբույժ), Շալիկո Խլղաթյանը (սելեկցիոն-անասնաբույժ), Հովհաննես Ներսիսյանը (ծխախոտի մասնագետ), Հովհաննես Շառոյանը (դաշտավարական I բրիգադի բրիգադի), Գառնիկ Ավետիսյանը (դաշտավարական II բրիգադի բրիգադի), Ազնիվ Գալստյանը (դաշտավարական III բրիգադի բրիգադի), Աղախան Չաքարյանը (դաշտավարական IV բրիգադի բրիգադի), Գառնիկ Արզումանյանը (դաշտավարական V բրիգադի բրիգադի), Ավետիք Սահակյանը (դաշտավարական VI բրիգադի բրիգադի), Բեգե Սահակյանը (ավագ մեխանիկ), Մամիկոն

Մարտիրոսյանը (ավտոպարկի մեխանիկ), Ալեքսան Աղեկյանը (շինքիզա-
դիր), Սարիբեկ Աբրահամյանը (տեխնիկ-անասնաբույժ), Կամսար Հակոբ-
յանը (սերմնավորող տեխնիկ), Ռ-ազմիկ Սիերյանը (էլեկտրիկ), Խորեն Գրի-
գորյանը (տրակտորի բրիգադիր), Մակիչ Գրիգորյանը (տրակտորների լից-
քավորող), Բաղիշ Ավետիսյանը (կաֆի վարիչ), Ավետիք Խղաթյանը (վաֆի
վարիչ), Միհրան Շառոյանը (կաֆի բրիգադիր), Սեխանիկ Սաֆարյանը (է-
լեկտրագողող), Խաչիկ Կարապետյանը (լաբորանտ), Սեդրակ Սաֆարյանը
(խառատ), Պատվական Գալստյանը (I պահեստի պահեստապետ), Մոլոտ
Հարությունյանը (II պահեստի պահեստապետ), Արտեմ Սարոյանը (կոպիտ
կերերի ֆուրաժեր), Արտուշ Սարգսյանը (խտացրած կերերի ֆուրաժեր),
Բեգե Սահարադյանը (հրշեջ պահակ), Գևորգ Սիերյանը (գնորդ):

Աշխատանքի անցնելու համար քննում են Ժենիկ Թորոսյանի, Հայկ
Կիրակոսյանի, Վեհմիր Հարոյանի, Ազնիվ Տոնեյանի դիմումները: Որոշվում
է՝ աշխատանք լինելու դեպքում նրանց ընդունել իրենց մասնագիտությանը
համապատասխան աշխատանքի:

Ղեկավար կադրերի նշանակման հարցը մեծ հակասություններ է առաջ
բերում կոլտնտեսությունում: Առաջ են գալիս դիմում-բողոքներ՝ կապված
մասնավորից գնված անասունների, դուրս գրված մարդատար ավտոմեքե-
նայի և տնտեսությունում նկատվող այլ մանր-մունր թերությունների հետ:

1967 թ. հունվարի 31-ին Հայկ Մկրտչյանը ազատվում է կոլվարչության
նախագահի պաշտոնից: Նրա փոխարեն նշանակվում է Ստեփանյան Սեր-
գեյը (շրջկենտրոնից):⁶ Կոլվարչության կազմում, Սերգեյ Ստեփանյանից
բացի, առաջադրվում են Սելիմբեկ Գևորգյանը, Արտավազ Գրիգորյանը,
Գառնիկ Արզումանյանը, Ավետիք Խղաթյանը, Ծաղիկ Շահնագարյանը
(հարվածային ծխախոտագործուհի և ՀՍՍՀ Գերագույն խորհրդի պատգա-
մավոր), Սարիբեկ Ղազարյանը (առաջավոր շարքային աշխատող), Ավե-
տիք Սահակյանը, Հովհաննես Շառոյանը:

Կոլտնտեսության վերստուգիչ հանձնաժողովի կազմում առաջադրվում
են Համբարձում Ղազարյանը (նախագահ), Ապրես Սարոյանը, Սարիբեկ
Հովեյանը:

1967 թ. մարտի 27-ին Չորագյուղի արտադրական կուսկազմակեր-
պության ժողովը քննարկում է քաղուսուցման վիճակը Չորագյուղում, որի
մասին գեկուցում է դպրոցի դիրեկտոր և ագիտկոլեկտիվի նախագահ Դի-
միտրի Սարգսյանը:⁷ Նա իր ելույթում ընդգծում է, որ ագիտկոլեկտիվի աշ-
խատանքները միշտ էլ բարձր մակարդակով են անցնում Չորագյուղում, քա-
նի որ այդ աշխատանքների հիմնական կատարողները դպրոցի ուսուցիչ-
ներն են, որոնց մեծ մասն ունի բարձրագույն կրթություն: Քաղխմբակները,
որ դեկավարում են պրոպագանդիստներ Դիմիտրի Սարգսյանը և Գառնիկ
Սարգսյանը, ժամանակին գումարում են իրենց նիստերը: Քաղխմբակների

անդամներն ունեն իրենց մշակումների տետրերը, իրենց պլան-կոնսպեկտ-
ները: Այդ խմբակներում հիմնականում ուսումնասիրվում են կուսակցության
պատմությունը, ինչպես նաև մեր օրերում ՄՍԿ ԿԿ-ի փակ նամակները և
պլենումների որոշումները: Քաղխմբակների աշխատանքները առաջ են
գնում վերելքով, քանի որ այդ խմբակների ունկնդիրների մեծ մասն ունի
բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն: Այդ խմբակների
լավագույն ունկնդիրներից են Արտավազ Գրիգորյանը, Աշոտ Մովսիսյա-
նը, Մյասնիկ Ավետիսյանը, Վաչիկ Կիրակոսյանը, Աղավնի Խաչատրյանը,
Գառնիկ Կիրակոսյանը, Մոլոտ Հարությունյանը, Վրեժ Չաքարյանը, Շալի-
կո Խղաթյանը, Սիշա Աղեկյանը, Հենրիկ Կիրակոսյանը և շատ ուրիշներ:
Ինչ վերաբերում է ագիտատորներին, ապա նրանք ժամանակին լինում են
իրենց հատկացված բրիգադներում, ֆերմաներում, ծխախոտի չորանոցնե-
րում, ծխախոտի դաշտերում, խոտհարկերում, կալերում, անասնագոմերում:
Նրանց ջանքերով ամիսը մեկ անգամ լույս է տեսնում պատի թերթը (խմբկո-
լի նախագահ Խ. Մնացականյան): Հենց ուսուցիչներից կազմված ագիտկո-
լեկտիվի լավ աշխատանքով է պայմանավորված դպրոցի և հարազատ
կոլտնտեսության ամուր կապը: Դրա ամենալավագույն դրսևորումն է այն,
որ դպրոցի աշակերտների ջանքերով հավաքվում է ծխախոտի թերթի շուրջ
30-40 %-ը, որի շնորհիվ բարձրանում են կոլտնտեսականների ծխախոտից
ստացվող դրամական եկամուտները:

Արդեն այս տարվա գարնանը սկսվեցին պետության կողմից մեզ
տրված 964 տեղանոց մեկ հերթի դպրոցի շենքի շինարարության աշխա-
տանքները՝ շինարար-ինժեներ, համագյուղացի Սարուխան Դադիկի Դու-
կասյանի զխավորությամբ: Աշխատանքային այն մեծ թափը, որով սկսվել
են այդ աշխատանքները, հավանաբար, մեկ տարի հետո կտա իր պտուղնե-
րը՝ կավարտվի միջնակարգ դպրոցի շենքի շինարարությունը, և գյուղի աճող
սերունդը կունենա հիանալի դպրոցական շենք, որտեղ կտեղավորվի նաև
մեր միջնակարգ դպրոցի առաջնեկը՝ փառավոր հերթափոխային միջնա-
կարգ դպրոցը՝ ցերեկային միջնակարգ դպրոցի կողքին՝ միայն հերթի փոփո-
խությամբ, որտեղ կսովորեն կոլտնտեսությունում աշխատանքի անցած ե-
րիտասարդները:

Վավերագրերը տեղեկացնում են, որ Չորագյուղի ուսուցչական կոլեկ-
տիվը 1960-1967 թվականներին որակական մեծ թռիչք է ապրում, քանի որ
դպրոցի ուսուցչական կոլեկտիվը համալրվում է բարձրագույն կրթություն ու-
նեցող որակյալ կադրերով: Նրանցից ոմանք ավարտել էին արտադրությու-
նից կտրված (ստացիոնար) բարձրագույն ուսումնական հաստատություն-
ները: Դրանք էին՝ դպրոցի դիրեկտոր Դիմիտրի Նիկոլայի Սարգսյանը, I
ուսմասավար Խրիմիկ Պողոսի Խղաթյանը, ռուսաց լեզվի ուսուցչուհի Ռոզա
Վասիլի Սարգսյանը (նա ավարտել էր Երևանի պետական համալսարանը),
մաթեմատիկայի ուսուցիչ Ռուբեն Արամայիսի Ավետիսյանը: Ոմանք էլ ա-
վարտել էին արտադրությունից չկտրված (հեռակա) բարձրագույն ուսում-

⁶ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 49, թերթ 6-7:

⁷ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 50, թերթ 28-35:

նական հաստատություններ: Գրանք էին՝ դպրոցի II ուսմասվար Հայրիկ Սիրականի Ղազարյանը, պատմության ուսուցիչ Աղվան Սարգսի Մանուկյանը, հայոց լեզվի ուսուցիչ Կամսար Արսենի Գավթյանը, պատմության ուսուցիչ Գառնիկ Գրիգորի Սարգսյանը, մաթեմատիկայի ուսուցիչ Սուրեն Սկրտիչի Ավետիսյանը, քիմիայի ու կենսաբանության ուսուցիչ Վոլոդյա Սարգսի Ղազարյանը, աշխարհագրության ուսուցիչ Վոլոդյա Գրիգորի Սարգսյանը, պատմության ուսուցիչ Մոս Սահրադի Մնացականյանը, հայոց լեզվի ուսուցիչ, իսկ 1966 թվականից նաև դպրոցի II ուսմասվար Ալբերտ Պարսամի Ասատրյանը, հայոց լեզվի ուսուցիչ Ծնավոն Կարապետի Բաղդասարյանը, հայոց լեզվի ուսուցիչ Ռաֆիկ (Ռազմիկ) Արամի Հակոբյանը, հայոց լեզվի ուսուցիչ Գյուլաբ Եղշիբեկի Սկրտչյանը, աշխատանքի ուսուցում առարկայի ուսուցիչ Ավետիք Եղիշեի Սահակյանը: Թերի բարձրագույն կրթություն ունեին՝ աշխարհագրության ուսուցչուհի Հրանուշ Հովակիմյանը, պատմության ուսուցչուհի Ռոզա Գևորգի Վարդանյանը, մաթեմատիկայի ուսուցիչ Գրիգոր Վասակի Մովսիսյանը, դպրոցի արհեստանոցի վարպետ, իսկ հետագայում պատմության ուսուցիչ Վոլոդյա Մուշեղի Սահրադյանը, դպրոցի գրադարանավար, իսկ հետագայում քիմիայի ու կենսաբանության ուսուցիչ Ավետիք Հակոբի Ղազարյանը: Գյրոցի որակյալ կրթության հիմքը դնում են դասավարները: Այդ ժամանակ Չորագյուղի դպրոցի միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող լավագույն դասավարներն էին՝ Մարուսյան Ղարաբաղցյանը, Արմիկ Արզումանյանը, Շուշիկ Չիփչյանը, Սոնիկ Հովսեփյանը, Արուսյակ Հովսեփյանը, Աշխեն Մանուկյանը: Գյրոցը հայարտանում էր նաև իր մի շարք որակյալ ուսուցիչներով, որոնք թեև ունեին միջնակարգ մասնագիտական կրթություն, բայց դասավանդում էին բարձր մակարդակով: Գրանք էին՝ տարրական դասարանների մաթեմատիկայի ուսուցիչ Բեգե Սարգսի Պողոսյանը, բարձր դասարանների ֆիզիկական կուրսուրայի ուսուցիչ Սարգիս Համբարձումի Ղազարյանը, տարրական դասարանների ռուսաց լեզվի ուսուցիչներ Գևորգ Ապետանակի Մովսիսյանը, Գագիկ Աղվանի Մանուկյանը: Գյրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների վերելքին նպաստել են նաև տարբեր ժամանակներում աշխատող պիոներ ավագ ջոկատավարներ Վահան Կարապետի Բաղդասարյանը, Թառլան Եղիշեի Սաֆարյանը (Սահակյանը), Լաուրա Հովհաննեսի Սարգսյանը: Գյրոցի տնտեսական մասի հիանալի աշխատողներից էին տնտեսական մասի վարիչ Շամխալ Աղաբեկի Մուրադյանը (Ավետիսյանը), դպրոցի պահակ Անուշավան Պողոսյանը, հավաքարարներ՝ Արեգմազ Պողոսյանը, Աստղիկ Պողոսյանը, Սիրուշ Կարապետյանը, Դուշո Շահնագարյանը, Ռոզա Շահնագարյանը, Աստղիկ Քալոյանը, Օֆիկ Մովսիսյանը, Վարսե Մնացականյանը, Նվարդ Նազարյանը, Մովոն Մովսիսյանը, Տիրուն Պողոսյանը, Քնարիկ Մինասյանը, Թամարա Սահրադյանը, Արևհատ Սողոմյանը, Սանամ Կիրակոսյանը, Լուստ Պողոսյանը և ուրիշներ:

Այդ ժամանակ դպրոցում սովորող գերագույնի աշակերտներից են եղել Ռաֆիկ Ասատուրի Բաղդասարյանը, Մերուժան Հայկարամի Գալստյանը, Ֆրունզիկ Եղիազարի Մանուկյանը, Բորիս Մանասարի Հակոբյանը, Կորյուն Վորոնցովի Ասատրյանը, Լիդա Վորոնցովի Ասատրյանը, Կիմա Վորոնցովի Ասատրյանը, Նվեր Գյուլաբի Սկրտչյանը, Միհրան Սիրականի Մանուկյանը, Լևիկ Բեգեի Սաֆարյանը, Վազգեն Ասատուրի Բաղդասարյանը, Նորայր Խաչիկի Մնացականյանը, Վազգեն Հայրիկի Ղազարյանը, Համլետ Նիկոլայի Սարգսյանը, Հայկ Մնացի Ավետիսյանը (Քալոյանը), Գագիկ Արամի Հակոբյանը, Նորայր Բեգեի Սաֆարյանը, Գագիկ Արամի Սուքիասյանը, Համլետ Բեգեի Սահրադյանը, Ժորա Հայկի Գրիգորյանը, Յուրիկ Հայկազի Մինասյանը, Գագիկ Ռուշանի Մանուկյանը, Ավետիք Ազնիվի Գալստյանը, Օգեն Գառնիկի Սարոյանը, Անդրանիկ Արտեմի Սկրտչյանը, Միշա Հայկի Գալստյանը, Վանուշ Գառնիկի Սարոյանը, Ավետիք Շամխալի Ավետիսյանը, Գագիկ Խորենի Գրիգորյանը, Ալբերտ Ազնիվի Գալստյանը, Հենրիկ Ռուշանի Մանուկյանը, Գագիկ Գառնիկի Մանուկյանը, Վոլոդյա Բենիամինի Խաչատրյանը, Հայկազ Աղեկի Աղեկյանը, Համլետ Կարապետի Ավետիսյանը, Հրահատ Բեգեի Սաֆարյանը, Գագիկ Բալաբեկի Ռուշատյանը, Գուրգեն Անուշավանի Սարոյանը, Վարադատ Արտաշի Պողոսյանը, Ֆուրման Արտեմի Սարոյանը, Հենրիկ Ռուշանի Մանուկյանը, Լյովա Գրիշայի Գասպարյանը, Ավագ Բեգեի Սաֆարյանը, Ռաֆիկ Խորենի Գրիգորյանը, Լյովա Խորենի Գրիգորյանը, Ազնիվ Հայկազի Տոնեյանը, Գնել Ռուշանի Մանուկյանը, որոնք հետագայում ստանում են բարձրագույն կրթություն, իսկ նրանց մի մասն էլ՝ գիտական կոչում (Մերուժան Հայկարամի Գալստյան, Գագիկ Արամի Սուքիասյան, Նվեր Գյուլաբի Սկրտչյան, Նորայր Բեգեի Սաֆարյան): Ի դեպ, տեղին է ասել, որ գիտական կոչում ստացածները հետևել են ձորագյուղցիներ Նորայր (Իլիշ) Հայկի Գրիգորյանին, Աշոտ (Վոլոդյա) Խաչատուրի Հակոբյանին (Գրիգորյանին) և Դիմիտրի Նիկոլայի Սարգսյանին, որոնք նրանցից առաջ ավարտել են ասպիրանտուրան, ստացել գիտական կոչում և դարձել նրանց համար քարի ուղեցույցներ:

Այս վերջին փաստն արդեն խոսում է Չորագյուղի բնակչության գիտական ներուժի որակական թռիչքի մասին:

1967 թվականին դպրոցի դիրեկտոր Դիմիտրի Նիկոլայի Սարգսյանը Հայաստանի Հանրապետության Գիտությունների ակադեմիայի արտադրությունից կտրված ասպիրանտուրա ընդունվելու պատճառով, իր դիմումի համաձայն, ազատվում է աշխատանքից և տեղափոխվում Երևան: Նրա փոխարեն դպրոցի դիրեկտոր է նշանակվում II ուսմասվար Ալբերտ Պարսամի Ասատրյանը, որը, ինչպես ընդգծվել է, ուներ բարձրագույն կրթություն:

1967 թվականի հոկտեմբերի 24-ին տեղի ունեցող արտադրական կուսկազմակերպության հաշվետու ընտրական ժողովը բյուրոյի կազմում ընտրում է նույն մարդկանց, ինչպիսիք եղել էին նախորդ տարում, բացի մեկից՝

Շալիկ Գեղամի Կիրակոսյանից, որը տեղ էր գրավել բյուրոյի կազմում իր լավագույն աշխատանքի համար:

1967 թ. նոյեմբերի 21-ին կոլվարչնախագահ Սերգեյ Ստեփանյանը, որը ընդամենը 1 տարի էր աշխատել, ազատվում է աշխատանքից, իսկ նրա փոխարեն կրկին նշանակվում է Կարապետ Եզնակի Ավետիսյանը:

1968 թվականի կոլտնտեսության ղեկավար կադրերը հիմնականում մնում են նույն անձնավորությունները, միայն թե նրանցից ոմանց աշխատանքը փոխվում է մի ուրիշի աշխատանքով, օրինակ՝ գլխավոր հաշվապահ Սոս Սողոյանը նշանակվում է գլխավոր տնտեսագետ՝ Սկրտչյան Արտեմի փոխարեն, իսկ վերջինս էլ նրա փոխարեն նշանակվում է գլխավոր հաշվապահ, տրանսպորտի վարիչ Ավետիք Խղաթյանը նշանակվում է գլխավոր մեխանիկ Բեգե Սահակյանի փոխարեն, իսկ վերջինս էլ նրա փոխարեն նշանակվում է տրանսպորտի վարիչ և այլն:

1968 թ. հունվարի 10-ին Ավետիք Խղաթյանը Սելիմբեկ Գևորգյանի փոխարեն ընտրվում է կուսկազմակերպության քարտուղար: Իսկ մեխանիկատոր Կարազոհատ (Մեխանիկ) Վանոյի Սահրադյանը ընդունվում է կուսակցության շարքերը:

1968 թ. ապրիլի 8-ի միացյալ կուսակցական ժողովում քննվում են Մարտունու կուսընկերության II պլենումի նյութերը,⁸ որոնցում քննադատական խոսք է ասվում Ձորագյուղի դպրոցի հաճախումների և ուսման ցածր առաջադիմության մասին, ինչպես նաև այն մասին, որ շատ երեխաներ դուրս են մնացել պարտուսից 1968 թվականին: Դպրոցի աշակերտների թիվն այդ ժամանակ կազմել է 840, բայց ամեն օր հաճախել են 600-650 աշակերտներ: Ելույթ են ունենում դպրոցի ուսուցիչներ Խաչիկ Մնացականյանը, Վուրդյա Ղազարյանը, Աղվան Մանուկյանը, Շմավոն Բաղդասարյանը, Հայրիկ Ղազարյանը, որոնք քննադատում են դպրոցի նոր շենքի շինարարներին, որ դանդաղ են առաջ տանում շինարարական գործը:

1968 թվականի հունիսի 18-ին Մարտունու կուսընկերության բյուրոն Ձորագյուղի կոլվարչության նախագահ Կարապետ Ավետիսյանին, որը ընդամենը 8 ամիս էր աշխատել, ազատում է աշխատանքից՝ անասնակերի շռայլման պատճառով: Ինչպիսի պատճառաբանություն էլ ունենա, ընդամենը 8 ամիս աշխատած կադրին, որին շրջկոմի բյուրոն է ընտրել, հենց նույն բյուրոն ազատում է աշխատանքից, նորմալ երևույթ չէ: Դա ավելի շուտ կադրային ջարդ է, մարդկային անհատի հոգեկան խեղաթյուրում, որով բացահայտվում է Մարտունու կուսընկերության անհեռատեսությունն ու դաժանությունը: Նման երևույթ է մինչ այդ տեղի ունեցել Սերգեյ Ստեփանյանի հետ, որը ընդամենը 1 տարի էր աշխատել, ինչպես նաև Հայկ Սկրտչյանի հետ, որը ընդամենը 1,5 տարի էր աշխատել: Այդպիսի անմարդկային վերաբերմունք է կուսընկերության բյուրոն թույլ տվել Կարապետ Ավետիսյանի կոլվարչնախագահ աշխատելու առաջին փուլում, երբ ընդամենը 2 տարի չէր էլ աշխատել,

⁸ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 50, թերթ 16-19:

նրան առանց լուրջ պատճառի ազատում է աշխատանքից: Թեև նախկին կոլվարչնախագահներից Արամ Հակոբյանը երկար տարիներ է աշխատել, բայց նրա աշխատանքը ըստ արժանվույն գնահատելու փոխարեն, մանր-մունր թերությունների համար բանտ են նետում: Իհարկե, հետո նա արդարացվում է ու վերականգնվում իր աշխատանքին, բայց նրա մեջ արդեն մեռել էր նախկին եռանդը, նախկին հավատը, նույնիսկ նախկին «Արամը»: Այդպես է վարվել Մարտունու կուսընկերության բյուրոն Արամին անմիջապես նախորդող կոլվարչնախագահ Խաչիկ Հակոբյանի հետ, որին աշխատանքից ազատում են աշխօրեր հավելագրողների դեմ պայքար ծավալելու և այդ կապակցությամբ նրա շուրջ առաջացած լարվածության համար:

Իհարկե, տեղին է ասել, որ կուսընկերության բյուրոյի այդ անմարդկային վարքագիծը հաճախ ընդօրինակել են նաև կոլվարչնախագահները, երբ ամեն տարի քննահանդերն փոխել ու փոփոխել են իրենց ենթակա կադրերին, ազատել աշխատանքից ու հեռացրել կուսակցությունից: Գուցե Հայաստանի ուրիշ շրջաններում այդպես չի եղել, բայց փաստերը հաստատում են, որ Մարտունու շրջանում այդպես է եղել պատկերը: Եվ եթե դա ընդհանուր երևույթ է եղել միությունով մեկ, ապա կարելի է ասել, որ Խորհրդային Միության փլուզման ամենագլխավոր (եթե չառենք միակ) պատճառը հենց դա է՝ կադրերի ջարդը, կադրերի հիասթափությունը: Մարդ պետք է պողպատից էլ ամուր լիներ ու մինչև իր մահը դիմանար այդ սպանդին: Թեև այդպիսիները մահից հետո էլ ենթարկվել են բզկտանքի:

Կարապետ Ավետիսյանից հետո կուսընկերության բյուրոն Ձորագյուղի կոլվարչության նախագահ է նշանակում Արթուր Պարսամի Ասատրյանին: Դա երկրորդ դեպքն էր, որ Ձորագյուղի կոլվարչությունը ղեկավարում էր բարձրագույն կրթությամբ անձնավորությունը: Արթուր Ասատրյանի փոխարեն դպրոցի դիրեկտոր է նշանակվում Խաչիկ Սիրականի Մնացականյանը, որն ուներ բարձրագույն կրթություն:

1968 թ. հունիսի 28-ին Ձորագյուղի միացյալ կուսակցական ժողովը քննարկում է ՄՄԿԿ Կենտրոնական կոմիտեի 1968 թ. մարտի 18-ի պլենումի որոշումը՝ կապված սոցիալիստական սեփականության վատնումների ու շռայլումների հարցի հետ:⁹ Ժողովում ելույթ են ունենում Մուշեղ Գալստյանը, Խաչիկ Սարգսյանը, Համբարձում Ղազարյանը, Աղվան Մանուկյանը, որոնք հարցի քննարկումը տեղայնացնում են և քննադատում Ձորագյուղի կոլտնտեսությունում տեղի ունեցող վատնումների և շռայլումների երևույթները:

Հուլիսի 29-ին Հովհաննես Սարգսյանը, Եղիազար Մանուկյանը, Խաչիկ Սարգսյանը, Խանադով Շառոյանը, Մնաց Մալիանյանը, Սերգեյ Մարոյանը նշանակվում են ժողովրդական վերահսկողության խմբի անդամներ, որոնք պետք է պայքարեին համաժողովրդական սեփականությունը վատնողների ու յուրացնողների դեմ: Նոյեմբերի 3-ին կուսակցական հաշվետու

⁹ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 50, թերթ 28-31:

ընտրական ժողովը բյուրոյի կազմում ընտրում է նույն մարդկանց, որոնց ընտրել էր նախորդ տարում, բացի Ալբերտ Ասատրյանից, որն ընտրվում է Կարապետ Ավետիսյանի փոխարեն:¹⁰

1969 թ. կոլտնտեսության ղեկավար կադրերը հիմնականում մնում են նույնը, բացի Կամսար Հակոբյանից, որին ազատում են սերմնավորող-տեխնիկի պարտականություններից: Կադրերի հաստատման ժողովից կարճ ժամանակ հետո Ռաֆիկ Հայկազի Սիերյանը հաստատվում է որպես տեխնիկ-անասնաբույժ: Կովարչության կազմը ևս մնում է նույնը, բացի մեկից, այն է՝ Ալբերտ Ասատրյանից, որն ընտրվում է Կարապետ Ավետիսյանի փոխարեն: Փաստորեն նոր կովարչության գլխավոր ձգտում է նախկին կադրերին ձեռք չտալ, որպեսզի իր դեմ լարվածություն չառաջանա, ինչպես դա տեղի էր ունեցել Հայկ Սկրտչյանի հետ: Նա աշխատում է մակ բավարարել երիտասարդ մասնագետների ցանկությունները՝ նրանց ընտրելով կուսակցության շարքերը: Ապրիլի 12-ին ավտովարորդ Մոլոտ Նիկողայի Սարգսյանը, տեխնիկ-գյուղատնտես Գառնիկ Հակոբի Արզումանյանը և Ռազմիկ Գրիգորի Հարությունյանը ընդունվում են կուսակցության շարքեր, իսկ Արտեմ Ալեքսանի Առաքելյանը կուսակցության փոխադրվում է կուսանդամ: Հուլիսի 12-ի ընդհանուր ժողովում լսվում է արտադրական ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար Գագիկ Սարգսի Գուկասյանի զեկուցումը կոմերիտականների հետ տարվող աշխատանքի մասին: Նա հաղորդում է, որ գործում է կոմերիտականների քաղխմբակը, որի ընթացքում կոմերիտականները բարձրացնում են իրենց քաղաքական մակարդակը և դառնում մեր կուսակցական ընկերների արժանի փոխարինողները: Նա միաժամանակ նշում է, որ կոմերիտականները ներգրավված են կոլտնտեսության աշխատանքների մեջ, նրանցից շատերը սոցմրցումների հաղթողներ են:

Հոկտեմբերի 27-ին արտադրական կուսկազմակերպության հաշվետու ընտրական ժողովում կուսակցական բյուրոյի կազմում ընտրվում են նույն մարդիկ:

1970 թ. կոլտնտեսության ղեկավար կադրերի կազմը կրում է որոշակի փոփոխություններ: Նորությունը մասնագետ կադրերին համապատասխան աշխատանքի նշանակելն էր, օրինակ՝ գլխավոր անասնաբույժ է հաստատվում համապատասխան բարձրագույն կրթություն ունեցող Շալիկո Խղարյանը, անասնաբույժ-սելեկցիոներ է հաստատվում համապատասխան մասնագիտություն ունեցող Գիմիտրի Ապրեսի Սարգսյանը, II սելեկցիոներ-անասնաբույժ է հաստատվում համապատասխան մասնագիտական կրթություն ունեցող Խաչիկ Սելբոնի Կարապետյանը, շինքրիզադիր է նշանակվում շինարար-տեխնիկ Գրիշա (Քաջիկ) Խանչալբեկի Կարապետյանը, գլխավոր հաշվապահ է նշանակվում տեխնիկ-տնտեսագետ Արտեմ Սկրտչյանը: Նոր աշխատանք են ստանում նախորդ տարիներին իրենց աշխատանքի մեջ լավ դրսևորած Ազնիվ Գալստյանը (վաֆի վարիչ), Համբար-

ծում Ղազարյանը (II պահեստի պահեստապետ), Ազնիվ Սահակյանը (ավագ քոչնապահ), Խաչիկ Սարգսյանը (IV բրիգադի բրիգադիր՝ Աշոտ Առաքելյանի փոխարեն): Կրտսեր գյուղատնտեսի կրթություն ունեցող Ռուսբեկ Մնացի Մոդոյանի աշխատանքի հարցը հետաձգվում է, քանի որ նրա մասնագիտությանը համապատասխանող աշխատանքի տեղերը զբաղեցրել էին մասնագիտական կրթություն չունեցող, բայց աշխատանքային հարուստ փորձ ունեցող կուսակցական կադրերը:

Հունվարի 21-ին կոլտնտեսության ընդհանուր ժողովում քննվում է Լ. Ի. Բրեժնևի ճառը, որը նվիրված էր պետական բյուջեին: Ճառում ընդգծվում է, որ պետբյուջեն ունի ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական նշանակություն: Պետբյուջեի միջոցով ոչ միայն զարգանում է մեր երկրի տնտեսությունը, այլև մեր երկիրը նպաստում է թույլ զարգացած երկրների տնտեսության զարգացմանը, որով բարձրանում է մեր պետության հեղինակությունը միջազգային արեմայում:

Մարտի 5-ին կուսակցության կուսանդամ է փոխադրվում Վաչիկ Խաչատուրի Կիրակոսյանը, իսկ Էմմա Հայկի Հակոբյանը (Գալստյանը) ընդունվում է կուսակցության: Նոյեմբերի 20-ին տեղի ունեցող կուսակցական հաշվետու ընտրական ժողովում նախորդ տարվա նույն անձնավորություններն ընտրվում են և՛ բյուրոյի կազմում, և՛ Մարտունու կուսչրջկոմի պատգամավորներ:

1971 թ. կոլտնտեսության ղեկավար կադրերի կազմը նախորդ տարվա համեմատությամբ կրում է որոշ փոփոխություններ: Այսպես, օրինակ՝ Գլխավոր անասնաբույժ է նշանակվում Վաչիկ Խաչատուրի Կիրակոսյանը, տեխնիկ-սերմնավորող՝ Ռուսբեկ Մնացի Մոդոյանը, Վաֆի II վարիչ՝ տեխնիկ-անասնաբույժի կրթություն ունեցող Սարիբեկ Սկրտչի Աբրահամյանը: Ոչ մասնագետներից նրանք, ովքեր իրենց արդարացրել են ղեկավար աշխատանքի մեջ, նույնպես աշխատանքի են նշանակվում: Օրինակ՝ հարվածային օդակավար Մնաց Արամի Դավթյանը նշանակվում է III բրիգադի բրիգադիր:

Փաստերը հաստատում են, որ Չորագյուղի կոլտնտեսության ղեկավար կադրերի մեջ արդեն որոշ չափով իրենց տեղն են գրավում մասնագետ երիտասարդները, որոնց դեմ նահանջում են և իրենց տեղը նրանց զիջում պատերազմին մասնակցած զրազետ, աշխատանքային հարուստ փորձ ունեցող, բայց ոչ մասնագետ որոշ կադրերը: Պետք է նկատի ունենալ, որ մասնագետների բանակը լրացնում են կոլտնտեսության օրեցօր աճող մեխանիզատորները (տրակտորիստները, կոմբայնավարները, ավտոմեքենայի վարորդները), որոնց թիվը հասնում էր շուրջ 2 տասնյակի:

Արտադրական կուսկազմակերպությունը աշխատում էր իր շարքերը լրացնել հատկապես երիտասարդ մասնագետներով: Սակայն այդպիսիները հաճախ իրենց մասնագիտության հետ օգտագործում էին իրենց կուսակցականությունը և կովարչությունից պահանջում իրենց տրամադրել ղեկա-

¹⁰ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 51, թերթ 62-63:

վար կադրերի հաստիքները: Այս երևույթն էլ իր հետ առաջ էր բերում լրացուցիչ հակասություն կոմունիստ մասնագետների և ոչ կոմունիստ մասնագետների միջև՝ կոլտնտեսության ղեկավար կադրերի հաստիքներին տիրանալու գործում (այդ ժամանակ արտադրական կուսկազմակերպությունում կային 48 կոմունիստներ, որոնց կեսից ավելին երիտասարդ մասնագետներ էին, իսկ կոլտնտեսության ղեկավար կադրերի հաստիքները 25-ից չէին անցնում): Այդպես գնալով կուսակցական տոմսը դառնում էր կարիերիստների համար շահույթ ստանալու աղբյուր: Այդ էր պատճառը, որ կուսակցական տոմսին ոչ արժանի որոշ մարդիկ, օգտագործելով կուսակցական օղակների (սկզբնական կուսկազմակերպության, կուսշրջկոմի, նույնիսկ Կենտկոմի) որոշ ղեկավար մարդկանց թուլությունը, զանազան զարտուղի ճանապարհներով (նույնիսկ դրամով) ձեռք են բերում կուսակցական տոմս: Այս երևույթը, բնականաբար, թուլացնում էր թե՛ կուսակցության և թե՛ ղեկավար կադրերի շարքերը:

1971 թվականին Չորագյուղի կոլվարչության անդամները հիմնականում մնում են նույնը, բացի 4-ից, որոնք նոր են ընտրվում: Գրանք են՝ Գառնիկ Հակոբի Արզումանյանը, Շալիկո Արամի Խլղաբյանը, Հասմիկ Գարեգինի Աղեկյանը, Խորեն Գեղամի Գրիգորյանը: Փետրվարի 21-ին կուսակցական կազմակերպության շարքեր են ընդունվում Սերյոժա Գյուլաբի Ավետիսյանը, Յուրման Գևորգի Հակոբյանը, Սիիրան Սիբակյանի Սանուկյանը, իսկ կուսթեկնածուից կուսանդամ է փոխադրվում Էմմա Հայկի Հակոբյանը: Կուսակցական կազմակերպության բյուրոյի կազմում, նախորդ տարվա բյուրոյի կազմի համեմատությամբ, բոլորովին նոր են ընտրվում Հռիփսիկ Մկրտիչի Սաֆարյանը և Յուլյա Բարեղամի Գալստյանը, որոնք մասնագիտական կրթություն չունեին:

Չորագյուղի պետական տնտեսությունն իր 40 տարիների ընթացքում անհամեմատ վերելք է ապրել: Օրինակ՝ եթե 1933 թվականին, երբ նոր էր սկսվում դաշտավարության վերելքը, մեկ հա-ից ստացվել է 5,8 ց հացահատիկ, ապա 1971 թվականին այն հասել է 18 ց-ի, այսինքն՝ շուրջ 12 ց-ով ավելի: Եթե 1934 թվականին, երբ նոր էր սկսվում անասնապահության վերելքը, կոլտնտեսությունում կար 89 գլուխ խոշոր եղջերավոր անասուն և 386 գլուխ մանր եղջերավոր անասուն, ապա 1971 թվականին այնտեղ խոշոր եղջերավորների գլխաքանակը հասել է 1100-ի, իսկ մանր եղջերավորների՝ 4300-ի, այսինքն՝ 12 անգամ ավելացել է խոշոր և 11 անգամ մանր եղջերավոր անասունների գլխաքանակը: Սա արդեն հսկայական աճ էր 40 տարիների ընթացքում:

§ 7. ԽՈՐՀՐԴ-ԱՅԻՆ ԿԱՍ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ (1972–1990 թթ.)

Գյուղատնտեսության բնագավառում սոցիալիստական համակարգի կառուցումը առաջ մղելու նպատակով երկիրը ձգտում է կոլեկտիվ տնտեսությունները փոխարինել խորհրդային կամ պետական տնտեսություններով:

1972 թվականի հունվարից, երբ արդեն իր առաջին տարին ավարտել էր X հնգամյակը, Չորագյուղի կոլեկտիվ տնտեսությունը (կոլխոզը) Հայաստանի կառավարության որոշմամբ փոխվում է խորհրդային կամ պետական տնտեսության (սովխոզի),¹ որը հիմնականում ուներ կաթնա-անասնապահական բեքում, թեև այնտեղ տնտեսության կարևոր ճյուղեր էին համարվում նաև հացահատիկի մշակությունը, ծխախոտագործությունը, բանջարաբուծությունը, պտղաբուծությունը և այլն: Տնտեսությունն ուներ 1024 հա վարելահող, 266 հա խոտհարք, 10 հա պտղատու այգի, 1000 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից 420 գլուխ կով, 4000 գլուխ մանր եղջերավոր անասուն (ոչխար), որից 2300 մայր մաքի: Եթե կոլեկտիվ տնտեսության ունեցվածքը (հողատարածությունները, անասունները, նրանցից ստացված եկամուտները) Չորագյուղի կոլտնտեսականների սեփականությունն էր, ապա պետական տնտեսության այդ ունեցվածքը համաժողովրդական սեփականություն էր, այսինքն՝ ամբողջ խորհրդային ժողովուրդների սեփականությունը: Փոխվել են աշխատավորների կարգավիճակն ու տնտեսության կառավարման ապարատը: Նախկին կոլտնտեսականը դարձել էր բանվոր, նախկին կոլվարչնախագահը՝ դիրեկտոր, նախկին կոլվարչությունը՝ դիրեկցիա, առաջ էր եկել բանկոմը, այսինքն՝ բանվորական կոմիտեն: Անփոփոխ են մնացել կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները: Թե՛ կոլտնտեսության և թե՛ պետական տնտեսության ժամանակ աշխատողների կատարած աշխատանքի գնահատման չափանիշը նույնն էր՝ աշխօրն էր կամ աշխատանքային օրը: Եթե կոլտնտեսությունը աշխօրերի դիմաց վճարում էր ինչպես բնամթերք, այնպես էլ կանխիկ դրամ, որն առաջանում էր պետությանը բնամթերք վաճառելու ճանապարհով, ապա պետական տնտեսությունը աշխօրերի դիմաց վճարում էր միայն կանխիկ դրամ պետական գանձարանից, իսկ բնամթերքը ինքը՝ պետությունն էր վաճառում պետական տնտեսության բանվորներին (ստացված գումարը վերադարձնում պետական գանձարան):

Պետությունը տնտեսությունում աշխատող բանվորների վրա դնում է բնամթերք արտադրելու իր պլանները՝ ըստ տնտեսության հողատարածությունների որակի ու քանակի, ինչպես նաև ըստ անասունների որակի ու քանակի: Փաստորեն տնտեսությունն իր վրա պետական պարտավորություններ է վերցնում, որոնք էլ խթանում են արտադրությունը: Աշխօրերի արժեքը

¹ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 54, թերթ 1–31:

կախված էր պլանային առաջադրանքների կատարումից՝ բանվորը չէր կատարում պլանային առաջադրանքը, բնականաբար, նրա աշխօրերի ինքնարժեքը ցածր էր լինում, կատարում էր պլանային առաջադրանքը՝ աշխօրերի ինքնարժեքը հասնում էր պետական նորմայով սահմանված չափանիշին, իսկ եթե գերակատարում էր պլանային առաջադրանքը՝ աշխօրերի ինքնարժեքը գերազանցում էր պետական նորմայով սահմանված չափանիշը: Աշխատանքի կատարման և նրա դիմաց վարձատրության այս ձևի հիմքում, փաստորեն, ընկած էր սոցմրցումը: Այս էր պատճառը, որ ամեն մի տնտեսական տարվա սկզբին տնտեսության բանվորները նախորդ տարվա համեմատությամբ ավելի բարձր սոցպարտավորություններ են ստանձնում:

Աշխատանքի կատարման և վարձատրման սոցիալիստական վերոհիշյալ սկզբունքները տնտեսությունում երաշխավորված էին ԽՍՀՄ Սահմանադրությամբ: Տնտեսության ֆինանսատնտեսական գործունեությունը և ներքին կարգապահական կանոնները իրագործվում են կուսչրջկոմների բյուրոների կողմից նշանակված դիրեկտորի միջոցով: Վերջինիս գործունեությունը վերահսկվում էր պետության, համայնքի և հասարակական կազմակերպությունների կողմից: Տնտեսությունում աշխատանքը կազմակերպվում էր սոցիալիստական կոոպերացման հիմունքներով: Կոոպերացման հիմքն էր հանդիսանում աշխատանքի կազմակերպման բրիգադային ձևը: Արտադրական յուրաքանչյուր ճյուղը պետք է ունենար իր գլխավոր մասնագետը՝ գլխավոր անասնաբույժը, գլխավոր անասնաբույժը, գլխավոր գյուղատնտեսը, գլխավոր ինժեներ մեխանիկը, գլխավոր տնտեսագետը և գլխավոր հաշվապահը: Յուրաքանչյուր գլխավոր մասնագետը պետք է ունենար 3-4 մասնագետ օգնականներ: Փաստորեն տնտեսության ղեկավար կադրերի ընտրության հիմքում ընկած էր մասնագիտական որակավորումը:

Չորագյուղի պետական տնտեսությունն ուներ 6 դաշտավարական, 2 ոչխարաբուծական (վաֆ), 3 կովաբուծական (կաֆ) և 1 տրակտորային բրիգադ: Ավտոմեքենաները կազմում էին պարկ, որը ենթարկվում էր տնտեսության գլխավոր ինժեներ մեխանիկին: Պարկը ուներ իր վարիչը, այլ ոչ թև բրիգադիչը:

Յուրաքանչյուր տնտեսական տարվա սկզբին կուսակցական ժողովում կամ բյուրոյի նիստում վերանայվում ու որոշվում էին ղեկավար կադրերը և ապա ներկայացվում կուսչրջկոմի բյուրոյի հաստատմամբ: Դրանից հետո կուսակցական ժողովում ընդունվում էին տվյալ տնտեսական տարվա սոցպարտավորությունները, որոնք կարող էին բարձր լինել կուսչրջկոմի և արտադրական վարչության կողմից իջեցված պլանից, բայց ոչ նրանից ցածր: Տնտեսության ներսում սոցպարտավորություններ կարող էին վերցնել առանձին բրիգադները, առանձին օղակները և նույնիսկ անհատ աշխատողները, օրինակ՝ հովիվները՝ իրենց հանձնարարված հոտի սահմաններում, նախարապանները, կթվորները՝ իրենց հանձնարարված կովերի սահմանում: Սոցպարտավորությունները վերցնելուց հետո տնտեսությունը սկսում էր

նրանց շուրջ կատարվելիք իր աշխատանքները. 1) զարման գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստում՝ սերմերի գտում ու ախտահանում, մեխանիզացիայի նորոգում, 2) զարմանացանի անցկացում, 3) բերքի մշակում, 4) խոտի, սիլոսի ու սենածի կուտակում, 5) հացի, ծխախոտի, կարտոֆիլի, բանջարեղենի, պտղի բերքահավաք, 6) անասունների ձմեռացում:

1972 թվականին Չորագյուղի պետական տնտեսության դիրեկցիան և կուսկազմակերպությունը տնտեսության ղեկավար կադրերը վերանայելիս ու ընտրելիս, բնականաբար, հենվում են նախորդ տարում կուտնտեսության մեջ աշխատող ղեկավար կադրերի կազմի վրա՝ հաշվի առնելով նախ նրանց աշխատանքային հարուստ փորձը և ապա՝ մասնագիտությունը: Այս սկզբունքից ելնելով նրանք տնտեսության ղեկավար կադրեր են ընտրում հետևյալ մարդկանց՝ 1) դաշտավարական I բրիգադի բրիգադիչ՝ Կալինոս Հայրիկի Սարդարյանին, 2) II բրիգադի բրիգադիչ՝ Արախան Աբգարի Չաքարյանին, 3) III բրիգադի բրիգադիչ՝ Մնացական Արամի Դավթյանին, 4) IV բրիգադի բրիգադիչ՝ Խաչիկ Եզնակի Սարգսյանին, 5) V բրիգադի բրիգադիչ՝ Գառնիկ Հակոբի Արզումանյանին, 6) VI բրիգադի բրիգադիչ՝ Ավետիք Խաչատուրի Սահակյանին, 7) վաֆի բրիգադիչ՝ Մելիմբեկ Մանուկի Գևորգյանին, 8) կաֆի I բրիգադիչ՝ Ազնիվ Մկրտիչի Սահակյանին, 9) կաֆի II բրիգադիչ՝ Աշոտ Սարիբեկի Առաքելյանին, 10) տրակտորային բրիգադի բրիգադիչ՝ Խորեն Գեղամի Գրիգորյանին, 11) ավտոպարկի վարիչ՝ Վրեժ Աբգարի Չաքարյանին, 12) գլխավոր գյուղատնտես՝ Արտավազ Կարենի Գրիգորյանին, 13) գլխավոր անասնաբույժ՝ Շալիկ Արամի Խղաթյանին, 14) գլխավոր անասնաբույժ՝ Վաչիկ Խաչատուրի Կիրակոսյանին, 15) գլխավոր ինժեներ մեխանիկ՝ Ավետիք Մնացի Խղաթյանին, 16) գլխավոր հաշվապահ՝ Արտեմ Պետրոսի Մկրտչյանին, 17) գլխավոր տնտեսագետ՝ Սոս Աբրահամի Սողոյանին, 18) տեխնիկ-անասնաբույժ՝ Միհրան Մնացի Շառոյանին, 19) սելեկցիոն-անասնաբույժ՝ Խաչիկ Մելքոնի Կարապետյանին, 20) արհեստանոցի վարիչ՝ Գառնիկ Կնյազի Ավետիսյանին, 21) տեխնիկ-անասնաբույժ՝ Դիմիտրի Ապրեսի Սարոյանին, 22) գանձապահ՝ Վոլոդյա Համբարձումի Պողոսյանին, 23) հաշվետար՝ Մնաց Մանուկի Սողոյանին, 24) II հաշվետար՝ Հայկազ Սահրադի Սաֆարյանին, 25) հաշվապահի օգնական՝ Աշոտ Բարսեղի Մովսիսյանին, 26) գյուղատնտես՝ Գազիկ (Ավետիք) Գառնիկի Մանուկյանին, 27) ծխախոտի մասնագետ՝ Ազնիվ Մանասարի Գալստյանին, 28) I պահեստի պահեստապետ՝ Պատվական Գրիգորի Գալստյանին, 29) II պահեստի պահեստապետ՝ Համբարձում Ավետիսի Ղազարյանին, 30) նավթամթերքի պահեստապետ՝ Արմենակ (Ջանչիկ) Սահրադի Մնացականյանին, 31) կերերի ֆուրածեր՝ Բեգե Աղաբեկի Գրիգորյանին, 32) էլեկտրատեխնիկոս՝ Վարազդատ Վանոյի Սահրադյանին, 33) էլեկտրիկ՝ Ռազմիկ Գևորգի Մեդրյանին, 34) հիդրոմեխանիկոս՝ Բեգե Մկրտիչի Սահակյանին, 35) աշխատավարձի գծով տնտեսագետ՝ Միհրան

Սիրականի Մանուկյանին, որն ուներ բարձրագույն կրթություն (նա նոր էր ավարտել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի տնտեսագիտական ֆակուլտետի արտադրությունից կտրված բաժինը):

Պետական տնտեսության այդ 35 ղեկավար կադրերից ընդամենը 17-ը ունեին մասնագիտական կրթություն, իսկ 18-ը ոչ միայն չունեին մասնագիտական կրթություն, այլև նրանցից շատ քչերն ունեին միջնակարգ կրթություն, մյուսների կրթության սահմանը տարրական էր կամ յոթնամյան, իսկ դա, անշուշտ, իր բացասական պզդեցությունը կրողներ տնտեսության առաջընթացի, նրա պլանային առաջադրանքները կատարելու վրա: Թեև նախորդ տարվա համեմատությամբ բարձրագույն կրթություն ունեցողների թիվը երկուսով ավելացել էր և հասել էր 5-ի (Արտավազը Գրիգորյան, Աշոտ Մովսիսյան, Շալիկո Խղաթյան, Գագիկ (Ավետիք) Մանուկյան, Միքիան Մանուկյան):

1972 թվականին Չորագյուղի պետական տնտեսությունը ստանձնում է այնպիսի սոցպարտավորություններ, որոնք բավականին զերսզանցում էին նրան առաջադրված պլանային առաջադրանքները: Այսպես, պարտավորվում է ստանալ 990 ց ծխախոտի դիմաց 1100 ց, 6880 ց հացահատիկի դիմաց՝ 7000 ց, 6000 ց կարտոֆիլի դիմաց՝ 6380 ց, 100 կովից 80 հորթի դիմաց ստանալ 83 հորթ, 100 մայր ոչխարից 85 գառի դիմաց՝ 87 գառ, 90 ց բրդի դիմաց՝ 100 ց, պետությանը վաճառել հացահատիկ 250 ցեմտների դիմաց 526 ց, 990 ցեմտներ ծխախոտի դիմաց՝ 1100 ց, 110 ց բանջարեղենի դիմաց՝ 650 ց, 2740 ց կաթի դիմաց՝ 3200 ց, 90 ց բրդի դիմաց՝ 105 ց: Բացի այս ընդհանուր պլաններից, առանձին բրիգադներ և առանձին աշխատավորներ իրենք են վերցնում կատարելու սոցպարտավորությունները: Օրինակ՝ N2 բրիգադը պարտավորվում է ամեն մի հեկտարից 22 ցեմտների դիմաց ստանալ 30 ց ծխախոտ, N 4 բրիգադը՝ ամեն մի հեկտարից 12 ցեմտների դիմաց ստանալ 18 ց հացահատիկ, հովիվներ Վաղինակ Վաղուշի Խղաթյանը, Շմավոն Մուրադյանը և Գորգին Մենեի Ֆահրադյանը պարտավորվում են 100 մայր ոչխարից ստանալ 100 գառ, մեկ ոչխարից 1,5 կիլոգրամի դիմաց ստանալ 2,5 կգ բուրդ, կթվորուհիներ Հասմիկ Աղեկյանը, Սալո Ապրելի Հակոբյանը, Ռոզա Գրիգորի Սաֆարյանը, Երուն Մնացի Սարգսյանը պարտավորվում են մեկ կովից 1216 կիլոգրամի դիմաց ստանալ 1350 կիլոգրամ կաթ, նախրապաններ Աբրահամ Թումեյանը, Հովհաննես Շամասուրյանը մրցում են իրար հետ, որ ամեն մեկը իր նախիրից 1056 ցեմտների դիմաց ստանա 1300 ցեմտներ կաթ: Չորագյուղի պետական տնտեսությունը մրցման է հրավիրում Աստղածորի պետական տնտեսությանը:

1972 թ. մարտի 23-ին Մարտունու կուսըջկոմի պլենումը քննադատում է Չորագյուղի դպրոցի ուսուցչական կոլեկտիվին պարտուսը չկատարելու և աշակերտների բացակայության ու նրանց ցածր առաջադիմության համար:

Պետական տնտեսության դիրեկցիան և կուսկազմակերպությունը երկուսսարդ աշխատողներին ոգևորելու համար նրանց ներկայացնում են

խրախուսանքի, պարգևատրումների, իսկ հարվածայիններին էլ ընդունում կուսակցության շարքերը: Այդպես են վարվում հարվածային ծխախոտագործուհի Դոնարա Մակեդոնի Պետրոսյանի նկատմամբ, որին սեպտեմբերի 14-ին ընդունում են կուսակցության շարքեր որպես թեկնածու:

1972 թ. նոյեմբերի 20-ին տեղի ունեցող կուսակցական հաշվետու ժողովը բյուրոյի կազմում ընտրում է 9 հոգու՝ 1) Ալբերտ Ասատրյանին, 2) Ավետիք Խղաթյանին, 3) Եղիազար Մանուկյանին, 4) Գառնիկ Արզումանյանին, 5) Արտավազ Գրիգորյանին, 6) Մելիմբեկ Գևորգյանին, 7) Աղախան Ջաքարյանին, 8) Կնյազ Գասպարյանին, 9) Ավետիք Մալիանյանին: Այլնեք է, որ բյուրոյի կազմում մասնագիտական կրթություն ունեցող կոմունիստներից ընդամենը չորսն են ընտրվել (Արտավազ Գրիգորյան, Գառնիկ Արզումանյան, Մելիմբեկ Գևորգյան, Աղախան Ջաքարյան), որը կազմում է բյուրոյականների կազմի շուրջ 45 %-ը: Իսկ դա դեռ ցածր տոկոս էր: Փաստորեն շարունակում են բյուրոն իրենց ձեռքը պահել ոչ մասնագիտական կրթություն ունեցող կուսակցականները:

Տնտեսական տարվա վերջում ամփոփելով սոցպարտավորությունների կատարման արդյունքները պարզվում է, որ պետությանը վաճառվել է 700 ց հացահատիկ, 1020 ց ծխախոտ, 1800 ց կարտոֆիլ, 4000 տոննա կաթ, 280 ց պտուղ, 90 ց բուրդ, այսինքն՝ պետության վաճառքի պլանները կատարվել են 100%-ով:

1972 թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները ցույց են տալիս, որ տնտեսությունն աշխատել է զգալի վնասով, քանի որ պլանային որոշ առաջադրանքները չեն կատարվել, մեծ քանակություն են կազմել անասունների անհարկի դուրս գրումը և հարկադիր մորթը: 1972 թվականին Մարտունու շրջանի պետական տնտեսությունները աշխատել են մեկ միլիոն ռուբլու վնասով: Դրա մեջ իր բաժինն է ունեցել Չորագյուղի պետական տնտեսությունը:

1972 թ. սեպտեմբերին շահագործման է հանձնվում նորակառույց միջնակարգ դպրոցի շենքը: Այնտեղ բացվում է Չորագյուղի առաջին ցերեկային միջնակարգ դպրոցը՝ 41 դասարաններով և 1200 աշակերտներով: Դպրոցի դիրեկտոր է հաստատվում Խաչիկ Սիրականի Մնացականյանը: Ուսմավարներ են հաստատվում Խրիմիկ Պողոսի Խղաթյանը և Վլոդյա Սարգսի Բազարյանը: Դասարանների և աշակերտների թվին համապատասխան ավելանում է նոր վարչական միավոր՝ կազմակերպչական հարցերի գծով դպրոցի դիրեկտորի տեղակալ: Այդ պաշտոնին նշանակվում է Ալվան Սարգսի Մանուկյանը:

Չորագյուղի պետական տնտեսության աշխատավորները 1973 թվականը հայտարարում են «առատ բերքի տարի»:² 1973 թ. համար նրանք ստանձնում են հետևյալ սոցպարտավորությունները՝ 1) դաշտավարության գծով – 1020 ց ծխախոտի դիմաց արտադրել 1137 ց, 6728 ց հացահատիկի

² ՀՀ ԼԷԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 57, թերթ 1-44:

դիմաց՝ 6820 ց, 1660 տոննա խոտի դիմաց՝ 1700 տոննա, 2) անասնապահության բնագավառում. – 100 մայր ոչխարից ստանալ 90 գառ (87–ի դիմաց), 100 կովից՝ 83 հորթ (80–ի դիմաց), մեկ ոչխարից ստանալ 2,3 կիլոգրամ բուրդ (1,8 կիլոգրամի դիմաց), 92 ց բրդի դիմաց՝ 102 ց, 3) պետությանը վաճառել – 700 ց հացահատիկի դիմաց 1000 ց, 1400 ց. կարտոֆիլի դիմաց՝ 2000 ց, 90 ց բրդի դիմաց՝ 105 ց, 1020 ց մսի դիմաց՝ 1150 ց, 4000 ց կաթի դիմաց՝ 4300 ց: Սոցպարտավորություն են ստանձնում առանձին բրիգադները և անհատ աշխատողները: Օրինակ՝ N 2 դաշտավարական բրիգադը ստանձնում է մեկ հեկտարից 22 ց հացահատիկի դիմաց արտադրել 32 ց և մրցման է հրավիրում N 5 բրիգադին: N 5 բրիգադը ստանձնում է մեկ հեկտարից ասպառնիկ 120 ց կարտոֆիլի դիմաց 150 ց և մրցման է հրավիրում N 1 բրիգադին: Հովիվ Շմավոն Մուրադյանը պարտավորվում է իր խնամած հոտի 100 մայր ոչխարից ստանալ 98 գառ, մեկ ոչխարից ստանալ 2,6 կիլոգրամ բուրդ 1,8 կգ–ի դիմաց և մրցման է հրավիրում Կամսար Ղազարյանին: Անվանի հովիվ Գորգին Ֆահրադյանը պարտավորվում է մեկ մայր ոչխարից ստանալ մեկ գառ, մեկ ոչխարից ստանալ 2,6 կիլոգրամ բուրդ, կրճատել ելքը 85 գլխով և մրցման է հրավիրում անվանի հովիվներ Վաղինակ Խլղաթյանին ու Ֆելետով Խրչոյանին: Կթվոր–անասնապահ Հասմիկ Աղեկյանը պարտավորվում է իրեն ամրացած յուրաքանչյուր կովից ստանալ և առողջ վիճակում պահել մեկական հորթ, մեկ կովի միջին կաթնատվությունը հասցնել 1250 կիլոգրամի դիմաց 1400 կիլոգրամի և մրցման է հրավիրում կթվորուհիներ Թամարա Հարոյանին, Երջանիկ Ասոյանին, Սալո Հակոբյանին և Երուն Սարգսյանին:

Անասնապահ Աշոտ Սիսակի Սարգսյանը պարտավորվում է իր խնամած նախիրի 100 կովից ստանալ 83 հորթ (80–ի դիմաց), մեկ կովից ստանալ 1250 կիլոգրամի դիմաց 1300 կիլոգրամ կաթ և մրցման է հրավիրում Աբրահամ Թումեյանին ու Անդրանիկ Գզրաբյանին:

Չորագյուղի պետական տնտեսությունը մրցման է հրավիրում Աստղածորի պետական տնտեսությանը:

Ստանձնած սոցպարտավորությունները ժամանակին և անթերի կատարելու նպատակով ազիտկոլեկտիվի նախագահ Գրիգոր Մովսիսյանը ինչպես ֆերմաներում, ծխախոտի սածիլանոցներում ու դաշտերում, այնպես էլ դաշտավարական բրիգադներում ազիտատորներ է ամրացնում՝ սոցմրցման առաջադրանքների մասին բանվորներին տեղյակ պահելու և դրանք իրականություն դարձնելու համար: Կովաբուծական ֆերմայում նշանակում է ազիտատորներ Շալիկո Խլղաթյանին և Հայրիկ Ղազարյանին, ոչխարաբուծական ֆերմայում՝ Մելիմբեկ Գևորգյանին և Արտավազ Գրիգորյանին, ծխախոտի սածիլանոցներում և դաշտերում՝ Վոլոդյա Խաչատրյանին, դաշտավարական I բրիգադում՝ Վոլոդյա Սահրադյանին, II բրիգադում՝ Սարգիս Ղազարյանին, III բրիգադում՝ Հայկ Գալստյանին, IV բրի-

գադում՝ Բեգե Դավթյանին, V բրիգադում՝ Ավետիք Սահակյանին, VI բրիգադում՝ Ավետիք Ղազարյանին, Կամսար Գասպարյանին:

1973 թ. ղեկավար կադրերը, հիմնականում մնում են նույնը: Միայն տնտեսագետի նոր օգնական է նշանակվում Ֆրունզիկ Եղիազարի Մանուկյանը, որն ուներ բարձրագույն կրթություն (նա ավարտել էր Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը): Ի դեմս նրա՝ բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների թիվը մեկ հոգով ավելանում է: Իսկ դա շատ կարևոր երևույթ էր տնտեսության ղեկավար կադրերի որակական թռիչքի գործում:

Պետական տնտեսությունում աշխատող երիտասարդներից լավագույններին, ովքեր մեծ կազմակերպվածություն են ցուցաբերում, տնտեսության դիրեկցիան և կուսկազմակերպությունը ընդունում են կուսակցության շարքեր: Այդպիսի երիտասարդներից են՝ Գագիկ Գառնիկի Մանուկյանը և Վեսմիր Պարսամի Ասատրյանը, որոնց ընդունում են կուսակցության շարքեր որպես թեկնածու:

Տնտեսական տարվա վերջում, ամփոփելով սոցպարտավորությունների կատարման արդյունքները, պարզվում է, որ նախորդ տարվա համեմատությամբ պետությանը վաճառվել է 700 ցեմտների դիմաց 1072 ց հացահատիկ, 1020 ցեմտների դիմաց՝ 1130 ցեմտներ ծխախոտ, 1800 ցեմտների դիմաց՝ 2800 ց կարտոֆիլ, 4000 տոննայի դիմաց՝ 4200 տոննա կաթ, 280 ցեմտների դիմաց՝ 580 ցեմտներ պտուղ: Կառուցվել են երկհարկանի զբասենյակ և 200 գլուխ տավարի համար անասնագոմ: Շուրջ 100 հա քարքարոտ դաշտ մեկիորացվել է և դարձել մեխանիզացիային հարմար դաշտ:

Ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները ցույց են տվել, որ տնտեսությունն աշխատել է ընդամենը 45000 ռուբլու վնասով: Հաշվետու ընտրական ժողովը բյուրոյի կազմում ընտրում է ինը հոգու՝ Ավետիք Խլղաթյանին, Ալբերտ Ասատրյանին, Կնյազ Գասպարյանին, Արտավազ Գրիգորյանին, Մելիմբեկ Գևորգյանին, Գառնիկ Արզումանյանին, Աղախան Զաքարյանին, Եղիազար Մանուկյանին, Վարազդատ Սահրադյանին, որոնցից 5–ը ունեին մասնագիտական կրթություն (մասնագիտական բարձրագույն կրթություն ուներ նրանցից միայն մեկը՝ Արտավազ Գրիգորյանը):

1974 թ. հունվարի 7–ին «Սովետական Հայաստան» թերթում լույս է տեսնում «Ստուգում ենք ստանձնած պարտավորությունները» վերնագրով հոդվածը, ուր քննադատվում են Չորագյուղի պետական տնտեսության կաֆի I բրիգադում, ինչպես նաև դաշտավարական N 3 և N 4 բրիգադներում տեղ գտած թերությունները:

Պետական տնտեսության դիրեկցիան,³ հաշվի առնելով այդ քննադատությունը, 1974 թ. ղեկավար կադրերը հաստատելիս աշխատում է թերթում քննադատվող բրիգադների բրիգադիոների փոխարեն նշանակել մասնագիտական կրթություն ունեցող երիտասարդների՝ 1) Վոլոդյա Բենիամինի Խա-

³ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 58, թերթ 1–45:

չատրյանին (դաշտավարական III բրիգադի բրիգադիր), 2) Սելիմբեկ Մանուկի Գևորգյանին (դաշտավարական IV բրիգադի բրիգադիր), 3) Վարազդատ Վանոյի Սահրադյանին (կաֆի I բրիգադիր): Նախորդ տարվա համեմատությամբ նոր ղեկավար կադրեր են հաստատվում մի քանի երիտասարդ մասնագետներ՝ 1) Նվեր Աբրահամի Սարոյանը (տեխնիկ-սերմնավորող), 2) Ասյա Բենիամինի Խաչատրյանը (կաֆի լաբորանտ), 3) Չավեն (Սեդրակ) Վանոյի Սաֆարյանը (էլեկտրիկ), 4) Ժորա Հայկի Գրիգորյանը (աշխատավարձի գծով տնտեսագետ, որն ուներ բարձրագույն կրթություն, ավարտել էր Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկայի ֆակուլտետի արտադրությունից կտրված բաժինը և ստացել ինժեներ մեխանիկի որակավորում): Նախկին կադրերից Կնյազ Սրապիտնի Գասպարյանը նշանակվում է այգու բրիգադիր, Արտեմ Պետրոսի Սկրտչյանը՝ արհեստանոցի վարիչ, Ուսուբեկ Մնացի Մողոյանը՝ վաֆի I բրիգադիր, Ռաֆիկ Հայկազի Մեդրյանը՝ վաֆի II բրիգադիր:

1974 թվականին պետական տնտեսությունը ստանձնում է հետևյալ սոցալարտավորությունները՝ 1) դաշտավարության գծով – 1020 ց ծխախոտի դիմաց արտադրել 1200 ց, 6500 ց կարտոֆիլի դիմաց՝ 6800 ց, 1670 տոննա խոտի դիմաց՝ 1720 տոննա, 30 տոննա պտղի դիմաց՝ 60 տոննա, 2) անասնապահության գծով – 4500 ց դիմաց արտադրել 5000 ցեմտներ կաթ, 100 մայր ոչխարից ստանալ 88 գառ, 100 կովից՝ 83 հորթ, մեկ ոչխարից՝ 2,2 կգ բուրդ (1,8 կգ-ի դիմաց), 90 ցեմտներ բրդի դիմաց՝ 110 ցեմտներ, 3) պետությունը վաճառքի գծով. – 900 ց հացահատիկի դիմաց պետությանը վաճառել 1500 ց, 1020 ց ծխախոտի դիմաց՝ 1200 ց, 1250 ց կարտոֆիլի դիմաց՝ 2500 ց, 90 ց բրդի դիմաց՝ 114 ց, 300 ց մրգի դիմաց՝ 600 ց, 3600 ց կաֆի դիմաց՝ 4400 ց:

Նախորդ տարիների նման սոցալարտավորություններ են ստանձնում նաև առանձին բրիգադները և առանձին անհատ աշխատողները: Այսպես, դաշտավարական II բրիգադը (բրիգադիր՝ Աղախան Չաքարյան) պարտավորվում է մեկ հեկտարից ստանալ 35 ցեմտներ ծխախոտ 22 ցեմտների դիմաց և մրցման է հրավիրում N 5 բրիգադին: Դաշտավարական N 6 բրիգադը (բրիգադիր՝ Ավետիք Սահակյան) պարտավորվում է մեկ հեկտարից ստանալ 160 ց կարտոֆիլ 130 ց դիմաց, 30 ց ծխախոտ՝ 22 ցեմտների դիմաց, կուտակել 300 տոննա խոտ 270 տոնայի դիմաց և մրցման է հրավիրում N 4 բրիգադին: Դաշտավարական N 5 բրիգադը (բրիգադիր՝ Գառնիկ Արզումանյան) խոստանում է կուտակել 350 տոննա խոտ 270 տոննայի դիմաց, ստանալ մեկ հեկտարից 250 ց ծխախոտ 180 ց դիմաց, 1300 ց կարտոֆիլ 1050 ց դիմաց և մրցման է հրավիրում N 1 բրիգադին: Հովիվ Ֆելեղով Խրչոյանը պարտավորվում է իր խնամած հոտի 100 մայր ոչխարից ստանալ 97 գառ, մեկ ոչխարից ստանալ 2,6 կգ բուրդ 1,8 կգ-ի դիմաց և մրցման է հրավիրում անվանի հովիվ Գորգին Ֆահրադյանին: Անվանի հովիվ Շմավոն Մուրադյանը պարտավորվում է 100 մայր ոչխարից ստանալ 95 գառ, մեկ ոչխարի բրդավորությունը հասցնել 2,5 կիլոգրամի և մրցման է հրավիրում հու-

վիվ Այվազ Մուրադյանին: Հովիվ Կամսար Ղազարյանը պարտավորվում է 100 մայր ոչխարից ստանալ 90 գառ, մեկ ոչխարի բրդավորությունը հասցնել 2,5 կիլոգրամի և մրցման է հրավիրում անվանի հովիվ Վաղինակ Վաղուշի Խղաթյանին: Անվանի կովիկթներ Սալո Աբրահամի Հակոբյանը, Հրանուշ Աբրահամյանը, Արևատ Ավետիսյանը պարտավորվում են ամեն մեկն իր խնամած 14 գլուխ կովից ստանալ և առողջ վիճակում պահել 15 հորթ, մեկ կովի միջին կաթնատվությունը հասցնել 1400 կիլոգրամի 1200 կիլոգրամի դիմաց և մրցման են հրավիրում համապատասխանաբար՝ Անահիտ Ֆահրադյանին, Թամարա Հարոյանին, Երջանիկ Ասոյանին: Նախրապաններ Սարիբեկ Վանուշի Սարգսյանը և Աշոտ Միսակի Սարգսյանը պարտավորվում են իրենց խնամած նախիրի 100 կովից ստանալ 88 հորթ, մեկ կովի կաթնատվությունը հասցնել 1300 կիլոգրամի 1200 կիլոգրամի դիմաց և մրցման են հրավիրում նախրապան Հովհաննես Սարգսյանին ու Հովհաննես Շամատրյանին: Շքանշանակիր տրակտորիստ Գրիշա Չավիբեկի Գրիգորյանը պարտավորվում է 800 հեկտարի փոխարեն վարել 1300 հեկտար վարելահող՝ խնայելով 200 կգ վառելանյութ և մրցման է հրավիրում Ռազմիկ Հակոբյանին: Չորագյուղի պետական տնտեսությունը 1974 թ. դարձյալ շարունակում է մրցման հրավիրել Ասողաձորի պետական տնտեսությանը իր ստանձնած սոցալարտավորությունների գծով:

Տարեվերջին ամփոփելով սոցալարտավորությունների արդյունքները պարզվում է, որ պետական տնտեսությունը կատարել ու գերակատարել է ծխախոտի, հացահատիկի, սիլոսի, սենածի, բրդի, պտղի պլանային առաջադրանքները, իսկ մյուս առաջադրանքները՝ կարտոֆիլի, խոտի, կաֆի, մսի, անասունների գլխաքանակի աճի գծով պլանները թերակատարել է: Զգալի չափով գերակատարվել են պետությանը վաճառքի գծով ստանձնած սոցալարտավորությունները:

1974 թ. օգոստոսի 8-ին Գագիկ Գառնիկի Մանուկյանը կուսբեկնածուից փոխադրվում է կուսանդամ:

1974 թ. սեպտեմբերին ցերեկային միջնակարգ դպրոցին կից գործող եկրրափոխային միջնակարգ դպրոցը, որը բացվել էր դեռևս 1961 թվականից, առանձնանում է և հանդես գալիս որպես ինքնուրույն գյուղերիտ միջնակարգ դպրոց: Դպրոցի դիրեկտոր է նշանակվում մաթեմատիկայի գծով բարձրագույն կրթություն ունեցող Գրիգոր Վասակի Մովսիսյանը:

Ցերեկային միջնակարգ դպրոցի նոր շենքը բավականին հեռու էր գտնվում գյուղի կենտրոնից և արևմտյան ծայրամասից: Դպրոցի հեռավորությունը և մանավանդ աշակերտների թվի գնալով ավելացող խիստ աճը պատճառ են դառնում գյուղի կենտրոնին մոտիկ տարածությունում նոր դպրոց բացելու համար: Հին դպրոցի շենքում 1974 թ. սեպտեմբերից բացվում է նոր 8-ամյա դպրոց: Դպրոցի դիրեկտոր է նշանակվում Վոլոդյա Լաբգաի Ղազարյանը, իսկ ուսմասավար՝ Խրիմիկ Պողոսի Խղաթյանը: Այդ ժամանակ դպրոցն ուներ 10 դասարան և 120 աշակերտ:

1974 թ. արտադրական կուսակցական կազմակերպության հաշվետու ընտրական ժողովը բյուրոյի կազմը ընտրում է 11 հոգուց, որոնցից 6-ը՝ Արտավազ Գրիգորյանը, Վաչիկ Կիրակոսյանը, Գագիկ Մանուկյանը, Գառնիկ Արզումանյանը, Վարազդատ Սահրադյանը, Ավետիք Սահակյանը ունենին մասնագիտական կրթություն: Փաստորեն մասնագիտական կրթություն ունեցողները կազմում էին բյուրոյականների 66 %-ը:

Պետական տնտեսության դիրեկցիան և կուսակցական կազմակերպությունը հաշվի առնելով, որ 1974 թ. տնտեսությունը չի կարողացել կատարել կարտաֆիլի, խոտի, կաթի, մսի, անասունների գլխաքանակի աճի ուղղությամբ ստանձնած պարտավորությունները, 1975 թվականի ղեկավար կադրերը վերանայելու և նշանակելու հարցում հանդես են բերում նոր մոտեցում: Գրանք բաժանում են երկու մասի՝ գլխավորների և երկրորդականների: Գլխավորների թիվը ընտրվում է 17: Նրանց նշանակման հարցում ուշադրությունը կենտրոնացնում են մասնագիտական կրթություն ունեցող կադրերի վրա:⁴ Վաֆի I բրիգադի է հաստատում Աշոտ Մովսիսյանին, Վաֆի II բրիգադի՝ Գագիկ Սարգսի Բաղդասարյանին, կաֆի I բրիգադի՝ Մուրտ Կիրակոսյանին, կաֆի II բրիգադի՝ Վարազդատ Վանոյի Սահրադյանին, գլխավոր ինժեներ մեխանիկ՝ Ժորա Հայկի Գրիգորյանին, գլխավոր հաշվապահ՝ Մու Սողոմյանին, իսկ նրա փոխարեն գլխավոր տնտեսագետ է հաստատվում նախկին հաշվապահ Կոյա Մնացականյանը: Մյուս կադրերը մնում են նույնը: Ընդ որում, դաշտավարական 1-6 բրիգադների բրիգադիներ են հաստատվում համապատասխանաբար՝ Պատվական Գալստյանը, Աղախան Չաքարյանը, Վոլոդյա Խաչատրյանը, Ուսուրեկ Սողոմյանը, Գառնիկ Արզումանյանը, Ավետիք Սահակյանը (Աղեկյանը): Տրակտորային բրիգադի բրիգադի է հաստատվում Խորեն Գրիգորյանը, ծխախոտի մասնագետ՝ Ազնիվ Գալստյանը, գլխավոր գյուղատնտես՝ Արտավազ Գրիգորյանը, գլխավոր անասնաբույժ՝ Շալիկո Խլղաթյանը, գլխավոր անասնաբույժ՝ Վաչիկ Կիրակոսյանը: Փաստորեն գլխավոր ղեկավար կադրերից 14-ը ունեն մասնագիտական կրթություն, որը կազմում էր շուրջ 84 %-ը: Մա ոչ մասնագիտական կադրերի նկատմամբ մասնագետ կադրերի առաջին և խոշոր հաղթանակն էր:

1975 թվականին պետական տնտեսությունը ստանձնում է հետևյալ սոցիալարտավորությունները՝ 1) դաշտավարության գծով – 5400 ցենտների դիմաց ստանալ 6000 ց հացահատիկ, 1080 ցենտների դիմաց՝ 1250 ց ծխախոտ, 5850 ց դիմաց՝ 6500 ց կարտոֆիլ, 300 ց դիմաց՝ 600 ց պտուղ, 1650 տոննա խոտի դիմաց՝ 1750 տոննա, 1500 տոննա սիլոսի դիմաց՝ 1600 տոննա, 200 տոննա սենաժի դիմաց՝ 400 տոննա, 2) անասնապահության գծով – 100 մայր ոչխարից ստանալ 88 գառ 85-ի դիմաց, 100 կովից՝ 85 հորթ 80-ի դիմաց, մեկ ոչխարից ստանալ 2,2 կգ բուրդ 1,8 կգ-ի դիմաց, մեկ կովի կաթնատվությունը հասցնել 1500 կգ-ի 1300 կգ-ի դիմաց, 90 ց բրդի դիմաց ստա-

⁴ ՀՀ ԷԷԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 60, թերթ 1-28:

նալ 100 ցենտներ, 3) պետությանը վաճառքի գծով – վաճառել 2000 ց հացահատիկ 1500 ց դիմաց, 1020 ց ծխախոտ՝ 1350 ց դիմաց, 1250 ց կարտոֆիլ՝ 2500 ց դիմաց, 114 ց բուրդ՝ 90 ց դիմաց, 300 ց միրգ՝ 600 ց դիմաց, 3600 ց կաթ՝ 4400 ց դիմաց:

Սոցիալարտավորություններ են ստանձնում նաև առանձին բրիգադները և առանձին բանվորները: Այսպես, դաշտավարական N 2 բրիգադը (բրիգադի՝ Աղախան Չաքարյան) պարտավորվում է 180 ցենտների դիմաց ստանալ 230 ցենտներ ծխախոտ և մրցման է հրավիրում N 4 բրիգադին: Դաշտավարական V բրիգադը (բրիգադի՝ Գառնիկ Արզումանյան) պարտավորվում է կարտոֆիլի մեկ հեկտարի բերքատվությունը հասցնել 180-200 ց և մրցման է հրավիրում N 6 բրիգադին:

Անվանի հովիվներ Ֆելեղով Խրչոյանը և Շմավոն Մուրադյանը պարտավորվում են իրենց առանձին-առանձին հանձնված 360 մայր ոչխարից ստանալ 240 գառ, մեկ ոչխարի բրդատվությունը հասցնել 2,6 կիլոգրամի և մրցել իրար հետ:

Անվանի կովկիթներ Սալո Հակոբյանը, Բեգար Ղազարյանը, Ժենիկ Սաֆարյանը, Թամարա Հարոյանը, Երուն Սարգսյանը պարտավորվում են մեկ կովից ստանալ 1500 կգ կաթ 1300 կգ-ի դիմաց, իրենց առանձին-առանձին խնամած 14 կովից ստանալ 15 հորթ և մրցել իրար հետ: Անվանի նախարայան Հովհաննես Սարգսյանը պատրաստվում է իրեն խնամած կովերից 760 ց կաթի դիմաց ստանալ 800 ցենտներ և մրցման է հրավիրում իր ընկեր Աշոտ Սիսակի Սարգսյանին: Անվանի տրակտորիստ Գրիշա Գրիգորյանը պարտավորվում է 840 հեկտարի դիմաց վարել 1500 հեկտար՝ տնտեսելով 3000 կգ վառելանյութ և մրցման է հրավիրում իր ընկեր Ռազմիկ Հակոբյանին: Պետական տնտեսության դիրեկցիան, կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները պարտավորվում են տնտեսական տարին փակել 50.000 ռուբլի օգուտով:

1975 թ. ապրիլի 10-ին Մարտունու կուսըջկոմի պլենումը վերլուծում է շրջանի պետական տնտեսությունների աշխատանքները, բացահայտում նրանցում տեղ գտած սխալներն ու թերությունները: Բնադատական խոսք է ասվում նաև Չորագյուղի պետական տնտեսության հասցեին: Ընդգծվում է, որ Չորագյուղի պետական տնտեսությունը վերջին երկու տարիների ընթացքում կրել է 99.000 ռուբլու վնաս:

Իհարկե, դա այնքան էլ շատ չէ, եթե նկատի ունենանք, որ պետությունը յուրաքանչյուր մի տարվա համար նախատեսել էր մինչև 30.000 ռուբլու հնարավոր վնաս: Փաստորեն ամեն մի տարում նորմայից ավել 15000 ռ. վնաս է եղել: Պլենումը հաշվի չառավ, որ պետական տնտեսությունը Չորագյուղում նոր է ստեղծվել և անփորձության պատճառով վնասներ կարող են լինել:

1975 թվականի հունիսի 13-ին Ալբերտ Ասատրյանը ազատվում է Չորագյուղի պետական տնտեսության դիրեկտորի աշխատանքից: Նրա փո-

խարեն նշանակվում է Սուրեն Մնացականի Եփրեմյանը (Լիճքից), որն ունի բարձրագույն կրթություն (նա ավարտել էր Երևանի պետական մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետի արտադրությունից կտրված բաժինը և ստացել մաթեմատիկայի ուսուցչի որակավորում): Այդ ժամանակ աշխատանքից ազատվում է նաև կուսկազմակերպության քարտուղար Ավետիք Մնացի Խլղաթյանը: Նրան ժամանակավորապես (մինչև նոր ընտրությունները) փոխարինում է կուսկազմակերպության II քարտուղար Գագիկ Գառնիկի Մանուկյանը: Աշխատանքից ազատվում է նախկին գլխավոր հաշվապահ Կոյա Մնացականյանը, որն այդ ժամանակ աշխատում էր գլխավոր տնտեսագետ: Կուսակցական տույժ է կրում կերերի պահեստապետ Հայկարամ Վասիլի Գևորգյանը:

Սուրեն Եփրեմյանն իր աշխատանքները սկսում է Չորագյուղի պետական տնտեսությունում գոյություն ունեցող սխալների ու թերությունների շտկումից, որ տեղ են գտել Մարտունու կուսըջկոմի հունիսի 13-ի բյուրոյի նիստի արձանագրությունում: Այդ նպատակով Չորագյուղի արտադրական կուսկազմակերպության հենց հունիսի 13-ի ընդհանուր ժողովում քննարկման է դնում ինչպես բերքահավաքի նախապատրաստման, այնպես էլ տնտեսական տարվա I կիսամյակի անասնապահական մթերքների արտադրության ընթացքը: Նա լսում է այդ հարցերի հետ կապված պետական տնտեսության ղեկավար կադրերի զեկուցումներն՝ իրենց ստանձնած սոցալարտավորությունների շուրջ: Ժողովում ելույթ են ունենում գլխավոր անասնաբույժ Շալիկո Խլղաթյանը, գլխավոր անասնաբույժ Վաչիկ Կիրակոսյանը, վաֆի I բրիգադի Աշոտ Մովսիսյանը, վաֆի II բրիգադի Գագիկ Բաղդասարյանը, կաֆի I բրիգադի Մոլոտ Կիրակոսյանը, կաֆի II բրիգադի Վարազդատ Սահրադյանը, գլխավոր գյուղատնտես Արտավազ Գրիգորյանը, գլխավոր ինժեներ մեխանիկ Ժորա Գրիգորյանը, երկրորդ գյուղատնտես Գագիկ Մանուկյանը, ավտոպարկի վարիչ Վրեժ Չաքարյանը, դաշտավարական 1-6 բրիգադների բրիգադիրներ 1) Պատվական Գալստյանը, 2) Աղախան Չաքարյանը, 3) Վոլոդյա Խաչատրյանը, 4) Ուսուրեկ Սողոմյանը, 5) Գառնիկ Արզումանյանը, 6) Ավետիք Սահակյանը:

Սուրեն Եփրեմյանն իր ուշադրությունից բաց չի թողնում երիտասարդությանը: Նա մտածում է նրանցից լավերին, ովքեր աշխատում են տնտեսությունում, արժանացնել խրախուսանքի ու պարգևատրումների, իսկ կազմակերպվածներին ընդունել կուսակցության շարքերը: Հենց առաջին ժողովում կուսակցության շարքեր է ընդունվում երիտասարդ տնտեսագետ Ֆրունզիկ Եղիազարի Մանուկյանը որպես թեկնածու:

Հուլիսի 5-ի ընդհանուր ժողովում քննվում է ոչ միայն տնտեսական տարվա I կիսամյակի անասնապահական մթերքների արտադրության, այլև պետությանը նրանց վաճառքի հարցը: Կոմերիտականների ուժը օգտագործելու նպատակով, ժողովը լսում է Չորագյուղի արտադրական ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար Ուսուրեկ Լևոնի Ավոյանի զեկուցումը, որը

պարտավորվում է կոմերիտականներին նպատակաձեռն այնպես, որ նրանք դառնան պետական տնտեսության աշխատանքների ակտիվ մասնակիցներ և սոցմրցման հաղթողներ, ինչպես եղել են նախորդ տարիներին:

1975 թվականի օգոստոսի վերջին միջնակարգ դպրոցի դիրեկտոր Խաչիկ Սիրականի Մնացականյանը ազատվում է աշխատանքից: Նրա փոխարեն նշանակվում է Ալբերտ Պարսամի Ասատրյանը: Դպրոցի ուսմասվար է հաստատվում Վոլոդյա Գրիգորի Մարգարյանը:

Առաջնություն տալով մասնագիտական կրթություն ունեցող կադրերին՝ արտադրական կուսակցական կազմակերպության 1975 թվականի հաշվետու ընտրական ժողովը բյուրոյի 9 անդամներից 5-ին ընտրում է մասնագիտական կրթություն ունեցող կադրերից: Դրանք էին՝ Արտավազ Գրիգորյանը, Աշոտ Մովսիսյանը, Գառնիկ Արզումանյանը, Վարազդատ Սահրադյանը, Գագիկ Մանուկյանը: Դրանց թիվը, փաստորեն, կազմում է բյուրոյի անդամների թվի շուրջ 60 %-ը: Նրանցից մասնագիտական բարձրագույն կրթություն ունեցող Գագիկ Մանուկյանը ընտրվում է կուսկազմակերպության քարտուղար: Սա արդեն նոր երևույթ էր Չորագյուղի թե կոլեկտիվ տնտեսության և թե պետական տնտեսության կուսկազմակերպության քարտուղարների մեջ: Ուշագրավ է նաև այն, որ նորընտիր բյուրոյի կազմում տեղ է գրավել գյուղի հարվածային աշխատող աղջիկներից մեկը՝ անվանի ծխախոտագործուհի Շողիկ Յուլիի Գալստյանը:

Ի դեպ, բոլոր ժամանակներում էլ Չորագյուղում կանայք, աղջիկները ընտրվել են բյուրոյի կազմում: Դրանցից են Մագբադ Ղազարյանը, Հռիփսիկ Մաֆարյանը, Շողիկ Գալստյանը և ուրիշներ: Սակայն դրանցից միայն մեկին, այն է՝ Մագբադ Ղազարյանին է հաջողվել տեղ գրավել տնտեսության ղեկավար աշխատողների շարքում (նա աշխատել է ճանբրիգադի), իսկ մյուսներն այդ տեսակետից աչքաթող են արվել:

Չորագյուղի պետական տնտեսության լավագույն երիտասարդ աշխատողներից մեխանիկատոր Սերյոժա Ազնիվի Շամասուրյանը ղեկտնեմերի 9-ին կուսթեկնածուից փոխադրվում է կուսանդամ:

1976 թվականը Չորագյուղի պետական տնտեսությունն սկսում է 1975 թվականի սոցալարտավորությունների արդյունքների և 1976 թվականի սոցալարտավորությունների ընդունման քննարկումով:⁵ Ելույթ են ունենում դաշտավարական բրիգադների բրիգադիրները և ճյուղի վարիչները, որոնք զեկուցում են նախորդ տարում իրենց ստանձնած սոցալարտավորությունների կատարման և նոր տնտեսական տարում իրենց վերցրած սոցալարտավորությունների վերաբերյալ: Ժողովն արձանագրում է, որ 1975 թվականին պետական տնտեսությունը հացահատիկի արտադրության պլանը կատարել է 101 %-ով, կարտոֆիլինը՝ 128 %-ով (պետությանը հանձնելով 6165 ցենտներ կարտոֆիլի), ծխախոտինը՝ 140 %-ով, բրդինը՝ 127 %-ով, կուտակել է 1889 տոննա խոտ, 904 տոննա սենամ, 1500 տոննա սիլոս, մեծ քանակությամբ

⁵ ՀՀ ՀՔԿՊ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 61, թերթ 1-41:

յամբ հատիկա-ֆուրաժ: Ժողովը միաժամանակ արձանագրում է, որ անասնապահության բնագավառում դեռ կան թերություններ, չօգտագործված ու գերակներ: Ֆերմաներում լավ չի կազմակերպված սոցմրցումը: 1976 թվականի համար պետական տնտեսությունը պարտավորվում է կատարել հետևյալ պետականները՝ 1 հեկտարից ստանալ հացահատիկ 20 g, կարտոֆիլ՝ 250 g, ծխախոտ՝ 38 g, բանջարեղեն՝ 300 g, պտղի պլանը ավելացնել 30 %-ով, կուտակել 1900 տոննա խոտ, 1000 տոննա սենաժ, 1500 տոննա սիլոս, 1 կովի կարճատևությունը հասցնել 1500 կգ-ի, պետությանը վաճառել 1200 g միս, 1 ոչխարի բրդատվությունը հասցնել 2 կիլոգրամի:

Ապրիլի 12-ին մասնագիտական բարձրագույն կրթություն ունեցող ինժեներ մեխանիկ Ժորա Հայկի Գրիգորյանը, պետական տնտեսության հարվածային օդակավար, ԼԿԵՄ կազմակերպության անդամ Աղախան Մարիբեկի Ավետիսյանը ընդունվում են կուսակցության շարքեր որպես թեկնածու:

Բարձրագույն կրթություն ունեցող Հայկազ Աղեկի Աղեկյանը, որը պետական տնտեսությունում աշխատում էր անասնաբույժ, օգոստոսի 10-ի ընդհանուր ժողովին զեկուցում է անասնապահական մթերքների արտադրության I կիսամյակի արդյունքների մասին: Նա հիմնավորում է, որ ստանձնած պարտավորություններն ավելի բարձր տոկոս կկազմեն, եթե բարելավվի անասունների ցեղային կազմը:

Պետական տնտեսության դիրեկցիան և կուսկազմակերպությունը ուշադրություն են դարձնում նաև քաղուստցման գործի վրա, որը կարող է բարձրացնել ոչ միայն աշխատավորների քաղաքական գիտելիքները, այլև այդ ճանապարհով խթանել նրանց աշխատանքային գործունեության և կազմակերպչական ունակությունների բացահայտմանը: Այդ մասին հոկտեմբերի 4-ի ընդհանուր ժողովին զեկուցում է կուսկազմակերպության երիտասարդ քարտուղար Գագիկ Մանուկյանը: Նա պահանջում է ազիտկուլեկտիվի նախագահ Գրիգոր Մովսիսյանից, որ պետք է այսուհետև մեծ բավ հաղորդել քաղմթերքների գործունեությանը:

1977 թվականի հունվարի 9-ին քննարկվում է 1976 թ. սոցպարտավորությունների արդյունքների ամփոփման և 1977 թ. սոցպարտավորությունների ընդունման հարցը:⁶ Պարզվում է, որ 1976 թ. հացահատիկի պլանը կատարվել է 100 %-ով, կարտոֆիլինը՝ 111 %-ով, ծխախոտինը՝ 100 %-ով, բանջարեղենինը՝ 105 %-ով, պտղինը՝ 120 %-ով, կուտակվել է 1950 տոննա խոտ, 1110 տոննա սենաժ, 1550 տոննա սիլոս, մեկ կովի կաթնատվությունը հասել է 1520 կիլոգրամի, պետությանը վաճառվել է 1260 g միս, մեկ ոչխարի բրդատվությունը հասել է 2,2 կիլոգրամի:

Պետական տնտեսությունը 1977 թ. համար ստանձնում է հետևյալ սոցպարտավորությունները: Մեկ հեկտարից ստանալ 20 g հացահատիկ, 250 g կարտոֆիլ, 35 g ծխախոտ, կուտակել 2200 տ խոտ, 2400 տ սիլոս ու սենաժ, մեկ ֆուրաժային կովի կաթնատվությունը հասցնել 1700 կիլոգրամի, մեկ ոչ-

⁶ ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 62, թերթ 1-31:

խարի բրդատվությունը՝ 1,9 կիլոգրամի, մսի արտադրության պլանը կատարել 115 %-ով, 100 %-ով կատարել անասունների սերնդատվության պլանը:

1977 թվականի ընթացքում կուսակցության շարքեր են ընդունվում Ուսուրեկ Մնացի Մողոյանը, Համբարձում (Մովես) Յուլակի Գրիգորյանը, Ժորա Հայկի Գրիգորյանը, Փրիգատ Խաչիկի Մանուկյանը, Ներսիկ Արսենի Մահակյանը: Կուսակցական կազմակերպության հաշվետու ընտրական ժողովը, որին մասնակցում էին կուսկազմակերպության բոլոր 58 անդամ-թեկնածուները, բյուրոյի կազմը ընտրում է 9 հոգուց: Նոր բյուրոյական է դառնում Հայկարամ Վասիլի Գևորգյանը: Բյուրոյի կազմում շարունակում է մնալ Գոնարա Մակեդոնի Պետրոսյանը: Այս անգամ մասնագիտական կրթություն ունեցողներից 3-ը, համուն նրա, որպեսզի երիտասարդներ ընտրվեն բյուրոյի կազմում, իրենց տեղը զիջում են մասնագիտական կրթություն չունեցողներին: Այս տեսակետից, փաստորեն, բյուրոն նահանջ է ապրում, բայց քանի որ երիտասարդներ են ընտրվել բյուրոյի կազմում, այդ նահանջը նահանջ չէ, այլ հաղթանակ է տարեց և ոչ մասնագետ կոմունիստների նկատմամբ, որոնք միշտ տեղ էին գրավում բյուրոյի կազմում:

1977 թվականին Ալբերտ Պարսամի Ասատրյանը ազատվում է ցերեկային միջնակարգ դպրոցի դիրեկտորի աշխատանքից: Նրա փոխարեն նշանակվում է Գրիգոր Վասակի Մովսիսյանը, որը ազատվել էր գյուղերիտ միջնակարգ դպրոցի դիրեկտորի աշխատանքից: Գայրոցի I ուսմասվար է հաստատվում Վոլոդյա Գրիգորի Սարգսյանը, II ուսմասվար՝ բարձրագույն կրթություն ունեցող Նորայր Խաչիկի Մնացականյանը (նա ավարտել էր Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը), իսկ կազմակերպական հարցերի գծով դպրոցի դիրեկտորի տեղակալ է հաստատվում բարձրագույն կրթություն ունեցող Նորայր Ալբերտի Ասատրյանը (նա ավարտել էր Երևանի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետի արտադրությունից կտրված բաժինը):

1977 թվականին Գրիգոր Վասակի Մովսիսյանի փոխարեն գյուղերիտ միջնակարգ դպրոցի դիրեկտոր է նշանակվում բարձրագույն կրթություն ունեցող Հայկ Մնացականի Զալոյանը (նա ավարտել էր Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետը):

1978 թվականը Չորագյուղի աշխատավորությունը դիմավորում է մեծ խանդավառությամբ, քանի որ 1974 թ. պլանները կատարել էր պատվով: Այսպես, հացահատիկի համախառն արտադրանքը կատարել էր 108 %-ով, կարտոֆիլինը՝ 182 %-ով, ծխախոտինը՝ 111 %-ով, կերերինը՝ 130 %-ով, գերակատարել էր պտղի և բանջարեղենի արտադրության պլանը, պլանավորված 5500 g կաթի դիմաց արտադրել էր 6922 g (կամ պլանային առաջադրանքը կատարել էր 125 %-ով), պլանավորված 1579 g մսի դիմաց արտադրել էր 1625 g, 102 g բրդի դիմաց՝ 114 g., գերակատարել էր անասունների սերնդատվության առաջադրանքը:

1978 թվականի համար պետական տնտեսությունը ստանձնում է հետևյալ սոցալարտավորությունները՝ յուրաքանչյուր միջին մեկ հեկտարին ստանալ 20 ցենտներ հացահատիկ, 250 ց կարտոֆիլ, 32 ց ծխախոտ, կուտակել 2100 տոննա խոտ, 4000 տոննա սիլոս ու սենած, մեկ ֆորաժային կովի կաթնատվությունը հասցնել 2000 կիլոգրամի, մեկ ոչխարի բրդատվությունը՝ 2,2 կիլոգրամի, մսի արտադրության պլանը կատարել 100 %-ով 100 %-ով կատարել պետության վաճառքի պլանային առաջադրանքները:

1978 թվականի ընթացքում կուսակցության շարքեր են ընդունվում Յուրիկ Վարազդատի Ասոյանը, Խաչիկ Գարսևանի Բաղդասարյանը, Արմանուշ Կարապետի Խլոթայանը որպես կուսբեկնաժուներ, իսկ Հայկազ Աղեկի Աղեկյանը, Համբարձում (Սովետ) Յուրիկի Գրիգորյանը, Ուսուրեկ Մնացի Սողոյանը, Օգսեն Գառնիկի Սարոյանը (նա ուներ բարձրագույն կրթություն), Ներսիկ Արսենի Սահակյանը (նա նույնպես ուներ բարձրագույն կրթություն) կուսբեկնաժուից փոխադրվում են կուսանդամ:

Ժողովրդական վերահսկողության խմբի ստուգումները պարզել են, որ պետական տնտեսության դիրեկցիան և կուսկազմակերպությունը Սուրեն Եփրեմյանի աշխատած ժամանակաշրջանում բույլ են տվել բացթողումներ և անօրինականություններ: Վերջիններիս թվին են պատկանում 13,5 տոննա համակցված կերի պակասորդը պահեստում: Բացթողումներ ու անօրինականություններ են կատարվել ստանձնած սոցալարտավորությունների կատարման գործում, հատկապես անասունների մեծ չափերի հասնող հարկադիր մորթի և անհարկի դուրս գրումների հետ կապված: Պետական տնտեսության դիրեկցիան անուշադրության է մատնել Չորագյուղի կուլտուր-կենցաղային վիճակը: Շուրջ 4 տարի չի գործել բաղնիքը, երկար ժամանակ չեն գործել և փակ վիճակում են մնացել ակումբն ու գրադարանը, էլեկտրահանգույցը լավ չի մատակարարել էլեկտրաէներգիա, գրեթե չեն գործել ռադիոն ու հեռախոսը: Ինչպես «Սովետական Հայաստան» օրաթերթում 1978 թ. մայիսի 18-ին հրատարակված «Ինչո՞ւ են դժգոհում սպասարկման ոլորտից», այնպես էլ Մարտունու շրջանային «Թռիչք» թերթում 1978 թվականին հրատարակված «Շունչ տվող չկա» և «Ե՞րբ կբացվի կողպեքը» վերնագրերով քննադատական հոդվածները անդրադառնում են վերոհիշյալ հարցերին: Բայց պետական տնտեսության դիրեկցիան քար անտարբերություն է հանդես բերում դրանց նկատմամբ:

Այդ ստուգումների հիման վրա Մարտունու կուսշրջկոմը 1978 թվականի սեպտեմբերի 30-ին պետական տնտեսության դիրեկտոր Սուրեն Եփրեմյանին ազատում է աշխատանքից, իսկ նրա փոխարեն նշանակում երիտասարդ կուսակցական Մերուժան Հայկի Գալստյանին, որն ուներ մասնագիտական բարձրագույն կրթություն (նա ավարտել էր Երևանի պետական գյուղատնտեսական ինստիտուտի ագրոնոմիական ֆակուլտետի արտադրությունից կտրված բաժինը): Սա առաջին ու սպասելի երևույթն էր, որ Չո-

րագյուղի տնտեսությունն ունեցավ մասնագիտական բարձրագույն կրթությամբ դիրեկտոր:

1978 թվականի արտադրական կուսկազմակերպության հաշվետու ընտրական ժողովը բյուրոյի կազմը ընտրում է 9 հոգուց, որոնցից ընդամենը մեկը՝ Փրիզատ Խաչիկի Մանուկյանը, չուներ մասնագիտական կրթություն, իսկ մնացած 8-ը ոչ միայն ունեին մասնագիտական կրթություն, այլև նրանցից 5-ը (Մերուժան Գալստյան, Գագիկ Մանուկյան, Արտավազ Գրիգորյան, Օգսեն Մարոյան, Ժորա Գրիգորյան) ունեին բարձրագույն կրթություն, որը կազմում էր ամբողջ բյուրոյականների շուրջ 60 %-ը: Բյուրոյի այս կազմը փաստորեն մասնագիտական բարձրագույն կրթություն ունեցողների առաջին հաղթանակն էր միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների նկատմամբ: Դա նախ և առաջ պայմանավորված էր խորհտնտեսության կամ պետական տնտեսության նոր դիրեկտորի մասնագիտական բարձրագույն կրթությամբ:

1978 թվականի նոյեմբերը Չորագյուղի կյանքում ունեցավ հեղաշրջող նշանակություն: Վաղնջական ժամանակներից սկսած աշխատատեղ ձորագյուղցիներ, որ մինչև այդ զբաղվում էր հողագործությամբ և անասնապահությամբ, 1978 թվականի նոյեմբերից իր գյուղում ունեցավ գործարանի մասնաճյուղ կամ արտադրամաս և սկսեց հողագործությանն ու անասնապահությանը զուգահեռ զբաղվել նաև արդյունաբերությամբ: Իհարկե, մինչև հարազատ գյուղում գործարանի մասնաճյուղ բացելը ձորագյուղցի բազմաթիվ տղամարդիկ, կանայք ու աղջիկներ գյուղում աշխատանք չունենալու, ինչպես նաև տնտեսական կարիքները հոգալու պատճառով աշխատանքի ինչ մեկնել Կամո (այժմ՝ Գավառ) քաղաքում բացված «Դիպոլ» կամ «Իվա» կոչվող գործարան, որը հիմնականում արտադրում էր էլեկտրոնային սարքեր, մասնավորապես էլեկտրակուտակիչներ (կոնդենսատորներ): Սակայն, գործարանի դիրեկցիան, հաշվի առնելով ձորագյուղցիների թե՛ աշխատասիրությունն ու մեծ ընդունակությունը և թե՛ որակյալ արտադրանք տալը, ինչպես նաև զնալով աճող նրանց մեծ հոսքը երկիրը (ցերեկային հեթք, երևկոյան հեթք) աշխատող գործարան, որը տեղափոխող ավտոբուսների հետ կապված դժվարություններ էր առաջ բերել, որոշում է գործարանի մասնաճյուղ բացել հենց Չորագյուղում: Այդ որոշումը խիստ հավանության է արժանանում ձորագյուղցիների կողմից: Նրանք էլ հաշվի առնելով, որ իրենց գյուղի երկհարկանի, ընդարձակ, սրբատաշ բազալտ քարից շարված տաք շենքը, որ իրենց հայրերի քրտնաջան աշխատանքի եկամտով էր կառուցվել դեռևս 1948 թվականի ծանր օրերին, ամիսներ շարունակ փակված վիճակում է մնում և կարգին չի ծառայում բնակչության կուլտուրական կյանքին, իրենց ձեռքով ակումբ-գրադարանի գույքը տեղափոխում են մի ուրիշ տեղ, իսկ ակումբ-գրադարանի շենքում տեղադրում Կամոյի գործարանի բաց թողած կոնդենսատորային հաստոցներն ու սարքավորումները:

Արտադրամասը ռադիոտեխնիկայի բնագավառի համար հիմնականում պիտի պատրաստեր KSO-16 չափսի էլեկտրակուտակիչներ (կոնդենսատորներ) հետևյալ պարամետրերով՝ 16x10, 16x204, 16x304, 16x504, 6,3x50, 6,3x100:

Էլեկտրակուտակիչ (կոնդենսատոր) պատրաստելու համար կարևոր կիսաֆաբրիկատներ են՝ նրբաթիթեղ A և K, արտանցք A և K կմախքը, միջանկյալ թուղթը, ռետին-կափարիչը, լցաշաղախը, հեքսամեթիլենը, էլեկտրալուծույթը, լաքը և այլն: Մինչև պատրաստի էլեկտրակուտակիչ (կոնդենսատոր) ստանալը անհրաժեշտ էր կատարել հետևյալ 12 գործողությունները՝ 1) նրբաթիթեղի կտրատում հաստոցով ըստ չափսերի, 2) փաթաթում և կմախքի մեջ տեղադրում ավտոմատ հաստոցով կամ ձեռքի աշխատանքի և հաստոցի միջոցով, 3) տվյալ կիսավարտ էլեկտրակուտակիչը (կոնդենսատորը), որը կոչվում է բաժանմունք (սեկցիա), տեղադրել էլեկտրալուծույթի տաշտակում, որտեղ տեղի է ունենում էլեկտրալուծույթի տարրալուծման երևույթ, 4) բաժանմունքի (սեկցիայի) չորացում ցենտրիֆուգայի միջոցով, 5) ռետին-կափարիչի հավաքում, 6) էլեկտրամարզեցում ցուցափեղկերի վրա տարբեր վոլտերի տակ, 7) լցաշաղախի լցում, 8) ջերմաէլեկտրամարզեցում հատուկ ջերմապահարաններում տարբեր սառիճանի ջերմության տակ, 9) էլեկտրակուտակիչի պարամետրերի ստուգում և առանձնացում հատուկ ստուգիչ սարքերի միջոցով, 10) համարակալում հատուկ հաստոցներով, 11) լաքապատում, 12) փաթեթավորում և հատուկ տուփերի մեջ դասավորում: Փաստորեն այս ամբողջ 12 գործողությունները կատարվում են ձեռքի աշխատանքով:

Կամոյի գործարանում աշխատելու ժամանակ ձորագյուղցի թե՛ բանվորները և թե՛ վարպետները տիրապետել էին էլեկտրակուտակիչ (կոնդենսատոր) հավաքելու վերոհիշյալ գաղտնիքներին:

Մասնաճյուղը բացելուց առաջ նաև հայտարարություն է արվել լրացուցիչ մասնագետներ և բանվորներ ընդունելու վերաբերյալ: Նոր մասնագետներ և նոր բանվորներ ընդունելուց հետո տեղի է ունենում կադրերի հաստատում: 1) Արտադրամասի կամ մասնաճյուղի պետ է նշանակվում միջնակարգ դպրոցի աշխատանքի ուսուցիչ, բարձրագույն կրթություն ունեցող Ավետիք Եղիշի Սահակյանը, 2) բարձրագույն կրթությամբ ինժեներ-տեխնոլոգ է նշանակվում Հենրիկ Ռուշանի Մանուկյանը, 3) բարձրագույն կրթությամբ նորմավորող-տնտեսագետ է նշանակվում Միրան Միրականի Մանուկյանը, 4) գլխավոր հսկիչ է նշանակվում Ռուսթել Լևանի Ավոյանը, 5) հեքսաֆոսֆի պետեր և վարպետներ են նշանակվում՝ Հայկ Յուրակի Գալստյանը (նա ուներ բարձրագույն կրթություն), Հայկարյան Վասիլի Գևորգյանը, Վոլոդյա Ազնիվի Սահակյանը, Աշոտ Բեգեի Պողոսյանը, Համլետ Նիկոլայի Մարգարյանը (նա նույնպես ուներ բարձրագույն կրթություն), Ֆելիքս Բախտիթեկի Հարությունյանը, Դերենիկ Մակեդոնի Պետրոսյանը, Նվեր Հայկազի Մաֆարյանը, Գուրգեն Կամսարի Հակոբյանը (նա ևս ուներ

բարձրագույն կրթություն), 6) գլխավոր էլեկտրիկ է նշանակվում Սերուժան Կստանիկի Խղաթյանը, 7) ամբողջ սարքավորումների տեխնոլոգ և միաժամանակ արհկոմի նախագահ է նշանակվում Ֆուրման Վարազդատի Հակոբյանը, 8) բրիգադիրներ են նշանակվում Դոնարա Մակեդոնի Պետրոսյանը (նա միաժամանակ արտադրամասի կուսկազմակերպության քարտուղարն էր), Գևորգ Աբրահամի Սարգսյանը, Ռիմա Հայկազի Մաֆարյանը, Լեյլի Եղիազարի Հակոբյանը: Արտադրամասում արտադրանքի որակը բարձրացնելու նպատակով նշանակվում են նաև հսկիչներ:

Ժամանակի ընթացքում փոխվում է արտադրամասի ղեկավար աշխատողների կազմը: Արտադրամասը ընդլայնելու, կադրերը ճիշտ ընտրելու, արտադրամասում անհրաժեշտ կարգ ու կանոն հաստատելու գործում մեծ քանակությամբ գործադրած Ավետիք Եղիշի Սահակյանի փոխարեն արտադրամասի պետ է նշանակվում Հենրիկ Ռուշանի Մանուկյանը, հետո նրան փոխարինում է բարձրագույն կրթություն ունեցող Ավագ Բեգեի Մաֆարյանը, տեխնոլոգ է նշանակվում Արարատ Արտավազի Գևորգյանը, ավագ հսկիչ՝ Ռուզաննա Ժամհարյանը, էլեկտրիկ պրիբորիստ է նշանակվում Ժորա Հովհաննեսի Քոչարյանը, փակահագործներ են նշանակվում Աղվան Կարապետի Կարապետյանը, Յուրդաբեկ Սուրենի Հակոբյանը, Արարատ Մնացի Շատոյանը, Ջանիթեկ Պարսամի Ասատրյանը, Մուրտ Սիրականի Մանուկյանը, Ավետիք Ժորայի Ավետիսյանը:

Այնքեր և, որ արտադրամասում աշխատում էին շուրջ 7 հոգի բարձրագույն կրթություն ունեցողներ: Իսկ դա զգալի թիվ էր մի արտադրամասի համար: Անշուշտ դրանով էր պայմանավորված արտադրամասի արտադրանքի որակական ու քանակական թռիչքները:

Էլեկտրաէներգիայի խափանման դեպքում արտադրամասն իր ունեցած դիզելային շարժիչի միջոցով ստացել է այնքան էներգիա, որը բավարարել է ամբողջ աշխատանքի պահանջները: Արտադրամասի դիզելավարն է նշանակվել Գագիկ Հեքիմի Պողոսյանը:

Արտադրամասը աշխատել է հիմնականում երկու հեքսաֆոսֆատով՝ «Ա» և «Բ»: «Ա» հեքսաֆոսֆի աշխատանքները սկսվել են առավոտյան ժամը 8-ին և ավարտվել 16³⁰-ին, իսկ «Բ» հեքսաֆոսֆինը սկսվել են երեկոյան ժամը 17-ին և ավարտվել գիշերվա ժամը 1³⁰-ին: Ամեն մի հեքսաֆոսֆատ ունեցել է իր կեսժամյա ընդմիջումը՝ աշխատողների ճաշի կամ հանգստի համար:

Արտադրամասի ընդլայնվելու հետ միասին աճում է բանվորների քանակը, որը հասնում է շուրջ 400 հոգու: Ուշագրավ է, որ Չորագյուղի արտադրամասում աշխատելու են եկել հարևան գյուղերից:

1978 թվականին Չորագյուղի ԳՄԳԿ-ի նախագահ Դերենիկ Հայկի Գալստյանը ազատվում է աշխատանքից և նշանակվում 8-ամյա դպրոցի դիրեկտոր: Նրա փոխարեն ԳՄԳԿ-ի նախագահ է նշանակվում Վոլոդյա Մարգարի Դազարյանը, որը մինչ այդ աշխատում էր 8-ամյա դպրոցի դիրեկտոր:

Գիրեկտորի պաշտոնին անցնելուց հետո Մերուժան Հայկի Գալստյանն իր աշխատանքները սկսում է պետական տնտեսությունում տեղ գտած բացթողումների ու սխալների շտկումից: Նա անմիջապես գործի է դնում գյուղի բաղնիքը: Գիմնում է ինչպես Մարտունու շրջանի ղեկավարությանը, այնպես էլ հանրապետության կառավարությանը՝ Ձորագյուղում կառուցել հեռուստացույցի հաղորդումներն ընդունող կայանի, էլեկտրոցանցի, հեռախոսահանգույցի, ռադիոհանգույցի, գյուղական խորհրդի նոր գրասենյակի, նոր ակումբ–գրադարանի, գյուղի կենտրոնին և արևմտյան թաղամասին մոտիկ նոր միջնակարգ դպրոցի, նոր ակումբ–գրադարանի, Ղուչներ կոչվող թաղամասի համար նոր խանութի շենքեր: Ձորագյուղի պետական տնտեսությունում ոռոգման կայուն ցանց ստեղծելու նպատակով Գեղամա լեռների Աժդահակ կոչվող սարի կիրճում և Կտունի ձորում կառուցել ջրամբար-տակներ, Բոռբոռ կոչվող հորդառատ աղբյուրի ջրերը միավորել մի ընդհանուր բետոնապատ ջրատարի մեջ, որի սառնորակ ու քաղցրահամ ջրերով նախ բավարարել Ձորագյուղի բնակչության խմելու ջրի պահանջները, իսկ մնացած մասը տրամադրել տնտեսության ցանքատարածությունների ոռոգման համար, նոր ստեղծված Ղուչներ և Չայիրներ կոչվող թաղամասերի խմելու և ոռոգման ջրի պահանջը բավարարելու համար մետաղյա խողովակներով ջուր բերել գյուղի Ակներ կոչվող առատ աղբյուրից: Գյուղի քարքարոտ և հանդակներով կտրտված հողատարածությունները մեկորացման ճանապարհով դարձնել մեխանիզացիային հարմար դաշտեր, դեպի սար տանող ճանապարհները վերակառուցել և դարձնել մեխանիզացիային ու ավտոմեքենաներին հարմար ճանապարհ: Գյուղում անցկացնել զագատար գիծ, ասֆալտապատել գյուղամիջյան ճանապարհը:

Պետական տնտեսության 1979 թվականի⁷ ղեկավար կադրերը հաստատելիս, Մերուժան Գալստյանը առաջարկում է առաջին հերթին տեղ տալ մասնագիտական կրթություն ունեցողներին: Այսպես՝ 1) գլխավոր գյուղատնտես է նշանակվում Արտավազ Կարենի Գրիգորյանը, 2) գլխավոր տնտեսագետ՝ Շալիկո Արամի Խղաթյանը, 3) գլխավոր անասնաբույժ՝ Ներսիկ Արսենի Սահակյանը, 4) գլխավոր անասնաբույժ՝ Ֆուրման Գևորգի Հակոբյանը, 5) գլխավոր ինժեներ մեխանիկ՝ Ժորա Հայկի Գրիգորյանը, 6) գլխավոր հաշվապահ՝ Սոս Աբրահամի Սողոմյանը, 7) տրակտորի բրիգադիր՝ Վարազդատ Վանոյի Սահրադյանը, 8) ոչխարաբուծական ֆերմայի բրիգադիր՝ Մելիմբեկ Մանուկի Գևորգյանը, 9) կաֆի I բրիգադիր՝ Աշոտ Բարսեղի Մովսիսյանը, 10) դաշտավարական I բրիգադի բրիգադիր՝ Մոյսոս Սիրակյանի Մանուկյանը, 11) II բրիգադի բրիգադիր՝ Աղախան Աբգարի Ջաքարյանը, 12) III բրիգադի բրիգադիր՝ Ազնիվ Մանասարի Գալստյանը, 13) IV բրիգադի բրիգադիր՝ Ոստրեկ Մնացի Սողոմյանը, 14) V բրիգադի բրիգադիր՝ Գառնիկ Հակոբի Արզումանյանը, 15) VI բրիգադի բրիգադիր՝ Ազնիվ Սկրտիչի Սահակյանը, 16) II գյուղատնտես՝ Վոլոդյա Բենիամինի Խա-

⁷ ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 65, քերթ 1–82:

չատրյանը, 17) կերերի պահեստապետ՝ Գագիկ Սարգսի Բաղդասարյանը, 18) աշխատավարձի գծով տնտեսագետ՝ Օգսեն Գառնիկի Սարոյանը, 19) II անասնաբույժ՝ Համլետ Նիկողայի Սարգսյանը, 20) խոշոր մատղաշի բրիգադիր՝ Հայկազ Աղեկի Աղեկյանը, 21) հաշվապահի օգնական՝ Ֆրունզիկ Եղիազարի Մանուկյանը, 22) II տնտեսագետ՝ Միհրան Սիրակյանի Մանուկյանը:

Պետական տնտեսության իշխյալ 22 ղեկավար կադրերն ունեին մասնագիտական կրթություն: Դա մասնագիտական կրթություն ունեցողների հաղթանակն էր ոչ մասնագիտական կրթություն ունեցողների նկատմամբ: Ուշագրավ է նաև այն, որ մասնագիտական կրթություն ունեցող 22 ղեկավար կադրերից 12–ը ունեին բարձրագույն կրթություն (Արտավազ Գրիգորյան, Շալիկո Խղաթյան, Ներսիկ Սահակյան, Ֆուրման Հակոբյան, Ժորա Գրիգորյան, Աշոտ Մովսիսյան, Վոլոդյա Խաչատրյան, Օգսեն Սարոյան, Համլետ Սարգսյան, Հայկազ Աղեկյան, Ֆրունզիկ Մանուկյան, Միհրան Մանուկյան): Իսկ եթե դրան ավելացնենք տնտեսության դիրեկտոր Մերուժան Հայկի Գալստյանին և կուսկազմակերպության քարտուղար Գագիկ Գառնիկի Մանուկյանին, որոնք ունեին մասնագիտական բարձրագույն կրթություն (երկուսն էլ գյուղատնտեսներ էին), ապա բարձրագույն կրթություն ունեցող մասնագետ կադրերի թիվը հասնում էր 14–ի: Եթե առանձնացնենք Ներսիկ Սահակյանին, որը ձորագյուղի չէր, ապա մյուս 13 բարձրագույն կրթություն ունեցողները ձորագյուղիցներ էին, որոնք կազմում են ամբողջ ղեկավար կադրերի շուրջ 56 %–ը:

Փաստորեն ինչպես բյուրոյում, այնպես էլ ղեկավար կադրերի մեջ մասնագիտական կրթություն ունեցողները կազմում էին շուրջ 82 %–ը: Իսկ դա իր նախադեպը չունեցող մեծ հաղթանակ էր: Եթե հաշվի առնենք այն կարծիքը, թե կադրերն են որոշում ամեն ինչը, ապա կարելի է ասել, որ դրանից հետո Ձորագյուղի պետական տնտեսությունում անլուծելի ոչինչ չպետք է լիներ: Ուշագրավ է նաև այն փաստը, որ ինչպես բյուրոյում, այնպես էլ ղեկավար կադրերի մեջ բարձրագույն կրթություն ունեցողները կազմում էին միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողներից ավելի բարձր տոկոս:

Այդ ժամանակաշրջանում Ձորագյուղի տնտեսության միջին օղակի ղեկավար կադրերի միջև սկիզբ է առնում նոր պայքար, որը մղվում է մասնագիտական բարձրագույն կրթություն ունեցողների և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների միջև:

Ազիտ–մասսայական աշխատանքներն առաջ մղելու նպատակով ազիտկուլեկտիվի նոր նախագահ է հաստատվում այդ աշխատանքում մեծ փորձ ունեցող Դերենիկ Հայկի Գալստյանը, որն աշխատում էր 8–ամյա դպրոցի դիրեկտոր: Պրոպագանդիստներ են հաստատվում բարձրագույն կրթությամբ մասնագետներ Մերուժան Գալստյանը, Օգսեն Սարոյանը, Արտավազ Գրիգորյանը, Ներսիկ Սահակյանը:

Մայիսի 19-ին Ներսիկ Սահակյանը, այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ, ազատվում է աշխատանքից: Նրա փոխարեն նշանակվում է Հայկազ Աղեկյանը: Խաչիկ Մելքոնի Կարապետյանը նշանակվում է խոշոր մատղաշի բրիգադիր, իսկ Համլետ Բեգեի Սահրադյանը, որն ուներ անասնաբուժական բարձրագույն կրթություն, նշանակվում է հաշվապահի օգնական: Այս ճանապարհով ձորագյուղի բարձրագույն կրթություն ունեցողների թիվը հասնում է 14-ի:

Ազիտկուլեկտիվի խմբավարներ են հաստատվում Արտավազ Գրիգորյանը, Վոլոդյա Խաչատրյանը, Շալիկո Խլոբայանը, Հայկազ Աղեկյանը, Խաչիկ Մնացականյանը: Ազիտկուլեկտիվի նիստի ժամանակ գովեստի խոսքի են արժանանում կուսակցականներ Արմենակ Ջանիբեկի Գրիգորյանը, Արարատ Մնացի Շառոյանը, Մոլոտ Նիկոլայի Սարգսյանը, Մնաց Տիգրանի Մալիանյանը, Ավետիք Եզնակի Մալիանյանը, Գրիշա Խանջալբեկի Կարապետյանը, Ազնիվ Մանասարի Գալստյանը, Գարուշ (Գրիշա) Գինարուսի Գասպարյանը, Հայկարամ Վասիլի Գևորգյանը, Ուսուրեկ Լևոնի Ավոյանը, Յուրիկ Վարագդատի Ասոյանը, Համբարձում Ավետիսի Ավետիսյանը, Աշոտ Հարութի Աղաբեկյանը, որոնք լավ են աշխատել արտադրությունում և ակտիվ կերպով մասնակցել են քաղաքաբաշխմանը: Ազիտկուլեկտիվի նախագահ Գերենիկ Գալստյանը պահանջում է քաղաքացիական պարտավորումներին ակտիվ կերպով մասնակցից դարձնել կուսակցականներ Գուրգեն Արշակի Աբրահամյանին, Վազգեն Աշոտի Ասատրյանին, Խաչիկ Գարսևանի Բաղդասարյանին, Հայկ Հարութի Հակոբյանին, Գուրգեն Վոլոդյայի Ավետիսյանին, Գրիշա Բաղդասարի Մախմուրյանին:

1979 թվականի փետրվարին տեղի ունեցող ընդհանուր ժողովում քննարկվում են 1978 թվականին ստանձնած սոցիալարտափորությունների արդյունքները և 1979 թվականի խնդիրները: Պարզվում է, որ 1978 թվականին արտադրվել է 3948 գ հացահատիկ, 4648 գ կարտոֆիլ, 400 գ պտուղ, 1000 գ ծխախոտ, կաթի համախառն արտադրանքի պլանը կատարվել է 117 %-ով, մսինը՝ 98 %-ով, բրդինը՝ 102 %-ով: Մրցույթում Ձորագյուղի պետական տնտեսությունը հաղթել է իր մրցակցին՝ Աստղածորի պետական տնտեսությունը: Նվաճած հաղթանակը 1979 թվականին իր ձեռքում ամուր պահելու նպատակով Ձորագյուղի պետական տնտեսությունը ստանձնում է ավելի բարձր պլաններ: Այսպես, նա ստանձնում է 1979 թ. 1 հեկտարից ստանալ 15 գ հացահատիկ, 150 գ կարտոֆիլ, 27 գ ծխախոտ, 107 գ բանջարեղեն, կուտակել 2200 տոննա խոտ, 3400 տոննա սիլոս և սեմաժ, արտադրել 8000 գ կաթ, 106 գ բուրդ, 1800 գ միս, խոշոր գլխաքանակի ավելացման պլանը կատարել 81%-ով, մանրինը՝ 86 %-ով, 1 ոչխարի բրդատվությունը հասցնել 2 կիլոգրամի, պետության վաճառքի պլանը կատարել 110 %-ով:

Տնտեսության երիտասարդ դիրեկտոր Մերուժան Գալստյանը որպես նորություն կազմակերպում է լավագույն աշխատողների պարգևատրում: Այդ պատվին են արժանանում՝ 1) կաֆի II բրիգադի բրիգադիր Մոլոտ Գրի-

գորի Կիրակոսյանը, 2) մեխանիզատոր Գիմիտրի Սիրականի Ոսկանյանը, 3) ծխախոտագործուհի Թառլան Մանուկի Ասատրյանը, 4) կրկնորուհի Պոլյա Աշոտի Ջաքարյանը, 5) անասնապահ Աշոտ Աբգարի Մանուկյանը, 6) ծխախոտագործուհի Մարգարիտ Մամոնի Մանուկյանը, 7) մեխանիզատոր Ժորա Գևորգի Հարությունյանը, 8) կրկնորուհի Զնարիկ Մովսիսյանը, 9) մեխանիզատոր Մակեդոն Մանուկի Մովսիսյանը, 10) կրկնորուհի Բեգար Հարուստի Ղազարյանը, 11) կրկնորուհի Ֆոլոր (Ֆլորա) Գյուլաբի Մելքոնյանը, 12) կրկնորուհի Թամարա Նիկոլայի Սահրադյանը (վերջին երկուսը հարվածային ոչխար կրողներ են եղել), 13) անասնապահ Սարիբեկ Վանուշի Մարգսյանը, 14) կրկնորուհի Ֆենյա Վանուշի Սարգսյանը:

1979 թվականի սոցիալարտափորությունների կատարման արդյունքները ցույց են տալիս, որ պետական տնտեսությունն իր պլանները հիմնականում ոչ միայն կատարել է, այլև գերակատարել: Օրինակ՝ հացահատիկի համախառն արտադրության պլանը կատարել է 100 %-ով, կարտոֆիլինը՝ 104 %-ով, ծխախոտինը՝ 100 %-ով, պտղինը՝ 100 %-ով, բուրդը միասին վերցրած անասնակերերինը՝ 100 %-ով, 1320 գ մսի դիմաց պետությանն է հանձնվել 1345 գ, 118 գ բրդի դիմաց՝ 133 գ, գերակատարվել են խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակի աճի պլանային առաջադրանքները: Տնտեսությունն իր պլանները չի կատարել անասնապահական մրերքների արտադրության ավելացման գծով, օրինակ՝ 7510 գ կաթի դիմաց հոկտեմբերի 1-ի դրությամբ արտադրվել է 7451 գ, այսինքն՝ պլանը կատարվել է 98 %-ով:

Ամփոփելով 1979 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները՝ պարզվում է, որ տնտեսության կրած վնասները նախորդ տարիների համեմատությամբ հասել են մինիմումի: Պետական նորմայով սահմանված 30000 ռուբլու դիմաց վնասը կազմել է ընդամենը 25479 ռուբլի, իսկ դրա պատճառները շատ են: Դրանցից են մեխանիզացիայի կապիտալ վերանորոգումները (դաշտերը քարքարոտ են, մեխանիզացիան չի դիմանում և անընդհատ կոտրվում է): Դրա վրա պետք է ավելացնել նաև այն, որ Մարտունու հայգյուղտեխնիկան ժամանակին պահեստամասեր չի տրամադրում, իսկ պետական տնտեսությունը ստիպված Կամոյից և Երևանից մասնավոր կարգով ու քանկ գնով է ձեռք բերում դրանք:

1979 թվականի հոկտեմբերի 17-ին տեղի ունեցած կուսակցական հաշվետու ընտրական ժողովը բյուրոյի կազմում ընտրում է 9 հոգու՝ Մերուժան Գալստյանին, Գազիկ Մանուկյանին, Արտավազ Գրիգորյանին, Վոլոդյա Խաչատրյանին, Հայկազ Աղեկյանին, Արախան Ջաքարյանին, Փրիզատ Մանուկյանին: Ակներև է, որ նրանցից մասնագիտական կրթություն ունեցողները 8-ն են, իսկ մասնագիտական բարձրագույն կրթություն ունեցողները՝ 5-ը: Փաստորեն մասնագիտական բարձրագույն կրթություն ունեցողների թիվը բյուրոյի ամբողջ կազմի կեսից ավելին էր:

Կամոյի «Դիպոլ» կամ «Նիվա» գործարանի Չորագյուղի արտադրամասի եռուն աշխատանքի ժամանակներն են եղել 1979–1986 թվականները, երբ ողջ կոլեկտիվը կատարել ու գերակատարել է իր ստանձնած եռամսյա ու տարեկան պլանային առաջադրանքները և ստացել բարձր աշխատավարձ: Այդ տարիներին Չորագյուղի մասնաճյուղը լավագույնն է ճանաչվել Կամոյի «Դիպոլ» գործարանում: Եղել են այնպիսի տեղամասեր, ուր առաջավոր բանվորների ամսեկան աշխատավարձը հասել է 250–300 ռուբլու: Առաջավոր բանվորները, բրիգադիրները, հերթափոխի վարպետները պարզևստարվել են «Առաջավոր կոնդենսատորագործ» դիպլոմով և դրամով: Արտադրամասի մեկ բանվորի միջին աշխատավարձը կազմել է շուրջ 150 ռուբլի, իսկ բոլոր աշխատողների մեկ ամսվա աշխատավարձը հասել է 75–80 հազար ռուբլու: Ընդ որում, աշխատավարձը բանվորների համար գործարքային է եղել, իսկ հաստիքային աշխատողների համար՝ դրույքաչափով:

Լավ է գործել արտադրամասի արհկոմը, որը սերտ համագործակցելով Կամոյի «Դիպոլ» գործարանի արհկոմի հետ (նախագահ՝ Գառնիկ Ասատրյան) կարիքավորներին ցույց է տվել դրամական օգնություն, Նոր տարվա կապակցությամբ նվերներ ու խաղալիքներ է բաժանել աշխատավորների և ընտանիքներին, եռամսյակը մեկ առաջարկվել է գեղջ գնով ուղեգրեր առողջարանային բուժման համար ինչպես Հայաստանի առողջարաններում (Արգնի, Ջերմուկ, Հանքավան), այնպես էլ միութենական առողջարաններում (Եվպատորիա, Կիսլովոդսկ, Պյատիգորսկ, Էսենտուկի): Արհկոմը կազմակերպել է էքսկուրսիաներ Հայաստանի տեսարժան վայրեր (Տաթև, Գառնի, Գեղարդ, Էջմիածին): Նման էքսկուրսիաներ է կազմակերպել նաև հարևան Վրաստանի տեսարժան վայրեր (Թբիլիսի, Բաթումի, Մծխեթի): Հաճախ կազմակերպվել են նաև համերգներ, կինոդիտումներ և թատերական ներկայացումների դիտումներ քաղաքամայր Երևանում:

1980 թվականի* ղեկավար կադրերը հիմնականում մնում են նույնը, որպիսիք հաստատվել էին 1979 թվականին: Տարբերությունը այն էր, որ գլխավոր անասնաբույժ է հաստատվում Շալիկո Արամի Խլղաթյանը, մատղաշի աճեցման բրիգադիր՝ Խաչիկ Գարսևանի Բաղդասարյանը:

Պետական տնտեսությունը 1980 թվականի համար ստանձնում է հետևյալ սոցպարտավորությունները: Մեկ հեկտարից ստանալ 18 ց հացահատիկ, 180 ց կարտոֆիլ, 30 ց ծխախոտ, 357 ց բանջարեղեն, կուտակել 3500 տոննա խոտ, 3900 տոննա սիլոս ու սենած, արտադրել 7410 ց կար, 108 ց բուրդ, 2000 ց միս, խոշորի սերնդատվության պլանային առաջադրանքը կատարել 83 %-ով, մանրինը՝ 87 %-ով, մեկ ոչխարի բրդատվությունը հասցնել 2,2 կիլոգրամի, պետությանը վաճառել 1420 ց միս, 108 ց բուրդ:

1980 թվականի հունվարի 30-ի ընդհանուր ժողովում քննարկվում է «ՍՄԿԿ կենտրոնական Կոմիտեի 1979 թվականի նոյեմբերյան պլենումի

արդյունքները և պլենումի որոշումներից բխող Չորագյուղի արտադրական կուսակցական կազմակերպության խնդիրները» հարցը, որի մասին զեկուցում է պետական տնտեսության դիրեկտոր Սերուժան Գալստյանը: Ըստ էության արտահայտվում են Արտավազ Գրիգորյանը, Գառնիկ Արզումանյանը, Աղախան Զաքարյանը, Մուրտ Սարգսյանը, Վեսամիր Ասատրյանը, Գագիկ Մանուկյանը, որոնք ընդգծում են, թե պլենումի որոշումները դնելով իրենց աշխատանքային գործունեության հիմքում Չորագյուղի խորհտնտեսության բանվորները կկատարեն 1980 թվականի իրենց ստանձնած սոցպարտավորությունները: Այդ ժողովում կուսակցության շարքեր է ընդունվում Գրիշա Բաղդասարի Մախմուրյանը որպես թեկնածու:

1980 թ. հոկտեմբերի 14-ին արտադրական կուսակցական ժողովը լսում է կուսկազմակերպության քարտուղար Գագիկ Մանուկյանի զեկուցումը բյուրոյի մեկ տարվա կատարած աշխատանքների մասին: Ըստ էության արտահայտվում են՝ գյուղատնտես Արտավազ Գրիգորյանը, անասնաբույժ Հայկազ Աղեկյանը, խորհտնտեսության դիրեկտոր Սերուժան Գալստյանը: Նրանք ընդգծում են, որ տնտեսական տարում կատարվել ու գերակատարվել են կարտոֆիլի, ծխախոտի ու բանջարեղենի պետական առաջադրանքները: Գոհացուցիչ արդյունքներ է տվել անասնապահության բնագավառը: Այսպես՝ պլանավորված 7410 ց կաթի դիմաց արտադրվել է 6826 ց, այսինքն՝ առաջադրանքը կատարվել է 90 %-ով (իհարկե, կաթի հանձնումը շարունակվում է մինչև դեկտեմբերի վերջը և պլանը գերակատարվելու է), 1420 ց մսի դիմաց պետությանն է հանձնվել 1513 ց, 108 ց բրդի դիմաց՝ 109 ց: Գերակատարվել է նաև անասունների գլխաքանակի ավելացման պլանը: Դրան հակառակ 1980 թվականի բնակլիմայական անբարենպաստ պայմանների պատճառով պետական տնտեսությունը հացահատիկի արտադրության և անասնակերի կուտակման գծով նահանջել է իր նախորդ տարիների նվաճած դիրքերից, և հացահատիկի համախառն արտադրության առաջադրանքը կատարվել է ընդամենը 66,6 %-ով, իսկ անասնակերինը՝ շուրջ 55 %-ով:

Բյուրոյի կազմում որպես նորություն ընտրվում են շարքային կոմունիստներից Հայկ Հարութի Հակոբյանը և Հայկազ Սարգսի Մախմուրյանը: Բյուրոյի կազմում ընտրված 11 անդամներից 10-ը ունենին մասնագիտական կրթություն, իսկ նրանցից 5-ը ունենին բարձրագույն կրթություն:

Ամփոփելով 1980 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները՝ պարզվում է, որ տնտեսության կրած վնասները 1979 թ. համեմատությամբ ավելացել են: Նախորդ տարված 25475 ռուբլու վնասի դիմաց 1980 թ. այն հասել է 86.000 ռուբլու, այսինքն՝ պետական նորմայից 56000 ռուբլի ավել: Այդ վնասները հիմնականում կապված են պլանները թեթևակատարելու, սերմերը, անասնակերերը զնելու և անարտադրողականության հետ:

* ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 66, թերթ 1–122:

1980 թվականի դեկտեմբերի 20-ին Մերուժան Հայկի Գալստյանը աշխատանքի անցնելու կապակցությամբ, ազատվում է Չորագյուղի պետական տնտեսության դիրեկտորի աշխատանքից: Նրա փոխարեն կուսպրկումի բյուրոն նշանակում է միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող Հրաչյիկ Հովհաննեսի Խաչատրյանին (Աստղածորից):

Թեև պետական տնտեսության նոր նշանակված դիրեկտորը չունի մասնագիտական բարձրագույն կրթություն, բայց, ինչպես իմացանք նախորդ շարադրանքից, այդ ժամանակ պետական տնտեսությունում աշխատում էին ձորագյուղի 14 բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող երիտասարդներ: Իհարկե, նրանցից Մերուժան Հայկի Գալստյանին, առաջ քաշելու նպատակով, տեղափոխում են շրջկենտրոնում աշխատանքի Շրջկենտրոնում աշխատանքի է անցնում նաև Ֆրունզիկ Եղիազարի Մանուկյանը: Միևուրեք Միսակյանի Մանուկյանը և Համլետ Նիկողայի Սարգսյանը աշխատանքի են անցնում գործարանի նոր բացված արտադրամասում: Օգտեն Գառնիկի Սարգսյանը աշխատանքի է մեկնում Ռուսաստան: Մյուս 9-ը շարունակում են ամուր կերպով մնալ և աշխատել հարազատ պետական տնտեսությունում: Ինչպես կհամոզվենք հետագա շարադրանքի ընթացքում, պետական տնտեսության ղեկավար կադրերի կազմը աստիճանաբար համալրվում է մասնագիտական բարձրագույն կրթություն ունեցող ձորագյուղի նոր երիտասարդներով (դրանցից են՝ 1) Միշա Հայկի Գալստյանը, 2) Հրահատ Բեգեի Սաֆարյանը, 3) Համլետ Կարապետի Ավետիսյանը, 4) Վեգիթ Գրիգորի Ավետիսյանը, 5) Ռուդիկ Կալինոսի Սարգսյանը, 6) Ավետիք Ազնիվի Գալստյանը, 7) Միշա Կարգանովի Սաֆարյանը, 8) Սարիբեկ Վոլոդյայի Սահրադյանը, 9) Ավետիք Ռուշանի Մանուկյանը, 10) Գագիկ Շալիկոյի Խղաթյանը և ուրիշներ): Պետական տնտեսության միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող նոր դիրեկտորը սկզբնական շրջանում իր աշխատանքները կազմակերպելիս հարգանքով է վարվում արդարամիտ ձորագյուղիցների, մասնավորապես նրանցից մասնագիտական բարձրագույն կրթություն ունեցող կադրերի նկատմամբ, աննախանձ ձևով հենվում վերջիններիս կազմակերպչական տաղանդի վրա, իր պակաս գիտելիքների փոխարեն օգտագործում նրանց բարձր գիտելիքները: Այդ ճիշտ քայլը հենց սկզբից տալիս է իր դրական արդյունքները:

1981 թվականից սկսվում է XI հնգամյակը:⁹ Նախատեսվում է նոր հնգամյակի ընթացքում Չորագյուղի պետական տնտեսության հացահատիկի արտադրությունը ավելացնել 63 %-ով, կարտոֆիլինը՝ 50 %-ով, ծխախոտինը՝ 20 %-ով, պտղինը՝ 35 %-ով, բանջարեղենինը՝ 201 %-ով, կաթի արտադրությունը նախորդ հնգամյակի համեմատությամբ ավելացնել 1798 ցենտներով, մսինը՝ 340 ցենտներով, բրդինը՝ 3,5 ցենտներով, մեկ ֆուրածային կովի կաթնատվությունը նախորդ հնգամյակի համեմատությամբ պետք

է ավելացվել 709 կիլոգրամով, մսամթերման հանձնվող խոշորի քաշը ավելացնել 29 կիլոգրամով:

1981 թ. հունվարի 9-ին դիրեկցիան և կուսկազմակերպությունը կուսակցական բյուրոյի նիստում հաստատում են 1981 թվականի ղեկավար կադրերը: 1) Գլխավոր գյուղատնտես են հաստատում Արտավազ Գրիգորյանին, 2) գլխավոր հաշվապահ՝ Միշա Աթոյանին, 3) գլխավոր տնտեսագետ՝ Շալիկո Խղաթյանին, 4) գլխավոր անասնաբույժ՝ Հայկազ Աղեկյանին, 5) Գլխավոր ինժեներ մեխանիկ՝ Ժորա Գրիգորյանին, 6) գլխավոր անասնաբույժ՝ Յուրան Հակոբյանին, 7) դաշտավարական N 1 բրիգադի բրիգադիլ՝ Հրաչյիկ Սարգսյանին, 8) N 2 բրիգադի բրիգադիլ՝ Աղախան Զաքարյանին, 9) N3 բրիգադի բրիգադիլ՝ Ազնիվ Գալստյանին, 10) N 4 բրիգադի բրիգադիլ՝ Ռուսբեկ Սողոմյանին, 11) N 5 բրիգադի բրիգադիլ՝ Գառնիկ Արզումանյանին, 12) N 6 բրիգադի բրիգադիլ՝ Համբարձում Ավետիսյանին, 13) վաֆի բրիգադիլ՝ Մելիսեյկ Գևորգյանին, 14) կաֆի 1-ին բրիգադիլ՝ Աշոտ Մովսիսյանին, 15) կաֆի 2-րդ բրիգադիլ՝ Մուրտ Կիրակոսյանին, 16) մատղաշի անցնման բրիգադիլ՝ Խաչիկ Բաղդասարյանին, 17) տրակտորային բրիգադի բրիգադիլ՝ Վարազդատ Սահրադյանին:

Ակներև է, որ բացի 1 հոգուց (Համբարձում Ավետիսյանից), մյուս բոլորն էլ ունենին մասնագիտական կրթություն, իսկ նրանցից 7-ը՝ բարձրագույն կրթություն:

1981 թվականին պետական տնտեսությունը ստանձնում է հետևյալ սոցալարտավորությունները՝ միջին մեկ հեկտարից ստանալ 16 ցենտներ հացահատիկ, 200 ցենտներ կարտոֆիլ, 27 ցենտներ ծխախոտ, 300 ցենտներ բանջարեղեն, 40 ցենտներ պտուղ, կուտակել 2100 տոննա խոտ, 3400 տոննա սիլոս և սեմաժ, մեկ կովից ստանալ 1200 կգ կաթ, մեկ ոչխարից՝ 2,2 կգ բուրդ, պետությանը մսամթերման հանձնվող մեկ խոշորի քաշը հասցնել 290 կիլոգրամի, իսկ մանրինը՝ 40 կիլոգրամի, 100 կովից ստանալ 90 հոթ, 100 ոչխարից՝ 97 գառ:

1981 թ. մարտի 12-ին Գրիշա Բաղդասարի Մախմուրյանը ընդունվում է կուսակցության շարքեր որպես կուսանդամ: Իսկ Սուրեն Շամխալի Մուրադյանը՝ կուսբեկնաձու: Կուսակցական ընդհանուր ժողովում քննարկվում են ՄՄԿԿ 26-րդ համագումարի որոշումները: Կուսակցականներից բացի ժողովին մասնակցում են հրավիրված անկուսակցական ակտիվիստները: Ելույթ են ունենում Վոլոդյա Խաչատրյանը, Վարազդատ Սահրադյանը, Գագիկ Մանուկյանը, որոնք ընդգծում են, թե համագումարի լույսի ներքո Չորագյուղի պետտնտեսության բանվորները աշխատում են մեծ ոգևորությամբ և ձգտում են գերակատարել իրենց տարեկան պլանային առաջադրանքները: Սեպտեմբերի 5-ին Գագիկ Համբարձումի Ավետիսյանը ընդունվում է կուսակցության շարքեր որպես անդամության թեկնածու: Կուսակցական ժողովում հրապարակվում է ՄՄԿԿ կենտրոնական կոմիտեի փակ նամակը՝

⁹ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 67, քերթ 1935:

կապված տնտեսական տարվա բնակլիմայական անբարենպաստ պայմաններում ստանձնած պարտավորությունները կատարելու հետ:

Ժողովում ելույթ են ունենում Հրաչիկ Խաչատրյանը, Արտավազ Գրիգորյանը, Վրեժ Զաքարյանը: Նրանք հայտնում են, որ Հայաստանում այս տարի բնակլիմայական պայմանները համեմատաբար բարենպաստ են, իսկ իրենք կաշխատեն ոչ միայն կատարել, այլև գերակատարել պլանները: Հոկտեմբերի 30-ի ժողովում հաստատվում է ժողովրդական վերահսկողության խմբի հետևյալ կազմը՝ Հրաչիկ Խաչատրյան (նախագահ), Գագիկ Մանուկյան, Վոլոդյա Խաչատրյան, Հայկազ Աղեկյան, Սելիմբեկ Գևորգյան, Համբարձում Բազարյան, Հովհաննես Շառոյան:

1981 թ. հուլիսի 9-ին Ավետիք Խլղաթյանի փոխարեն կերերի պահեստապետ է հաստատվում Վարագդատ Սահրադյանը: 1981 թվականին Չորագյուղի կուսկազմակերպության ներսում ստեղծվում են ցեխային կուսկազմակերպություններ և կուսակցական խմբեր: Մեխանիզացիայի պարկում կազմակերպվել է նշանակվում Համլետ Հակոբյանը, դաշտավարության մեջ՝ Հայկազ Աղեկյանը, հաշվային ապարատում՝ Հովհաննես Շառոյանը:

Տարեվերջին ամփոփելով սոցպարտավորությունների արդյունքները պարզվել է, որ տնտեսությունը հացահատիկի համախառն արտադրանքի պլանը կատարել է 138 %-ով, ծխախոտինը՝ 101 %-ով, կարտոֆիլինը՝ 103 %-ով, անասնակերինը՝ 110 %-ով, կաթի արտադրության պլանը կատարվել է 110 %-ով, մսինը՝ 105 %-ով, բրդինը՝ 101 %-ով:

Կուսկազմակերպության հաշվետու ընտրական ժողովի կողմից բյուրոյի կազմում ընտրվում են Գագիկ Մանուկյանը, Հրաչիկ Խաչատրյանը, Վոլոդյա Խաչատրյանը, Հայկազ Աղեկյանը, Ադախան Զաքարյանը, Գառնիկ Արզումանյանը, Ավետիք Մախանյանը, Համբարձում Բազարյանը, Արտավազ Գրիգորյանը:

Այնքան է, որ բյուրոյի կազմում ընտրվածներից 7-ը ունեն մասնագիտական կրթություն, իսկ նրանցից 5-ը՝ բարձրագույն կրթություն (ոչ մասնագիտական կրթություն ունեին Համբարձում Բազարյանը և Ավետիք Մախանյանը): Փաստորեն մասնագիտական կրթություն ունեցողները (իսկ նրանց մեջ էլ բարձրագույն կրթություն ունեցողները) շարունակում են մեծամասնություն կազմել բյուրոյում:

Հաշվետու ժողովում կուսկազմակերպությունը որոշում է կայացնում կառուցել գյուղի համար կուլտուրայի տուն, Դռաչներ կոչվող թաղամասում՝ խանութ, «Բոթբոռի» ջուրը վերցնել բետոնի մեջ, լրացուցիչ խմելու և ոռոգելու ջուր բերել գյուղին:

1981 թ. ֆինանսա-տնտեսական գործունեության արդյունքները ցույց են տալիս, որ տնտեսությունը պետական պլանով նախատեսված 30000 ռուբլու վնասի սահմանը չի անցել:

1981 թվականի օգոստոսին Դերենիկ Հայկի Գալստյանը ազատվում է 8-ամյա դպրոցի դիրեկտորի պաշտոնից՝ Չորագյուղի պետական տնտե-

սության դիրեկտորի տեղակալ նշանակվելու կապակցությամբ: Նրա փոխարեն դպրոցի դիրեկտոր է նշանակվում Ռաֆիկ (Ռազմիկ) Արամի Հակոբյանը:

1982 թ. դեկտեմբեր կադրերը հիմնականում մնում են նույնը, ինչ որ 1981 թվականին էր: Միայն մի քանի փոփոխություններ են կատարվում: Այսպես՝ 1) Վոլոդյա Խաչատրյանի փոխարեն Դաշտավարական N 1 բրիգադի բրիգադիր է հաստատվում Հրաչիկ Գարսևանի Սարգսյանը, 2) Վարագդատ Սահրադյանի փոխարեն տրակտորային բրիգադի բրիգադիր է հաստատվում Վոլոդյա Պողոսյանը:

1982 թվականին ստանձնած սոցպարտավորությունները¹⁰ չափազանց բարձր էին նախորդ տարվանից: Այսպես՝ նախատեսվում էր մեկ հեկտարից ստանալ հացահատիկ 18 ցենտներ, ծխախոտ՝ 27 ցենտներ, կարտոֆիլ՝ 160 ցենտներ, 1 կովի կաթնատվությունը հասցնել 1900 կիլոգրամի, 1 ոչխարի բրդատվությունը՝ 2,2 կիլոգրամի, կուտակել 2000 տոննա խոտ, 2400 տոննա սիրոս, 1200 տոննա սենած, 450 տոննա ծղոտ, պետությանը վաճառվող յուրսրանչյուր խոշորի քաշը հասցնել 280 կիլոգրամի, մանրինը՝ 40 կիլոգրամի, կաթի արտադրությունը ավելացնել 70 %-ով:

Տարեվերջին ամփոփելով պետպարտավորությունների կատարման արդյունքները պարզվում է, որ հացահատիկի համախառն արտադրանքի պլանը կատարվել է 109 %-ով, խոտինը՝ 100 %-ով, սենածինը՝ 100 %-ով, ծղոտինը՝ 110 %-ով, պտղինը՝ 119 %-ով, կարտոֆիլինը՝ 180 %-ով, ծխախոտինը՝ 100 %-ով, բանջարեղենինը՝ 120 %-ով, 4610 ցենտների դիմաց արտադրվել է 7650 ցենտներ կաթ, 104 ցենտների դիմաց արտադրվել է 106 ց բուրդ, մսի վաճառքի պլանը կատարվել է 100 %-ով:

1982 թվականին կուսակցության շարքեր են ընդունվել Գագիկ Բեգեի Գալստյանը (անդամ), Սուրեն Շամխալի Մուրադյանը (անդամ), Բարսիլյան Ադախանի Զաքարյանը (թեկնածու), Միշա Հայկարամի Գալստյանը (թեկնածու), Սամվել Հայկի Գրիգորյանը (թեկնածու), Գագիկ Համբարձումի Ավետիսյանը (անդամ), Ռուստամ Շալիկոյի Խլղաթյանը (անդամ):

1982 թ. ֆինանսա-տնտեսական գործունեության արդյունքները քննարկելիս գլխավոր հաշվապահ Միշա Միմնի Աբոյանը հայտնում է, որ պետական տնտեսությունը այս տարվա ընթացքում, բացի սիլոսից, մյուս բոլոր սոցպարտավորությունները կատարել ու գերակատարել է: Պլանով նախատեսված 30000 ռուբլի վնասը պակասել է ու հասել 16000-ի: Լավ են աշխատել N 2, N 5 դաշտավարական բրիգադները (բրիգադիրներ՝ Ադախան Զաքարյան, Գառնիկ Արզումանյան) և կաֆի N 2 բրիգադը (բրիգադիր՝ Աշոտ Մովսիսյան): Դրանց հակառակ տնտեսությունը ետ են պահում դաշտավարական N 1 և N 6 բրիգադները և կաֆի N 1 բրիգադը: Մեծ տոկոս են կազմում անասունների անհարգի ելքերը, թույլ են աշխատանքները անասունների սերնդատվության որակի բարձրացման ուղղությամբ, մաս-

¹⁰ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 68, թերթ 1-27:

նագետները և ճյուղի վարիչները անհրաժեշտ հոգ չեն տանում գիտության նորագույն նվաճումներն ու առաջավոր փորձը արմատավորելու ուղղությամբ:

Հուլիսի 26-ին արտադրական կուսկազմակերպության ժողովը լսում է ԳՍԳԿ-ի նախագահ Վոլոդյա Մարգսի Ղազարյանի հաղորդումը դաշտերի պաշտպանության մասին: Նա ընդգծում է, որ գարնանը մեր դաշտում լավ բուսականություն էր աճել, սակայն այն անհրաժեշտ չափով չի պաշտպանվել պահակների կողմից: Դաշտերում ազատ կերպով մտնում են գյուղի բնակիչների գառներն ու հորթերը, արածում, ոտքի տակ տալիս: Հարկավոր է պայքարել դրա դեմ:

Կուսկազմակերպության հաշվետու ընտրական ժողովում առանց փոփոխության նույն անձնավորություններն են ընտրվում բյուրոյի կազմում:

1983 թ. դեկտեմբեր կադրերը հիմնականում մնում են նույնը, ինչ-որ 1982 թվականին էին, միայն մի քանի փոփոխություններ են կատարվում: Այսպես, 1) Աշոտ Մովսիսյանի փոխարեն կաֆի N 1 բրիգադի բրիգադի է նշանակվում Մարիբեկ Աբրահամյանը, 2) վաֆի N 2 բրիգադի բրիգադի է հաստատվում Միշա Կարգանովի Սաֆարյանը:

1983 թվականին Չորագյուղի պետական տնտեսությունը ստանձնում է այնպիսի սոցպարտավորություններ,¹¹ որոնք մեկ գլխով բարձր էին նախորդ տարվա պարտավորություններից: Այսպես՝ տնտեսության աշխատավորները պարտավորվում են 1 հեկտարից ստանալ 20 ց հացահատիկ, 180 ց կարտոֆիլ, 27,9 ց ծխախոտ, կուտակել 2150 տոննա խոտ, 2700 տոննա սիլոս, 1130 տոննա սենաժ, 150 տոննա ծղոտ, 1 կովի կաթնատվությունը հասցնել 1850 կիլոգրամի, 100 կովից ստանալ 82 հորթ, պետությանը վաճառել 1680 ց միս, մսամթերման հանձնվող խոշորի քաշը հասցնել 300 կիլոգրամի, արտադրել 100 ց բուրդ, 100 մայր ոչխարից ստանալ 87 գառ, 1 ոչխարից ստանալ 2,1 կիլոգրամ բուրդ:

Տարեվերջին ամփոփելով պետպարտավորության կատարման արդյունքները պարզվում է, որ տնտեսությունում հացահատիկի արտադրության պլանը կատարվել է 103 %-ով, ծխախոտինը՝ 100 %-ով, կարտոֆիլինը՝ 168 %-ով, կաթի համախառն արտադրության պլանը՝ 103 %-ով, մսի վաճառքի պլանը՝ 100 %-ով, բրդինը՝ 100 %-ով: Թերությունը այն է, որ չեն կատարվել ծխախոտի որակյալ տեսակների սածիլացման և անասունների սերնդատվության բարելավման պլանները:

1983 թվականին կուտակության շարքեր են ընդունվել Գագիկ Բալաբեկի Ունրչատյանը (թեկնածու), Ավագ Բեգեի Սաֆարյանը (անդամ), Բաբուխան Աղախանի Չաքարյանը (անդամ), Էդվարդ Արամի Սահակյանը (թեկնածու), Մամվել Հայկի Գրիգորյանը (անդամ), Էմմա Մաշայի Հակոբյանը (թեկնածու), Արծրուն Գրիշայի Կարապետյանը (թեկնածու):

1983 թ. կուսկազմակերպության հաշվետու ընտրական ժողովը ընտրում է բյուրոյի հետևյալ կազմը՝ Խաչատրյան Հրաչիկ, Մանուկյան Գագիկ,

¹¹ ՀՀ ՀԷԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 69, թերթ 1-79:

Հակոբյան Ֆուրման, Գալստյան Դեբենիկ, Գրիգորյան Արտավազ, Աղեկյան Հայկազ, Չաքարյան Աղախան, Մալխանյան Ավետիք, Արզումանյան Գառնիկ: Ակներև է, որ բյուրոյի 9-ը անդամներից 8-ը ունեն մասնագիտական կրթություն, իսկ նրանցից 5-ը՝ բարձրագույն կրթություն: Պետական տնտեսության հաջողություններն ամենից առաջ պայմանավորված էին մասնագիտական կրթություն ունեցողների, հատկապես նրանցից բարձրագույն կրթություն ունեցողների աճով:

Ժողովը ընտրում է նաև Մարտունու կուսշրջկոմի 41-րդ կոնֆերանսի պատգամավորներ հետևյալ կազմով՝ Խաչատրյան Հրաչիկ, Մանուկյան Գագիկ, Սահակյան Ջանիկ (շրջանից), Չաքարյան Աղախան, Արզումանյան Գառնիկ:

1983 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները առանձին չեն քննարկվում, քանի որ կուսշրջկոմը ինքն է նախաձեռնել ստուգումներ անցկացնել Չորագյուղի պետական տնտեսությունում: Ստուգման արդյունքները քննարկվել են Մարտունու կուսշրջկոմի բյուրոյի նիստում, որը 309 տոննա կարտոֆիլի և 19 տոննա բենզինի շռայլման, տնտեսությունում չաշխատող երկու մարդկանց անունները տնամերձ հողամաս ստացողների ցուցակում կամայականորեն մտցնելու համար խորհրտնտեսության ղիբեկտոր Հրաչիկ Խաչատրյանին կուսակցական խիստ նկատողություն է արել:

1983 թ. «Ողբի» ամսագրի 3-րդ համարում տպագրված «Հարմար, էժան, վնասաբեր» հոդվածում քննադատվում է Չորագյուղի տնտեսությունը այն բանի պատճառով, որ հաճախ մի բեռնատար ավտոմեքենա է տրամադրվում 4-5 հնձվոր տեղավոխելու համար, որով մեծ վնաս է հասցվում տնտեսությանը:

1984 թ. դեկտեմբեր կադրերը հիմնականում մնում են նույնը, ինչ որ 1983 թվականին էին: Փոփոխություն է կատարվում միայն երկրորդական կարգի կադրերի կազմում: Այսպես՝ 1) Հովհաննես Գևորգի Շառոյանին նշանակում են բաղնիսի վարիչ, 2) Խորեն Գեղամի Գրիգորյանին՝ հրչեջ տեսուչ (Հովհաննես Շառոյանի փոխարեն), 3) Վոլոդյա Բենիամինի Խաչատրյանին՝ արհեստանոցի վարիչ, 4) Աշոտ Բարսեղի Մովսիսյանին՝ ավագ տնտեսագետ (Վոլոդյա Խաչատրյանի փոխարեն), 5) Գրիշա Խանջալբեկի Կարապետյանին՝ շինաշխուկ:

1984 թվականին պետական տնտեսությունը ստանձնում է կատարել հետևյալ պլանները:¹² Արտադրել 6200 ց հացահատիկ, 13200 ց կարտոֆիլ, 1200 ց ծխախոտ, 500 ց պտուղ, 2300 ց բանջարեղեն, 1200 ց կերի արմատապտուղ, կուտակել 2200 տոննա խոտ, 2700 տոննա սիլոս, 1200 տոննա սենաժ, 160 տոննա ծղոտ, մեկ կովի կաթնատվությունը հասցնել 1750 կիլոգրամի, 100 կովից ստանալ 83 հորթ, 100 մայր ոչխարից՝ 90 գառ, պետությանը վաճառել 1700 ցենտներ միս, 110 ցենտներ բուրդ, մեկ ոչխարից

¹² ՀՀ ՀԷԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 70, թերթ 1-79:

ստանալ 2,2 կիլոգրամ բուրդ, խոշորի քաշը հասցնել 305 կիլոգրամի, մսուր քաշը՝ 40 կիլոգրամի:

Տարեվերջին, ամփոփելով պետպարտավորությունների արդյունքները պարզվում է, որ 1984 թ. արտադրվել է 6207 գ հացահատիկ, 13218 գ կարտոֆիլ, 1213 գ ծխախոտ, 503 գ պտուղ, 2330 գ բանջարեղեն, 1200 գ կերի արմատապտուղ, բացի սիրսից կատարվել է մսև կերերի կուտակման պլանը, մեկ կովի կաթնատվությունը կազմել է 1876 կիլոգրամ, հացահատիկի պետվաճառքի պլանը կատարվել է 107 %-ով, կարտոֆիլինը՝ 157 %-ով, ծխախոտինը՝ 113 %-ով, բանջարեղենինը՝ 157 %-ով, պտղինը՝ 143 %-ով, կաթինը՝ 107 %-ով, մսինը՝ 101 %-ով, բրդինը՝ 102 %-ով, խոտինը՝ 100 %-ով և այլն:

80-ական թվականներին գյուղում աճում է գրագետ նոր երիտասարդություն, որը ներգրավվում է ինչպես պետական տնտեսության, այնպես էլ «Իլյուզ» գործարանի մասնաճյուղի աշխատանքներում: 1984 թ. մայիսի 31-ին, երբ կուսկազմակերպության քարտուղար Գագիկ Մանուկյանը ազատվում է աշխատանքից ու պետտնտեսությունում անցնում գյուղատնտեսի աշխատանքի, երիտասարդ ու բարձրագույն կրթություն ունեցող Ֆուրման Գևորգի Հակոբյանն է ստանձնում կուսկազմակերպության քարտուղարի պաշտոնը՝ իր հիմնական աշխատանքին զուգընթաց: Արտադրական ԼԿԵՄ քարտուղար է ընտրվում գործունյա և բարձրագույն կրթություն ունեցող Գագիկ Բալաբեկի Ունրշատյանը, որը կուսկազմակերպության ժողովներում ու բյուրոյի նիստերում հանդես է գալիս սկզբունքային առաջարկություններով ու բովանդակալից զեկուցումներով: ԼԿԵՄ կազմակերպության ներսում առաջ է գալիս մեծ աշխուժություն, հատկապես նրանցից տնտեսության աշխատանքների առաջամարտիկները և խիստ կազմակերպվածները ձգտում են ընդունվել ՄՍԿԿ շարքեր: 1984 թ. ՄՍԿԿ շարքեր են ընդունվում տնտեսության աշխատանքներում իրենց գերազանց դրսևորած և բարձր կարգապահությամբ օժտված հետևյալ երիտասարդները՝ Գագիկ Բալաբեկի Ունրշատյանը (անդամ), Ռաֆիկ Վրեժի Սարգսյանը (անդամ), Գագիկ Թելմանի Ոսկանյանը (թեկնածու), Գագիկ Ավետիսի Դազարյանը (թեկնածու), Էդվարդ Արամի Սահակյանը (անդամ), Վահան Խաչիկի Մինասյանը (թեկնածու), Աշոտ Խաչիկի Մնացականյանը (թեկնածու), Էմմա Մաշայի Հակոբյանը (անդամ):

Երիտասարդ կոմունիստներից կուսակցական ժողովներում ելույթ են ունենում Միշա Կարգանովի Սաֆարյանը, Սարիբեկ Կարապետի Աբրահամյանը, Վրեժ Աբգարի Չաքարյանը, Ժորա Հայկի Գրիգորյանը, Վոլոդյա Համբարձումի Պողոսյանը, Ուսուբեկ Մնացի Սողոմյանը, Ավետիս Համբարձումի Ավետիսյանը:

1984 թ. ֆինանսամատնեսական գործունեության արդյունքները ցույց են տվել, որ տնտեսությունը նախատեսված 120.000 ռուբլու օգուտի փոխարեն ստացել է 140.000 ռուբլու օգուտ (116 %-ով բարձր): Սակայն օգուտներն ավել

ի շատ կլինեին, եթե տնտեսության աշխատանքներում տեղ չգտնեին թերությունները: Ամենազխտավորը այն էր, որ դեռ լրիվ չէին օգտագործվել թաքնված ռեզերվները, այն է՝ դեռ լիովին չէին օգտագործվել ջրային պաշարները, մեկորացիայի ճանապարհով դեռ դաշտերը չէին մաքրվել քարերից, չէին վերացել միջնակները, հանդակները, բավարար աշխատանք չէր տարվել ամառուների ցեղային կազմը բարելավելու ուղղությամբ:

1984 թ. արտադրական կուսակցական կազմակերպության հաշվետու ընտրական ժողովում նախորդ տարվա համեմատությամբ բյուրոյի կազմը ընտրելիս նորությունը լինում է այն, որ առաջին անգամ այդ կազմում ընտրվում է ԼԿԵՄ կազմակերպության քարտուղարը՝ Գագիկ Բալաբեկի Ունրշատյանը:

1984 թվականին N 1 միջնակարգ դպրոցի դիրեկտոր Գրիգոր Վասակի Մուխիսյանն ազատվում է աշխատանքից: Նրա փոխարեն նշանակվում է գյուղերիտ հերթափոխային միջնակարգ դպրոցի դիրեկտոր Հայկ Մնացի Բալոյանը: Հենց այդ ժամանակից էլ փակվում է գյուղերիտ հերթափոխային միջնակարգ դպրոցը, որը բոլորել էր իր գործունեության 23 տարին (1961-1984 թթ.): Այդ տարիների ընթացքում գյուղերիտ հերթափոխային միջնակարգ դպրոց են ընդունվում և լրիվ միջնակարգ կրթություն ձեռք բերում 1961 թվականից առաջ և նրանից հետո բերի միջնակարգ կրթություն ունեցող ինչպես ծորագյուղացի, այնպես էլ հարևան գյուղերի հարյուրավոր երիտասարդներ, որոնցից շատերը հետագայում ավարտում են բուհեր և ձեռք բերում բժշկի, ինժեների, ուսուցչի, գյուղատնտեսի, անասնաբույժի, անասնագիտություններ, շատերն էլ սովորել են միջնակարգ մասնագիտական տարբեր ուսումնարաններ ու տեխնիկումներ և ձեռք բերել միջնակարգ մասնագիտական կրթություն, մյուսներն էլ հենց գյուղերիտ հերթափոխային միջնակարգ դպրոցի տված հարուստ գիտելիքներով կյանք են մտել ու դարձել հարազատ գյուղի հարվածային աշխատողներ: Գյուղերիտ հերթափոխային միջնակարգ դպրոցը մեծ դեր է խաղացել մաս ցերեկային միջնակարգ դպրոցի համար ուսուցիչներ կոփելու գործում: Բնականաբար ութամյա դպրոցի այն ուսուցիչները, ովքեր դասավանդում էին մաս գյուղերիտ հերթափոխային միջնակարգ դպրոցում, դառնում են պատրաստի կադրեր հետագայում բացված ցերեկային միջնակարգ դպրոցի համար:

Չորագյուղի նոր բացված 8-ամյա դպրոցը երկար չի մնում: Աշակերտների թվի ավելացումը և մասնագետ ուսուցիչների առկայությունը ստիպում են ութամյա դպրոցը վերածել միջնակարգի: Այս պայմանում հին դպրոցական շենքը, որտեղ անցկացվում էին 8-ամյա դպրոցի պարապմունքները, քայքայված էր, շարքից դուրս եկած: Այդ պատճառով անհրաժեշտություն է զգացվում կառուցել նոր դպրոցական շենք: Այդ ուղղությամբ դպրոցի դիրեկտոր Ռաֆիկ Արամի Հակոբյանի գործադրած ջանքերը տալիս են իրենց պտուղները: 1984 թվականին Հայաստանի կառավարության որոշմամբ

հաստատվում է նոր դպրոցական շենք կառուցելու նախագիծը: Ընդամենը՝ ամսվա ընթացքում շինարարների եռանդուն աշխատանքի շնորհիվ ավարտվում է դպրոցի շենքի շինարարությունը: Այն կահավորվում է ժամանակակից միջնակարգ դպրոցի պահանջներին համապատասխան լաբորատոր սարքավորումներով և գույքով: 1984 թվականի սեպտեմբերին 8-ամյա դպրոցի աշակերտների ուսուցումը կազմակերպվում է նորակառույց դպրոցական շենքում: Սկսվում է հոյակապ դպրոցական շենք ունեցող 8-ամյա դպրոցը միջնակարգ դպրոցի վերածելու գործընթացը:

Չորագյուղի պետական տնտեսության 1985 թվականի ղեկավար կադրերը հիմնականում մնում են նույնը, ինչ որ 1984 թվականին էին: Փոփոխությունն այն էր, որ բարձրագույն կրթություն ունեցող Վեգիր Գրիգորի Ավետիսյանը նշանակվում է գլխավոր անասնաբույժ (նա ավարտել էր Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի արտադրությունից կտրված անասնաբուժական ֆակուլտետը):

1985 թվականին պետական տնտեսությունը ստանձնում է¹³ հետևյալ սոցիալարտավորությունները՝ մեկ հեկտարից ստանալ 30-35 g հացահատիկ, մեկ կովից ստանալ 2000 կիլոգրամ կաթ, մեկ խոշորի կենդանի քաշը հասցնել 335 կիլոգրամի, մեկ ոչխարից ստանալ 2,2 կիլոգրամ բուրդ, մյուս բնագավառներում գերազանցել նախորդ տարվա պլանային առաջադրանքները:

Տարեվերջին ամփոփելով պետպարտավորությունների կատարման արդյունքները՝ պարզվում է, որ հացահատիկի պլանը կատարվել է 104 %-ով, կարտոֆիլինը՝ 152 %-ով, ծխախոտինը՝ 121 %-ով, բանջարեղենինը՝ 100 %-ով, պտղինը՝ 102 %-ով, կատարվել ու գերակատարվել են կաթի, մսի և բրդի արտադրության ու վաճառքի պլանային առաջադրանքները:

Սակայն 1985 թ. տնտեսությունում եղել են նաև թերություններ: Չեն կատարվել խոտի, սիլոսի և ծղոտի պլանային առաջադրանքները, ցածր է եղել մսամթերման հանձնվող անասունների կենդանի քաշը, մեծ տոկոս են կազմել անասունների անհարկի ելքերն ու հարկադիր մորթերը:

1985 թ. Ֆինանս-տնտեսական գործունեության արդյունքները ցույց են տվել, որ տնտեսությունը իրացման պլանը կատարել է 119 %-ով, նախատեսված 1 միլիոն 394 000 ռուբլու դիմաց իրացվել է 1 միլիոն 654 000 ռուբլի, այսինքն՝ պլանավորված չափից ավել է ստացվել 116 000 ռուբլի:

1980 - ական թվականներին, մասնավորապես հետքերեծնկյան շրջանում, երբ երկրի կուսակցական ու պետական վերնախավում տեղի են ունենում անընդհատ փոփոխություններ, որի պատճառով ղեկավարությունը չէր հասցնում միջոցառումներ մշակել, իսկ եղած որոշումները մինչև վերջ չէին կենսագործվում, ամբողջ ԽՍՀՄ-ում առաջ եկավ տնտեսական ու քաղաքական ճգնաժամային իրավիճակ: Այդ վիճակից դուրս գալու նպատակով երկրի նոր ղեկավար Մ.Գորբաչովը հասարակության մեջ դեմոկրատիայի

տարրերը մտցնելու նպատակով 1985 թվականի մարտին փորձեց կատարել տնտեսական - քաղաքական մի շարք բարեփոխումներ, որոնք նա անվանեց «վերակառուցում»: Սակայն Մ.Գորբաչովը չկարողացավ գտնել բացահայտել սոցիալիզմի զարգացման նոր ուղիները, նոր հեռանկարները և նրա «վերակառուցումը» հեռացավ սոցիալիստական աշխատանքից և գնաց դեպի շուկայական հարաբերությունները, որը տարավ դեպի մասնավոր սեփականության վերականգնումը թե՛ գյուղատնտեսության և թե՛ արդյունաբերության մեջ, և ինքնըստիներյան կործանվեց սոցիալիզմը:

Այնուամենայնիվ, այդ լարված ժամանակաշրջանում՝ սկսած 1985 թվականից, Չորագյուղում շարունակվում է աճել երիտասարդ, գրագետ ու գործին նվիրված սերունդը: 1985 թվականի սկզբին ԳՍԳԿ-ի նախագահ Վոլոդյա Սարգսի Ղազարյանը ազատվում է աշխատանքից կենսաթոշակի անցնելու պատճառով: Նրա փոխարեն նշանակվում է Գագիկ Գառնիկի Մանուկյանը: 1985 թվականի ընթացքում կուսակցության շարքերն են ընդունվում պետական տնտեսության աշխատանքներում ներգրավված և սոցմրցումներում հաղթող հետևյալ ակտիվ երիտասարդները՝ Գագիկ Թելմանի Ոսկանյանը (անդամ), Գայանե Գենեկոյի Մուրադյանը (թեկնածու), Վանուշ Յուրդաբեկի Մուրադյանը (թեկնածու), Գագիկ Ավետիսի Ղազարյանը (անդամ), Էմմա Սարիբեկի Ավետիսյանը (թեկնածու), Ռոբերտ Գրիգորի Մահակյանը (անդամ), Աշոտ Խաչիկի Մնացականյանը (անդամ): Երիտասարդ և բարձրագույն կրթություն ունեցող Միշա Հայկի Գալստյանը 1985 թ. մայիսի 26-ին նշանակվում է պետական տնտեսության գլխավոր գյուղատնտես (նա ավարտել էր Երևանի պետական գյուղատնտեսական ինստիտուտի ագրոնոմիական ֆակուլտետի արտադրությունից կտրված բաժինը): 1985 թվականի ընթացքում երիտասարդ կոմունիստներից արտադրական կուսկազմակերպության ժողովներում ելույթներ են ունենում սկզբունքային հարցերի կապակցությամբ Գրիշա Բաղդասարի Մախմուրյանը (սպորտ մեթոդիստ), Վեգիր Գրիգորի Ավետիսյանը (գլխավոր անասնաբույժ), Խաչիկ Գարսևանի Բաղդասարյանը (անասնապահ), Սամվել Հայկի Գրիգորյանը (մեխանիզատոր), Էմմա Մաշայի Հակոբյանը (ծխախոտագործուհի), Արծրուն Գրիշայի Կարապետյանը, Միշա Հայկի Գալստյանը, Գագիկ Վոլոդյայի Ավետիսյանը: 1985 թ. արտադրական կուսակցական կազմակերպությունը հաշվետու ընտրական ժողովում նախորդ տարվա համեմատությամբ որպես նորություն բյուրոյի կազմում ընտրում է երիտասարդ և լավ աշխատող կոմունիստներ Վեգիր Գրիգորի Ավետիսյանն ու Էմմա Մաշայի Հակոբյանին: Ժողովը նաև Էմմա Մաշայի Հակոբյանին ընտրում է Մարտունու կուսաշրջանի 42-րդ կոնֆերանսի պատգամավոր: Բյուրոն առաջին քարտուղար է ընտրում Գերեմիկ Հայկի Գալստյանին՝ նրան ազատելով դիրեկտորի տեղակալի պաշտոնից:

¹³ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 71, թերթ 1-141:

Կուսակցական ժողովը արձանագրում է, որ Չորագյուղի պետական տնտեսությունը 11-րդ հնգամյակի սոցպարտավորությունների պլանային առաջադրանքները կատարել է 6 ամիս շուտ, այսինքն՝ չորս ու կես տարում:

Կամոյի «Դիպոլ» գործարանի Չորագյուղի արտադրամասը ունեցել է առաջավոր քանվորներ, որոնցով պարծեցել է արտադրամասը: Դրանք բաժանվում են տարբեր խմբերի ըստ իրենց տարիքի և կատարած աշխատանքի բնույթի:

I. 1986 թվականի տվյալներով՝ Կամոյի «Դիպոլ» գործարանի Չորագյուղի արտադրամասի լավագույն երիտասարդ աշխատողներից են եղել՝

- 1) Աբրահամյան Լաուրա Հովհաննեսի,
- 2) Ասատրյան Գեղանուշ Ալբերտի,
- 3) Ավետիսյան Գագիկ Մխիթարի,
- 4) Ավետիսյան Կիմա Գառնիկի,
- 5) Ավետիսյան Կիմա Սարիբեկի,
- 6) Ավետիսյան Սուսաննա Սարիբեկի,
- 7) Ավոյան Էմմա Պարզևի,
- 8) Բաղդասարյան Լուսիկ Սարգսի,
- 9) Գալստյան Երագիկ Հովհաննեսի,
- 10) Գալստյան Վերա Սիմոնի,
- 11) Գրիգորյան Անահիտ Արտավազի,
- 12) Գրիգորյան Թամարա Արտավազի,
- 13) Գալստյան Շողիկ Յուլիկի,
- 14) Գավթյան Վեներա Բեգեի,
- 15) Էլոյան Գուրգեն Կամսարի,
- 16) Խաչատրյան Գոհար Նարիբեկի,
- 17) Խլղաթյան Ջեմմա Ավետիքի,
- 18) Կարապետյան Օվսաննա Ասատուրի,
- 19) Կիրակոսյան Արևիկ Սարգսի,
- 20) Կիրակոսյան Չինար Գրիգորտ,
- 21) Կիրակոսյան Ռեհան Ռաշիդի,
- 22) Հակոբյան Բեգար Սանասարի,
- 23) Հակոբյան Գեղեցիկ Հովհաննեսի,
- 24) Հակոբյան Պեննիկ Մնացականի,
- 25) Հակոբյան Ռիտա Մամիկոնի,
- 26) Հարությունյան Արծվիկ Թորգոմի,
- 27) Հարությունյան Լաուրա Մխիթարի,
- 28) Դուկասյան Մանվել Օրդուխանի,
- 29) Մահլամյան Բեգար Հայկազի,
- 30) Մանուկյան Աշխեն Սելիմբեկի,
- 31) Մանուկյան Գոհար Կարապետի,
- 32) Մանուկյան Ֆաթիմա Վոլոդյայի,
- 33) Մանուկյան Օլյա Եղիազարի,
- 34) Մելքոնյան Անահիտ Մոլոտի,
- 35) Մելքոնյան Հրաչիկ Կնյազի,
- 36) Մելքոնյան Ռաֆիկ Ենոքի,
- 37) Մովսիսյան Նարգիզ Վաչագանի,
- 38) Շահնազարյան Լաուրա Նիկոլայի,
- 39) Շառոյան Սիրանուշ Նիկոլայի,
- 40) Պողոսյան Լիդա Ֆաթիբեկի,
- 41) Պողոսյան Ռիմա Շաքարդաղի,
- 42) Սահակյան Գագիկ Ավետիքի,
- 43) Սարգսյան Գուլիգար Հովհաննեսի,
- 44) Սարգսյան Հերիքնազ Ավետիքի,
- 45) Սարդարյան Ֆենիկ Բեգեի,
- 46) Սարոյան Անահիտ Թորգոմի,
- 47) Սարոյան Անահիտ Մերգեի,
- 48) Սարոյան Լաուրա Աբրահամի,
- 49) Սարոյան Հռիփսիկ Ապրեսի,
- 50) Սարոյան Ռաիսա Սանասարի,
- 51) Սաֆարյան Շամամ Աշոտի,
- 52) Սաֆարյան Սիրանուշ Շավարշի,
- 53) Ավետիսյան Աստղիկ Նիկոլայի,
- 54) Հովհաննիսյան Մարուսյա Ազնիվի,
- 55) Առաքելյան Մարիետա Հայկազի:

II. Երիտասարդների կողքին աշխատել են թոշակառու կանայք, որոնք նույնպես կատարել են իրենց պլանային առաջադրանքները:

- 1) Ավոյան Դեղձուն Գեղամի,
- 2) Արզումանյան Հրանուշ,
- 3) Հակոբյան Թամարա,
- 4) Դազարյան Լուսիկ,
- 5) Մալիամյան Գենիկ Հովհաննեսի,
- 6) Մանուկյան Նազան Սարիբեկի,
- 7) Մանուկյան Վարսենիկ,
- 8) Մովսիսյան Ելենա Գրիգորի,
- 9) Շահբազյան Եվգինե,
- 10) Գալստյան Գոհար Հովհաննեսի,
- 11) Պետրոսյան Օվսաննա Գրիգորի,
- 12) Սահակյան Բուրաստան Արամի,
- 13) Սարգսյան Գեղեցիկ Վանոյի,
- 14) Սարոյան Օֆիկ Հակոբի:

III Լավագույն այլ աշխատողներ, առանց որոնց արտադրամասը կանգ կառներ և վտանգի կենթարկվեր:

Ա. Հնոցապաններ

1. Ավետիսյան Արփա Ավետիքի,
2. Խլղաթյան Ժորա Արտուշի,
3. Մուրադյան Յուրդաբեկ Արզվի,
4. Քալոյան Հարազատ Միսակի:

Բ. Պահակներ, բեռնող-բեռնաթափողներ

1. Ավետիսյան Սարիբեկ Աղաբեկի,
2. Կարապետյան Ասքանազ Կարապետի,
3. Մանուկյան Գառնիկ Աբգարի,
4. Մանուկյան Սիրական Հարությունի,
5. Սարգսյան Հովհաննես Դավիթի,
6. Քալոյան Կամսար Զալիբեկի,
7. Քալոյան Սոսիս Միսակի:

1986 թվականից սկսվում է 12-րդ հնգամյակը: Չորագյուղի պետական տնտեսության 1986 թվականի կադրերը հիմնականում մնում են նույնը, ինչ որ եղել են 1985 թվականին: Միայն մի քանի փոփոխություններ են կատարվել: Այսպես՝ 1) Միշա Հայկի Գալստյանը հաստատվում է որպես գլխավոր գյուղատնտես, 2) Համլետ Բեգեի Սահարայանը՝ սելեկցիոն-անասնաբույժ, 3) Վեգիր Գրիգորի Ավետիսյանը՝ գլխավոր անասնաբույժ, 4) Հրահատ Բեգեի Սաֆարյանը՝ կովաբուծական ֆերմայի կառավարիչ: Դրանք բոլորն էլ ունեին մասնագիտական բարձրագույն կրթություն: Փաստորեն նոր նշանակված բարձրագույն կրթությամբ մասնագետների շնորհիվ պետական տնտեսության բարձրագույն կրթությամբ կադրերի թիվը հասնում է 11-ի: Սա արդեն մեծ նվաճում էր Չորագյուղի պետական տնտեսության համար, քանի որ Մերութան Հայկի Գալստյանից հետո պակասած բարձրագույն կրթությամբ կադրերի փոխարեն եկել լրացրել են բարձրագույն ուսումնական հաստատություններ նոր ավարտած կադրերը: Իսկ եթե դրանց կողքին ավելացնենք ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար Գագիկ Բալաբեկի Ումրչատյանին, ապա բարձրագույն կրթություն ունեցողների թիվը հասնում է 12-ի:

Նոր հնգամյակը նոր խանդավառություն է առաջ բերում հատկապես մեխանիզացիայի և ավտոտրանսպորտի բնագավառների աշխատողների մեջ: Արդեն պատմության արխիվ էին ուղարկվել կամը (հնագույն կալիքի սայր, արորը, ձեռքի գութանը, նույնիսկ 40-50-ական թվականների կալիքի մեքենան (МОЛОТИКА-ն) և ձեռքի գոտիչ մեքենան: Գրանց փոխարեն կյանքի են կոչվել թրքուրավոր ու անիվավոր տրակտորները, շարքացանները, կոլտիվատորները, կոմբայնները, էլեկտրագոտիչ մեքենաները: 12-րդ հնգամյակի սկզբին Չորագյուղի պետական տնտեսությունն ուներ 10 թրքուրավոր, 15 անիվավոր տրակտորներ, 3 կոմբայններ: Տնտեսությունն ուներ շուրջ 31 բեռնատար ավտոմեքենաներ: Մեխանիզացիան սկզբից ուներ բրիգադի, իսկ հետագայում՝ ինչպես բրիգադի, այնպես էլ գլխավոր ինժեներ մեխանիկ: Գլխավոր ինժեներ մեխանիկին էր ենթարկվում նաև ավտոտրանսպորտը: Ավտոտրանսպորտը ուներ իր պարկը, որն ուներ իր վարիչը: Ինչպես մեխանիզացիայի, այնպես էլ ավտոտրանսպորտի համար կար արհեստանոց: Արհեստանոցն ուներ իր վարիչը և վարպետները: Ինչպես մեխանիզացիան, այնպես էլ ավտոտրանսպորտը ունեցել են իրենց որակյալ աշխատողները՝ տրակտորիստները, կոմբայնավարները և ավտոմեքենաների վարորդները: Չորագյուղի տնտեսության մեջ թե՛ մեխանիզացիայի բրիգադը և թե՛ ավտոտրանսպորտի պարկը աստիճանաբար, երկարուժիգ տարիների ընթացքում են զորացել ու արմատավորվել: Տարբեր տարիներին աշխատող տրակտորիստների և ավտովարորդների ընդհանուր թիվը մեծ չափերի է հասնում: Հաշվվում են շուրջ 42 տրակտորիստներ և 69 ավտովարորդներ:

Թե՛ տրակտորը և թե՛ ավտոմեքենան սկսել են Չորագյուղ մուտք գործել նախապատերազմյան ժամանակաշրջանից: Առաջին տրակտորը մուտք է գործել 1932 թվականին: Այն եղել է «ԿՏ3» մակնիշի: Սկզբից մեկն էր: Մեկ ամիս հետո տրակտորների թիվը հասնում է 2-ի: Եվ այդպես աստիճանաբար ավելանում են: Առաջին տրակտորիստներն էին Չալիբեկ Գեղամի Գրիգորյանը, Հայկազ Բարսեղի Մինասյանը, Գրիգոր Կարապետի Սահակյանը, Անուշավան Բարսեղի Պողոսյանը, Ենոք Պետրոսի Մելքոնյանը, Մամիկոն Սիրակյանի Մարտիրոսյանը, Գառնիկ Իտյի Մանուկյանը, Ալվան Արսենի Աղեկյանը, Գյուլբա Մնացի Կիրակոսյանը:

Պատերազմից հետո տրակտորների թիվը համեմատաբար շատանում է: Առաջ են գալիս նոր տրակտորիստներ՝ Խորեն Գեղամի Գրիգորյանը, Ավետիք Մնացի Խղաթյանը, Սուրիկ Արսենի Աղեկյանը, Թեման (Իտալ) Սիրակյանի Ոսկանյանը, Մակեդոն Մանուկի Մովսիսյանը, Վրեժ Բրատի Մարգարյանը, Սահակ Գեղամի Աբրահամյանը, Աշոտ Վաղուշի Խղաթյանը, Գիմիտրի Սիրակյանի Ոսկանյանը, Մաշիկ Արշալի Հակոբյանը, Հենրիկ Վաղարշակի Կիրակոսյանը, Խաչիկ Գվիղոնի Մինասյանը, Նահապետ Հովհաննեսի Սաֆարյանը, Վրեժ Վաղուշի Խղաթյանը, Գառնիկ Անուշավանի Սաֆարյանը:

Վարդեն (Գրիշա) Չալիբեկի Գրիգորյանով սկսվել է ժամանակակից տրակտորիստների ասպարեզ գալը: Վարդենն իր աշխատանքային գործունեությունը սկսել է ռեկորդային ցուցանիշներով: Տարվա ընթացքում նա 800 հեկտարի փոխարեն վարել է 1500 հեկտար և տնտեսել շուրջ 3000 կիլոգրամ վառելանյութ՝ չտալով ոչ մի պարապուրդ: Նրա այդ փայլուն աշխատանքը արժանացել է խրախուսանքի, և 1985 թվականին նա ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր: Նրա սերնդակից տրակտորիստներն են եղել Հենգել Գյուլբաբի Կիրակոսյանը, Վանիկ Խաչիկի Մինասյանը, Վրեժ Խաչիկի Մինասյանը, Ռազմիկ Իվանի Հակոբյանը, Յուլակ Հայկազի Շամաստրյանը, Ժորա Գևորգի Հարոյանը, Գևորգ Վաղինակի Սողոյանը, Գագիկ Թեմանի Ոսկանյանը, Մամվել Գևորգի Բղեյանը, Գագիկ Սուրիկի Աղեկյանը, Ռազմիկ Խորենի Գրիգորյանը, Արմենակ Հայկազի Շամաստրյանը, Մամվել Հայկի Գրիգորյանը, Ժորա Հայկի Գրիգորյանը, Գագիկ Մանուկյանը, Արտակ Ոսկանյանը, Բարիս Ոսկանյանը:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում, երբ գյուղում մուտք է գործել կոմբայնը, վերոհիշյալ լավագույն տրակտորիստներից Մամիկոն Սիրակյանի Մարտիրոսյանը, Թեման (Իտալ) Սիրակյանի Ոսկանյանը, Մակեդոն Մանուկի Մովսիսյանը, Հենրիկ Վաղարշակի Կիրակոսյանը դառնում են կոմբայնավարներ:

Տարբեր ժամանակներում տրակտորային բրիգադի բրիգադի էր են աշխատել Չալիբեկ Գեղամի Գրիգորյանը, Խորեն Գեղամի Գրիգորյանը, Վարազդատ Վանոյի Սահրադյանը, Վոլոդյա Համբարձումի Պողոսյանը, Սալիբեկ Վոլոդյայի Սահրադյանը, Ավետիք Եղիշի Սահակյանը:

Առաջին ավտոմեքենան նույնպես Չորագյուղում մուտք է գործել 1932 թվականին: Այն եղել է ԴԱ3-ՄՄ մակնիշի: Ավտոմեքենան Երևանից Չորագյուղ է բերել, ինչպես նշվել է նախորդ շարադրանքում, երևանցի ավտովարորդ Ծեբունը: Երկու օր հետո մեքենան հանձնում են գյուղի առաջին վարորդ Գրիգոր Ասատուրի Կիրակոսյանին: Երբ սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, մեքենան ուղարկվում է կարմիր բանակին: Պատերազմից հետո գյուղը նոր մեքենա է ստանում: Այն «Ֆորդ» մակնիշի ամերիկյան մի հզոր մեքենա էր: Այդ մեքենան Երևանից գյուղ է բերել բանակում ավտովարորդի իրավունք ստացած Մամիկոն Սիրակյանի Մարտիրոսյանը: Ավտոմեքենան երկար ժամանակ ծառայել է Չորագյուղին: Մամիկոն Մարտիրոսյանից հետո մեքենան վարել է երևանցի Պողոս ամուսնով մի վարորդ, որին Չորագյուղում անվանել են «ուստա Պողոս»:

1946 թվականին գյուղը ստանում է ԴԱ3-51 մակնիշի ավտոմեքենա, որի վարորդն էր Մամիկոն Սիրակյանի Մարտիրոսյանը: Գրանից հետո գյուղը ստանում է տարբեր մակնիշի ավտոմեքենաներ, և սկսվում է Մամիկոն Մարտիրոսյանին հաջորդող ձորագյուղի ավտովարորդների ասպարեզ գալը: Մամիկոն Մարտիրոսյանին սերնդակից ավտովարորդներն են՝ Եղիշազար Մարգարի Մանուկյանը, Բարդիկ Բրատի Մարգարյանը, Հայկազ Մարգարի

Մալիամյանը, Խաչիկ Համազարի Խղաթյանը, Մնաց Ռուշանի Մանուկյանը, Վաղինակ Ստեփանի Մելքոնյանը, Վուրդյա Ռուշանի Մանուկյանը, Սյուսիկ Միսակի Քալոյանը, Ջանիբեկ Պարսամի Ասատրյանը, Խանաթուր Գևորգի Շառոյանը, Մոլոտ Սիրականի Մանուկյանը, Արշակ Հայկոյի Արահամյանը:

Ավագ այս սերնդի փորձն ու հմտությունը գյուղի կոլտնտեսության աշխատանքներին ընթացքում փոխանցվում են երիտասարդներին, որոնք ստանալով նաև համապատասխան մասնագիտական կրթություն՝ դառնում են ավելի բարձր որակի վարորդներ: Դրանք են՝ Սոյբաթ Գրիգորի Աբրահամյանը, Խորեն Խաչատուրի Աղեկյանը, Վեսմիր Պարսամի Ասատրյանը, Վրեժ Երեմի Գրիգորյանը, Հարազատ Հայրիկի Սինասյանը, Վաղինակ Սարիբեկի Սողոյանը, Մոլոտ Նիկոլայի Սարգսյանը, Ռաֆիկ Ենոքի Մելքոնյանը, Գագիկ Արամի Շահնազարյանը, Համբարձում Յուլակի Գրիգորյանը, Հրաչիկ Սիրականի Մնացականյանը, Հայկ Մամիկոնի Մարտիրոսյանը, Հակոբ Մեխակի Հակոբյանը, Մյասնիկ Համազարի Խղաթյանը, Հարազատ Միսակի Քալոյանը, Ժորա Կնյազի Ավետիսյանը, Դերենիկ Համբարձումի Ղազարյանը, Ռաֆիկ Արտեմի Կիրակոսյանը, Գառնիկ Հայրիկի Գալստյանը, Գառնիկ (Մոլոտ) Միսակի Քալոյանը, Արմենակ Սուրենի Սահակյանը, Վուրդյա Յուլակի Գալստյանը, Սարգիս Յուլակի Գալստյանը, Ժորա Գևորգի Ջոհրաբյանը, Համլետ Անուշավանի Պողոսյանը, Սամվել Հայկի Գրիգորյանը:

Եթե առաջին երկու խմբերին պատկանող վարորդները հիմնականում ունեին յոթնամյա կրթություն, ապա վարորդների հաջորդ սերունդն ուներ միջնակարգ կրթություն և դպրոցում սովորելիս աշխատանքի ուսուցման դասաժամերի ընթացքում ծանոթացել էր մեխանիզացիայի ու ավտոտրանսպորտի հիմունքներին, իսկ սովետական բանակ մեկնելուց առաջ էլ պարտադիր կարգով սովորել ու ավարտել էր շրջանի զինկոմիսարիատի կողմից բացված ավտոդպրոցը: Բանակում էլ նրանք իրենց ծառայությունը անցկացրել են ավտոտրանսպորտի հետ կապված և ձեռք բերել պրակտիկ հմտություն: Այդ սերնդին են պատկանում՝ Աշոտ Նիկոլայի Սարգսյանը, Գառնիկ Եղիազարի Մանուկյանը, Գուրգեն Վարազդատի Հակոբյանը, Յուրիկ Վարազդատի Ասոյանը, Բաբկեն Աղախանի Ջաքարյանը, Օրդուխան Աղախանի Ջաքարյանը, Մերուժան Աղախանի Ջաքարյանը, Գնել Վաղինակի Սողոյանը, Միշա Մնացի Դավթյանը, Նվեր Սուսիկի Սողոյանը, Սարուխան Աղախանի Ջաքարյանը, Սեդր Մոլոտի Սարգսյանը, Յուլակ Հայկազի Շամասուրյանը, Արմենակ Հայկազի Շամասուրյանը, Ռադիկ Համբարձումի Գրիգորյանը, Մելիք Մոլոտի Սարգսյանը, Վիրաթ Նարիբեկի Աբրահամյանը, Սերոբ Մնացի Տոնոյանը, Հայկ Սարիբեկի Սարգսյանը, Արայիկ Ավետիքի Ղազարյանը, Վարդան Ավետիքի Ղազարյանը, Գուրգեն Մամիկոնի Մարտիրոսյանը, Սուրեն Մամիկոնի Մարտիրոսյանը, Մամիկոն Ավետիքի Ղազարյանը, Գուրգեն Սուսիկի Քալոյանը, Արծվիկ Արտեմի Կիրա-

կոսյանը, Սաղաթել Սարոյի Մուրադյանը, Արտավազ Յուլակի Գալստյանը, Սամվել Յուլակի Գալստյանը, Մանվել Յուլակի Գալստյանը, Ռազմիկ Խորենի Գրիգորյանը, Ռադիկ Խորենի Գրիգորյանը, Սամվել Գևորգի Բղեյանը, Օթար Գառնիկի Ավետիսյանը, Սարգսյան Եղիբեկ Վանուշի:

Տարբեր ժամանակներում գլխավոր ինժեներ մեխանիկ են աշխատել Ավետիք Մնացի Խղաթյանը, Ժորա Հայկի Գրիգորյանը, Սարիբեկ Վուրդյայի Սահրադյանը, Արա Աշոտի Մովսիսյանը:

Արհեստանոցի վարիչ է աշխատել Խորեն Գեղամի Գրիգորյանը: Նա լինելով լավ մասնագետ, հիանալի ձևով է կազմակերպել արհեստանոցի աշխատանքները, ժամանակին վերանորոգել տվել մեխանիզացիայի ջարդված մասերը: Նա կարողացել է այդ գործերը հաջող կազմակերպել արհեստանոցում աշխատող ընտիր վարպետներ (դաբբիմներ) Հակոբ Սիրականի Մարտիրոսյանի, Աշոտ Միսակի Դուկասյանի, Սարգիս Հայկազի Տոնեյանի, Էլեկտրատեղակցող Ջավեն (Մեղրակ) Վանոյի Սաֆարյանի, Էլեկտրիկ Միշա Գևորգի Սիերյանի հմուտ աշխատանքի շնորհիվ:

Մշտապես ավտոտրանսպորտի վարիչ է եղել աշխատանքի հմուտ կազմակերպիչ Վրեժ Աբգարի Ջաքարյանը:

Ձորագյուղի պետական տնտեսությունը¹⁴ 1986 թվականին ստանձնում է հետևյալ սոցալարտավորությունները՝ մեկ հեկտարից ստանալ 21ց հացահատիկ, 180 ց կարտոֆիլ, 26,2 ց ծխախոտ, 270 ց բանջարեղեն, 31 ց պտուղ, կոտակել 2120 տոննա խոտ, 2330 տոննա սիլոս, 1240 տոննա սենած, 420 տոննա ծղոտ, մեկ կովի կաթնատվությունը հասցնել 1800 կիլոգրամի, 100 կովից ստանալ 82 հորթ, 100 մայր ոչխարից՝ 87 գառ, պետությանը վաճառել 6800 ց կաթ, 1400 ց միս, մասմբերման հանձնվող խոշորի կենդանի քաշը հասցնել 350 կիլոգրամի, արտադրել 88 ց բուրդ, մեկ ոչխարից ստանալ 2,25 կիլոգրամ բուրդ:

Տարեվերջին ամփոփելով ստանձնած պետալարտավորությունների արդյունքները՝ պարզվում է, որ տնտեսությունը ոչ միայն կատարել, այլև գերակատարել է դաշտավարության բնագավառի առաջադրանքները: Այսպես՝ հացահատիկի արտադրական պլանը կատարել է 117 %-ով, կարտոֆիլինը՝ 126 %-ով, ծխախոտինը՝ 120 %-ով, 106 %-ով կատարվել են խոտի, սիլոսի, սենածի և ծղոտի կուտակման առաջադրանքները, տնտեսությունում առաջին անգամ 144 %-ով կատարվել է կերի ճակնդեղի պլանային առաջադրանքը, եթե I, II և VI բրիգադները լավ աշխատեին, ապա կկատարվեր նաև կորնզանի սերմացուի պլանային առաջադրանքը: Անասնապահության բնագավառը նույնպես արդարացրել է իրեն, և կատարվել են անասնապահության հետ կապված բոլոր տեսակի առաջադրանքները: Անթերի է կատարվել պետության վաճառքի բոլոր տեսակի պլանները: Թերությունը եղել է հատկապես այն, որ խոտի որոշ մասը թաց

¹⁴ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 73, թերթ 1-62:

վիճակում է դիզայունկա բերվել, որը ձմռանը փտել է և դարձել անօգտորժելի:

1986 թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները, որոնք ներկայացված են «Труд» թերթի 1987 թվականի ապրիլի 3-ի համալրված լույս տեսած «Իսկ ի՞նչ է ճակատային մասի հետևում» հոդվածում, Մարտունու կուսընկերության 1987 թ. ապրիլի 21-ի պլենումի որոշման և 1987 թ. ապրիլի 30-ի կուսընկերության բյուրոյի որոշման մեջ, տեղեկացնում են, որ պետական տնտեսությունում տարիներ շարունակ գոյություն են ունեցել անօրինականություններ, որոնց պատճառով տնտեսության վնասները բավականին մեծ տոկոս են կազմել, իսկ կուսակցական ժողովներում դիրեկտորի քննադատումով հաշվապահը միշտ գեկուցել է, թե պետական տնտեսությունը աշխատում է օգուտով:

12-րդ հնգամյակի սկզբից, այսինքն՝ 1986 թվականից Ձորագյուղի արտադրական կուսակցական ու կոմերիտական կազմակերպությունները մեծ ուշադրություն են դարձրել պետական տնտեսության աշխատանքներում ներգրավված, կրթված ու ակտիվ երիտասարդների վրա: Նրանց ներգրավել են քաղաքացու խմբակներում և հասարակական աշխատանքներում: Նրանցից ուսման ծարավ երիտասարդներին, ովքեր բանակում լավ են ծառայել, ուղեգրերով գործուղել են բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու, շարունակել են արտադրության առաջավորներին ընդունել կուսակցության շարքեր: Այսպես, 1986 թվականին կուսակցության շարքեր են ընդունվել Գնել Ազնիվի Գալստյանը (թեկնածու), Գուրգեն Ծնավոնի Մուրադյանը (թեկնածու), Վանուշ Յուրդաբեկի Մուրադյանը (անդամ), Գայանե Դենեկոյի Մուրադյանը (անդամ), Լալա Աշոտի Խղաթյանը (անդամ), Էմմա Սարիբեկի Ավետիսյանը (անդամ), Ավետիք Ռուշանի Մանուկյանը (թեկնածու), Գնել Հրաչիկի Սարգսյանը (անդամ):

Լավագույն երիտասարդները կուսակցական ու կոմերիտական կազմակերպությունների կողմից գնահատվելու, վստահության արժանանալու հիանալի փաստ է այն, որ այդպիսի երիտասարդները ներգրավվել են ազիտկոլեկտիվի կազմում, դարձել ազիտատորներ: Շուրջ 35-ի է հասնում այդպիսի երիտասարդների թիվը, որոնք դարձել են 1986 թվականին տեղի ունեցող ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունների կազմակերպման ու անցկացման ազիտատորները: Դրանք են՝

1) Դոնարա Մակեդոնի Պետրոսյանը, 2) Վեգիբ Գրիգորի Ավետիսյանը, 3) Համլետ Բեգեի Սահրադյանը, 4) Սարիբեկ Վոլոդյայի Սահրադյանը, 5) Ավետիք Ազնիվի Գալստյանը, 6) Մամիկոն (Համլետ) Հայկազի Սիերյանը, 7) Գայանե Դենեկոյի Մուրադյանը, 8) Միշա Կարգանովի Սաֆարյանը, 9) Գուրգեն Ծնավոնի Մուրադյանը, 10) Համլետ Նիկոլայի Սարգսյանը, 11) Վարագդատ Արտաշի Պողոսյանը, 12) Նվեր Գյուլաբի Սկրտչյանը, 13) Գագիկ Բալաբեկի Ումրշատյանը, 14) Գրիշա Բաղդասարի Մախմուրյանը, 15) Յուրիկ Աղիբեկի Պողոսյանը, 16) Գագիկ Ավետիքի Գալստյանը,

17) Համլետ Կարապետի Ավետիսյանը, 18) Գագիկ Թեմանի Ոսկանյանը, 19) Բարուխան Աղախանի Չաբարյանը, 20) Յուրիկ Վարագդատի Ասոյանը, 21) Վանուշ Յուրդաբեկի Մուրադյանը, 22) Էդվարդ Արամի Սահակյանը, 23) Վահան Խաչիկի Մինասյանը, 24) Աշոտ Խաչիկի Մնացականյանը, 25) Էմմա Սաշայի Հակոբյանը, 26) Էմմա Սարիբեկի Ավետիսյանը, 27) Աշոտ Նիկոլայի Սարգսյանը, 28) Մամվել Հայկի Գրիգորյանը, 29) Արծրուն Գրիշայի Կարապետյանը, 30) Միշա Հայկի Գալստյանը, 31) Հրահատ Բեգլարի Սաֆարյանը, 32) Ավետիք Ռուշանի Մանուկյանը, 33) Ռուստամ Շալիկոյի Խղաթյանը, 34) Արա Աշոտի Մովսիսյանը, 35) Ռոբերտ Գրիգորի Սահակյանը, 36) Ֆեդյա Գագիկի Մանուկյանը, 37) Ռադիկ Կալինոսի Սարդարյանը, 38) Մարգարետ Կարապետի Ավետիսյանը, 39) Ռուդիկ Կալինոսի Սարդարյանը, 40) Ռոմիկ Կալինոսի Սարդարյանը, 41) Հակոբ Նիկոլայի Սարգսյանը, 42) Մամվել Վոլոդյայի Դազարյանը, 43) Գագիկ Խորենի Գրիգորյանը, 44) Ռաֆիկ Խորենի Գրիգորյանը, 45) Ազնիվ Հայկազի Տոնեյանը:

Երիտասարդ այս ազիտատորների մեջ գերիշխում էին բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողները: Այդ երիտասարդների մեծ մասը կուսակցականներ էին: Այդ ընտիր երիտասարդներից մեկը՝ հարվածային տրակտորիստ Վարդգես (Գրիշա) Չալիբեկի Գրիգորյանը, հենց 1986 թվականի այդ ընտրությունների ժամանակ ընտրվում է ՀՍՄՀ Գերագույն խորհրդի դեպուտատ:

1986 թ. նոյեմբերի 23-ին Ձորագյուղի արտադրական կուսակցական կոմերիտային ժողովը, որին մասնակցում էին 58 կուսակցականներ, Մարտունու շրջանի կուսընկերության և դատախազության գրությունների համաձայն քննում է պետական տնտեսության դիրեկտոր Հրաչիկ Հովհաննեսի Խաչատրյանի վարքագծի հարցը՝ կապված նրա կողմից գյուղի երիտասարդներից մի քանիսին տարբեր ժամանակներում կոպտորեն վիրավորելու հետ: Ժողովում Ձորագյուղի արտադրական ԼԿԵՄ կազմակերպության նախկին քարտուղար Ռուսրեկ Լևոնի Ավոյանն իր ելույթում առաջարկում է նրան անմիջապես հրաժարվել աշխատանքից և հեռանալ գյուղից: Ռուսրեկ Ավոյանի առաջարկը պաշտպանում են բազմաթիվ կոմունիստներ, այդ թվում երիտասարդ կոմունիստ Էմմա Սաշայի Հակոբյանը: Սակայն կուսակցական ժողովը հաշվի առնելով, որ Հրաչիկ Խաչատրյանը 1984 թվականից ուներ կուսակցական նկատողություն Մարտունու կուսընկերության բյուրոյի կողմից, որը դեռ չէր վերացրել, բավարարվում է հարցի քննարկումով:

1987 թվականի դեկտեմբեր կադրերը հիմնականում մնում են նույնը, ինչպես կային 1986 թվականին,¹⁵ բացի մեկից՝ Սարիբեկ Վոլոդյայի Սահրադյանից, որը նշանակում է գլխավոր ինժեներ մեխանիկ՝ Ժորա Հայկի Գրիգորյանի փոխարեն: Սակայն դա կարճ է տևում, շուտով Ժորա Գրիգորյանը վերականգնվում է իր աշխատանքին, իսկ Սարիբեկ Սահրադյանը նշանակվում է տրակտորային բրիգադի բրիգադիր (նա ուներ բարձրագույն

¹⁵ ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 75, թերթ 1-47:

կրթություն՝ ավարտել էր Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի մե-
նիզացիայի ֆակուլտետը): Փաստորեն, ի դեմս Մարիբեկ Սահրայյան
պետական տնտեսության բարձրագույն կրթությամբ ղեկավար կադր-
քիվը հասնում է 13-ի:

1987 թվականին Չորագյուղի պետական տնտեսությունը քննարկում է
«Սոցիալիստական ձեռնարկությունների (միավորումների) մասին» օրենքը,
որը նախատեսում էր կամ պահպանել պետական տնտեսության գոյություն
ունեցող աշխատանքային ձևը, բայց անցնել տնտեսաշվարկային կամ ինք-
նաֆինանսավորման սխեմային, այսինքն՝ ծախսերը իր միջոցներով ծած-
կելուն, կամ թե անցում աշխատանքի կազմակերպման մասնավոր կամ կո-
լեկտիվ կապալային սխեմային, որը նույնպես նախատեսում էր իր միջոց-
ներով ծածկել իր ծախսերը, այլ ոչ թե պետության ֆինանսավորման միջոց-
ով: Փաստորեն պետությունը հրաժարվում է ֆինանսավորել գյուղատնտե-
սությանը, պետական ձեռնարկություններին, միավորումներին: Աշխատա-
վորների շահագրգռությունը բարձրացնելու, դեմոկրատիան արմատավորե-
լու, աշխատավորության իրավունքներն իր տնտեսության նկատմամբ
բարձրացնելու, մրցույթի ճանապարհով շատ եկամտունեք ստանալու և այդ
եկամտունեքից ազատ կերպով օգտվելու նպատակով թույլ է տվել աշխա-
տավորներն իրենք վարեն իրենց տնտեսությունը, իրենք իրենց աշխա-
տանքով ստանան շատ եկամտունեք և իրենք իրենց վրա բաշխեն այդ եկա-
մտունեքը՝ ծախսերը հոգալուց հետո: Չորագյուղի պետական տնտեսու-
թյունը հավանություն է տալիս աշխատանքի կազմակերպման առաջին
ձևին՝ պահպանել պետական տնտեսության գործող ձևը, բայց անցնել ինք-
նաֆինանսավորման, այսինքն՝ իրենք իրենց եկամտունեքի միջոցով փակե-
ն իրենց ծախսերը: Փորձնական կարգով նրանք այդպես են կազմակերպում
իրենց աշխատանքները մինչև պետության պահանջով նոր օրենքին անց-
նելը:

1987 թվականին սոցալարտավորություններ են ստանձնում պետական
տնտեսության առանձին ճյուղերը, առանձին բրիգադները, նույնիսկ
անհատ մարդիկ և նրանք էլ պետք է տարեվերջին արդյունքները ամփոփե-
լիս ստանային իրենց կատարման դիմաց խրախուսանքները՝ հավելյա-
վճարները: Տնտեսության դաշտավարական N 5 բրիգադը (բրիգադի
Գառնիկ Արզումանյան) պարտավորվում է մեկ հեկտարից ստանալ
38 ցենտներ ծխախոտ, կուտակել 440 տոննա խոտ, 350 տոննա սիլոս,
220 տոննա սենած, 80 տոննա ծղոտ: Գաշտավարական N 2 բրիգադը
(բրիգադի՝ Ադախան Չաքարյան) պարտավորվում է մեկ հեկտարից
ստանալ 280 ց կարտոֆիլ: Հովիվ Գուրգեն Շամվոնի Մուրադյանը պարտա-
վորվում է իր խնամած հոտի 100 մայր ոչխարից ստանալ 90 գառ, մեկ ոչ-
խարի կաթնատվությունը հասցնել 45 կիլոգրամի, իսկ մեկ ոչխարի բրդա-
տվությունը՝ 2,5 կիլոգրամի: ՀՍՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատ, ան-
վանի տրակտորիստ Վարդգես (Գրիշա) Չալիբեկի Գրիգորյանը պարտա-

վորվում է իր օրվա պլանային առաջադրանքը կատարել 120-140 %-ով,
ստարվա ընթացքում տնտեսել 1200 կգ վառելանյութ: Պետական տնտեսու-
թյան դիրեկտոր Հրաչիկ Խաչատրյանը կոչ է անում կովկիթներին և նախ-
ապաններին՝ մեկ կովից տարվա ընթացքում ստանալ 3000 կգ կաթ, ինչպես
վարվում են հանրապետության առաջավոր տնտեսությունների անասնա-
պահները: Նա առաջարկում է վերանորոգել մեխանիզացիան, նախա-
պատրաստել սերմացուները, ժամանակին դաշտերը պարարտացնել բնա-
կան պարարտանյութերով, մաքրել դաշտերի քարերը, սկսել ծխախոտի
ջերմոցների վերանորոգումը, որպեսզի կազմ ու պատրաստ դիմավորենք
գարանան գյուղատնտեսական աշխատանքներին:

Տնտեսությունում աշխատող երիտասարդությանը խրախուսելու
նպատակով նրանցից ավելի կազմակերպվածներին ընդունում են կուսակ-
ցության շարքերը: Այդպիսի երիտասարդներից Արա Աշոտի Մովսիսյանին,
Գևորգ Վաղինակի Սողոյանին և Ժիրայր Սերոբյանի Հակոբյանին ընդու-
նում են կուսակցության շարքերը՝ որպես թեկնածու, իսկ Վարդան Մելիքս-
եթի Սաֆարյանին, Գնել Ազնիվի Գալստյանին, Գուրգեն Շամվոնի Մու-
րադյանին, Լալա Աշոտի Խղաթյանին, Գայանե Արտավազի Գրիգորյա-
նին, Ավետիք Ռուշանի Մանուկյանին կուսթեկնածուից փոխադրում են կուս-
անդամ: Նրանք բոլորն էլ, բացի Ավետիք Ռուշանի Մանուկյանից, որը ուներ
բարձրագույն կրթություն և աշխատում էր որպես երկրորդ գյուղատնտես,
ունեին միջնակարգ և միջնակարգ մասնագիտական կրթություն:

Ժողովներում ելույթ են ունենում բարձրագույն կրթություն ունեցող
Գառնիկ Ավետիքի Սահակյանը, որը մասնագիտությամբ անասնաբույժ էր
և աշխատում էր ֆերմայում որպես կրտսեր անասնաբույժ, Միշա Հակոբի
Աղեկյանը, որը աշխատում էր որպես հրշեջ հրահանգիչ, Ն. Մովսիսյանը,
որը աշխատում էր որպես հաշվապահի օգնական: Փաստորեն, ի դեմս
Ավետիք Ռուշանի Մանուկյանի և Գառնիկ Ավետիքի Սահակյանի, տնտե-
սությունում աշխատող բարձրագույն կրթություն ունեցողների թիվը հասնում
է 14-ի:

1987 թ. ապրիլի 30-ին Մարտունու կուսըջկոմի բյուրոն, հաշվի առնե-
լով, որ 1987 թվականի ապրիլի 3-ին «Труд» թերթում լույս տեսած «Իսկ ի՞նչ
է ճակատային մասի հետևում» հոդվածի նյութը ամբողջովին ճիշտ է, Հրա-
չիկ Հովհաննեսի Խաչատրյանին ազատում է աշխատանքից և նրա փոխա-
րեն նշանակում գյուղատնտեսական բարձրագույն կրթություն ունեցող
Գագիկ Գառնիկի Մանուկյանին, որը մինչ այդ աշխատում էր որպես
ԳՍԳԿ-ի նախագահ: Նրա փոխարեն ԳՍԳԿ-ի նախագահ է նշանակվում
բարձրագույն կրթություն ունեցող Բորիս Մանասարի Հակոբյանը (նա
ավարտել էր Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական
ֆակուլտետի արտադրությունից կտրված բաժինը և ստացել շինարար
ինժեների որակավորում):

Պետական տնտեսության երիտասարդ դիրեկտոր Գագիկ Գառնի՝ Մանուկյանն իր աշխատանքները սկսում է տնտեսությունում տեղ գտնվող անօրինականությունների ու սխալների շտկումով: Հանուն դրա նա իր աշխատանքի անցնելու հենց առաջին ժողովում քննարկման է դնում. «Հեռու Մարտունու շրջկոմի բյուրոյի 1987 թվականի ապրիլի 30-ի նիստի որոշման մասնաշաղկապումը, 1987 թ. բերքահավաքի նախապատրաստական աշխատանքների դրվածքը և կոմունիստների հետագա անելիքները» հարցը: Ժողովում ելույթ ունեցողներ Վարազդատ Սահրադյանը, Բաբուխան Զաքարյանը, Ժորա Գրիգորյանը, Հայկազ Աղեկյանը, Գրիշա Կարապետյանը, Գառնիկ Արզումանյանը, Միշա Աղեկյանը, Միշա Գալստյանը կոչ են անում կազմակերպված բնույթ տալ բերքահավաքի աշխատանքներին, որպեսզի պատվով կատարվեն ստանձնած առաջադրանքները:

Տարեվերջին ամփոփելով սոցպարտավորությունների արդյունքները պարզվում է, որ տնտեսությունը 1987 թվականը փակել է բարձր ցուցանիշներով, իսկ կարտոֆիլի արտադրությամբ ամենաբարձրն է շրջանում:

Ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները ցույց են տալիս, որ տնտեսությունը ոչ միայն պարտք չունի պետությանը, այլև իր հաշվին բավականին գումար ունի, այսինքն՝ տնտեսությունը տարին փակել է օգուտով:

1988 թվականին պետական տնտեսության ղեկավար կադրերը հիմնականում մնում են նույնը, բացի մի քանիսից, որոնք նոր են նշանակվում: Դրանք են՝ 1) Գագիկ Շալիկոյի Խլղաթյանը, որն ուներ մասնագիտական բարձրագույն կրթություն (ավարտել էր անասնաբուժական – անասնաբուժական ինստիտուտի անասնաբուժական ֆակուլտետի արտադրությունից կտրված բաժինը), նշանակվում է ոչխարաբուծական բրիգադի բրիգադիր և տոհմային հաշվառիչ, 2) Միշա Հակոբի Աղեկյանը, որը նշանակվում է հրշեջ տեսուչ, 3) Ուսուրեկ Լևոնի Ավոյանը, որը նշանակվում է դաշտավարական N 6 բրիգադի բրիգադիր, 4) Վուրդյա Բենիամինի Խաչատրյանը, որը նշանակվում է հիդրոմելիորատոր, 5) Արծրուն Գրիշայի Կարապետյանը, որը նշանակվում է գլխավոր հաշվապահ, 6) Գայանե Արտավազյի Գրիգորյանը, որը հեռակա կարգով սովորում էր Երևանի պետական համալսարանում, նշանակվում է ծխախոտի հարվածային օդակավար, 7) Աշոտ Խաչիկի Մնացականյանը, որն ուներ բարձրագույն կրթություն (ավարտել էր Երևանի ֆիզկուլտուրայի պետական ինստիտուտը), նշանակվում է որպես կադրերի տեսուչ: Փաստորեն, ի դեմս Գագիկ Շալիկոյի Խլղաթյանի, Արծրուն Գրիշայի Կարապետյանի պետական տնտեսությունում ավելանում է բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող ղեկավար կադրերի թիվը և հասնում 16-ի:

1988 թվականին տնտեսությունը¹⁶ ստանձնում է հետևյալ սոցպարտավորությունները՝ 1) մեկ հեկտարից ստանալ 22 գ հացահատիկ, 220 գ կարտոֆիլ,

30 գ ծխախոտ, 300 գ բանջարեղեն, 60 գ պտուղ, կուտակել 1950 տոննա խոտ, 1960 տոննա սիրս, 1200 տոննա սենած, 300 տոննա ծղոտ, մեկ կովի կաթնատվությունը հասցնել 1960 կիլոգրամի, 100 կովից ստանալ և սրահպանել 82 հորթ, 100 մայր ոչխարից՝ 90 գառ, պետությանը վաճառել 8140 գ կաթ, 1490 գ միս, մսի հանձնվող խաշորի քաշը հասցնել 350 կիլոգրամի:

Վերակառուցմանը հետևելով՝ 1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (ԼՂԻՄ) խորհրդի նստաշրջանը որոշում է ընդունում՝ դիմել Ադրբեջանի, Հայաստանի և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին Ադրբեջանի կազմից դուրս գալու և Հայաստանի կազմի մեջ մտնելու մասին:

1988 թ. փետրվարի 21-ին ԽՍՀՄ ԿԿ քաղբյուրոն հապշտապ և միտումնավոր որոշում է ընդունում, որը արգախահայության ազատագրական շարժումը որակում է որպես «մայրահեղական» շարժում: Հետագայում Մոսկվան, սերտորեն համագործակցելով Ադրբեջանի իշխանությունների հետ, հետևողական պայքար է տանում այդ շարժման դեմ:

1988 թ. փետրվարին Հայաստանում ստեղծվեց շարժման կազմկոմիտե, իսկ մարտի սկզբին՝ «Ղարաբաղ» կոմիտե, որը ղեկավարում էր բազմահազարանոց ցույցերն ու միտինգները:

ԽՍՀՄ կենտրոնական մարմինները և ադրբեջանական իշխանությունները համոզվելով, որ քաղաքական միջոցներով հնարավոր չէ կասեցնել հայերի օրըստօրե ծավալվող ազատագրական շարժումը, որոշում են ոտնահարել համամարդկային իրավունքի բոլոր չափանիշները և հայկական շարժմանը հակադրել բիրտ ուժն ու բռնությունը:

1988 թ. փետրվարի 27–29-ին իշխանությունների հովանավորությամբ Բաքվից 35 կմ հեռավորության վրա գտնվող Սունգախի քաղաքում կազմակերպվում է հայ ազգաբնակչության կոտորած, որին զոհ են գնում 27 մարդ, հարյուրավորները խոշտանգվում են, ծանր վերքեր ստանում, իսկ 3000-ը կորցնելով իրենց բնակարաններն ու ունեցվածքը, հրաշքով փրկվելով սպանոցից, կարողանում են փախչել Արցախ ու Հայաստան:

Սունգախի ողբերգությունից հետո՝ 1988 թ. մարտից Արցախում ու Հայաստանում նոր թափով են ծավալվում հանրահավաքներն ու գործադուլները:

Ձորագյուղի արտադրական կուսակցական կազմակերպության ժողովը, որին մասնակցում են 57 կուսակցականներ, իր համերաշխությունն է արտահայտում Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի նկատմամբ, բայց իր անհամաձայնությունն է արտահայտում այդ կապակցությամբ Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում, մասնավորապես քաղաքամայր Երևանում կազմակերպվող գործադուլների կապակցությամբ, որովհետև դրանով կքայքայվեր ինչպես Լեռնային Ղարաբաղի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության տնտեսությունը և հնարավոր չի լինի արդարացի պայքարը տանել մինչև վերջ:

¹⁶ ՀՀ ԼՂԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 76, թերթ 1–55:

1988 թվականի սոցալարտավորություններ ստանձնած աշխատող ձորագյուղացիները ավելի մեծ եռանդով ու մեծ թափով են սկսում նախապատրաստվել գարնան գյուղատնտեսական աշխատանքներին:

Սոցալարտավորությունների հաջող կատարման գործում հսկայական դեր ունենին երիտասարդները: Նրանցից ավելի կազմակերպվածներին աշխատանքին նվիրվածներին խրախուսելու նպատակով ընդունում են կուսակցության շարքերը: Այդ երիտասարդներից Ռուզաննա Գառնիկի Մյունասյանը, Հրահատ Բեգեի Սաֆարյանը ընդունվում են կուսակցության շարքերը՝ որպես թեկնածուներ, իսկ Արա Աշոտի Մովսիսյանը, Գևորգ Վաղինակի Սողոյանը, Ժիրայր Սերյոժայի Հակոբյանը, Գայանե Արտավազդի Գրիգորյանը՝ որպես կուսանդամներ:

ՀԿԿ Մարտունու շրջկոմի բյուրոյի որոշման համաձայն՝ մայիսի 18-ին Ձորագյուղի արտադրական կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովում, որին մասնակցում էին 71 անդամ-թեկնածուներ, քննվում է պետական տնտեսության նախկին ղեկավար Հրաչիկ Հովհաննեսի Խաչատրյանի վարքագիծը, որ նա չի ենթարկվում շրջկոմի բյուրոյի որոշումներին, մի ամբողջ տարի թափառում է առանց աշխատանքի և զբաղվում է անհիմն դիմում-բողոքներով՝ վարքաբեկելով շրջանի ու հանրապետության կուսակցական ղեկավարներին: Ձորագյուղի արտադրական կուսակցական կուսակցության քարտուղար Դերենիկ Գալստյանը նրան ներկայացնում է որպես կոմունիստ ղեկավարին անվայել վարքագիծ դրսևորողի, աշխատողների նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերողի, աշխատանքի ընթացքում անօրինականություններ թույլ տվողի: Այդ բոլորի համար կուսակցական կուսակցության քարտուղարը առաջարկում է նրան անել գրավոր խիստ նկատողություն գրանցելով կուսակցական հաշվառման քարտում: Այդ առաջարկությունը պաշտպանում են Միլոտ Նիկողայի Սարգսյանը, Էմմա Մաշիկի Հակոբյանը, Գագիկ Գառնիկի Մանուկյանը, Գառնիկ Հակոբի Արզումանյանը, Հայկազ Աղեկի Աղեկյանը, Հրաչիկ Սիրականի Սիժոնյանը և ուրիշներ: Մակայն ժողովը հաշվի առնելով, որ նա ունի կուսըջկոմի բյուրոյի տույժ, որը չէր վերացրել մինչև այդ, նրան հայտարարել խստագույն զգուշացում, որպեսզի ենթարկվի կուսըջկոմի բյուրոյին և կատարի նրա առաջարկությունները:

1988 թ. մարտի 31-ին պետական տնտեսությունը ստեղծում է իր արտադրական խորհուրդը, տնամերձ հողամասեր հատկացնող հանձնաժողովը, մրցույթի արդյունքներն ամփոփող հանձնաժողովը կամ ժյուրին: Ընդ որում, արտադրական խորհրդի կազմում առաջադրվում են հետևյալ 19 անդամները՝ 1) Գառնիկ Հակոբի Արզումանյանը, 2) Էմմա Սարիբեկի Ավետիսյանը, 3) Արա Աշոտի Մովսիսյանը, 4) Վանուշ Յուրդաբեկի Մուրադյանը, 5) Վարդգես Չալիբեկի Գրիգորյանը, 6) Գագիկ Գառնիկի Մանուկյանը, 7) Դերենիկ Հայկի Գալստյանը, 8) Յուրիկ Վարազդատի Ասոյանը, 9) Գայանե Դենեկոյի Գրիգորյանը, 10) Բեգե Սկրտչի Սահակյանը,

11) Աշոտ Հարութի Աբրահամյանը, 12) Աղախան Աբգարի Չաքարյանը, 13) Գագիկ Բալաբեկի Ումրշատյանը, 14) Գևորգ Վաղինակի Սողոյանը, 15) Քնարիկ Հայկի Կիրակոսյանը, 16) Նվեր Մնացի Գրիգորյանը, 17) Գյուլնարա Անուշավանի Սկրտչյանը, 18) Գրիգոր Գեղամի Սահակյանը, 19) Ավետիք Գառնիկի Ղազարյանը:

Տնամերձ հողամասերը հատկացնող հանձնաժողովում առաջադրվում են հետևյալ 14 անդամները՝ 1) Գագիկ Գառնիկի Մանուկյանը, 2) Դերենիկ Հայկի Գալստյանը, 3) Գագիկ Բալաբեկի Ումրշատյանը, 4) Բորիս Մանասրի Հակոբյանը, 5) Վարդգես Չալիբեկի Գրիգորյանը, 6) Վարազդատ Արտաշի Պողոսյանը, 7) Էմմա Սարիբեկի Հակոբյանը, 8) Հայկ Մնացի Քարայանը, 9) Բեգե Սկրտչի Սահակյանը, 10) Ռուբիկ Այվազի Ավետիսյանը, 11) Թառլան Մանուկի Ասատրյանը, 12) Հովհաննես Գևորգի Շառոյանը, 13) Ժիրայր Սերյոժայի Հակոբյանը, 14) Հարազատ Միսակի Քալոյանը:

Մրցույթի արդյունքները ամփոփող ժյուրիի կազմում առաջադրվում են հետևյալ 7 անդամները՝ 1) Հայկազ Աղեկի Աղեկյանը, 2) Արծրուն Գրիշայի Կարապետյանը, 3) Միշա Հայկարամի Գալստյանը, 4) Ավետիք Ռուշանի Մանուկյանը, 5) Բեգե Սկրտչի Սահակյանը, 6) Գագիկ Բալաբեկի Ումրշատյանը, 7) Ժորա Հայկի Գրիգորյանը:

Մայիսի 18-ին Ձորագյուղի պետական տնտեսության Դաշտավարական N 5 բրիգադի բրիգադիր Գառնիկ Հակոբի Արզումանյանին կուսակցական ընդհանուր ժողովը առաջարկում է ՄՄԿԿ 19-րդ համամիութենական կոնֆերանսի պատգամավոր:

1988 թ. հուլիսի 18-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը Հայաստանի, Ադրբեջանի և ԼՂԻՄ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկում է Լեռնային Ղարաբաղի հարցը և մերժում ԼՂԻՄ-ի և Հայաստանի վերամիավորման մասին որոշումը:

Հայ ժողովուրդը դրանից հետո էլ չի շեղվում իր արդարացի պայքարի ուղուց:

1988 թ. կեսերին Ադրբեջանի հայաբնակ վայրերում, հատկապես Թաքվում, Գյանջայում (Գանձակում), Շամխորում, Խանլարում սկսվում են հայերի բնակավայրերի հրկիզումներ, թալան, մարդկանց սպանություններ, հայերը ստիպված փախուստի են դիմում, որոնց թիվը հասնում էր հարյուր հազարների: 1988 թ. աշնանը Հայաստանից էլ ադրբեջանցիներ են գնում, իսկ խաղաղ ձևով, իրենց գույքով ու կարողություններով, բնակարանները վաճառելուց հետո, մեքենաներով տեղափոխվելով Ադրբեջան:

1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի է ունենում ավելի քան 9 րազ հզորությամբ ավերիչ երկրաշարժ: Այն ընդգրկում է հանրապետության տարածքի 1/3-ը՝ մեկ միլիոն 130 հազար բնակչությամբ: Ավերվում է բնակիչների 17 %-ը: Ավերվում են 170 արդյունաբերական ձեռնարկություններ: Շարքից դուրս են գալիս գյուղատնտեսական մթերքներ վերամշակող 80 ձեռնարկություններ: Ժողովրդական տնտեսությանը հասցվում է 13 մի-

լիարդ ուրբու վնաս: Չոհվում են 25.000 մարդ, իսկ 530 հազար հոգի է են անօքևան:

Աղետի բուրբ Հայաստանի վրա բևեռում է համայն մարդկության ու ղրությունը: Գեկտեմբերի 8-ին Երևան է ժամանում ԽՍՀՄ նախարարներ խորհրդի նախագահ Ն. Ռիժկովը, իսկ 2 օր անց, ընդհատելով իր պաշտոնական այցը, աղետի գոտի է գալիս ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Մ. Գորբաչովը: Աշխարհի բոլոր ծայրերից օգնության ձեռք են մեկնում Հայաստանին:

Չորագյուղի պետական տնտեսությունը տարեվերջին ամփոփելով սոցպարտավորությունների արդյունքները՝ պարզվում է, որ տնտեսությունը կատարել է հացահատիկի, պտղի, բանջարեղենի, խտախ, սիլոսի, սենածխ, բրդի պլանային առաջադրանքները, բոլոր նախադրյալները կային կատարելու նաև կարտոֆիլի, ծխախոտի, կաթի, մսի թե՛ արտադրության և թե վաճառքի պլանային առաջադրանքները: Տնտեսությունում գոյություն են ունեցել նաև թերություններ, օրինակ՝ դեռևս լրիվ չեն օգտագործվել եղած հնարավորություններն ու ռեզերվները, մեծ տոկոս են կազմել անասունների հարկադիր սնոթն ու անհարկի դուրս գրումները:

1988 թվականի կուսակցական հաշվետու ժողովը բյուրոյի կազմում առաջադրում է հետևյալ 7 կոմունիստներին՝ 1) Գերենիկ Հայկի Գալստյանին, 2) Գազիկ Գառնիկի Մանուկյանին, 3) Գառնիկ Հակոբի Արզումանյանին, 4) Հայկազ Աղեկի Աղեկյանին, 5) Ռազմիկ Իվանի Հակոբյանին, 6) Միշա Հայկարամի Գալստյանին, 7) Գազիկ Բալաբեկի Ռմբաշատյանին:

Կուսակցական հաշվետու ժողովը հետևյալ 5 կուսակցականներին ընտրում է որպես Մարտունու կուսըջկոմի 43-րդ կոմիտեանսի պատգամավորներ՝ 1) Գազիկ Գառնիկի Մանուկյանին, 2) Գերենիկ Հայկի Գալստյանին, 3) Գառնիկ Հակոբի Արզումանյանին, 4) Միշա Հայկարամի Գալստյանին, 5) Սպարտակ Զիվանյանին (չրջանից):

Չորագյուղի պետական տնտեսության կուսկազմակերպության 1988 թվականի դեկտեմբերի 21-ի ժողովը դարձյալ իր համերաշխությունն է հայտնում Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի կապակցությամբ, բայց կրկին դեմ է ինչպես Լեռնային Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանում, մասնավորապես քաղաքամայր Երևանում տեղի ունեցող գործադուլներին, որոնք հսկայական նյութական վնաս են հասցնում երկրաշարժից խիստ տուժած Հայաստանին: Ժողովականներից Հովհաննես Շառոյանի, Վարադաատ Սահրադյանի, Վրեժ Զաքարյանի, Մուրտ Սարգսյանի, Ավետիք Խղաթյանի, Գառնիկ Արզումանյանի, Ռուզաննա Մրնասյանի, Աշոտ Մնացականյանի կարծիքով, Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման հարցը կարող է լուծվել ոչ թե ազգամիջյան կռիվների, այլ քաղաքական ճանապարհով, ինչպես առաջարկում է ՀԿԿ Գեներկոմը:

1988 թվականից ի վեր նյութերի ու կիսաֆաբրիկատների անորակության ու անբավարար մատակարարման պատճառով չեն կատարվում գոր-

ծարանի արտադրամասի պլանային առաջադրանքները, պակասում աշխատավարձի չափը, որի պատճառով շատ տեղամասերում նկատվում են լուսնվորների գործադուլներ: Հետագայում էլ այդ դժգոհ բանվորները հեռանում են արտադրամասից:

1988 թ. վերջերին և 1989 թ. սկզբներին ձերբակալվում և Մոսկվայի բանտերում արգելափակվում են արցախյան շարժման ղեկավարները:

1989 թ. հունվարին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ դադարեցվում է ԼՂԻՄ-ի աշխատավորների կողմից ընտրված պատգամավորների մարզային խորհրդի և կուսակցության մարզկոմի գործունեությունը: Ստեղծվում է Մոսկվային անմիջականորեն ենթակա Հատուկ կառավարման կոմիտե՝ Ա. Վալսկու գլխավորությամբ: Սկզբում այդ կոմիտեն արցախյան հիմնահարցի լուծման որոշ հույսեր է արթնացնում, սակայն Ադրբեջանի սադրանքների հետևանքով այն չի կարողանում կատարել իր առաքելությունը:

1989 թ. գարնանը «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալված անդամները, բանտարկությունից ազատվելով, գալիս են Երևան և շարունակում գլխավորել ազատագրական պայքարը: Ազատագրական պայքարին նվիրված բոլոր ուժերին համախմբելու համար ձևավորվում է Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ), որի հիմնադիր համագումարը տեղի է ունենում 1989 թ. նոյեմբերին: Մակայն ՀՀՇ-ն չի կարողանում իր շուրջը համախմբել ազգային շարժման բոլոր ուժերը և երբեք համազգային չի դառնում: Այն, փաստորեն, մի խումբ մարդկանց ձեռքին դնում է իշխանություն գրավելու լծակ, խումբ, որը վարպետորեն իր նեղ նպատակներին է ծառայեցնում ժողովրդի հավատը և ամբողջությամբ վերցրած համազգային շարժումը: ՀՀՇ-ի՝ մեկը մյուսին հետևող ձեռնարկումները ծանր հետևանքներ են ունենում ժողովրդի համար:

Այսպես՝ ՀՀՇ-ի համար ջանքերով, շրջակա միջավայրի մաքրությունը հողալու պատճառաբանությամբ, 1989 թ. դեկտեմբերին փակվում է «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումը՝ իր հետ կապված 350 ձեռնարկություններով, որի հետևանքով տասնյակ հազարավոր մարդիկ մնում են առանց աշխատանքի (սակայն ՀՀՇ-ն իշխանությունը վերցնելուց հետո 1991 թ. վերագործարկում է «Նաիրիտը»՝ մոռանալով նրա վնասակար հետևանքները): Նույն ճակատագրին են արժանանում Ալավերդու լեռնաքիմիական կոմբինատը, Վանաձորի քիմիական գործարանը, Հայկական ստոմակայանը, որոնց փակելը աղետաբեր եղավ տնտեսության համար և ծանր անդրադարձավ բնակչության սոցիալական պայմանների վրա: «Որքան վատ՝ այնքան լավ» կարգախոսով ավերվեց հանրապետության տնտեսությունը: Իշխանությունը վերցնելուց հետո էլ ՀՀՇ-ի և հանրապետության ղեկավարության անլուրջ ու չմտածված գործողությունները նորա- նոր աղետներ բերեցին երկրին:

Արցախյան ազատագրական պայքարը գլխավորելու համար 1989 թ. օգոստոսին կազմակերպվում է Արցախի ազգային խորհուրդը: Հայաստանի Գերագույն խորհրդի և Արցախի ազգային խորհրդի համատեղ նիստը 1989 թ. դեկտեմբերի 1-ին որոշում է ընդունում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին: Մեկ ամիս անց ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը չեղյալ է հայտարարում այդ որոշումը:

1989 թվականին, Չորագյուղի պետական տնտեսության ղեկավար կադրերի հետ կապված, զգալի փոփոխություններ են կատարվել: Տնտեսությունը, անցնելով ինքնաֆինանսավորման և ամբողջովին մեխանիզացիայի միջոցով աշխատանքների կատարման, մեծ քանակությամբ ղեկավար կադրերի հաստիքներ են կրճատվել: Տնտեսությունը դաշտավարական 6 բրիգադներից պահում է միայն 2-ը, որոնց մեջ ծուլվում են մյուսները: Այդ 2 բրիգադների բրիգադիւրներ են նշանակվում Վոլոդյա Խաչատրյանը և Աղախան Զաքարյանը: Մյուս բրիգադների բրիգադիւրները ազատվում են աշխատանքից: Աշխատանքից ազատվում է ավտոտրանսպորտի վարիչ Վրեժ Զաքարյանը: Չեն կրճատվում ֆերմաների հաստիքները: Կրճատվում են ծխախոտի մասնագետի, բանջարաբուստանային կուլտուրաների բրիգադիւրի հաստիքները և այլն:

Պահպանվել են գլխավոր անասնաբույժի, գլխավոր անասնաբույժի, կովաբուծական I բրիգադի բրիգադիւրի, կովաբուծական II բրիգադի բրիգադիւրի, ոչխարաբուծական բրիգադի բրիգադիւրի, ոչխարաբուծական II բրիգադի բրիգադիւրի, գլխավոր ինժեներ մեխանիկի, տրակտորային բրիգադի բրիգադիւրի, գլխավոր հաշվապահի, գլխավոր գյուղատնտեսի, շինարարության բրիգադի բրիգադիւրի, կերերի պահեստապետի հաստիքները, այսինքն՝ ընդամենը 14 հաստիք՝ նախկին 35 հաստիքների դիմաց: Փաստորեն ղեկավար կադրերից 21-ը կրճատվում են: Կուսակցական ժողովում դրա դեմ բողոքում են Վրեժ Զաքարյանը և անասնաբուծության գծով բարձրագույն կրթություն ունեցող Սամվել Հայկի Գրիգորյանը: Վերջինս բողոքում է, որ երկար ժամանակ տրակտորիստ է աշխատել, հեռակա կարգով բարձրագույն կրթություն է ձեռք բերել, երկու տարի առաջ նրա տրակտորը դուրս է գրվել, իսկ նորը չեն տվել, և ինքը այդքան ժամանակ մնացել է անգործ: Այժմ էլ ղեկավար կադրեր նշանակելիս իրեն հաստիք չեն տրամադրել:

Պետական տնտեսության դիրեկտորը իր ելույթում պատասխանում է, որ կրճատվել են հատկապես նրանք, ովքեր մասնագիտական կրթություն չեն ունեցել: Կրճատվել են նաև մասնագիտական կրթություն ունեցողներից նրանք, ովքեր իրենց չեն արդարացրել աշխատանքում: Դրանց փոխարեն տնտեսությունում աշխատանքի են անցել բարձրագույն կրթությամբ հուսալի կադրերը: Այսպես՝ 1) Արմեն Աշոտի Մովսիսյանը նշանակվում է գլխավոր ինժեներ մեխանիկ, 2) Ավետիք Եղիշի Սահակյանը՝ տրակտորային բրիգադի բրիգադիւր, 3) Համլետ Կարապետի Ավետիսյանը՝ գլխավոր անասնաբույժ, 4) Գագիկ Բալաբեկի Ումրշատյանը՝ բանկոմի նախագահ (1972 թվա-

կանից մինչ այդ աշխատող և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող Բեգե Մկրտչի Սահակյանի փոխարեն), 5) Գառնիկ Ավետիքի Սահակյանը՝ այգեգործական օղակի օղակավար:

Կրճատված ղեկավար կադրերից ոմանք անցնում են կենսաբույսերի, մյուսներն էլ դառնում են շարքային բանվորներ: Նրանք բոլորն էլ դժգոհ էին:

Պետական տնտեսությունը 1989 թվականի համար¹⁷ ստանձնում է հետևյալ պարտավորությունները՝ 1) դաշտավարության բնագավառում՝ արտադրել 5000 գ հացահատիկ, 11000 գ կարտոֆիլ, 1500 գ բանջարեղեն, 80 գ պտուղ, պետությանը վաճառել 1000 գ հացահատիկ, 7800 գ կարտոֆիլ, 710 գ ծխախոտ, 1400 գ բանջարեղեն, 60 գ պտուղ: Կուտակել 2000 տոննա խոտ, 1900 տոննա սիլոս, 1150 տոննա սենած, 54 տոննա կերի ճակնդեղ, մեկ հեկտարից ստանալ 20 գ հացահատիկ, 220 գ կարտոֆիլ, 28,4 գ ծխախոտ, 300 գ բանջարեղեն: 1989 թ. տնտեսությունը պարտավորվում է ցանել 50 հա կարտոֆիլ, 25 հա ծխախոտ, 162 հա հացահատիկ, 360 հա խոտաբույս, 193 հա սիլոսի և սենածի բույս, 2) անասնապահության բնագավառում՝ մեկ կովի կաթնատվությունը հասցնել 2000 կիլոգրամի, 100 կովից ստանալ և պահպանել 82 հորթ, 100 մայր ոչխարից՝ 90 գառ, պետությանը վաճառել 8200 գ կաթ, մսի համընկող խոշորի քաշը հասցնել 350 կիլոգրամի, պետությանը վաճառել 1500 գ միս, մեկ ոչխարի բողոքությունը հասցնել 2,3 կիլոգրամի, պետությանը վաճառել 90 գ բուրդ:

1989 թվականին հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման հարցում ԽՍՀՄ Կենտրոնական կոմիտեի անվճարականությունը և այդ կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի շրջափակումը, Չորագյուղից ընդամենը 2 երիտասարդներ են դիմել ընդունվելու կուսակցության շարքեր: Դրանցից մեկը՝ Ռուբեն Մկրտչի Կարապետյանը կուսակցության շարքեր է ընդունվել որպես թեկնածու, իսկ մյուսը՝ Ռուզաննա Գառնիկի Մինասյանը, կուսթեկնածուից փոխադրվել է կուսանդամ:

1989 թվականին լավ աշխատանքներ է կատարել Չորագյուղի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեն: Ավարտվել են մուր-մանկապարտեզի շինարարական աշխատանքները, ընթացքի մեջ է կուլտուրայի տան շինարարությունը, լայն թափով առաջ է տարվում բնակարանների զագիֆիկացման գործը: Նախապատրաստել են սկսել Ակներ աղբյուրից դեպի ջրամբար տանող նոր ջրատարի և բուժամբուլատորիայի շենքի շինարարությունները:

1989 թվականին պետական տնտեսությունը ամբողջովին անցնում է ինքնաֆինանսավորման, մասնավորապես դաշտավարությունը անցնում է հողամշակման բրիգադային կապալին և նախապատրաստվում է անցնել նաև օղակային և անհատական կապալին: Դրա պատճառը այն էր, որ խորհրդային տնտեսության կամ պետական տնտեսության աշխատածևր

¹⁷ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 77, քերթ 1-25:

չէր արդարացնում իրեն: Պետության վրա ծախսերը ավելի քանկ
նստում, քան թե ստացված մթերքների արժեքը: Այդ պատճառով պե-
րյունը ձգտում է անցնել գյուղատնտեսության վարման նոր ձևի՝ անհատու-
ան շահագրգռման ձևին: Այդպիսին էր օղակային, բրիգադային և կոլեկտի-
վարձակալական ձևը կամ կապալը:

Լեռնային Ղարաբաղի ինքնոյառնական իրավունքի հետ կապված կու-
սակցականների, կոմերիտականների և գյուղի մյուս աշխատողների մոտ
առաջացած տարածայնություններին ճշմարիտ պատասխան տալու
նպատակով ագիտկոլեկտիվի նոր ղեկավար է նշանակվում Երևանի պետա-
կան համալսարանի հեռակա ասպիրանտ Նվեր Գյուլաբի Սլքոչյանը:
Նրա առաջարկով կուսակազմակերպությունը թարմացնում է ագիտատորնե-
րի կազմը՝ այնտեղ ներգրավելով գյուղի բարձրագույն կրթություն ունեցող
հետևյալ երիտասարդներին՝ 1) Հայկազ Աղեկի Աղեկյանին, 2) Միշա Հայ-
կարամի Գալստյանին, 3) Համլետ Կարապետի Ավետիսյանին, 4) Հրահատ
Բեգեի Սաֆարյանին, 5) Գագիկ Բալաբեկի Ումրշատյանին, 6) Նորայր
Ալբերտի Ասատրյանին, 7) Արմեն Աշոտի Մովսիսյանին, 8) Նորայր Խաչի-
կի Մնացականյանին, 9) Աշոտ Խաչիկի Մնացականյանին, 10) Գուրգեն
Անուշավանի Սարոյանին, 11) Վարազդատ Արտաշի Պողոսյանին,
12) Ֆուրման Արտեմի Սարոյանին, 13) Համլետ Նիկոլայի Սարգսյանին,
14) Գագիկ Ռուշանի Սարգսյանին, 15) Հենրիկ Ռուշանի Սարգսյանին,
16) Միհրան Միրակյանի Մանուկյանին, 17) Գառնիկ Ավետիսի Սահակյա-
նին, 18) Սամվել Հայկի Գրիգորյանին, 19) Գայանե Արտավազդի Գրիգոր-
յանին, 20) Գագիկ Շալիկոյի Խղաթյանին, 21) Սարիբեկ Վոլոդյայի Սահ-
րադյանին, 22) Արծրուն Գրիշայի Կարապետյանին, 23) Հակոբ Նիկոլայի
Սարգսյանին, 24) Ժիրայր Ալբերտի Ասատրյանին, 25) Ռադիկ Կալինոսի
Սարգսյանին, 26) Մարգարեա Կարապետի Ավետիսյանին, 27) Ռուդիկ
Կալինոսի Սարգսյանին:

Տարեվերջին ամփոփելով սոցպարտավորությունների արդյունքները՝
պարզվում է, որ պետական տնտեսությունը, անցնելով ինքնաֆինանսա-
վորման բրիգադային կապալի տնտեսավարման եղանակին, կատարել է
կաթի, մսի, բրդի արտադրության և վաճառքի պլանային առաջադրանքները
և այդ տեսակետից շրջանում քայլում է առաջին շարքում, կատարել է նաև
հացահատիկի արտադրության ու վաճառքի պլանային առաջադրանքները,
կուտակել է պլանից ավելի անասնակեր (խոտ, սիլոս, սեճած, ծղոտ), բարձր
բերք կարող էր հավաքել շարային կուլտուրաներից՝ ծխախոտից, կարտոֆ-
իլից, բանջարեղենից, պտղից, եթե չլինեին աշնանը տեղացող ահավոր
չափերի հասնող կարկուտն ու կարկտախառն անձրևները, որոնց հետևանքով
չուրջ 50 %-ով փչացնում է սպասվելիք բերքը: Այնուամենայնիվ, տնտե-
սությունը տարին փակում է օգուտով:

Օգտվելով կենտրոնի՝ իրենց համար նպաստավոր քաղաքականու-
թյունից, իշխանությունների բույլտվությամբ Ադրբեջանի ժողովրդական

տակառը 1990 թ. հունվարին Բաքվում սանձազերծում է հայերի զանգվա-
ծային նոր ջարդ: Մոտ 5 հազար մարդուց բաղկացած զինված ամբոխը,
նախօրոք մշակված ծրագրով, հարձակումներ է սկսում հայերի վրա՝ կողոպ-
տում նրանց բնակարանները և ենթարկում անմարդկային խոշտանգում-
ների: Կազմակերպված համատարած կոտորածների պատճառով մեկ շա-
բաթվա ընթացքում Բաքուն լիովին հայաթափվում է:

1990 թ. հունվարյան վանդալիզմի հետևանքով հարյուր հազարավոր
հայեր, հազիվ փրկվելով ադրբեջանական յաթաղանից, հեռանում են
Բաքվից և Ադրբեջանի մյուս հայաբնակ բնակավայրերից:

1990 թ. հունվար-փետրվար ամիսներին Ադրբեջանի զինված բանդա-
ները հարձակումներ են սկսում նաև Հայաստանի սահմանների ամբողջ
երկայնքով: Սակայն հայ ինքնապաշտպանական աշխարհագրային ջո-
կատները արժանի հակահարված են տալիս թշնամուն և նրան հարկադրում՝
դադարեցնել իր ոտնձգությունները: Դրա փոխարեն Ադրբեջանը ուժեղաց-
նում է Հայաստանի շրջափակումը:

1990 թ. մայիսի 20-ին կայացած ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատ-
գամավորների ընտրությունների ընթացքում մրցապայքարը հիմնականում
տեղի է ունենում ՀԿԿ-ի և ՀՀԸ-ի միջև: Նոր Գերագույն խորհրդի նախա-
գահ է ընտրվում ՀՀԸ վարչության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը:

1990 թվականին Չորագյուղի պետական տնտեսության ղեկավար
կադրերը հիմնականում մնում են նույնը, ինչ որ կային 1989 թվականին:

Տնտեսվարման կապալային ձևին գալիս է փոխարինելու «գյուղացիա-
կան տնտեսության» ձևը: Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետությունը մշակում է «գյուղացիական տնտեսության մասին»
օրենքի նախագիծ և ուղարկում տեղերում քննարկելու, որպեսզի այն հետա-
գայում ընդունի որպես օրենք: Նրանում նախատեսվում էր հողը բաժանել
գյուղացիներին, որոնք իրենց հողի բաժնենաստվ կարող էին կազմել ինչպես
գյուղացիական կոլեկտիվ, այնպես էլ գյուղացիական անհատական տնտե-
սություններ: Նրանք պետք է աշխատեին ինքնաֆինանսավորման եղանա-
կով, այսինքն՝ իրենց ծախսերը իրենք պիտի փակեին, վճարելով նաև անհ-
րաժեշտ հարկերը: Չորագյուղի արտադրական կուսակցական կազմակեր-
պության դռնբաց ժողովում էլ քննարկվում է այդ նախագիծը, որի մասին զե-
կուցում է պետական տնտեսության տնօրեն Գագիկ Մանուկյանը: Ըստ
կուրսյան արտահայտվում են շարքային բանվոր Գագիկ Ավետիսյանը, ավ-
տովարորդ Եղիազար Մանուկյանը, կենսաթոշակատու Ավետիք Խաչատու-
րի Սահակյանը, անկուսակցական, դաշտավարական բրիգադի բրիգադիր
Վոլոդյա Խաչատրյանը, շարքային բանվոր Միշա Աղեկյանը, կենսաթոշա-
կատու Խաչիկ Եզնակի Սարգսյանը, թոշակատու Մելիմբեկ Մանուկի Գևորգ-
յանը, շարքային բանվոր Վրեժ Արզարի Չաքարյանը, շարքային բանվոր
Ազնիվ Մանասարի Գալստյանը, շարքային բանվոր Գառնիկ Հակոբի Կի-
սակոսյանը: Ինչպես ելույթ ունեցողները, այնպես էլ ամբողջ ժողովականե-

րը (ժողովին մասնակցում էին 37 անկուսակցականներ, 45 կուսանդ (67-ից) և մեկ կուսանդանության քեկնածու) հավանություն են տալիս «Գյուղացիական տնտեսության մասին» օրենքի նախագծին և քվեարկության ժամանակ այն ընդունում միաձայն: Օրենքի նախագծում ընդգծվում էր հողը գյուղացուն հատկացնելուց հետո պետությունը հոգատարություն է հանդես բերելու աշխատանքի պաշտպանության, հրշեջ պահպանության, անասունների հիվանդության, բույսերի հիվանդության, վնասատուների դեմ պայքարի, բնության պահպանության, օրենսդրության կիրառման և հարկերի վճարման ուղղությամբ: Օրենքի նախագիծը պահանջում է գյուղում ստեղծել մեքենաների ու մեխանիզմների նորոգման արհեստանոցներ, որով հնարավոր կլինի ապահովել մեքենաների ու մեխանիզմների անխափան աշխատանքը, հակառակ դեպքում որոշ ժամանակից հետո դրանք շարքից դուրս կգան և անգործության կմատնվեն, իսկ յուրաքանչյուր անհատ հնարավորություն չի ունենա ինքնուրույն կարգով պահեստամասեր ձեռք բերել կամ նորոգումներ իրականացնել:

Փաստորեն տնտեսվարման կապալային եղանակը, որ մեկ տարի առաջ ՇԱԱՄ-ը (Շրջանային ագրո-արդյունաբերական միավորումը) բմբկահարում էր, կարճ կյանք ունեցավ և իր տեղը զիջեց «Գյուղացիական տնտեսությանը», որը նախատեսում էր առանց միջնորդության հողի հանձնումը գյուղացուն:

Անկախ նրանից, թե տնտեսվարման ինչպիսի եղանակ կառաջարկեն իրեն, Չորագյուղի պետական տնտեսությունը նախապատրաստվել էր 1990 թվականի աշխատանքների համար: Նա այնպիսի պլանային առաջադրանքներ է նախապատրաստվել իրականացնել, որպիսիք կային 1989 թվականին, այսինքն՝ ցանել 162 հա հացահատիկ, 50 հա կարտոֆիլ, 25 հա ծխախոտ, 360 հա խոտաբույս, 193 հա սիլոս և սենած, մշակել 10 հա պտղատու այգի, 1 հեկտարից ստանալ 20 գ հացահատիկ, 220 գ կարտոֆիլ, 28,4 գ ծխախոտ, 260 գ բանջարեղեն, 30 գ պտուղ, կուտակել 2000 տոննա խոտ, 1900 տոննա սիլոս, 1150 տոննա սենած, 54 տոննա կերի ճակնկալ, 1 կովի կաթնատվությունը հասցնել 2000 կիլոգրամի, 100 կովից ստանալ 82 հոբք, 100 մայր ոչխարից՝ 90 գառ, 1 ոչխարի բրդատվությունը հասցնել 2,3 կիլոգրամի, մսի հանձնվող խոշորի կենդանի քաշը հասցնել 350 կիլոգրամի, պետությանը վաճառել 1000 գ հացահատիկ, 7800 գ կարտոֆիլ, 710 գ ծխախոտ, 1400 գ բանջարեղեն, 160 գ պտուղ, 8200 գ կաթ, 1500 գ միս, 90 գ բուրդ:¹⁸

Թեև 1988 թվականին ընտրվել էր մրցության արդյունքները ամփոփող ժյուրիի կազմ, բայց 1989 թվականին շատ աշխատողներ դժգոհում են պարզատրումների սահմանաչափից և վճարման գործից: Գուցե սա այն գլխավոր պատճառներից մեկն էր, որ կապալը տարածում չգտավ:

1990 թվականին, 1989 թվականի նման, Չորագյուղի երիտասարդությունը, Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի հարցում նկատելով ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի ցուցաբերած անվճարականությունը, չի ձգտում ընդունվել կուսակցության շարքեր: Նրանցից միայն 2-ը՝ Համլետ Կարապետի Ավետիսյանը և Ռուբեն Մկրտչի Կարապետյանը, որոնք նախորդ տարի ընդունվել էին որպես կուսակցական, այս տարի փոխադրվեցին կուսանդամ:

ԽՍՀՄ կենտկոմի պլատֆորմի նախագիծը քննարկելիս ելույթ ունեցող կոմունիստներից թոշակառու Սելիմբեկ Գևորգյանը, շարքային բանվոր Ավագ Սաֆարյանը, գլխավոր գյուղատնտես Միշա Գալստյանը, մեխանիզատոր Հրաչիկ Միմոնյանը, կուսբյուրոյի քարտուղար Գերենիկ Գալստյանը իրենց դժգոհությունն են հայտնում, որ կոմկուսը ազգային փոքրամասնությունների ինքնորոշման իրավունքի և ազգային մեծամասնության տարածքային անձեռնմխելիության հակասության դեպքում առաջնություն է տալիս վերջինին, որի պատճառով էլ Լեռնային Ղարաբաղի ճշմարիտ պահանջը մտնում է փակուղի:

Հեռուելով ՀԽՍՀ «գյուղացիական տնտեսության մասին» օրենքի նախագծին, Չորագյուղի պետական տնտեսության ղիրեկցիան և կուսկազմակերպությունը նախապատրաստվում են իրենց տնտեսությանը տալ «գյուղացիական կոլեկտիվ տնտեսության» բնույթ: Այդ տնտեսաձևին անցնելու և բարձր ցուցանիշների հասնելու համար Չորագյուղի պետական տնտեսության ղիրեկտոր Գագիկ Գառնիկի Մամուկյանը 1990 թվականի հունիս ամսին ամբողջ Սևանի ավազանի շրջանների տնտեսությունների ղիրեկտորներից միակն էր, որ ընտրվեց Մոսկվայում կայանալիք գյուղատնտեսության աշխատողների համամիութենական հիմնադիր համագումարի պատգամավոր:

Որպես դեմոկրատիայի տարրերի արմատավորում, Մ. Գորբաչովը թույլ տվեց պրեզիդենտներ ունենան միութենական հանրապետությունները, որոնց թվում նաև Ռուսաստանը: Ռուսաստանի պրեզիդենտ և Գերագույն խորհրդի նախագահ է դառնում Բ.Ելցինը: Մեխանիկորեն հիմքեր են դրվում ցանկացած ժամանակ ԽՍՀՄ-ից Ռուսաստանի անջատման համար: Այդ վտանգը ժամանակին զգացել են կոմունիստները, որ Ռուսաստանին թույլ չեն տվել ունենալ առանձին Կոմունիստական Կենտրոնական կոմիտե, առանձին Գերագույն խորհուրդ, առանձին Միսիսիսների խորհուրդ:

Չզգալի նորություններ են տեղի ունենում նաև Չորագյուղի դպրոցի կյանքում: 8-ամյա դպրոցը, որը սկսած 1984 թվականից իր պարապմունքները անցկացնում էր նոր կառուցված դպրոցական շենքում, աշակերտների թվի, հետևաբար նաև դասարանների թվի չափազանց ավելացման, դպրոցը գրեթե բոլոր առարկաների գծով մասնագետ կարիերով, անհրաժեշտ քանակությամբ լաբորատոր սարքավորումներով ու գույքով համարվելու հետևանքով 1990 թվականի սեպտեմբերից վերածվում է միջնակարգ

¹⁸ ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆոնդ 261, ցուցակ 10, գործ 78, թերթ 1-18:

դպրոցի: Դա գյուղի մատաղ սերնդին կրթության ու դաստիարակությամբ նրան փայլուն ապագա ստեղծելու գործում ամենագլխավոր նախապայմանն էր: Դրանից հետո գյուղի կենտրոնի ու արևմտյան թաղամասի բայց ու դասարանների աշակերտներն ավերորդ ժամանակ ու էներգիա չէին կորցնում, գնալու գյուղի արևելյան ծայրամասում գտնվող առաջին միջնակարգ դպրոցում սովորելու: Դպրոցի դիրեկտոր է հաստատվում Ռաֆիկ Արամի Հակոբյանը: Այդ ժամանակ դպրոցն ուներ 20 դասարան, ուր սովորում էին 380 աշակերտներ: Դասավանդող ուսուցիչների թիվը հասնում էր 26-ի, որոնց զգալի մասն ուներ բարձրագույն կրթություն: Դրանք էին՝ հայոց լեզվի ուսուցիչներ Ռաֆիկ Արամի Հակոբյանը, Նվեր Գյուլարի Սկրտչյանը, մաթեմատիկայի ուսուցիչներ Վարազդատ Արտաշի Պողոսյանը, Արևիկ Գալստյանը, ռուսաց լեզվի ուսուցիչ Լաուրա Մերյոժայի Հովհաննիսյանը, ֆիզիկայի ուսուցիչ Մանվել Բեգեի Դավթյանը, գերմաներենի ուսուցիչ Հասմիկ Միքայելյանը, քիմիայի ու կենսաբանության ուսուցիչներ Ֆուրման Արտեմի Սարոյանը և Սարգիս Հովհաննեսի Սարգսյանը, աշխարհագրության ուսուցիչ Նորայր Ալբերտի Ասատրյանը, պատմության ուսուցիչ Անժելա Վոլոդյայի Կիրակոսյանը: Դպրոցում կային միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող որակյալ ուսուցիչներ, որոնք աշխատում էին դասվարներ: Դրանք էին՝ Լաուրա Գարեգինի Ավդալյանը, Ջեֆյուս Անուշավանի Հարությունյանը, Գոհար Վեմիրի Հովսեփյանը, Յուրիկ Աղիբեկի Պողոսյանը: Ռշտունի Աշոտի Առաքելյանը, որն ուներ թերի բարձրագույն կրթություն, դասավանդում էր գերմաներեն լեզու:

Հայկ Մնացի Բալոյանը, որ 1984–1990 թթ. աշխատում էր N 1 միջնակարգ դպրոցի դիրեկտոր, իր կազմակերպչական աշխատանքի շնորհիվ աշակերտների գիտելիքները հասցրել էր բարձր մակարդակի: Դա է հաստատում այն փաստը, որ առաջին անգամ այդ դպրոցի 10–րդ դասարանի աշակերտներից մեկը մանկավարժական խորհրդի կողմից ներկայացվել է որպես ոսկե մեդալի թեկնածու: Դա 1990 թվականի շրջանավարտ Լուսինե Մերյոժայի Գալստյանն էր: Թեև որոշ խանգարիչ հանգամանքների պատճառով նա մերթա չի ստացել բայց նույն տարում նա գերազանց գնահատականներով ընդունվում է Երևանի բժշկական ինստիտուտ, հաջողությամբ ավարտում և այժմ քաղաքամայր Երևանում աշխատում է որպես բժշկուհի: Լուսինեի հետ նույն թվականին գերազանց գնահատականներով 10–րդ դասարան են ավարտում Արմինե Հայկի Բալոյանը, Գագիկ Ժորայի Քոչարյանը և Տիգրան Գագիկի Դուկասյանը, որոնք նույն տարում բարձր գնահատականներով ընդունվում են տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ (Արմինեն ընդունվում է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը, Գագիկը՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, իսկ Տիգրանը՝ Երևանի ժողովրդական ինստիտուտը):

Այդ ժամանակ N 1 միջնակարգ դպրոցում աշխատում էին տարբեր տարեկանների գծով մեծ թիվ կազմող բարձրագույն կրթություն ունեցող որակյալ ուսուցիչներ: Դրանցից էին՝ քիմիայի ու կենսաբանության ուսուցչուհի Գայլա Վահանի Սյունյանը, մաթեմատիկայի ուսուցիչներ Հայկ Մնացի Բալոյանը և Գրիգոր Վասակի Մովսիսյանը, ֆիզիկայի ուսուցիչ Մանվել (Ժորա) Բեգեի Դավթյանը, գերմաներենի ուսուցչուհիներ Ռուզաննա Ավետիսյանը և Հասմիկ Միքայելյանը, ռուսաց լեզվի ուսուցչուհի Ստելա Դիմիտրիի Սարգսյանը, հայոց լեզվի ուսուցիչ Խաչիկ Միրականի Մնացականյանը, պատմության ուսուցիչներ Վոլոդյա Մուշեղի Սահարայանը և Գագիկ Ռուշանի Մանուկյանը, աշխարհագրության ուսուցիչ Վոլոդյա Գրիգորի Սարգսյանը: Դպրոցն ուներ նաև միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող հիանալի ուսուցիչներ: Դրանցից էր դասվար Ռոմելա Սկրտչյանը: Միջնակարգ մասնագիտական կրթություն ուներ և իր հրաշալի աշխատանքով թե աշակերտական և թե ուսուցչական կոլեկտիվների կողմից մեծ հարգանք էր վայելում դպրոցի գրադարանավարուհի Անահիտ Նիկոլայի Բալոյան–Սարգսյանը:

1989–1990 ուս. տարվա վերջին Հայկ Մնացի Բալոյանը այլ աշխատանքի անցնելու պատճառով ազատվում է N 1 միջնակարգ դպրոցի դիրեկտորի պաշտոնից: Նրա փոխարեն նշանակվում է Նորայր Խաչիկի Մնացականյանը, որն ուներ բարձրագույն կրթություն (նա ավարտել էր Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը) և ստացել հայոց լեզվի ու գրականության ուսուցչի որակավորում:

1990 թվականի տարեվերջին Ձորագյուղի պետական տնտեսությունը ամփոփելով ստանձնած պարտավորությունների արդյունքները պարզվում է, որ «գյուղացիական կոլեկտիվ տնտեսության» աշխատածևին անցած տնտեսությունը կատարել է բոլոր տեսակի առաջադրանքները և տարին փակել զգալի օգուտով:

Այսպիսով՝ Ձորագյուղի պետական տնտեսությունը 18 տարիների ընթացքում բավականին վերելք է ապրել իր կազմավորման առաջին տարվա, այն է՝ 1972 թվականի համեմատությամբ: Օրինակ՝ եթե 1972 թվականին մեկ հա–ից ստացվել է՝ 18 g հացահատիկ, 120 g կարտոֆիլ, 22 g ծխախոտ, մեկ կովի կաթնատվությունը կազմել է 1216 կգ, մեկ ոչխարի բրդատվությունը՝ 1,5 կգ, ապա 1990 թվականին 1 հա–ից ստացվել է 20 g հացահատիկ, 220 g կարտոֆիլ, 28,6 g ծխախոտ, 1 կովի կաթնատվությունը կազմել է 2000 կգ, 1 ոչխարի բրդատվությունը՝ 2,3 կգ: Փաստորեն, թե՛ դաշտավայրության և թե՛ անասնապահության բնագավառներում տեղի է ունեցել զգալի չափով աճ:

§ 8. ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ
(1991–2000 թթ.)

Մ. Գորբաչովի «վերակառուցումը», որը սոցիալիստական համակարգային շեղվեց դեպի մասնավոր սեփականատիրական համակեցությունը ծնող ազատ շուկայական հարաբերությունները, թույլ տվեց գյուղատնտեսության մեջ հողի, իսկ արդյունաբերության մեջ գործարանների սեփականաշնորհումը, որոնց սեփականատերերը իրենց ծախսերը իրենց միջոցներով պիտի փակեին, վճարեին պետական տուրքը և ավելցուկը դնեին իրենց գրպանը: Դրանով վերանում է «մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի» սոցիալիստական համակեցության սկզբունքը, և առաջ է գալիս սեփական գրպանը հարստացնելու սկզբունքը: Հենց այդ ժամանակ էլ, բնականաբար, սկիզբ դրվեց Կոմունիստական կուսակցության ղեկավար դերի ավարտի, ԽՍՀՄ-ի փլուզման և անկախ-անկախ հանրապետությունների առաջացման անհրաժեշտությանը:

1990 թ օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը ընդունում է անկախության հռչակագիր, որով դրվում է Հայաստանի անկախացման գործընթացի սկիզբը: Դրանով սկիզբ է առնում նաև Հայաստանի երրորդ հանրապետությունը:

Հռչակագրի տասներկու կետերից մեկը նախատեսում էր Հայաստանի տնտեսության հիմքում դնել մասնավոր սեփականատիրական և ազատ շուկայական հարաբերությունները: Փաստորեն՝ Հայաստանում սկիզբ են առնում նախկինից բոլորովին տարբեր սոցիալ-տնտեսական հարաբերությունները:

1991 թ. հունվարի 29-ին Հայաստանի հանրապետության խորհրդարանը ընդունում է «Գյուղացիական և գյուղական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքը, որի հիմքում ընկած էին անկախության հռչակագրում լինողոված մասնավոր սեփականատիրության և շուկայական հարաբերությունների սկզբունքները: Այդ օրենքով 1991–1992 թթ. լուծարվում են հանրապետությունում եղած 900 կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները, որոնք թողարկում էին ճյուղի արտադրանքի ավելի քան 90 %-ը, և սկիզբ է առնում հողի սեփականաշնորհումն ու նրա հիմքի վրա գյուղացիական անհատական ու գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների ստեղծումը: Կարճ ժամանակում հանրապետությունում ձևավորվում են 320 հազարից ավելի անհատական տնտեսություններ: Իբրև անհատական սեփականություն, դրանց փոխանցվում է հողի 66 %-ը, անասունների 80 %-ը, մնացած հիմնական միջոցները՝ գրեթե ամբողջությամբ: Հողի սեփականատեր են դառնում բոլոր գյուղացիները և այլ վայրերում ապրող նախկին գյուղացիները, որոնք նման ցանկություն են հայտնել:

Չորագյուղի ընդհանուր տարածքը կազմում է 5513 հա: Դրանից 2311 հա օգտագործելի տարածք է (լեռներ են, ավազուտներ ու քարեր): Մնացած

3202 հա գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողատարածքներ են, որոնցից 1641 հա արոտավայրեր են, 513 հա՝ խոտհարքեր, 840 հա՝ վարելահողեր, 208 հա՝ տնամերձ հողեր (վերջինիս մեջ է մտել գյուղի տարածքը իր նախկին տնամերձերով, որ կազմել է 42 հա):

Փաստորեն սեփականաշնորհման տակ դրվում են 513 հա խոտհարքերը, 840 հա վարելահողերը և 208 հա տնամերձ հողերը, իհարկե, վերջինիցս հանած գյուղի 42 հա կազմող տարածքը՝ նախկին տնամերձերով հանդերձ (սկներևաբար դեռ չբաժանված տնամերձ հողերը կազմել են 166 հա):

Սեփականաշնորհման գործընթացը Չորագյուղում սկսվում է 1991 թվականի փետրվարի 5-ից:¹ Նախ ստեղծվում է 38 հոգուց բաղկացած սեփականաշնորհման հանձնաժողով, որի նախագահն էր Չորագյուղի Գ.Խ.Գ.Կ-ի նախագահ Բորիս Սանասարի Հակոբյանը, իսկ քարտուղարը՝ միջնակարգ դպրոցի ուսուցիչ Խաչիկ Սիրականի Մնացականյանը: Հանձնաժողովի անդամներն էին՝ 1) Մանուկյան Գագիկ Գառնիկի, 2) Ղազարյան Հայրիկ Սիրականի, 3) Տոնեյան Հարազատ Հայկազի, 4) Սահրադյան Վարազդատ Վանոյի, 5) Խաչատրյան Վոլոդյա Բենիամինի, 6) Խլղաթյան Շալիկո Արամի, 7) Գալստյան Ազնիվ Մանասարի, 8) Չարաթյան Աղախան Արզարի, 9) Ավետիսյան Գառնիկ Կնյազի, 10) Կարապետյան Խաչիկ Մելքոնի, 11) Խլղաթյան Գառնիկ Արամի, 12) Մուրադյան Մուրիկ Շամխալի, 13) Կիրակոսյան Մոլոտ Գրիգորի, 14) Ոսկանյան Գագիկ Թեմանի, 15) Հակոբյան Հակոբ Մեխակի, 16) Ավետիսյան Ժորա Կնյազի, 17) Քալոյան Հայկ Մնացի, 18) Պողոսյան Վարազդատ Արտաշի, 19) Գևորգյան Հայկարամ Վասիլի, 20) Մանուկյան Մոլոտ Սիրականի, 21) Ղազարյան Սարո Հայրիկի, 22) Հարությունյան Մպարտակ Մոլոտի, 23) Մանուկյան Իշխան Գառնիկի, 24) Գալստյան Միշա Հայկարամի, 25) Մանուկյան Միհրան Սիրականի, 26) Սողոյան Ուսուրեկ Մնացի, 27) Աղեկյան Հայկազ Աղեկի, 28) Մովսիսյան Արմեն Աշոտի, 29) Ումրշատյան Գագիկ Բալաբեկի, 30) Գալստյան Դերենիկ Հայկարամի, 31) Ղազարյան Գոռ Մարգսի, 32) Մանուկյան Ավետիք Ռուշանի, 33) Մնացականյան Արմենակ Սահրադի, 34) Մարոյան Արտեմ Կարապետի, 35) Շառոյան Հովհաննես Գևորգի, 36) Մարգսյան Մոլոտ Նիկողայի:

Սեփականաշնորհման հետևանքով ստեղծվում են 68 գյուղացիական և կոլեկտիվ գյուղացիական տնտեսություններ, որոնք ըստ ծուխ-շունչ հարաբերության, ստանում են իրենց հասանելիք հողաբաժինը (մեկ հողաբաժինը կազմել է 0,72 հա):

Չորագյուղի խորհրդատեսությունը, որը ստեղծվել էր 1972 թ. հունվարի 1-ից, լուծարվում է 1991 թ. մայիսին:

Սեփականաշնորհման հետևանքով առաջացած ամենախառն գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունը, որը կրել է «Ալաշկերտ», ամվանումը, իր

¹ Չորագյուղի գյուղապետարանի տեղեկություններ (Չ ԳՏ), 1991–2002 թթ., I, թերթ 1–7, II, թերթ 1–3:

մեջ միավորել է շուրջ 600 ծուխ: Այն, բնականաբար, ներառել է հողերի բաժինը: Նրա հիմքն է կազմել նախկին պետական տնտեսությունը: Գյուղացիական կոլեկտիվ այդ տնտեսության ղեկավարն է դառնում նախկին պետական տնտեսության ղիբեկտորը՝ Գագիկ Գառնիկի Մանուկյանը: Այս խոշոր գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունն իր տնօրինության տակ պահել ոչ միայն մեծ քանակությամբ հողաբաժիններ, այլև ամբողջ տեխնիկան, անասունները և պահուստային հողերը: Գագիկ Գառնիկի Մանուկյանը ձգտել է ստեղծել մասնավոր սեփականության հիմքի վրա բաժնետիրական կոլեկտիվ տնտեսություն, ինչպես այժմ ստեղծվել են Լեռնային Ղարաբաղում և նախկին Խորհրդային Միության բոլոր հանրապետություններում (բացի Հայաստանից):

1991 թվականի օգոստոսյան դեպքերից հետո ՌԻՍՖՀ նախագահ Բորիս Ելցինը հաշվի առնելով, որ Մ.Գորբաչովի «վերակառուցումից» հետո Ռուսաստանում սկիզբ է առել մասնավոր սեփականատիրական համակցությունը, որը անհարիր է սոցիալիզմին ու կոմունիզմին, իր հրամանագրով արգելում է Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության գործունեությունը Ռուսաստանի տարածքում: Այդ ժամանակվանից Հայաստանի խորհրդարանի որոշմամբ իր գործունեությունը դադարեցնում է նաև Հայաստանի կոմունիստական կուսակցությունը: 1991 թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակում է որպես անկախ պետություն: 1991 թ. դեկտեմբերի 8-ին Միմսկի մոտակայքի Բելովեժսկ բնակավայրում, երեք սլավոնական հանրապետությունների՝ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի ղեկավարները ստորագրում են ԽՍՀՄ-ի գոյությունը, որպես միջազգային սուբյեկտ և աշխարհագրական իրողություն, դադարեցնելու մասին համաձայնագիրը: Այդ ժամանակվանից, փաստորեն, լիարժեք գործողության մեջ է մտնում 1991 թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից Հայաստանը անկախ պետություն հռչակելու որոշումը: 1991 թ. դեկտեմբերի 21-ին 11 ինքնիշխան պետությունները, որոնց թվում նաև Հայաստանը, Ալմա-Աթայում ստորագրում են համաձայնագիր՝ Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ) ստեղծելու մասին:

Անկախ Հայաստանի համար սկսվում է կյանքը քաղաքական, տնտեսական ու սոցիալական նոր հունով տանելու փորձություններով լի ժամանակաշրջանը:

Ռուսաստանից կիսաֆաբրիկատների վատ մատակարարման հետևանքով 1991 թ. փակվում է Կամոյի «Դիպոլ» կամ «Իվա» գործարանի Ձորագյուղի արտադրամասը: Իսկ դա տնտեսական ծանր հետևանքներ է բողոնում: 400 և ավելի աշխատողներ մնում են գործազուրկ: Ձորագյուղացին իսպառ գրկվում է ամսեկան 70.000, իսկ տարեկան՝ 850-900 հազար ռուբլի աշխատավարձից, որով հոգում էր իր տնտեսական կարիքները և անհրաժեշտը իր կյանքը:

Այդպես փակվում են Հայաստանի գյուղական վայրերում գործող բոլոր գործարանային արտադրամասերը: Փաստորեն հայ ժողովրդին շրջափակումների, երկրաշարժի, ՀՀԸ-ի աղետների հասցրած վնասներին ավելանում է նորը՝ գյուղական վայրերում գործող գործարանային արտադրամասերի փակումը: Ժողովրդի փրկության միակ հույսը մնում է հողը, նրա ճիշտ օգտագործումը:

Նորանկախ Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական խնդիրը բոլոր պետությունների և առաջին հերթին հարևանների հետ բարիդրացիական ու փոխշահավետ հարաբերությունների հաստատումն էր:

Հայաստանի երրորդ հանրապետությունը սկսում է միջազգային ճանաչում գտնել 1991 թ. վերջերից: 1991 թ. դեկտեմբերին Հայաստանի նոր հանրապետությունը ճանաչում են Ամերիկայի Միացյալ Նահանգները, Ռուսաստանը, Կանադան, Ռումինիան և այլ պետություններ: 1992 թ. մարտի 2-ին Հայաստանը դառնում է Միավորված ազգերի կազմակերպության լիիրավ անդամ, այնուհետև անդամագրվում է միջազգային մի շարք կազմակերպությունների, այդ թվում՝ Սևծովյան տնտեսական համագործակցությանը:

Արդեն միջազգային ճանաչում գտած հանրապետության իշխանությունների հիմնական խնդիրն է եղել դարաբաղյան պատերազմի դադարեցումը և շրջափակման վերացման միջոցով տնտեսական վիճակի բարելավումը: Այս նկատառումներով առաջնային պլան է մղվում Ղարաբաղյան հսկամարտության գոտում երկարաժամկետ զինադադարի և խաղաղ բանակցությունների հարցը: Վերջինս դառնում է Եվրոպայի անվտանգության և համագործակցության կոմիտեի (ԵԱՀԿ) քննարկման առարկա: Մակայն Ադրբեջանի իշխանությունները մերժում են Լեռնային Ղարաբաղի խնդրի քաղաքական մեթոդներով կարգավորման ուղղված ամեն մի առաջարկ՝ առաջ քաշելով Արցախը կրկին իրենց ենթարկելու անիրական պահանջները: Հանուն դրա նրանք նախընտրում են հարցը զենքով լուծելու եղանակը ու շարունակում իրենց պատերազմը Արցախի ու Հայաստանի դեմ:

1991 թ. նոյեմբերին Ադրբեջանի ազգային խորհուրդը (Մլիյ մեջլիս)-որոշում է կայացնում ջնջել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի անունը, նրա տարածքը միացնել Ադրբեջանին շրջանային հիմունքներով: Դրան հակառակ, 1991 թ. դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղը հանրապետի միջոցով փաստացի (de facto) իրեն հռչակում է Ադրբեջանից անկախ հանրապետություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ):

1992 թ. մայիսի 9-ին Արցախի ազատամարտիկները ազատագրում են հայոց հիմնավոր քաղաքը՝ Շուշին, իսկ մի քանի օր անց՝ Լաչինը: Դրանով Արցախի ազատագրական պայքարը թևակոխում է նոր փուլ:

1992 թվականի մարտին, Ձորագյուղի ազգաբնակչության պահանջով, սեփականաշնորհման տեղական հանձնաժողովը որոշում է վերասեփականացնորհում անցկացնել: Ահա այդ հանձնաժողովի կազմը. 1) Հակոբյան

Բորիս Սանասարի (նախագահ), 2) Մնացականյան Խաչիկ Սիրա (քարտուղար), 3) Մանուկյան Գագիկ Գառնիկի (անդամ, ինչպես հարյուրը, 4) Սահրադյան Վարազդատ Վանոյի, 5) Խաչատրյան Վոլոդյա նիսիանի, 6) Խղաթյան Շալիկո Արամի, 7) Ավետիսյան Ժորա Կնյու, 8) Քալոյան Հայկ Մնացի, 9) Պողոսյան Վարազդատ Արտաշի, 10) Ղազարյան Սարո Հայրիկի, 11) Գալստյան Միշա Հայկարամի, 12) Մանուկյան Միհրան Սիրականի, 13) Աղեկյան Հայկազ Աղեկի, 14) Մովսիսյան Արմեն Աշոտի, 15) Ումբրատյան Գագիկ Բալաբեկի, 16) Գալստյան Դերենիկ Հայկարամի, 17) Ղազարյան Գոռ Սարգսի, 18) Մանուկյան Ավետիք Ռուշանի, 19) Մնացականյան Արմենակ Սահրադի, 20) Գուկասյան Գագիկ Սարգսի, 21) Սաֆարյան Հայկ Հայկազի, 22) Պողոսյան Յուրա Ֆաթիբեկի, 23) Ասատրյան Նորայր Ալբերտի, 24) Սարգսյան Հրաչիկ Գարսևանի, 25) Աղեկյան Միշա Հակոբի, 26) Ավետիսյան Ալբերտ Շամխագի, 27) Մանուկյան Հենրիկ Ռուշանի, 28) Գրիգորյան Ժորա Հայկի, 29) Ղազարյան Ավետիք Հակոբի, 30) Արգունյան Գառնիկ Հակոբի, 31) Մուրադյան Վանուշ Յուրդաբեկի, 32) Ավետիսյան Համլետ Կարապետի, 33) Հակոբյան Գառնիկ Մարտոյի, 34) Սարգսյան Մուրա Նիկոլայի:

Հողերից բացի սեփականաշնորհման տակ են դրվում մալ անասունները (1000 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, որոնցից 420 գլուխ կովեր, այնուհետև 4000 գլուխ մանր եղջերավոր անասուններ, որոնցից 2300 գլուխ մայր ոչխարներ), իսկ տեխնիկան մնում է 1992 թ. ապրիլի 1-ից կազմավորված գյուղական խորհրդին կից տնտեսավարկային ձեռնարկության տնօրինության տակ:

Սեփականաշնորհված հողերի համար, ըստ հողերի կարգի, գյուղագին օրենքի համաձայն պարտավորվում է հարկ վճարել, իսկ անասունների համար՝ ոչ: Հողի համար հարկը գյուղացուց պահանջվել է ստանալուց երեք տարի հետո: Փաստորեն ձորագյուղացին հողի համար հարկը վճարել է 1995 թվականից:

Աղբբեջանական հրոսակախմբերի դեմ Արցախի ազատագրական պայքարը, որը 1992 թ. Շուշիի և Լաչինի ազատագրումից հետո քակոխել էր նոր փուլ, շարունակվում է 1993-1994 թվականներին: Այդ ընթացքում հայ ազատամարտիկները ազատագրում են մալ Քելբաջարը, Աղդամը, Ֆիզուլին, Ջեբրաիլը, Չանգեղանը:

Ձորագյուղացի երիտասարդներից շատերը կամավոր կերպով մասնակցել են արցախյան հերոսամարտին: Նրանցից Մամվել Ռազմիկի Շահնազարյանը, Պավլուշ Խաչոյի Ավետիսյանը և Մամվել Գառնիկի Սարգսյանը այն խիզախ մահապարտների գնդի անդամներից են եղել, որ Վազգեն Սարգսյանի հորդորներով կազմակերպվել է Քելբաջարի կողմերով առաջ շարժվող թշնամու տանկերի ճանապարհը փակելու նպատակով: Երկու Մամվելները և Պավլուշը այդ կռիվներում աչքի են ընկնում իրենց գերմարդկային խիզախությամբ: Այդ կռիվներին մասնակցող ձորագյուղացի խիզախ

երիտասարդներից 2-ը՝ Արկադի Աղվանի Խրչոյանը և Սահակ Արմենակի Միսապոյանը ընկնում են հերոսի մահով: Ստորև բերվում է դրանց նկարները:



Խրչոյան Արկադի Աղվանի



Սահակյան Սահակ Արմենակի

Արցախյան ազատագրական կռիվներին կամավորագրվածների եռամսյա հավաքներին մասնակցել են ձորագյուղացի հետևյալ քաջորդիները. 1) Շահնազարյան Արտեմ Գրիգորի, 2) Մարտոյան Օնիկ Թենգիզի, 3) Սարոյան Շիրազ Ռազմիկի, 4) Արրահամյան Ռուբիկ Արշակի, 5) Ասատրյան Նորայր Ալբերտի, 6) Սահակյան Էդիկ Արամի, 7) Քալոյան Վազգեն Կամսարի, 8) Մարոյան Հայկ Արրահամի, 9) Կարապետյան Գարսևան Ասքանագի:

Արցախյան կռիվներին կամավորականներից մարտի համար խիզախ զինվորներ կոչվելու գործում իր հմուտ սպայական տաղանդով աչքի ընկավ ձորագյուղացի և այդ գյուղի առաջին գնդապետ Հրաչիկ Խաչատուրի Հակոբյանը:

1993 թ. դեկտեմբերին Աղբբեջանը նոր հարձակում է սկսում, որը տևում է մինչև 1994 թ. մայիսը, երբ Ռուսաստանի միջնորդությամբ ու Միմսկի խմբի օգնությամբ կնքվում է զինադադար: Ընդ որում, Աղբբեջանը զինադադարին համաձայնվում է առանց նախապայմանի: Ամբողջ շեշտը դրվում է բանակցային գործընթացի վրա:

ԵԱՀԿ Միմսկի խմբի բանակցություններում Հայաստանն արտահայտում է հետևյալ սկզբունքը. «Հայաստանի Հանրապետությունը կվավերացնի յուրաքանչյուր փաստաթուղթ, որն ընդունելի կլինի Ղարաբաղի ժողո-

վրդի համար և ստորագրված ԼՂՀ ղեկավարության կողմից»: Իսկ Լեոն Գարաբաղի ղեկավարության դիրքորոշումը միանգամայն հստակ էր. բացառում էր որևէ ուղղակի ենթակայություն Ադրբեջանին և կախվածություն նրանից: ԼՂՀ-ն հանդես է եկել ստեղծված իրողությունների հաշվառմամբ և միմյանց նախապայմաններ չթելադրելու դիրքերից՝ առաջարկելով բանակցություններ սկսել կարգավիճակի սկզբունքային հիմքերի ճշտումից: Միայն Ադրբեջան-Գարաբաղ ուղղակի բանակցությունների միջոցով կարելի էր սահմանել հակամարտող կողմերի փոխզիջումների շրջանակը և քննել խնդրի քաղաքական կարգավորման՝ երկուստեք ընդունելի տարբերակը: Հակառակ սրան՝ Ադրբեջանը համառորեն ԼՂՀ-ն չէր ճանաչում որպես հակամարտող կողմ:

Միջազգային հանրության աճող քաղաքական ճնշումը Հայաստանի իշխանություններին դրոշմ է գնալ դարաբաղյան հարցում հնարավոր զիջումների քննարկմանը: Հանրապետության նախագահ և ՀՀԸ-ական լիդեր Լ. Տեր-Պետրոսյանը, տեսնելով, որ իր կառավարության քաղաքական գործունեությունը սպառել է իրեն, խոր ճգնաժամի մեջ է գտնվում և պետք է հրաժարական տա, նախագահական պաշտոնը գերադասելով ամեն ինչից, նույնիսկ դարաբաղյան կռիվներում զոհված հազարավոր հայ երիտասարդների կյանքից, շարունակում է մնալ իր աթոռին, ենթարկվելով միջազգային ճնշմանը, համաձայնություն է տալիս Գարաբաղը «փուլ առ փուլ» վերադարձնել Ադրբեջանին: Սա հայ ժողովրդին ՀՀԸ-ականների հասցրած հերթական աղետն էր՝ հասցրած բոլոր աղետներից ամենադաժանը:

Տանելով բոլոր զրկանքները հանուն Գարաբաղի ազատության՝ հասարակությունը ըմբոստանում է դարաբաղյան հարցում ցանկացած նահանջի դեմ: Արդյունքում 1998 թ. փետրվարի 3-ին կատարվում է իշխանափոխություն: Մարտ ամսին ընտրվում է հանրապետության նոր նախագահ՝ Գարաբաղի ազատագրական պայքարի լիդերներից Ռոբերտ Քոչարյանը: Սկսվում է դարաբաղյան բանակցությունների նոր փուլ:

Սեփականաշնորհման տարիներին, երբ դեռ Չորագյուղի գյուղական խորհրդի նախագահ էր աշխատում Բորիս Սանասարի Հակոբյանը (նա աշխատել է մինչև 1994 թվականը), գյուղի «Չաիրներ» կոչվող վայրից շուրջ 40 հա հողատարածք է հատկացվում բնակչությանը որպես տնամերձ: Հողերի և անասունների վերասեփականաշնորհումից հետո, նրա օրոք գյուղական խորհրդին կից ստեղծված անտհաշվարկային ձեռնարկությունից (ԳԸԿ) վերցվում է տեխնիկայի մի մասն ու սեփականաշնորհվում (տեխնիկայի մնացած մասը մնում է ԳԸԿ-ի սնօրինության տակ): Նրա օրոք գյուղական խորհրդի աշխատակազմը ունեցել է հետևյալ պատկերը՝ 1) Նորայր Ալբերտի Ասատրյան (տեղակալ), 2) Հարազատ (Ազնիվ) Հայկազի Տոնեյան (քարտուղար), 3) Սամվել Արմենակի Ֆահրադյան (հաշվապահ), 4) Սոյոսյա Ավետիքի Ղազարյան (զինղեկ), 5) Ժորա Բենիամինի Խաչատրյան

(անտեսագետ), 6) Գալուստ Դերենիկի Գալստյան (զանձապահ): Գյուղական խորհուրդն ուներ 32 ղեկապետ:

Դերենիկ Հայկի Գալստյանը գյուղական խորհրդի նախագահ է աշխատել 1994-1996 թթ.: Նրա օրոք շարունակվում ու ավարտին է հասցվում սեփականաշնորհման գործընթացը: Նախ սեփականաշնորհվում է տեխնիկայի մնացած մասը (մինչև սեփականաշնորհումը Չորագյուղի պետական տնտեսությունը ուներ 10 քրթուրավոր տրակտոր, 15 անիվավոր տրակտոր, 3 կոմբայն, բազմաթիվ շարքացաններ, կուլտիվատորներ (քաղհանողներ), գոլիչ մեքենաներ, 31 բեռնատար ավտոմեքենաներ, 1 մարդատար ավտոմեքենա, մեծ քանակությամբ պահեստամասեր, բենզինի զբանասակառներ (ցիստեռներ) և այլն): Այնուհետև շարունակվում է օբյեկտների սեփականաշնորհումը (մինչև սեփականաշնորհումը Չորագյուղի պետական տնտեսությունն ուներ 8 ոչխարանոց, 6 կովանոց, 3 հորթանոց, 3 պահեստ, գյուղամիջում գտնվող ակումբ-գրադարանի և բաղնիսի շենքերը, կալերում գտնվող գրասենյակի շենքը և այլն): Նրա աշխատած տարիներին կատարվել է շուրջ 15 հա տնամերձ հողերի բաժանում երիտասարդ ընտանիքներին: Նրա օրոք գյուղական խորհրդի աշխատակազմը հիմնականում մնում է նույնը: Փոփոխությունը հետևյալն է՝ 1) Էդիկ Արամի Սահակյանը նշանակվում է քարտուղար՝ Հարազատ (Ազնիվ) Հայկազի Տոնեյանի փոխարեն, իսկ վերջինս նշանակվում է զանձապահ՝ Գալուստ Դերենիկի Գալստյանի փոխարեն (վերջինս ազատվում է աշխատանքից): 2) Աշոտ Բեգելի Պողոսյանը նշանակվում է զինղեկ՝ Սոյոսյա Ավետիքի Ղազարյանի փոխարեն (վերջինս ազատվում է աշխատանքից այլ աշխատանքի անցնելու պատճառով): 3) Աիդա Անուշավանի Սկրտչյանը նշանակվում է տեխնիկական աշխատող: Գյուղական խորհրդի ղեկապետներին թիվը նվազում է 10-ով:

1996 թվականից գյուղական խորհուրդները իրենց տեղը զիջում են գյուղապետարաններին, որոնք դառնում են տեղական կառավարման միակ օրգանները գյուղերում: Գյուղապետարանները կազմակերպվում են ընտրությունների միջոցով: Գյուղական խորհրդի նախագահին զալիս է փոխարինելու ընտրովի գյուղապետը, իսկ գյուղական խորհրդի ղեկապետներին՝ ընտրովի գյուղապետարանի կամ ավագանու անդամները: Չորագյուղի համայնքի առաջին գյուղապետի և գյուղապետարանի կամ ավագանու ընտրությունը տեղի է ունեցել 1996 թ. դեկտեմբերի 13-ին: Չորագյուղի համայնքի առաջին գյուղապետ է ընտրվում բարձրագույն կրթություն ունեցող Ռաֆիկ Խորենի Գրիգորյանը: Նա այդ պաշտոնը վարում է 1996 թ. դեկտեմբերի 13-ից մինչև 2000 թ. հունվարի 4-ը: Առաջին ավագանու անդամներ են ընտրվում՝ 1) Նվեր Գյուլաբի Սկրտչյանը, 2) Գոռ Մարգսի Ղազարյանը, 3) Փայլակ Սոյրաբի Աբրահամյանը, 4) Համլետ Կարոյի Ավետիսյանը, 5) Շիրազ Հակոբի Բաղդասարյանը, 6) Մամիկոն (Համլետ) Հայկազի Միերյանը, 7) Խաչիկ Գրիգորի Սողոյանը:

Բացի վերջին երկուսից, մյուսներն ունեին բարձրագույն կրթություն, քիվը կազմում էր ամբողջի շուրջ 72 %: Իսկ դա չափազանց բարձր տոկոս էր, երբ համեմատում ենք գյուղական խորհրդի ղեկավարների կազմի հետ:

Ձորագյուղի գյուղապետարանը ունեցել է նաև իր աշխատակազմը: Ուսումնական հաստատությունների ցանկում հետևյալն էր: 1) Վարազդատ Արտաշի Պողոսյան (գյուղապետի տեղակալ), 2) Ժորա Հայկի Գրիգորյան (գյուղապետի տեղակալ), 3) Հարազատ Հայկազի Տոնեյան (քարտուղար), 4) Նորայր Արբերտի Ասատրյան (գլխավոր հաշվապահ), 5) Ժորա Բենիամինի Խաչատրյան (տնտեսագետ), 6) Միհրան Միրակյանի Մանուկյան (գանձապահ-հաշվետար), 7) Տիգրան Ռաֆիկի Հակոբյան (գինեղեկ), 8) Տիգրան Արմենակի Ֆահրադյան (ճարտարապետ), 9) Իշխան Գառնիկի Մանուկյան (ՋՈՄ-ի ղեկավար), 10) Գրիգոր Մակիչի Գրիգորյան (ավտոմեքենայի վարորդ), 11) Աիդա Անուշավանի Սկրտչյան (տեխնիկական աշխատող):

Բացի վերջին երեքից, մյուսներն ունեին բարձրագույն կրթություն, որոնց քիվը կազմում էր ամբողջի շուրջ 72 %: Իսկ դա բավականին բարձր տոկոս էր, երբ համեմատում ենք ոչ միայն անցյալի գյուղական խորհրդի գործկոմի, այլև պետական տնտեսության ղեկավար կադրերի կազմի հետ (կոլտնտեսության ղեկավար կադրերի կազմի հետ համեմատելը ընդհանրապես եզրեր չունի):

Ինչպես ավագանու անդամների, այնպես էլ աշխատակազմի մեջ բարձրագույն կրթություն ունեցողների աղյուսի բարձր տոկոսը խոսում է գյուղապետարանի բարձր մակարդակի մասին:

Ինչպես ավագանու անդամները, այնպես էլ աշխատակազմի անդամներն իրենց եռանդուն և կազմակերպչական մեծ ընդունակություն ունեցող գյուղապետ Ռաֆիկ Խորենի Գրիգորյանի գլխավորությամբ, սկսած հենց առաջին տարվանից, հսկայական գործ են կատարել գյուղը խմելու և ոռոգման ջրով բավարարելու, բուժապասարկման ու կուլտուր-կենցաղային վիճակը բարելավելու, գյուղը բարեկարգելու, երիտասարդների մեջ ռազմա-հայրենասիրական ոգու բարձրացման, ինչպես նաև ազգային հավատքի վերաբերյալ գաղափար արթնացնելու ուղղությամբ: Այսպես՝ 1) 1997 թ. գյուղի Դաշներ կոչվող թաղամասի համար երկաթյա խողովակներով գյուղամիջին ոռոգման և խմելու ջուր է բերվել Ակներ կոչվող առատ աղբյուրից: 2) 1999 թ. կառուցվել ու գործարկվել է Բոռբոռ կոչվող հորդառատ աղբյուրից գյուղ տանող 14 կմ երկարությամբ ինքնահոս ջրագիծը, որով վերջնականապես լուծվել է գյուղը ոռոգման և խմելու ջրով բավարարելու հարցը (ջրագծի բացմանը ներկա են եղել Հայաստանի Հանրապետության վարչապետ Արմեն Դարբինյանը, ինչպես նաև Փախատականների հարցերով նորվեգա-խորհրդի հայաստանյան գրասենյակի տնօրեն Յան Վիլյուսենը, որին ջրատարի ծրագրավորման և հաջող իրականացման համար շնորհվել է Ձորագյուղի պատվավոր քաղաքացու կոչում): 3) Նախագծվել են ու սկսվել

գյուղի բուժամբուլատորիայի կառուցման աշխատանքները (նախկին շենքը ստացել էր): 4) Վերանորոգվել են գյուղապետարանի և N 1 միջնակարգ դպրոցի շենքերը, վերագործարկվել է բնական գազի մատակարարումը, որ ընդհատվել էր 1990 թվականից, վերանորոգվել են ինչպես գյուղամիջյան, այնպես էլ դաշտամիջյան ճանապարհները: 5) Երիտասարդ սերունդի մեջ ռազմահայրենասիրական դաստիարակություն ամրապնդելու նպատակով գործի է դրվել Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան ազատամարտում զոհվածների հուշարձաններին ծաղիկներով ու ծաղկեպսակներով շարունակական այցելությունները: 6) Գյուղապետարանին կից ստեղծվել է պատերազմի վետերանների ակումբ, որը կազմակերպում է հանդիպումներ վետերանների հետ և հոգ տանում նրանցից կարիքավորներին նյութական օգնություն ցույց տալու հարցում: 7) Զբիստունեական հավատքը ժողովրդի մեջ արթնացնելու նպատակով վերանորոգվել և գործարկվել է գյուղի Սուրբ Կարապետ կամ Մասրուց անապատ եկեղեցին, որի բացմանը ներկա է եղել և օրհնել ծայրագույն պատրիարք Ամենայն Հայոց Գարեգին II կաթողիկոսը: 8) Ըահագործման է հանձնվել դեռևս 1989թ. կառուցված, բայց չկահավորված մսուր-մանկապարտեզի շենքը, որտեղ ընդգրկվել են 80 երեխաներ՝ բաժանված 4 խմբերի: Մանկապարտեզում աշխատում են 22 հոգի: Մսուր-մանկապարտեզի ֆինանսավորումը կատարվում է տեղական բյուջեի հաշվին:

Իր հիանալի աշխատանքի համար Ռաֆիկ Խորենի Գրիգորյանը 1999 թվականին Գեղարքունիքի մարզի մասշտաբով արժանանում է տարվա «լավագույն մարդ» բարձր շնորհին և հանրապետության վարչապետի ցուցումով առաջ է քաշվում ու 2000 թ. հունվարի 4-ից նշանակվում Գեղարքունիքի մարզի փոխմարզպետ:

2000 թ. ապրիլի 15-ից մինչև այժմ (2002 թ. հուլիսի 25-ը) Ձորագյուղի համայնքի գյուղապետ է աշխատում բարձրագույն կրթություն ունեցող Լյուսի Խորենի Գրիգորյանը: Նրա օրոք հիմնականում փոխվել է ավագանու անդամների կազմը: Նախկինից մնացել են Գոռ Սարգսի Ղազարյանը և Փայլակ Սոյբաթի Արրահամյանը: Նոր են ընտրվել՝ 1) Վարազդատ Արտաշի Պողոսյանը, 2) Յուրա Ֆաթիբեկի Պողոսյանը, 3) Անդրանիկ Արտեմի Սկրտչյանը, 4) Հայկ Մնացի Քալոյանը, 5) Քաջիկ Ռազմիկի Հովհաննիսյանը, 6) Արարատ Զավենի (Մեղրակի) Սաֆարյանը:

Բացի Յուրա Ֆաթիբեկի Պողոսյանից և Քաջիկ Ռազմիկի Հովհաննիսյանից, ավագանու մյուս բոլոր անդամները ունեն բարձրագույն կրթություն, որոնց քիվը կազմում է ամբողջի 73 %-ը, որը մեկ տոկոսով բարձր է Ռաֆիկ Գրիգորյանի ժամանակաշրջանի ավագանու անդամների կազմի ունեցած բարձրագույն կրթություն ունեցողների տոկոսից:

Ինչ վերաբերում է աշխատակազմին, ապա այն բաղկացած է 12 հոգուց: Դրանցից նոր են նշանակվել 4 հոգի՝ 1) Սամվել Հայկի Գրիգորյանը (գյուղապետի տեղակալ), 2) Հայկազ Աղեկի Աղեկյանը (ճարտարապետ),

3) Հովիվ և անասնաբույժի Ռոմբաշատյանը (համակարգչավար), 4) Սվետիկ Զալիբ Ավոյանը (խրտուղարուհի): Մնացածները նախորդ աշխատակազմի անդամներին են: Դրանք են՝ 1) Ժորա Հայկի Գրիգորյանը (գյուղապետի տղակալ), 2) Հարազատ Հայկազի Տոնեյանը (քարտուղար), 3) Նորայր Ալբերտյանը (գլխավոր հաշվապահ), 4) Ժորա Բենիամինի Խաչատրյանը (տնտեսագետ), 5) Սիմոն Սիրականի Մանուկյանը (գանձապահ-հաշվետար), 6) Իշխան Գառնիկի Մանուկյանը (ԶՈՄ-ի ղեկավար), 7) Գրիգոր Մակիչի Գրիգորյանը (ավտոմեքենայի վարորդ), 8) Ախլա Անուշավանի Սկրտչյանը (տեխնիկական աշխատող):

Բացի Իշխան Գառնիկի Մանուկյանից, Գրիգոր Մակիչի Գրիգորյանից, Սվետիկ Զալիբեյի Ավոյանից և Ախլա Անուշավանի Սկրտչյանից, աշխատակազմի մյուս բոլոր անդամներն ունեն բարձրագույն կրթություն, որոնց թիվը կազմում է ամբողջի շուրջ 65 %-ը, որը թեև 7 %-ով ցածր էր Ռաֆիկ Գրիգորյանի ժամանակաշրջանի աշխատակազմի ունեցած բարձրագույն կրթություն ունեցողների տոկոսից, բայց այնուամենայնիվ բարձր ցուցանիշ է համեմատած նախկին գյուղական խորհրդի և պետական տնտեսության աշխատակազմերի հետ:

Փաստորեն Ռաֆիկ Գրիգորյանի աշխատած ժամանակաշրջանին նման, ըստ իր կազմում ունեցած բարձրագույն կրթություն ունեցողների թվի, Լյովա Գրիգորյանի աշխատած ժամանակաշրջանում էլ գյուղապետարանը ունեցել է բարձր մակարդակ:

Լյովա Խորենի Գրիգորյանի ժամանակ նույնպես մեծ աշխատանք է կատարվել Ձորագյուղի բուժապասարկման ու կուլտուր կենցաղային փհնակի բարելավման, գյուղի բարեկարգման, երիտասարդ ընտանիքներին տնամերձ հողամասեր տրամադրելու և այլ հարցերի ուղղությամբ: Այսպես՝ 1) Ավարտվում են բուժամբուլատորիայի շենքի շինարարական աշխատանքները, և շենքը հանձնվում է շահագործման: 2) Վերանորոգվում են մսուր-մանկապարտեզի և N 1 միջնակարգ դպրոցի շենքերը, ինչպես նաև գյուղամիջյան ու դաշտամիջյան ճանապարհները: 3) Պարսպապատվում է «աստվատուր» կոչվող գերեզմանատունը: 4) Որպես տնամերձ 80 հա տարածք է բաժանվել նորաստեղծ ընտանիքներին: 5) Ջրաբաշման (դրենաժային) եղանակով չորացվում են Չախրներ կոչվող տարածքի ճահճուտները, որոնք նույնպես ապագայում կտրամադրվեն նորաստեղծ ընտանիքներին որպես տնամերձ:

Փաստորեն գյուղի ամբողջ մշակելի հողերից գյուղապետարանի տրամադրության տակ է մնացել ընդամենը 30 հա պահուստային հողատարածք, որը ապագայում դարձյալ կտրամադրվի նորաստեղծ ընտանիքներին:

Ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ Ձորագյուղում մասավոր սեփականատիրության և շուկայական հարաբերություններին անցնելուց հետո գյուղատնտեսությունը վերելք ապրելու փոխարեն վայրէջք է ապրել: Օրինակ՝ ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ Ձորա-

գյուղում 1993 թ. գյուղատնտեսության զուտ արտադրանքի ծավալը, 1989 թվականի նկատմամբ, նվազել է 18 %-ով: Ուշագրավ է նաև այն փաստը, որ 1999 թվականին հանրապետությունում, 1989 թվականի նկատմամբ, 27 հազար տոննայով պակաս հացահատիկ է արտադրվել: Դրա գլխավոր պատճառը հետևյալն է:

Չնայած մասնավոր սեփականատիրական հողօգտագործման անցնելը բարդ գործընթաց էր, որը պահանջում էր հողի անհատական մշակման պայմանների, ինչպես նաև գյուղատնտեսական տեխնիկայի և նրա օգտագործման հնարավորությունների երկարատև ու խոր քննարկում, բայց այն մեր հանրապետությունում կատարվեց հապճեպորեն, որ նույնիսկ հնարավորություն չտրվեց անցկացնել ճիշտ գույքագրում և վերագնահատում:

Այդ հարվածի տակ է ընկնում նաև Ձորագյուղը, որի պետական տնտեսությունը Սևանի ավազանի պետական տնտեսությունների մեջ իր բարձր արտադրողականությամբ գրավում էր առաջին տեղը: Այդ պատճառով Ձորագյուղում առաջ են եկել հետևյալ ծանր հետևանքները:

1) Ձորագյուղի պետական տնտեսությունում, ինչպես հանրապետության մյուս տնտեսություններում, սեփականաշնորհման հետևանքով մասնատվել, փոշիացել է գյուղատնտեսության համար օգտագործվող ամբողջ հողատարածքը: 1991 թվականին Ձորագյուղում այն բաժանվում է 68 գյուղացիական և կոլեկտիվ գյուղացիական տնտեսությունների, իսկ 1992 թվականի վերասեփականաշնորհումից հետո՝ շուրջ 667 գյուղացիական տնտեսությունների: Գյուղացուն տրվող մի հողաբաժինը կազմել է 0,72 հա, իսկ յուրաքանչյուր միջին ընտանիքին բաշխվել է 1,44 հա: Ելնելով հողի որակի տարբերությունից, գյուղացուն տվել են այդ հողը ոչ թե մի տարածքում, այլ գյուղի հողատարածության տարբեր ծայրամասերում (մի մասը՝ արևելքում, մյուսը՝ արևմուտքում, հաջորդը՝ հարավում, մյուսը՝ հյուսիսում, որոնք իրարից ունեն շուրջ 7-8 կմ հեռավորություն): Մշակման ընթացքում հողի այսպիսի բաժանվածությունը առաջ է բերել բարդություններ՝ կապված հատկապես մեխանիզացիայից օգտվելու հետ:

2) Սեփականաշնորհման հետևանքով փոշիացել է Ձորագյուղի պետական տնտեսության մեխանիզացիան: Այն անցել է անհատ մարդկանց ձեռքը, որոնք օգտագործման համար առաջարկում են բարձր գներ: Սկզբից գյուղացին դիվանդակներով լցված իր բաքը շալակած վազել է այս կամ այն տրակտորի ու տրակտորիստի հետևից: Բայց դա կարճ է տևել: Գյուղացու դրամական միջոցները վերջացել են: Անվճարունակ գյուղացին ստիպված անցել է ձեռքի աշխատանքի, որը խիստ ցածրացրել է հողի բերքատվությունը:

3) Հողը մշակելու ընթացքում առաջացել են գյուղատնտեսական վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցների կիրառումը, իսկ անվճարունակ ձորագյուղցին հրաժարվել է դրանցից: Դա էլ, բնականաբար, իր հերթին ցածրացրել է հողի բերքատվությունը:

4) Սեփականաշնորհման հետևանքով անհատ մարդկանց ձեռքն անցել Չորագյուղի պետական տնտեսության ավտոմեքենաները: Բեռ տեղափոխելու համար վարորդը առաջարկում է բարձր գներ: Չորագյուղացին չի կարողանում իր հողամասից ստացած բերքի ավելցուկը շուկա դուրս բերել, քանի որ շուկա տանող ավտոմեքենայի և շուկայի վրա կատարված ծախսերը ավելի քանի էին նստում գյուղացու վրա, քան վաճառվող մթերքից ստացված գումարը: Գյուղացին ստիպված մշակում է ոչ քե ամբողջ հողը, այլ նրա այն մասը, որի արդյունքով կարողանում է պահպանել իր գոյությունը: «Միայն սեփական սպառման համար արտադրելու» սկզբունքը հանգեցրել է նրան, որ գյուղացուն տրված վարելահողի կեսից ոչ պակաս մասը չի մշակվել, և, բնականաբար, բերքն էլ չուրջ կեսով չափ պակասել է:

5) Սեփականաշնորհման հետևանքով Չորագյուղի պետական տնտեսության հսկայական քանակություն կազմող անասունները, որ ձեռք էին բերվել 70 տարիների քրտնաջան աշխատանքի միջոցով և առելի եկամուտ էին բերում կաթնամթերքի ու մսամթերքի վաճառքի միջոցով, անվարձաբաժնի քաժանվում են գյուղացիներին: Սակայն դրանց մեծ մասը կարճ ժամանակից հետո վերացել է: Պատճառն ամենից առաջ այն էր, որ գյուղացին չունեի անասուններ պահելու բավարար պայմաններ՝ կապված հատկապես անասնակերի հետ: Գյուղացուն տրված փոքրիկ խոտհարքով կարելի էր պահել շատ քիչ անասուն (մի կով կամ մի կով, երկու ոչխար): Դրանցից ստացած կաթնամթերքով գյուղացին չի էլ կարող կաթնամթերքի հետ կապված իր ընտանիքի պահանջները բավարարել, էլ ուր մնաց նրա ավելցուկով շուկա դուրս գալ:

Փաստորեն սեփականաշնորհումից հետո ձորագյուղցին ընկել է բացարձակ աղքատ վիճակի մեջ: Ո՛չ հողից, ո՛չ էլ անասուններից նա մթերքների արտադրության ավելցուկ չի ստանում, որոնցով նա կարողանա շուկա դուրս գալ և հարստանալ: Այլևս չկա գործարանի արտադրամասը, որից ստացած աշխատավարձով գյուղացին բարելավում էր իր կյանքը:

Պետությունը հիմա է հասկացել, որ շտապողականություն է հանդես բերել կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները լուծարելու գործում: Նա հասկացել է, որ այն տնտեսությունները, որոնք կարող էին ապահովել բարձր արտադրողականություն ու շահութաբերություն, չպետք է լուծարվեին, փոշիացվեին: Այդ է պատճառը, որ այժմ պետությունը ձգտում է սեփականաշնորհման հետևանքով մասնավորապես, փոշիացած հողակտորները միավորել, խոշորացնել: Սակայն պետությունը չի փորձում ինքը կատարել առաջին քայլը, որովհետև դրանով կկորցնի իր նկատմամբ ժողովրդի ունեցած վերջին հավատը: Նա սպասում է, որ ժողովուրդն իր ներքին մղումով, իր ներքին համաձայնությամբ հասնի դրան: Իսկ դա էլ, ակներևաբար, տեղի չի ունենում: Փաստորեն հողամշակման գործում ամբողջ հանրապետությունում, այդ թվում նաև Չորագյուղում, առաջ է եկել ճգնաժամ:

Չորագյուղի գյուղապետարանը, որ բավականին լավ է աշխատում և իր սեփական նախաձեռնությամբ հիմնովին լուծել է ամբողջ գյուղի ինքնահստատգման և խմելու ջրի հարցը, գուցե կփորձի նախաձեռնություն հանդես բերել նաև հետևյալ հիմնախնդիրները լուծելու գործում:

1) Լեռնային Ղարաբաղի և նախկին խորհրդային հանրապետությունների մեծ գուցե կարելի է Չորագյուղում էլ ստեղծել «մասնավոր սեփականատիրության հիմքի վրա բաժնետիրական կոլեկտիվ տնտեսություն», ինչպիսին սեփականաշնորհման հենց սկզբին ստեղծվել էր Չորագյուղում «Ալաշկերտ» անունով և անմեղորեն լուծարվեց կարճ ժամանակից հետո: Մասնավոր սեփականության հիմքի վրա ստեղծված բաժնետիրական կոլեկտիվ տնտեսության էությունը հետևյալն է: Գյուղացին հողի սեփականաշնորհումից հետո ունեցած իր հողաբաժնով կարող է մասնակցել այդպիսի կոլեկտիվ տնտեսության ստեղծմանը: Անկախ նրանից գյուղացին կմասնակցի այդ տնտեսության աշխատանքներին, քե ոչ, բայց նա տարեվերջին տնտեսության ձեռք բերած բերքից իր հողաբաժնի չափով կստանա բերք՝ բնամթերքի կամ դրամի ձևով: Նրանք, ովքեր աշխատել են տնտեսությունում, բերքից բացի կստանան իրենց աշխատանքի դիմաց աշխատանքի վարձը: Իսկ նրանց, ում տնտեսությունում աշխատանք չի լինում, նրանք կարող են աշխատել գյուղի մյուս հիմնարկներում՝ գործարանի մասնաճյուղում, եթե այդպիսին կա, ինչպես նաև գյուղապետարանում, դպրոցում, մշակույթի տանը, ակումբ-գրադարանում, մտուր-մանկապարտեզում, բուժամբուլատորիայում, փոստում, կապի բաժնում, սեփական առևտրի կրպակներում, զբաղվել արհեստագործությամբ (գորգագործությամբ, կոշկակարությամբ և այլն): Ում աշխատանք չի լինում գյուղում, խոսքը հատկապես տղամարդկանց մասին է, նրանք կարող են մեկնել արտագնա աշխատանքի, եթե, իհարկե, կցանկանան:

2) Գուցե հնարավոր է արտասահմանյան բարեգործների ֆինանսական օգնության և մեր հանրապետության երկարատև վարկերի միջոցով գյուղապետարանին կից ստեղծել տնտեսաշխարհային ձևով աշխատող գյուղատնտեսական տեխնիկայի պարկ, ինչպիսին գյուղական խորհրդին կից ստեղծվել էր 1992 թ. և դարձյալ անմեղորեն լուծարվեց կարճ ժամանակից հետո:

3) Գուցե հնարավոր է գյուղապետարանին կից վերագործարկել գործարանի արտադրամասը՝ նրա շենքը սեփականաշնորհողի համաձայնությամբ՝ կապ հաստատելով Ռուսաստանի այն ժամանակվա պատվիրատու գործարանի հետ:

Հակառակ դեպքում, աշխատասեր ու տաղանդավոր ձորագյուղցին պիտի դարբերվի իր ուսերին կրի աղքատության այն ծանր բեռը, որ հասցրել է նրան ՀՀԾ-ականի հերթական աղետը՝ կապված հողի ոչ ճիշտ օգտագործման հետ:

Չորագյուղի աճող սերնդի կրթության և դաստիարակության առաջին դարբնոցը եղել է ու մնում է դպրոցը: 1990–1996 թվականներին, երբ N I միջ-

նակարգ դպրոցի տնօրեն է նշանակվում Նորայր Խաչիկի Մնացականը,² գլխավոր ուշադրությունը դարձվում է մանկավարժական կոլեկտի բարձրագույն կրթություն ունեցող մասնագետներով համալրելու վրա: Այդ յունքը լինում է այն, որ նրա աշխատած տարիներին չափազանց բարձրունում է դպրոցի առաջադիմությունը: Այդ տարիներին ավելանում է դպրոցի գերազանցիկ աշակերտների քիվը, որոնցից Գայանե Մերուժանի Գալստյանը 1991–1992 ուստարում արժանանում է ոսկե մեդալի: Այդ ուսումնական տարում դպրոցը գերազանց գնահատականներով են ավարտում ևս 7 հոգի (Ավետիսյան Աննա Կարապետի, Ղազարյան Ահարոն Գազիկի, Մանուկյան Սյուզաննա Գազիկի (Ավետիքի), Վարդանյան Ալիկ Ֆուրմանի, Մանուկյան Ստեփան Սիիրանի, Մնացականյան Վեհանուշ Խաչիկի, Մախամյան Փիրուզ Օթարի), որոնցից առաջին չորսը Գայանե Մերուժանի Գալստյանի հետ ընդունվում են բարձրագույն ուսումնական հաստատություններ: Ընդ որում, Գայանեն ընդունվում է Երևանի բժշկական ինստիտուտ: 1992–1993 ուստարում գերազանց գնահատականներով ավարտած աշակերտներից բարձրագույն ուսումնական հաստատություններ են ընդունվում Լիանա Յուրիկի Հարությունյանը և Քրիստինե Կորյունի Ասատրյանը: Արգասաբեր եղավ նաև 1993–1994 ուստարին, քանի որ գերազանց գնահատականներով շրջանավարտներից Աբսանա Ալբերտի Ավետիսյանը արժանանում է արծաթե մեդալի ու ընդունվում Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1995–1996 ուստարում գերազանց գնահատականներով ավարտածներից բարձրագույն ուսումնական հաստատություններ են ընդունվում Մարի Ալբերտի Ասատրյանը, Մերի Ժորայի Գրիգորյանը և Ալվինա Գազիկի Սարգսյանը:

1996–2002 թթ. Չորագյուղի N 1 միջնակարգ դպրոցի տնօրեն է նշանակվում Գայա Վահանի Միմոնյանը,³ որն ուներ բարձրագույն կրթություն (նա ավարտել էր երկու բուհ՝ սկզբից Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի ագրոնոմիական ֆակուլտետի արտադրությունից կտրված բաժինը, իսկ ապա՝ Երևանի մանկավարժական ինստիտուտի քիմիա–կենսաբանական ֆակուլտետը): Երկու դեպքում էլ նրա հիմնական մասնագիտությունը եղել են քիմիան ու կենսաբանությունը: Միմոնյանի տնօրենի աշխատանքն ստանձնելը նա մեծ ճանաչում ունեցող ուսուցչուհի էր: Աշակերտների նկատմամբ լինելով պահանջկոտ, նրանց զինում էր կայուն գիտելիքներով: Այդ էր պատճառը, որ դպրոցի շրջանավարտներից շատերը բուհ ընդունվելիս ընտրում էին քիմիա ու կենսաբանություն առարկաների հետ կապված ֆակուլտետները: Նա այդպես պահանջկոտ էր նաև իր երեխաների նկատմամբ, որոնք չորսն էլ եղել են ոչ միայն գերազանցիկներ, այլև մեդալի քեկնաձուներ, որոնցից 2–ը՝ Արմենը և Գայանեն արժանացել են ոսկե մեդալի:

² Չորագյուղի N 1 միջնակարգ դպրոցի տեղեկություններ (ՉՄԴՏ – I), 1972–2002 թթ., քերթ 8–9:

³ ՉՄԴՏ–I, 1972–2002 թթ., քերթ 10–12:

Բոլոր չորսն էլ ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ: Երեք աղջիկները լավ սովորելով իրենց մայրիկի մասնագիտական առարկաները՝ քիմիան ու կենսաբանությունը, ընդունվել են բժշկական ինստիտուտ (նրանցից 2–ը՝ Լուսինեն ու Գայանեն ավարտել են ու այժմ աշխատում են որպես բժշկուհիներ, իսկ Մետաքսյան ուսանող է): Ինչ վերաբերվում է որդուն՝ Արմենին, ապա նա, թեև լավ գիտեր քիմիա և կենսաբանություն առարկաները, բայց ընտրում է իրավագետի մասնագիտությունը: Բուհն ավարտելուց հետո, հետևելով իր հայրիկի՝ Մերուժան Հայկարամի Գալստյանի օրինակին, ընդունվում է ասպիրանտուրա, ստանում գիտական կոչում և աշխատանքի է անցնում Երևանի պետական համալսարանի իրավագիտական ֆակուլտետում որպես իրավագիտության դասախոս:

Դպրոցի տնօրենի պաշտոնը ստանձնելու հենց սկզբից Գայա Վահանի Միմոնյանը ձգտում է մանկավարժական կոլեկտիվը համալրել բարձրագույն կրթություն ունեցող որակյալ մասնագետներով: Այժմ այդ դպրոցում աշխատում են բոլոր առարկաների գծով բարձրագույն կրթություն ունեցող 24 ուսուցիչներ: Դրանք են՝ քիմիայի ու կենսաբանության ուսուցիչ և ուսումնական գծով փոխտնօրեն Միսիբար Աղաբեկի Ավդալյանը, կազմակերպական գծով փոխտնօրեն Լյուդմիլա Չավենի Սառաջյանը, հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ Նորայր Խաչիկի Մնացականյանը, Կարինե Սարգսի Դազարյանը, Մարի Ալբերտի Ասատրյանը, Մերի Ժորայի Գրիգորյանը, Լիանա Յուրիկի Հարությունյանը, գերմաներենի ուսուցիչներ Փառանձեն Ռաֆիկի Միքայելյանը, Աննա Կարապետի Ավետիսյանը, աշխարհագրության ուսուցիչներ Ռաֆա Գուրգենի Սահակյանը, Սիրանուշ Ռաֆիկի Հովհաննիսյանը, մաթեմատիկայի ուսուցիչներ Գրիգոր Վասակի Մովսիսյանը, Մամիկոն Համբարձումի Ավետիսյանը, Գուրգեն Անուշավանի Սարգսյանը, Ռուզաննա Ասատրյանը, ֆիզիկայի ուսուցիչներ Ժորա (Մանվել) Բեգեի Դավթյանը, Լիդա Հարությունյանը, կենսաբանության ուսուցիչ Սվետլանա Ալբերտի Ավետիսյանը, աշխատանքի ուսուցման ուսուցիչ Գևորգ Գառնիկի Հարությունյանը, ֆիզկուլտուրայի ուսուցիչ Տիգրան Խաչիկի Մնացականյանը, իրավագիտության ուսուցիչ Ժաննա Գարուշի Գասպարյանը, հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ Մարիետա Պետրոսյանը, Մերի Գրիգորյանը: Բարձրագույն կրթություն ունի նաև դպրոցի հաշվապահ Նաիրա Գազիկի Սարգսյանը:

Դպրոցն ունի հիմնալի դասվարներ, որոնք ունեն միջնակարգ մասնագիտական կրթություն: Դրանք են՝ Կարինե Նիկոլայի Խաչատրյանը, Ջուլիետա Աղիբեկի Պողոսյանը, Սոնա Արամի Հակոբյանը, Սեդա Հովհաննիսյանը, Ռոմելա Մկրտչյանը, Յուրա Գևորգի Հարությունյանը, Հայկանուշ Կամսարի Դավթյանը, Նարինե Սարգսի Դազարյանը, Լազր Բալաբեկի Ումրշատյանը: Միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողներից Գրիշա (Գազիկ) Աղվանի Մանուկյանը պարապում է ռուսաց լեզու, Գառնիկ Շամխազի Հարությունյանը՝ աշխատանքի ուսուցում, Կարինե Ժորայի Հա-

յոյանը՝ աշխատանքի ուսուցում, Նորիկ Ժորայի Հարոյանը՝ ֆիզկուլտուրայի մասնագիտական կրթություն ունեցող Անահիտ Նիկողայի յոյանը աշխատում է որպես գրադարանավար, որն իր պարտաճանաչության, աշխատասիրության և աշակերտների նկատմամբ ցուցաբերած մակարձական զգայուն վերաբերմունքի պատճառով վայելում է աշակերտական և ուսուցչական կոլեկտիվների ջերմ սերն ու համակրանքը:

Միջնակարգ կրթություն և զինվորական կոչում ունեցող Գառնիկ Մնացի Սողոյանը աշխատում է որպես զինղեկ:

Գպրոցն ունի շատ որակյալ կրտսեր անձնակազմ: Նրանցից Նարինե Հայկի Ասատրյանը և Թամարա Կիրակոսյանը աշխատում են որպես լաբորանտներ, Սվետլանա Ալբերտի Ավետիսյանը՝ քարտուղար-գործավար, Նարինե Ղազարյանը՝ ջոկատավար:

Գպրոցի տնտեսական մասում աշխատում են այնպիսի մարդիկ, որոնք սրտացավ վերաբերմունք են հանդես բերում ինչպես սանիտարական վիճակի, այնպես էլ գույքի պահպանության ուղղությամբ: Դրանք են՝ տնտեսավար Գրիշա Բաղդասարի Մախմուրյանը, սանտեխնիկ Ներսիկ Գասպարյանը, հավաքարարներ Սոֆյիկ Կիրակոսյանը, Ջենմա Աբրահամյանը, Օսան Վոլոդյայի Զաքարյանը, Անահիտ Գավթյանը, Մարիետա Սիմոնյանը, Գուրնար Մաֆարյանը, դպրոցի պահակ Ջանիբեկ Պարսամի Ասատրյանը, դռնապան Լենա Ասատրյանը, վառարան վառողներ Էլիզա Թարթիկյանը և Ջոյա Մախմուրյանը:

Գայլա Վահանի Սիմոնյանի աշխատած տարիներին չափազանց բարձրանում է դպրոցի առաջադիմությունը: Այդ տարիներին դպրոցի 10-րդ դասարանների շրջանավարտներից 21-ը եղել են գերազանցիկներ, որոնցից շատերը ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ: Դրանցից են՝ Արփինե Կորյունի Ասատրյանը, Շիրակ Ավետիքի Մանուկյանը, Աննա Ներսիկի Կիրակոսյանը, Էլմիրա Ավետիքի Մանուկյանը, Հասմիկ Սամվելի Գրիգորյանը, Աննա Լազրի Մախամյանը, Արմենուհի Խաչիկի Սահակյանը, Անի Գառնիկի Մանուկյանը, Էդիտա Մեթի Սարգսյանը, Մետաքսյա Սերուժանի Գալստյանը, Անի Աշոտի Սարգսյանը, Կարեն Մանվելի Գուկասյանը, Բյուրեղիկ Տիգրանի Մնացականյանը, Էլինա Մնացականի Գալստյանը, Կարեն Արայիկի Գրիգորյանը և ուրիշներ:

2002 թ. հուլիսին Գայլա Վահանի Սիմոնյանը այլ աշխատանքի անցնելու պատճառով ազատվում է աշխատանքից: Նրա փոխարեն N 1 միջնակարգ դպրոցի տնօրեն է նշանակվում քիմիա և կենսաբանություն առարկաների գծով բարձրագույն կրթություն ունեցող Մարգիս Հովհաննեսի Մարգսյանը, որը մինչև այդ աշխատում էր Ձորագյուղի N 2 միջնակարգ դպրոցում որպես ուսումնական գծով փոխտնօրեն:

1990 թվականից, երբ բացվում է Ձորագյուղի N 2 միջնակարգ դպրոցը⁴, մինչև այժմ (2002 թ. հուլիսի 25-ը) այդ դպրոցի անփոփոխ տնօրեն է աշխատում

տում բարձրագույն կրթություն ունեցող, հայոց լեզվի և գրականության հիստորիայի մասնագետ Ռաֆիկ (Ռազմիկ) Արամի Հակոբյանը: Ի սկզբանե ստանալով մանկավարժական կրթություն և իր ամբողջ կյանքը նվիրաբերելով մանկավարժական գործին՝ նա դարձել է հմուտ մանկավարժ և նույնքան էլ հմուտ մանկավարժական աշխատանք կազմակերպող տնօրեն:

Գպրոցի գործը լավ հասկացող տնօրենների մասն, Ռաֆիկ Արամի Հակոբյանը հենց սկզբից էլ աշխատել է իրեն հանձնարարված մանկավարժական կոլեկտիվը համալրել բարձրագույն կրթություն ունեցող որակյալ կուրսերով: 2002 թվականի հուլիսի տվյալներով այդ կոլեկտիվի 41 անդամներից 25-ը ունեն բարձրագույն կրթություն, որոնցից մեկն էլ՝ Նվեր Գյուլարի Սկրտչյանը, իբրև պսակը զարդարող շողշողուն աստղ, ունի գիտական կոչում: Այդ կոլեկտիվի բարձրագույն կրթություն ունեցող կադրերն են՝ քիմիայի ու կենսաբանության ուսուցիչ, փոխտնօրեն Ֆուրման Արտեմի Սարոյանը, հայոց լեզվի ուսուցիչ, երկրորդ փոխտնօրեն Գոհար Վեմիրի Հովսեփյանը, հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ Նվեր Գյուլարի Սկրտչյանը, Գայանե Արտավազի Գրիգորյանը, Շիրազ Ռազմիկի (Մուլտի) Հարությունյանը, Ջենի Ավետիքի Սկրտչյանը, մաթեմատիկայի ուսուցիչներ Լիաննա Ժորայի Գրիգորյանը, Վարազդատ Արտաշեսի Պողոսյանը, Նաիրա Գառնիկի Հարությունյանը, Շիրազ Գառնիկի Հարությունյանը, ինֆորմատիկայի և հաշվիչ մեքենաների ուսուցիչ Ռուզաննա Ռազմիկի Ժամհարյանը, ռուսաց լեզվի ուսուցիչներ Լաուրա Սերյոժայի Հովհաննիսյանը, Սոնա Հովսեփյանը, ֆիզիկայի ուսուցիչներ Անուշիկ Հովհաննեսի Բոստանջյանը, Հեթիքնազ Արտավազի Խաչատրյանը, գերմաներեն լեզվի ուսուցիչ Սյուզաննա Գազիկի Մանուկյանը, պատմության ուսուցիչներ Անժելա Վոլոդյայի Կիրակոսյանը, Նաիրա Գրիգորյանը, Սելանյա Հարազատի Գրիգորյանը, աշխարհագրության ուսուցիչ Նարինե Վորոնցովի Բադրյանը, աշխատանքի ուսուցման ուսուցիչ Փայլակ Սոյբաթի Աբրահամյանը, ֆիզկուլտուրայի ուսուցիչ Ահարոն Մարգսի Գազարյանը, կերպարվեստի ուսուցիչներ Դիանա Ավետիքի Գալստյանը, Բավական Ավդալի Ասատրյանը, Ալբերտ Ազնիվի Գալստյանը: Բարձրագույն կրթություն ունի նաև դպրոցի հաշվապահ Անժելա Գալստյանը:

Գպրոցում կան նաև քերի բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչներ: Դրանք են՝ գերմաներենի ուսուցիչ Ռշտունի Աշոտի Առաքելյանը, աշխատանքի ուսուցման ուսուցիչ Էլիզա Գառնիկի Հարությունյանը, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Ջենիկ Ավետիքի Սկրտչյանը:

1990 թվականի համեմատությամբ 2002 թ. լրացվել է նաև դպրոցի դասվարների կազմը: Նրանք բոլորն էլ ունեն միջնակարգ մասնագիտական կրթություն: Ահա այդ դասվարների լրացված նոր կազմը՝ Անահիտ Գարեգինի Ավդալյան, Ռուզաննա Ջավենի Մաֆարյան, Ջեփյուռ Անուշավանի Հարությունյան, Սվետլանա Արմենակի Ֆահրադյան, Գայանե Ջանիբեկի Թադևոսյան, Սելանյա Վոլոդյայի Կիրակոսյան, Սեդա Գրիգորի Մովսիս-

⁴ Ձորագյուղի N2 միջնակարգ դպրոցի տեղեկություններ, 1990–2002թթ, թերթ 1–6:

յան, Լիաննա Ժորայի Գրիգորյան (վերջինս սովորում է Մարտունո քաղաքում և դպրոցում պարապում է նաև հայոց լեզվի ու գրականության դասերը):

Սարգիս Համբարձումի Ղազարյանը, որը ունի միջնակարգ մասնագիտական կրթություն, երկար տարիներ աշխատել է որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ, ունի զինվորական կոչում, ծառայել է բանակում, քաջածանոթ է զինվորական գործին, այժմ N2 միջնակարգ դպրոցում աշխատում է որպես զինղեկ:

Հիանալի է աշխատում դպրոցի միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող գրադարանավար Ալիսա Ալբերտի Ասատրյանը: Նրան իր համեստության, կշռադատվածության ու խոհեմության համար սիրում ու հարգում են աշակերտական և ուսուցչական կոլեկտիվների անդամները:

Բանիմաց ու աշխատասեր է դպրոցի կրտսեր անձնակազմը: Այդ անձնակազմի մեջ են մտնում ջոկատավար Տաթևիկ Գառնիկի Աբրահամյանը, քարտուղարուհի Միլվա Սարգսի Սարգսյանը, լաբորանտներ Հասմիկ Հրահատի Սաֆարյանը, Արման Ֆուրմանի Սարոյանը:

Դպրոցի սանիտարական վիճակը և նրա գույքի պահպանությունը գտնվում է տնտեսական մասի աշխատողների հուսալի ձեռքերում: Տնտեսական մասում են աշխատում տնտեսավար Հակոբ Արամի Շահնագարյանը, էլեկտրիկ Արտակ Սարոյանը, հավաքարարներ Գուլգյազ Շահնագարյանը, Շողիկ Շահնագարյանը, Շողիկ Սաֆարյանը, Գուլիգար Սարգսյանը, Չինար Կիրակոսյանը, Վարդուհի Միդեյանը, դպրոցի պահակ Աղվան Սարոյանը, դռնապան Անգին Սարոյանը:

Թեև N 2 միջնակարգ դպրոցի ուսուցչական կոլեկտիվը առայժմ չի ճաշակել ոսկե կամ արծաթե մեդալ ստացող շրջանավարտներ ունենալու բերրանքը, ինչպես դա ունեցել է N 1 միջնակարգ դպրոցը, բայց համեմատած N 1 միջնակարգ դպրոցի հետ, այնտեղ ավելի շատ է ոչ միայն գերազանց գնահատականներով ավարտած աշակերտների, այլև նրանցից բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվածների քիվը: Սկսած 1992 թվականից, երբ N 2 միջնակարգ դպրոցը առաջին անգամ է տվել շրջանավարտներ, մինչև այժմ այդ դպրոցը ավարտողներից շուրջ 38 հոգի ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ, իսկ N 1 միջնակարգ դպրոցից նույն ժամանակաշրջանում այդքան ընդունվողներ չեն եղել: Դրանք են՝ Ալֆրեդ Յուրիկի Մանուկյանը, Ռոբերտ Հայկարամի Գևորգյանը, Լեռնիկ Նվերի Սաֆարյանը, Եղիշե Նվերի Սկրտչյանը, Վարուժան Նվերի Սաֆարյանը, Լալա Ավետիքի Գալստյանը, Անի Նվերի Սկրտչյանը, Տոյիկ Միշայի Մեդեյանը, Մարիետա Դերենիկի Պետրոսյանը, Ֆրեդերիկ Յուրիկի Պողոսյանը, Կարեն (Կարապետ) Համլետի Սարգսյանը, Հասմիկ Միշայի Գալստյանը, Էդգար Մերուժանի Մանուկյանը, Մարիամ Գառնիկի Մանուկյանը, Կարինե Համլետի Սարգսյանը, Եվա Գազիկի Դուկասյանը, Վահագն Աշոտի Սարգսյանը, Նորայր Կոբյունի Ասատրյանը, Լուսինե Վա-

լազդատի Պողոսյանը, Կիմ Ֆուրմանի Սարոյանը, Քրիստինե Սաղարկի Մուրադյանը, Սյուզաննա Հայկի Սարգսյանը, Պետրոս Սուրենի Մուրադյանը, Արթուր Գոռի Ղազարյանը, Նահապետ Յուրիկի Պողոսյանը, Վիգեն Հայկի Սաֆարյանը, Արփինե Նվերի Սաֆարյանը, Օնիկ Միշայի Մեդեյանը, Ժիրայր Հարազատի (Ազնիվի) Գրիգորյանը, Մելանյա Հարազատի Գրիգորյանը, Ռուզաննա Հարազատի Գրիգորյանը, Նվեր Ֆահրադի Ամիրտիսյանը, Նելի Միշայի Մեդեյանը, Հայկ Միշայի Գալստյանը, Նարինե Ռուբիկի Բաղդասարյանը, Նարեկ Մեսրոպի Պետրոսյանը, Արմենուհի Գառնիկի Մանուկյանը, Արամ Իշխանի Մանուկյանը և ուրիշներ:

Գյուղապետարանի տնօրինության տակ են գտնվում Չորագյուղի ակումբ-գրադարանը, մշակույթի տունը, բուժ-ամբուլատորիան, մսուր-մանկապարտեզը, փոստը, կապի բաժանմունքը:⁵

ԱԿՈՒՄԲ-ԳՐԱԴԱՐԱՆ. – Չորագյուղացիները ընթերցասեր մարդիկ են, այդ է պատճառը, որ գյուղն ունի հարուստ գրականություն, որը բաշխված է երեք օբյեկտներում: Առաջինը N 1 միջնակարգ դպրոցի գրադարանն է, երկրորդը՝ N 2 միջնակարգ դպրոցի գրադարանը, իսկ երրորդը՝ գյուղի գրադարանը: Եթե դպրոցների գրադարանավարների մասին խոսվել է նախորդ շարադրանքում, ապա գյուղի գրադարանը, որն իր գոյությունը սկսել է Չորագյուղում խորհրդային կարգերը հաստատվելու հենց սկզբից և գտնվել է գյուղական խորհրդի տնօրինության տակ, ունեցել է միմյանց հաջորդող բազմաթիվ գրադարանավարներ, որոնց մասին նույնպես խոսվել է նախորդ շարադրանքում: Այժմ այդ գրադարանի վարիչն է ընթերցասեր, բանիմաց ու վերին աստիճանի կազմակերպչական ձիրք ունեցող Էմմա Հայկի Հակոբյանը, գրադարանին կից գործող ակումբի վարիչն է աշխատանքային մեծ փորձ և հարուստ գիտելիքներ ունեցող Դերենիկ Հայկի Գալստյանը: Նրանք սերտ համագործակցության մեջ են, և բարձրագույն կրթություն ունեցող Դերենիկ Հայկի Գալստյանը իր հաստատուն գիտելիքներով և հարուստ փորձով շատ հարցերում օգնում է Էմմա Հայկի Հակոբյանին, ինչպես նաև գրադարանի հարյուրավոր ընթերցողներին՝ գրքերի բովանդակության վերլուծության, նոր գրքերի քննարկումներ կազմակերպելու հարցերում:

Ակումբ-գրադարանի հավաքարար Գոհար Քոքոշի Մանուկյանը շատ մաքրասեր է: Նրա հոգատարությամբ էլ ինչպես ակումբ-գրադարանի շենքը, այնպես է գրքերը միշտ մաքուր վիճակում են:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ. – Չորագյուղն ունի հիանալի մշակույթի տուն: Արժանի է, որ այդ երկհարկանի, տուֆակերտ վարդագույն շենքը կոչել Մշակույթի պալատ: Ընթրը, որ համարված է անհրաժեշտ գույքով, ունի ընդարձակ դահլիճ և բազմաթիվ աշխատասենյակներ: Մշակույթի տան տնօրենն է շնորհաշատ երիտասարդ Խաչիկ Գրիգորի Սողոյանը, տեխնիկական աշխատողը՝ Ավետիք Աշոտի Ասատրյանը, իսկ հավաքարարը՝ Աբսան-

⁵ ՉԳՏ, III, 1991–2002, քերթ 1–9:

նա Խաչիկի Սողոյանը: Մշակույթի տանը ցուցադրվում են կինոնկարներ, քատերական ներկայացումներ, ներկայացվում համերգներ: Մեծ թիվ են կազմում նրա մշտական հաճախորդները:

Մշակույթի տանը գործում են երգի ու պարի, շախմատի, շաշկու, նարդու ինքնագործ խմբակներ: Ուշագրավ է, որ պարի խմբերից մեկում ներգրավված են գյուղի տարեց մարդիկ, որոնք հղկում ու երիտասարդությանը ներկայացնում Ալաշկերտի հնագույն հայկական պարերը: Այդ պարի խումբը արժանացել է հայկական հեռուստատեսության ուշադրությանը, որը հաճախ նկարահանում ու ցուցադրում է նրա մշակած նորանոր պարերը:

ԲՈՒԺԱՄՔՈՒԼԱՏՈՐԻԱ.– Չորագյուղը խորհրդային կարգերի հաստատման ժամանակաշրջանից ունեցել է իր բուժարանը: Սակայն այն սկզբից տեղավորված է եղել վարձովի փոքրիկ սենյակում: Երբ Հայկ Ազնիվի Մկրտչյանը դառնում է կոլտնտեսության նախագահ, ինչպես ընդգծվել է նախորդ շարադրանքում, գյուղում կառուցել է տվել ոչ միայն բաղնիքի, այլև բուժարանի շենք:

Չորագյուղի առաջին բժիշկներն են եղել Մխիթար Գրիգորի Ավետիսյանը (Տոնեյանը) և Ազնիվ Սարգսի Ավետիսյանը (Շամասուրյանը): Նրանք թեև բարձրագույն կրթություն չունեին, բայց ինքնագարգացման ճանապարհով հասել էին բարձր մասնագետի աստիճանի և հայրենի գյուղում բարձր մակարդակով կազմակերպում մարդկանց բուժումը: Հետագայում բուժարանը համալրվում է ձորագյուղի բարձրագույն կրթություն ունեցող բժիշկներով: Գրանցից են՝ Լիդա և Կիմա Վորունցովի Ասատրյան քույրերը, Լյովա Գրիշայի Գասպարյանը, Ատոմ Ռուշանի Մանուկյանը: Այժմ վերջիններիս փոխարինել են նորերը:

Վերջերս Չորագյուղի գյուղապետեր Ռաֆիկ և Լյովա Գրիգորյանների անձնվեր և հմուտ կազմակերպչական աշխատանքի շնորհիվ կառուցվել ու շահագործման է հանձնվել բուժամբուլատորիայի նոր և համեմատաբար մեծ շենքը (նախկինը փոքր էր): Այն համալրված է գույքով ու ժամանակակից սարքավորումներով: Բուժամբուլատորիայում այժմ աշխատում են շուրջ 16 հոգի բժիշկներ, բուժակներ, բուժքույրեր: Նրանցից երկուսը՝ Լուսինե Վարդանյանը և Արփինե Նվերի Սաֆարյանը ունեն բարձրագույն կրթություն: Ընդ որում, Լուսինե Վարդանյանը բուժամբուլատորիայի վարիչն է: Նրանք երկուսն էլ արտակարգ հոգատար են հիվանդների նկատմամբ և զերազանց ձևով են կազմակերպում բնակիչների բուժական գործը: Բուժամբուլատորիայում աշխատում են միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող, բայց հարուստ փորձով զինված բուժակներ Յուրիկ և Նեյի Աղվանի Մանուկյանները, Ժակլին Ռազմիկի Մեղրյանը, Ալիտա Կարապետյանը, Լյուբա Ստեփանյանը: Բուժամբուլատորիան համալրված է նաև հարուստ փորձ և կայուն գիտելիքներ ունեցող բուժքույրերով: Հանուն այդ փորձի և գիտելիքների նրանց գյուղում կոչում են ոչ թե բուժքույրեր, այլ

բժիշկներ: Դրանք են՝ Գրետա Համբարձումի Ղազարյանը, Ասյա Մանուկյանը, Ալիսա Ավետիսյանը, Սվետա Խաչատրյանը, Նեկոսյի Բուրջոյանը, Կարինե Դումաշյանը:

Բացի վերոհիշյալ երկու բժիշկներից, բուժամբուլատորիան ունի նաև կու բարձրագույն կրթություն ունեցող աշխատողներ: Գրանցից են՝ տնտեսագետ Անժելա Գալստյանը, աշխատում է որպես հաշվապահ մյուսը՝ Ռաֆիկ Գասպարյանը, աշխատում է որպես պահակ: Բուժամբուլատորիան ունի միայն մի հավաքարար: Դա Թամարա Ավետիսյանն է, շատ մաքուր վիճակում է պահում ինչպես բուժամբուլատորիայի գույքայնպես էլ ամբողջ շենքը:

ՄՍՈՒՐ–ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ. – Այժմ, երբ գյուղը հիմնականում աղքատության մեջ է, երեխաները, բնականաբար, տառապում են թերսնուցումից: Ուստի խիստ անհրաժեշտ է մտոր–մանկապարտեզի լայն ցանցի ստեղծումը: Մտոր–մանկապարտեզի շենքը, որ կառուցվել էր 1988 թ., երբ գյուղական խորհրդի նախագահ էր աշխատում Բորիս Սանասարի Հակոբյանը, վերանորոգվել է 2000–2002 թթ. նոր ընտրված գյուղապետ Լյովա Խոբենի Գրիգորյանի ջանքերով: Հիմա այնտեղ մանկամտոր չի գործում, բայց անհրաժեշտ է այն գործի դնել: Դրան հակառակ, մանկապարտեզը աշխատում է առանց ընդհատումների և շատ հիանալի ձևով: Այնտեղ երեխաները ոչ միայն ժամանակին ստանում են սնունդ, այլև կրթության ու դաստիարակության նախնական ծիլեր ու նախապատրաստվում դպրոցի համար:

Մանկապարտեզում ընդգրկված են 80 երեխաներ, որոնք բաժանված են 4 խմբերի: Գյուղապետարանի ջանքերով մանկապարտեզը համալրվել է որակյալ կադրերով: Այժմ այնտեղ աշխատում են 22 հոգի, որոնցից 19–ը, կանայք են, 3–ը՝ տղամարդ: Այդ 19 կանանցից մեկը՝ Կարինե Բարկենի Իխտիարյանը, որն ունի բարձրագույն կրթություն, աշխատում է որպես մտոր–մանկապարտեզի վարիչ: Մյուս 18 կանանցից 16–ը ունեն միջնակարգ մասնագիտական, իսկ 2–ը՝ ութամյա կրթություն: Միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողներից մեկը՝ Անահիտ Ջանիբեկի Հովհաննիսյանը, աշխատում է որպես բուժքույր, 8–ը աշխատում են որպես դաստիարակներ: Դրանք են՝ 1) Մարիետա Վահանի Գինոյանը, 2) Ալվինա Արտավազդի Գրիգորյանը, 3) Հայկանուշ Վաչիկի Կիրակոսյանը, 4) Գայանե Արմենակի Ֆահրադյանը, 5) Գոհար Գվիդոնի Սարդարյանը, 6) Նինա Էդվարդի Մինասյանը, 7) Նաիրա Հենրիկի Կիրակոսյանը, 8) Էլմիրա Սաշայի Գրիգորյանը:

Միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող կանանցից 4–ը աշխատում են որպես դասակներ: Դրանք են՝ 1) Հրանուշ Անուշավանի Աղեկյանը, 2) Անահիտ Վաչիկի Մովսիսյանը, 3) Լիդա Ֆաթիբեկի Պողոսյանը, 4) Հայկանուշ Գևորգի Մուքիսյանը: Միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողներից 2–ը՝ 1) Ջոյա Հրաչիկի Սլոնյանը և 2) Իրինա Արմենակի

Ֆահրադյանը, աշխատում են որպես խոհարարներ: Միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող Գեղեցիկ Ֆաթիբեկի Պողոսյանը աշխատում է որպես օժանդակ բանվոր:

8-ամյա կրթություն ունեցողներից Անիկ Աշոտի Չաքարյանը աշխատում է որպես լվացարարուհի, իսկ Երազիկ Գառնիկի Սարոյանը՝ որպես դռնապան:

Մանկապարտեզում աշխատող 3 տղամարդկանցից մեկը՝ Նորայր Ալբերտի Ասատրյանը, որն ունի բարձրագույն կրթություն, աշխատում է որպես հաշվապահ, մյուսը՝ Բեգե Գարեգինի Մուրադյանը, որն ունի միջնակարգ մասնագիտական կրթություն, աշխատում է որպես տնտեսվար, իսկ երրորդը՝ Գառնիկ Խաչոյի Սարոյանը, որն ունի 7-ամյա կրթություն, աշխատում է որպես դռնապան:

Մանկապարտեզի ամբողջ անձնակազմը մեծ սիրով է լցված իրեն հանձնարարված երեխաների նկատմամբ և հնարավոր ամեն ինչ անում է, որ նրանք լինեն առողջ, խելոք ու դաստիարակված:

ՀԵՐՈՍՈՒՀԻ ՄԱՅՐԵՐ.— Չորագյուղի հզորությունը նրա բազմացման մեջ է: Աճող գեոմոֆոնով է պայմանավորված Չորագյուղի ապագան: Չորագյուղը հպարտացել է իր բազմազավակ մայրերով, հատկապես այն մայրերով, ովքեր տաս և ավելի զավակներ են պարզել հայրենիքին: Հայրենիքն էլ բարձր է գնահատել նրանց մայրական սխրանքը ու շնորհել «Հեղուտուհի մայր» ոսկե պարգևը:

Չորագյուղի հերոսուհի մայրերից են եղել՝ 1) Նազան Սարգսի Սահակյանը, 2) Գյուլում Չոհրաբի Սարգսյանը, 3) Հրանուշ Կարախանի Սարգսյանը, 4) Գեմիկ Հովհաննեսի Մալխանյանը, 5) Հեղինե Գրիգորի Չաքարյանը, 6) Ժենիկ Յուրակի Սահակյանը, 7) Ասանթ Սարգսի Սուքիասյանը, 8) Բեգար Սարգսի Սարոյանը, 9) Երուն Ալեքսանի Հակոբյանը, 10) Եպրաքոս Ջիվանի Սարոյանը, 11) Փիրուզ Գեղամի Սարոյանը, 12) Քնարիկ Վարդաշակի Աբրահամյանը:

Փառք ու պատիվ նրանց:

ՓՈՍՍԸ ԵՎ ԿԱՊԻ ԲԱԺԻՆԸ.— Չորագյուղը աշխարհի հետ կապվում է իր փոստի ու կապի միջոցների՝ հեռախոսի, հեռագրի, ռադիոյի և հեռուստատեսության օգնությամբ: Թե փոստում և թե կապի բաժնում աշխատում են մասնագիտական կրթություն ունեցող խելոք, բանիմաց, արտակարգ գուսպ և աշխատանքային մեծ փորձ ունեցող կադրեր:

Շուրջ քառորդ դար է, որ Չորագյուղի փոստի վարիչ է աշխատում Մամիկոն (Համլետ) Հայկազի Սիերյանը: Նա իր անթերի աշխատանքով կարող է օրինակ հանդիսանալ շատ ու շատ մարդկանց համար: Նա աշխատանքի բերումով շփում ունի գրեթե ամբողջ գյուղի հետ, բայց բոլորն էլ գոհ են նրանցից: Հենց դրա մեջ է քաքնված նրա աշխատանքային երկարակեցուր-

յան գաղտնիքը: Նրա արտակարգ զսպվածությունը և աշխատանք կազմակերպելու տաղանդը փոխանցվել է նաև իր աշխատակից Սուրիկ Հայկազի Միմասյանին:

Իրենց բարձր մակարդակով և աշխատանքային կարգապահությամբ փոստի աշխատողներից հետ չեն մնում կապի բաժնի աշխատողները՝ Պողոս Վաղինակի Սողոյանը և Ասյա Ապրեսի Սարոյանը: Աշխատանքի բերումով նրանք ևս շփում են ունենում գրեթե ամբողջ գյուղի հետ, բայց նրանք աշխատանքից էլ բոլորը գոհ են:

Չորագյուղի գրեթե բոլոր ընտանիքներն ունեն ռադիոկետ, որոնք աշխատում են անխափան: Գյուղի բոլոր ընտանիքներն ունեն նաև հեռուստացույց, բայց հեռուստահաղորդումները ընդունվում են խիստ անորակ: Հարկավոր է ընդունող կայան կառուցել Չորագյուղում, որպեսզի հաղորդումները ընդունվեն որակով:

1941-1945 թթ. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՍԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐ (ՀԻՆ ՈՒ ՓՈՐՁՎԱԾ ՋԻՆՎՈՐՆԵՐ).— Վաղուց, շատ վաղուց լռել են 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի հրանոթների որոտները, բայց երախտապարտ սերունդների մեջ թարմ ու անջնջելի է մնացել այդ հերոսամարտին կամավորագրված, հաղթանակով տուն վերադարձած, մինչև այժմ աշխատող ու ապրող մարդկանց նկատմամբ ցուցաբերվող հարգանքը: Դրանք հին ու փորձված զինվորներ են, որոնք վառ օրինակ են ծառայում հատկապես երիտասարդ սերնդի համար: Պատերազմից հետո նրանք հերոսացել են նաև իրենց քրտնաջան ու ազնիվ աշխատանքով: Ահա վետերանների այդ համաստեղության կազմը. 1) Դավթյան Կամսար Արսենի, 2) Սահակյան Ազնիվ Սկրտչի, 3) Քալոյան Մնաց Միսակի, 4) Սահակյան Բեգե Սկրտչի, 5) Տոնեյան Մնաց Խաչատուրի, 6) Ունրշատյան Բալարեկ Մնացի, 7) Խըշոյան Պարզև Մնացի, 8) Ավետիսյան Գյուլաբ Ավետիսի, 9) Գրիգորյան Մնաց Գևորգի, 10) Գրիգորյան Ջանիբեկ Եզեկիմի, 11) Ավետիսյան Մխիթար Գրիգորի, 12) Սահրադյան Արտեմ Գյուլաբի, 13) Սկրտչյան Արտեմ Պետրոսի, 14) Ավետիսյան Գառնիկ Կնյազի, 15) Կարապետյան Խաչիկ Մեղրոնի, 16) Ավետիսյան Սարիբեկ Աղաբեկի, 17) Չարայան Աղախան Աբգարի, 18) Հակոբյան Համայակ Արշակի:

Չորագյուղացիները 1941-1945 թթ. պատերազմի վետերաններից չեն անջատում նույն պատերազմում զոհված համագյուղացիների կանանց, ովքեր ապրում են հիմա և հույսով դեռ սպասում իրենց ամուսինների վերադարձին: Ահա նրանք՝ հույսի այդ մարմնացումները.

1) Հակոբյան Սաթո Ֆուրդանի, 2) Հակոբյան Սալո Ապրեսի, 3) Մարտոյան Խանգաղ Չալիբեկի, 4) Հակոբյան Նաստե Սենեի, 5) Սուքիասյան Հասմիկ Սարգսի:

ԱՐՏԱԳՆԱՑՆԵՐ.– Հողի սեփականաշնորհումից հետո Չորագյուղում լսիստ շատացել են արտագնացները, այսինքն՝ աշխատելու նպատակով տեղից տեղ գնացող մարդիկ: Ըստ ընտրությունների հետ կապված վավերագրերի հաղորդած տեղեկությունների, տարեկան շուրջ 1100 մարդ աշխատանքի է գնում Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուս, որոնք ունեն ընդարձակ հողատարածություններ և աշխատուժի կարիք:

Հողի սեփականաշնորհման հետևանքով ձորագյուղում մի հողաբաժինը կազմել է 0,72 հա, իսկ մի միջին ընտանիքը ստացել է ընդամենը 1,44 հա հողամաս, որը հողի որակի պատճառով կտրատված է միմյանցից 7–8 կմ հեռու գտնվող 4–5 մասերի: Նման պայմաններում և նման քիչ հողատարածքներով դժվար է ընտանիք պահել: Աղքատության ճիգաններից պոկվելու նպատակով ձորագյուղցիներն ունենում է արտագնա աշխատանքի: Նա լավ գիտի, որ հայկական հողերը կազմում են 300 000 քառ. կմ: Թուրքիան իսկ է դրանք և հայ ժողովրդին բողել ընդամենը 30 000 քառ. կմ, այսինքն՝ 10 անգամ պակաս տարածք: Ուրիշ բան է, եթե այդ հողերը վերադարձվեն հայ ժողովրդին, ապա այն ժամանակ գյուղացու ստացած հողը կմեծանա 10 անգամ, այսինքն՝ նրա մի հողաբաժինը կկազմի 7,2 հա, իսկ մի միջին ընտանիքը կունենա 14,4 հա հողատարածություն: Այդ դեպքում, բնականաբար, հայ մարդը կմնա իր հողը մշակելու և արտագնա աշխատանքի չի մեկնի:

